

ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ԱՊԱԳԱՅԻ
ՆԵՌՄԱՆԿԱՐՆԵՐԸ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՆՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

32(55)
70-89



مجموعه مقالات
کنفرانس بین المللی انقلاب اسلامی و
چشم انداز آینده

81926

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ
«ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

Հողվածների ժողովածու

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀՈՒՐԶ

Սեյեղ Սալեղ Նաղիդյան

(Մոֆիդ համապարտակի քաղաքագիտության դոցենտ)

Բանավիճային՝ վերլուծության մեթոդիկան ունի իրեն բնորոշ յուրահատկությունները, որոնց շնորհիվ վերլուծության այս եղանակը տարբերվում է հասարակական գիտությունների բնագավառում կիրառվող վերլուծության եղանակներից: Այսպես, բանավեճի՝ տեսության մեջ Գեստը բանավեճը դիտում է որպես վարկած, այն դեպքում, երբ պատմական տեսությունների (Հեգելի և այլոց փիլիսոփայություններում) կանխավարկածը հենց մարդկության պատմության և այդ տեսությունների միջև չլավող կապի հարատևությունն է: Բանավիճային վերլուծությունն ունի զանազան դպրոցներ և տարբեր սկզբունքներ: Այնպես որ, դրանցից որևէ մեկի կիրառումը, իբրև հասարակական գիտությունների բանավիճային վերլուծության մեթոդ, կարող է տարբեր արդյունքների հանգեցնել: Կարևորագույն սկզբունքներն են.

- ա. բանավիճային տեսությունը լեզվաբանության մեջ,
- բ. նորման Ֆեր Բլաֆի¹⁾ բանավիճային տեսությունը,
- գ. ֆուկոյի բանավիճային տեսությունը,
- դ. էռնեստ Լաքլաուի և Չանթալ Մուֆի բանավիճային տեսությունը:

Սույն հոդվածում չենք օգտագործել ոչ լեզվաբանության մեջ ընդունված, ոչ էլ Նորման Ֆեր Բլաֆի բանավիճային տեսությունները: Հոդվածի առանցքն է կազմում էռնեստ Լաքլաուի՝ և Չանթալ Մուֆի՝ բանավիճային տեսությունը, որը հանդիսանում է Միշել Ֆուկոյի բանավիճային և ծագումնաբանության՝ տեսությունների կատարելագործված տարբերակը: Էռնեստ Լաքլաուի և Չանթալ Մուֆի մեթոդաբանության մեջ խորացել ու այն տարածել են քաղաքական գիտությունների բնագավառում:

Տողերիս հեղինակի կարծիքով՝ կրոնական ղեկավարման տեսությունը շատ ավելի մեծ հնարավորություններ ունի պարզաբանելու Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառները, քան որևէ այլ մրցակից տեսություն: Ելնելով վերը նշվածից, անհրաժեշտ է մի կողմից տարբերակել միապետական վարչակարգի օրինակատեսության ճգնաժամի, մյուս կողմից՝ Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառներն ու գործոնները:

Արդիականացման տեսության շնորհիվ հեշտությամբ հնարավոր է դառնում մեկնաբանել միապետական վարչակարգի հիմքերի ու կառույցների թուլացման գործոնները, սակայն նույն այդ տեսության շնորհիվ հնարավոր չէ պարզաբանել

Մեր աշխարհում, որտեղ լիբերալիզմն ու կապիտալիզմը, շահադիտական բնագոյով և նկրտումներից դրոյված, անխնա հարձակման բիրախ են դարձրել մարդկության հազարամյա ձեռքբերումներն ու իղեպնները, անտարբեր լինելով աշխարհում օրեցօր տարածվող սովի, աղքատության, համաճարակների և անզրահիտության հանդեպ, շարունակում են հազարդ տալ շահույթը մեծացնելու և եկամուտ վաստակելու իրենց կոյր ու անմարդկային բնագոյներին: Իրանի իսլամական հեղափոխությունը խափարի մեջ ծագած լույս էր, որն արթնացրեց մարդկանց խիղճը և լուսավորեց նրանց մտքերը՝ ավիտելով նոր կենսակերպ, որտեղ անհատն ու հասարակությունն արժանանում են միանման հարգանքի և ստանում Լևաժո ու աշխարհի բարիքներից հավասարապես օգտվելու հնարավորություն:

Մի դարաշրջանում, երբ կամայական և մեծ տերությունները հավասարակշռություն ու հաշվեկշիռ էին համարում միջուկային հզորության ավերիչ ուժի առավել մեծացումն ու աղքատ ժողովուրդների անխնա հարստահարումը, Իսլամական հեղափոխությունը հստակ և պարզորոշ կերպով առանց քաշեց Լևալվածային վեճ ու նվիրական իղեպնների վերադառնալու և Երկրի մեկ քառորդը կազմող ցամաքի վրա բնակվող մարդկանց կարիքները հոգալու գաղափարը՝ պահանջելով տնտեսական փոխհարաբերություններում հավասարակշռություն, իսկ հասակական, քաղաքական ու միջազգայինում՝ գրաարտություն: Մրանք այն երկու գործոններն են, որ Իրանի Իսլամական Հանրապետության մեծարժոց նախագահը մշտապես ընդգծում և կարևորում է իր միջազգային ելույթներում:

Համապատասխան մասնագետների և մեծ գիտնականների գրչին պատկանող սույն ժողովածուն նշված կետեր ու արժեքավոր երևույթը բնագրվում է տարբեր տեսանկյուններից և, հաշվի առնելով Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունները տարածաշրջանում ու աշխարհում, քննարկման առարկա են դարձել ճնշված ժողովուրդների առջև ծառայած մարտահրավերներն ու հեռանկարները: Հույսով ենք, որ այս գրքի հայերեն թարգմանությունը կնպաստի համաշխարհային իրավիճակի հանդեպ մտավորանկամների և գիտնականների իրագրելիությունը ընդլայնմանն ու կհանդիսանա նրանց մարդկային առաքելության իրականացման ու կայունության գրավակներ:

Ժողովածուն կազմվել է թարգմանվել է ցանկացած հասարակության կապիտալ և ազդեցություն ունեցող երիտասարդության հետ կառուցողական ու ակտիվ գիտաշակութային կապերն ընդլայնելու, համագործակցելու համար: Եվ եթե նրանց ուշադրությունը սեռելի Իրանի իսլամական հեղափոխության վրա, ապա այն հասել է իր նպատակին:

ՄՄ-ում ԻԻՏ արդարևարդ և լիազոր դեսպան

Սեյեղ Ալի Սաղաթան

2010 թ.

Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառները:

Կրոնական ղեկավարման տեսությունը, արդիականացումն ընդունելով որպես նախկին վարչակարգի օրինականության ճգնաժամի ամենացայտուն գործոն, փորձում է փնտրել Իսլամական հեղափոխության հաղթանակի ամենակարևոր պատճառը: Ըստ այս տեսության, հաղթանակի ամենակարևոր գործոնը հեղափոխության Մեծն առաջնորդ Իմամ Խոմենիի՝ րազմաշնորհ անհատականությունն էր և ոչ թե այլ գործոնների առկայությունը, ինչպես օրինակ, թագավորական բռնապետությունը, տնտեսությունը կամ նույնիսկ՝ կրոնը:

Քանի որ կրոնական ղեկավարման տեսությունն արդեն հանգամանորեն ներկայացվել է առանձին հոդվածով¹, ուստի այստեղ փորձում ենք քննարկել սույն հարցը ըստ Էռնեստո Լաքլաուի և Չանբալ Մուֆի տեսության: Ենթադրվում է, որ վերոիշյալ մեթոդի կիրառումը հիմնականում համապատասխանում է կրոնական ղեկավարման տեսության դրույթներին և կարող է առավելագույնս օգտակար լինել Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառները պարզաբանելու հարցում: Եվ թանի որ հոդվածի նպատակը կրոնական ղեկավարման տեսության և Էռնեստո Լաքլաուի ու Չանբալ Մուֆի բանավիճային տեսության համեմատությունն է, ուստի, նախ կանդրադառնանք Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառները պարզաբանող այլ տեսությունների շարքում կրոնական ղեկավարման տեսության գրադեցրած տեղին, ապա կներկայացնենք բանավիճային տեսության հիմնական իմաստը և այն կհամադրենք կրոնական ղեկավարման տեսության հետ:

Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառները պարզաբանող տեսություններ

Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառների ու գործոնների մասին գոյություն ունեն զանազան տեսություններ: «Լեջ տեսություն Իսլամական հեղափոխության հաղթանակի վերաբերյալ» գրքում ներկայացված են հետևյալ կարևոր տեսությունները.

1. դավադդության տեսություն,
2. արդիականացման տեսություն,
3. էկոնոմիկայի տեսություն,
4. կրոնի տեսություն,
5. քաղաքական բռնապետության տեսություն,
6. կրոնական ղեկավարման տեսություն²:

Կրոնական ղեկավարման տեսության կողմնակիցները, մատնանշելով մյուս տեսությունների թերությունները, փորձում են հասնել ավելի համապարփակ տեսության:

Դավադդության տեսությունն ստեղծվել է այլոց նկատմամբ ինչ-որ հոռետեսության վրա և չի կարող գիտական տեսություն համարվել: Մյուս կողմից՝ այս տեսության վարկածներն ու հավակնությունները չեն համապատասխանում երկրի ներսում Իսլամական հեղափոխության դեպքերին ու իրադարձություններին:

Չնայած արդիականացման տեսությունը Փեհլեվիների դինաստիայի վարչակարգի տրամաբանական ճգնաժամի պարզաբանման գործում ամիրաժեշտ դերակատարություն է ունեցել և ի վիճակի է պատշաճ ձևով պարզաբանել նախկին վարչակարգի օրինականության թուլացման պատճառներն ու գործոնները, այնուամենայնիվ, հոդվածի առաջին մասում կիրառվել է կրոնական ղեկավարման տեսությունը:

Էկոնոմիկայի տեսության կանխավարկածն արտադրական հարաբերությունների հիմքն է: Այս խնդրի ոչ միայն աշխարհի հեղափոխությունների հետ ընդհանուր եզրեր չունի, այլև հակասում է Իրանի կրոնական հեղափոխության ելույթին: Իրանի հեղափոխությունը դասակարգային հեղափոխություն չէր: Երկրի սնտեսությունը չի եղել հասարակական հակատությունների առաջացման դրդապատճառն ու հեղափոխականների հիմնական նպատակը: Հեղափոխությանը նախորդող տարիների ընթացքում նախքաղաքացիական պատերազմից ստացվող եկամուտների ծավալի բառապատկերման շնորհիվ կառավարությունը դարձավ երկրի գլխավոր հարկահավաքը³: Տնտեսությունը, հեղափոխությանը նախորդող և հաջորդող տարիների համեմատ, ավելի բարենպաստ վիճակում էր:

Ձեյմա Դեյվիսի կորագիծը⁴, որն էկոնոմիկայի տեսության համեմատ ավելի քիչ թերություններ ունի, ի վիճակի չէ համոզիչ քաղաքականներ տալու Իսլամական հեղափոխության հաղթանակի պատճառների և գործոնների մասին: «Ակնկալիքների աճ» աշխատության մեջ Ձեյմա Դեյվիսը նշում է. «Հեղափոխությունները ոչ դյուրին իրականացվող գործընթացներ են, որ կարճ ժամանակահատվածում տեղի են ունենում սոցիալ-տնտեսական կյանքի իրական զարգացմանը զուգահեռ: Քաղաքական կայունությունն ու անկայունությունը ի վերջո կախված են տվյալ երկրի հասարակության մտածելակերպից: Դժգոհության առկայությունն է, որ ծնում է հեղափոխություն, այլ ոչ թե սննդի բավարար կամ անբավարար առաջարկի շոշափելի պայմանները, մարդկանց հավասարության ու ազատության ձգտումը: Երբ անհրաժեշտ կենցաղային ապրանքների հայթայթման դժվարություններից և հասարակության մեջ ունեցած դիրքից ու հնարավորությունից դրդված՝ քնակչության գոհ և անտարբեր շերտերի մեջ առաջանում է փոփոխական (տատանվողական) տրամադրություն, նրանք կարողանում են քաղաքականապես իրենց զսպել, իսկ ընդդիմադիր ուժերը դիմում են ապստամբության: Դժգոհ ու աղքատ խավին ավելի մեծ հավանականությամբ է հաջողվում խուլվություն առաջացնել»⁵:

Իսլամական հեղափոխության վերաբերյալ Ջեյնս Գեյլիսի տեսության ուժեղ կողմը նրանում է, որ նա առերևույթ չի ընդունում տնտեսության գործոնը, այլ կենտրոնացված է ակնկալիքների մեծացման գործոնի վրա և այն համարում է ապստամբության կամ հեղափոխության գործոն: Նույնիսկ, եթե ժողովրդի նյութական վիճակը նախկին տարիների համեմատ բարելավված է, միևնույն է, հասարակության կողմից անընդունելի է դառնում ակնկալիքների և գոյություն ունեցող կարիքների բավարարման միջև առաջացած ճեղքվածքը: Այս տեսության բերությունն Իսլամական հեղափոխության ուսումնասիրության պարագայում այն է, որ բնակչության կենցաղային վիճակն ու նյութական պայմանները չեն համարվել որպես հիմնական խնդիր, որպեսզի ակնկալիքների մեծացումը դառնա ապստամբության պատճառ: Իսլամական հեղափոխությունն օժտված է ինքնատիպ հատկություններով, որոնք նրան առանձնացնում են այլ հեղափոխություններից:

Կրոնի տեսությունն ընդունում է թագավորի կողմից հակաիսլամական, իսկ ժողովրդի կողմից իսլամամետության քաղաքականությունը: Ըստ այս տեսության, հեղափոխության հիմնական պատճառն իսլամին և հոգևորականությանը թագավորի հակադրվելն է եղել: Նշված տեսությունը ոչ միայն պարզունակ է, այլև չի ներկայացնում նախահեղափոխական Իրանի հասարակության իրական պատկերը: Իրանի հասարակությունը, 1340-ական թվականներին (1960-ական թթ.) երկրում իրականացված տնտեսական քաղաքականության շնորհիվ, արագ տեմպերով յայտում էր ղեպի Արևմուտք: Հետևարար, որևէ պատճառ գոյություն չունեք, որ ժողովուրդը տվյալ ժամանակահատվածում բերվեր ղեպի աքեիզն և 20-րդ դարում իրականացնեք կրոնական հեղափոխություն: Արտաքնապես թվում էր, թե հասարակության հավատը կրոնի հանդեպ բույանում է, սակայն իրականում այն պահպանվում էր ժողովրդի հոգու խորքում և Մեծն Իման Խոմեյնու հոգևոր ղեկավարումը կարողացավ արթնացնել ժողովրդի քնած խիղճն ու առաջնորդել Իսլամական հեղափոխությունը: Իսլամն ու չիլիզն նախահեղափոխական շրջանում ունեցել են ոչ հեղափոխական մեկնություններ, սակայն, ինչպես նշում են Էռնեստո Լարչաուն և Չամբալ Մուֆի, Իման Խոմեյնու հասանելիությունը, ընդունելիությունը, իշխանությունը՝ հասկացությունների վրա հիմնված, թագավորավանդակ և գաղափարական ելույթները կարողացան հարթել գոյություն ունեցող այլ բանավեճերին:

Բռնակալության տեսությունը նույնպես կառուցված է քաղաքական գործոնների հենքի վրա և նրանց ազդեցությունն ավելի ընդունելի է, քան տնտեսական և մշակութային գործոններինը: Ըստ այս տեսության, միապետը բռնակալ է եղել, իսկ ժողովուրդը ձգտել է ազատության, ինչի համար ապստամբել է թագավորական վարչակարգի դեմ: Պարզվում է, որ այս տեսությունը նույնպես բռնակալու-

յան գործոնը գերադասում է գաղութարարության գործոնից և թուլացնում հեղափոխության կրոնական ղեկավարման ու հավատի գործոնների դերը:

Կրոնական ղեկավարման տեսությունը համարվում է համադրական տեսություն, որովհետև այն նախկին վարչակարգի օրինականության ճգնաժամի հիմնական գործոնն ընդունում է ամերիկյան արդիականացումը, իսկ Իսլամական հեղափոխության հաղթանակի գլխավոր գործոնը՝ Մեծն Իման Խոմեյնու հոգևոր առաջնորդությունը: Այս տեսությունը բացատրելու համար հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ հանգամանքները:

1. Արդիականացման տեսության բոլոր դրակներ կողմերը, որոնց հատկապես անդրադարձել է Նիկի Բեդին⁶⁾, կիրառվում են այս տեսության առաջին մասում: Իրականում, եթե թագավորը 1340-ականներին (1960-ական թթ.) ձեռնամուխ չլինեք ամերիկյան արդիականացմանը, ապա 1357թ. (1979թ.) հեղափոխության համար չլինեք ստեղծվի համապատասխան պայմաններ: Իսլամական հեղափոխության իրադարձությունները վկայում են, որ առաջին յուրք բախումները թագավորի և հոգևորականների միջև (հատկապես Իման Խոմեյնու հետ) տեղի են ունեցել այդ տարիներին:

2. Կրոնական ղեկավարման տեսությունը ոչ մի կերպ չի ցանկանում Իսլամական հեղափոխության հարթանակի մեջ անտեսել կրոնի գործոնը, այլ ընդունում է, որ հոգևոր և իմաստուն ղեկավար Իման Խոմեյնին կարողացել է չիլիզնի դպրոցի վերականգնման համար արթնացնել ժողովրդի քնած խիղճն ու բռնության դեմ պայքարի ոգին:

3. Հեղափոխության հաղթանակի ամենակարևոր գործոնը, որ ընդունում է կրոնական ղեկավարման տեսությունը, անտեսում է սոցիալական մյուս գործոնների առկայությունը, այդ թվում՝ ժողովրդի հավատացյալ լինելու փաստը, ազատամարտությունը, թագավորի բռնակալությունը կամ ԱՄՆ գաղութատիրությունը և ազգային մշակութային արժեքների արհամարհումը: Պատմության ընթացքում փոքրաթիվ հեղափոխություններ են իրականացվել: Հեղափոխությունները ծագում են հատուկ պայմաններում՝ մշակութային, տնտեսական, սոցիալ-քաղաքական զանազան պատճառներից դրդված: Ըստ կրոնական ղեկավարման տեսության, Իսլամական հեղափոխության հաղթանակի գործում, մյուս գործոնների համեմատ, հոգևոր ղեկավարման դերն ամհամեմատ մեծ է:

Էռնեստո Լարչաուն և Չամբալ Մուֆի բանավեճային տեսությունը

Էռնեստո Լարչաուն և Չամբալ Մուֆեն ինչ-որ չափով Միշել Ֆուկոյի պարտապանն են: Միշել Ֆուկոն իր մեթոդաբանական ուսումնասիրությունները կատարել է հետևյալ երեք ժամանակահատվածներում.

ա. 1954-1969թթ. զբաղվել է բանավիճային մերողաբանությանը և հնագիտությանը¹¹,

բ. 1970-1975թթ. զբաղվել է ծագումնաբանական շերտերի, գաղափարի ու գործի միջև կապի վերահաստատման խնդիրներով,

գ. 1977-1984թթ. զբաղվել է ծագումնաբանական մերողակալով, հատկապես՝ «ես» և «սեռ» հասկացությունների ձևավորման հարցերով:

Բանավեճն իրար համակցված հարցերի հավաքածու է: Քանի որ այդ հարցերը նյութական են, ուստի դրանք պայմանների և պատմության ու ժամանակի հենքի վրա փոխկապակցված են: Ապացույցը¹² յուրաքանչյուր բանավեճի ամենավոր մասնիկն է: Քանի որ այն լեզվաբանական ձև չունի, խորհրդանշի¹³ չի համարվում, այլ հանդես է գալիս որպես բառային գործողություն¹⁴:

Բառային գործողության կարևորագույն հատկանիշներն են. ա. իրենց մեջ կրում են ճշմարտության ու կեղծիքի պայմաններ, ուստի և նրանք հատուկ պարագաներում ճշմարտության կարիք չունեն, բ. հասարակության մեջ բազմաձև ընթացիկ աստիճան ունեն և արագ տարածվում են նրա անդամների շրջանում, գ. հղի են լուրջ հետևանքներով, որովհետև մերժված և անընդունելի են հասարակության կողմից:

Միջև Ֆուկոյի կարծիքով՝ բանավիճային տեսություն ձևավորելիս¹⁵ պետք է շոշափել այնպիսի գաղափարներ ու հասկացություններ, որոնք հավակնում են ստեղծել գիտություն աշխարհի մասին¹⁶: Էռնեստո Լարյաուն և Չանբալ Մուֆը, քննադատելով մարքսիզմի տեսությունը, մերժում են սոցիալական միակողմանի բռնությունը և, բազմի ու վերնաշենքի միակողմանի կապի փոխարեն, դրանք ձուլում են գերիշխանություն հասկացության մեջ: Այդպիսով բացասվում են սոցիալական դասակարգերի գոյությունը և օբյեկտիվությունը (օբյեկտիվիզմի մերժում): Էռնեստո Լարյաուն և Չանբալ Մուֆի մարքսիզմի տեսությունը մերժելու նպատակը արձատյան գեներատիվային հասնելն է:

Համաձայն այս տեսության, մարդը հատուկ սպայաններում դառնում է սյուծի: Ուրեմն՝ բանավեճն է, որ մարդկանց դնում է սյուծի վիճակում: Էռնեստո Լարյաուն և Չանբալ Մուֆն այս հատկությունը պահանջարկ¹⁷ են անվանում: Սյուծն տրոհված¹⁸ է, միաժույլ չէ, հետևաբար այն առասպելից¹⁹ բացի այլ բան չէ:

Էռնեստո Լարյաուն կարծիքով՝ յուրաքանչյուր սյուծն առասպելական սյուծն է: Առասպել ասելով նկատի ունենք մի բաց տարածություն, որի կառուցվածքային օբյեկտիվության և տիրապետության հետ ոչ մի շարունակական կապ չունի: Սյուծն փոխաբերական կացության մեջ է, որովհետև բանավեճի և անհանգստության միջև տրամաբանական կապ գոյություն չունի: Յուրաքանչյուր հասարակություն առասպելի կարիք ունի: Այն հասարակությունը, որն առասպել չունի, նման է գերեզմանատան կամ հոգեբուժարանի: Որքան առասպելական միջա-

վայրն²⁰ ընդլայնվի, այնքան կընդարձակվի սյուծի գործունեության ոլորտը²¹:

Էռնեստո Լարյաուն և Չանբալ Մուֆը, զարգացնելով Միջև Ֆուկոյի ծագումնաբանության տեսությունը, ստեղծել են ավելի բազմազան հասկացություններ: Ավելին, նրանք բաղաբանական գիտությունների բնագավառում բանավեճերի տեսության համար ավելի արդյունավետ կիրառումներ են առաջարկել:

Ստորև ներկայացվում են բանավիճային սեփական տեսության համար Էռնեստո Լարյաունի և Չանբալ Մուֆի կողմից օգտագործված ամենակարևոր հասկացությունները:

1. Մասնաբուն²²

Էռնեստո Լարյաուն և Չանբալ Մուֆը օբյեկտի և սուբյեկտի քննարկման փոխարեն և առանց զանազանելու սուբյեկտիվ իրականությունների ու գիտական գործունեությունների միջև առկա տարբերությունները (որը մարքսիստական գաղափարախոսության մեջ կիրառվում է), քննարկվող բեմաներն ու քննարկման ձևերը անվանում են բանավիճային: Ուրեմն, որպեսզի առարկաներն ու գործողությունները հասկանալի դառնան, դրանք պետք է դիտարկվեն որպես ավելի ծավալուն խնդրի բաղկացուցիչ մասեր:

Այդ բանից ելնելով, հասկացություններ ստեղծելը հաստատում է ինքնության հարաբերապաշտական²³ առանձնահատկությունները: Բառերի, նախադասությունների, գործողությունների և կանոնների հասարակական իմաստն ընկալվում է ընդհանուրի հարաբերության մեջ, որը բաղկացած է առանձին մասերից: Մի հատուկ գործողություն (օրինակ՝ քվեարկելը) ընկալելի է դառնում այն ժամանակ, երբ նրա միացումը տեղի է ունենում այնպիսի հասարակարգերում, որտեղ գոյություն ունեն կանոններ, գործելակարգ և համապատասխան կառույցներ²⁴: Ժողովրդավարական բանավեճը հակադրվեց ֆաշիզմին ու կոմունիզմին, միավորեց տասանվող (փոփոխական) ապացույցները և դարձավ գերիշխող:

2. Նակամարտություն²⁵

Հասարակական հակամարտությունների առաջացումն ու փորձը բանավիճային տեսության մեջ ունեն առանցքային դեր և հետևյալ երեք հատկությունները. ա. բաղաբանական սահմաններ ձևավորելու համար կենսական նշանակություն ունեցող բշտանական հարաբերությունների ստեղծում, որի արդյունքում կեղծիքը ծնում է «բշտամի» կամ «օտար» հասկացությունները, բ. բշտանական հարաբերությունների ստեղծումն ու բաղաբանական սահմանների ձևավորումը շատ կարևոր նշանակություն ունեն բանավիճային գործընթացի ինքնության առան-

ծին մասերի և հասարակական ներկայացուցիչների (վատահեյի անձանց) հաստատման համար, գ. հակամարտության փորձը մի օրինակ է. որը ցույց է տալիս ինքնության առկայությունը¹⁹:

Ըստ բանավիճային տեսության, հասարակական ներկայացուցիչների և խմբավորումների միջոցով անհնարին է կատարյալ և դրական ինքնության ձեռքբերումը: Եվ քանի որ բանավիճային ուսմունքը չի հանդուրժում անձանց էզոիզմը, ապա ինքնության ձևավորման հարցում միայն «օտար» ներկայությունը կարող է ունենալ դրական ազդեցություն: Էոնեստո Լարյաուն և Չանթալ Մուֆն այս խնդիրը «տարբերության տրամաբանություն» են անվանում և դրա հիմքն էլ այն ուժերի բիրտ բացառումն²⁰ են համարում, որոնք միավորման²¹ ջանքերի դեմ դիմադրություն են ցուցաբերում:

3. Անձնականություն²² և հասարակական գործակալ (ազնկեր)²³

Էոնեստո Լարյաուն և Չանթալ Մուֆն ընդունում են Այրուսերի այն տեսակետը, ըստ որի պտժների ինքնությունը կառուցվում է բանավիճային եղանակով, սակայն մերժում են բռնությանը ենթադրվող ապացույցների նրա տեսակետը²⁴: Նրանք ընդունում են անկյունաքարի²⁵ գրաված դիրքի և քաղաքական անձնականության²⁶ միջև եղած տարբերությունը: Եթե սուբյեկտի գրաված դիրքը հասկացությունն ունի զանազան տարբերակներ, որոնց հիման վրա հասարակության ներկայացուցիչներն իրենց ներկայացնում են որպես գործիչներ, ապա քաղաքական անհատականություն հասկացությունն այնպիսի մի ուժ է, որի մեջ հասարակական գործիչները գործում են նոր և հետաքրքիր եղանակներով կամ ձեռնամուխ են լինում որոշումներ կայացնելու: Երբ առաջանում է սուբյեկտի ինքնության անհանգստություն, նրանք սկսում են գործել այլ եղանակներով:

Այս երևույթը տեղի է ունենում այն ժամանակ, երբ սկսվում է բանավեճերի տրոհման գործընթացը: Այդ գործընթացն սկսվում է այն ժամանակ, երբ սկիզբ է առնում հասարակական կամ տնտեսական լայնածավալ ընդվզում: Նման ընդվզումներն էլ պատճառ են հանդիսանում, որ սուբյեկտներն զգան իրենց ինքնության ճգնաժամը: Այսպիսի պարագաներում սուբյեկտներն միացման և իրենց ինքնությունը հաստատելու համար փորձում են մասնակցել տարբեր բանավեճերի և վերակառուցել իրենց ինքնությունն ու սոցիալական կարգավիճակը²⁷:

4. Գերիշխանություն²⁸

Գերիշխանության հասնելու գործողությունների քաղաքական նպատակներով կազմակերպվող համալիր գործողությունների շարքում առանցքային նշա-

նակություն ունեն: Քաղաքական նպատակներով կազմակերպվող համալիր գործողություններն իրենց կառուցվածքներով, գործունեությանը և բանավեճերի լուծման խնդրում մեծ նշանակություն ունեն: Եթե որևէ նախագիծ կամ քաղաքական ուժ, հատուկ իրավիճակներում ձեռք է բերում կանոնների և գաղափարների իրագործման հարցում որոշիչ դեր կատարելու հնարավորություն, ապա տեղի է ունենում գերիշխանության հաստատում: Գերիշխանության հասնելու գործողությունները սովորաբար ուղեկցվում են ուժի գործադրմամբ, որովհետև այդ գործողության ընթացքում տվյալ քաղաքական ուժը ջանում է իր նախագիծը պարտադրել²⁹ մյուսներին:

5. Նասանկություն³⁰ և ընդունելիություն³¹

Գերիշխանության հասնելու գործողությունների երաշխիքն անկայուն³² վկայության առկայությունն է, ապացույցներ, որոնք չեն հաստատվել գոյություն ունեցող բանավեճերի միջոցով: Առկայության առանձնահատկությունը սահմանվում է անկայուն բանավեճերի պահանջով: Ենթադրվող տարրերի առկայության պարագայում, նվաճողական գործողությունների խնդիրն է ներառել նրանց զարգացման ընթացքում գտնվող քաղաքական որևէ գործընթացի մեջ, միավորել և ինաստավորել այդ գործունեությունը³³:

Էոնեստո Լարյաուն օգտվում է «հասանելիության պիտանիություն» հասկացությունից, որպեսզի պարզաբանի այն խնդիրը, թե բանավեճերի ընդհանուր հանկարգում ինչպես են առանձին բանավեճեր ճգնաժամային իրավիճակներում ավելի հաջողված և ընդունելի ճանաչվում: Նա համոզում է, որ եթե հասարակական ճգնաժամը շատ զգալի լինի և կարողանա բանավիճային ամբողջ համակարգը խախտել, ապա միայն «առկայության պիտանիությունը»³⁴ կարող է երաշխավորել առանձնահատուկ բանավեճի հաղթանակը:

Ըստ Քաբի Սաիդի, բանավեճի հաղթանակի հնարավորությունը կախված է ոչ թե նրա էական հատկություններից, այլ՝ միաձույլ լինելուց: Բանավեճը մի կառույց է, որը գտնվում է կատարյալ խառնաշփոթ մի այլ աշխարհում³⁵:

6. Նակզուցակեր³⁶ և ցարտարհուում³⁷, հնարավորություն-սպայնականություն³⁸ և խցակում³⁹

Մրանք այնպիսի հասկացություններ են, որ միավորվում են մի բանավեճում, ապա վերածվում հանգուցային կետի կամ հասկացության: Երբ իրականացվում են որևէ բանավեճի որոշ տարրեր³⁷, ինչպես ասենք բանավիճային ոլորտում գտնվելը,³⁸ աստիճանաբար ներգրավվում են բանավեճի մեջ և վերածվում պահի³⁹:

Հաճախ այդ պահը միանում է ողջ բանավեճին, երբեմն էլ անջատվում նրանից: Այս դեպքում պահը ձեռք է բերում վերաբազմազորվելու հատկություն: Հենց այս հատկությունն է, որ հասուկ պայմաններում պատճառ է դառնում մի բանավեճի վերածմանը մեկ այլ բանավեճի: Յուրաքանչյուր բանավեճ ինչ-որ չափով օժտված է վերաբազմազորվելու հատկությամբ: Հիմքի խախտման պարագայում բանավեճի հիմնական հասկացությունն ստանում է վերաբազմազորվելու հատկություն: Ըստ Էռնեստո Լարբաուի և Չանթալ Մուֆի, բանավիճային պայմաններում ամեն ինչ անկայուն է: Բոլոր տեսակի բանավեճերը, միավորումները և հասարակական կողմերը կարող են տարբեր լինել¹⁷: Բանավեճը մշտապես հնարավոր և պայմանական գործողություն է:

7. Էքստրահզան առաջանում է մեծ ճգնաժամի վերաբազմազորվելու ժամանակ: Այս երկու իրադարձությունների միջև ոչ մի կապ գոյություն չունի, որովհետև մեծ պայմաններում ամեն ինչի երևան գալը հնարավոր է: Եթե առաջարկվող բանավեճն ուղեկցվի հասարակ ժողովրդի տեղաշարժով, ապա բանավեճի բոլոր սկզբունքները կխախտվեն (ինչպես նացիզմի երևան գալը Գերմանիայում): Հակառակ դեպքում բանավեճի առաջարկվող սկզբունքները չպետք է նոր խնդիրների ամբողջ համակարգի հետ աճանկատման մեջ մտնեն: Տեղաշարժի հետևանքներն են՝ ժամանակավոր լինելը¹⁸, հնարավորությունը¹⁹ և ազատությունը²⁰ (օբյեկտիվ տեսք ստացած կառուցվածքի բացակայություն)²¹: Խզանում, այսինքն՝ ժամանակավոր դադար՝ իմաստների անկայունության գործընթացում: Բանավեճ կայուն պայմաններում, այսինքն՝ փոփոխվող ապացույցների միաժամանակյա կայունություն:

Բանավեճի և կրոնական ղեկավարման փոխություններ

Ելնելով Իսլամական հեղափոխության իրադարձություններից, հարկ ենք համարում բանավեճերի սկզբունքներն ու հասկացությունները համեմատել կրոնական ղեկավարման տեսության հետ: Իսլամական հեղափոխությունը միապետական իշխանության բազմադարյա բանավեճի դիմաց մի նոր բանավեճ առաջարկեց: Միապետական բանավեճում հանգուցային կետը բազմազորն էր՝ իր երկնային օրինակամությանը, իսկ մյուս հասկացությունները միավորվում էին այդ հանգուցային կետի շուրջ: Այս բանավեճում առկա էին իսլամն ու իսլամական հասկացությունները, սակայն առաջնային նշանակություն չունեին, միապետության հզորության առաջնիքի շուրջ այդ բանավեճին հավելվում էին արդիականության հասկացություններ և ժամանակի ընթացքում բանավեճի տարրերը վերածվում էին պահերի: Այսպիսով, Փեղեվիների վարչակարգի բանավեճն իրանական

նություն, իսլամականություն և Արևմուտք հասկացություններով, ստեղծեց բանավիճային մի խառնուրդ, որը գոյատևեց ավելի քան կես դար:

Քանի որ այդ բանավեճում միավորված հասկացություններին սպասվում էր հնարավոր կայունություն, հետևաբար դրանք օժտված էին ժամանակավոր լինելու, հնարավոր լինելու և ազատություն հատկություններով: Այլ կերպ ասած, նոր պայմանների առաջացման հետևանքով, բանավեճի յուրաքանչյուր հասկացություն կարող է հանգուցային կետից անջատվել ու աջակցել, ուժեղացնել առաջացած անկայունությունը: Դա ցայտուն կերպով դրսևորվեց 1340-ական (1961թ.) րվականների սկզբին, երբ երկրում իրականացվում էր արդիականացում:

Ամերիկայի Միացյալ Նահանգները 1339թ. դեյ ամսին (1961թ. հունվար) Քենեդիի իշխանության գալով, մի շարք բարեփոխումներ իրականացնելու նպատակով, Իրանի և այլ երկրների վրա ճնշում գործադրեց: 1340թ. (1961թ.), Այթոլյա Բորուչերդիի մահից հետո, ամերիկացիները հնարավորություն ստացան Ալի Ամինիին նշանակել վարչապետի պաշտոնում և ձեռնամուխ լինել իրենց նախատեսած բարեփոխումների իրականացմանը: Ալի Ամինին, լինելով բարեփոխումների կողմնակից, վարչապետի պաշտոնն զբաղեցնելուց հետո, նույն թվականի օրդիներին ամսին (1962թ., ապրիլ-մայիս) կառավարման և տնտեսական բարեփոխումների, հատկապես՝ հողային բարեփոխումների դրույթները դարձրեց իր գործունեության նշանարանը: Ատադոլֆս Այսմը, որպես բազմազորի վստահելի անձ, նշանակվեց բարեփոխումների կատարման պատասխանատու և 1341 թ. մեկը ամսի 16-ին (1962թ., հոկտեմբեր 8) հաստատեց նահանգային և մարզային միությունների օրինակները: Այդ օրերին թեկնածուների և ընտրողների հանդիսանում էր անհրաժեշտ պայմաններից հանվեց իսլամ բառը: Երդման արարողության ժամանակ Երկնային գիրքը փոխարինեց Դուրանին և կանանց քվեարկելու իրավունք տրվեց:

Ամիդ Սեյեդ Չանջանիի և Սեյեդ Համիդ Ռուհանիի համոզմամբ, Իման Խոնեյնին այդ փուլում բազմազորական վարչակարգը տապալելու նպատակ չունեք: Ամիդ Չանջանին Իրանի իսլամական շարժման ռազմավարության առաջին փուլը արդիականացման վտանգավոր քաղաքականությանը դեմ դուրս գալու փուլը (19) է անվանել: Սեյեդ Համիդ Ռուհանին այս խնդրի կապակցությամբ անդրադառնում է բազմազորին ուղղած Իմանի հեռագրին, որում նշված էր. «Ես, իսլամական ժողովրդի բարին ցանկանալու զգացումից դրդված, Նորին մեծություն, Չեք ուշադրությունը հրավիրում եմ, որ չվատասեք այն տարրերին, որոնք ստրկամտորեն շողորոթելով ցանկանում են կրոնին ու օրենքին հակասող իրենց կատարած բոլոր արարքները վերագրել Նորին մեծությանը և Սահմանադրությունը, որ ազգային պատկանելիության և իշխանության երաշխիքն է, դավադրաբար՝ սխալ որոշմամբ, ուժը կորցրած ճանաչել, որպեսզի իրագործեն իսլամի և ժողովր-

դի բշնամինների չարամիտ ծրագրերը... Ամենաբարձրյալ Աստուծոց իսլամական երկրների անկախությունն ու խառնակությունից մրանց պահպանելն են խնդրում»²⁹:

Այս փուլում միապետական բանավեճի որոշ հասկացություններ հանդիպեցին մարտահրավերների, սակայն բանավեճն իր ամբողջության մեջ դեռ շարունակում էր մնալ կայուն վիճակում, որովհետև նույնիսկ ամենազլխավոր հակառակորդները չէին ցանկանում այն փոխել: Ժամանակի ընթացքում արդիականացման քաղաքականության ներդրման պնդումները խթանեցին հակասության աստիակացումը:

Արդիականացումն Իրանում հարկադրական բնույթ էր կրում, ինչին նույնիսկ բազավորն սկզբում համաձայն չէր: Այն բանից հետո, երբ տեսավ, որ ամերիկացիները վարչապետի պաշտոնում Ալի Ամինիի թեկնածությունն են առաջ քաշում, համաձայնեց, որ նրանք լինեն այդ բարեփոխումների իրականացողները: Մյուս կողմից, արդիականացման քաղաքականությունն Իրանում համասեռ չէր և, նկատի չառնելով երկրի տեղական պայմանները, արագ տեսնելով հարկադրում էին տնտեսական բարեփոխումներ, որոնք չէին համապատասխանում քաղաքական զարգացումներին: Ինչպես վկայում են նասնավորապես՝ Նիկի Քեդի մաման տեսարանները, հենց այդ էր պատճառը, որ միապետական վարչակարգը հասցրեց օրինակաւորության ճգնժամին³⁰: Ուրեմն, 1340-ական թթ. (1961թթ.) ամերիկյան բարեփոխումները վերնաշերտային էին և չէին համապատասխանում երկրի բնիկ ազգաբնակչության ոչ հավատին, ոչ մշակույթին և չէին ուղեկցվում անհրաժեշտ քաղաքական առաջընթացով:

1340-1357թթ. (1961-1979թթ.) զարգացումներից յուրաքանչյուրն ինչ-որ ձևով բազավորական վարչակարգի բանավեճը հանգեցրեց ճգնժամի: Այս պարագայում հիմնական խնդիրն այն էր, որ գյուղատնտեսության և առևտրին հենված Իրանի տնտեսությունը փոխարինվեց մեկ արտադրատեսակ ունեցող տնտեսությունով, որը հիմնված էր նավթարդյունաբերության վրա: Կառավարությունը վերածվեց մի վարձակալող կառավարության, որը կանոնավոր ձևով մեծ եկամուտներ էր ստանում այն գումարներից, որ որպես վարձ կամ շահութառոկոս վճարում էին արտասահմանյան ընկերությունները³¹: Այս ժամանակահատվածում երկրորդ խնդիրը բազավորի քաղաքական կայունության բանավեճն էր, որը հիմնված էր հետևյալ երկու գործոնի վրա. ա. ընդդիմության անողոր ճնշում, բ. քաղաքականությունից հեռու պահելու նպատակով ժողովրդին խրախուսում³² հարստություն կուտակելու գործում: Երրորդ խնդիրն այն էր, որ բազավորը հիմարաբար առճակատման գնաց ժողովրդի կրոնական համոզմունքներին և հոգևորականությունը, այն դեպքում, երբ նույնիսկ ամերիկյան բարեփոխումների գործընթացում մտան առճակատման անհրաժեշտություն չկար: Ջալալեդին Մադանին

նշում է. «Պայքարը պետք է սկսվի մի կետից և արթնության շեփոր հնչեցվի: Ե՛իշտ այնպես, ինչպես իշխող վարչակարգին էր լքվում, քն կրոնը ճնշելու հարմար պահ էր հասել, Իմամն էլ հիմնավոր փոփոխություն կատարելու համար պատեն առիթի էր սպասում»³³: Իմամի համար այս պատեն առիթն ստեղծեցին՝ մի կողմից Այաթոլա Բորուջերդիի վախճանը, մյուս կողմից՝ քազավորի հակակրոնական քաղաքականությունը:

Հետագա տարիներին քազավորի վարած հակակրոնական քաղաքականությունն իր արտացոլումը գտավ նաև մի շարք այլ գործընթացներում. ա. Հիջրիի տարեգրության փոխումը քազավորական տարեգրության, բ. քազավորության 1355թ. (1976թ.) 2500-ամյակին նվիրված տոնակատարություններ, գ. «Էթբելա-ար» օրաթերթում տպագրած վիրավորական հոդված, դ. Սեյյեդ Մուսաֆա Խոմենիի նահատակում:

Այս իրադարձությունները խթանեցին միապետական իշխանության օրինականության ճգնժամը:

Գործոնների ամբողջ շարքը (արդիականացումը՝ որպես գլխավոր գործոն, մնացած բոլորը՝ որպես շտապօրականության արդյունքում ծնված գործոններ) միապետական բանավեճի դրույթները հասցրին տարատեղման վիճակի: Նասիահեղափոխական տարիներին քազավորի իշխանության հանգուցային խնդիրը վերակառուցվել էր՝ նրա շուրջ կենտրոնացած հասկացությունները կորցրել էին իրենց պահանջարկը: Արդիականացման տեսությունը մինչ այդ պահը ուներ նկարագրելու և պարզաբանելու հնարավորություններ: Այդ տեսությանը չհաջողվեց «մաման պայմաններում ինչո՞ւ պետք է իսլամական բանավեճը փոխարինել նախորդ բանավեճին» հարցին տալ սպառիչ պատասխան: Ըստ բանավիճային վերլուծությունների, Իրանը 1356թ. (1977-78թթ.) և 1357թ. (1978-79թթ.) հայտնվել էր քազավորի վարձակալող վարչակարգի օրինակաւորության ճգնժամի նախաշեմին: Ե՛իշտ է, բանավեճերի հնացած հասկացությունների քայքայման ժամանակ առկա են նոր բանավեճերի ստեղծման հնարավորություններ, սակայն ինչպե՞ս պատահեց, որ շիիզմի բանավեճը, Իմամ Խոմենիու ընթերցմամբ, հաղթեց և փոխարինեց նախկին բանավեճի տեսությամբ:

Այս հարցի կոնկրետ պատասխանը այն հոդվածում տրվում է բանավեճերի ուսմունքի դրույթներից ելնելով: Դա այն է, որ Իմամ Խոմենիի բանավեճը հետևյալ երեք պատճառներով՝ առկայություն, ընդունելիություն, իշխանություն, կարողացավ հաղթել փոխարինված բանավեճերին և շահնշահական բանավեճին: Դրանք էին ձախ (մարքսիստական) և ազգայնամոլական բանավեճերը: Իրանում ձախ բանավեճը երբեք ժողովրդականություն չվայելեց: Այն սահմանափակվել է միայն առանձին մտավորականների և համալսարանականների շրջանում: Հեղափոխության տարիներին ազգայնամոլական բանավեճն էլ իր հերթին

չունեցալ ոչ միայն կրոնական բանավեճի նման տարածում ու զարգացում, այլև կոնկրետ և ուժեղ առաջնորդություն:

Ընդհակառակը, Իմամ Խոմենյու բանավեճն օժտված էր ընդունելիության, վստահության և հասանելիության հատկություններով և համապատասխանում էր հասարակության բոլոր շերտերի մտածողությանն ու մշակույթին: Այս մասին Նիկի Քեղին գրում է. «Իրանի հեղափոխության ժամանակ գյուղացիները զանգվածաբար տեղափոխվելով քաղաքներ, հեռացան պապենական ավանդույթներից: Խորացավ հարուստների և աղքատների միջև ճեղքվածքը: 1973թ. նավթի գնի աճը վարչակարգի կործանման ևս մեկ պատճառ հանդիսացավ: Այսթույս Խոմենյին նույնիսկ բազմաթիվ ոչ հավատացյալների համար դարձավ հեղափոխության խորհրդանշական առաջնորդը»²⁵:

Չնայած Նիկի Քեղիի արտահայտած այս միտքը, բացի բազավորի վարչակարգի փլուզման պատճառներից, ակնարկում է նաև Իսլամական հեղափոխության հաղթանակի ամենակարևոր պատճառը (այսինքն՝ կրոնական ղեկավարման առավելությունը), սակայն նա այդ երկու խումբ պատճառները և գործոնները չի տարանջատում:

Հետմոդեռնիզմի ներկայացուցիչ Միշել Ֆուկոն, որը հեղափոխության հաղթանակի տարիներին գտնվում էր Իրանում, նշում է. «Այսթույսի Խոմենյիի անձնավորությունն առասպելի է նմանվում»: Նա մեջբերում է Աբադան քաղաքի գործադուլավորների հետ ունեցած զրույցը.

- Մենք այնքան էլ կրոնամոլ չենք:
- Բա ո՞ն եք վստահում, քաղաքական որևէ կուսակցության²⁶:
- Ոչ մի կուսակցության: Ոչ մեկին, բացի Խոմենյուց, միայն նրա ն²⁷:

Էռնեստո Լարչաուս և Չանբալ Մուֆթ նույնպես սյուժեն առասպելական մի հակացություն են համարում և համոզված են, որ յուրաքանչյուր հասարակություն առասպելի կարիք ունի: Չնայած նրանք սյուժեն տեսնում են բանավեճի շրջանակներում, սակայն համոզված են, որ առասպելական միջավայրն ինչքան լինոյալված լինի, այնքան սյուժեի գործողության ոլորտը կընդարձակվի:

Մոհամմադ Ռեզա Թաջիբը, օգտվելով քանավիճանյին մեթոդիկայի դրույթներից, հեղափոխության հաղթանակի գործում Իմամի դերակատարության ճշմարտության մասին նշում է. «Իմամի բանավեճը հավաստի²⁸, վստահելի և հասանելի²⁹ էր: Դա մի բանավեճ էր, որը կառուցված էր ոչ միայն մտածելակերպի ալիքների վրա, այլև տեղ էր գտնում տանջված ու արհամարհված մարդկանց հոգում ու սրտում, և հասարակության անդամները ոչ թե բանակառնությունից, այլ սիրուց դրոյված, նրա դրոշակակիրը դարձան: Ֆուկոյի բանավեճի առանցքը հասարակ մարդն էր, ոչ թե մտավորականության գաղափարները: Ֆուկոն Իրանի հեղափո-

խության մեջ տեսնում էր մի ուժ, որ գալիս էր ներքևից և համարում էր ոչ կառուցվածքային, սակայն Փեղեկիների վարչակարգի դիմաց ստեղծեց նրանից տարբերով³⁰ ինքնությունների մի ամբողջ շղթա»³¹:

Մոհամմադ Ռեզա Թաջիբի համոզմամբ, Իմամը հակադրվել էր քազավորին ու վարչակարգին, այլ ոչ թե արդիականացմանը:

Մամի Ջոքեյայի կարծիքով, Իմամն այնպես էր գրում ու խոսում, որ ասես գոյություն չունեն Արևմուտք ու արդիականացում հասկացությունները: Իմամն անհրաժեշտ չէր համարում իր գրույցներում անդրադառնալ ժողովրդավարական, իրերալիստական և սոցիալիստական ուսմունքներին³²: Իհարկե, Իսլամական Հանրապետությունը գործնականորեն զարգացրեց իսլամական բանավեճը և ընդլիմացավ Արևմուտքի բանավեճին:

Բարի Մաիդը, Իմամի բանավեճի՝ մի կողմից քազավորի և մյուս կողմից՝ Արևմուտքի բանավեճերին հակադրվելու հանգամանքի մասին գրում է. «Մինչև (Իմամ) Խոմենյու վարչակարգի հաստատումը, ենթադրվում էր, թե իսլամի նկատմամբ ցուցաբերվող ճնշումը լույ թողոք արտահայտող բանավեճի տեսակ էր և քաղաքական իշխանության հասնելու հնարավորություն ու քննալիստական բանավեճի կաղապարներ ընդունելու անհրաժեշտություն չունեք: Ընդհակառակը, (Իմամ) Խոմենյու իշխանության գալուց պես, Արևմտյան բանավեճի կենտրոնացումն ու կարականությունը կասկածի տակ առնվեց: Ըստ երևույթին, նման կասկածանքը վերաբերում էր Արևմուտքի գրաված դիրքին, որը թուլացնում էր եվրոպամետ (եվրոպագիտության) բանավեճերի հնարավորությունները: Իմամ Խոմենյին իր քաղաքականության նախագիծը պարզաբանելու նպատակով, առանց ապավինելու Արևմուտքի քաղաքականության տեսությանը, կարողացավ քազավորին իշխանությունից հեռացնել և հիմնադրել Իսլամական Հանրապետություն: Ի վերջո, նրան հաջողվեց օգտվել այն բջնամական հարաբերություններից, որ իսլամի ու Արևմուտքի միջև ստեղծել էին քննալիստական բանավեճերը և իսլամը ներկայացրեց որպես ավելի բարձր հանգուցակետ՝ նոր քաղաքական կարգերում: Քննալիզմն իր հասարակության մեջ իսլամը լծացման և հետազոտության խորհրդանշիչ է համարել, այսինքն՝ ոչ Արևմտյան (և հետո էլ, ոչ մոդեռնիստական): Իմամ Խոմենյին իսլամը համարում է և՛ որպես հակառակության (ընդդիմության) խորհրդանշիչ քննալիստական կարգերի դեմ, և՛ որպես հակառակության նշանակ՝ ընդդեմ Արևմուտքի համաշխարհային հզորության (իր իսկ մեկնաբանությամբ)»³³: Այլ կերպ ասած, Իսլամական հեղափոխության բանավեճը հակադրվեց միապետական բանավեճին, իսկ Իսլամական Հանրապետության բանավեճը՝ Արևմուտքի բանավեճին:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ Էռնեստո Լարչաուի և Չանբալ Մուֆթի բանավեճային տեսությունը ոչ միայն օգնում է Իսլամական հեղափոխության

ըմբռնմանը և պարզաբանելու նրա հաղթանակի պատճառներն ու գործոնները, այլև շատ առումներով համապատասխանում է կրոնական ղեկավարման տեսության դրույթներին, որ մանրամասնորեն ներկայացված է «Լեց տեսություն Իսլամական հեղափոխության հաղթանակի վերաբերյալ» գրքում: Իհարկե, յուրաքանչյուր մեթոդ, այդ բվում նաև բանավիճային վերլուծության մեթոդը, ունի իր ուրույն պիտանիության և ոչ պիտանիության առանձնահատկությունները, նույնիսկ, երև տվյալ մեթոդի նորոգման ու ձևափոխման հնարավորությունը և կիրառումը գոյություն ունենան Իրանի իսլամական հեղափոխության ուսումնասիրության հարցում:

Սույն հոդվածը նպատակ չի ունեցել բնմարկելու կամ շտկելու տվյալ մեթոդը, հատկապես՝ հասարակական սուբյեկտի դերի հարցում: Այստեղ միայն քննարկվել են այդ մեթոդի կիրառումն ու նրա արդյունքների համեմատությունը կրոնական ղեկավարման տեսության հետ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Discursiv analysis	24. Incorporation
2. Discourse theory	25. Subjectivity
3. Ernesto Laclau	26. Social agency
4. Chantal Mouffe	27. Subject positions
5. Genealogy	28. Political Subjectivity
6. Rentier	29. Hegemony
7. James Davies	30. Availability
8. Availability	31. Acceptability
9. Acceptability	32. Floating Signifiers
10. Hegemony	33. Nodal point
11. Archaeology	34. Dislocation
12. Statement	35. Cosure
13. Sign	36. Closure
14. Speech-act	37. Element
15. Discursive formation	38. Field of discursivity
16. Interpellation	39. Moment
17. Spilit	40. Temporality
18. Myth	41. Possibility
19. Mythical Space	42. Freedom
20. Articulation	43. Modernity
21. Relational	44. Credibility
22. Antagonism	45. Acceptability
23. Exclusion	46. Chain of differences

ՕԳՏԱԳՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հավելյալ տեղեկությունների համար դիմել հետևյալ աղբյուրներին

1. Նորման Ֆեր Գլաֆ, Բանավեճերի քննադատական տեսություն, «Մարբազե Նաշրե յեթանեհա», Թեհրան, 1381:
2. Seyed Sadegh Haghghat, Six Teories about the Islamic Revolutions Victory, Tehran: Alhoda, 2000.
3. Ibid.
4. Մալաբուրյան Մոսաֆա, Պտույտ հեղափոխության տեսություններում, «Լոնս» հրատարակչություն, Թեհրան, 1372, էջ 140:
5. Haghghat, Op., Cit., PP:41-84.
6. Jermey R. Carrette, Foucault and Religion, U.K: Routledge, 2000.
7. Գեյվիլ Մարշ, Ջերի Ստոկեր, Սերոդ և տեսություն քաղաքական գիտություններում, Ամիր Անիսդ Հաջի Յուսեֆիի թարգմանությամբ, «Ռազմավարական ուսումնասիրությունների գիտահետազոտական կենտրոն», Թեհրան, 1378, էջ 197:
8. Ernesto Laclau, New Reflections on the Revolution of Our Time, London: Verso, 1990, PP:61-64.
9. Նույն տեղում, էջ 201-202:
10. Նույն տեղում, էջ 205:
11. Գեյվիլ Մարշ, Ջերի Ստոկեր, Սերոդ և տեսություն քաղաքական գիտություններում, էջ 207-208:
12. Նույն տեղում, էջ 208-209:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում:
15. Ernesto Laclau, Op., Cit., P. 66.
16. Սաիդ Բարի, Հիմնավոր երկյուղ- եվրոպամետություն ու իսլամականության երևան գալը, Դլանոնեզա Ջամշիդիայի և Մուսա Անրաբիի թարգմանությամբ, «Գեհրանի համալսարանի հրատարակչություն, 1379, էջ 87:
17. Jorgensen, Op., Cit., P. 54.
18. Ernesto Laclau, Op., Cit., PP:41-43.
19. Ջանջանի Արբասայի, Իսլամական հեղափոխությունը և նրա արմատները, «Ջեբարե սիասի», Թեհրան, 1370, էջ 373-374:
20. Մադանի Ջալալեդին, Իրանի ժամանակակից քաղաքական պատմություն, «Կաֆրաբ Լերեշարաբե Էլգամի», Լոն, 1361, հ. 1, էջ 155-158 և 377-379:
21. Նիլի Քեյի, Իրանի հեղափոխության արմատները, Արդուբախիմ Գովալիի թարգմանությամբ, «Կաֆրաբե մաշրե ֆարհանգե Էլգամի», 2-րդ հրատարակչություն, Թեհրան, 1375, էջ 278-ից սկսած:
22. Բոլուջերդի Մեհրաբադ, Իրանի և Արևմտյան մտավորականները, Ջամշիդ Շիրազիի թարգմանությամբ, «Ջորդգան» հրատարակչություն, Թեհրան, 1377, էջ 48:
23. Նույն տեղում:
24. Մադանի Ջալալեդին, Իրանի ժամանակակից քաղաքական պատմություն, էջ 376:

րել Իսլամական Հանրապետության մենաշնորհն ու ուժը: Իրանի քաղաքական պատմության մեջ գոյություն չունի ոչ մի կարևոր ընդհանուր այնպիսի կետ, որ պատմական կոնկրետ ժամանակահատվածում երկրի՝ բարձր, ցածր, միջին և ավանդական համայնքային դասակարգերի միջև դեր խաղացած լինի: Շուկայականները, համարվելով Իրանի հասարակության ամենախին շերտերից մեկը, պատմության ընթացքում միավորվել են շիա հոգևորականների հետ և կազմակերպված ձևով մասնակցել երկրում տեղի ունեցող բոլոր տեսակի հասարակական ու քաղաքական շարժումներին: Շուկայականների՝ «Հանուն առևտրականներից մեկավորված խորհրդարանի» կազմակերպված պայքարը, «Ճխախտի շարժում», «Սահմանադրական շարժում» գործընթացներին մասնակցությունը և տարած հաղթանակում շուկայականների, հատկապես՝ վաճառականների ու մանր առևտրականների ակտիվ գործունեությունը, 1304թ. (1925թ.) «Հիմնադիրների մեջլիսի» աշխատանքներին ներկա գտնվելը, Ահմադ շահի ու Ղաջարների դինաստիայի տապալման գործում ճակատագրական նշանակություն ունեցող՝ շուկայականների և հոգևորականների համատեղ ու կազմակերպված մասնակցությունը, «Ընդհանուր բնություն անցկացնելու» հարցում արհեստավորների և մանր առևտրականների (խանութպաններ) խաղացած դերը, Ռեզա շահի իշխանության վերջին տարիներին ազգային բուրժուազիայի զարգացումը, դոկտոր Մոսադեղեյի ազգայնական շարժումը և նավթարդյունաբերության ազգայնացումը, «Լեզգային դիմադրություն», «Լեզգային ճակատ», «Կրոնական կռախիցիոն հանձնաժողովներ» հակաբռնապետական կազմակերպություններին ու խմբավորումներին ակտիվորեն անդամակցությունը, շուկայականների համակողմանի մասնակցությունը 1342թ. խորդայի 15-ի (1964թ. հունիսի 5) ապստամբությանը, նրանց ցուցաբերած աջակցությունը երկրի հոգևորականությանը, և ի վերջո, պետական մեքենայի դեմ թնիրանում ու շրջաններում կազմակերպված համընդհանուր գործադուլներում նրանց ունեցած քացարձակ ազդեցիկ դերը, ինչպես նաև 1356թ. (1977-78թթ.), 1357թ. (1978-79թթ.) «Բռնապետության դեմ» շարժումը հանգեցրին Իրանում Իսլամական Հանրապետության հաստատմանը: Բնական է, որ ոչ միայն մզկիթ - շուկա և հոգևորականություն - շուկայականներ պատմական ու կազմակերպչական համագործակցության արդյունքում են ստեղծվում անհրաժեշտ պայմաններ քաղաքական գործընթացներին արհեստավորների, վաճառականների և մանր առևտրականների ներկայության ու մասնակցության համար, այլև հարկավոր է նրանց ուժի հիմնական գործոնը փնտրել շուկայի ֆինանսատնտեսական հնարավորությունների և հզորության հարատևության մեջ:

Իրանի քաղաքական և հասարակական զարգացումների համատեղստում շուկայի, շուկայականների և նրանց դերի վերաբերյալ ուսումնասիրություններ ու

հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ կառավարության դերի գործոնը ևս: Այլ կերպ ասած, առանց տեղյակ լինելու կառավարության ստեղծման և նրա արտաքին հովանավորների մասին, ամենարին է պատկերացնել մեծ զարգացումների ընկալումը: Վերջին երկու հարյուրամյակի ընթացքում ականատես ենք կառավարության ուժեղացմանը, որը տեղի է ունեցել երկրի ջրային, հողային, այնուհետև ընդերքի հարուստ պաշարների իրացման հաշվին: Բնական է, որ ինչքան հզորանում է իշխանական մեքենան, այնքան ավելի է մեծանում նրա, դեպի կենտրոնացման ու հզորացման ճգնաժամը ցանկությունը և պակասում օգտակար գործիչություն դարձնելու դասակարգերի շահերին սկսում են քաղաքական ու տնտեսական զարգացումների գործընթացը և նույնի հարկադրում հասարակությանը: Պետական մեքենայի ավելի ուժեղացումը խթանում է հասարակությունից ու ժողովրդից նրա օրեցօր հեռացմանը և իշխանության օրինականության բույսացմանը: Պետական մեքենայի օրինականության կրուտան արագացնում է այլ երկրներից նրա կախվածությունը և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրումը: Նման իրավիճակների խորացումն առայժմ է բերում մի շարք անընդմեջ հասարակական հուզումներ: Պատմության ընթացքում մեծ հուզումները ղրկելով են մտացույցներով, արտագաղթով, փողոցային բողոքի ցույցերով, գործադուլներով, ապստամբություններով, ընդվզումներով, հեղափոխություններով: Իրանի քաղաքական պատմության մեջ բոլոր տեսակի դիմադրությունները տեղի են ունեցել քաղաքներում, որի հիմնական կասարողները եղել են ավանդական միջին խավը (միայնակ կամ համաձայնելով ու միանալով նոր միջին խավի հետ) և բանվորները:

Շուկայի վիճակի և շուկայականների կացության ուսումնասիրությանը նվիրված սույն հոդվածում օգտվել ենք պատմական հասարակագիտությունից, փորձել ենք հնարավորինս հենվել սկզբնաղբյուրների և կարևոր սվլակների վրա: Հողվածում ձգտել ենք պարզաբանել, թե շուկայականները, արհեստավորներն ու մանր առևտրականներն Իրանի հասարակության պատմության ընթացքում ի՞նչ տեղ են զբաղեցրել և ինչպիսի՞ դիրք են զբաղում այսօրվա Իրանի քաղաքական-հասարակական կյանքում, ինչպիսի՞ փոփոխություններ է կրել շուկան Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծումից հետո: Փորձել ենք ներկայացնել, թե համաշխարհային զարգացումների ճնշման ներքո, ինչպե՞ս է երկիր թափանցել կապիտալիզմը և հասարակության ներսում իրականացվող փոփոխությունների արդյունքում ինչպե՞ս են փոխվել շուկա և շուկայական հասկացություններն ու հարաբերությունները:

1. Տասկացությունների սահմանում

Ընդհանրապես, հասարակագետների շրջանում *շուկա* և *շուկայականներ* հասկացությունների վերաբերյալ գոյություն չունի միասնական տեսակետ, որովհետև Իրանի հասարակության պատմության ընթացքում շուկան, ներքին բազմաթիվ գործոնների ազդեցության տակ, փոփոխությունների է ենթարկվել թե՛ բնույթով, թե՛ էությունը: Հաճախ *շուկա* բառն օգտագործվում է անառքերությանը: Ըստ ավանդույթի՝ շուկան, մզկիթն ու բազալիդական պալատը ներկայացրել են քաղաքային համայնքի կմախքը: Շուկան իրենից ներկայացրել է գմբեթաձև ծածկով մի շինություն՝ բաղկացած իջևանատներից, սրահներից, պասաժներից, տնտեսաֆինանսական գործունեություն ծավալող կառույցից ու հասարակության համար անհրաժեշտ առարկաների արտադրության փոքրիկ արհեստանոցներից: Ինչպես նշում են Ահմադ Թավաքքոլին ու Մոհսեն Չամանին, շուկան առևտրի կենտրոն լինելուց բացի, ունի նաև այլ պարտականություններ կատարելու նշանակություն: Իրականում, միայնակ առևձկող մի քանի գործողությունների իրականացման վայրը կարելի է անվանել շուկա: Շուկա, այսինքն՝ 1. առք ու վաճառքի հնարավորություն, 2. պայմանների համալիր, որը հնարավոր է դարձնում առևտուր կամ ապրանքափոխանակում իրականացնելը, 3. արտաշուկայական համալիր գործողություններ և գործարքներ կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմ, 4. գործոններ, որոնց շնորհիվ իրագործվում է կողմերի համար շահավետ առևտուր:

Այսին հոդվածում *շուկա* բառը գործածվում է *կառույցի* իմաստով: Շուկա կառույցը բաղկացած է հետևյալ երեք հասկացություններից՝ որպես առք ու վաճառքի վայր, որպես առք ու վաճառքի պայմանների և կառույցների համակարգ, և որպես առևտրական գործողություններ իրականացնող ու կարգավորող մեխանիզմ:

Սպառողի ու գնորդի, արտադրողի ու վաճառողի միջև ձևավորված կամային համագործակցության ու տեղեկացվածության մթնոլորտը, որ հին ժամանակներից ի վեր իշխում է շուկայում և համարվում նրա գործունեության չափազանց կարևոր պայմաններից մեկը, կողմերին հնարավորություն է տալիս կայացնելու ինքնուրույն որոշումներ: Ծանոթանալով *շուկա* հաստատության առանձնահատկություններին ու շուկայում տիրող պայմաններին՝ փորձենք պարզաբանել, թե *շուկայականները* հասարակության ո՞ր խմբերին ու շերտերին են պատկանում կամ, այլ կերպ ասած, Իրանի հասարակության մեջ ո՞ր խավերի ու դասակարգերի մասն են կազմում:

Եթե ընդունում ենք, որ ընդհանուր առմամբ ավանդական համայնքներն ունեն *բարձր, ցածր և միջին* դասակարգեր, ապա անհրաժեշտ է պարզել, թե շուկայականներն այդ երեք հասարակական խմբերից ո՞ր մեկին են պատկանում: Սո-

ցիոլոգների ու պատմաբանների շրջանում իշխում է այնպիսի տեսակետ, ըստ որի շուկայականները հոգևորականության հետ միասին կազմում են միջին դասակարգի հիմնական շերտերը: Յուրաքանչյուր հասարակարգում միջին դասակարգն իր մեջ է ընդգրկում տարբեր խավերի ներկայացուցիչներին, որոնք ունեն տարբեր ծագում, քաղաքական տարբեր հակումներ և նպատակներ: Միջին դասակարգը բաժանվում է երկու՝ *նոր և ավանդական* ենթադասակարգերի: Այս դասակարգի նոր ենթադասակարգին են պատկանում պետական ծառայողները, կրթություն ունեցողները, տնօրենները, ազատ մասնագիտության տիրապետողները, այդ թվում՝ քիշկներն ու իրավաբանները, իսկ ավանդականներն՝ հոգևորականներն ու մանր բուրժուազիայի ներկայացուցիչները: Ավանդական բուրժուազիան կազմում է Իրանի բուրժուազիայի ամենահին ու ամենաազնիվ շերտը, որի գործունեության հիմնական վայրը հանդիսանում է *շուկան*... Բուրժուական շերտերից միայն ավանդական բուրժուազիան է, որն իր պատմական վաղեմությունից, կիսքերի կայունությունից, նյութական հնարավորություններից ու հասարակության մեջ ձեռք բերած հեղինակությունից ելնելով, ունի գործունեության ավելի լայն շրջանակներ, արմատական գաղափարախոսություն և արհեստակցական ավանդույթներ:

Թեև 19-րդ դարի վերջերում, օտար երկրների ու ընկերությունների հետ Իրանի ունեցած արտաքին առևտրի ծավալների ընդլայնմանը զուգահեռ, բուրժուազիայի դերը երկրի ֆինանսատնտեսական կյանքում բարձրացավ, բայց ավանդական բուրժուազիան աստիճանաբար կորցրեց իր ֆինանսական հնարավորությունները, այնպես, որ այդ ժամանակահատվածից հետո, տնտեսական գործունեությունների բացակայության պատճառով, ոչ անկախ կապիտալիզմի և ազգային կապիտալիզմի միջև, տարբերությունների որոշումը շատ ավելի դժվարացավ: Ինչնիցե, երբ այս հոդվածում խոսքը գնում է շուկայականների, այդ թվում՝ մանրածախ ու մեծածախ վաճառականների, արհեստավորների ու խառնուրդների մասին, նկատի ունենք հասարակության այն շերտերին, որոնք իրենց գործընկերների հետ միասին կազմակերպված ձևով երկրի բնակչությանն ապահովում են անհրաժեշտ ապրանքներով:

Արդյունաբերական և կիսարդյունաբերական կարևոր քաղաքների, այդ թվում՝ Թեհրանի, Իսպահանի, Թավրիզի և Դավալիի մզկիթների, հոգևոր դպրոցների, արհեստակցական խմբերի քանակի, ազգային արտադրական միավորների և հասարակությանն սպասարկող կազմակերպությունների վիճակի ուսումնասիրությունները կարող են Դաջարների ժամանակաշրջանի և Ռեզա շահի իշխանության առաջին տարիների, Իրանի հասարակական խմբերի դասակարգմանը և տնտեսության կառուցվածքին ծանոթանալու խնդրում օգտակար լինել: Օգտվելով սկզբնաղբյուրներից և շուկայականների գրադմուքի, արհեստների ու աշ-

խատանքի տեսակներից, ներկայացնում ենք Ղաջարների Ահմադ շահի իշխանության վերջին տարիներին և Ռեզա շահի թագավորության առաջին տարիներին վերաբերող հետևյալ պատկերը՝ Թեհրանի 202 վաճառականների, արհեստավորների ու մանր առևտրականների ընդհանուր թվից 14-ը՝ վաճառական, 99-ը՝ արհեստավոր, 89-ը՝ խոշոր վաճառական (այդ թվում՝ համայնքապետեր, քանաստեղծներ և պետական ապարատի ծառայողներ), իսկ մնացածի 80 տոկոսը կազմել են արհեստավորները և մանր առևտրականները: Ըուկայում ու նրա շրջակայքում գործել են կտորավաճառներ, փորագրիչներ, կաշեգործներ, դարբիններ, խառատներ, ոսկյա թելերով ասեղնագործությամբ զբաղվողներ, գլխարկ կարողներ, ոսկերիչներ, կազմարարներ, կողպեք պատրաստողներ, ապակեգործներ, պղնձագործներ, դամակ պատրաստողներ, կոշկակարներ, նկարիչներ, փայտի վրա փորագրություն կատարողներ, չախմակագործներ, հյուսներ, մոմավաճառներ, հյուսողներ և այլն:

1881թ. Ղազվին քաղաքի բնակչության ավելի քան 80 տոկոսը, Իսպահան քաղաքի նման, կազմել են մանրավաճառները, ձեռքի աշխատանքով զբաղվողները և այլ արհեստավորները:

Ղաջարների ժամանակաշրջանում և Ռեզա շահի իշխանության օրոք Իրանի քաղաքների շուկաներում խոշոր վաճառականները գտնվում էին իշխանության, դիրքի ու հարստության բուրգի գագաթում և համարվում էին երկրի մեծամեծները: Բացի այդ, շուկայի արհեստավորների, ակտիվ արտադրական և ծառայություններ մատուցող խմբերը կարելի է աստիճանակարգել հետևյալ կերպ. վերևից ներքև առաջին խմբի մեջ էին ընդգրկված հեղինակավոր արհեստավորներն ու առևտրականները, օրինակ՝ մեծածախ առևտրով զբաղվողները, գորգավաճառները, դեղատոյսեր, համեմունքներ վաճառողները, ոսկերիչները, փայտի վրա փորագրություններ կատարողները, հախճապակյա և բյուրեղապակյա իրեր վաճառողները, ծառայողական բնույթի կարևոր գրադուներն ու նեղակողները՝ շինարարները, մետաղյա իրեր արտադրողները և տեքստիլագործները: Երկրորդ աստիճանի վրա էին գտնվում սովորական առևտրականներն ու արհեստավորները, ինչպես օրինակ՝ հյուսները, դարբինները, պղնձագործները, թամբագործները: Հասարակության երրորդ աստիճանի վրա էին փոքրածավալ առևտրով զբաղվողներն ու որոշ արհեստավորներ՝ հնավաճառները, պայտարները, փայտագործները, հոկողները, աղեղնալար պատրաստողները, փերեզակներն ու հրուշակագործները: Իսկ վերջին աստիճանի վրա էին՝ շինարարության բանվորները, բեմակերպիչները, գլխի վրա մեծ մատուցարանով մթերք տեղափոխողները, փայտահատները և այլն: Ըուկայականներին կամ շուկայի ակտիվ ուժերին կարելի է աստիճանակարգել ոչ միայն իրենց ունեցվածքով, աշխատուժով և արտադրությամբ, այլև գրաված դիրքով, ղեկավարման ձիրքով և ուժով՝ հետևյալ կերպ. ավագանու, վար-

պետների, արդյունաբերողների, աշակերտների ու ցրիչների:

Վլիխն Ֆլորը շուկայում առկա ակտիվ և գործունյա վաճառականների, մեծածախ առևտուր կազմակերպողների, դրամափոխների, միջնորդների ու վաճառողների հինգ խմբից միայն մեծածախ առևտուր կազմակերպողներին է դասում վաճառականների շարքին և նշում. «Իսկական վաճառականներ են համարվում, նրանք մտածում են ապրանքների արտահանումով և ներմուծումով որոշակի շահույթ ստանալու մասին: Իսկ այն մեծածախ առևտուր կազմակերպողները, ովքեր որպես միջնորդ գործում են վաճառականների և առևտրականների միջև, համարվում են մեծածախով զբաղվողներ: Նրանք նույնպես դասվում են վաճառականների շարքին: Իսկ մանրավաճառները, արտադրողների նման (ըստ զբաղմունքի), դասվում են արհեստավորների դասին: Այլ կերպ ասած, վաճառականները հինգ նույն մեծածախ առևտրով զբաղվողներն են, իսկ մնացյալ խմբերը մանրավաճառներն են»:

Ռեզա շահի բարեփոխումների և կատարած նորարարական քայլերի շնորհիվ, նոր միջին դասակարգի որակական ու քանակական աճին զուգահեռ, երկրի ավանդական միջին դասակարգի անդամները որոշ չափով կորցրին իրենց տնտեսական դիրքը, հասարակության մեջ ունեցած հեղինակությունն ու դերը, այնպես որ, *շուկա* և *շուկայականներ* ավանդական հասկացություններն ու նրանց մեկնաբանությունները կիրառելի չեն այսօրվա Իրանի հասարակության համար: Այլ կերպ ասած, Փեհլեվիների իշխանության գալով, *շուկա* և *շուկայականներ* հասկացությունն իմաստն ու գործունեությունը հարցականի տակ առնվեցին հետևյալ հանգամանքների պատճառով. 1. օտարերկրյա կապիտալի ու ապրանքների լայնածավալ ներխուժումը և թափանցումը, 2. մասնագիտությունների ու ապրանքների տեսականու աճը, 3. բնակչության և հասարակական կարիքների աճը, 4. հասարակական խմբերի հավակնուտ ու շահադիտական գործունեությունը, 5. շուկան ու շուկայականներին չպաշտպանելու նպատակով իշխանության կողմից կազմակերպվող քաղաքական հետապնդումները:

Վերջպես, հասարակության բուրժուականացման, ցանցային հանրախանութների, բուսիկների (կրպակների), սուպերմարկետների և պասաժների ստեղծման շնորհիվ, ավանդական շուկան, որպես քաղաքային տնտեսության հիմնական օջախ, կորցրեց իր նշանակությունը, որովհետև այսօրվա քաղաքային ի վիճակի է ավանդական շուկայից դուրս, քաղաքի ցանկացած վայրում, ձեռք բերել անհրաժեշտ ապրանք ու ապահովել իր և ընտանիքի կենցաղային կարիքները: Այս իրականությունից ելնելով, կարելի է նշել, որ Իրանի ավանդապահ հասարակության մեջ, մինչև Փեհլեվիների դինաստիան, գոյություն են ունեցել դասակարգելի, ժողովրդական խավերի ու շերտերի միջև նյութական բարիքներից օգտվելու հնարավորության տարբերություն հասկացությունը և հասարա-

կական արժանապատվության զգացում իրողությունը, սակայն հանրային հարստության փոքր ծավալները, ժողովրդի հասարակ ապրելակերպը, բնակչության մեջ տիրող համերաշխությունը (առանց հաշվի առնելու դասակարգային պատկանելիությունը), կրոնական ծիսակատարությունների ժամանակ նրանց միջև գոյություն ունեցող մշտական կապը, ոչ մեծ քաղաքները, նրանցում ապրող բնակչության փոքրաթիվ լինելը պատճառ էին հանդիսացել, որ հասարակության բոլոր շերտերի և խավերի միջև տիրեց միասնամտություն: Սակայն հասարակական ձևավորումների, բուրժուազիայի շարքերը հարուստների և գեղջուկների անցման շրջանում ականատես ենք դառնում դասակարգային տարածայնությունների ընդայնմանը, բազմաթիվ հասարակական, քաղաքական ու մշակութային տարանջատումների առաջացմանը, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին նախատել է խավերի և հասարակական դասերի տեղաշարժին, դասակարգերի ավանդական դերի նկատմամբ անվստահության ձևավորմանը և նրանց համար նոր դերի սահմանմանը:

ԻՐԱՆՈՒՄ ՄՈՂԵՌՆԻՍՏԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ՈՐՈՇ ԿՈՂՄԵՐՆ ՈՒ ՆՐԱ ՆՄԱՇԵՆԱՐՎՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գոկոբր Նուրանարբաս Թափասադի

Իսլամը պատմության ընթացքում մարդկային հասարակության զարգացումների ու փոփոխությունների ասպարեզում, այլ կրոնների ու տարրեր ուղղությունների մարտահարավորների դեմ ի գորու է եղել հարմարվել և հետևում թողնել բազում վերափոխություններ: Առանձին դեպքերում փոփոխությունների դեմ խիստ դիմադրություն է ցուցաբերվել: Երբեմն էլ նպատակը եղել է վերադարձ դեպի եին պլանդոյթներն ու իսլամի նախնական սկզբունքները: Այս առանձնահատկություններն առավելապես ակնհայտ են իշխանության ձևի և քաղաքական համակարգի ոլորտներում: Իսլամական աշխարհի ներսում մի կողմից թախիբանիզմն ու սադաֆիականությունն (իսլամի սուննի ուղղության ադանդաներից, է. Բ.) է զարգանում, մյուս կողմից՝ աշխարհականությունը: Ժամանակակից Թուրքիայի աշխարհիկ իշխանությունը քաղաքականությունը լիովին տարանջատել է կրոնից:

Ժամանակակից Իրանում նույնպես ականատես ենք բազմաթիվ մարտահրավերների ավանդական իսլամից մոդեռնիստական իսլամին անցնելու համար: Այստեղ պետք է նկատի ունենալ ինչպես գաղափարն ու կարծիքը, այնպես էլ այն փոփոխությունները, որ տեղի են ունենում ավանդույթներում ու ծեսերում: Այլ կերպ ասած, անիրաժեշտ է պարզաբանել, թե եվրոպական ծագում ունեցող *արդիականությունը*, որպես նոր երևույթ, ի՞նչ չափով է կարողացել թափանցել իսլամական աշխարհ և ի՞նչ աստիճանի է եղել իսլամի եիմունքներին ու սկզբունքներին նրա համապատասխանության հնարավորությունը: Ո՞ր մեխանիզմներն են հեշտացրել այդ համապատասխանությունը կամ խոչընդոտել նրա առաջընթացին: Իհարկե, պետք է տարբերել *արդիականություն*, *արդիականացում* և *մոդեռնիզմ* հասկացությունները:

Արդիականությունն արտահայտում է մի դարաշրջան իր բոլոր առանձնահատկություններով: Այդ հասկացության մեջ ընդգրկվում են և՛ գիտության զարգացում, և՛ հասարակական հեղափոխություններ, և՛ շահագործում ու գաղութատիրություն հասկացությունները: Վերջին երկու հանգամանքները շատ կարևոր նշանակություն են ունեցել, հատկապես մահմեդականների համար, որովհետև դրանք իրենց մեջ կրել են երկակիություն և հակասություն: Իսլամական աշխարհը մի կողմից գտնվել է հզոր երկրների ոտնձգությունների ու բռնության դեմ- համդիման, մյուս կողմից՝ ձգտել արդիականության որոշ կողմերի: Բացի այդ, տեղի ունեցած փոփոխություններն ու զարգացումները կատարվել են արտաքին գործոնների ազդեցության ներքո, և մյուս կողմից՝ ներքին տարրերն ու գործոնները

փորձել են փոխվել, զարգանալ ընդունել նոր քաղաքակրթություն:

Արդիականությունը լուսաբանում է մեր դարաշրջանը և ներկայացնում պատմական մի ժամանակաշրջան իր բազմաթիվ առանձնահատկություններով: *Մոդեռնիզմը* մի ուղղություն է, որն այս դարաշրջանին պարզևուժ է իսկություն և ձգտում իր ձեռքը վերցնել նրա բոլոր նվաճումները: Հենց այս պատճառով է, որ արդիականության կողմնակիցները կամ մոդեռնիստները անսասան, առանց այլևայության, կողմնակից են Արևմուտքի քաղաքակրթության ու մշակույթի ընդունմանը և, ինչպես նշել է Թադիզարեն, նրանք ցանկանում են ոտից գլուխ եվրոպացի դառնալ:

Արդիականացումն էլ իր հերթին ձգտում է արդիականացնել հասարակությանը և ավանդական կյանքից ու ապրելակերպից անցում կատարել դեպի նոր դարաշրջան: Արդիականացումը, գլխավորապես նյութական կյանքի փոփոխությունն է, որի դրսևորումն արտահայտվում է քաղաքում ապրելու, աղյուծաբերություն ունենալու, այդ արդիականացումն իրականացնելու, առողջապահությունը զարգացնելու, ընդհանուր կրթությունն ընդլայնելու և համալսարաններ բացելու մեջ: Տեսնում ենք, որ իսլամական աշխարհի պետություններն ու իշխանությունները ձգտել են արդիականացնել իրենց հասարակությունները, այն դեպքում, երբ արդիականացման գործընթացների վերաբերյալ որևէ փոխտոփայության տեսություն գոյություն չի ունեցել: Սակայն մոդեռնիստները հաշվի են առել ժողովրդի կարծիքը և իրականում նրանք ցանկացել են հնացած մտածելակերպն ու գաղափարները փոխարինել նոր, ժամանակակից մտածելակերպով ու գաղափարներով:

Անկասկած արդիականության առանձին դրսևորումները չի կարելի առանձնացնել արդիականացումից և վերակառուցումից: Սակայն, ոմանց կարծիքով՝ բանի դեռ չենք պարզաբանել *արդիականության* բանավեճը և *արդիականացված* հասկացությունների գաղափարը, չենք կարող հայտդություն ունենալ արդիականացման հարցում: Ուրիշներն էլ այս երկու հասկացություններն ամբողջապես առանձնացնում են իրարից:

Հարկ է նշել, որ իսլամական աշխարհում այս շարժման դեմ եղել են տարբեր, նույնիսկ հակառակն արձագանքներ: Ավանդապաշտները *արդիականացումը* համարում են մույճիսկ որպես գաղութատիրության մի նոր տեսակ, որը հակասում է իսլամական ավանդույթներին:

19-րդ դարի սկզբից իսլամական աշխարհում գործ ունենք *վերականգնում* և *բարեփոխում* երկու կարևոր հասկացության հետ: Այս երկու հասկացությունն իսլամական աշխարհում նոր երևույթներ չեն, շրջանառվել են նաև հին ժամանակներու և, արդիականությանն առնչվելով, վերակենդանացել են ու դրսևորվել որպես երկու կարևոր ներքնածին պարամետրեր: Իսլամի պատմության մեջ առա-

ջին բարենորոգիչներից է եղել Իբն Թեյմիյան: Նա կողմնակից էր շարիաթի բարեփոխմանը և ցանկանում էր շարիաթի սկզբունքները համապատասխանեցնել ժամանակի պահանջներն, սակայն նրան չհաջողվեց, որովհետև բանտարկվեց:

Իսլամական բարեփոխումների կողմնակիցներից կարելի է նշել նաև Ղազալիին՝ «Կրոնական գիտությունների վերածնունդ» աշխատությամբ:

Գիտության զարգացման այդ բնագավառում նորամուծություններ իրականացնելու հարցերով իսլամի տարածման առաջին դարերում զբաղվել են Խալաֆիի և Իբն Սինայի ժամանակներից մինչև Մոհամմադ Ջաբրիա Ռազվիի և Արսուխիան Բիլուքիի ժամանակաշրջանի գիտնականները:

Հավելենք, որ անջատողական գաղափարախոսությունն առանձնահատկ նշանակություն ուներ իսլամի պատմության մեջ գաղափարախոսություն ձևավորելու գործում, որովհետև փաստարկուն ու խելանտությունը համարվում էին գիտության զարգացման հիմնական լծակները և հասարակական ու գիտական խնդիրները լուսաբանելու ժամանակ նրանք կուրորեն չէին օգտվում ճախկին ավանդական եղանակներից, այլ դրանց լուծումը գտնում էին տրամաբանության և բանականության մոտերը համարելու մեջ: Այս դարոցին հետևող գիտնականներից է նաև «Գիտությունների առաջին հանրագիտարան» աշխատության հեղինակ Էֆանդ ալ Մաֆան:

Այլ կերպ ասած, իսլամի պատմության մեջ «վերականգնում և բարեփոխում» տեսության բազմաթիվ կողմնակիցներ գիտության բնագավառում քիչ քիչ շատ հաջողություններ ունեցել են: Սակայն նոր դարաշրջանում, հատկապես Սեֆյաններից (Սեֆեվիներ) հետո, երբ ավանդույթը սաստկորեն իշխեց հոգևոր, հասարակական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներին, հանդիպում ենք մոլեռանդական գաղափարների, որոնց շնորհիվ շարիաթում մերժվում են ամեն տեսակի փոփոխություններն ու զարգացումները և քարիդարը (հոգևոր կատարելության հասնելու ճանապարհը) կրոնից դուրս է համարվում:

Ստորև ներկայացվում են նոր դարաշրջանում քննարկվող բարեփոխումների մի քանի տեսակետներ:

Սեյիեղ Ջամալլոզին Ասադաբադիի աշակերտ Շեյխ Մոհամմադ Օբեյն, ով համարվում է կրոնական նորարարն ու Դուրանի վերակենդանացնողը, նշում է. «Իսլամը երբեք անտարբեր չի եղել շարիաթի օրենքների համապատասխանող գործողություններին ու բարեպաշտությանը և մշտապես խրախուսել է մարդու կողմից կատարած բարեգործությունները: Իսլամը բարեկիրք մարդուն իր գործունեության մեջ տալիս է մտքի ազատություն ու բանականության անկախություն և, որպես երաշխիք, նրա առաջընթացի ու մտավոր գործունեության համար սպառնալից բնածին ընդունակությունների ժողկուրք և կամքի դրսևորում»:

Ավելի ուշ Շեյխ Մոհամմադ Օբեյի աշակերտ սուրիացի-եգիպտացի գիտնա-

կան Ռաշիդեզան ու Արդուլահանան Քավաքեթին իրենց ուսումնասիրություններով զարգացրել են նորարարության շարժումը: Արդիականության գաղափարական այս շարժումը, որ մինչև օրս իր շարունակությունն է գտնում իսլամական աշխարհում, պետք է ուսումնասիրվի լայնիկ (լաիկզմ) և Սկոլարի աշխարհիկ շարժմանը գուցահեռ: Ըստ նրա, հասարակական զարգացումները տեղի են ունենում մարդկային բանականության շնորհիվ, առանց հաշվի առնելու հավատի գործոնը: Հետագայում Ալլամե Միրզա Հուսեյն Նաիմին, ավելի ուշ նաև Ալաթոլլա Թալեդահանն ու Մեհդի Բազարգանը դարձան վերը նշված գաղափարական շարժման նույնատիպները և նրանցից յուրաքանչյուրն իր առանձնակի հատկություններով ու գործունեությամբ այդ գաղափարի շարունակողներն էին:

Եվ այսպես, կարելի է նշել, որ *արդիականությունն* իսլամի պատմության մեջ առաջին շարժումն էր, որի նպատակն էր՝ հասարակության մեջ բարեփոխումներ և վերակենդանացման մեծ պահանջի առաջացումը և իրական հավատին վերադառնալը: Նման ցանկություններ առկա են եղել նաև 7-9-րդ դարերում, իսկ վերակենդանացման շարժումներ՝ նույնիսկ մինչև 18-րդ և 19-րդ դարերը:

Այս համայնապատկերում, *մոդեռնիզմը* ժամանակակից իսլամի փորձառության մտեղծել է հիմքային մի խնդիր (տես՝ *Ֆազլոռահման, «Աերակենդանացումն ու իսլամը» աշխատություն, 1970*):

Նշված մտավորականներից շատերն իսլամի ավանդույթների վերականգնման ու նրանում բարեփոխումներ իրականացնելու կողմնակիցներ են եղել, որոնց հենակետում ավանդույթն է հանդիսացել: Այս կապակցությամբ մեջբերենք Ռաշիդ Ռեզայի հետևյալ ասույթը. «Աստված յուրաքանչյուր հարյուրամյակի սկզբում մեկին ուղարկում է, որ հավատը վերակենդանացնի»: Ոմանք էլ այս կարգի փոփոխությունները նույնացնում են շարիաթի օրենքներին համապատասխանող առանձին խնդիրների լուսարանմանը նվիրված բանավեճերի հետ:

Ժամանակակից մի խումբ հետազոտողներ իսլամին նվիրված իրենց ուսումնասիրությունները կատարել են հետևյալ տեսակետների շրջանակներում.

1. Ըստ մի խումբ հետազոտողների, արդիական բառը նշանակում է «զենք» ու «ազանական միջոցներ», որը եվրոպացիներին իրավունք ու հնարավորություն տվեց զրավելու և իրենց ենթարկելու աշխարհի շատ երկրամասեր, մասնավորապես՝ իսլամական աշխարհը: 19-րդ դարում մուսուլմանները նախագգուշացրին քրիստոնեությունից իսլամի լիակատար կախվածության մասին: «Մինչև ամառ» աշխատության մեջ Մուսա Ջարոլլահինը գրում է. «Թվում է, թե իսլամական աշխարհն ամենուրեք պետք է օտարների խնամակալության տակ գտնվի»:

2. *Արդիականությունը*, տնտեսական տեսանկյունից, հանդիսացել է մարդու բարօրության և հարստության կուտակման պատճառը, այն դեպքում, երբ իսլամական աշխարհը գրկված էր դրանից:

3. *Արդիականությունը* զիտական առումով, նույնպես նվաճել էր զգալի առաջադիմություն, ինչն իսլամական աշխարհին հասանելի չէր:

4. *Արդիականությունը* քաղաքական տեսանկյունից, իր փոփոխությունների ու զարգացումների շնորհիվ, շարժվեց դեպի ժողովրդավարություն, այն դեպքում, երբ իսլամական աշխարհում տիրող էր բռնապետությունը:

5. Մշակութային տեսակետից, իսլամական աշխարհը չկարողացավ համահունչ քայլել (որ դարաշրջանի առաջադիմությունների հետ:

Սահմանադրական ժամանակաշրջանում Թարաբաբային մի աղիթով ասել է. «Ես Սահմանադրության կողմնակից չեմ, սակայն սահմանադրական կարգերն առաջընթացի պատճառ կհանդիսանան»:

Ելնելով վերոհիշյալ քննարկումներից, կարելի է արձանագրել, որ իսլամական աշխարհը, զարգացնելով իսլամական ժողովրդավարությունը և հաշվի առնելով *իսլամական արդիականացման հոսանքի* մարդկային ու բարոյական կողմերը, կարող է Միջին Արևելքի ապագայի համար առաջարկել մարդասիրական մի մոդել, որը միևնույն ժամանակ հենվում է աշխարհում և քաղաքացիական հասարակություններում մարդու զբաղեցրած տեղին ու մարդկային բարոյական նորմերին, միևնույն ժամանակ չի հակադրվում համամարդկային պահանջներին: Սա լոկ քաղաքական և կառավարման խնդիր չէ, այլ մշակութային մի ձևվածք, որը նոր հնարավորություններ ու պայքարի միջոցներ է տեղծում Միջին Արևելքի ժողովուրդների համար: Պաշտպանվում են մարդու իրավունքները, ժողովուրդների ու ցեղերի արժանապատվությունը և ապահովվում կայունություն: Ներկայիս պայմաններում այս տարածաշրջանի պետությունները երբեմն հենվելով «իսլամի» վրա շեղվում են կրոնական ժողովրդավարությունից և իսլամն ընդունում որպես հակառակորդ: Սակայն, եթե ցանկանում են, որ պաշտպանվի մարդու իրավունքների արդարությունը, պետք է այն ընդունեն: Իրանում ժողովրդավարության ամենակարևոր նվաճումներից են հանդիսանում հարգանքը մարդու, նրա արժանապատվության և անհատականության նկատմամբ: Եթե ընդունենք, որ ժողովրդավարական հասարակություններում անհատականությունն այնպես է զարգանում, որ հաստատվում և հաստիկ ուշադրության են արժանանում անհատի հիմնական ազատությունները, դա նրանից է, որ հասարակության մեջ մարդու զբաղեցրած հաստիկ տեղը, հզորություններն ու պոտենցիալ կարողությունները հարմար միջավայրում վերածվում են գործի, և այդ հզորություններից առավելագույնս օգտվելը շահավետ է թե՛ մարդու, և թե՛ հասարակության համար: Հենց այս հանգամանքներից ելնելով է, որ քաղաքացիության սկզբունքների ընդունումը, քաղաքական և հասարակական ակտիվությունը, մարդու իրավունքների, անձի արժանապատվության ու հեղինակության պաշտպանությունը, ընտրության ազատ իրավունք ունենալը, խոսքի ազատությունը,

մասնագիտության ազատ ընտրությունը, բնակության վայրի ընտրության և հավատի ազատությունը բարձր են գնահատվում և մարդու հեղինակությունը, արժանապատվությունն ու ազնվությունը արժանի են հարգանքի: Այս իրականություննից ելնելով, նույնիսկ գերինները, բանտարկյալներն ու դատապարտվածները չպետք է օրենքի սահմաններից դուրս ոտնձգությունների ու սահմանազանցությունների ենթարկվեն:

Առաջնորդվելով վերոհիշյալ հանգամանքներով, Իրանի սահմանադրության զանազան հոդվածներում անդրադարձ է կատարվել մարդկային բարձր արժեքների՝ արժանապատվությանն ու վեհանձնությանը:

Ստորև ներկայացվում են դրանցից առանձին դրվագներ.

1. Երկրորդ հոդվածի 6-րդ կետում նշված է մարդկային բարձրագույն արժեքների, վեհանձնությանը ու պատասխանատվությանը մեկտեղված ազատության մասին:
2. Երրորդ հոդվածի 7-րդ կետում խոսվում է օրենքի սահմաններում քաղաքական և հասարակական ազատությունների ապահովման մասին:
3. Երրորդ հոդվածի 9-րդ կետը հիշեցնում է անթույլատրելի խտրականության վերացման, նյութական ու հոգեկան ոլորտներում բոլորի համար արդարացի պայմաններ ստեղծելու մասին:
4. Երրորդ հոդվածի 14-րդ կետում ամրագրված է հասարակության բոլոր անդամների՝ կանանց ու տղամարդկանց համակողմանի իրավունքների ապահովման, բոլորի համար արդարադատության անվտանգ պայմաններ ստեղծելու և օրենքի առջև ընդհանուր իրավահավասարության մասին:
5. Յոթերորդ հոդվածում նշված է նաև որոշումներ կայացնող «խորհուրդների» մասին:
6. Տասներեքերորդ հոդվածում գրանցված են կրոնական փոքրամասնությունների իրավունքները:
7. Տասնիններորդ հոդվածում նշված է ցեղերի և տոհմերի իրավունքների հավասարության մասին:
8. Քսաներորդ հոդվածում ամրագրված է երկրի հասարակության բոլոր անդամների՝ կանանց և տղամարդկանց օրենքի առջև հավասար լինելու և խլամական նորմերի պահպանման դեպքում մարդու բոլոր իրավունքներից, այդ թվում՝ քաղաքական, տնտեսական, հասարակական ու մշակութային իրավունքներից օգտվելու մասին:
9. Քսաննեկերորդ հոդվածում նշված է բոլոր բնագավառներում կանանց իրավունքների և արժանապատվության պահպանման մասին:
10. Քսաներկուերորդ հոդվածում գրանցված է մարդկանց արժանապատվության, կյանքի, ունեցվածքի, իրավունքների, բնակարանի, զբաղմունքի ան-

ձեռնմխելիության մասին, բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի:

11. Քսաներեքերորդ հոդվածի համաձայն՝ արգելվում են մարդու գաղափարի սևաչական ստուգումները (քաղաքացու արժանապատվությունը պահպանելու համար), և արգելվում է որևէ մեկին իր ունեցած գաղափարի համար հետապնդման ու հալածանքի ենթարկել:
12. Երեսուներկուերորդ հոդվածում նշված է այն մասին, որ ոչ մեկին չի կարելի ձերբակալել, բացառությամբ օրենքով սահմանված կարգով: Հարցաքննության դեպքում մեղադրանքի առարկան պետք է գրավոր ներկայացվի մեղադրյալին և պատճառարանվի:
13. Արդարության պահանջը ճանաչելով որպես յուրաքանչյուր անձի անվիճելի իրավունք, երեսուրյոթերորդ հոդվածում գրանցված է, որ ոչ ոք չի կարող օրենքով հանցավոր ճանաչվել, մինչև արդար դատարանում նրա հանցանքն ապացուցելը:
14. Երեսուներեքերորդ հոդվածի համաձայն՝ ցանկացած տիպի խոշտանգումները՝ խոստովանություն վերցնելու և տեղեկություններ ստանալու համար, արգելվում են: Չի կարելի մարդկանց պարտադրել վկայություն, խոստովանություն կամ երդում տալ: Նման վկայությունները, խոստովանությունները, երդումները որևէ արժեք չունեն և հավաստի համարվել չեն կարող (խափստող պատժվում է օրենքով):
15. Երեսուիններորդ հոդվածում նշված է, որ օրենքի համաձայն, ձերբակալված, հարցաքննված, բանտարկված կամ արտրված անձանց վիրավորանք հասցնելը և արժանապատվությունը վիրավորելն արգելված են և դրա համար պատիժ է նախատեսվում:

Սահմանադրության վերոհիշյալ և այլ հոդվածները համապատասխանում են մարդու իրավունքների համաշխարհային նորմերին և կարող են կիրառվել այլ երկրներում: Սույն հոդվածում չենք անդրադարձել մարդու իրավունքների նորմերին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱԷՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՉԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԼԻԲԵՐԱԼ ՄՈԳԵՌՆԻԶՄԻ ՈՒ ՄԱՐԲՈՒՋՄԻ ՏԵՍԱԿԱՆ ՏԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Այի Ռեզա Ադա Տուսևիխ¹

Նախաբան

Սույն հոդվածը նպատակաճշգրտված է ուսումնասիրելու փեիկվիների իշխանության օրոք մարքսիզմի և լիբերալ մոդեռնիզմի որոշակի տեսակետները: Թեև նշյալ երկու կարևոր ուղղությունները միմյանց հակադիր են, սակայն նրանցից յուրաքանչյուրը հավակնում էր նրան, որ հենց ինքն է ներկայացնում արդի Իրանի ճշմարիտ և վճռորոշ բնութագիրը: Այս ուսումնասիրությունը, թեև հաստատում է երկու ուղղությունների բազմաթիվ տեսակետները, բայց նրանց գլխավոր վարկածները հարցականի տակ է դնում: Վարկածներ, որոնց սահմանափակ հնարավորությունը, նրանց միակողմանիության շրջանակներում, ըմբռնելի է դարձնում վերջնական իրականությունը: Անդրադառնալով լիբերալ մոդեռնիզմի և մարքսիզմի հանրաճանաչ դեմքերի աշխատություններին, որոնք երկու դեպքում էլ հասարակական երևույթների ըմբռնման նպատակով առաջնորդվել են միակողմանի գործելակերպով, և ներկայացնելով դրանցում առկա հակասություններն ու խնդիրները, կապացուցենք, որ նրանց տեսությունների շրջանակները գործել են միասնականությունից ու ներդաշնակությունից: Այդ նպատակով անհրաժեշտ է պատկերացում կազմել մոդեռնիստական տեսության մասին: Այդ կերպ ասած՝ սկսել նրանից, որ Յուկոն ու Դերիդան անցնում են քաղաքական ոլորտ և այստեղ միայն մակերեսն են տեսնում՝ խուսափելով տնտեսական բանականության իմաստները տեսնելու նպատակով խորքային ուսումնասիրություններից: Եվ, այսպիսով կառուցում են ուժերի հարաբերությունն ու հասարակական ինքնությունը, ինչը տեղի է ունենում բացառման եղանակով: Աշտապես ճնշելով այն, ինչը բացառվում է, պայմաններ են ստեղծվում ոչ միայն իրենց ցանկալի հասարակական ինքնության գոյության, այլև հարատևության համար: Իշխանության հարցը, իբրև քաղաքական առանձին շրջանակ, դրա վերաբերյալ բարդ քննարկումների ու քանափեճների ամբողջությունը, հնարավոր չէ մանրակրկիտ կերպով ներկայացնել՝ հոդվածում: Այս ուսումնասիրության մեջ առաջին անհարաժեշտ քայլն այն է, որ հարցականի տակ դրվի ժամանակակից Իրանի մասին գլ-

¹ Ազգային համալսարանի գիտնորհրդի քաղաքական խմբի անդամ:

² Տես ներքոի նշյալ աղբյուրները: Foucault, M. *Archaeology of Knowledge*, London: Tavistock, 1969 and *Deerida*, *Grammatology*, London: Johns Hopkins University Press, 1976:

խավոր եզրահանգումների հավաստիությունը: Այդ տեսակետներն են «մոդեռնիստական չափանք» և «մարքսիստական ուղղությունը»: Որպեսզի հասկանանք, թե փեիկվիների ժամանակաշրջանի քաղաքական կառուցվածքը որքանով է արդիական և մենաշնորհային, անհրաժեշտ է խորամուխ լինել դրա զարգացման ելակետի ու քաղաքական ճգնաժամի մեջ: Այս ժամանակաշրջանի սկիզբը հաճախ համարում են 19-րդ դարի վերջը, այլ կերպ՝ այն շաղկապում են կասիտայիզմի արեւմտեցից դեպի արեւելք տարածման հետ: Լիբերալիստական եզրահանգումները կառուցվում են մի շարք մշակութային արժեքների ու ձեւերի վրա, որպեսզի ապացուցեն, թե որքան հակասություններ, բարդություններ ու շրտված հարցեր կան այդ վարկածներում: Գլխավոր խնդիրներն են.

1. Էկոնոմիզմը, տնտեսության և քաղաքական հարցերի դերակատարության միջև եղած հակասությունները, փոխկապակցվածությունը, մշակույթի և կրոնի մեջ բարձրված հայտնի յուրահատկությունների անտեսումը, որոնք ձեւավորում են իրանական ազգայնականության առանձնահատկությունները և շարունակվել են պատմական Իրանի՝ ժամանակներից միջև այսօր, որն էլ իր հեթքին Արեւմուտքի հարցում Իրանի ու արեւմտյան քաղաքակրթության միջև «փնտեղման կապ» է ստեղծել:

2. Հետեւաբար երկու տարրեր ակունքներ (պատմական Իրանի ժառանգությունը և Արեւմուտքը), համանման տրամադրվածությամբ միասնության առասպել ձեւավորեցին, ինչն իրանական ազգայնականության ոգեշնչող եղավ: Սակայն այս ինտեգրացումը տեղի ունեցավ ավանդական կառուցվածքների ու կրոնի ճնշման գնով: Հենց դրանով էլ ազատական մտածողությամբ գիտնականներն ու ժամանակակից Իրանի մտածողներից շատերը բնութագրում են սոցիալական հակասությունների՝ էությունը: Եվրոպական քաղաքակրթության էությունը բնորոշ են ժողովրդավարությունն ու մարդու իրավունքների պաշպանությունը, մյուս կողմից՝ Իրանի կայսրությունների համախոհությունը՝ հզորության ու շքեղության առումով, թելադրում են, որ արգելակող տարրերն ու անդամները պետք է շարունակաբար վերացվեն, որպեսզի ճանապարհ հարթվի միասնության առասպելի համար: Բացի այդ, ինտեգրացիոն միջամտությունը՝ հանգել է «ղեկնտեգրացիոն» հստակաձի առաջացմանը, ինչը 1979թ. դրսեւորվեց «տեղական իսլամի վերականգնման» տեսքով: Ազատական ուղղությունը ձգտեց հասարակական այդ երկու հստակաձիները, որոնք առերեսույթ հակասական են, միմյանց դեմ հանդիման դնելով, ամփանել «փնտեղման և դեֆինտեգրման պայքար»: Ինտեգրացիա

³ Iranian Antiquity

⁴ Social Division

⁵ Convergenс intervention, նկատի ունենք արեւմտյան քաղաքակրթության ներթափանցումն ու ներթափանցումը:

ասելով նկատի է առնվում այն, որ այդ երկու ուսմունքը ձգտել էին փեհելվիակա-
նության ձևավորումն ու զարգացումը պայմանավորել վաղ անցյալի եւ ավան-
դույթների միջև առկա կապերով: Իսկ դեզինտեգրացիայի իմաստն այն է, որ
չանքեր են գործարդվել, այսպես ասած, զգատական արդիակամացման չափա-
նի քայլ առ քայլ իրականացման ճանապարհին առկա արգելքները պատճառա-
բանելու ուղղությամբ: Լիբերալ մոդեռնիստ մտավորականներից շատերն այս
բարդ (երկդիմի) հարցը համապարփակ չեն ուսումնասիրել: Մինչդեռ, օգտագոր-
ծելով համապատասխան տեսական հնարքները, հնարավոր է Իրանում ինտեգ-
րացիա- դեզինտեգրացիայի խնդիրը բացատրել նրանց միջև եղած կապով:

Այս թերությունը վերաբերում է նաև մարքսիստական ուղղության մեկնաբա-
նություններին: Այն բոլոր մտածողներն ու գիտականները, որոնց աշխատություն-
ները քննարկման առարկա ենք դարձրել, հաստատում են այն տեսակետը, որ
փեհելվիների քաղաքականության բնույթն աշխարհում արեւմտյան քաղաքակր-
թության տարածման եւ Իրանի հասարակության մեջ դրա ներթափանցման հե-
տևանք է: Քաղաքականության մակարդակով այդ վիճակը վերածվեց ակտիվ
մշակույթի, որն իր վրա էր կրում պատմական Իրանի ժառանգությունը: Մարք-
սիստները սոցիալական հակասությունները պատճառաբանելու համար դիմել են
մի շարք բարդ պարզաբանումների, որոնցից, մասնավորապես տնտեսական դե-
տերմինիզմ⁶ առավել համոզիչ է քվում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ու-
սումնասիրության առարկա դարձնել տնտեսական դետերմինիզմի դերն Իրանի
հասարակությանը դեպի համաշխարհային կապիտալիզմը հակվածության հար-
ցում: Մարքսիստական տեսակետներում ավելի շատ ընդգծվել է, որ անմախա-
ղեպ, նորագույն տնտեսական գործունեություններն ի դերեր հանեցին փեհելվիա-
կանության գաղափարական վարկածները: Միաժամանակ տնտեսական դետեր-
մինիզմն արտադրության նոր հատկանիշ ստեղծեց, ինչը պահանջում էր իր յուրա-
հատուկ գաղափարախոսությունը:

1979թ. իսլամի վերածնունդը խառնաշփոթ առաջացրեց մարքսիստ մտավո-
րականների դատողություններում, այնպես, ինչպես զարմացրել էր իրենց լիբե-
րալ մոդեռնիստ գործընկերներին: Ըստ նշվածի, պետք է ապացուցել, թե ինչու
այդ երկու ուսմունքները հաջողություն չունեցան ինտեգրացիա-դեզինտեգրացի-
ա խորին հարցի պարզաբանման վերաբերյալ: Այդ երկու ուսմունքներին գնահա-
տական տալու համար անհրաժեշտ է ընդհանուր տեսական լուծում, որն ի գորտ
կլինի վերլուծել այդ հակադրությունները: Այն բանից գատ, որը ես անվանում եմ
ինտեգրացիա-դեզինտեգրացիայի երկճյուղ ընդարձակ վերլուծություն, կարելի է
առաջ քաշել նաև տրամաբանական վերլուծության հարցը: Այն դեպքում, երբ

⁶ Economic determinism

քննադատության առաջին տարբերակը բնութագրում է ինտեգրացիա-դեզին-
տեգրացիայի երկճյուղություն⁷ հանդեպ անհամաչափ եզրահանգումները, երկ-
րորդ՝ տրամաբանական քննադատությունը վեր է հանում այն թերությունները,
որոնք նկատելի են այդ երկու՝ ինտեգրացիա-դեզինտեգրացիա կազմող մասերի
վերլուծություններում առանձին-առանձին:

Լիբերալ մոդեռնիստականություն

Հաշվի առնելով այն, որ մեր ուսումնասիրության առարկան լիբերալ մոդեռ-
նիստականության գլխավոր հիմունքներն են, ուստի, ճախ եւ առաջ, կաշխա-
տանք քննարկման առարկա դարձնել նրա գլխավոր վարկածները, ցույց տալով
այդ ուղղության վերլուծության թերությունները: Քանզի միայն այդ ուղղության
հիմնական, բնութագրական վարկածները պարզաբանելով, կարելի է ցույց տալ
դրա գաղափարական թերությունները: Կարելի է հարեւոր հարցերից է նաեւ սոցիալական
հակասությունների ուսումնասիրության մեթոդը: Գործնականում քննարկման
երկու տարբեր մեթոդներ դրվել են կողք-կողքի: Այս երկու տարբեր փաստադ-
րույթների միախառնումը դառնում է շլուժվող հակասության պատճառ: Խոսելով լի-
բերալ մոդեռնիստական փաստարկումների առաջին շրջափայլ մասին, շեշտը դը-
րվում է մի հարցի վրա, որը համարվում է «ազդեցիկ տնտեսության անհրաժեշ-
տություն»: Իսկ դա նշանակում է, որ պետք է աշխարհը դիտել մի այնպիսի հա-
մակարգում, որ եթե տրամաբանության շրջանակներում հասկանալի դառնա,
ասլա այն կարելի է մղել դեպի փոփոխություն ու զարգացում: Մարդիկ պետք է
կարողանան, ճշգրտորեն գործի դնելով բնության միջոցները, իրենց գերիշխա-
նությունը հաստատել դրա վրա:

Այս առումով խիստ կարելի է նաև քննարկել, որոնց օգնությամբ կարելի է հասնել փո-
փոխությունների ու զարգացման: Երբ մարդիկ ձեռք բերեն այդ չափանիշների
հանրագումարը, կարող են տրամաբանաբան գիծ անցկացնել պատմության քա-
նական եւ ոչ քանական ուժերի միջև: Օրինակ, ի վերջո, կորստբերվեն արդյունա-
բերական տնտեսության տրամաբանական անհրաժեշտությունները: Ուստի,
իննց խելամիտ են արժանավոր մարդիկ վերահսկողություն կասեցնան փոփո-
խությունների գործընթացի վրա, ավանդական ու կրոնական ոչ քանական կա-

⁷ Dichotomy

⁸ W. W. Rostow, The Stages of Economic Growth, London: Cambridge university Press, 1971. Since a
number of Liberal analysts were influenced by Rostow's Theory of Growth, we consider as underlying
assumptions of his Theory.

ույցները կկորցնեն իրենց անհրաժեշտությունը⁹։ Պահանջվել է, որ տրամաբանական տնտեսությունն անհրաժեշտաբար իր մեջ ընդգրկի նաև ավանդույթի ու կրոնի յուրահատուկ առանձնահատկությունները։ Հետևաբար, առաջին դեպքում առկա են համաշխարհային ևի հանրային մի շարք առանձնահատկություններ, որոնք մարդը կարող է հասկանալ, ըմբռնել և հաշվի առնել փոփոխությունների ժամանակ։ Այլ կերպ ասած, արդյունաբերական տնտեսությունը հիմնված է մի շարք համաշխարհային արժեքների վրա, որոնք որոշիչ դեր ունեն փոփոխությունների գործընթացում։ Վերջին հաշվով, պետք է նկատի առնել, որ արդյունաբերական տնտեսությունը փոփոխությունների հակում է առաջացնում, ի հետևանքս որի հայտնվում է հիմնարար հզոր կամք, որպեսզի «ոչ բանականից» հասնենք «բանականության»։ Իսկ այդ գործընթացը պետք է լինի անդառնալի, որպեսզի ի գործ լինի մեծ սպառման ժամանակաշրջանում ստեղծել կյանքի համար ամենացանկալի պայմանները։ Հենց որ փոփոխության ուժերը շարժման անհրաժեշտ հզորություն հավաքեն, հասարակություններն առաջ կշարժվեն տեխնոլոգիական մեթոդի հիման վրա, որը թուլացնում է սոցիալական հակասությունները։ Նշյալ երկու նախավարկածները՝ մարդու համար համաշխարհային ընդունելի չափանիշները և փոփոխությունների անդառնալիությունը, իրենց վրա են սեւեռել լիբերալ մոդեռնիզմի մտավորականության ուշադրությունը։ Քննարկման երկրորդ առանցքն ուշադրության է արժանացրել անցյալի փառքի և ներկայի միջև հնարամիտ կապը քաղաքականության ոլորտում և հենց նրա օգնությամբ այս խնդրի բնարկումների ու տեսակետների հիմքեր են՝ քաղաքականությունը, սակ լեզուն, պատմությունն ու մշակույթը, որոնք կազմում են իրանական առանձնահատուկ ինքնության բովանդակությունը։ Այս առեւտրյանք նրանք ընդունել են, որ փեիելվիականության հիմքերն իբրև քաղաքական երեույթի, արմատները հասնում են պատմական Իրանի ժամանակաշրջան։ Հագաբավոր տարիներին պատմություն ունեցող կայուն քաղաքակրթություն, որն իր արտացոլումն է գտել լեզվի և պատմական հուշարձանների մեջ, պարսկական անաղքատարելի հոգեվիճակի ապացույցն է։ Մոհամեդ Ռեզա շահ Փեիելվին (1941-79թթ.) և Ռիչարդ Քոքբասն¹⁰ (արդի Իրանի հարցերով լավագույն մասնագետներից) իրենց աշխատություններում շեշտել են իրանական ազգայնականության գործուն լինելու հանգամանքը։ Նույն կերպ է Լեոնարդ Քայնդըրը¹¹ ակնարկել է ակ-

⁹ Քանի որ մի շարք ազատական վերլուծություններ իրենց վրա են կրում Ռոարտի գարգացման տեսության ազդեցությունը, ուստի մենք մկատի ենք առել նրա տեսության նախավարկածները։ Օրինակ, այդ նախավարկածներ կարել է տեսնել Մոհամմադ Ռեզա Փեիելվի և Ռիչարդ Քոքբասնի վերլուծական լուծումներում։

Harold Wolpe, Race, Class & The Apartheid State, Paris: Unesco, 1988, 26-27.

¹⁰ Richard Cottam

տիվ մի հոսանքի վերաբերյալ, որը հակված է դեպի ազգայնականություն և արմատները գտնվում են Իրանի առանձնահատուկ պատմության մեջ։ Գլխունականներին, ի հեճուկս իրենց բուռն ջանքերի, չի հաջողվել իրանական ազգայնականության հարցում սպառիչ պատճառաբանություններ ներկայացնել։ Նախ, որ չեն կարողացել տրամաբանական ճիշտ կապ հաստատել լեզվի, պատմության և մշակույթի ու բանականությանը պայմանավորված տնտեսության միջև։ Ապա չեն կարողացել լուծում գտնել ինտեգրացիա- դեզինտեգրացիայի դեմ պայքարում՝ իրանական ազգի երկակի առանձնահատկությունների համար։

Այս խնդիրների շուրջ ազատականության մի հեռանկար քննարկելու նպատակով, ես մի կողմից ուսումնասիրելու եմ բազավորի հայացքները նրա «Առաջադրանք համուն հայրենիքիս», «Մպիտակ հեղափոխություն» և « Ի պատսախան պատմության» աշխատություններում։ Մյուս կողմից քննարկման առարկա կդարձնեն Քոքբասնի աշխատությունները, այդ թվում «Ազգայնականությունն Իրանում, Իրաքում և Միացյալ Նահանգներում» և Բայնդըրի «Քաղաքական առաջընթաց փոփոխությունների շեմին գտնվող հասարակության մեջ» գիրքն ու նրա «Իրան» հոդվածը։

Շահն ի սկզբանե նշել է, որ փեիելվիականության արմատները գտնվում են մի այնպիսի մշակույթում, որը հնագույն քաղաքակրթություն է և կարողացել է ոչ միայն իր ազգի, այլև փորրամասնությունների ու ողջ աշխարհի համար ապահովել բարօրություն և մարդու իրավունքների պաշտպանություն¹²։ Ոչ միայն Հռոմից կրած Իրանի պարտությունները պատմական իրադարձություններ են, որոնք անտեսվել կամ համարվել են անկապ ու անպատեհ։ Արդյունքում Իրանին համարել են պրպտող, ակտիվ մշակույթ, ցեղ և լեզու ունեցող երկիր։ Իսկ իրանական ազգայնականությունը եղել է կյանքի մի հատկանիշ, որն այլ մշակույթների մեջ ուժացվելու դեմ նրան անտիկ ու դիմացկուն է դարձրել։ Թագավորի տեսակետն արժանի է քննարկման լոկ այն բանի համար, որ, ըստ նրա, պատմական և ժամանակակից իրանների միջև անբախտելի կապ գոյություն ունի։ Նա պատմության ընթացքի բազմաթիվ ընդհատումների վրա, որոնք առաջացել են Իրանի հասարակության գարգացման գծապատկերում, ուշադրություն չի դարձրել։ Հաշվի առնելով այդօրինակ հեռանկարը, թագավորն ի գործ չեղավ պատմության ընթացքի ընդհատումները հասկանալու նպատակով ձեռնամուխ լինել քաղաքական նպատակահարմար միջոցառումների իրականացմանը և ընդհատված քաղաքական դաշտի հետքերի վերանայմանը և քաղաքական բանավեճերի շրջանակներում տեղավորմանը։

¹¹ Leonard Binder

¹² Mohammad Reza Pahlavi, Mission for May Country, Hutchinson and co. (Publishers) LTd., 1960, 22-28.

Թագավորը, նորաբախ ռասայական տեսությունների, հնդեվրոպական լեզվաընտանիքի ու արիական ռասայի ազդեցության ներքո, միաժամանակ արեւմտյան հակումներով, նշում էր.

«Ինչպես նշել եմ, մեր մշակույթը հնագույն եւ մնալուն մշակույթ է, լիզվի եւ ռասայական առումով կապված է արեւմտյան մշակույթին, որն առավելապես մեզ է պարտական: Իսկ այժմ, երբ մենք մեր մշակույթին հավելում ենք ամենաարդիական արտադրանքները, անտրամաբանական չէ, եթե մտածենք, որ կարող ենք աջակցել արեւելա-արեւմտյան նոր աշխարհի ստեղծմանը»¹³:

Սրանք էին այն հիմքն ու բազան, որոնց վրա, ենթադրվում էր, թե հենված է հասարակական-քաղաքական կառույցը: Շահի խորհրդածություններն ավելի են խորանում այն ժամանակ, երբ իրանցիների շրջանում սեր ու հայրենասիրություն առաջացնելու համար երեւան է գալիս նոր հենասյուն: Ինչ վերաբերում է այս երկրորդ հենասյանը, ապա շահը կարծում էր, թե երկու քաղաքակրթությունների միջև առկա է ներդաշնակ կապ: Քանզի հավատացած էր, որ իրանական եւ արեւմտյան քաղաքակրթությունների միջև առկա են մի շարք ընդհանուր հատկանիշներ: Նա արեւմտյան ամենաարդիական առանձնահատկությունները հավելել էր իր քաղաքակրթությանը (իրանական հասարակության կառույցին), ստեղծելով սոցիալական հակասությունների մի հասկացություն, ապա դրա բարեփոխման նպատակով ռազմավարություն մշակել: Հասարակական այդ հիվանդության բուժումը համարում էր պատմության երթուղու վրա դուրս գալը եւ արեւելա-արեւմտյան կառուցվածքի տարածումն ու կորացումը:

Սպիտակ հեղափոխություն

Սպիտակ հեղափոխությունն Իրանի տնտեսությունը արեւմտյան համակարգում ներգրավելու շահի ռազմավարության դրսեւորումներից էր. նաեւ՝ միասնություն հաստատելու, սոցիալական հակասություններից դուրս գալու առաջին փուլը: Մոհամմեդ Ռեզա Փեհլեվին ներկայացրել էր մի ուղի, որով կարելի էր իրականացնել քաղաքակրթություններ ու տրամաբանական ռազմավարություններ՝ հաշվի առնելով հասարակական ուժերի բազայի վիճակը¹⁴: Շահն իր երկարաժամկետ ռազմավարությունների իրագործմանը նախատեսել էր Իրանի հասա-

¹³ Mohammad Reza Pahlavi, Mission For my country, 38.

¹⁴ 1970թ., պետականի վարչությունում, շահի, մի խումբ մտափրականների ուղղված խոսքերը լայն արձագանք են ունեցել: Նա հստակ նշել է, որ բալբեխախտարար, Իրանի բնակիչները է տնտեսական ծաղկման փուլ:

Հավելյալ տեղեկությունների համար կարդալ՝ Մոհամմեդ Ռեզա Փեհլեվի, Արյանհիտ արքայազ արքայի ճառը պետականի վարչությունում, Փնիկան, 1970թ.:

րակուրյանն ազատագրել ավանդույթների թեւադրանքներից ու կապանքներից¹⁵: «Նեոց այդ էլ շեշտում է Քոթթամը՝ նշելով, որ իրանական ազգայնականությունը սերտ կապերով կապված է «իրանական հարուստ եւ արտակարգ քաղաքակրթության» հետ, ինչի արմատները ձգվում են մինչև Աբենենյանները եւ դրանից էլ ստաց: Խնդիրն այն էր, որ հնագույն ժամանակներից առ այսօր գոյատևող իրանական ազգայնականությունը միայնուվաճ է հնագույն ժառանգությունից բխող հայացքների ու խառնվածքների հետ, եւ վկայում է իրանցիների համեմատաբար քաղաքակրթական ստեղծագործ ունակությունների մասին¹⁶: Նա միաժամանակ խոստովանում է, որ արարների, բուրբերի եւ մոնղոլների հարձակումներն Իրանի վրա երկարաժամկետ ազդեցություն են ունեցել: Այսուհանդերձ, իրանական մշակույթի ակտիվ դերակատարությունը կարողացել է նրանց համախմբել¹⁷: Կարելուր խնդիր է առաջանում այն պահին, երբ նա ձգտում է իրանական մշակույթը կապել արեւմտյան քաղաքակրթության հետ: Քոթթամն էլ, շահի նման համոզված էր, որ իրանական եւ արեւմտյան մշակույթների միջև կան զուգահեռներ ու համարժեքություններ: Նշանակալից խնդիր էր «այս ազգի» այժմյան ըմբռնումը, անգամ եթե դա տեղի էր ունենում իսլամական արժեքների ու սովորույթների փոփոխման կամ ոչնչացման գնով եւ, այդ տեսանկյունից, հասարակական հակասությունների ու հակադրությունների հարցը լուծել տնտեսական զարգացման շրջանակներում¹⁸:

Այդօրինակ ըմբացքը պետք է վերջ դնել հասարակական հակամարտությունների եւ ստեղծել կայուն գեոիշխանություն: Ըստ Քոթթամի տեսակետների, լիբերալ ազգայնականության ապագան կապահովվեր այն ժամանակ, երբ շահը եւ նրա շրջապատը լիբերալական ավանդույթները արմատավորեին վերնասխալի եւ հասարակ ժողովրդի մակարդակով: Նման դրական միջոցառումների հետեւանքներն ու ճակատագիր կերտող պատմությունն իր ծավալներով եւ կարեւորությամբ աննախադեպ է.

«Ոչ ազգայնական խմբերն արտադրուտ երկու ճանապարհից ավել չունեն... պետք է միանան ազգին կամ էլ, օր-օրի հեռանալով ժողովրդի մեծամասնությունից, ընդունեն դրանից բխող վտանգները»¹⁹: Բայանդրը, որի տեսակետները տեղավորվում են հենց այդ շրջանակներում, շեշտում էր, որ իրանական մշակույթը եւ պատմության շարունակականությունը, նախախլանական դարաշրջանից մինչև

¹⁵ Mohammad Reza Pahlvi, The White Revolution, Tehran: Keyhan press, 1967.

¹⁶ Richard Cottam, Nationalism in Iran, Pittsbvgh: Pittsburgh press, 1964, 11.

¹⁷ Richard Cottam, Iran and The United States, Pittsburgh: University of Pittsburgh press, 1988,6.

¹⁸ Richard Cottam, Nationanism in Iran, p. 319.

¹⁹ Richard Cottam, ibid., P. 8.

հիմա, խիստ կարեւոր առանձնահատկություններ ունեն²⁰։ Նա նույն կերպ է վերաբերվում արեւմտյան քաղաքակրթության մեջ Իրանի ինտելեկտուալ հարցի հետ կապված սոցիալական հակասություններին։ Այդ հեռանկարից, հաշվի առնելով արեւմտյան արդիական ներմուծումները Իրան, Բայնդըրը եզրակացություն է արել, որ այդ երկու մասերի փոխադարձ ներազդեցությունը «տնտեսական զարգացումների» միջոցով հնարավոր չէ։ Այս դեպքում, տնտեսական ձեռքբերումները երկրին ի գորտ են դարձնում հարթել ավանդապաշտ ուժերին։ Իսկ սա ի շահ զարգացած եւ կայուն հասարակության է, որը ձեւավորվում է արեւմտյան լիբերալ չափանով։

Թագավորը, Քոթթանը եւ Բայնդըրը՝ երեքն էլ համոզված էին, որ բազային տնտեսական ռացիոնալիզմը կատարում է շարժիչ ուժի դեր եւ, ի վերջո, օրինականացնելու է նրանց, ովքեր զարգացած են, ունեն տնտեսական քարոքություն եւ ընդունում են, որ ենթարկվել են այդօրինակ ռացիոնալիստականության։ Սակայն նրանք անտեսել են ժողովրդի մի շարք այլ հատվածների ու խմբերի՝ ավանդական շուկան, կալվածատերերին, ֆեոդալական ուժերին եւ կրոնական առաջնորդներին, քանզի այդ խմբերը ոչ ազգայնական էին, ոչ էլ՝ ռացիոնալիստներ։ Ի վերջո, լուծելով սոցիալական հակասությունների հարցը, բարեկեցիկ հասարակություն կստեղծվի ոչ միայն փոքրաթիվ մարդկանց, այլեւ ողջ հանրության մակարդակով։ Լիբերալիստական պարզաբանումների մասին կարելի է ասել, որ իրանական ազգայնականության ակտիվության երեսն գալը, առաջին հերթին դրսևորվել է քաղաքական միասնական դաշտի տեսքով, որը որոշում է հասարակական կառուցվածքն ու գործելակերպը։ Քաղաքական ենթադրյալ այդ գործոնը, իրականությունից դուրս գոյություն չունեւ, ուստի, երբ իրապարակ իջավ երկրորդ որոշիչ սկզբունքը՝ տնտեսության հարկադիր զարգացումը, այդ գործոնը չէր կարող հարատեւել։ Ենթադրվում էր, որ տնտեսական այդ չափանիշը սոցիալական հակասության բարելավման երկրորդ ուղին էր հարքում, սակայն դա ժխտում էր սկզբնական նախավարկածը։ Պատմական Իրանի լույսի ներքո հասարակական կարգ ստեղծելու միտքն անլուծելի հակասություն էր, մինչդեռ հավանություն կար, որ վերջինիս հաշվով, քաղաքական եւ մշակութային դաշտերի հիմքը տնտեսական բազիսն է։

Ուստի, նրանք հարկադրված պետք է կառչելին պատմական առաքելությանը, ինչը պահանջում էին Իրանի գործուն հասարակության տարրերը, կամ էլ դրանք անտեսել հոգուտ տնտեսական պատճառաբանության, քանզի այդ երկուսն անհամատեղելի էին։ Բացի այդ, նշվել է, որ տնտեսական պլանավորման

²⁰ Leonard Binder, *Political Development in Changing Society*, Berkeley, University, of California, 1962, p. 77.

եւ լիբերալ ժողովրդավարության հաստատման միջեւ առկա է պատճառական կապ։ Սակայն պարզ չէ մի հանգամանք եւս, որ եթե ազատությունն ու օրինականությունը դառնան բարեկեցիկ սահմանափակ դասակարգերի մենաշնորհը, ապա ինչպե՞ս կարելի է իրականություն դարձնել լիբերալ ժողովրդավարությունը։ Հաշվի առնելով վերոհիշյալ հարցերը, կարծել են, թե դասակարգերի տնտեսական բարօրության եւ ժողովրդավարության հաստատման միջեւ սերտ կապերի առկայության հիման վրա, վճռորշ է դառնում ցանկալի ապագայի խնդիրը։ Այս տեսանկյունից ռացիոնալ զարգացման գործընթացների հիմքը կազմող համակողմանիությունը²¹, կրունը եւ ավանդույթի դրսևորումը դիտվում են իբրեւ հասարակական կյանքի հետ կապ չունեցող առանձնահատուկ երեւույթներ։ Այս հեռանկարին հակառակ, խնդիրն այն է, որ եթե կարծենք, թե ժողովրդավարական սկզբունքները կարելի է սահմանափակել քաղաքական ունեւոր ուժերի ազատություններով եւ երաշխավորել հենց այդքանը, սխալված կլինենք։ Ընդհակառակը, անհրաժեշտ է տեսական լուծում, որպեսզի հնարավոր լինի համաբային դարձնելու ինստիտուցիաները, կապված դասակարգային պատկանելության հետ եւ տնտեսական սահմանագծուը դուրս բերել անորոշության բոլի տակից։

Մինչեւ այստեղ քննարկման առարկա էր տնտեսական տեսանկյունից ինտելեկտուալիստ (երկակիության) հարցը։ Նախ, որ լիբերալ մտածողներն անտեսել են պատմության ընդհատված հատվածները, որոնք կարող էին արգելակել միասնության որեւէ ենթադրություն։ Բացի այդ, մի տեսակ հակասություն են առաջադրել քաղաքական խնդիրների եւ տնտեսական դեւտերմինիզմի միջեւ։ Այն դեպքում, երբ առկա են մի շարք եռանդուն առանձնահատկություններ, որոնք ձեւավորում են հասարակության ընդհանուր կառուցվածքն ու կազմությունը, այլեւս չի կարելի ուրիշ ենթադրություն որդեգրել։ Այն էլ մի ենթադրություն, որի հիմքն էնպես քաղաքական նկատառումն է։ Տնտեսական կանքը դրա պլանավորումն ընդունելու մեջ է, որը կարող է փոփոխության ենթարկել ողջ քաղաքական կառուցվածքը, վտանգել մշակութային իրողությունների որոշիչ դերը եւ հակասում է քաղաքական ու մշակույթի ոլորտների գերակայությանը։ Եվ, ի վերջո, հասարակագրային խորհրդածությունը լիբերալ ժողովրդավարության իրագործման հետ կապելը նշանակում է, որ մեկ առանձին խումբ կարող է պաշտպանել ժողովրդավարությունը։ Հաշվի առնելով նշյալ անհամապատասխանությունները, անհրաժեշտ է ունենալ տեսական մի շրջանակ, որպեսզի հնարավոր լինի ցանկացած արմատական ենթադրության համար պատասխաններ ունենալ, քանզի որեւէ դասակարգ կամ առանձին խումբ, որը ձգտում է իրականացնել ժողովրդավարական արժեքներ, հիմնվում է այդ վարկածների վրա։

²¹ Universalism

Այժմ ցանկանում ենք քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե ի՞նչն էր պատճառը, որ լավատեսությամբ տոգորված, արեւմտյան քաղաքակրթությանը հակված Իրանը խզի այդ կապը եւ արդյունքում հայտնվի երկճյուղ դեզինտեգրացիայում: Այս հարցում կարելի է այն է, որ տեսնենք, թե գիտնականներն ինչպես են ջանքեր գործադրել, որպեսզի իսլամի վերածննդի հարցը մեկնաբանեն իրենց նախկին պարզաբանումների շրջանակներում եւ կապեն դրանց հետ: Ես այդ խնդիրը կքննարկեմ այնպիսի աշխատությունների շրջանակներում, ինչպիսիք են՝ «Պատմությանն ի պատասխան», «Իրանը եւ Ամերիկան» եւ «Իրանը»: Այսուհետ անհրաժեշտ են համարում նաեւ նշել, թե այդ աշխատություններում փեղեկվա-կանության ճգնաժամի վերաբերյալ ինչ հակասություններ կան:

Թագավորը տապալվելուց հետո ջանքեր էր գործադրում, որպեսզի ինչ-որ կերպ բացատրեր իրադարձությունների ընթացքը: Նա եկավ այն եզրակացու-թյան, որ «Սեւ եւ կարմիր հետադիմության չարաբաստիկ միությունն» էր նրա կործանման պատճառը²²: Նա «Ի պատասխան պատմության» աշխատության մեջ է մի շարք այլ էություններում հիմնվել է «դավադրության» տեսության վրա: Նշ-յալ տեսությունից բխում է, որ Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան եւ նախ-կին Խորհրդային Միությունը մասնակցում էին քաղաքական այդ ղեկավարին կա-ցության ստեղծմանը եւ այդ չար միության համար ճանապարհի հարթելուն: Թեեւ, դավադրության առկայության վերաբերյալ, շահի դրդապատճառները պարզ են, այլ կերպ՝ իր կործանումն ինչ-որ ձեռով պատճառաբանել է, սակայն իմ քննարկ-ման տեսանկյունից օտարերկրյա ուժերի հովանավորությամբ դավադրության առկայությունը դեռեւս պարզ չէ: Նկատի առնելով այս տեսակետը, խնդրո առար-կա աշխատությունը որեւէ կերպ չի կազմում նրա նախկին աշխատությունների հետ, քանզի տեսական լուրջ էինքրեր չունի, որպեսզի դրանց միջոցով հնարավոր լինի դեզինտեգրացման խնդրի կապը բացատրել Իրանի եւ Արեւմտքի ինտեգր-վելու վերաբերյալ նրա նախկին լավատեսությամբ: Այսուհանդերձ, եթե ընդու-նենք, որ դավադրության վարկածն այլ բացատրություն ունի, ինչը նույնպես չի կարելի անվերապահ ընդունել, ապա պետք է պարզաբանվի, թե այդ միությունն ինչ պայմանների առկայությամբ հնարավոր դարձավ եւ հանգեց շահի իշխանու-թյան փլուզմանը: Թագավորն անուշադրության է մատնել իր ազդեցությունը եւ համակարգված, պարտադիր միջոցառումները քաղաքական ոլորտում: Նա նա-եւ չի բացատրում, թե ինչո՞ւ եւ ինչպե՞ս նպաստավոր հող ստեղծվեց այդ միու-թյան համար, որն իրեն դրսեւորեց իբրեւ կործանիչ ընդդիմություն: Այն դերը, որ կատարեց այսպես կոչված միությունը, քննարկման ենթակա չէ, սակայն դրա վերլուծման համար տեսական միջոցներն անբավարար են: Այդ դեպքում անհ-

22. Mohammad Reza Pahlavi, Answer To History, Mohammad Reza Pahlavi, Tehran, 1980, 145-173.

քաժեշտ է վերլուծական վստահելի մեթոդ, որը կարողանա ուսումնասիրել եւ պարզել, թե խնդրո առարկա միության քաղաքական այն ռազմավարություննե-րը, որոնք կիրառելով, ի գորու դարձավ խախտել շահի քաղաքական հավասա-րակշռությունը:

Ինտեգրացիա-դեզինտեգրացիայի խնդրի ընդհանուր վերլուծությունում, բա-զավոր, առավել խրթին դարձնելով իր սկզբնական տեսակետը, գործը «Փչաց-րիկ» է: Նախ եւ առաջ, եթե պետք է մշակության միջավայրը որոշիչ գործոն հա-մարենք, ինչպես դա արվել է «Առաջադրանք հանուն հայրենիքիս» աշխատու-թյան մեջ, ապա ռացիոնալիստական տնտեսությունը, ինչպես տեսնում ենք «Մայիտակ հեղափոխություն» աշխատության մեջ, պետք է մի կողմ դրվի: Իսկ եթե տնտեսությունը որոշիչ գործոն է, որը կարող է սոցիալական հակասություն-ների խնդիրը լուծել, ապա անիմաստ է դառնում իրանցիների պատմական ժա-մանակաշրջանի համար ընդունված եռանդուն վերելքի տեսակետը: Եվ, երկ-րորդ, եթե տնտեսական խնդիրներն ու խորհրդածություններն են որոշում պատ-մության ընթացքը, ինչպես ցույց է արվել «Մայիտակ հեղափոխություն» աշխա-տությունում, ապա ինչո՞ւ չպետք է առաջին հերթին հենց դրանք կյանքի կոչել եւ ինչո՞ւ է քազավորն իր պարտության ու տնտեսական անհաջողությունները բա-ցատրում քաղաքական գործոններով: Տնտեսական բարեփոխումները պետք է հստակեցնեն հասարակական ձեւավորումը եւ հաջողությամբ ստեղծեն միաս-նության առաջադի: Անգամ, եթե ընդունենք, որ շահի առաջին երկու աշխատու-թյուններում քազակայում են հակասությունները, չենք կարող անպատասխան բողմել նրա սկզբնական լավատեսական պարզաբանումների եւ իսլամի վերած-նության հետեւանրով խիստ հուսահատական երանգ ստացած պարզաբանու-մների միջեւ եղած հակասությունը: Զանգի քաղաքական հիշյալ միության, ինչպես քազավորը նշում է իր «Ի պատասխան պատմության» աշխատության մեջ, իբրեւ ընդհանուր քաղաքականության կարելի գործոն, այդ դեպքում արժեզրկում է տնտեսության դերը որպես որոշիչ գործոնի: Այդ պատճառով էլ այդօրինակ ան-հարթությունը կարող ենք լույս համապարփակ մի տեսության շրջանակում վերլու-ծության ենթարկել, շրջանակ, որն ի գորու կլինի տրամաբանորեն եւ համապար-փակ այդ երկվությունը²³ ինտեգրացիա-դեզինտեգրացիան կապել միմյանց: Ես ցանկանում եմ քննարկման շարունակությունը հատկացնել հենց այդ խնդրին:

Քոթբամի հաջորդ «Իրանը եւ Միացյալ Նահանգները» աշխատությունը, նրա նախորդների մնացն ուսուցողական է: Անդրադառնալով Իրանի հեղափոխու-թյունից բխած իրադարձություններին, նա զարգացրել է իր նախկին աշխատու-թյունը: Բայց եւ այնպես ոլորտի համընդհանուր տեսական շրջանակներում խոր-

23. Dualism

քային աշխատանք չի կատարել որեւէ նոր խնդիր չի ներկայացրել: Խնդրո առարկա աշխատության մեջ մեկ առ մեկ ներկայացրել է Իրանում Միացյալ Նահանգների պարտության պատճառները: Թվում է, թե այդ պարտությունն ավելի քան տեսանելի էր, ինչպես ինքն անբարոյց խոստովանում է.

«Նրանք, ովքեր փոփոխություններն այս հարթության վրա ուղադրության չեն արժանացրել, նշանակում է, որ միակողմանի շարժում են պատկերացրել արեւմտյան չափանի վերաբերյալ»²⁴:

Թեև Քոթթանը ընդունել է, որ այսպիսի Խոնեյնի անունով երեւոյթն անհերքելի փաստ է, սակայն չի կարողացել այդ երեւոյթին համոզիչ գնահատական տալ և պարզաբանել նրա առաապելը: Նա լոկ ներկայացրել է նոր դիտարկումներ, որպեսզի դրանց օգնությամբ իրանական ազգայնականության պարտությունը վերագրի թագավորի և Միացյալ Նահանգների սխալ քայլերին: Այդ նպատակով, նա ջանքեր է գործադրում համեմատել Իրանում արաբների, մոնղոլների և եվրոպացիների վերջին ու ԱՄՆ-ի առանձնահատուկ հաղթանակները: Անկախաձ Քոթթանը համզել է այն եզրակացության, որ Արեւմուտքի միջամտություններում ինչ-որ սխալ է տեղի ունեցել, ինչն էլ պատճառ է դարձել այսպիսի Խոնեյնի երեւոյթի երեւան գալուն, այն է՝ ստորացում ևս տեսլություն: Բացի այն, որ Իրանի պատմության ընթացքում այնպիսի միասնություն, ինչի մասին խոսվեց, գոյություն չի ունեցել, նա նաեւ լուրջ ու արժանահավատ հաշվարկումներ իսլամի վերածնության և նրա առաջնորդության վերաբերյալ չի կատարել: Իրանում Միացյալ Նահանգների քաղաքականության պարտության խնդիրը քննարկման առարկա դարձնելու նպատակով ճիշտ կլինի, որ պարզաբանման ոգով վերլուծություն կատարվի, ինչն էլ ցույց կդնի ամերիկացիների վարվելակերպն իրանցիների նկատմամբ և վերջիններիս հակազդեցությունն այդօրինակ միջամտություններին: Չկա նաեւ վերլուծություն, որը կարող է հանրագումարի բերել կողմերի հակազդեցությունն ու քաղաքական տարաձայնությունները: Ներկա քննադատությունը հակված է փոքրածավալ վերլուծության, որի նպատակը ինտեգրացիա-դեզինտեգրացիայի հարթության պարզաբանումն է, ինչի համար նախ կօգտվեն Բայնդլըրի «Ժրան» աշխատությունից, ապա կապացուցեն, թե ինչու իիշյալ երկու հանրաճանաչ գիտնականներն էլ ընկել են նույն հակատարբերների մեջ, ինչ չափը:

1969թ. հոկտեմբերին Բայնդլըրն անդրադառնալով յազավորի տնտեսական քաղաքականության հեռանկարներին, իր լավատեսությունը չի քաջքրել.

«Տասից ավելի քիչ տարիների ընթացքում ... քաղաքական կայունության ու ժողովրդավարության ասպարեզում լուրջ ձեռքբերումներ են արձանագրվել, ակնհայտ հաջողություններ կան տնտեսական ոլորտում, քաղաքականում՝ կազ-

²⁴ Richard Cottam, *Iran and The United States*, 76:

մակերպված ու օրենքի սահմաններում գոյություն ունեցող ընդդիմությունը պարտվել է, հոգևոր առաջնորդները ցրվել են, թագուհին լույս աշխարհ է բերել թագաժառանգ»²⁵:

1980թ. Կոնգրեսի տնտեսական համատեղ կոմիտեում փեիլեվիակնության ճգնաժամի մասին «Ժրան» զեկուցագիրը ներկայացնելիս Բայնդլըրի մտահոգությունը պատճառաբանված է թվում²⁶:

Մույն զեկույցում, որն Իրանի իրավիճակն ուսումնասիրում է անցյալ դարի 60-ականներից մինչև 1979թ. հեղափոխությունը, խիստ կարեւորել է երեք գլխավոր գործոն, որոնք, հնարավոր է, եղել են շահի կործանման պատճառը. սրընթաց զարգացման հետեւանքները հասարակության կառուցվածքի վրա, քաղաքական լայնածավալ կազմակերպություն ստեղծելու անկարողությունը և շիա հոգեւորականության դերակատարությունը քաղաքային բնակչությանն ակտիվացնելու հարցում²⁷: Թագավորը չպետք է կյանքի կոչեր զարգացման սեղմ նախագիծ, ինչը ֆինանսավորվում էր նավթի եկամուտներից: 1977թ. նավթի եկամուտների կտրուկ նվազումն ունեցավ նաեւ երկրորդական հետեւանքներ, որոնք նպաստում էին քաղաքական և հասարակական իրավիճակի էլ ավելի բարդացմանը: Այդ խնդիրներից էր ճնշման մեխանիզմների անարդյունավետությունը: Լիբերալիստական հայտնի պարզաբանումների շրջանակներում խիստ ընդունված վարկածներից մեկն էր համաձայն հասարակական-քաղաքական օրինակությունն ու շահերը պետք է բարեկեցիկ և հավատարիմ մարդկաց ձեռքին լինեն, որոնք պատասխատ կլինեն համընթաց քայլել պաշտոնական համակարգի հետ: Բայց, քանի որ տնտեսական բազան ի վիճակի չէր արդյունավետ գործող պատժիչ կազմակերպություններ ստեղծել, շիա հոգեւորականները հեշտությամբ կարողացան մտնել քաղաքական դաշտ և ժողովրդին ապստամբության դուռ բերել ընդդեմ շահի: Բայնդլըրի քաղաքականությունները «Ժրան» զեկուցագրում թերություններ էլ ունեին:

1. Թեև շահի պատժիչ մեքենան՝ Սափարը, 1960-77թթ. հանրահայտ և եզակի կազմակերպություններից էր, սակայն Բայնդլըրը շեշտել է, թե դրա ֆինանսական անգործությունն անարդյունավետ դարձրեց ճնշումը, ի հետեւանս որի իսլամը ծաղկեց: Այստեղ նա անդրադառնում է շահի պարտությանը, աշխատում քաղաքակրթական դրա գործոնը, ինչն ընդդիմության նպատակն էր: Մինչդեռ, ըստ իս, թագավորի կործանումը պետք է վերլուծել տեսական կուռ մեթոդներով, որպեսզի

²⁵ Quoted in Benard Chery, and Khilzad, *Zalmay, The Government of God*, New York: Columbia University Press, 1984, 14.

²⁶ Binder Leonard, *The Political Economy of The Middle East: 1973-1978*, Iran, US Government Printing Office, Washington: 1980, 166-171.

²⁷ Leonard Binder, *ibid*, Iran, 160.

հնարավոր լինի նրա ռազմավարությունները կապել դրանց հնարավոր պատասխանների հետ:

2. Բայնդրը կարծիքով՝ նավթային եկամուտները կարողացել են մինչև 1972թ. բավարարել Իրանի հասարակության պահանջարկը: Բայց եւ այնպես նա պնդում է, թե նավթի եկամուտների նվազումից առաջացած խնդիրները 1977թ. եւ նախորդող տարիներին, Իրանի պատմության ընթացքի փոփոխության պատճառ դարձան: Իսկ այդ փոփոխությունը վերաբերում էր թե՛ ճնշման անարդյունավետությանը եւ թե՛ ընդդիմության ձեւավորմանը: Բայնդրը, հաշվի առնելով շահի իշխանության մեջ առաջացած ճգնաժամի ժամանակը, պետք է վերլուծական համապարփակ արդյունք ունենար, որպեսզի կարողանար հստակորեն ընկալել, թե շահը 1960-ականներին ինչպես կարողացավ իր իշխանությանը ենթարկել քաղաքական տարբեր ուժերին: Այնուհետեւ պետք է ուսումնասիրության առարկա դարձնել 1973-ից հետո նավթի եկամուտների նվազման կարճաժամկետ եւ երկարաժամկետ հետեւանքները, որպեսզի հասկանար, թե ընդհանուր առմամբ քաղաքական-տնտեսական ինչ պայմաններում են գտնվում վարչակարգին հնագանդ ուժերը: Եվ միայն այդօրինակ վերլուծության օգնությամբ կարելի կլիներ պատկերացնել ճնշման կենտրոնացվածությունը²⁹: Միաժամանակ ուսումնասիրվում է այն հարցը, թե գործնական ինչ միջոցներով այլափոխվեցին ենթակայության ու ճնշվածության հարաբերությունները: Եթե ընդունենք, որ այդ ժամանակահատվածում ճնշումն ընդդիմության վրա ուժեղ էր, ապա կարելի է եզրակացնել, որ ճնշումներն ուժեղացնելու գործոն են եղել նավթից ստացվող եկամուտները: Հետևաբար, միջազգային շուկայում նավթի գների նվազումը չպետք է դիտել իբրև պատասխան այն հարցի, թե ինչու՞ Իրանի հոգևորականները քաղաքական գործունեության հրապարակ գալու համար պահը համարեցին նպաստավոր: Մյուս կողմից, վերլուծական համապատասխան շրջանակներում, պետք է ցույց տալ, թե նավթի եկամուտներն ի՞նչ դեր են ունեցել թագավորի մշակված գործունեության նախագծերում: Այդօրինակ տեսությունը ոչ միայն պետք է մերժված համարի ճնշման ապարատի թուլությունը, այլև ճգնաժամի սկզբնավորման ժամանակը դիտարկի այն փուլում, երբ քաղաքային բնակչության փոխհարաբերությունները նրանց ոտքի հանեցին ընդդեմ շահի:

Զոքթամբ եւ Բայնդրը, Իրանում նախահեղափոխական եւ հետհեղափոխական շրջանի իրենց աշխատություններում, տարբեր նպատակներ են հետապնդել: Թագավորի նման նրանք եւս չեն կարողացել առկա հակասությունները վերացնել, բայց ձգտել են ինտեգրացիայի պարզաբանումը փոխել դեզինտեգրացիայի պարզաբանման հետ, դեզինտեգրացիայի ոլորտում՝ իսլամականների

գերազանցությունը՝ «սխալներին» հարցի արժարժման փոխարեն: Այստեղ անհրաժեշտաբար հարց է առաջանում, թե ի՞նչ տեղի ունեցավ պատմական Իրանի աննոտր տարածված դերակատար քաղաքական ակտիվ հատկանիշների հետ: Թացի այդ, թեև պատմական Իրանի մշակույթի դերակատարությունը հակասում էր տնտեսության դերակատարությանը, իսկ տնտեսական դետերմինիզմն ինքնուրույնության հարց էր, բանգի կապվում էր լիբերալ ժողովրդավարական իշխանության հետ: Միայնակի հարցի արժարժումը կարող է միայն ինքնությունների բացահայտ հարաբերությունները թաքցնել: Միաժամանակ առիթ է տեսնում մասկլին պարզաբանումները բստ նոր նպատակների փոփոխելու համար: Անշուշտ, գիտնականների դատողություններում իշխում էր այդօրինակ արձատավորված կարծիքը, այլ կերպ՝ նրանք իրենց բանականության շուրջ բոժոժ էին կյուսել եւ ավելի ազատամիտ տեսությունների պարզաբանումներն ընդունելու համար որեւէ անցք չէին թողել: Նշված մտածողների շարքում շատ իրանցիներ էլ շահի տապալման հարցում կարելուրում են նաեւ տնտեսական գործոնը³⁰: Հենց տնտեսական դետերմինիզմն արգելք դարձավ, որ այդ մտածողները չկարողանան տեսական ավելի բաց պարզաբանում ներկայացնել, որի շրջանակներում հնարավոր լիներ համոզիչ կերպով միահյուսել գոյություն ունեցող անորոշությունները: Ժամանակակից Իրանի մասին եւ ինտեգրացիա-դեզինտեգրացիայի կրկնադրությունն Իրանի եւ Արեւմուտքի միջև լիբերալ արդիականության մտածողության ուղղությունը չի կարող ձեռքբազատել հակասություններից ու անհամապատասխանություններից: Այժմ կանդիդատանք մարքսիստ գիտնականներին, որպեսզի տեսնենք թե նրանք ինչպես են բնագրկել խնդիրը:

2. Մարքսիստական ուղղություն

Ընդհանուր առմամբ մարքսիստական գրականությունը եւ աշխատությունները կարելի է բաժանել միմյանցից տարբեր երկու խմբի՝ պատմության տեսանկյունից եւ նեոմարքսիստական վերլուծություններ: Առաջին խմբի ոլորտում բնության ենք առնելու երկու համրահայտ դեմքերի աշխատությունները: Նախ անդրադառնանք Թեդա Սկոբոլին (Teda Skocpol), որն իր վերլուծություններում օգտագործել է մի շարք մարքսիստական հասկացություններ: Նա շեշտը դնում է այն բանի վրա, որ իշխանությունը պետք է ինքնավար կառույց լինի: Բացի այդ, նա ընդունում է, որ միջազգային ասպարեզում իշխանությունների մրցակցությունները հասարակական հեղափոխությունների արդյունքների վրա ավելի մեծ ազդեցություն ունեն, քան դասակարգային պայքարը:

29. Տես՝ Էրթաինի Ռազալի, «Լեբրադված գորգացումը եւ շահի ընձան» հոլդվածը, Իսլամական հեղափոխության արձանները ժողովածու, Առաջնորդի հաստատության գրասենյակ, Դոմ, 1991թ.:

Ֆրեդ Հոլլիդեյը (Fred Halliday), որն օգտվել է Սկոթլոդի պատմական վերլուծություններից, պատմական տեսանկյունից մեկ այլ օրինակի վերլուծություն է ներկայացրել: Նա, մարքսիստական տարածված տեսակետներից մեկի համաձայն, կարևորում է միջազգային մակարդակով իշխանությունների մրցակցության դերը եւ դրանց փոխհարաբերությունների ազդեցությունը ներազգային պայքարի վրա: Իշխանությունների կողմից հասարակության կառուցվածքում հիմնարար բարենորոգումներն ու ներքեից պարտադրված քաղաքական կառուցվածքի փոփոխությունը, փոխազդեցով գորացնում են միմյանց: Հնետարար, իշխանության ողջ կառուցվածքը, որն սկզբից եւեթ տնտեսական հիմք է ունեցել, ուղղորդվում է որոշակի բարեփոխումներով, ինչն իր հերթին քացառված չէ, թե կհանգեցնի դասակարգային բախումների ու ապստամբությունների³⁰:

Երբ այլևս հնարավոր չէ հարցերը լուծել, իշխող վարչակարգի կործանումն անխուսափելի է եւ հասարակությունը ճանապարհ է հարթում պահանջների ու անհրաժեշտ փոփոխությունների համար, ինչն ավարտվում է նոր իշխանությունների ձևավորմամբ: Այստեղ պատմության տեսանկյունից վերլուծությունը դեմ է առնում իշխանությունների ինստրումենտալիստական (instrumentalist)³¹ տեսությանը, որը քաղաքական պայքարն առանցքային է դարձնում վերնաշերքի մակարդակով:

Այսուհանդերձ, այս տեսակետը, ի վերջո, հավատարիմ է մնում հասարակության դասակարգերում տնտեսական հիմքերի դերակատարությանը: Այդ պատճառով, Սկոթլոդին հակառակ, որն աշխատել է իշխանություններից ներկայացնել ոչ ռեզոլցիոնիստական տեսությամբ, մյուս տեսակետը հակված է իշխանություններին իշխող դասակարգերի ներկայացուցիչ համարելուն³²:

Նեոմարքսիստական տեսանկյունից երկրորդ լուծումը, Նիկոլաս Փուլանցասի (Nicolas Poulantzas) գաղափարներից բխած հասարակական ձևավորումն է: Վերջինս, որը գործում է աղքատիական մտածողության շրջանակներում, նկատի ունի մարքսիստական երկու հիմնական սկզբունքը՝ տնտեսական դետերմինիզմը եւ հասարակության դասակարգերի համադրումը դասակարգային պայքարի հետ³³: Այս երկու հակասական սկզբունքները կողք կողքի դնելու նպատակով, նա նշել է, որ դասակարգերը ձևավորվում են կառույցների եւ նրանց միջեւ հարաբերությունների արդյունքում: Հասարակության մեջ դասակարգերը աչքի են ընկնում միմյանց նկատմամբ փոխադարձ հակադրությամբ: Այս առումով, հասարա-

կության մեջ դասակարգերը չեն ձևավորվել նրա համար, որ հետո միմյանց դեմ պայքարեն, այլ պայքարը նրանց դասակարգային ինքնության անբակտելի մասն է համարվում: Սակայն դասակարգերի հակադրությունների եւ միմյանց դեմ պայքարի տեսությունը գունատվում է, երբ Փուլանցասը շեշտում է, թե դասակարգերի կարգավորված մտադրությունը տնտեսության կառուցվածքում դերակատար է, իսկ այդ դերը կյանքի է կոչվում տնտեսության կառուցվածքի միջոցով: Տնտեսական հարկադրանք հասկացությունը դրսևորվել է այնքանով, որ տնտեսության կառուցվածքը հատկացնում է դասակարգերի դիրքն ու կողմնորոշումը: Ընդգծվում է, որ հասարակության հատկացված դասակարգերը ներկա են նաև տնտեսական, քաղաքական եւ գաղափարախոսական դրսևորում: Օրինակ, քաղաքական մակարդակում նրանք մասնակցություն ունեն իշխանական կառույցներում եւ իրենց դրսևորում ու կազմակերպվում են: Հարկ է նշել, որ քաղաքական եւ գաղափարական ոլորտներում դասակարգերի ներկայությունն ու հակադրությունը չեն կարող Փուլանցասին ազատագրել տնտեսական դետերմինիզմից: Քանզի, վերջ ի վերջո, տնտեսությունն է, որ դրսևորվում է իբրև անգույական չափանիշ ու որոշիչ դեր ունի հասարակական դասակարգերի ընդհանուր դիրքի եւ ներդասակարգային կառուցվածքում:

Փուլանցասը «Կառավարություն, իշխանություն եւ սոցիալիզմ» աշխատության մեջ հաջողությամբ քննարկել է դասակարգերի ձևավորված կամքը եւ պատասխանել այդ հարցին: Ներկայացրել է դասակարգերի միջեւ միջնորդավորված գործելակերպով կառավարության առանձնահատկությունները: Բացի այդ, դասակարգային պայքար հանում իշխանության, դասակարգ-իշխանություն փոխհարաբերություններ եւ իշխանություն ունեցող դասակարգեր հարցերը հաստատուն կերպով արագուցում են, թե Փուլանցասն ինչպես է աստիճանաբար հասել քաղաքական ոլորտի հակացություններին³⁴:

Քանզի տնտեսական գործոնը չի որոշում դասակարգերի դիրքն ըստ կասիտալիստական արտադրության, այլև իշխանությունն ինքն է վերածվում դասակարգային հակամարտությունների ասպարեզի: Եվ հենց այդտեղ է, որ դասակարգերի «փոխհարաբերությունները» կարելի է ըստ նրանց միջեւ ստեղծված շրջանակում է մնում քաղաքական պայքարի մակարդակով դասակարգային պատկանելիության առանցքայինության հարցը: Փուլանցասի այդ տեսակետն ընդունել է նաև Բաշիլիին: Հարկ է նշել, որ վերջինս այն կարծիքին է, թե խլամի շլա ուղղության հետնորդները եւս անհիստորիկաբար դասակարգային են, որոնք հասարակության այլ խավերի օրինակով պայքարի մեջ են մտնում: Ուստի, անհրա-

30. Fred Halliday and Maxine Molyneux, *The Ethiopian Revolution*. London: Verso, 1981, 12.

31. instrumentalist Thesis

32. Fred Halliday, *Iran: Dictatorship and Development*, Harmondsworth: Penguin Books Ltd, 1979, 41.

33. Nikolas Poulantzas, *Social Classes in Contemporary Capitalism*, London: NLB, 1975, 14.

34. Nikolas Poulantzas, *Social Classes in Contemporary Capitalism*, London: NLB, 1975, 14.

ժեշտ է տեսնել, քե նա ինչպես է պատճառաբանում Իրանում իշխող կապիտալիստական փոխհարաբերությունների միջավայրում շիա ուղղության հաղթանակը:

Մարքսիզմի քնդիանող վարկածներն արդեն քննարկել ենք: Այժմ պետք է ավելի ճշգրտորեն ուսումնասիրենք դրանց բովանդակությունը և էության մեջ առկա հակասություններն ու թերությունները:

Մարքսիստական ուղղությունը եւս, ինչպես լիբերալ մոդեռնիստականությունը, քննարկման առարկա է դարձրել արդի Իրանը, սակայն ավելի հանրամատչելի գրականություն, որը տեսական բարդ լուծումներ է ենթադրում: Տեսական քաղական խրթին պարզաբանումներով են պատճառաբանվում ենթակառուցվածքի³⁵ և վերնաշենքի³⁶ փոխհարաբերությունները: Սակայն այս վերլուծության շրջանակներում անդրադառնալու ենք այն ամհամապատասխանություններին ու թերություններին, որոնք դուրս են մնացել պատմական վերլուծություններից: Այնուհետև քննարկումները կվերաբերեն նեոմարքսիստական պարզաբանումներին³⁷:

Այդ իմաստով, ավելի նպատակահարմար է, որ մարքսիստական ուղղությունը գնահատենք լիբերալ մոդեռնիստականների առջև ծառայած ինտեգրացիա-դեզինտեգրացիայի խնդրի հետ կապված: Ուստի, անհրաժեշտ է, որ անդրադառնանք այդ ասպարեզի հանրաճանաչ դեմքերին և ցույց տանք, քե նրանք ինչ կերպ են մեկնաբանում փեիլեվիականության երեւան գալը, զարգացումն ու դրանում առաջացած ճգնաժամը: Պատմական վերլուծություններից շատերում հաստատվում է այն տեսակետը, որ ժամանակակից Իրանում կապիտալիստական հարաբերությունները ձևավորվել են 20-րդ դարի սկզբում:

Մարքսիստ մտածողները, ի հեճուկա լիբերալ մոդեռնիստականների, ի սկզբանե մերժում էին մշակութային և իշխանության հարցերում Իրանի պատմության շարունակականությունը: Նրանք համոզված էին, որ պատմական յուրաքանչյուր դարաշրջան իր արտադրական առանձնահատկություններն ունի, ինչը

35. Infrastructure

36. superstructure

37. Nicolas Poulantzas, Sate, Power, Socialism, London: NBL, 1978, 147-53.

Ենթակառուցվածքի և վերնաշենքի փոխհարաբերությունների մասին տես՝ Էխսան Թարաբի, Իրանի հասարակությունը Ռեզա շահի ժամանակ, Թեհրան, 1978թ.

Քանի, որ հեղինակը Ռեզա շահի իշխանության կործանումից տարիներ հետո է գրել, ձգտել է ներկայացնել փաստեր, որոնք կապացույցին, քե Ռեզա շահի հասարակական, քաղաքական գործունեությունն ի սկզբանե դատապարտված էր անհաղորդության: Այդ տեսանկյունից դիտարկելով Ռեզա շահի ազգային կառավարությունը, նա շեշտում է, քե մարքսիստական տեսությունը որևէ թերություն չունի: Սակայն շահը ձգտում էր կանցնել տնտեսության հարկադիր տարրերի գործունեությունը, որպեսզի բանը շիանի յուրժուական հեղափոխության:



բացատրելի է գաղափարախոսությամբ: Երբ կապիտալիստական փոխհարաբերությունների զարգացման ժամանակահատվածում իշխանությունը բռնապետական է լինում, ինչպես փեիլեվիականությունն է, ապա, բնականաբար, դրա վերջը ոչնչացումն է:

Այս առնչությամբ, խիստ նշանակալից է այն հարցը, քե խնդրո առարկա երկու ուղղությունները սոցիալական հակասությունների տեղն ինչպես են որոշում կապիտալիստական ինքնիշխան պետության շրջանակներում: Խնդրի շուրջ քննարկումները ցույց են տալիս փոփոխությունների ծավալը, ինչն իր հերթին հասակ է դարձնում այդ ուղղություններում առկա հակասությունները: Այդ նպատակով քննության կառնենք Թեղա Սրոչիդի «Իշխանությունները և հասակակալան հեղափոխությունները», «Լարձակալ կառավարություն և իլամի շիա ուղղությունն Իրանի հեղափոխությունում» աշխատությունները, ինչպես նաև Ֆրեդ Հոլլիդեյի «Բռնապետական Իրանը և զարգացումը» գիրքը: Նշյալ աշխատություններն Իրանի և Արեւմուտքի ինտեգրացման հարցը լիովին պարզ են դարձնում: Իսկ «Իսլամն ու դիմադրության առասպելը» գրքում Հոլլիդեյը ջանք է գործադրել վերընթերցել հեղափոխությունը, այն տեղի ունենալուց հետո: Նեոմարքսիստական գնահատականի առումով ուշագրավ է Բաշիրիեյի «Կառավարությունն ու հեղափոխությունն Իրանում» աշխատությունը: Կաշխատենք ապացուցել դրա տեսական թերություններն ու անկարողությունն ինտեգրացիա-դեզինտեգրացիա խնդրի քացատրման առնչությամբ:

Հոլլիդեյի աշխատությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ նա օգտվել է Սրոչիդի «Կառավարություններն տեսական հիմքերից: Այդօրինակ պատմական վերլուծության շրջանակներում, նա Իրանի իշխանության կառուցվածքը համարում է կապիտալիստական, ինչը համապատասխանում է կապիտալիզմի զարգացմանը: Մինչդեռ իշխանությունները հասարակության ենթակառուցվածքի արյունք են համարվում: Հետևաբար, իշխանության ինքնակարությունը բացառվում է, ինչը կարող է զարգացման նպատակով մի շարք բարեփոխումներ կատարել: Այս տեսանկյունից իշխանությունները միաժամանակ պայքարում են երկու ճակատով՝ միջազգային դրստում՝ արտաքին բջնանու դեմ, իսկ երկրի ներսում՝ հասարակական դատակարգերի: Նրանց գլխավոր խնդիրը հասարակական կարգը պահպանելու ճանապարհին առկա պատմեչները վերացնելն է: «Կառուցվածքային ճգնաժամի» հարցում, որտեղ իշխանությունները չեն կարողանում մրցակցել հաստատված աշխարհակարգի հետ ևս ենթադրաբական հարցում դատակարգային պայքար մղել, Հոլլիդեյը զարգացումների մի քանի տարբե-

րակ է կանխատեսում: Սակայն դրանցից եւ ոչ մեկում չի արժարժվում իսլամի վերածննդի հարցը³⁸: Պատճառն այն է, որ տնտեսական դետերմինիզմն անկում ապրող իսլամական ուժերի համար դաշտ չի ստեղծում: Այլ կերպ ասած՝ զարգացող իշխանական ապարատը կամ պետք է բարեփոխվի եւ հավասարակշռվի, որպեսզի կարողանա կրկին աշխատեցնել առկա արտադրությունը, կամ էլ հասարակական ենթակառուցվածքներն են ուղի հարթելու մի իշխանության համար, որը կկարողանա առաջնորդել գոյություն ունեցող կապիտալիստական փոխհարաբերությունները:

Հոլլիդեյն, փաստորեն, «ժամանատարար ինքնավար իշխանությունը» փոխարինել է «իշխանության ինստրումենտալիստական տեսությունով»:

Թեև այն, որ խնդրո առարկա տեսակետի համաձայն, դասակարգային պայքարը տեղի է ունենում վերնաշերտի հարքության վրա, արժանի է ուշադրության, սակայն տնտեսական ենթակառուցվածքների միջամտությունն է որոշում հասարակական ուժերի դիրքն արտադրական փոխհարաբերություններում³⁹: Նոր իշխանությունները, որոնք երեւան են եկել նախորդ վարչակարգի ոչնչացմամբ, թեև անուղղակի կերպով, բայց են այնպես իշխող դասակարգի ներկայացուցիչ են: Գաղափարապես ոչ կոտ լինելու երեսուրբն առավել ցայտուն է դրսևորված Հոլլիդեյի «Վալանդ եւ առասպելը դեմ հանդիման» աշխատությունում: Կար ժամանակ, որ նա հրաժարվում էր իսլամական անգամել հեղափոխության հանգեցրած 1979թ. դեպքերը: Չընդունելով, նա նշում է.

«Այն, ինչ տեղի ունեցավ Իրանում, բառիս բուն իմաստով, ծայրից ծայր հետադիմական հեղափոխություն էր, որը վերադարձ էր իր սկզբին, աստղագիտական իմաստով՝ վերադարձ դեպի նախկին կարգերը»⁴⁰:

Հոլլիդեյի հաջորդ խնդիրն առաջ է գալիս այն դեպքում, երբ նա նշում է, որ, իր կանխատեսած տարբերակները կյանքի չկոչվեցին իսլամի երեսան գալու պատճառով: Դեգիտեզրացիայի վերաբերյալ բացատրությունները (այն, որ իսլամականներն իրականում հետադիմական էին) նրա գաղափարական հակասությունները չեն վերացնում: Վերջին կանոնավորումների շրջանակում Հոլլիդեյը, ի վերջո, պետք է հրաժարվեր տնտեսական դետերմինիզմից, կամ էլ իսլամականներին այլևս չդիտեր իրրեւ հետադիմական՝ վերացման շեմին հայտնված ուժեր: Բայց, ըստի որ Հոլլիդեյը հավատարիմ է մնացել իր նախկին տեսակետներին, հետևաբար չի կարող Իսլամական հեղափոխությունը վերլուծել պատմության շրջանակներում: Քանզի, ըստ նրա կանխատեսումների, Իրանի հասարակու-

րյան ալապան հասարակության զարգացած դասակարգերի ձեռքում է լինելու եւ ոչ թե հոգեւորականների:

Սրոչվորը, օգտվելով մարքսիզմից, ձգտել է հասկանալ հասարակական հեղափոխությունների պատճառներն ու էությունը: Այս առումով հարգանքի արժանի են իշխանությանը ոչ ռեդուկցիոնիստական տեսանկյունից ներկայացնելու նրա ցանկերը: Նա նշում է.

«Մենք համաձայն չենք այն տեսակետին, թե նախորդ վարչակարգերում հեղափոխական իրավիճակներ ստեղծող առկա օբյեկտիվ պայմանները սկզբում տնտեսական են եղել, այլև նման իրավիճակներ ստեղծվել են քաղաքական հակասությունների եւ իշխանությունների կառուցվածքի պատճառով, որոնք հայտնվել էին երկկողմ ճնշման ներքո: Մի կողմից սա միջազգային ասպարեզում ռազմական մրցակցությունն էր, մյուս կողմից՝ այդ հանգամանքի պատճառով ճնշման տակ հայտնված երկրի տնտեսությունը: Ստեղծված իրավիճակում, որոշ դեպքերում, ներքին հարցերում քաղաքական կշիռ ունեցող դասակարգային այն ուժերը, որոնք ընդդիմանում էին իշխանություններին, թույլ էին տալիս, որ վերջինս միջազգային ոլորտում մրցակցության առնչությամբ օգտագործի որոշ պաշարներ»⁴¹:

Այդ տեսակետն առավել տեսանելի է դառնում այն ժամանակ, երբ նա ասում է, որ Իրանի հեղափոխության ղեկավարությունը կազմված չէ արտադրության միջոցները տնօրինող մարդկանցից: Հետևաբար, ինքնաբուխ այդօրինակ առաջնորդները կարող են ազգային դիմադրությունը հզորացնել եւ իրենց վրա վերցնել երկիրն արդյունաբերական դարձնելու պարտականությունը⁴²:

Հոլլիդեյին հակառակ, Սրոչվորը կարծում է, թե իշխանությունները պատասխանատու են իշխող դասակարգի շահերը պաշտպանելու համար: Նա շեշտում է, որ միջազգային ճնշումները, ներքին ճնշումների համեմատությամբ, առավել մեծ ազդեցություն ունեն հեղափոխության արդյունքների վրա, որոնք ապակենտրոնացման եւ հավասար մասնակցություն ունենալու ուղղությամբ⁴³ գործադրվում են կառավարության վրա:

Սրոչվորի ոչ ռեդուկցիոնիստական տեսակետը վիճահարույց է կարելու մի խնդրում: Եթե ընդունենք, որ եւ զարգացած, եւ թույլ զարգացած պետություններում հակադրություններ իրականություն են, ապա արդյոք հնարավոր չէ⁴⁴, որ զարգացածները թույլ զարգացածներում կանխեն հաջող ելքով հեղափոխու-

38. Fred Halliday, Iran: Development, 300-309.

39. Fred Halliday, Iran: Dictatorship and Development, 300-309/ 40-41

40. Fred Halliday, Islam and The Math of Confrontation, London: J.B. Taurus and co. Ltd., 1985.

41. Teda Skocpol, Social Revolutions in The Modern World, England: Cambridge university Press, 1994. 22. 1 Skocpol, ibid, 122.

42. Teda Skocpol, States and social Revolutions, England: : Cambridge university Press, 1979.

43. Teleo Loginal.

բյունները: Իրականում նրա առաջարկած դիրքորոշման մեջ ակնհայտ է օբյեկտիվիզմը եւ տեսնում ենք, որ հասարակական հեղափոխությունների համար ներկայացրել է միանման պարզաբանում⁴⁴: Թեև պետություններում աշխարհի մակարդակով քաղաքական հակասություններն անհերքելի են, սակայն որևէ փաստ չկա, որը կարող է ապացուցել, թե այդ հակամարտություններն ու հակասությունները թույլ զարգացած երկրներում, կարող են հանգել արդյունավետ փոփոխությունների, այնպես, որ թե՛ վերելից, եւ թե՛ ներքելից ընդգրկվեն արդիական աշխարհում:

Սրոշփոլը, երբ 1982թ. հրապարակեց իր հայտնի «Լարձակալ կառավարությունն ու իսլամի շիա ուղղությունն Իրանի հեղափոխությունում» հայտնի հոդվածը, ի գորտ չեղավ այդ երեսույթին սպառիչ պատասխան տալ: Նա իսլամի շիա ուղղությունը չէր համարում «մարվող ուժ», ոչ էլ սոսկ իբրեւ դեպի «ավանդակալություն» վերադարձի մի կերպ, այլ այն գնահատում էր որպես առաջադեմ ուժ, որը ճանապարհ է հարթում զարգացած իշխանության ձեւավորման համար, ինչպես դա կատարեցին յակոբինները Ֆրանսիայում⁴⁵:

Սրոշփոլը պարզաբանում է, որ իսլամի վերածննդի երեսն գալը լիովին հաստատում է իր «Կառավարությունն ու հասարակական հեղափոխությունը» աշխատության մեջ արած եզրահանգումները: Սակայն, դեռ մի քիչ շուտ էր, որպեսզի նա հասկանար իր սխալը եւ տեսներ, որ նշված աշխատությունում տեղ գտած մտքերը չեն համապատասխանում Իրանի Իսլամական հեղափոխությանը: Սրոշփոլի տեսության համաձայն, Իրանի հեղափոխությունն իրականում վերադարձ էր դեպի ավանդականություն, ինչը, փաստորեն, արդիականության հերքում է: Այստեանդեռ, գաղափարական հենքի վրա ճշգրիտ տեսություն ստեղծելու առումով, Իրանի հեղափոխության պարզաբանումներում առկա է խտոնաշփոթություն: Մշակութային տարրերը, այսպիսի Խոմենիի յուրահատկությունը, շիականության առանձնահատուկ գաղափարախոսությունը, սրանք քաներ են, որոնց մասին հնարավոր չէ «Իշխանությունները եւ հասարակական հեղափոխությունները» աշխատության մեջ համապատասխան քննարկում տեսնել⁴⁶:

Նեոմարքսիստական մեկնություններից մեկը կարելի է տեսնել Հոսեյն Բաշիրիի «Իշխանությունը եւ հեղափոխությունն Իրանում» գրքում: Նա Փուլանգասի գաղափարների ազդեցության ներքո նշում է, որ ազգայնականությունն Իրանում առաջացել է 19-րդ դարի վերջերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ համաշ-

խարհային կապիտալիզմը հասել էր Իրան եւ վերջինիս հասարակությունն սկսել էր մուտք գործել արեւմտյան տնտեսություն: Թվում է, թե Բաշիրին ձգտել է վերացնել մարքսիստական իշխանության ինտեգրացիա-դեզինտեգրացիայի բերությունները: Այդ նպատակով, իշխանությունների քաղաքականության հարցում դիտում է երկու առանձին փուլեր: Առաջին փուլում թագավորն այնպիսի քաղաքականություն իրականացրեց, որի ընթացքում իշխանության հին ճակատն սկսեց քայքայվել: Արդյունքում Իրանի համար ճանապարհի հարթվեց մուտք գործելու միջազգային տնտեսություն: Իսկ թե ինչ է իշխանության հին ճակատն սկսվեց քայքայվել, երբ մանր բուրժուազիան իշխանության նրա մասն էր կազմում, Բաշիրին հետեւյալ կերպ է պատասխանում, թե «ավանդական շուկան», որ անկում ապրող դասակարգ էր համարվում, չունեւ անհրաժեշտ կապիտալ եւ կառավարման հմտություն, ուստի քանկերը ձգտում էին մեծ վարկերը տրամադրել արդյունաբերողներին⁴⁷: Հետեւաբար մանր բուրժուազիան հասարակության մեջ առանձին դասակարգ էր, որ Իրանի կապիտալիզմի պատմության հետ քիչ էր առնչվում:

Բաշիրին երկրորդ փուլում դեզինտեգրացիայի խնդրի եւ իշխող պայմանների առիթով այնպիսի պարզաբանումներ է ներկայացնում, որտեղ շիիզմը դառնում է գերակայող գաղափարախոսություն: Նա նշում է, որ շահը, երբ նոր կոալիցիա կազմելու հարցերով էր զբաղված, միաժամանակ հեռացավ իշխանության ճակատի որոշ ուժերից: Ինչը Բաշիրին պատճառաբանում է այն բանով, որ հակասական իրավիճակները հանգելու էին գաղափարական շարժման ձեւավորմանը, որն սկզբնավորվում էր հասարակության ստորին դասակարգերում, իսկ թագավորը երես բեքելով արդյունաբերական բուրժուազիայից, հակվեց դեպի քաղաքականական զանգվածներ⁴⁸: Երբ թագավորը հասկացավ, որ իր նոր քաղաքականությունն սպառնում է արդյունաբերական բուրժուազիային եւ սաստկացնում տնտեսական ճգնաժամը (առաջացել էր նավթի գների անկման հետեւանքով), որից բխած քաղաքականությունը բարեփոխեց իր դուրսը: Այդ փոփոխությունները քաղաքական շրջանակներում աղմուկ բարձրացրին, քանի որ, մի կողմից գործընթացի մեջ արդյունաբերական բուրժուազիայի պահանջները, մյուս կողմից՝ մանր բուրժուազիայի շերտերում քաղաքական շարժում էր ձեւավորվում: Հետեւաբար ստորին դասակարգերում հեղափոխական գաղափարախոսության երեսն գալը բազմազան դրոյապատճառներից կազմված պատմական մի երեսույթ էր, որը ճանապարհի հարթեց իսլամական անվանք նոր ճակատի համար:

Ինտեգրացիա-դեզինտեգրացիա հարցի առնչությամբ Բաշիրիի պարզաբանումներն սպառիչ չեն: Առաջին փուլում մանր բուրժուազիան դասակարգային պայ-

44. Teda Skocpol, "The Rentier State and Shīa Islam in the Iranian Revolution", *Journal of Theory and Society*, vol. 11, 1982.

45. Teda Skocpol, *States and Social Revolutions*, 291.

46. Hossein Bashirih, *The States and Revolution in Iran*, London: Groom Helm, 1984. 29.

47. Hossein Bashirih, *The States and Revolution in Iran*, 66, 47. Ibid.

48. Ibid.

քարի դաշտում համարվում է մարվող, քայքայվող, մինչդեռ երկրորդ փուլում այն դիտվում է իբրև քաղաքական դասակարգ, որը կարող է մշակել գաղափարախոսական իր ուղեծիրը: Եթե մանր բուրժուազիան չպետք է կարողանալ հեղափոխական գաղափարախոսություն մշակել, ապա չպետք է կարողանալ նաև պարտության մատնել շահին: Քանզի նրա դասակարգային պատկանելությունը, շահից հետո, քաղաքական ասպարեզում պետք է որ պատնեշեր նրա առաջատարության ճանապարհը: Բաշիրիեի գաղափարախոսության փակուղին երկկողմ է: Մի կողմից նա լուսաբանել է հասարակության դասակարգերի դիրքը՝ ողջ տնտեսական կյանքում և նրա վերլուծության առանցքը դասակարգի մարտն է, մյուս կողմից, նրա տեղուցյիտնիստական դիրքորոշումը հասարակության տվյալ դասակարգի նկատմամբ, չի կարող ճշմարտություն լինել: Հաշվի առնելով այն, որ Բաշիրիեի դասակարգի վերաբերյալ պահպանել է իր տեղուցյիտնիստական տեսակետը, հետևաբար չի կարողացել ազատացնել, որ մանր բուրժուազիայի նման ոչնչացվող դասակարգը կարող էր շահից հետո քաղաքական ոլորտում ղեկավար դեր ստանձնել:

3. Իշխող տեսակետների հիմնական խնդիրներն ամփոփ

ա) Շարունակականության խնդիրը

Այս խնդիրն իրականում միախուլված է լիբերալ մոդեռնիստական ուղղության հետ, քանզի այն մտավորականները, որոնց սույն հոդվածում անդրադարձել ենք, փեխելվիականությունը դիտում են մշակույթի շարունակականության իրական լինելու համատեքստում, ինչը ձեռավորել էր ժամանակակից Իրանի ազգայնականության հոսանքը: Այս հարցում նրանք ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքին, որ պատմության ընթացքում հիմքային ընդհատումներ են եղել: Նրանք ուշադրության չեն արժանացրել նաև այն պարագան, թե քաղաքական-հասարակական ինչպիսի պայմաններում է հնարավորություն ստեղծվել, որ նշյալ քաղաքականների (քաղաքական-հասարակական) ձեռավորման ու վերածելավորման ժամանակ որոշ բաղադրամասեր հասել են առավելության: Տեսական նպատակահարմար շրջանակը պետք է այնպես ամրապնդված լինի, որ հնարավոր դառնա, հիմնարար պատճառաբանությունը մի կողմ դնելով, միաժամանակ պարզել, թե քաղաքական ինքնություններն ինչ ճանապարհներով են իրենց իշխանության ռազմավարություններում դրսևորվում՝ ներգրավում ու վանում կամ յուրայինների հետ ձեռք ձեռքի տալիս ընդդեմ այլոց: Այս դեպքում, սոցիալական հակասությունը, շարունակականությունը բոլոր իմաստներով հարցականի տակ է դնում, եւ պարզ են դառնում քաղաքական կարգի ձեռավորման որպիսությունն ու նրա սահմանները:

բ) Ժամանակակից Իրանը և նրա կապն ալանդույթի յուրօրինակ արտանահարկությունների հետ

Ճննարկված երկու ուղղություններն էլ շեշտը դնում են տնտեսության վրա, որպես ճակատագրական գործոնի, այնպես, որ տնտեսության աներկբա անխափառությունները գերակայում են կրոնի եւ ալանդույթի անխզելիության հակումներին: Լիբերալ մոդեռնիստական ուղղության հետազոտողները պնդում են, թե կապիտալիստական տնտեսությունը եւ լիբերալիզմը, մաքրելով քաղաքական որոշակի հատվածներ, միախուլվում են: Մինչդեռ մարքսիստները, հենվելով ինքնածին տնտեսության տրամաբանությանը, ինչը վկայում է զարգացած դասակարգերի ընդհանուր դիրքի մասին եւ անկում է ապրում կապիտալիստական արտադրության եղանակի ներսում: Նպատակահարմար տեսակետը պետք է մի կողմ բողոքի խնդրահարույց եւ վճռորոշ էկոնոմիզմը, որ բնորոշ է երկու տնտեսություններին էլ եւ ցույց տա, թե որտեղ որոշիչ դեր ունեն քաղաքական գործոնները: Այլ կերպ ասած՝ այնտեղ, որտեղ քաղաքական պայքարը տահմանափակում է ընդդիմադիր ուժերի գործունեության դաշտը եւ նրանք հայտնվում են հակասությունների ու անհամաձայնությունների հորձանուտում: Ուստի, վերլուծության հենց այս համապարփակ շրջանակներում էլ կարելի է պարզել ալանդույթի կարևորությունը եւ վերջինիս ու ինքնություն ստացած ուժերի միջեւ կապը եւ դրանք քննարկել փեխելվիականական բանավեճի հենքի վրա:

գ) Տեսական ղեկերն ինիզմը և քաղաքական արտեքսպլուզիայի միջև հակադրությունը

Լիբերալ մոդեռնիստ գիտնականները հավաստում էին, որ Իրանի հասարակության կառուցվածքի հիմքերը տնտեսության դաշտից դուրս են գտնվում: Ինչպես նշվել է, Իրանի մշակութային գոյությունն ակտիվ ու պրոպոզիտիվ հատկանիշների համբազմամար է, որ հարատեղել է առ այսօր: Սակայն, երբ քննարկման առարկա են դառնում հասարակական հակասությունները, այդ պրպոզիտ տրամաբանությունը տեղափոխվում է տնտեսական դաշտ: Թեև նախկինում այդ ակտիվությունն էությունը քաղաքական էր, սակայն հետագայում հասարակության համընդհանուր բնորոշման պահին կարևորվել է տնտեսությունը: Ավելի քարդ ու խորին ձեռով, այդօրինակ հակասությունների գիրկն են ընկել նաև մարքսիստ մտածողները: Նշվածն առավելապես համապատասխանում է Փուլանցասի տեսակետներին, քանզի նա եւ նրա կողմնակիցները ձգտել են համերաշխություն ստեղծել Մարքսի⁴⁹ երկու հակասական սկզբունքների՝ տնտեսական դետերմին-

⁴⁹ Deconstruct

գիզմի եւ դասակարգային պայքարի արդյունքում մարդկային պատմության զարգացման միջեւ: Թեեւ տնտեսական դետերմինիզմից հեռանալը ինչ-որ տեղ նշանակում է հակում դեպի քաղաքական խնդիրները, ինչը դրվատելի է, բայց եւ այնպես դասակարգային հակասություններն ու պատկանելիությունը մնում են խոչընդոտող հարց:

դ) Ինքնգրացիա-դեզինտեգրացիայի խնդիրը

Խնդրո առարկա երկու ուղղությունները հենվել են պատմության մեջ գլխավոր մի էություն վրա եւ ի գորտ շեն եղել ճիշտ դատողություններ անել ժամանակակից Իրանի մասին: Այդ ուղղությունների ամենաակնհայտ հարցերն են տնտեսական հարկադրանքը եւ ռեդուկցիոնիզմը հասարակության դասակարգերում: Խնդիրներ, որոնք պատճառ են դարձել, որպեսզի այդ գիտնականները չկարողանան իրենց վերլուծություններում, հաշվի առնելով Իրանի քաղաքական ոլորտի կառուցվածքը, արմատապես բարեփոխել եւ հավասարակշռել դրանք: Այն դեպքում, երբ, այնուամենայնիվ, ապացուցել են, որ Իրանի հասարակության եւ արեւմտյան քաղաքակրթության միջեւ առկա է ինտեգրացման մակարդակով կապ, սակայն, երբ խոսվում է դեզինտեգրացիայի մասին, նրանց աշխատանքները թերի են դառնում: Այդ հիմնարար խնդիրների լուծման նպատակով, ցանկացել են տեսական մի շարք հասկացություններ ու խնդիրներ ներկայացնել, որոնց աջակցությամբ հնարավոր կլինի խաբիվել այդ ուղղությունների նատուրալիստական եւ էկոնոմիստական վարկածների հիմքերը:

Ամփոփիչ

Ներկա հոդվածում ուսումնասիրության առարկա էին փեհլվիների իշխանության ժամանակաշրջանի վերաբերյալ լիբերալիստական եւ մարքսիստական ուղղությունների ներկայացրած վերլուծությունների թերությունները: Բժախնդրորեն հաշվի առնելով այդ ուղղությունների գլխավոր վարկածները, պարզվել է, որ նրանց լրջագույն խնդիրը տրամաբանական լուծումն է, ինչը հարցի առնչությամբ կիրառել են Իրանի հասարակության մեջ:

Հոդվածի հեղինակը, խորապես ուսումնասիրելով այդ տեսակետը, պարզվել է, թե ինչպիսի խնդիրներ են դրանում թաքնված եւ ինչ հակասությունների են հանգում, որոնց բվում ամենարդյոք ինտեգրացիա-դեզինտեգրացիայի խնդիրն է: Այդ երկու տեսություններում էլ պատմության շարունակականությունը եւ տնտեսական հարկադրանքը համարվում են այն կարևոր գործոնները, որոնց պատճառով Իրանի հասարակությունն ու արեւմտյան քաղաքակրթությունը հսկվում,

մրժննում են միմյանց եւ ընդդեմում համաշխարհային արժեքները: Սակայն 1979թ. երբ Իրանում տեղի ունեցավ Իսլամական հեղափոխությունը, այդ լավատեսական հայացքները խաբիվվեցին եւ ստեղծվեց խառնաշփոթ իրավիճակ, ինչի արդյունքում դեզինտեգրացիայի հարց առաջացավ եւ ի դերեւ ելան հաստատուն թվացող լուծումները:

Տեսական նշալ թերությունների վերացման նպատակով, այս հոդվածն ապացուցել է, որ եթե պետք է ինտեգրացիա-դեզինտեգրացիայի միջեւ կապը բացահայտվի, ապա նախ եւ առաջ անհրաժեշտ է, որ խնդրո առարկա տեսությունների հաստատուն տեսակետները հիմնովին վերանայվեն: Հիմնարար այդ վերանայումները կարող են հնարավոր դարձնել վերօբյեկտիվիստական եզրահանգումը, որը հիմնված է այրոց⁵⁰ ուսումնասիրության վրա ու նպատակահարմար տեսական պարզաբանումներ է տալիս իրանական ազգայնականության մասին լրնդհանրապես եւ 1979թ. Իսլամական հեղափոխությանը՝ մասնավորապես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bashirih Hossein, The States and Revolution in Iran, London: Groom Helm, 1984.
2. Binder Leonard, Political Development in Changing Society, Berkeley, University, of California, 1962.
3. Cottam Richard, Nationalism in Iran, Pittsbvgh: Pittsburg press, 1964.
4. Cottam Richard, Iran and The United States, Pittsburg: University of Pittsburgh press, 1988.
5. Deerida j., Grammatology, London: Johns Hopkins University Press, 1976.
6. Foucault, M. Archaeology of Knowledge, London: Tavistock, 1969.
7. Fred Halliday, Iran: Dictatorship and Development, Harmondsworth: Penguin Books Led, 1979.
8. Halliday Fred and Maxine Molyneux, The Ethiopian Revolution, London: Veso, 1981.
9. Fred Halliday, Islam and The Math of Confrontation, London: I.B. Taurus anc co. Ltd., 1985.
10. Pahlavi Mohammad Reza, Mission for May Country, Hutchinson and co. (Publishers) Ltd., 1960.
11. Pahlavi Mohammad Reza, The White Revolution, Tehran: Kayhan Press. 1967.

⁵⁰ Otherness, հնարավոր է, որ հեղինակն այս բառը կիրառել է «տիչներ» կամ «այլ» իմաստով: Տվյալ դեպքում ի նկատի ունի տարբեր տեսակետներով այլ աշխատանքների ուսումնասիրությունը: Իսկ եթե դա նկատի չի ունեցել, ապա «տարօրինակությունը» կարող են անհրաժեշտ բաներ լինել, որոնք անձանք են, ուստի դրանք ճանաչելու նպատակով անհրաժեշտ են այլ ուսումնասիրություններ:

12. Pahlavi Mohammad Reza, Address of The Shahanshah Aryamehr, Tehran: Sazeman-e - Barnameh, 1970.
13. Poulantzas Nicolas, State, Power, Socialism, London: NBL, 1978.
14. Poulantzas Nikolas, Social Classes in Contemporary Capitalism, London: NLB, 1975.
15. Էրրահին Ռազադի, «Ներագրված զարգացումը եւ շահի բնժան» հողվածը, Իսլամական հեղափոխության արձանները ժողովածու, Առաջնորդի հաստատության գրասենյակ, Գոմ, 1991թ.
16. Rostow W. W., The Stages of Economic Growth, London: Cambridge university Press, 1971.
17. Skocpol Teda, Social Revolutions in The Modern World, England: Cambridge university Press, 1994.
18. Skocpol Teda, «The Rentier State and Shisa Islam in The Iranian Revolution», Journal of Theory and Society, vol. 11, 1982.
19. Թաքարի Էսհան, Իրանի հասարակությունը Ռեզա շահի ժամանակ, Թեհրան, 1978թ.
20. Wolpe, Harold, Race, Class and The Apartheid State, Paris: Unesco, 1988.

«ՌԵՆՏԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Արդուդայում Շեքարի

Սույն ուսումնասիրությունը կատարվել է այն ժամանակ, երբ Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից անցել է ավելի քան քառորդ դար: Իսլամական հեղափոխության, նրա նախադրյալների, գործոնների ու հետևանքների լուսարանմանը վերաբերող ուսումնասիրությունները գտնվել են թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան քաղաքագետների ուշադրության կենտրոնում:

Հեղափոխության երևույթի պարզաբանմանը վերաբերող տեսություններից օգտվելով՝ բազմաթիվ տեսաբաններ փորձել են Իրանի իսլամական հեղափոխությունն ուսումնասիրելիս այն ասեմանափակել որոշակի շրջանակներում: Մինույն ժամանակ, Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը հիշյալ տեսությունների առանձին դրույթները վերանայելու և ճշգրտելու առիթ է հանդիսացել:

Տողերիս հեղինակը, հենց այդ համազանցից դրված, փորձում է Իրանի իսլամական հեղափոխությունը մեկնաբանել նոր մոտեցմամբ, որը կիրառվում է Միջին Արևելքի երկրներին նվիրված ուսումնասիրությունների ժամանակ: Ռենտային պետության տեսությունը գրեթե նոր տեսություն է, որը կիրառվում է այդ երկրներին նվիրված ուսումնասիրություններում և այդ տարածաշրջանի քաղաքատնտեսության մեջ իրատեսական ուղիներ գտնելու փորձ է: Հեղինակը փորձում է նաև Իսլամական հեղափոխության երևույթի լուսարանման շրջանակներում վերլուծել ու մեկնաբանել ռենտային պետության տեսության թերությունները:

Նախաբան

Գոյություն ունեն Միջին Արևելքին վերաբերող ուսումնասիրություններ կատարելու զանազան եղանակներ: Ինչպես նշել է դոկտոր Հաջի Յուսեֆին՝ այդ լուծումը կարելի է բաժանել երեք խմբի՝ հոգեբանական, քաղաքականության (նշակույթի և քաղաքատնտեսության):

Առաջին խումբ. Միջին Արևելքի երկրներով զբաղվող մասնագետները, հաշվի առնելով տարածաշրջանի հոգեբանական գործոնները, տեսություններ են մշակել տարածաշրջանի խնդիրների վերաբերյալ: Այլ կերպ ասած, տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և հասարակական զարգացումներին նրանք մոտենում են՝ նկատի ունենալով հոգեբանական զարգացումները: Մարվին Ջո-

միսն այն մասնագետներից է, ով «Արքայական պարտություն» աշխատությունում Իրանի համար ընտրել է հոգեբանական գործոնից օգտվելու եղանակը: Ըստ Մարվին Ջոնսի, Իրանի նման երկրում, որտեղ հասարակության համար պետական հաստատություններն այնքան էլ կարևոր նշանակություն չունենին, քաղաքական գործընթացի բուն էությունը ձևավորվում է հասարակության անդամների փոխադարձ ազդեցությունների շնորհիվ: Նման պետություններում հասարակության ընտրամու հոգեկան վիճակի ուսումնասիրության կարևորությունը կրկնապատկվում է քաղաքական-տնտեսական զարգացումների գործընթացում: Մարվին Ջոնսը «Արքայական պարտություն» աշխատությունում քննության առարկա է դարձրել Իրանի թագավորի հոգեկան առանձնահատկությունների և հիվանդության բացահայտման խնդիրները՝ նրա կողմից Իրանի իսլամական հեղափոխության վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում:

Երկրորդ խումբ. Ուսումնասիրությունների ժամանակ քաղաքականության մշակույթի գործոնը հաշվի առնելու դեպքում, Միջին Արևելքի երկրներում քաղաքական և տնտեսական զարգացումների էությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել պետությունների մշակութային առանձնահատկությունները, քաղաքական հակումն ու նրանց կառավարման եղանակները: Այդ կերպ ասած, քաղաքականությունը ճիշտ ընկալելու համար նրա մեջ պետք է ներթափանցել մշակույթի ճանապարհով: Այս սկզբունքով առաջնորդված՝ Իրանի զարգացումներին նվիրված ուսումնասիրություններից կարելի է հատկապես նշել Ռեզա Բեհնամի «Իրանում քաղաքական մշակույթի հիմնադրամներ» աշխատությունը, որտեղ հեղինակը փորձում է կապ հաստատել Իրանի հասարակության մեջ ձևավորված մշակութային յափանների և քաղաքական կարգերի տեսակի ու գործունեության միջև:

Երրորդ խումբ. Ուսումնասիրությունների ժամանակ քաղաքատնտեսության գործոնը հաշվի առնելու դեպքում կապ է հաստատվում պետության և տնտեսության միջև: Այս եղանակով կատարվող ուսումնասիրությունները, որոնք նվիրված են Միջին Արևելքի երկրների քաղաքատնտեսական իրավիճակը պարզաբանելուն, սկսվել են 20-րդ դարի 80-ական թվականներից: Զարին Չողարին «Միջին Արևելքն ու քաղաքատնտեսության զարգացումը» հոդվածում անդրադարձել է Միջին Արևելքի ուսումնասիրությունների ժամանակ քաղաքատնտեսության գործոնի կիրառման անհրաժեշտությանը: Նրա կարծիքով, Միջին Արևելքի վերաբերյալ ուսումնասիրությունների ժամանակ, լուծման այս եղանակով առաջնորդվելու դեպքում, կարող են պարզաբանվել տվյալ երկրում տիրող իրավիճակի նոր, լրացուցիչ խնդիրներ: Այս եղանակով առաջնորդվելով՝ համապատասխան ուսումնասիրություններում հանդիպում ենք «ոեմտա» (վարձավճար), «վարձակալական», «ոեմտային պետություն, «ոեմտային տնտեսություն և այլն...

քննաներին: Իսլամական հեղափոխությանը նվիրված ուսումնասիրություններում նույնպես կիրառվել է այս լուծումը: Ելնելով այդ հանգամանքից հատուկ քննարկման և ուսումնասիրության առարկա են դարձել նավթի դերը, նրա ազդեցությունը երկրի տնտեսության, պետության ու հասարակության, ինչպես նաև պետության ու հասարակության միջև ստեղծված կապերի վրա:

Մինչհեղափոխական Իրանի զարգացումների վերաբերյալ արված ուսումնասիրություններում նշյալ լուծումից օգտվել է, հատկապես, Հոնայուն Քարուզյանը, որն իր «Իրանի քաղաքական տնտեսությունը» աշխատության մեջ անդրադարձել է Իրանի քաղաքական, հասարակական և տնտեսական զարգացումների գործընթացում նավթի ունեցած դերին: Հոնայուն Քարուզյանն ընդգծում է նավթի, որպես կարևորագույն գործոնի, դերն ու ազդեցությունը, որ ունեցել է հասարակությունից իշխանությունների մեկուսանալու խնդրում:

Քարուզյանը նավթային տիրակալությունը և թերադրիականությունը համարում է Իրանի հեղափոխության հիմնական դրոպապատճառները:

Թեղա Սրաշփոը «Հարկահավաք պետություն և շիա իսլամն Իրանի իսլամական հեղափոխության մեջ» աշխատությունում «ոեմտային պետության խոցելիության հանգամանքը և դրան զուգահեռ մի շարք իրադարձությունների ատկայությունը, ինչպիսիք են՝ քաղաքային և տեղական համայնքների, պետական կառույցներից անկախ տեղական կազմակերպությունների ատկայությունը, նրանց սերտ կապը հասարակության տարբեր շերտերի, հատկապես՝ շուկայականների հետ, ինչպես նաև հասարակության մեջ արմատական գաղափարախոսության գոյությունը, անվանում է հեղափոխության առաջացման գործոններ»:

Իսկ Մասուդ Քարշենասը, իր «Պետությունը և Իրանի արդյունաբերականացումը» գրքում, անդրադարձ կատարելով Իրանի տնտեսության մեջ պետության ունեցած դերին, նշում է. «Իրանի պետությունը, նավթային խոշոր եկամուտներ ստանալու շնորհիվ, ազատվում է հարկեր հավաքելու անհրաժեշտությունից, ինչն էլ պետությանը կանգնեցրել է բազմաթիվ քաղաքական, տնտեսական և հասարակական խնդիրների առջև»:

Սույն հոդվածում փորձել ենք Իրանի իսլամական հեղափոխության էությունը վերլուծել՝ հաշվի առնելով հենց վերոհիշյալ տեսակետը: Դրա համար, նախ կներկայացնենք «ոեմտային պետության տեսության մեջ հեղափոխության ու պետության հետ հասարակության առձակատումների առաջացման վերաբերյալ առաջադրվող տեսակետները, ապա՝ դրանք կհամեմատենք Իսլամական հեղափոխության հետ: Սակայն, մինչ բուն քննարկմանն անցնելը, հարկ ենք համարում «ոեմտային պետության մասին ներկայացնել մի շարք առանցքային սահմանումներ:

Ինչ է ռենտան (վարձավճար)

«Ռենտան» տնտեսագիտական տերմին է, որը տնտեսագիտությունից անցել է քաղաքատնտեսության ոլորտ: Տնտեսագետները սովորաբար եկամուտները բաժանում են երկու խմբի. առաջին խմբի մեջ են դասվում այն եկամուտները, որոնք ստեղծվում են աշխատանքի շնորհիվ, իսկ երկրորդ խմբի եկամուտները ձեռք են բերվում առանց աշխատելու: Այս խմբի եկամուտներն էլ կոչվում են ռենտային եկամուտներ:

Նախկինում «ռենտա» հասկացությունը վերաբերում էր միայն հողի վարձակալության դիմաց ստացվող վճարումներին, սակայն հետագայում այն իր մեջ ընդգրկեց նաև տնտեսության այլ ոլորտներ: Դասական տնտեսագետներ Մալթուսն ու Մարքսը ջանքեր են գործադրել ռենտա և ռենտային հասկացությունները մեկնաբանելու համար: Որոշ տնտեսագետներ, քննադատելով ռենտային հասկացության էությունը, այն ոչ արտադրական և ինչ-որ չափով նաև ոչ հասարակական երևույթ են համարել: Ռիկարդոն նույնպես համոզված է, որ հանքերն ու ջրային ռեսուրսները նրանց տերերի համար ռենտայի աղբյուրներ են¹:

Սույն հողվածում ռենտա բառն օգտագործելիս, նկատի են առնվել այն եկամուտները, որ պետությունն ստանում է օտար երկրներից՝ սովյալ երկրի հումքի ու ստորգնեյա հարստության վաճառքից: Այս եկամուտները ոչ մի առնչություն չունեն արտադրության ոլորտի ու տնտեսության հետ և չեն վճարվում արտադրված ապրանքների դիմաց: Ուստի, մասն եկամուտները կարելի է դասել այնպիսի եկամուտների շարքին, որոնք ձեռք են բերվում «աստվածային բարիքների» արտահանման արդյունքում, ինչի վառ օրինակ են նավթի արտահանման դիմաց ստացվող եկամուտները:

Ռենտային պետությունը և նրա առանձնահատկությունները

Ջադաքատնտեսության եղանակով իրագործվող ուսումնասիրությունները, որոնց ընթացքում քննարկվում է ռենտա և ռենտային պետություն եղանակը, պայմանավորված են չորս կարևոր հանգամանքներով.

1. Պետության հարաբերական մասնակցությունը տնտեսությանը:
2. Պետության եկամուտների ու աղբյուրների կառուցվածքները:
3. Պետական ծախսերի նպատակը:
4. Մարդկանց կյանքի վրա ազդեցություն ունեցող կանոնների ու նորմերի մշակումը:

«Ռենտային պետություն» տերմինը մի հասկացություն է, որը Միջին Արևելքին վերաբերող ուսումնասիրությունների ժամանակ առավելագույնս նպաստում է քաղաքագիտությանը: Այս տերմինը կիրառվել է Միջին Արևելքի

արարական երկրների տնտեսական ցուցանիշները ներկայացնելիս, քանզի ավելի դիպուկ արտահայտություն չի եղել դրանք բնութագրելու համար:

Նշենք, որ ռենտային պետություն հասկացությունը բացատրելու համար տարբեր սահմանումներ են առաջարկվել: Սակայն, ամփոփելով, կարելի է նշել, որ ռենտային պետություն է կոչվում այն պետությունը, որի եկամուտների զգալի մասն ապահովվում է օտարերկրյա աղբյուրների շնորհիվ՝ ռենտայի ձևով²:

Թերևս ռենտային պետություն հասկացությունն ավելի ճշգրիտ և կատարյալ ներկայացված է Հազեմ Բերլավիի «Ռենտային պետություն» աշխատությունում, որտեղ նշված է, որ մնան պետություններ կանոնավոր ձևով զգալի գումարներ են ստանում օտարերկրյա վարձավճարների միջոցով³:

Այս կարգի պետությունների համար բնորոշ են հետևյալ չորս հատկանիշները.

1. Ռենտային պետությունը, հանդիսանալով վարձավճարի հիմնական ստացողը (տերը), քնակաճարաբ, նաև այդ գումարները ծախսելու և բաշխելու գործում ունի գլխավոր դերը:

2. Չկա մի տնտեսություն, որի եկամուտների մի մասը կազմված չլինի վարձավճարներից: Սակայն, ռենտային պետություն դառնալու համար անհրաժեշտ են վարձավճարների որոշակի չափանիշներ: «Ռենտային պետություն» աշխատությունում ռենտային պետություն դառնալու համար առաջարկվում է ռենտայի 42%-ից ավելի բարձր ցուցանիշ: Այսինքն՝ այն պետությունը, որի եկամուտների առնվազն 42%-ն ապահովվում է օտարերկրյա վարձավճարների հաշվին, կոչվում է ռենտային պետություն:

3. Ռենտային պետությունում հասարակության միայն մի մասն է ներգրավված այդ վարձավճարների ստեղծման գործում, իսկ քնակչության զգալի մասը մասնակցում է նույն վարձավճարից առաջացած եկամուտների սպառմանը և բաշխմանը:

4. Ռենտային պետության համար վարձավճարներն ապահովվում են օտարերկրյա աղբյուրների միջոցով: Այս կարգի պետություններում օտարերկրյա ներդրողը կարող է սովյալ երկրի տնտեսությունը պահպանել՝ առանց տեղական որևէ արտադրության ճյուղի կարիք գգալու⁴:

Այսպիսով, նազի արտադրող և արտահանող երկրների մեծամասնությանը կարելի է անվանել ռենտային պետություններ, որովհետև անմիջապես այդ վարձավճարները մուտք են գործում պետական գանձարան և դրանց բաժինը կազմում է պետության եկամուտների ընդհանուր գումարի 42%-ից ավելին:

Ջիադուն Լուչիանին «ռենտային պետություն» տերմինի փոխարեն գործածում է «հատկացումների պետություն» անվանումը և այդպիսին է համարում այն պետությունը, որի եկամուտների ավելի քան 40%-ն ապահովվում է օտարերկրյա

վարձավճարների միջոցով (ինչպիսիք են նավթի արտադրության դիմաց ստացած եկամուտները) և պետական ծախսերը մասնակցություն ունեն ներքին համախառն արտադրանքի մեջ¹²:

Ռենտային պետությունները, առանց երկրի բնակչությունից որևէ բան ստանալու, նրանց անվճար կամ ցածր գներով տրամադրում են համապատասխան ծառայություններ ու ապրանք: Կարևոր հանգամանք է, որ ռենտային պետությունները, բացի օտարերկրյա վարձավճարներից, ունենան նաև այլ աղբյուրներից ստացվող եկամուտներ, որոնք օտարերկրյա վարձավճարների համեմատ աննշան են:

Իրանը որպես ռենտային պետություն

Իրանում նավթահանքերի շահագործումից հետո, երկրի իշխանությունները, 1908թ. եկամուտներ էին ստանում նավթի արդյունահանումից և արտահանումից: Սակայն, ելնելով ռենտային պետության վերոհիշյալ չորս առանձնահատկություններից, մինչև 20-րդ դարի 50-ական թվականների սկիզբը Իրանի պետությանը չի կարելի այդպիսին համարել: Մոհամադ Ռեզաշահի իշխանության տարիներին, հատկապես՝ 1950-ականներին, երբ մի կողմից աճում էին նավթի համաշխարհային գները, մյուս կողմից՝ Իրանի նավթի արտահանման ծավալները, Իրանն իր պատմության մեջ առաջին անգամ ձեռք բերեց ռենտային պետություն կոչվելու բոլոր նախադրյալները:

Ինչպես արդեն նշվեց, ռենտային պետության չորս հատկանիշներից կարևորագույնն այն է, որ պետությունը հանդիսանում է վարձավճարների հիմնական տնօրինողը: Իրանում նավթի պաշարների հայտնաբերումից հետո, դրանք հանդիսացել են պետության սեփականությունը: Իրանն իր պատմության ընթացքում օտարերկրացիների հետ բազմաթիվ պայմանագրեր է կնքել՝ նավթի արդյունահանման և արտահանման մենաշնորհը նրանց տրամադրելու պայմանով և եղել է այդ մենաշնորհի դիմաց ստացվող եկամուտների հիմնական տնօրինողը: Այլ կերպ ասած, ձեռք բերվող բոլոր տեսակի եկամուտները փոխանցվում էին պետության գանձարան: Եվ, քանի որ, Փենդելիների երկրորդ բազալոր Մոհամադ Ռեզաշահի օրոք նավթից ստացվող եկամուտներն ուղղակիորեն փոխանցվում էին պետական գանձարան, ուրեմն, նրա պետությունը ռենտային պետություն էր:

Ռենտային պետության երկրորդ հատկանիշն այն է, որ օտարերկրյա վարձավճարների գումարը կազմում է պետության եկամուտների առնվազն 42%-ը: Ներկայացվող աղյուսակից պարզ երևում է, որ 1957թ. սկսած նավթի դիմաց ստացված եկամուտների բաժինը մշտապես կազմել է պետական եկամուտների ավելի քան 40%-ը:

1954-65թթ. Իրանի պետության եկամուտների աղյուսակ

%-ներով

Եկամուտների աղբյուրներ	1954	1955	1956	1957	1958	1959	1960	1961	1962	1963	1964	1965
Նավթի արտադրությանից ստացվող եկամուտներ	11	37	39	47	51	40	42	42	46	46	61	50
Սեփականության և մարդու ծախսերի եկամուտներ	27	23	19	18	16	22	22	19	16	18	15	17
Ուրբաթի հարկեր	5	5	4	5	7	8	8	8	8	8	7	9
Այլ հարկեր, այդ թվում՝ մեքենա եկամուտների հարկեր	35	28	28	26	24	24	25	26	30	28	18	24
Օտարերկրյա վարկեր	22	7	10	4	2	6	3	5	-	-	-	-

H.Mahdavy, Patterns and problems of Economic Development in Rentier State The case of Iran. Op.cit. p. 455:

Ռենտային պետության մեկ այլ առանձնահատկությունն էլ այն է, որ բնակչության չնչին մասն է մասնակցում երկրի առյուծի բաժին կազմող եկամուտների ստեղծմանը: Չնայած նավթի արդյունահանությունն Իրանում գերիշխող դեր ուներ երկրի տնտեսության մեջ, սակայն այդ արտադրության մեջ ներգրավվածների թիվը շատ փոքր էր: Նավթարդյունաբերության ոլորտի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն որպես հույս ուղղակի կամ անուղղակի ձևով մեծ աշխատատեղեր չի ստեղծում և դրա արդյունահանման, մշակման և արտահանման գործընթացում քիչ թվով մարդիկ են մասնակցում: 1341-56թթ. (1962-77թթ.) այս ոլորտում զբաղված աշխատողների թիվն այլ ոլորտների հետ համեմատելու համար առաջարկում ենք հետևյալ աղյուսակը:

1341-56թթ. Իրանի տնտեսության առանձին բնագավառներում զբաղված աշխատուժը

%-ներով

Ոլորտներ	1341	1346	1351	1356
Գյուղատնտեսություն	55,1	49	40,9	32,2
Էներգյունաբերություն	20,6	24,7	40,9	32,2
Ծառայություններ	23,8	25,7	52,9	34
Նավթ	5	6	6	6

Հոնայուն Քարուզան, Իրանի քաղաքատնտեսությունը, Մոհամադ Ռեզա Նաֆիսի և Քամրիզ Ազիզի բարգմանությամբ, Թեհրան, «Փափիրոս» հրատարակչություն, 1368, էջ 164:

Վերը բերված վիճակագրական տվյալներից երևում է, որ Իրանում, ինչպես բոլոր ռենտային պետություններում, քիչ բովո՞ւ մարդ է զբաղված հասարակության հիմնական հարստությունը կազմող նավթարդյունաբերության մեջ:

Ռենտային պետության չորրորդ առանձնահատկությունն այն է, որ վարձավճարներն ստացվում են արտասահմանյան երկրներից ու տվյալ երկրի տնտեսությանը չեն առնչվում: Նավթի արտահանումից ձեռք բերած Իրանի եկամուտներն էլ այնպիսի եկամուտներ են համարվել, որ ոչ մի առնչություն չեն ունենել երկրի տնտեսության որևէ ոլորտի գործունեության հետ: Այդ եկամուտներն ապահովվել են օտարերկրյա վարձավճարների հաշվին:

Ամփոփելով շարադրածը՝ կարելի է նշել, որ Իրանն ունի ռենտային պետության հատկանիշներ: Սակայն մեր հիմնական խնդիրն է պարզաբանել, քե՞ս ո՞րն է կապը ռենտային պետության տեսության և հեղափոխության միջև:

Ռենտային պետությունն ու հեղափոխությունը

Ռենտային պետության տեսության հիմնական վարկածներից մեկն այն է, որ վարձակալության պայմաններում հասարակական խմբերը չեն ըմբոստանում պետության դեմ: Այս տեսության նշված հատկությունն ապացուցելու և հիմնավորելու համար առանձին փաստարկումներ են առաջարկվում, որոնք, ընդհանուր առմամբ, պատվում են հասարակությունից պետության տարանջատման առանցքի շուրջը:

Ռենտային պետությունը, ելնելով այն հանգամանքից, որ մեծ գումարներ է ստանում օտարերկրյա աղբյուրներից, ներքին եկամուտներից օգտվելու կարիք չի գգում: Քանի որ այս կարգի պետություններն իրենց կարիքները հոգալու համար հասարակության խմբերի աջակցության անհրաժեշտություն չեն ունենում, ապա հասարակության այդ խմբերն էլ պետությունից ակնկալիքներ ունենալ չեն կարող: Նման պայմաններում հասարակության խմբերը պետք է միայն սպասեն պետության կողմից իրենց տրվող զանազան արտոնությունների, այլ ոչ թե պետությանը ներկայացնեն ինչ-որ պահանջներ: Նույնիսկ, եթե առանձին ռենտային պետություններ իրենց թույլ են տալիս որոշ չափով բավարարել հասարակության այդ խմբերի պահանջները, ապա երևույթը ոչ մի հավաստություն չունի ռենտային պետության գործունեության սկզբունքների հետ: Ռենտային պետության տեսության դյուրթեքի համաձայն, կարելի է նշել, որ հետևյալ երեք հան-

գամանքների առկայության պայմաններում հասարակությունը չի հակադրվում պետությանը:

1. Հասարակության բարեկեցության ապահովումը

Ռենտային պետությունը վարձավճարներից ստացած եկամուտներից զգալի գումարներ է հատկացնում հասարակության բարեկեցությունն ապահովելու համար: Այդ գումարների հաշվին պետությունը հասարակությանը հանապատասխան սպասարկման ծառայություններ է մատուցում և երկրի ներմուծում անհրաժեշտ ապրանքներ: Նման իրավիճակի ենք համոզվում Պարսից ծոցի նոր բնակեցված երկրներում: Պետության այսպիսի նախաձեռնությունները վերացնում են հասարակության մեջ առաջացած դժգոհությունները, որոնք հիմնականում ծագում են տնտեսական վիճակից: Ավելին, պետության նման վերաբերմունքը բարձրացնում է նրա հեղինակությունը, և հասարակությունն այնևս դժգոհելու ու բողոքելու անհրաժեշտությունը չի ունենում:

2. Պետությունից անկախ հասարակական խմբերի բացակայությունը կամ դրանց թույլ լինելը

Վարձակալության պայմաններում պետությունը հանդիսանում է վարձավճարներն ստացող կողմը: Նման պայմաններում հասարակական խմբերը գտնվում են պետությունից կախվածության մեջ¹⁾: Ռենտային պետությունը տարբեր ծախսեր է կատարում վարձավճարներից ստացած եկամուտներով: Հասարակության տարբեր խմբերին ու շերտերին տալով առանձին արտոնություններ՝ ռենտային պետությունը վերջիններիս պահում է իրենից կախյալ վիճակում: Հասարակության այս խմբերն ու շերտերը չեն հակադրվում պետությանը: Լուչիանին այս կապակցությամբ նշում է. «Նման պայմաններում երկրի քաղաքացիների հավատարմությունը պետությանը նրանց ամենատարանարանական քայլն է²⁾»:

3. Բնակչությունից հարկեր չգանձելը

Այս խնդիրը սերտորեն կապված է հասարակությունից պետության ֆինանսատեսանկախ լինելուց: Հիմնվելով ժողովրդի հարկ չվճարելու հարցում իր չեզոքության վրա, վերացնում է նրա հետ ընկերակցության նախադրյալներն ու պահանջները³⁾: Այլ կերպ ասած, ռենտային պետությունը հասարակությանն ազատելով հարկեր վճարելուց, մերժում է ժողովրդավարությունը և արտերկրից ստացվող վարձավճարների տնօրինման գործում հասարակության մասնակցությունը:

«Ռենդային պետությունը» և Իրանի իսլամական հեղափոխությունը

Հակառակ Փեհլեվիների ռենտային պետության ջանքերին ու երկրում կայունություն պահպանելու և շահնշահական վարչակարգի դիրքերի ամրապնդման համար ձեռնարկված քայլերին՝ Իսլամական հեղափոխությունը ռենտային պետության տեսության մեջ մի շարք կասկածներ առաջացրեց: Այն հարցականի տակ դրեց և հակասեց ռենտային պետության տեսության այն վարկածին, թե իբր պետությունը արտերկրի վարձավճարներից ստացած եկամուտներով վերածվում է ռենտային պետության և տեղի չեն ունենում հասարակության բախումներ ու հեղափոխություններ: Իսլամական հեղափոխությունն ուսումնասիրելու արդյունքում, տողերիս հեղինակը համոզվել է, որ ռենտային պետության տեսության անգործությունն արտահայտվում է այդ տեսության մեջ տեղ գտած կարևոր հետևյալ երկու վարկածներում.

ա. Իբր, եբբ ռենտային պետությունը հասարակությունից մեկուսացված է լինում, պետության և հասարակության միջև առճակատումներ չեն առաջանում:

բ. Քանի որ պետությունն է հանդիսանում արտերկրի վարձավճարներից ստացվող եկամուտների տնօրինողը, ապա հասարակական խավերի ու խմբերի հիմնական մասը գտնվում է պետությունից կախվածության մեջ և կորցնում է նրան հակադրվելու հնարավորությունները:

Իսլամական հեղափոխության վերլուծության հիման վրա ստորև ներկայացվում են այդ վարկածում առկա թերությունները:

1. Փեհլեվիի ռենդային անկախ կառավարությունը

Հետազոտողների մեծամասնությունը, ովքեր ռենտային պետության ուսումնասիրություններում օգտվել են քաղաքատնտեսական եղանակից, անդրադարձել են հասարակությունից ռենտային պետության անկախ լինելու հարցին: Այդ խմբի հետազոտողներից անհրաժեշտ է հիշատակել՝ Հոնայուն Քարուվյանին, Ֆիլիպ Ռավբերեզին, Համզե Բեբլավիին, Հոսեյն Մահդավիին, Աֆսանե Նաջմարայիին, Ջիարոմո Լուչիանիին և Ամիր Հաջի Յուսեֆիին: Տեղին է նշել, որ հասարակությունից պետության մեկուսացված լինելու խնդրի բննարկումը երևի թե ռենտային պետությանը վերաբերող ամենակարևոր խնդիրներից մեկն է: Մոհամմադ Ռեզաշահի ռենտային պետությունն էլ նաևրի արտահանումից ստացվող եկամուտների զգալի մասը հատկացնում էր հասարակության անդամների համար անհրաժեշտ ապրանքներ գնելուն և համապատասխան ծառայություններ մատուցելուն, ինչի արդյունքում հաջողվում էր վերացնել հասարակության դժգոհությունները¹⁶:

«Թեղա Սքաչիդը, հետևելովիսլամական Իրանի վիճակն ուսումնասիրելիս, համոզված է եղել, որ Փեհլեվիի ռենտային պետության կառավարությունները, հետևյալ կերպ հանգամանքներից ելնելով, առնչվել են հասարակության հետ՝ չհակադրվելով նրան.

1. Պետության ծախսերն ապահովվելու համար Մոհամմադ Ռեզաշահի կառավարությունը ներքին հարկերից օգտվելու անհրաժեշտություն չի ունեցել:

2. Պետությունը հանդիսացել է ճակրի արտահանման օտարերկրյա վարձավճարներից առաջացած մեծածավալ եկամուտների հիմնական տնօրինողը¹⁷:

Նաևրային եկամուտների ծավալների աճը 20-րդ դարի 60-70-ական թվականներին ոչ միայն հզորացրեց Մոհամմադ Ռեզաշահի դիկտատուրան ու նրա մասնակցությունը երկրի տնտեսության մեջ, այլև այդ հանգամանքից օգտվելով, հսկողություն սահմանեց հասարակության մեջ ընդգրկված առանձին խմբերի գործունեության վրա, ինչի հետևանքով էլ մեծացրեց հասարակությունից մեկուսացված իր գործունեությունների շրջանակները: Այդ մեկուսացման շնորհիվ էլ աճեց հասարակության ներքին ճնշումների համոզել կառավարության անպատասխանատվությունը, իսկ վարվող քաղաքականությունն ավելի վեր դասվեց հասարակական շահերից: Ի վերջո, նման քաղաքականության ստատկացումը մեծացրեց պետության և հասարակության միջև եղած ճեղքվածքը: Նախահեղափոխական Իրանում մի կողմում կարգված էր մի կառավարություն, որը զանկատում էր նավթային եկամուտներից օգտվելով արևմտյան մոդելներով արագ տեմպերով փոխել Իրանի հասարակությանը, իսկ մյուս կողմում՝ հասարակություն, որն իր հիմնական նպատակն էր համարում պահպանել մշակութային և կրոնական արժեքները:

Փեհլեվիների վարչակարգն իր պատմության ընթացքում ազգայինն ու ավանդական սովորույթներն ու մշակույթն արժեզրկելու համար փորձել է դիմել տարբեր միջոցների: Հասարակությունից պետության տարանջատված լինելու հանգամանքը և ֆինանսական անկախությունը պատճառ էին հանդիսանում նրա և հասարակության միջև առաջացած անջրպետի խորացմանը: Մոհամմադ Ռեզաշահը, չունենալով հստակ ծրագիր, որը համապատասխաներ հասարակության շահերին և կարողանար փոխարինել հինին, փորձում էր ամոտեսել նաև հոգևոր արժեքները: Այս բոլորը պատճառ հանդիսացան, որ պետությունը կատարյալ հակասության մեջ գտնվի հասարակության հետ: Հետևաբար, հասարակության համար հիմնական դրոպապատճառը հեղափոխական շարժումն ու նրա գաղափարախոսության պաշտպանության հարցում մշակութային, հոգևոր և հոգեբանական խնդիրներն էին, քան քաղաքական-տնտեսական հարցերը: Քննելով Բեբլերը և Պիեռ Ռյանշեն իրենց «Իրան-հեղափոխություն հանուն Աստծո» աշխատությունում անդրադարձ են կատարել մշակութային գործունիք, որը մեծ դեր է խաղացել զանգվածների հավաքագրման հարցում¹⁸: Ստորև ներկայացվում են

այդ ընթացքում Մոհամմադ Ռեզաշահի ձեռնարկած ամենակարևոր միջոցառումները, որոնք նպաստեցին պետության և հասարակության միջև անջրպետի առաջացմանը.

- ա. հին իրանական մշակույթի չափազանցված քարոզչությունը և իսլամական մշակույթին քիչ ուշադրություն դարձնելը,
- բ. հասարակության կողմից ընդունված հավատալիքների և սկզբունքների նկատմամբ ցուցաբերած ռոտնձգությունները,
- գ. աղմկալի, ճոխ ու շրեղ տոնակատարությունների կազմակերպումը:

Անդրադառնալով 1950-1960-ական թվականների վերը նշած միջոցառումներին, կարելի է եզրակացնել, որ Մոհամմադ Ռեզաշահի պետությունը ֆինանսապես զգուս էր հասարակության կարիքն ու ազգային արժեքների նկատմամբ ոչ մի բացասական վերաբերմունք չէր ցուցաբերում, նույնիսկ իրեն ներկայացնում էր որպես այդ արժեքների պահապան: Սակայն, նավթային եկամուտների աճի և օրեցօր հասարակությունից մեկուսացման արդյունքում, պետությունը ձեռնարկեց և իրագործեց ինչպես հակակրոնական, այնպես էլ հակաազգային քաղաքականություն և ծրագիր: Հենց այս բոլորն էլ խթանեցին շահնշահական վարչակարգի քայքայումն ու Իսլամական հեղափոխության նախադրյալների ստեղծումը:

2. Փնկելիների պետությունը և անկախ խմբերը

Իսլամական հեղափոխությունը և նրանում հոգևորականների ու շուկայականների վճռորոշ դերը հարցականի տակ դրեցին ռեժիմային պետության տեսության այն վարկածները, ըստ որոնց, եթե պետությունը հասարակության տաղերը չհրտելիքն ու խավերին տալիս է բարձր արտոնություններ և նրանց պահում իրենց կախված վիճակում, ապա հասարակության այդ խմբերը դուրս չեն գալիս պետության դեմ:

Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը, նրանում պետությունից ֆինանսապես անկախ շուկայականների և հոգևորականների ունեցած դերը հնարավորություն են տալիս առաջ քաշել հետևյալ վարկածները.

- ա. ռեժիմային պետության պայմաններում նույնպես կարող են ձևավորվել պետությունից անկախ խմբավորումներ,
- բ. այդ խմբերը կարող են պետությանը հակադրվել՝ ելնելով ոչ միայն տնտեսական, այլ ուրիշ պահանջներից:

Այժմ համառոտ ամրադարձ կատարենք Իրանի իսլամական հեղափոխության մեջ հոգևորականների ու շուկայականների ունեցած դերին և Մոհամմադ Ռեզաշահի պետությունից նրանց ֆինանսապես անկախ լինելու խնդիրներին:

1. Տոգևորականները և նրանց դերը Իսլամական հեղափոխության մեջ

Սեֆյաններից հետո, Իրանում հոգևորականները համարվում են երկրի զարգացումներում հասարակական ազդեցիկ կարևոր խմբերից մեկը: Այդ ժամանակներից սկսած, եթե պետությունը կարողանում էր միջամտել խոշոր կալվածատերերի, առևտրականների և բյուրոկրատական խավի իրավունքներին ու արտոնություններին, ապա նույնը չէր կարողանում անել հոգևորականության և կրոնագետների նկատմամբ: Իսլամական հեղափոխության ընթացքում հոգևորականները շատ մեծ դերակատարություն ունեցան: Նրանց դերը հատկապես զգալի դարձավ այսբոլա Բորուջերդիի մահվան և Իմամ Խոմենիում ի հայտ գալու կապակցությամբ: Ընդհանուր առմամբ, հոգևորականների խավը Իրանի պատմության մեջ, մի շարք համգամարների բերումով, այդ թվում՝ պետական մարմիններից անկախ լինելու, ժողովրդակառություն վայելելու, բռնապետական մարմիններից ապահով վայրերում կամ սրբավայրերում ապաստանելու, տնտեսապես իշխող վարչակարգից կախված չլինելու շնորհիվ, իրենից մեծ ուժ է ներկայացրել: Հասարակության այս խավը, ֆինանսական անկախության շնորհիվ, կախվածության մեջ չի գտնվել նաև շահնշահական վարչակարգի կատույցներից: Առանձին գործոցների անկայությունը, այդ թվում՝ կալվածքներից ստացվող եկամուտների հաշվին կրոնական ընծայաբերությունները, հասարակական եկամուտների 1/5-րդ մասը որպես կրոնական նվիրատվություններ կատարելը, շունտր մահմեդականների օգտին տրվող հարկերը, «Իմամի բաժին» անունը կրող ընծայաբերությունները, Բարձրալի գոհունակության համար նախատեսված նվիրատվությունները և դրամական զանազան օգնությունները, խրանել են երկրում հոգևորականության դիրքի ամրապնդմանը: Այդ ընթացքում էլ պետության կողմից իրագործված քայլերը, այդ թվում՝ հոգևոր գիտնականների սպանությունների կազմակերպումը, նրանց ձերբակալությունները, հոգևորականության տնօրինության տակ գտնվող կրոնական ընծայաբերություններ կազմակերպող կառույցների գործունեությունը պետական համակարգին ենթարկելը, հոգևորականներին վարկաբեկելը և կրոնական առանձին կենտրոնների փակումը պատճառ դարձան հոգևորականների և պետության միջև, առաջացած թշնամանքի խորացմանը:

2. Շուկան և նրա դերը Իսլամական հեղափոխության մեջ

Իրանի նորագույն պատմության զարգացումներում շուկան և շուկայականները հոգևորականության մտան կարևոր դերակատարություն են ունեցել: 'Աջաբների իշխանության օրոք շուկան ու շուկայականները կազմել են քաղաքի հասարակական կառույցների ողնաշարը և հանդիսացել դրանց տնտեսական

ու սոցիալական կյանքի հիմքը: Գեոևս այն ժամանակներում գլխավոր մզկիթը, որը քաղաքի հոգևոր կենտրոններից է համարվել, շուկայի հետ հասարակական և կառուցվածքային սերտ կապերի մեջ է եղել: Շուկայի, մզկիթի և հոգևոր կենտրոնների միջև ստեղծված այսպիսի սերտ հարաբերությունները պատճառ են հանդիսացել, որ երկրի հասարակության լայն շրջանակներում շուկան ուժ և ազդեցություն ձեռք բերի: Շուկայականները ժամանակակից Իրանի պատմության բոլոր զարգացումներում՝ ծխախոտի արտադրության արգելումից մինչև նավթի արտադրության ազգայնացման գործընթացը, ունեցել են անհերքելի դերակատարություն: Սակայն, շուկայականները, հակառակ բազավորական իշխանության անսահման ֆինանսական կարողություններին և այդ իշխանության նավթային հսկայական եկամուտները սնօրհիելու հնարավորություններին, նախահեղափոխական տարիներին կարողացել էին Մոհամմադ Ռեզաշահի ռեժիմի պետության պայմաններում պահպանել իրենց անկախությունը:

Ըստ Երվանդ Աբրահամյանի, նախահեղափոխական տարիներին Իրանի շուկայի անկախության պահպանման հիմնական պատճառներ են հանդիսացել հետևյալ հանգամանքները.

1. շուկան իր ձեռքում է պահել մանրածախ առևտրի ավելի քան 2/3 մասը:
2. Շուկայականները, ի տարբերություն հասարակության արդիականացված այլ խավերի, կարողացել են պահպանել իրենց արմատիքներական կառույցների մի մասը:
3. Շուկայականները, իրենց ենթակա բանվորների ու աշխատակիցների վրա ունեցած ազդեցությունից ու իշխանությունից բացի, ազդեցիկ դեր են ունեցել նաև հազարավոր փերեզակների, միջոտողների և փոքր մանրավաճառների շրջանակներում:
4. Ավանդույթի համաձայն, շուկայականները կրոնական կազմակերպությունների հետ գտնվել են սոցիալական, ֆինանսական, քաղաքական, պատմական ու գաղափարական կապերի մեջ, ինչի շնորհիվ կրոնական հաստատությունները պաշտպանել են շուկայականներին¹⁶:

Շուկայականները, որոնց մեծամասնությունն ընդունում էր կրոնական ավանդույթներն ու ժողովրդական հավատալիքները, տարբեր հանգամանքներից ելնելով, հասարակության այլ խավերի հետ միասին, ակտիվորեն մասնակցել են հեղափոխական շարժմանը: Իսլամական հեղափոխությանը շուկայականների ամենակարևոր մասնակցությունը հանդիսացել է նրանց ցուցաբերած իրական-փորձությունը հեղափոխականներին, ցուցաբերողներին ու երթերի մասնակիցներին: Փետարանը համոզված է, որ հեղափոխության ազդեցիկ ուժ ներկայացնող հեղափոխականների կարիքների 80%-ն ապահովում էին շուկայականները¹⁷:

Ըստ այդմ էլ, շուկան մինչև հեղափոխության հաղթանակը, ռեժիմային

պետությունից ոչ միայն ֆինանսապես անկախ վիճակում է գտնվել, այլ դժգոհ է եղել Մոհամմադ Ռեզաշահ բազավորի վարչակարգից, նրանում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումներից: Ավելին, Մոհամմադ Ռեզաշահ բազավորի կառավարության կողմից իրագործվող քաղաքականությունն ու ծրագրերը չէին համապատասխանում շուկայականների շահերին, նրանց կողմից ընդունվելի հոգևոր արժեքներին, ինչի պատճառով էլ նրանք հակադրվեցին պետությանը:

Եզրակացություն

Իրանի իսլամական հեղափոխության ուսումնասիրությունները և տարբեր տեսություններից ու տեսակետներից օգտվելը հնարավորություն են տալիս կատարել դրան վերաբերող մի շարք եզրակացություններ: Սույն հոդվածում քննության են առնվել հեղափոխությանը վերաբերող ռեժիմային պետության տեսությունը, պետության ու հասարակության միջև ծագող մարտահրավերները և դրանց պատճառները: Ըստ ռեժիմային պետության տեսության, այդ կարգի պետություններում, մի շարք հանգամանքներ բացառում են հասարակական մարտահրավերներն ու հեղափոխությունները: Այդ հանգամանքների րվին են պատկանում՝

- ա) հասարակությունից պետության տարանջատումը,
- բ) ինքնուրույն, պետությունից անկախ խմբերի բացակայությունը,
- գ) հասարակության բարեկեցությունը:

Ռեժիմային պետությունում հեղափոխության առաջացումը հարցականի տակ է դրել ռեժիմային պետության տեսության մի շարք վարկածներ: Սույն հոդվածում քննարկվել են ռեժիմային պետության տեսության հետևյալ երկու կարևոր վարկածները.

1. Առնակատումներից զերծ մնալու նպատակով պետության ֆինանսական անկախությունը հասարակությունից:
2. Ռեժիմային պետության պայմաններում պետությունից անկախ խմբերի բացակայությունը:

Վերոհիշյալ երկու կարևոր վարկածից ելնելով՝ արձանագրում ենք հետևյալ եզրակացությունները.

1. Որևէ պետության՝ հասարակությունից ֆինանսապես անկախ լինելը չի կարող այդ պետությանը հեռու պահել հասարակական մարտահրավերներից, այլ՝ հասարակությունից պետության մեկուսացման ստվերի ներքո՝ նրանց միջև առաջացած ճեղքվածքը կարող է մեծանալ և նման պայմաններում

- հնարավոր է, որ պետության վարած քաղաքականությունը հակաի հասարակության կողմից ընդունելի հոգևոր արժեքներին ու նրանց շահերին:
2. Հակառակ ռենտային պետության տեսությանը, երբ պետության տնօրինության տակ են գտնվում օտարերկրյա հաստատուն վարձավճարներից առաջացած եկամուտները, և պետությունը մեկուսանում է հասարակությունից, ապա հնարավոր է, որ հասարակության հին արժատներ ու ավանդույթներ ունեցող առանձին խավեր կարողանան պահպանել իրենց անկախությունը: Պետությունից կախվածության մեջ չգտնվող հասարակության այդ խմբերը, պետության կողմից իրականացվող քաղաքականությունն իրենց շահերին ու ընդունելի հոգևոր արժեքներին չհամապատասխանելու դեպքում, կարող են մարտահրավերներ նետել պետությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յուսեֆ Ամիր Մոհամադ Հաջի, Միջին Արևելքի տարածաշրջանի ուսումնասիրությունը տեսական հիմունքների շրջանակներում, «Ֆավարե միան» պարբերական, 5-րդ տարի, հ. 1, գաբուն, 1377:
2. Ջոնիս Մարվին, Արքայական պարտություն, Արբաս Մոխրերի թարգմանությամբ, «Նաշրե ֆո» հրատարակչություն, Թեհրան, 1370:
3. Behnam R., Cultur Foundations of Iranian Politics, Salt Lake City, University of Uta press, 1986.
4. K.Chaudry, The Middle East and Political Economic of Development, Middle East report, juan and september, 1997.
5. Քարոզյան Հռոմայուն, Իրանի քաղաքատնտեսությունը, Մոհամադ Ռեզա Նաֆիսիի և Քամբիզ Ազիզի թարգմանությամբ, «Փափիրոս» հրատարակչություն, 1368:
6. Teda Skocpol, Rentier stste and shin in the Iranian Revoition, Thee or yad society, vol. 11, may 1982, pp. 256-283.
7. M.C. Majd, Oil stace and Industerilization in Iran, Book Reviw, 181 (7), 1992.
8. Յուսեֆ Ամիր Մոհամադ Հաջի, Ռենտա, «Ռենտային պետություն» և «Ռենտայիզմ», «Էրեզաարե սիասի, Երեթադի» համդես, հ. 6-125, 1376, էջ 153:
9. Նոն տեդում, էջ 153:
10. Beblavi H., Iuciani G., The Rentier state, London, Croon Iecim, 1987.
11. Beblavi H., Iuciani G., The Rentier state, p. 51.
12. Iuciani G., All ocation v.s. production states, and Beblavi H., Iuciani G., Lesl, The Rentier state, op. cit, A. O.
13. Շամրիանի, Ռենտային պետության դեմ, Արդողայում Շերալիի թարգմանությամբ, «15-ը Խորդադի» ամսագիր, հ. 28, 1376, էջ 238:

14. Iuciani G., All ocation v.s. production states, op. cit, A. O.
15. No Representation Without taxasion.
16. Teda Skocpol, Rentier stste and shin in the IranianRevoition, op. cit. p. 269.
17. Ախրասիարի Բահրամ, Իրանն ու պատմությունը, «Ջառոին» հրատարակչություն, 1364, էջ 247-248:
18. Թերթեր Գեթր, Բլանշե Պիլո, Իրան-հեղափոխություն հանուն Աստու, Ղասեմ Սարնավիի թարգմանությամբ, «Մաջջար քերաթ» հրատարակչություն, Թեհրան, 1358:
19. Abrahamian Ervad, The structural causes of the Iranian Revolution, Middle East Research and Information project Reports, N. 87, may, 1980, p. 24.
20. Pesaran, M. H., Economic Development and Revolution in upsheavais in Haleh Afsane (edi, Iran:/A) revolution en turmoil (London: Macmilan press, 1989), p. A.3.

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ

Գուրգ. Ալի Աղաբ Ղասաևի Միսևի , Սեյդ Մուսթաֆա Ահմադի*

Արևմուտքի հետ իրանցիների շփումների ընթացքում, երբ նրանք ականա-
տես եղան Արևմուտքի ակնառու ձեռքբերումներին ու առաջադիմություններին,
հատկապես տնտեսական բնագավառում, ժողովրդի և իշխող վերնախավի մոտ
մեծ ցանկություն առաջացավ շուտափույթ կերպով հասնել երկրի բարգավաճ-
մանն ու առաջադիմությանը, ինչն էլ որոշիչ դեր խաղաց Իրանի բաղաբական-
հասարակական տեղաշարժերի էության և կողմնորոշման հարցում: Հարյուրամ-
յա այս ժամանակահատվածում, չնայած երկրի բնական և աշխարհաքաղաքա-
կան նպաստավոր դիրքին, որը նավթի հայտնաբերմամբ ու արդյունահանու-
թյամբ առավել նպաստավոր դարձավ, ցավոր, տակավին չի իրագործվել պատ-
մական այդ ցանկությունը և համակողմանի ու կայուն բարգավաճման բարիքնե-
րից օգտվելը ժողովրդի համար մնացել է երազանք: Երբ Նասերդոզին շահի բռ-
նապետության կրուկների տակ ի դերն ելան բարեփոխիչներ Մյրզա Թադի
խան Ամիր Բաբերի, Մյրզա Հոսեյն խան Սեփահալարի և Մյրզա Ալի Աղաբ
խան Ամիր օլ Գոլի ջանքերը, սկսվեց ժողովրդական մի շարժում, որի նպատակն
էր փոխել քաղաքական կառուցվածքը, վերացնել զարգացման գործընթացի խո-
չընդրոտները սահմանադրական շարժման շրջանակներում: Սակայն այս շար-
ժումը ևս, հատկապես մշակութային և հանրային գիտակցության բարձրացման
ոլորտներում ձեռք բերած որոշ հաջողություններին, ժամանակի բռնապետու-
թյան ջանքերի և օտարերկրյա միջամտությունների պատճառով չկարողացավ
հեռուն գնալ և նրա ավերակների վրա հիմնվեց Ռեզա շահի միապետական իշ-
խանությունը: Ռեզա շահի կիսամոդեռնիստական ծրագրերը, թեև երկրին ընձե-
ռեցին արդիական մի շարք առարկայական ձեռքբերումներ, ինչպես օրինակ՝ եր-
կաթգիծը, սակայն նախաձեռնած զարգացման մոդելի խախտոտ հիմունքները,
բարգավաճման ու բռնապետության իրեն անհամատեղելիությունը և նորից
օտարերկրացիների միջամտությունները հանգեցրին նրան, որ դաշնակից պե-
տությունների կողմից Ռեզա շահի Յոհաննեսարուզ արտոլվելուց հետո, նրանից
ժառանգություն մնա ոչ թե զարգացած և տնտեսական բարեկեցությամբ, անվ-
տանգությամբ ու խաղաղությամբ օժտված, այլ խառնաշփոթ ու կազմալուծված
մի հասարակություն: 40-ական թվականներին նավթարդյունաբերության ազգայ-

նացման համար դոկտ. Մոսադեղի կառավարության ջանքերը նպաստավոր հող
նախապատրաստեցին ազգային այս հարստությունից օտար տերությունների
ձեռք կարճելու և երկրի զարգացման ու բարգավաճման հիմքերը դնելու համար:
Սակայն, 1953թ. օգոստոսի 19-ին Մեհամադ Ռեզա շահի բռնապետական իշ-
խանության, Անգլիայի և ԱՄՆ գաղութատիրական կառավարությունների համա-
գործակցությամբ կազմակերպված զինվորական հեղաշրջման միջոցով այս
ջանքերը ձախողվեցին: 50-ականների ավարտին, այն պայմաններում, երբ բա-
ղաբական և տնտեսական տարբեր կառույցներում տարածված կոռուպցիան եր-
կիրը հասցրել էր քայքայման ու կազմալուծման եզրին, շահն ամերիկացիների
հորդորով, կամ ավելի ճիշտ ճնշմամբ, նախաձեռնեց բարեփոխումների մի հա-
մավոր ծրագիր, որն անվանեց «սպիտակ հեղափոխություն» կամ «Շահի ու ժո-
ղովրդի հեղափոխություն»՝ փորձելով այդպիսով փրկել իր թագն ու գահը և Իրանը
վերածել համաշխարհային գերտերության: 60-ականների կեսերից շահի ձեռ-
նարկած զարգացման ու բարգավաճման ծրագրերը, հենվելով 70-ականների
նավթից ստացվող հսկայական եկամուտների վրա, ոչ միայն վարչակարգը չփ-
կեցին կործանումից, այլև ժողովրդական զանգվածներին իր դեմ համախմբվելու
առիթ տալով, էլ ավելի մեծացրին վարչակազմի անկման հավանականությունը:
Այս տեսանկյունից՝ Իսլամական հեղափոխությունը շահի ծրագրերից հիաս-
թավիված ժողովրդի կայուն զարգացման ու բարգավաճման հարաճուճ ցանկու-
թյունների արձագանքն էր: Իսլամական հեղափոխության առաջնային կարգա-
խոսներում ազատություն և անկախություն բառերի առկայությունն ինչ-որ իմաս-
տով ակնարկում էր երկրի բարգավաճմանն ու առաջադիմությանը խանգարող
ներքին ու արտաքին հանգամանքները (բռնապետությունը և գաղութատիրու-
թյունը): Հեղափոխության հաղթանակին հաջորդած տարիներին, երբ ստեղծվել
լին կայուն բարգավաճման ու զարգացման համեմատաբար նպաստավոր պայ-
մաններ՝ բնական ռեսուրսների օգտագործումն ու զարգացած տեխնոլոգիաները,
վերացվել էին բարգավաճման խոչընդոտները՝ բռնապետությունն ու գաղութա-
ախրությունը և հաստատվել ազատություն ու անկախություն, այս ամենով հան-
դերձ, այլևայլ գործոններ, ձեռք ձեռքի տված, թույլ չտվեցին ըստ արժանվույն օգ-
տագործել պատմական այդ պահը: Տեղի ունեցավ հարկադրված պատերազմ և
բողոք ուժերը լծվեցին համակարգի հիմնայուններն ու երկրի տարածքային ամ-
բողջականությունը պաշտպանելուն: Սա ամենազվախվոր պատճառն էր, որին
հատկացվեցին երկրի կարողությունների խոշոր մասը և հեղափոխությունից ծն-
ված համակարգին առիթ չտվեցին ծրագրեր ու քայլեր մշակել երկրի զարգաց-
ման ու բարգավաճման ուղիությամբ: Պարտերազմի ավարտին հաջորդած տա-
րիներին ևս, չնայած ժամանակավոր կառավարության տնտեսական զարգաց-
ման կարգախոսին, մի շարք պատճառներով, ինչպես, օրինակ՝ արդյունավետ

* Համալսարանական Ջանադին հոմանիտար և սոցիալական գիտությունների հետազոտական կենտրոնի գիտխորհրդի անդամ:

գարգացման մոդելի չգոյությունը, կառավարման բուլլությունը, միջազգային արգելքները, տնտեսաքաղաքական կառույցների կոռումպացվածությունը և այլն, շարունակվեց կախվածությունը նախարային եկամուտներից: Թեև վերականգնվեցին պատերազմի պատճառած ավերածությունները, բայց դարձյալ չիրականացավ բարգավաճման ու զարգացման հասնելու առումով ժողովրդի պատմական իրժր: Հետագա կառավարությունները ևս շարունակեցին կախված մնալ նախարային եկամուտներից, ինչի հետևանքով ցայսօր ակամատես ենք երկրի տնտեսական անառողջ վիճակին՝ կայուն բարգավաճման ու առաջադիմության տեսակետից:

Իրանի վերջին հարյուր տարվա հասարակական-քաղաքական իրադարձությունների փորձը և հատկապես իշխանությունների ու ժողովրդի պարտությունները՝ զարգացման բարձր գագաթներ նվաճելու հարցում, բազմաթիվ հարցեր են առաջացնում, որոնց պատասխանելով կարող ենք գտնել անցյալի իրադարձություններն ընկալելու բանալին և լույս սփռել ապագայի վրա: Հարցը հետևյալն է, թե մեր երկրում ո՞ր պայմաններն են գոյություն ունեցել, որո՞նք ոչ: Եթե կային բարգավաճման ու զարգացման նպատավոր պայմաններ, ապա որո՞նք են եղել դրան հասնելու խոչընդոտները: Թեև այս հարցերին պատասխանելը, շագմավարական նշանակություն ունի, սակայն դուրս է մեր հողվածի ուսումնասիրության շրջանակներից: Այս պատճառով բազմաթիվ հարցերից ուշադրությունը սեռում ենք մեկ հարցի վրա և փորձում հենարավորության սահմաններում պատասխանել: Մույն հողվածի նպատակն է պատասխանել հետևյալ հարցին, թե Իսլամական հեղափոխությունն ինչպիսի՞ ազդեցություն է գործել Իրանի կայուն զարգացման վրա: Մեր առաջադրած վարկածը հետևյալն է. Իսլամական հեղափոխությունն ու նրանից սերած համակարգը, ընդլայնելով բուհական ցանցը երկրի ամենահեռավոր վայրերում և բարձրագույն կրթությունը հասանելի դարձնելով հանրության բոլոր խավերին, ձևավորել է, մարդկային կապիտալ, որը կայուն զարգացման գլխավոր նախապայմաններից մեկն է, սակայն ռեևուտային կառուցվածքի գերիշխումը և նրան խարսխված կառավարումը (մենեջմենտը) ի գորտ չեն եղել այդ հզոր ու ընդարձակ ներուժի և քննական հարուստ պաշարների ու բարձր տեխնոլոգիաների հետ ապահովել երկրի կայուն զարգացումը:

Մարդկային ներուժի տեղն ու դերը կայուն զարգացման հարցում

Չարգացում հասկացությունը, ինչպես հումանիտար գիտությունների այլ հասկացություններ փոփոխվող և վիճարկելի է: Չարգացման հարցերի մասնագետներն այս հասկացության սահմանման ու նրա իրականացման ուղիների մասին շատ են գրել, ինչի հետևանքով ստեղծվել է հարուստ և միաժամանակ կայուն

գրականություն: Դեռ մի քանի տասնամյակ առաջ զարգացում հասկացությունը նույնացվում էր տնտեսական աճի հետ, մինչդեռ այսօր ավելի ընդգրկուն սահմանում է տրվում՝ ներառելով նաև քաղաքական, մշակութային ու հասարակական կողմերը: Ըստ այս սահմանումների՝ քանակական վիճակագրությամբ ու բվային տվյալներով արտահայտված տնտեսական աճը կարող է կրել տատանվող ու ոչ շարունակական բնույթ և հաճախ անհամաչափ է արտացոլվում տնտեսական ցուցանիշների մեջ ու միշտ չէ որ պայմանավորված է երկրի բազային (հիմնարար) կարողություններով: Օրինակ՝ բնական ռեսուրսների և ազգային հարստությունների անխնա օգտագործման հաշվին կարելի է ապահովել տնտեսական աճի բարձր ցուցանիշներ, բայց դրանք իրականում տնտեսական հզորության ապացույց չեն: Ընդհակառակը, խորքային գործելակերպին ու արտադրությանը հակված զարգացումը մի գործընթաց է, որի ընթացքում մշակութային համոզմունքները և հասարակական, տնտեսական ու քաղաքական կառույցները, հին քաղաքակրթության ենթակառուցվածքների հետ հակադրվելով ու հակադրելով, հիմնովին փոփոխության են ենթարկվում, որպեսզի համապատասխանեն իրականությանը: Այս գործընթացում է, որ բարձրանում է հասարակության բարօրության մակարդակը: Չարգացման նոր սահմանումները, քննադատաբար վերլուծելով Ռոստոյի հայացքների հիման վրա նախկինում ձևավորված ու ՄԱԿ-ի կողմից ընդունված տեսակետները և նկատի առնելով դրանց անկատարությունը, ստովել մեծ ուշադրություն են դարձնում անավասարության տեղափոխված արժեքների, ինքնավստահության, քաղաքակրթների ազատության հասկացություններին: Չարգացման հասկացության իմաստի փոփոխմանն ու կատարելագործմանը գուզընթաց, վերանայվեցին նաև դրա իրականացման միջոցները: Դեռ մի քանի տասնամյակ առաջ, երբ խոսք էր գնում զարգացման հիմնական ու գլխավոր գործոնների մասին, հիշատակվում էին բնական ռեսուրսները, տեխնոլոգիան և ֆիզիկական կապիտալը, բայց այսօր պոստֆորդիստական տնտեսության ազդեցության հետևանքով, նվազել է այդ գործոնների դերը զարգացման հասնելու ուղիությանը և առաջին պլան է մղվել մեկ այլ պարամետր՝ «մարդկային ներուժը»: Մարդկային ներուժ ասելով նկատի են առնում էլիտան, բարձրագույն կրթություն ստացած ամհատները և ստեղծագործ ու նորարար մասնագետները, ովքեր ինտելեկտուալ ոլորտում իրենց նորարարություններով բարձրացնում են արտադրության արդյունավետությունը: Համաշխարհային քանկի կողմից կատարված ուսումնասիրության համաձայն՝ ֆիզիկական կապիտալն աշխարհի հարստության ընդամենը 16 տոկոսն է կազմում, իսկ բնական ռեսուրսները՝ միայն 20 տոկոսը, մինչդեռ մարդկային ներուժի ցուցանիշը կազմում է 64 տոկոս: Նույն հետազոտությունը պարզել է նաև, որ երեք զարգացած երկրներում՝ Գերմանիայում, Մեքսիկայում և Շվեյցարիայում, մարդկային կապիտալի տոկոսային արժեք-

որությունը բնական ու ֆիզիկական կապիտալի հետ հավասար է 80-ը 20-ին:

Միջին Արևելքի և հյուսիսաֆրիկյան ու մաս Լատինական Ամերիկայի ու Արևելյան Ասիայի երկրներում կատարված մեկ այլ հետազոտության արդյունքում նշանակալից հարաբերակցություն է արձանագրվել մի կողմից զարգացման և մյուս կողմից՝ մարդկային ներուժի ու հմտությունների (կրթության ցեմգրով) միջև: Հետազոտությունն անդրադառնալով Միջին Արևելքի և հյուսիսաֆրիկյան երկրների հմտությունների ու մարդկային ներուժի ցածր մակարդակին, այն արգելալիչ գործոն է ճանաչում գործարանային ու արժեքավոր աշխատանքների մրցակցային ոլորտում և մատնանշում այն իրողությունը, որ այդ երկրներում հմտությունների ցածր մակարդակը, բերևս պայմանավորված է դրանք այլ տեսակներով փոխարինելու փաստով, ինչը բնական հարուստ ռեսուրսների և ֆինանսական մեծածավալ կապիտալի առկայության հետևանք է: Նշված տարածաշրջանների երկրների տնտեսության այս հատկանիշը, այսինքն՝ ըստ միջազգային չափորոշիչների՝ բնական ռեսուրսների համեմատությամբ մարդկային ներուժի փոքր հարաբերակցությունը, վնասակար ներգործություն է բողոնում արտախանումների տեսակաճու բազմազանության վրա՝ հատկապես ներկա պայմաններում, երբ նորագույն ավտոմատ տեխնոլոգիաները պահանջում են հմտությունների ու հանրային կրթության բարձր մակարդակ: Մույն հետազոտության հիման վրա կարելի է եզրակացնել, որ զարգացման գլխավոր ներուժը համոյխաճում է մարդկայինը, և հենց այդ ներուժի օգտագործումն է զարգացած երկրների առաջադիմության գաղտնիքն ու բանալին, իսկ նրա հսկայական ուժի չօգտագործումը՝ ոչ զարգացած երկրների հետամնացության պատճառը:

Ռենգային կառուցվածքի փոփոխություն

Քաղաքական սոցիոլոգներն ու տեսաբանները պաշտոնական իշխանությունների և հասարակության փոխադարձ կապն ու իշխանությունների էությունը բնորոշելու համար ցարդ առաջադրել են չորս գլխավոր մոդել՝ մարքսիստական, պլուրալիստական, էլիտարամետ և կորպորատիստական: Արևմտյան տեսաբանների կողմից առաջադրված այս չորս մոդելի կիրառմամբ դժվար է բացատրել երրորդ աշխարհի հասարակությունների կառուցվածքային առանձնահատկությունները, այդ իսկ պատճառով ներկայացվել են նոր այլընտրանքային տեսություններ: Երրորդ աշխարհի երկրների, հատկապես Իրանի սոցիալ-քաղաքական հարցերի մասնագետները, այս բացը լրացնելու համար օգտվում են տարբեր մոդելներից, ինչպես օրինակ՝ Մաքս Վեբերի փաթիլնոնկալիստական, Վիթվոլդեի արևելյան բուսականության և Հոմայուն Քարուզյանի իրանական բուսականության տեսությունները: Նշված տեսություններից յուրաքանչյուրը բազմաթիվ

քննադատությունների է արժանացել և հարցականի տակ են դրվել նրանց հնարավորությունները՝ պետության դերը Իրանում ճշտելու և քաղաքական ու հասարակական իրադարձությունները մեկնաբանելու առումով: Այս տեսությունների շարքում վերջերս առանձնակի տեղ է զբաղվել ռենտային պետության տեսությունը, որն առաջին անգամ Իրանի սոցիալ-քաղաքական գործընթացները բացատրելու համար շրջանառության մեջ դրվեց Հուսեյն Մահդավիի կողմից: Քանի որ այս տեսությունը միաժամանակ ուշադրություն է դարձնում մի քանի գործոնների՝ Իրանում վարչակարգի բուսականության բնույթին, այդ բուսականության արմատների փնտրտուրին, արտերկրից պետության կախվածությանը, հասարակական կազմակերպությունների կարևորությանն ու նրանց որոշիչ ուժին, ներկա պայմաններում իր ուրույն տեղն է զբաղվել այս տեսությունների շարքում:

Հատկանշական է, որ ռենտային պետությունը, չնայած որոշակի ընդհանրություններին, չի նույնանում բուսականության վարչակարգի հետ: Ռենտային պետությունը խարսխված է երկրի եկամուտների հսկայական քանակության վրա, որոնք ձեռք են բերվում ոչ թե ներքին և ազգային արտադրության արդյունքում, այլ արտաքին աղբյուրների հաշվին: Լինելով երկիր ներմուծվող արծաթի գլխավոր իրացնողը ու տնօրինողը, ռենտային պետությունը հասարակությունից հարկեր գանձելու անհրաժեշտություն չի գտնում, ուստի կազմալուծվում է պետության ու հասարակության փոխադարձ կապը: Այս պետությունները փորձում են, խոչոր եկամուտների մի մասը հանրության որոշակի հատվածներին ներարկելով, հասարակական նպաստավոր հենակետ ստեղծել իրենց համար և հովանավորների ցանց ձևավորել, որպեսզի այդ անվտանգ օդակի շնորհիվ դիմագրավեն լեզիստության ճգնաժամը: Նման միջավայրում պետությունը, միջամտելով առաջարկ-պահանջարկ համակարգին և տնտեսական գործընթացներում բաժնետեր լինելով, խախտում է հասարակության տնտեսական ոլորտի ինքնակարգավորող գործունեությունը: «Ռենտա» կամ «բամու բերած հարստություններ» տարրի նկրմով մամբ՝ տնտեսական համակարգը կորցնում է իր տնտեսության ծաղկմանը հանգեցնող նորարարության ու ստեղծագործության անհրաժեշտությունը: Այսպիսով, հարստության սկզբնաղբյուրն «աշխատանքից» փոխվում է «կապելի», հետևաբար երկրի արտադրողական ուժերը նորարարության ու ստեղծագործության նոր միջոցներ որոնելու փոխարեն, մտածում են, թե ինչպե՞ս ներգրավվեն ռենտային աղբյուրներին հասցնող մեխանիզմներում: Նշված համատեքստում այն ուժերը, որոնց հաջողվում է հասնել այդ ցանցերին, հենվելով մենաշնորհային հնարավորություններին՝ սապարելից հանում են տնտեսական մնացած սուբյեկտներին: Ուստի կարելի է ասել ռենտայի երևույթը միայն պետությանը չի սահմանափակվում, այլ նրա ալիքները տարածվում են ամբողջ հասարակության մեջ: Այս պատճառով մենք ռենտային պետության փոխարեն կիրա-

ումում ենք ռենտային կառուցվածք տեղմինը (ռենտային պետություն, ռենտային հասարակություն և ռենտակերության մշակույթ): Ռենտային համակարգում ձևավորվում են քաղաքատնտեսական անհավասարություններ, որոնք հանգում են անգործունակության, այսինքն՝ բոլորը կրում են անհավասարության բացասական հետևանքները, չունենալով դրանց դրական ազդեցությունները՝ աշխատելու և ստեղծագործելու դրդապատճառներ: Վարչակարգի տարբեր մակարդակներում ռենտային աղբյուրների հասանելիությունը ձևավորում է ոչ խելամիտ սպառողական մի մշակույթ տնտեսական, քաղաքական ու մյուս բոլոր բնագավառներում՝ թե՛ պետության և թե՛ ժողովրդի մոտ: Ռենտային կառավարությունը կարիք չի գգում ուժի աղբյուրների արդյունավետ արտադրության. ռենտային տնտեսությունը հարստության աղբյուրներ ստեղծելու կարիք չունի. ռենտային հասարակությունը իր վերահսկողության տակ գտնվող ուժերն ու հնարավորությունները կազմակերպելու փոխարեն կա՞ն օգնության ձեռք է մեկնում պետությանը, կա՞ն բողոքի բռնկոց թափ տալիս նրա դեմ: Մյուս կողմից, երբ հասարակությունը հանդուրժում է ռենտային մշակույթը և այն ինստիտուտացվում է ժողովրդի մոտ, տնտեսության մեջ գոյանում են երկու լուրջ խնդրանքներ՝

1. Կոռուպցիայի ընդլայնման հետևանքով արտադրողականության կտրուկ իջեցում: Համատարած և աճող կոռուպցիայի պայմաններում արտադրության աղբյուրների ու հնարավորությունների անխնայ վատնումը դառնում է գործելաձև, ինչի հետևանքով կտրուկ անկում է ապրում արտադրողականությունը:
2. Հառուբաբերության աղբյուրների փոփոխություն: Կառավարության ապարատի ընդարձակմամբ ու անչափ ուժեղացմամբ՝ շահութաբերությունը պայմանավորվում է ոչ թե արդյունավետությամբ ու նորարարությամբ, այլ ռենտաների ստանալով:

Ռենտային կառուցվածքում եկամուտները պետության ձեռքում կենտրոնացված լինելու և նրա միջամտող բնույթի պատճառով, կոռուպցիան անարգել տարածում է գտնում հասարակության վարչական ու քաղաքական բոլոր հատվածներում: Քանի որ այս դեպքում պետությունն է համարվում ապրանքների, ծառայությունների ու արտոնությունների տնօրինողն ու քաշխողը, պարարտ հող է ստեղծվում կոռուպցիայի տարածման համար: Պետական շինվածքների համար նպատակավոր պայմաններ են ստեղծվում այդ ապրանքները քաղաքացիներին տրամադրելու համար կաշառք ստանալ և հասարակության մեջ գաղափարում է կոռուպցիան: Դուկա, Նադիր, Հաբիբի վարչական կոռուպցիայի ազդեցիկ գործոնների մասին կատարած ուսումնասիրության մեջ, անդրադառնալով տնտեսական գործարքների մեջ պետության դերին, գրում է.

«Ինչքան պետությունն ավելի շատ միջամտի ապրանքների, քաղաքացիներ-

ինն ապրանքներ և հնարավորություններ քաշխելու գործին, այդքան կմեծանա վարչական ապօրինի ծառայություններից օգուվելու ցանկությունը՝ առավել մեծ հնարավորություններ ձեռք բերելու հույսով»:

Ռենտային կառուցվածքի և հասարակության մեջ կոռուպցիայի տարածման կապին կարելի է մայել մեկ այլ տեսանկյունից՝ ռենտային կառուցվածքի ազդեցությամբ հասարակության մեջ աղբատության տարածման և աղբատ հասարակության կոռուպցիային հակվելու տեսակետից: Ռենտային կառուցվածքում, պետությունը հենված լինելով մաքային հսկայական եկամուտներին, անվերսպառուբն միջամտում է տնտեսության ընթացքին՝ խախտելով շուկայի մրցակցային համակարգը և հասարակության մեջ աղբատությանն ու կոռուպցիային ենթահող մախապատրաստելով: Աղբատությունն ու կոռուպցիան ունեն պատճառահետևանքային փոխկապակցվածություն և երկկողմ փոխազդեցությամբ ամրապնդում են մեկը մյուսին .իսկ ռենտային համակարգը նպաստավոր հող է պատրաստում դրանց աճի համար: Այսպիսի կառուցվածքում հսկայական շահույթ ձեռք բերելու անհամար առիթներ են ստեղծվում որոշ անձանց՝ հատկապես իշխանավորների, նրանց շրջապատի մարդկանց ու հովանավորների համար, ինչի հետևանքով հասարակության մեջ ձևավորվում են պաշտոնական ու կազմակերպված և ոչ պաշտոնական ու անկազմակերպ ցանցեր, որոնք խաբիւում են երկրի տնտեսության հիմքերը: Ներտնտեսական ցցումները, աղբատության աճը հասարակության մեջ քաղաքացիներին զրկում են իրենց տարրական իրավունքներից և մղում դեպի կոռուպցիա ու կաշատակերություն, ինչի հետևանքով հող է մախապատրաստվում տնտեսական համակարգի քայքայման համար, իսկ երբ կոռուպցիան համատարած բնույթ է կրում և ժողովրդի ու իշխանավորների համար դառնում սովորական, այլևս քաղաքացու մոտ կոռուպցիայի դեմ պայքարելու ոչ մի դրդապատճառ չի մնում: Նման պայմաններում կոռուպցիայի դեմ պայքարը քաղաքացիների ու անհատների համար կարող է չափազանց թանկ վերջանալ:

Իսլամական հեղափոխությունն ու մարդկային ներուժը

Այժմ, երբ պարզվեց, մարդկային ներուժին տեղն ու դերը կայուն զարգացման մեջ, պետք է ըննարկել Իսլամական հեղափոխության ազդեցությունն այդ ներուժի ձևավորման, ուժեղացման կամ թուլացման վրա, որպեսզի ի մի բերելով ստացված արդյունքները, սահմանենք ռենտային կառուցվածքի կառավարման դերը քարգավաճման մախաղդյալների համադրման գործում, ապա պարզենք կայուն զարգացման պատճառն ու կառուցվածքային խոչընդոտները: Այս նպատակով, ինչպես մյուս հետազոտողները, մենք ևս բարձրագույն կրթությունը

(ցուների ուսանողների և շրջանավարտների թիվը), որպես մարդկային ներուժի ցուցանիշ ենք ընտրում, իսկ 1973-1977թթ. ու 1995-1998թթ. ժամանակահատվածները հերթականությամբ ընտրում որպես նախահեղափոխական և հետհեղափոխական տարիների ցուցանիշ, որպեսզի երկու կտրվածքներում ուսանողների ու շրջանավարտների քանակը համեմատելով, հստակեցնենք, մարդկային ներուժին ձևավորման ու զարգացման վիճակը: Նախահեղափոխական տարիների համար 1973-1977թթ. ընտրության պատճառը նախնական եկամուտների աճով պայմանավորված ուսանողների թվի ավելացումն է և կրթության հասանելիության մեծացումը հանրության լայն խավերի համար: Այս ժամանակահատվածին նախորդող և հաջորդող տարիները չեն կարող գնահատման ճիշտ չափանիշ լինել, քանի որ նախորդող տարիներին բարձրագույն կրթության պահանջարկը ժողովրդի մոտ այնքան էլ բարձր չէր, իսկ հետագա տարիներին արդեն բարձրացել էր ԽՍՀՄ-ի հեղափոխության պայքարի արվելը և ներգրավել մաս համալսարանները: Հետհեղափոխական տարիների համար 1995-1998թթ. ժամանակահատվածի ընտրությունը նպատակահարմար է այն տեսակետից, որ արդեն այդ ժամանակ հետևում էին մնացել մշակութային հեղափոխությունը, համալսարանների փակվելը, պարտադրյալ պատերազմը և դրանց հետևանքները՝ երկրի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերի, այդ թվում մաս բուհական կրթության վրա:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ 1973-74 ուսումնական տարում համալսարանների ուսանողների թիվը կազմում էր 124 հազար, 1974-75-ին՝ 135 հազար, 1975-76-ին՝ 152 հազար, 1976-77-ին՝ 154 հազար: Այս թիվը հետագա տարիներին աճ է արձանագրել և 1995-96-ին կազմել 526 հազար, 1996-97-ին՝ 625 հազար և 1998-99-ին ավելացել է 113 հազար ուսանողով: Վերոնշյալ երկու ժամանակահատվածում համեմատելով բուհերի ուսանողների թվերը, տեսնում ենք, որ հետհեղափոխական տարիներին նախահեղափոխական տարիների համեմատությամբ այն քառապատիկ աճ է ունեցել: Բացի այդ, ուսանողների թվի համեմատականը երկրի բնակչության քանակի հետ նախահեղափոխական տարիներին կազմում էր 0,5 տոկոս, մինչդեռ հետհեղափոխական տարիներին այդ ցուցանիշը հասել է 9 տոկոսի: Եթե հետհեղափոխական տարիների ուսանողության թվին ավելացնենք մաս, Իսլամական ազատ համալսարանին ուսանողների թիվը, ապա կտանանք ավելի հետաքրքիր պատկեր: Ըստ առկա տվյալների՝ Իսլամական ազատ համալսարանի ուսանողների քանակը կազմում է. 1995-96-ին՝ շուրջ 521 հազար, 1996-97-ին՝ 613 հազար, 1997-98-ին՝ 659 հազար, 1998-99-ին՝ 669 հազար: Իսլամական ազատ համալսարանի ուսանողների թիվն ավելացնելով պետական համալսարանների ուսանողների թվին, վերոնշյալ տարիներին ուսանողների թիվը կկազմի 1047 հազար, 1193 հազար, 1284 հազար և 1308 հազար և

երկրի ուսանողների ընդհանուր քանակի հարաբերակցությունը բնակչության թվի հետ կազմում է մոտ 2 տոկոս: 1995-99թթ. միջև ընկած շրջանա ժամանակահատվածում երկրի ուսանողների ընդհանուր թվում հետուսական կրթություն (մագիստրատուրա, ասպիրանտուրա) ստացողների թիվը տարբեր տարիներին կազմել է. 1995-96-ին՝ 92 հազար, 1996-97-ին՝ 103 հազար, 1997-98-ին՝ 105 հազար և 1998-99-ին՝ 109 հազար, որոնցից միջին հաշվով 76 հազարն ավարտել են պետական բուհեր, իսկ մնացյալը՝ Ազատ համալսարանը:

Երկրի ուսանողների քանակից բացի, համալսարանների շրջանավարտների թիվը ևս խոսում ցուցանիշ է հետհեղափոխական Իրանում մարդկային ներուժի ձևավորման ընթացքը գնահատելու համար: Առկա տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը՝ 1973-74 ուստարում երկրի ցուների տարբեր մակարդակների շրջանավարտների թիվը կազմում էր շուրջ 31 հազար, 1974-75-ին՝ 32 հազար, 1975-76-ին՝ 37 հազար, 1976-77-ին՝ 45 հազար: Այս թվերը հեղափոխությունից հետո կազմել են. 1995-96-ին՝ 83 հազար, 1996-97-ին՝ 84 հազար, 1997-98-ին՝ 91 հազար, 1997-98-ին՝ 105 հազար: Այս երկու ցուցանիշների համեմատությունը խոսում է Իրանի շրջանավարտների թվի 250 տոկոսանոց աճի մասին: Եթե այդ ցուցանիշին ավելացնենք Իսլամական ազատ համալսարանի շրջանավարտների թիվը, առավել հետաքրքիր արդյունքներ կստացվեն. 1995-96-ին շուրջ 48 հազար, 1996-97-ին՝ 65 հազար, 1997-98-ին՝ 80 հազար և 1998-99-ին՝ 94 հազար հոգի Իսլամական ազատ համալսարանի տարբեր մակարդակներում ավարտել են իրենց կրթությունը: Այսպիսով, վերոնշյալ տարիների ընթացքում պետական և ազատ համալսարանների շրջանավարտների ընդհանուր թիվը հերթականությամբ կազմել է 130 հազար, 148 հազար, 171 հազար և 200 հազար: Այս ցուցանիշները հեղափոխությանը նախորդող տարիների համեմատությամբ 4-5 անգամ մեծացել են: Հարկ է նշել, որ չկան նախահեղափոխական տարիներին ուսմանական տարբեր մակարդակների շրջանավարտների տարբերակված թվերը, սակայն հետհեղափոխական տարիների հետուսական շրջանավարտների (մագիստրատուրա, մասնագիտական ասպիրանտուրա՝ PHD և բժշկագիտական ասպիրանտուրա) թիվը կազմում է. 1996-97-ին՝ 16 հազար, 1997-98-ին՝ 17 հազար, 1998-99-ին՝ 15,5 հազար, որոնցից հերթականությամբ 12,5, 13,12 և 12,5 հազար հոգին պատկանում են պետական համալսարաններին, իսկ մնացածը՝ ազատ համալսարանին:

Աղյուսակ 1. Իրանի համալսարանների շրջանավարտների թիվը նախահեղափոխական փառիներին

Ուսումնական տարի	Ուսանողների թիվ	Շրջանավարտների թիվ
1973 -74	123114	30630
1974-75	135354	31576
1975-76	151905	37546
1976-77	154215	45047

Աղբյուր՝ Իրանի վիճակագրության տարեգիրք, 1984թ., էջ 115.

Աղյուսակ 2. Իրանի պերական համալսարանների ուսանողների և շրջանավարտների թիվը հեփհեղափոխական փառիներին

Ուս. տարի	Ուսանող Շրջանավարտ	Փորձագետ	Բակալավթ	Մագիստրա - տուրա	Ասպիրանտուրա (թիվական)	PHD	Ընդհանուր ատմանք
1995-96	ուսանողներ	72125	380254	24873	41062	8280	5261621
	Շրջանավարտ.	21582	49296	4891	6184	1432	83385
1996-97	ուսանողներ	85165	418692	26832	39837	8544	579070
	Շրջանավարտ	21432	49163	5939	5789	1559	83882
1997-98	ուսանողներ	981016	448971	29095	40042	9256	655380
	Շրջանավարտ	23344	55662	6292	4466	1287	91051
1998-99	ուսանողներ	111952	450435	28056	39695	8775	638913
	Շրջանավարտ	29168	63457	6700	5294	1318	105937

Աղբյուր՝ Իրանի վիճակագրության տարեգիրք, 1999թ., էջ 660-661 .

Աղյուսակ 3. Իսլամական ազար համալսարանի ուսանողների և շրջանավարտների թիվը

Ուստարի	Ուսանող շրջանավարտ	Փորձագետ	Բակալավթ	Մագիս - տրատուրա	Ասպիրանտ. ԹժԿ և PHD	Ընդհ.
1995-96	Ուսանողներ	46401	456661	8915	9495	521472
	Շրջանավարտ.	8605	36145	2103	848	47701
1996-97	Ուսանողներ	67725	517522	18070	10151	613468
	Շրջանավարտ.	10075	52946	1865	417	65303
1997-98	Ուսանողներ	82499	549162	16591	11036	659288
	Շրջանավարտ.	14828	59374	4992	422	76616
1998-99	Ուսանողներ	121108	514409	20632	13088	669237
	Շրջանավարտ.	17543	73564	2263	908	94278

Աղբյուր՝ Իրանի վիճակագրության տարեգիրք, 1999թ., էջ 666 .

Մարդկային ներուժը ռեևուային կառուցվածքում

Նախորդ բաժնում վերլուծելով երկրի համալսարանների ուսանողների ու շրջանավարտների թվերը հեղափոխությանը նախորդող և հաջորդող տարիներին, ներկայացվեց կայուն զարգացման նախադրյալներից մեկը համդիսացող մարդկային ներուժի կազմավորման ընթացքը և, հատկապես Իսլամական հեղափոխության ու նրանից բխած ջաղաքական համակարգի դերը երկրի քարգավաճման երրորդ հիմնասյան (ընական ռեսուրսներ, տեխնոլոգիա և մարդկային ներուժ) ձևավորման գործում: Այժմ հարց է ծագում, որ եթե հեղափոխությանը հաջորդող տարիներին՝ բնական ռեսուրսների և տեխնոլոգիաների առկայության պայմաններում, ձևավորվել էր մաս զարգացման երրորդ անհրաժեշտ տարրը՝ մարդկային ներուժը, ինչո՞ւ դեռ չի բավարարվել զարգացման ու առաջադիմության բնակչության բուն ցանկությունը և մավթային եկամուտներից շարունակվող կախվածությունը դեռ անհրկականամալի է դարձնում կայուն զարգացումը: Այս հարցի պատասխանը պետք է փնտրել տեսական բաժնում մեր ակնարկած ռենտային կառուցվածքի մեջ: Ինչպես արդեն ասվեց, մի շարք ուսումնասիրողներ Իրանի հասարակական-քաղաքական զարգացումները բացատրելու համար կիրառում են ռենտային կառուցվածքի ընդհանուր մոդելը (պետություն և հասարակություն), հատկապես ռենտային պետության մոդելը: Իրանի իրադարձությունների վերլուծության համար ռենտային մոդելը առաջին անգամ օգտագործեց Հոսեյն Մահդավին, որից հետո Թեղա Սքոչվոլը այն կիրառեց Իսլամական

հեղափոխության իրադարձությունները բնութագրելու համար, այնպես որ՝ ներկայումս հետևողափոխական տարիների մասին գրվող գրքերում ու հոդվածներում շատ է օգտագործվում այս ելակետը: Այժմ տեսներք, թե ռեճիմային կառուցվածքն իր խոշորամասշտաբ կառավարմամբ և զարգացման բոլոր անհրաժեշտ նախադրյալների առկայությամբ հանդերձ, ինչպե՞ս է արգելափակում երկրի առաջընթացը, և մանավանդ, ի՞նչ է լինելու մարդկային ներուժի ճակատագիրը: Ռեճիմային իշխանությունը ռեճիմային ազդեցություններին հասնելու և այդ պետություններին բնորոշ ծավալում ու բարդ բյուրոկրատական խրթին կառուցվածքը կառավարելու համար, մարդկային հնուտ ներուժի կարիք է զգում, ուստի դրա ձևավորման համար ինքն է նախադրյալներ պատրաստում, սակայն հազվադեպ է դրանից ճիշտ օգտվում: Պետության կրթական քաղաքականության և հարաճուն եկամտունների շնորհիվ ձևավորված «մարդկային ներուժը», պետության վարած քաղաքականության և հասարակական-քաղաքական իրադարձություններին դեմ առնելով, ստիպված է ընտրել ստորև բերվող չորս տարբերակից որևէ մեկը: Իհարկե, պետք է մատնանշել, որ այս չորս տարբերակն ընտրվեն ոչ թե մարդկային ներուժի ցանկությանը, այլ պետության խոշորամասշտաբ քաղաքականության ազդեցության ներքո:

1. Ներքաշվել ռեճիմային կառուցվածք և աջակցել նրա վերարտադրմանը: «Մարդկային ներուժի» այս մասը կազմում են մարդիկ, ովքեր այնքան էլ արկածախնդիր չեն և, ներկա համակարգը փոխելու փոխարեն, գերադասում են պետության քաղաքականության կատարողները լինելով, օգտվել պետության ընձեռնած պարգևներից ու արտոնություններից: Բարձրագույն կրթություն ունեցողների այս խումբը գլխավորապես գրադեցնում է բյուրակրատիան, կառավարման փոքր ու միջին օղակներն ու գործադիր մարմինները և շահագրգռված չէ համակարգի փոփոխությանը:
2. Ներքաշվել ռեճիմային կառուցվածք՝ այն վերափոխելու նպատակով: «Մարդկային ներուժի» այս հատվածը ներառում է նյաճց, ովքեր կառուցվածքում փոփոխություններ մտցնելու հույսով են մտնում այնտեղ և փորձում են իրենց ստեղծագործությանը ու նորարարությանը նախադրյալներ ստեղծել՝ բարենդողգելու կառուցվածքը: Եթե համակարգի մակրոկառավարումը դրական է տրամադրված բարեփոխումների նկատմամբ, նրանք բարձր դիրքեր են գրավում և ռեճիմային կառուցվածքը նվազ լարվածությանը է դեպի բարեփոխումներ շարժվում:
3. Անկուսման կամ արտագաղթել: «Մարդկային ներուժի» մի մասը, ովքեր հնարավորություն կան ցանկություն չունեն ներգրավվել կառույցում և մյուս կողմից հույս էլ չեն կապում նրա բարեփոխման հետ, ստիպված ասպարեզից հեռու են քաշվում և գրադվում իրենց նախափրած գիտական ու մշակութա-

յին աշխատանքներով և ստեղծագործական սեփական կարողությունները ցուցադրում մտավոր ու մշակութային ոլորտներում կամ էլ գերադասում են բողոնել հայրենիքն ու ապաստանել արտասահմանում:

Երկրի զարգանալու կամ չզարգանալու վերջնական ելքը կախված է ռեճիմային կառուցվածքի մակրոկառավարումից և մարդկային ներուժի հանդեպ նրա որդեգրած վերաբերմունքից: Եթե ռեճիմային կառուցվածքի կառավարողները նախանախնդիր են կայուն զարգացում ապահովելուն, ստիպված պետք է արժանավայն օգտվեն մարդկային ներուժից՝ հատկապես ստեղծագործ ու նախաձեռնող ուժից, որպեսզի հետզհետե սահմանափակվի բնական ռեսուրսներից կախվածությունը, ինչի արդյունքում կքայքայվեն ռեճիմային արտոնություններից ու մենաշնորհներից օգտվող խմբերը: Մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման գլխավոր ցուցանիշներից մեկը հետագոտություններին ու զարգացման ծրագրերին հատկացվող բյուջեի չափն է: Մարդկային ներուժի առավելագույն օգտագործման մեկ այլ կարևոր ցուցանիշը իշխանությունից դուրս գտնվող էլիտայի ներգրավումն է քաղաքական գործընթացներում և քննադատողներին սեփական տեսակետներն ազատորեն ու անվտանգ արտահայտելու իրավունքի տրամադրումը, որովհետև ռեճիմային պետությունը, եթե շահագրգիռ է կայուն զարգացմամբ, ստիպված է ընդունել նրա հետևանքները: Ռեճիմային պետության վերաբերմունքը, մարդկային ներուժին հանրության այլ խավերի ու խմբերի ժողովրդավարական քաղաքականության պահանջներին, որոնք ձևավորվում են կայուն զարգացումից առաջ, չըջադրվածային դեր ունի երկրի զարգացման լուսավոր հեռանկարի հարցում: Այդ պահանջներին դրական արձագանքելը և քաղաքական բաց միջավայրի ձևավորումն ու համապատասխան ինստիտուտների կայացումը, չնայած ինչ-որ իմաստով կհանգեցնեն ռեճիմային պետության քայքայմանը, բայց երկարատև կտրվածքով կզարգացնեն ու կկայունացնեն ամկա հասարակական-քաղաքական համակարգը և կաշտպանեն նրան կործանման վտանգից: Այլ խոսքով, զարգացման եռակի նախադրյալներ ունեցող երկրում պետության մակրոկառավարումն առաջնահերթ անհրաժեշտություն է կայուն զարգացման ապահովման ուղղությամբ և միաժամանակ հանդիսանում է լարվածությունը լիցքաբափող գործոն, որի հաջողությունը օգտակար արդյունքներ է բերելու թե՛ հասարակությանը և թե՛ իշխող վարչակարգին: Եթե ռեճիմային կառուցվածքը հակված չէ ներսից բարեփոխվելուն, մարդկային ներուժը փոխանակ բարգավաճման ու զարգացման պրոցեսի պատենջները ստեղծագործաբար կտրտելու և գիտության ու տեխնոլոգիայի զարգացման սահմաններն ընդլայնելու, գերադասում է իր ստեղծագործական ու նախաձեռնող ուժը գործի դնել վարչակարգի թուլացման կամ էլ ռեճիմային արտոնություններ ստանալու ուղղությամբ, կամ էլ հույսը կտրելով ներկա կառույցի բարեփոխումից, պասսիվանալ:

Այս դեպքում ոչ միայն կայուն զարգացում իրականություն չի դառնա, այլ ռենտային անառողջ կառուցվածքը կվերականգնվի և զարգացման գործընթացը մեծ խոչընդոտի առջև կկանգնի: Նման պայմաններում էլիտայի մեծ մասը գերադասում է արտագաղթել արտասահման: Թանկարժեք .մարդկային ներուժին վատնումը մի կողմից, մյուս կողմից՝ բանու բերած հարստությունների պատճառով պետության ու ժողովրդի կապի խզումը և ժողովրդից զանձվող հարկերին չհեծվելը, ռենտային պետությանը չափազանց խոցելի են դարձնում: Այսպիսի պայմաններում համազգային որևէ իրադարձություն կամ ռենտային իշխանության վրա միջազգային ճնշումների սաստկացումը կարող են քաղաքական համակարգի փլուզման շարժառիթ հանդիսանալ:


Կայուն զարգացման հեռանկարն Իրանում

Այժմ այս նախարանով կարելի է ավելի լավ հասկանալ, թե ինչո՞ւ հետեղափոխական տարիներին չնայած մարդկային մեծ ներուժի, բնական ռեսուրսների և տեխնոլոգիաների առկայության, չձևավորվեց երկրի կայուն զարգացման ընթացքը: Պատճառների շարքում կարող ենք թվարկել՝ ռենտային կառուցվածքի իշխանությունը, իշխանության անկարողությունը՝ զարգացման անհրաժեշտությունների միջև ներդաշնակություն ստեղծելու գործում, ռենտային պետության կողմից ռենտայի արմատախիլ ամելու կամքի բացակայությունը և, իհարկե, ռենտայի հարուստ աղբյուրներից օգտվող անհատների ու խմբերի բռան դիմադրությունը: Չարգացման ընթացքի թույլ կառավարումը մեր երկրում ոչ միայն չկարողացավ ներգրավել «մարդկային ներուժը», այլև մեծացնելով գիտական էլիտայի դեզինտեգրացումը հասարակությունից, խթանեց այդ վիթխարի հարստության արտահոսքը: Երիտասարդական ազգային կազմակերպությունը բարձրագույն կրթություն ունեցող իրանցիների արտահոսքի մասին կատարած վիճակագրական վերլուծության մեջ ուշազրավ եզրահանգումներ է կատարել, որոնք դիտարկելով, ավելի հստակ կպատկերացնենք երկրի անհաջողության պատճառները կայուն զարգացման իրականացման ուղիղությամբ: Այդ հետազոտության տվյալների համաձայն.

1. Երկրի գիտական օլիմպիադաներում ընտրվածների 80-90 տոկոսը ներգրավվել են արտասահմանյան համալսարաններում:
 2. Մինչև 1997թ. էմիգրացիայի ծառայությունների գրասենյակի մասնագետների տեղեկատվական բազայում գրանցված 37462 իրանցիների 29 տոկոսը ասպիրանտուրայի մակարդակի կրթություն ունեն, 33 տոկոսը՝ մագիստրատուրայի և 38 տոկոսը՝ բակալավրատի:
- Որե՜նմ, վերջնական եզրահանգման զգույլ՝ կարելի է բարեփոխիչ ու զար-

գացմանը հակված կառավարությունը (մենջեմենթը) համարել հետեղափոխական տարիների կայուն զարգացման գործընթացի կորած օղակը: Բարեփոխմանն ու զարգացմանը հակված տնօրինությունն ի գորու է համադրելով երեք գործոնները՝ տեխնոլոգիան, բնական պաշարները և մարդկային ներուժը, հասկապես հասարակության ինտելեկտուալ էլիտայի ճիշտ ու արդյունավետ կառավարմամբ, արագացնել ու սահունացնել կայուն, հավասարակշռված և համակողմանի զարգացման ձեռքբերումը:

Բարեփոխական կառավարման միջոցով կայուն զարգացման փորրերի համադրման սխեմա



Չարգացմանը և բարեփոխությանը հակված մարդկային ներուժ կառավարում բնական ռեսուրսներ, տեխնոլոգիաներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նասեր Խադեմ Ալամ, Չարգացման քաղաքականություն. առաջընթացի գործոններ ու խոչընդոտներ, քաղաքական-տնտեսական տեղեկություններ, 1993թ, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 80:
2. Ահմադ Սաի, Երկրորդ աշխարհի տնտեսական խնդիրներ, Թեհրան, «Սամբ» հրատարակչություն, 1998թ., էջ 20:
3. Հոսեյն Ազիմի, Իրանը և բարգավաճումը, Իսֆահան, Իսֆահանի առևտրի, արդյունաբերության ու հանքերի վարչություն և «Սանի» հրատարակչություն, էջ 53:
4. Hassan Hakimian and Ziba Moshaver, The State and Global Change, The Political Economy of Transition in Middle East and North Africa, published by Curzon, 2001, PP. 76-77:
5. Հոսեյն Բաշիրի, «Քաղաքական սցոլոգիա», Թեհրան, «Նեյ» հրատարակչություն, 1995 թ., էջ 5-60:
6. Մոհամադ Ալի Հոմայուն Բարուչյան, Իրանի քաղաքական տնտեսություն, քարգծ. Մոհամ-

մայ Ռեզա Նաֆիսի և Ջանրիզ Ազիզի, վեցերորդ հրատարակչություն, Թեհրան, «Մարբազ» հրատարակչություն, 1998թ., էջ 63, Սաիդ Հաջարյան, Սույրանական կատոցվածք, խոցելի կողմեր և մողեղներ, տնտեսական-քաղաքական տեղեկություններ, 7-րդ և 8-րդ համար, 1995թ., էջ 47-48:

7. Մոհամմադ Թաբրիզյան, Տնտեսական ոեմտան որպես զարգացման այդգեակիչ գործոն, զարգացման ճրագիր, երկրորդ շրջան, 4-րդ համար, 1992 թ.:
8. Արոշնազ Դեղավարի, Անհավասարության և անպահովության տեսական համեմատականը (գրույց), Ռազմավարական ուսումնասիրություններն պարբերաբերք, վեցերորդ տարի, առաջին համար, 2003թ., էջ 203:
9. Ֆարշադ Մոմենի, Ռենտային տնտեսությունը և անհավասարության հարցը (առույթ), Ռազմավարական ուսումնասիրություններն պարբերական, վեցերորդ տարի, համար 1, 2003 թ., էջ 203:
10. Նադեր Հարիբի, Վարչական կոռուպցիա(ներգործող ազդակներ և պայքարի ուղիներ), Վասեղի մշակութային-հրատարակչական հաստատություն, 1996թ., էջ 203:
11. Երիտասարդների արտագաղթի իրավիճակի բննարկումն, Երիտասարդների ազգային զեկուցագիր, Երիտասարդական ազգային կազմակերպություն, 2002 թ., էջ 114:

ՀԱԿԿԳՐԱՐԶ ՀԱՄԸՆԿՆԱՐԱՅՈՒՄ (ԳՆՈՒՄԱԿՈՒՄ) ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀՆՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀՆՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՎԵՐԸՆՔԵՐՅՈՒՄ

դոկ. Սեյեդ Ռեզա Անևի

Տեղի է ունեցել բարձրագույն մի հեղափոխություն, եթե այն ընկալելու համար դրսևորեն անհրաժեշտ ուշիմություն...

Վլյան Շեքապիր

Իրանի իսլամական հեղափոխությունը, որն իրականացավ 1979 թվականի փետրվարի 11-ին, օժտված էր այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են համաժողովրդական մասնակցությունը, պատմական երկարատև պայքարը, կրոնական կարգախոսներն ու նպատակները, ինչպես նաև մտավորականների և հուզերականների գործողությունների համատեղ ու միասնական ուղղորդումը: Անկասկած, այս հեղափոխությունը հաղթանակեց Այաթոլլա Խոմենիի հոգևոր, կրոնական, գիտական և բանական առաջնորդության շնորհիվ, ով դեռևս հեղափոխությունից առաջ արժանացել էր «Էմամ Խոմենի» տիտղոսին: Սոցիալիզմի համընդհանրացման, մետաֆիզիկայի հերքման և նյութապաշտության ու աշխարհիկ գաղափարախոսությանը պայմանավորված արևմտյան քաղաքական, մշակութային և տնտեսական համակարգի հաստատման շրջանում կրոնական հեղափոխության հաղթանակը տեղական ու միջազգային հակադարձ բարեփոխումների պատճառ հանդիսացավ: Մի կողմից կարելի է ասել, որ Իրանի իսլամական հեղափոխությունը համընդհանրացման շրջանի իսլամական աշխարհի առաջին կարևոր արձագանքն էր, որը ցնցեց ոչ միայն մահմեդական, այլև՝ քրիստոնյա աշխարհն ու բոլորի ուշադրությունը սևեռեց լիբերալիզմի և սոցիալիզմի հակադարձ համընդհանրացման խնդրի վրա:

Կապերի համաշխարհայնացման շրջանում, ինչը պայմանավորված է կապի ժամանակակից միջոցների (հեռախոս, ռադիո, հեռուստացույց, ինտերնետ) հայտնագործման և զարգացման հետ, մեր շուրջը ձևավորվել է ժամանակից և տարածությունից դուրս մի աշխարհ, որի կարևորագույն սինթեզը համընդհանրացման գործընթացն է: Համընդհանրացումը, անպայմանորեն, համարվում է կառուցվածքային հեղափոխություն, որը ժամանակակից աշխարհի և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հանդիսացել ու հանդիսանում է նորությունների և փոփոխությունների դրոպապատճառ: Նմանատիպ աշխարհաքաղաքական իրավիճակում, Իրանի իսլամական հեղափոխությունը տարածաշրջանային, համաշխարհային առումով, ընդամենը մի փոքր հեղափոխություն չէր: Նրա ընկա-

լումը պահանջում է անչափ լայն և խոր աշխարհայացք: Եվ հետեղեզվափոխական բարեփոխումների, տեղական-համաշխարհային հետևանքների առումով այն մի մեծ շարժում էր: Հատկանշական է, որ հեղափոխությունը կարող է փոխնց հասարակական կարգերը, լայնորեն ազդելով նաև տարածաշրջանային և համաշխարհային հասարակական համակարգերի վրա:

Այս հողվածում, որն իր տեղական և համաշխարհային հասարակագիտական հայացքներով բնճարկում է Իրանի ներքին զարգացումներն ու համաշխարհային իրավիճակը, Իրանի իսլամական հեղափոխությունը վերլուծվում է որպես Արևմտյան և սոցիալիստական համընդհանրացման գործընթացներին հակադրած գործընթաց: Իհարկե, Իրանի իսլամական հեղափոխության տեղական և միջազգային հասարակագիտության վերլուծությունը պետք է իրականացվի ավելի խորքային ձևով և մեր հողվածն այս կարևոր իրադարձության ընդամենը մեկ՝ հասարակագիտական ու մեթոդաբանական վերլուծության ներկայացում է: Ուստի, սկզբում կենրկայացնենք հակադարձ համընդհանրացման գաղափարի մի քանի կողմերը, հեղափոխությունն ու տեղական- համաշխարհային հասարակագիտությունը, որից հետո ընդհանրական կերպով կվերլուծենք Իրանի իսլամական հեղափոխության տեսությունն ու հասարակական շարժումների ծագումը, որպես հակառակ ամբողջարձներ: Կվերլուծենք նաև հողվածի հիմնական խնդիրը, այն է՝ Իրանի իսլամական հեղափոխության տեսական պարզաբանումը ոչ թե սահմանափակ, այլ լայն համաշխարհային տեսանկյունից՝ որպես տեղական գործոն:

1. Հիմնական հասկացություններ

Այս հողվածի հիմնական և գլխավոր գաղափարները երբեք են՝ հակադարձ համընդհանրացման, հեղափոխության և տեղական-համաշխարհային հասարակագիտության հասկացությունները, որոնք փոխկապակցված են: Իրանի հեղափոխության ճշգրիտ հասարակագիտական ընկալումը, անշուշտ, պայմանավորված է այս երեք գլխավոր և առանցքային հասկացությունների ընկալմամբ, որոնք մի կողմից ընդունվում են որպես տեղական և համաշխարհային գործընթացների հանդեպ ցուցաբերած Իրանի հասարակության կուտակված էներգիայի պայթյուն, իսկ մյուս կողմից՝ տարանջատում են Իրանի իսլամական հեղափոխության տեղական և համաշխարհային նշանակության տարրեր և հակադարձ կողմերը:

1.1. *Հակադարձ համընդհանրացում*

Հակադարձ համընդհանրացումը դա ներքին շերտերից բխող համընդհանրացումն է, որը հակասում է նվաճողական տրամադրվածությանը վերին խավը-

րի համընդհանրացմանը: Վերևից համընդհանրացման գործընթացները, Մուստաֆա Քեմալ փաշայի հանդգնմամբ, կողոպտչական տարատեսակներից են, որոնք ձևավորվում են գերիշխանության ոգով: Համընդհանրացման այս տեսակն իր բնույթով առաջացնում է արդարատենչ համընդհանրացումներ կամ նոր ծայրահեղականություններ: Եվ սա այն պատճառով, որ վերջինս առաջացել է արևմտյան կապիտալիստական ու նյութապաշտական գաղափարախոսությունների և արդի աշխարհում զարգացող նմանօրինակ գործընթացների, ինչպես նաև, բազմազգ տնտեսական ընկերությունների տնտեսական գերիշխման դեմ պայքարի արդյունքում: Նմանատիպ հասարակական շարժումները ձևավորվում են համաշխարհային գերիշխման դեմ պայքարի և համաշխարհային արդարության ու հավասարության որոնումների մեջ գտնվող կամ ֆեմինիստական շարժումների միջոցով:

Տեղական և համաշխարհային արձագանք ունեցող կրոնական շարժումները հանդիսանում են գաղափարախոսական համընդհանրացման հակահարվածի կարևոր արտացոլում և ձևավորվում են քաղաքական կենտրոնացման արդյունքում: Իրականում վերևից համընդհանրացումը հանդիսանում է՝ ներքին համընդհանրացումների այնպիսի տարատեսակների առաջացման արդյունք, որոնք սկզբում ընդունվում են գերիշխման դեմ պայքարի ազգային շարժումների տեսանկյունից, համընկնում են՝ առաջացնելով ընդհանրական գործողություններ: Համընդհանրացման դեմ պայքարող գործընթացներն առաջադրում են մի կարևոր հարց. համընդհանրացման դեմ բողոքներն ուղղված են սուկ համընդհանրացման գործընթացների, թե՞ աշխարհում բազմազգ տնտեսական ընկերությունների գերիշխանության, ամերիկյան և կապիտալիստական ողջ համակարգի բռնապետության դեմ: Թվում է, թե այս բողոք բողոքները համախմբվել են մեկ ընդհանուր հասարակական և կրոնական հեղափոխության մեջ՝ ազգային և միջազգային ասպարեզում ստանալով «Իսլամական հեղափոխություն» ձևակերպումը: Միեկում և ժնևում այս հարցի հետ կապված որոշ ընդվզումներ առաջացան, սակայն կասկածից վեր է, որ Իսլամական հեղափոխությունն իր բնույթով և ողջ էությանը պայքարում էր գերիշխանության, բռնապետության և հասարակական-տնտեսական անհավասարության դեմ: Այս տեսանկյունից Իրանի իսլամական հեղափոխությունը տեղական և համաշխարհային մի հակադարձ գործընթաց էր, որը հակազդում է տեղական ու համաշխարհային բռնապետությանը:

Կրոնարմատական շարժումները համարվում են հակադարձ համընդհանրացման կարևոր երևույթներից և ազգային-պետական մակարդակով վերակենդանացում են կրոնական ավանդույթներն ու ազգային, քաղաքական, մշակութային և հասարակական արժեքները: Ձուգահեռ համընդհանրացումների առկայության պայմաններում առաջ է գալիս «համընդհանրացումների րախման» վար-

կածը: Վարկածի հեղինակի կածիքով՝ անհավասարությունների շեշտակիացումը, հասարակական անօրհասությունը և անվտանգության բացակայությունը հանգեցրել են նոր աշխարհակարգի, նոր քաղաքականության վերանայման:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ համընդհանրացման գործընթացում հզորացել և կարևորություն են ստացել այնպիսի վերակառուցվածքային գործոններ, ինչպիսիք են կրոնը, ազգությունը, շրջակա միջավայրը, մարդկությունը և այլն: Այլ կերպ ասած, մարդկային խմբավորումները ձևավորվում են վերջիններիս կրոնական, սեռային, ազգային և մասնագիտական նախախորհուրդներին ելնելով:

Համաշխարհային կրոնական խմբավորումները, ֆեմինիստական հասարակական շարժումները, շրջակա միջավայրի պահպանման և մասնագետների համաշխարհային խմբավորումները համարվում են ժողովրդամետ կառույցներ: Ուստի անչափ կարևոր և հատկանշական է Իրանի իսլամական հեղափոխությանը հետևող կրոնական հեղափոխությունների առաջացման ուսումնասիրությունը՝ հատկապես նոր համընդհանրացած մթնոլորտում:

1.2. Տեղափոխություն

Հեղափոխություն բառն առաջին անգամ օգտագործվեց Արևմուտքում՝ ժողովրդավարություն բառին զուգահեռ, իսկ իրականում մեծ հեղափոխությունները հանդիսացել են ավելի լայն ժողովրդավարությունների նախապայման: ԱՄՆ-ի 1776թ. և Ֆրանսիայի 1789թ. հեղափոխությունները, որպես տասնութերորդ դարի արևմտյան երկու մեծ հեղափոխություններ, հանդիսանում են նոր հասկացությունների առաջացման աղբյուր: Ազատության իդեալները, քաղաքացիությունն ու հավասարությունը հանդիսանում էին այս երկու մեծ հեղափոխության հիմնական գաղափարները: Հեղափոխությունը այն հասկացություններից է, որը չունի մեկ ընդհանուր սահմանում: Սթիվեն Վալտը հեղափոխությունը բնորոշում է «Ռթև՛ ազատ իշխանության տապալումը նույն հասարակության անդամների կողմից և դրա փոխարինումը նոր քաղաքական կարգերով» նախադասությամբ:

Պետք է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ հեղափոխությանը բնորոշ է յուրահատուկ լինելը և մենաշնորհայնությունը: Այստեղ կցանկանայի մեջբերել Ջեյմս Ֆարրի խոսքերը. «Յուրաքանչյուր հեղափոխություն առանձին երևույթ է, որն ունի որոշակի պատմական նախապայմաններ»: Իրականում, յուրաքանչյուր հեղափոխություն անհրաժեշտ է քննարկել պատմական նախապայմաններից ելնելով: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, հեղափոխությունը չի սահմանափակվում կոնկրետ որևէ մեկ հասկացությամբ և առանձնահատուկ տեսությամբ, իսկ բոլոր այն տեսարանները, ովքեր հեղափոխությունը մեկնաբանել են մեկ սահմանափակ տեսությամբ կամ քննադատվել են, կամ հայտարարվել կողմնապաշտ:

Օրինակ, Իրանի իսլամական հեղափոխությունը պետք է դիտարկվի և՛ պատմական նախապայմանների, և՛ նրա ժամանակի, և՛ տեղական-համաշխարհային նշանակության ու ազդեցության տեսանկյուններից, քանզի լոկ սոցիալական հայացքը սահմանափակում է Իրանի իսլամական հեղափոխության նշանակությունը: Այսպիսին է նաև մոդեռնիստական, լիբերալիստական, ֆեմինիստական և աշխարհիկ աշխարհայացքների արդյունքը:

1.3. Տեղական-համաշխարհային հասարակագիտություն

Տեղական-համաշխարհային հասարակագիտությունը վերլուծական գիտություն է, որը նոր հասարակություններն ուսումնասիրում է առավել ընդհանրական տեսանկյունից՝ քննարկելով նրա տեղական, վերագրային և համաշխարհային հասարակական գործոնները: Ինչպես կասեր Ռոբերթսոնը, պետք է ուշադրություն դարձնել այն բանին, որ համընդհանրացման գործընթացին առջևիող տարբեր երևույթների ուսումնասիրության համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել միաժամանակ և՛ տեղական, և՛ համաշխարհային գործոններին, քանզի միայն տեղական կամ սոսկ համաշխարհային գործոնների կարևորումը, ուսումնասիրությունը կարող են տանել ոչ ճիշտ ուղղությամբ և կզգացվի հաշվեկշռի խախտում, ինչի արդյունքում այն կարող է համարվել միակողմանի: Համընդհանրացման գործընթացի սկիզբը չի պարտադրում ազգային և տարածաշրջանային գործոնների կրճատում և առանց համաշխարհային գործոնների դիտարկման, ազգային խնդիրների կարևորման արդյունքում ուսումնասիրությունը կիրականացվի առանց առկա բոլոր գործոնների քննարկման: Այդ իսկ պատճառով Ռոբերթսոնը համաշխարհային գրականությունը համայրել է նոր «Globalization» բառով, որն արտահայտում է հասարակական և մշակութային խնդիրների տեղական-համաշխարհային համընդհանրացման իմաստ: Համընդհանրացման տեսությունների ձևավորումն ու շեշտադրումը դարձել են ազգային և տեղական գործոններից հեռանալու պատճառ և պետք է ուսումնասիրվեն այն ո՛չ տեղական ու ո՛չ ազգային գործոնները, որոնք դարձել են հասարակական գործընթացների դրդապատճառ: Ռոբերթսոնը համարության ուշադրությունը միաժամանակ տեղական և համաշխարհային գործոնների վրա սենեռելու նպատակով, ներկայացրեց իր տեղական-համաշխարհային հայացքները:

2. Հասարակական շարժումների տեղական-համաշխարհային հասարակագիտություն

Մեր թեմայի գերխնդիր հանդիսացող արտահայտության բառագիտական

վերլուծությունից հետո անդրադառնում ենք հասարակական շարժումների տեղական-համաշխարհային հասարակագիտությանը, որը հանդիսանում է խնդրո առարկայի կարևոր կողմերից մեկը: Հասարակագիտական կանոնների սահմաններում հասարակական շարժումների վերլուծությունն ունի վաղեմի պատմություն: Անցյալ քսան տարիների ընթացքում հասարակական շարժումների հասարակագիտությունը կրել է համակարգված բնույթ և հանդիսացել հասարակագիտության առանձին ճյուղ: Սրիվեն Քուչերն իր «Հասարակական շարժումները զարգացած կապիտալիզմի շրջանում» գրքում պնդում է այն, որ նախկինում հասարակագիտության մեջ հասարակական շարժումները վերլուծվում էին որպես հասարակական գործողությունների շեղված տեսակ, սակայն դրանց մասշտաբները, խնճավածությունն ու բազմազանությունը ստիպել են, որպեսզի վերլուծական համակարգում առաջանա մի առանձին ուղղություն: Հեղափոխությունների ու հասարակական շարժումների բազմազանությունը, մասշտաբներն ու տարածվածությունը բազմապատկել են այս անկախ ուղղության կարևորությունը և կարելի է ասել, որ հեղափոխությունների ու հասարակական շարժումների խնդիրները հանդիսանում են ներկայիս աշխարհի կարևորագույն խնդիրներից մեկը:

Ավելի ճշգրիտ կարելի է ասել, որ յուրաքանչյուր հասարակական շարժման կամ հեղափոխության էությունը պայմանավորված է որոշակի քաղաքական համակարգերի ու վարչակարգերի դեմ պայքարով և պետք է ուսումնասիրվի առանձին տեսանկյունից: Օրինակ՝ Արևմտյան հասարակական շարժումները «Այլախոս մշակույթ» կարգախոսով հանդիսանում են հասարակական ընդվզումներն անբայմանորեն ունենան կոնկրետ քաղաքական կամ տնտեսական նպատակներ: Իրանցից շատերն ուղղակի կարոտախոսային բնույթ են կրում և մի կողմից կարող են համարվել ավանդույթների և ծեսերի վերարտադրության, իսկ մյուս կողմից՝ արժեքային սկզբունքներից ազատվելու միջոց: Գոյություն ունեն բազմաթիվ հասարակական շարժումներ, որոնց հիմնական նպատակն է երեխաների, ընտանիքի և կանանց իրավունքների պաշտպանությունը, ակտիվի և ծխախոտի դեմ պայքարը, ծեղերի հանդեպ պատշաճ ուշադրությունը, շրջակա միջավայրի պահպանությունը, մարդու իրավունքների կարևորումը և կենդանիների պաշտպանությունը: Հիշյալ շարժումները գտրվ են որևէ քաղաքական ուղղվածությունից և արտահայտում են մարդկային ուշադրությունն ու մտահոգությունները:

Ընդլիցմանից գործընթացների մի մասն իր արտահայտությունն է գտնում կրոնական շարժումներում: Կրոնական շարժումների կարևոր երևույթներից է Սալման Ռուշդիի «Սատանայական այգներ» գրքի դեմ համաշխարհային բողոքը: Գիրք, որը համաշխարհային ճանաչում գտավ այսօրվա Խոմենիսի կողմից

Սալման Ռուշդիի հանդեպ կայացրած կրոնական վճռի արդյունքում: Այս վճռի հետևանքներից են արդի աշխարհում համաշխարհային իսլամի առաջին դրսևորումներն ու համընդհանրացման և իսլամի կապը: Ժամանակակից և գեր-ժամանակակից աշխարհում այն առաջին կրոնական վճռն էր, որ ցնցեց թե՛ արևելքի և թե՛ արևմտքի իսլամական աշխարհը, որի դեմ պայքարում, առանց հաշվի առնելու դավանաբանական, հավատաանբային, ազգային ու դասակարգային տարբերությունները բոլոր մահմեդականները համախմբվեցին: Այս քայլը մի վերաբնական շարժում էր, որն ազգային և աշխարհիկ տեսանկյուններից, վերլուծություններում անընթաց էլ է:

Համընդհանրացման ժամանակաշրջանում մենք միաժամանակ բախվում ենք Իրանի իսլամական հեղափոխության, ինչպես դրական արձագանքներին, որոնք ունեն ազդեցության երկու բնույթ, այնպես էլ բացասականին, որոնք ունեն արգելակման բնույթ: Արդյունքում ուսումնասիրության առարկա է դառնում ընդհանուր առմամբ կրոնը և հատկապես իսլամը՝ դիտարկվելով որպես քաղաքական և մշակութային իշխանություն և ուժ: Օրինակ, Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից և համայնավարական կարգերի փլուզումից հետո, աշխարհում ձևավորվեց նոր քաղաքական ցենտրալիզմ, որի մրցակցության և պայքարի հիմնական ուղղվածությունը կրոնական ցենտրալիզմի դեմ պայքարն էր: Այսպիսով, արևմտյան աշխարհում ուժեղացավ հակաիսլամականությունը և կիրառվեցին բոլոր հնարավոր մեթոդները՝ Իրանի և իսլամի դաժան պատկերի ստեղծման ուղղությամբ: Հիշյալ գործողություններն իրականացվում էին հողվածների, պատերազմի և ահաբեկչության տեսարանների նկարագրման միջոցով: Հատկապես մեծ ջանքեր գործադրվեցին արձատական իսլամը, որպես կոմունիզմին փոխարինելու եկած ուղղություն ներկայացնելու հարցում և արևմտյան թշնամանքն արևելքի հանդեպ կոմունիզմից տեղափոխվեց դեպի իսլամական ու մահմեդական դաշտ: Այս քաղաքականությունն արդարացնում էր հետագա պայքարը, որը հանգեցրեց իսլամի դեմ համընդհանուր պայքարի ալիքի առաջացմանը:

3. Իրանի իսլամական հեղափոխության վերլուծություններ և գնեսություններ

Աշխարհի հեղափոխությունները վերլուծվում են տարբեր տեսանկյուններից: Սամուել Հանսինգբոնն իր հանրահայտ աշխատությունում աշխարհի հեղափոխությունները կամ հեղափոխական գործընթացները բաժանում է երկու՝ արևմտամետ (ֆրանսիական և ռուսական հեղափոխություններ) և արևելամետ (Նիկարագուայի, Կուբայի, Չինաստանի և Վիետնամի հեղափոխություններ)

խմբերի: Վերջինիս կարծիքով, ընդհանուր առմամբ, հեղափոխություններն իրականանում են զարգացող հասարակություններում՝ ավանդակներից արդիականի անցումով: Սակայն, Արևելքի և Արևմուտքի կառուցվածքային հնարավորություններն առաջացնում են հեղափոխական տարբեր գործողություններ և ռեակցիաներ:

Ընդհանուր առմամբ Ռուսաստանի, Չինաստանի, Վիետնամի, Կուբայի կամ Նիկարագուայի սոցիալիստական հեղափոխությունների հեղափոխական տեսությունները նման են և կարելի է ասել, որ հանդիսանում են մարքսիստական տեսության արտացոլման մի տարատեսակ: Այս տեսության (համակարգային տեսություն) համաձայն, հեղափոխությունը հանդիսանում է դասակարգային բախման արդյունք կամ այլ կերպ ասած, համակարգում անհավասարակշռության պատճառով առաջացած հասարակական պայթյունի արդյունք է: Այս տեսակետը, որը դիտարկում է խնդրի միայն նյութական կողմը, չի կարող ընթացիկ կրոնական հեղափոխության իմաստն ու նշանակությունը:

Գոյություն ունեն մեկ վերարտադրության տեսության վրա հիմնված մի քանի այլ տեսություններ, որոնք հեղափոխության առաջացման պատճառ են համարում ժամանակակից հասարակության պահանջները չբավարարող քաղաքական համակարգերի գոյությունը, ինչպես օրինակ, հասարակության մեջ ժողովրդավարության հաստատման քացակալությունը է: Իրականում այս տեսությունը հեղափոխության առաջացման կարևոր գործոն է համարում վերակառուցման գործընթացի աստիճանաբար զարգացումը: Հեղափոխությունների հանրահայտ տեսարան Սթրուշովըն առաջարկում է կառուցվածքային տեսություն, որը նման է համակարգային տեսությանը և հավաստացած է, որ հեղափոխություններն առաջանում են համակարգերի անաշխատունակությունից: Կառուցվածքային տեսությունը հեղափոխական գործոնը որոնում է երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կառույցներում հավասարակշռության խախտման մեջ:

Մինչ օրս ներկայացված հեղափոխական տեսություններից շատերը միանշանակ պնդում են, որ հեղափոխություններն առաջանում են հիմնականում գյուղացիական և ոչ թե արդյունաբերական համայնքներում: Սակայն, այս տեսակետը ոչ բոլոր դեպքերում է, որ ճիշտ է: Իրա թավազույն օրինակն Իրանի իսլամական հեղափոխությունն է, որին մասնակցում էին երկրի հասարակական բոլոր խավերը՝ անկախ իրենց կրթվածության աստիճանից, կենսամակարդակից, քաղաքաբնակ կամ գյուղաբնակ լինելուց: Այն համեմատելով Ֆրանսիայի (1789թ.), Մեքսիկայի (1910թ.), Ռուսաստանի (1917թ.), Չինաստանի (1927թ.), Հարավսլավիայի և Վիետնամի (1945թ.) հեղափոխությունների հետ, ակնհայտ տարբերություններ ենք տեսնում:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Իրանի ժողովուրդը և կրթվածության,

և քաղաքաբնակ լինելու առումով ավելի զարգացած և առաջավոր էր մյուս հեղափոխությունների մասնակից ժողովուրդներից: Հատկանշական է այն, որ գյուղացիական խմբերը կազմում էին Իսլամական հեղափոխության մասնակիցների շատ փոքր մասը, սակայն, ի հեճուկս այս ամենի, Իրանում տեղի ունեցավ մի հզոր և բազմաբովանդակ հեղափոխություն:

Հեղափոխություն և արդիականացում

Երկիր, թվական	Հողատիրոջնրքը գրավողների բիլիոն (%)	Քաղաքաբնակների բիլիոն (%)	Կրթվածությունը (%)
Ֆրանսիա 1789թ.	1789 - 85%	-	-
Մեքսիկա 1910թ.	1930 - 70%	10	15
Ռուսաստան 1917թ.	1913 - 67%	-	-
Չինաստան 1927թ.	1950 - 69%	10	10
Հարավսլավիա 1941թ.	1940 - 76%	13	-
Վիետնամ 1945թ.	1960 - 81%	15	18
Իրան 1979թ.	1978 - 40%	50	50

Վերոհիշյալ աղյուսակը վերցված է Ռոբերթ Դիքսի հոդվածի (1979թ., էջ 286) թիվ 1 աղյուսակից:

Աղյուսակում ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ Ֆրանսիայի, Մեքսիկայի, Ռուսաստանի, Չինաստանի, Հարավսլավիայի և Վիետնամի հեղափոխությունները տեղի են ունեցել գյուղաբնակ, ոչ արդիական հասարակություններում, իսկ Իրանի իսլամական հեղափոխությունը հաղթանակեց համեմատաբար ավելի կրթված և զարգացած քաղաքաբնակ բնակչության կողմից: Իրանի իսլամական հեղափոխությունը հաղթանակեց ճիշտ Աստվածային ուսմունքի, ողջ բնակչության մասնակցության և ճիշտ կրոնական առաջնորդման շնորհիվ:

Թվում է, որ Իրանի իսլամական հեղափոխության առաջացման հիմնական քաղաքական գործոնը կրոնն էր: Հակառակ Փետրերի տեսության, որը համոզված էր, թե կրոնի կարևորումը պայմանավորված է քաղաքական-տնտեսական գործոնների մերժմամբ, կրոնական հեղափոխության տեսությունը կարևորում է կրոնական գործոնի առանցքային դերը քաղաքական և տնտեսական գործոններում: Այսպիսով, հիշյալ տեսության համաձայն, բոլոր գործոնները պետք է սահմանվեն կրոնական գործոնների շրջանակներում: Օրինակ, Իրանի իսլամական հեղափոխության կարևորագույն կարգախոսներից էր բռնության և անարդարության դեմ պայքարը, սակայն այն կարելի է մեկնարանել տարբեր տեսանկյուններից: Բռ-

նուրբյան դեմ պայքարը, որպես նպատակ վերլուծվում է միայն այն դեպքում, երբ հասարակությանն ուղղորդում է դեպի սոցիալիզմ: Իսկ երբ բռնության դեմ պայքարը զուգորդվում է անարդարության դեմ պայքարի Աստվածային պատգամով, հասարակությունն ուղղորդվում է դեպի կատարելություն՝ դառնալով բարեխաչտ և հավատացյալ: Այս երկու միևնույնը բվացող նպատակներն իրականում խիստ տարբեր են և ունեն տարբեր կողմնորոշումներ: Առանց հիշյալ կողմնորոշումների և տարբերության ընկալման հնարավոր չէ հասկանալ կամ մեկնաբանել Իրանի իսլամական հեղափոխությունը: Բազմաթիվ արևելագետներ նույնպես անտեսում են այս կրոնական նրբությունները, որոնք բխում են խոհափիլիսոփայական գաղտնահարույրղ աղբյուրներից և ունեն յուրահատուկ արտաքին անդրադարձ: Վերջիններս Իրանի իսլամական հեղափոխությունը վերլուծում են ձախ սոցիալիստական կամ կապիտալիստական գաղափարական շրջանակներում:

Արևելագետների կողմից ներկայացված Իրանի իսլամական հեղափոխության տեսությունները հաճախ կանխակալ կարծիքներ են, որոնք իրականացվում են սոցիալական, լիբերալիստական, մացոնիստական ու ֆեմինիստական տեսանկյուններից և պատվիրված են Իրանի շահի կամ մախսիհնում Իրանում շահեր հետապնդող որևէ այլ երկրների իշխանությունների կողմից: Հիշյալ տեսությունները բազմազան են, սակայն ունեն բազմաթիվ ընդհանրություններ, որոնք ամփոփվում են Իրանի իսլամական հեղափոխության բացասական, շահադիստական և ոչ ցանկալի լինելու գաղափարներով: Այնուամենայնիվ, այս տեսակետները համընդհանուր են մաս Իրանի իսլամական հեղափոխության ժողովրդական և կրոնական լինելու ապացույց: Իրանի տալամական հեղափոխության ըմբռնման համար մախսառաջ պետք է ըմբռնել իրանական հասարակության կրոնական մթնոլորտը, որի հիմքում ընկած են հոգևոր հավատալիքները, կրոնական վարքագիծը, ինչպես մաս հոգևոր-կրոնական արարողությունները (աշուրայի և թասուայի սովորույթը), որոնք պարուրված են բռնության և անարդարության դեմ պայքարի անխտնջ ոգով: Իրանի ժողովրդի պայքարը պայմանավորված էր կրոնի վերածննդի և անտալարտ մարգարեական իսլամի վերադառնալու ցանկությամբ: Ուստի կարելի է ասել, որ Իրանում, որպես հասարակական կարևորագույն ուժ, հեղափոխության իրականացման գործոն հանդիսացավ կրոնը: Իրանի իսլամական հեղափոխությունը դարձավ հեղափոխության տեսության նոր մոտիվ և անվանվեց «Կրոնական հեղափոխության տեսություն», որն իր հերթին հանդիսացավ իսլամական աշխարհում հետագա բարեփոխումների հասարակական խորհրդանիշ: Հենվելով այն տեսության վրա, որը բոլոր փոփոխությունների պատճառ է համարում կրոնական աշխարհայացքը, հասարակական և անհատական գործողությունները, նպատակներն ու գաղափարները, կարելի է մեկնաբանել Իրանի իսլամական հեղափոխությունից առաջ և հետո տեղի ունե-

ցած բոլոր երևույթներն ու գործընթացները: Տիկին Քեդիի նման գիտնականը, ով անդրադարձել է աշխարհի կրոնական հեղափոխությունների և հասկապես Իրանի իսլամական հեղափոխության վերլուծությանը, Իրանի իսլամական հեղափոխությունը ներկայացնում է Արևմտյան ծախ կամ կրոնի վերածննդն ուղղափառ հեղափոխությունների տեսանկյունից: Այս տեսակետը ներկայացնում է համաշխարհային գործընթացների մի ամբողջ շարք: Սույն հոդվածի բաժիններում մենք կրկին կանդրադառնանք կրոնի հարցին «Համաշխարհային հարցով»:

4. Հակադարձ համընդհանրացումներ և Իրանի իսլամական հեղափոխության փեղակալ-միջազգային սոցիոլոգիան

Իրանի իսլամական հեղափոխության տեղական-միջազգային սոցիոլոգիան մի հայացք է Իրանի և համաշխարհային հանրության «համատեղ մթնոլորտներին»: Վերանշալով մենք միաժամանակ քննարկում ենք իշխող համակարգերի և Իրանի հասարակության, հաճախ մեզ համար խիստ անհասկանալի, խորքային և մակերեսային խնդիրներն ու դրանց թաքնված շերտերը, որոնք կարող են առավել կարևոր լինել: Պետք է ուշադրություն դարձնել միաժամանակ մի թանի հասարակական խմբավորումների ձևավորման և մեկ ընդհանուր հասարակության մասնատման ու բազմազան խմբավորումների առաջացման կարևոր խնդիրներին: Այսօր, երբ համընդհանրացման հարցում ներկայիս աշխարհը շունչ որևէ կոնկրետ փորձառություն, ձևավորվում են բազմազան և բազմաբնույթ համատեղ համընդհանրացման տարատեսակներ, որոնք ընթանում են միմյանց զուգահեռ: Հակադարձ համընդհանրացումներն աշխարհում իշխող գործընթացներին զուգահեռ և համարյալ ներկայացնում են առավել խորքային խնդիրներ: Այս առումով, հասարակական, ինչպես մաս միջազգային հարաբերությունների բնագավառում, աշխարհում ձևավորվում է իշխանության մի նոր և ավելի ծանրակշիռ տարատեսակ: Աշխարհում առկա իշխանությունների և պաշտոնական իշխանական համակարգերի բնույթի ու էության առումով այն չի ընկալվում՝ համարվելով գերուժ կամ գերմպատակ: Այն պայմանավորված չէ որևէ կոնկրետ աշխարհագրական տեղանքով, այլ թաքնված մի էներգիա է, որը հաճախ վերածվում է հասարակական մեծ կամ փոքր շարժումների, հեղափոխության կամ համաշխարհային բողոքի ակցիայի, որի առանցքում ընկած են համաշխարհային արդարության արժեքները: Նշված ուժի կամ իշխանության լավագույն օրինակ է հանդիսանում Իրաքի դեմ սանձազերծված Ամերիկայի պատերազմի դեմ բողոքի համաշխարհային ակցիոն, որը կրում է հասարակական բնույթ: Ինչի հետևանքով Նրկրորդ համաշխարհային պատերազմից հետո ականատես եղանք լայնածավալ ցույցերի եկուպական երկրներում, անգամ Աճգիայում:

Այսպիսով, Իրանի իսլամական հեղափոխության հիմքում ընկած է մի այնպիսի էներգիա, որը կարելի է համարել տեղական-միջազգային հասարակական հակադարձ մի ուժ կամ ուղղակի «վերած», որն իր մեջ ներառում է տեղական և համաշխարհային պաշտոնական իշխանությունների բոլոր սկզբունքները: Հասարակական այս վերածն իր հետագա գործընթացներից շատերն իրականացրեց առանց որևէ համաշխարհային ուժի կամ կազմակերպության օգնության՝ հանդիսանալով Իրանում և նրան շրջապատող աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների աղբյուրը: Սա այն պայմաններում, երբ Իրանի քաղաքական համակարգի հասարակական գործընթացը շարժվում էր դեպի տնտեսական, մշակութային և քաղաքական գործընթացների արևմտայնացման ուղղությամբ: Իրանի շահի տնտեսական զարգացման հնգամյա մախազները, մշակութային քաղաքականությունը, Իրանի հասարակության կառավարման հարցում Ամերիկայի և արևմտյան պետությունների դերը, ինչպես նաև արևմտյան մշակույթի և հասարակական խորհրդանիշների երևան գալը Իրանի հասարակության մեջ ապացույց էին մի գործընթացի, որը կոորդինացված էր վերագրային գործընթացների հետ կամ, այլ կերպ ասած, համընթաց էր արևմտյան համաշխարհայնացմանը: Համաշխարհային մակարդակով արևմտյան մշակույթի համաշխարհայնացումն ու արևմտյան քաղաքականության տարածումն ընդգրկում էին երկրի քաղաքական և հասարակական մթնոլորտը: Ուստի, տեղական և համաշխարհային գործոնները, հասարակության արևմտայնացումն ու աշխարհիկությունը հանգեցնում էին կապիտալիստական արժեքների տարածմանը: Իսկ ազգային պլանում իրանական հասարակությունը վիսփազում էր կրոնական առաջնորդության և ուներ բազմաթիվ հեղափոխականներ, որոնք արտաքսված էին Իրանից կամ գտնվում էին կալանքի տակ: Իրանի հասարակությունը մշտապես դեմ է եղել Արևմտյան արժեքներին և ավելի շատ ձգտել է դեպի կրոնական արդարացի արժեքներ: Ինչպես տեսնում ենք, մենք գործ ունենք Իրանի հասարակության արևմտայնացման կամ հողեր-կրոնական արժեքների վերածննդն գործոնների երկու՝ տեղական և համաշխարհային շերտերի հետ, որոնք երկուսն էլ արևմտականացման գործընթացին զուգահեռ էին, սակայն հակադրվեցին միմյանց:

Իրանի իսլամական հեղափոխության բոլոր ապեկտները մեկնաբանող տեղական-համաշխարհային հասարակագիտության մերկայացումն ավելի շատ ժամանակ է պահանջում: Մեր հողվածն ընդամենը մեթոդական գործողություն է, որը ներկայացնում է Իրանի Իսլամական հեղափոխության հասարակագիտության ճշգրիտ և նոր մեթոդներից մեկը: Այս հողվածում մենք ձեռք ուղարկում ենք Իրանի իսլամական հեղափոխությունն աշխարհի մյուս մեծ հեղափոխություններից (Սուդանի, Ալժիրի և...) տարբերակող կարևորագույն գործոնների վրա: Իրականում կրճատվելի այն հիմնավոր պատճառը, որը հանդիսացավ

ժամանակակից աշխարհի բոլոր նոր վերադարձների, բողոքի ակցիաների և հակադարձ դիրքորոշումների ոգին:

4.1. Իրանի իսլամական հեղափոխությունը և կրոնամարտությանը պրպես արևմտյան, ինչպես նաև սոցիալիզմի համընդհանրացմանը հակադարձ գործընթաց

Ինչպես նշեցինք, բվում է, որ այդ հիմնավոր գործոնը կրոնն է: Ի հեճուկս Արևմուտքում և Արևելքում նյութապաշտության կամ աշխարհիկության սկզբունքներով առաջացած հակակրոնական կամ կրոնը սահմանափակող բոլոր հուսանքների գոյության, երկու աշխարհներում էլ գործում են կրոնի վերադարձի և կրոնական լուսավորման հզոր գործընթացները: Օրինակ, ամերիկյան հասարակությունում կրոնը համարվում է ամբողջովին արդիական և անսպասելի կրեոյք: ԱՄՆ-ում, 2000 թվականի ամենաշատ վաճառվող Սթեֆ Քարբերի «Անհավատության մշակույթը» գիրքն էր, որը քննադատում էր աշխարհիկությունը և խրախուսում հակադարձ գործընթացները: Այս գրքում Քարբերը գրում է, որ հասարակության, պետական կամ ոչ պետական կառույցների ոչ մի կարևոր որոշման մեջ կրոնի գործոն գոյություն չունի և ինչն էլ հանդիսացել է բազմաթիվ լայնամասշտաբ հասարակական ճգնաժամերի առաջացման պատճառ: Արդի հասարակությունում կրոնի քննարկումն առանձին խնդիր է, որը պետք է խորապես ուսումնասիրվի, սակայն անհրաժեշտ է ուղարկություն դարձնել այն հանգամանքին, որ կրոնական հայացքների վերկառուցվածքային և համաշխարհային լինույթն իր մեջ զարգացնում է համաշխարհային համատեղ ուժեր:

Պետք է ուղարկություն դարձնել այն խնդիրն, որ Աբրահամյան բոլոր կրոնները, հատկապես քրիստոնեությունն ու իսլամը, իրենց մեջ պարունակում են կրոնական, աշխարհիկ հայացքներ, ինչը պատճառ է հանդիսանում, որպեսզի համընդհանրացման և կրոնի միջև մի ընդհանուր կապ առաջանա: Տարբեր առումներով, սրբազան գրքերում կիրառվում է «ուլ աշխարհիս մարդիկ» դիմելանք, որը գերծ է որևէ սեռական կամ ազգային հասկացությունից: Աստված բոլոր սրբազան գրքերում մարդուն դիմում է ընդհանրական ձևով և երբ կիրառվում է «աշխարհիս մարդիկ» արտահայտությունը, ի նկատի է առնվում համայն աշխարհի բարեպաշտ և հավատավոր ժողովուրդը՝ անկախ ազգային, սեռական կամ կրոնական պատկանելիությունից, ինչպես նաև՝ կրոնի համընդհանրացումը: Երկրորդ հազարամյակի վերջերին, երբ սկսվեց հարաբերությունների համընդհանրացման գործընթացը, Իրանի իսլամական հեղափոխությունը դարձավ համընդհանրացման և կրոնի կապակցման լավագույն առիթը, որը պայմանավորված է կրոնի համընդհանրացման հետ:



Այդ կապը բազմիցս հանդիսացել է նոր հասարակագիտության խորքային և լայնածավալ ուսումնասիրության առարկա: Հասարակական տեսանկյունից թե՛ մայի կարևորության ընդգծման արդյունքում աշխարհի մեծ քաղաքագետներն ու հասարակագետները կարողացել են հասնել այն համոզման, որ համընդհանրացման և կրոնի կապը մեր օրերի կարևորագույն երևույթներից է, ինչը, ցավոք, անուշադրության է մատնվել: Ուստի, վստահորեն կարելի է ասել, որ ազգային և համաշխարհային ասպարեզներում ունեցած անկումից հետո սկսվել է կրոնական վերելքի մի նոր շրջան, որը լուսավորում է քաղաքական և հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Հենց այս առումով էլ, բազմաթիվ արևելագետների հետազոտություններում, Իրանի իսլամական հեղափոխությունն անտեսվում էր: Հիշյալ հետազոտություններում վերջիններս խուսափում էին կրոնը, որպես քաղաքական վերուժ դիտարկելուց և չէին թափանցում նրա բազմաթիվ բացահայտ ու քայքայված շերտերի խորքերը:

Իրանի իսլամական հեղափոխությունն ուներ համաշխարհային հեռանկարներ, սակայն որպես իրագործող ուժ ընտրել էր իրանական հասարակությունը: Այն որդեգրել էր հասարակության «ոչ աշխարհիկություն» ուղին և, կրոնը հասարակական կյանքի բոլոր ոլորտները մտցնելով, աշխատեց հասարակությանն ուղղորդել դեպի աստվածային արդարություն՝ քաղաքական և տնտեսական բոլոր կատույցների ու խնդիրների առումներով: Այս ուղին հակադարձ գործընթաց էր, որը լրջորեն հակադրվեց հետվերածննդյան շրջանի արևմտյան փոփոխություններին և վերջին հարյուր տարիների սոցիալիզմին: Իրանի իսլամական հեղափոխությունը հանդիսացավ և՛ Արևմուտքի, և՛ սոցիալիզմի համընդհանրացմանը հակադարձ գործընթաց:

Իհարկե, այս գործընթացը չի ներկայացնում որևէ ռազմավարական սպառնալիք, սակայն բարձրաձայնում է վերուժի գոյությունը, որն օժտված է բարեգութ և չսպառնացող յուրահատկությամբ: Այս գործընթացին սպառնալից բնույթ կան մկալագրություն տալիս են միայն Արևմտյան վերլուծաբանները, որոնցից մեկը, օրինակ, իր աշխատությունում գրել էր, թե Իրանում իսլամական արմատականության հզորացումը մեծ սպառնալիք է ոչ միայն Աֆղանստանի մարքսիզմին, այն մեծ վնաս կարող է հասցնել նաև ԽՍՀՄ-ի միջազգային հաջողությանն ու հեղինակությանը: Սա մի հնացած տեսություն է, որը ներկայացրել էր Քիսինջերը և որի համաձայն, Իրանը կամ պետք է հանդիսանար որպես տարածաշրջանում ԽՍՀՄ-ի զարգացման արգելք, կամ՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը կապող օղակ: Հնդափոխության հաղթանակից հետո, Ամերիկայի կողմից, որպես բացահայտ սաղրանք, ներկայացվեց ևս մեկ գործողություն:

Ի հեճուկս հեղափոխության ընթացքում շահի քանակին ցուցաբերած Քարրի առանց որևէ նախապայմանի կամ պահանջի ռազմական աջակցության և մի-

ջինստիական տարածաշրջանում ամերիկյան կարևորագույն ռազմական հենակետերից մեկի ոչնչացման, ինչպես նաև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից և դեռևս դրանից առաջ, Կուրբայի հեղափոխությունից հետո, տեղի ունեցան մի շարք այլ հեղափոխություններ, որոնք ուղղված էին աշխարհում Ամերիկայի գերիշխանության դեմ: Ռիչարդ Նիքսոնի անմիջական ջանքերով և արակցությամբ 1972 թվականին Իրանը վերածվեց Պարսից ծոցի տարածաշրջանի ամենահզոր ամերիկյան ռազմական հենակետերից մեկի, սակայն ժողովրդական և հասարակական բողոքի ալիքն ու վրդովմունքն այնքան հզոր էին, որ այս ռազմական պատրաստվածությունը ոչ մի դեր չկարողացավ խաղալ հեղափոխության տապալման գործում և համաժողովրդական շարժումը հաղթանակից: Ռազմական ուժի դեմ ներքին մակարդակով իրանցիների տարած հաղթանակը ժողովրդի ուժը դարձնում է վերուժի գործունի խորհրդանիշ: Աշխարհում հակադարձ համընդհանրացման հետագա գործընթացները, որի առավել վառ արտացոլումները տեսնում ենք իսլամական աշխարհում, ընկալելի են դառնում միայն կրոնի ուժի գերիշխանության տրամաբանության ներքո: Իրանի իսլամական հեղափոխության լուսատիվի առաջնորդի կողմից ճշգրիտ կանխատեսումներն ու ԱՄՆ-ին «մեծ սատանա» մականունով կոչելը, ԱՄՆ-ում նոր հասարակական շարժումների և լուրջ հետազոտությունների առիթ հանդիսացան: Քաղաքագետներն սկսեցին լրջորեն վերլուծել իշխանությունից դեպի անիշխանություն և անիշխանությունից դեպի իշխանություն նոր անցումները, որոնք նոր հավասարակշռություն են առաջացրել քաղաքականության մեջ և լուրջ մարտահրավերներ նետել իշխանության հավասարակշռության բոլոր չափանիշներին:

Ոչ արևելյան և ոչ էլ արևմտյան քաղաքականությունները Իրանի Իսլամական Հանրապետությունը, արևելյան և արևմտյան հակադարձ համընդհանրացումների գործընթացների սահմաններում, հանդիսանում է գիտական հետազոտությունների բազմաբնույթ արդյուր: Արևելյան և արևմտյան հակադրությունների առումով անչափ հետաքրքրական են նաև հետհեղափոխական ձեռքբերումներն ու զարգացումները: Այս ամենի արդյունքում, աշխարհում ձևավորվեց հակաիրանական մի նոր ալիք, որի ամենավառ դրսևորումն Իրաքի կողմից Իրանի Իսլամական Հանրապետության հանդեպ սանձազերծված ուրանյա պատերազմն էր, ինչպես նաև բազմաթիվ միջազգային մակարդակով տնտեսական սահմանափակումները և շրջափակումները: Իրականում արևելյան և արևմտյան իշխանությունների ավելի հզոր իշխանական նոր ուժի գոյությունը, որն իրականություն դարձավ Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի արդյունքում, անչափ զարմանալի էր աշխարհում գործող իշխանությունների և հատկապես սոցիալիզմի ու իրերալիզմի համատեղստում:



Իրանի իսլամական հեղափոխության և արդի հասարակական շարժումների ընկալումը պահանջում է մի նոր և ավելի լուսավոր տեղական-համաշխարհային հասարակագիտություն: Հասարակական շարժումների դիտարկումը տեղական-համաշխարհային մթնոլորտում, դրանց հակադարձ շարժումների, ինչպես նաև միջշարժումային ազգային-համաշխարհային կապի բննարկումը և շարժումների գույզադրված ասպեկտների վերհանումն առաջացնում են նոր հասարակագիտության ստեղծման անհրաժեշտություն, որը կլինի ավելի խորքային և լայնատարած: Կապերի միաժամանակյա համընդհանրացման շրջանում հասարակական կարևոր նշանակության և տարածական երևույթների ուսումնասիրումը հնարավոր չէ միայն ազգային կամ համաշխարհային տեսանկյունից, հակառակ դեպքում ուսումնասիրությունը կարող է համարվել միակողմանի և թույլ: Իրականում հակադարձ ազգային-համաշխարհային մթնոլորտում հասարակական շարժումների և գործող իշխանությունների ուսումնասիրությունը նոր հասարակագիտական ուղղություն է, որը զարգացման կարիք ունի:

Համընդհանրացման շրջանում Իրանի իսլամական հեղափոխությունը կրոնական և հասարակական այն կարևոր շարժումն էր, որը վերածվեց կրոնական հեղափոխության: Աշխարհահռչակ հասարակագետներ Կարլ Մարքսը, Էմիլ Դոբրինն ու Մաքս Վեբերը մարդկության ու աշխարհի ապագայի առումով հանդգնած էին, որ կրոնը բոլոր բնագավառներում և, հատկապես հասարակական կյանքում, դեպի անկում է գնում: Սակայն Իրանի իսլամական հեղափոխությունը հանդիսացավ համընդհանրացման հակադարձ գործընթաց, իրանական և ամբողջ իսլամական աշխարհում խորքային և առանցքային փոփոխություններ մտցնելով ապացույց, որ կրոնն աշխարհում գտնվում է վերակենդանացման փուլում: Ամբողջ աշխարհի հեղափոխությունների վերլուծություններն ու տեսությունները վկայում էին, որ հեղափոխության և հեղաշրջման պատճառ է հանդիսանում քաղաքական և տնտեսական հավասարակշռության խախտումը: Իրանում ամեն ինչ հակառակն էր: Կրոնը հանդիսացավ հասարակական այն կարևորագույն ուժը, որը միահամուռ պայքարի և հաղթանակի տարավ Իրանի ժողովրդին: Այս մեծ փոփոխությունից հետո, արևմուտքում սկսվեց կրոնապաշտության և հավատքի դեմ ակտիվ պայքար, որի արդյունքում զանազան մեթոդներով իսլամը ներկայացվեց որպես վայրագ կրոն, անաբեկչության ու պատերազմի հարուցիչ և, ցավոք, այդ երևույթները շարունակվում են նաև մեր օրերում:

Նախարան

2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո Սպիտակ տան քաղաքականության մեջ առկա րացասական տեսակետներն Իսլամի եւ Իրանի նկատմամբ ուժգնացան: Դեպքերը Միացյալ Նահանգներում հանգեցրին քաղաքական առկա երեք գլխավոր հոսանքների ազդեցության խիստ խորացմանը: Հոսանքներ, որոնք ԱՄՆ կառավարող շրջանակներում զգալի ազդեցություն ունեն: Գլանք են՝ նոր պահպանողականները¹, քրիստոնյա սինիստները² (ժայռահեղական բողոքականներ) եւ սինիստների լոբբիստական շրջանակները: Հետեւեալը Իրանի եւ Իսլամի հանդեպ Միացյալ Նահանգների տեսակետների որեւէ ուսումնասիրություն անիմաստ եւ դատարկ կլինի, եթե հաշվի չառնվի վերոիշյալ խմբերի կայրեղ դերը ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ: ԱՄՆ-ում Ռոնալդ Ռեյգանի նախագահության շրջանից ի վեր, սեպտեմբերի 11-ի դեպքերի շնորհիվ, դրանց ստեղծած նպաստավոր պայմանների բերումով, նոր պահպանողականներին հաջողվեց Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության մեջ կրկին ազդեցիկ դեր ստանձնել: Նրանք հավատացած էին, որ Միացյալ Նահանգներն աշխարհում «քարոզյալ խորհրդանիշ» է համարվում, ուստի պետք է բոլոր օրինազանց եւ շարքայան խորհրդանիշ երկրների դեմ ամենայն խստությամբ պայքար մղի: Նոր պահպանողականները սեպտեմբերի դեպքերից հետ ընդդեմ մահմեդական աշխարհի լայնածավալ հոգեբանական արշավանք սկսեցին: Աշխարհը բաժանելով երկու հակադիր՝ «քարոն եւ չարի» աշխարհների, նրանք նոր ժամանակաշրջանում Միացյալ Նահանգների առաքելությունը Միջին Արեւելքի երկրներում, այդ թվում Իրանում, ժողովրդավարության եւ քարոն խորհրդանիշի տարածում են համարում: Նրանք հավատացած են, որ ԱՄՆ-ը, օգտագործելով ստեղծված նոր առիթը, պետք է ընդդեմ այն երկրների, որոնք չեն քայլում Միացյալ Նահանգների հետ համընթաց, գործի դնի ուժի ու քարոզական բոլոր միջոցները, որպեսզի այդ երկրներում իշխող դարձնի ամերիկյան արժեքները: Նրանց կարծիքով Միացյալ Նահանգները, իր նպատակներն իրագործելու ընթացքում, կարող էր գործել միայնակ, առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բոլորատվության եւ առանց այլ տերությունների համաձայնությունը ձեռք բերելու

¹ Neo-conservetists
² Cristian Zionists

ուղղությամբ ջանքեր գործադրելու: Հենց այս տեսակետի հիման վրա էլ իրականացվեց Ալիյանստանի վրա հարձակումը:

«Նախահարձակողական պատերազմ»՝ հայեցակարգը չափազանց կարեւորվեց Կրտսեր Ջորջ Բուշի քիմի ռազմավարության մեջ: Այնուհետև Իրաքի վրա Պենտագոնի հարձակումով ու այդ երկրի գրավումով, փաստորեն, կատարելագործվեց Միացյալ Նահանգների «միակողմանիությունը»³ ինչը նշանակում էր, որ Պենտագոնի «արժիվները» հաղթել են պետրարտոդարության «աղավնիներին»: Նոր պահպանողականները սերտ հարաբերություններ ունեն Իսրայելի «Լիկուդ» կուսակցության եւ սիոնիստական շրջանակների հետ: Նրանք համոզված են, որ աշխարհում ահաբեկչության աղբյուրն իսլամն է, ուստի Ամերիկան պետք է միջոցներ ձեռնարկի արեւմտյան արժեքներին համապատասխան տարածաշրջանի մշակույթը փոփոխության ենթարկելու, այն բարեփոխելու ուղղությամբ: Այս առնչությամբ առաջարկվում է կիրառել ռազմական միջամտություն, իշխանափոխություն, զինված ուժերի կիրառում, դիվանագիտական միջոցների օգտագործում, ժողովրդավարության տարածման ուղղությամբ ջանքերի գործադրում, «ժողովրդավարացում»⁴ ամերիկյան տարրերակով: Հարկ է նշել նաեւ, որ աշխարհի տարբեր տարածաշրջաններում իր գործունեությունն օրինականացնելու նպատակով, Միացյալ Նահանգները մշտապես ձգտել է, Իսլամի (իսլամականության) վտանգը չափազանցելով, այն նախկին ԽՍՀՄ-ի սպառնալիքին համարժեք փոխարինող ներկայացնել:

Մյուս կողմից նոր պահպանողականները «բաղաբազանացված իսլամը» Միացյալ Նահանգների գլխավոր թշնամին են համարում եւ համոզված են, որ Իրանն է այդ գաղափարախոսության ներկայացուցիչը: Բացի այդ, ԱՄՆ-ում նշույն բաղաբազան հոսանքի մշակած «Ամերիկայի ազգային անվտանգության ռազմավարության» մեջ լուրջ սպառնալիք է համարվել եւ առանցքային տեղ է տրվել իսլամական վարչակարգն այլ երկրների համար օրինակ դառնալուն եւ Իրանի կողմնակն իշխանության գաղափարի տարածմանը: Հենց այդ պատճառով էլ նոր պահպանողականների համար լավագույն իրավիճակը համարվում է Իրանում իշխանափոխությունը կամ էլ առնվազն մինչև 2025թ. դրա էության փոփոխությունը: Նրանք թափախել են Սադամի վարչակարգերի ոչնչացումից հետո, տարածաշրջանում Իրանի գերտերություն դառնալը դիտում են իբրև Միացյալ Նահանգների համար գլխավոր վտանգ: Ուստի, ընդդեմ այդ սպառնալիքի, նոր պահպանողականներն անհրաժեշտ են համարում Միացյալ Նահանգների

ռազմական ներկայությունը Միջին Արեւելքում, միաժամանակ Իրանի վրա շարունակական ճնշումների գործադրումը:

Սեպտեմբերի 11-ից հետո Ամերիկայի իշխող շրջանակների վրա, նոր պահպանողականներից գատ, զգալի ազդեցություն են ունեցել «արմատական բողոքականները», որոնք իրենց «արմատեղություն» մտածելակերպի բերումով կոչվել են «քրիստոնյա սիոնիստներ»: Վերջիններս, որոնց արմատները գտնվում են «Ավետարանական եկեղեցում», հավատացած են, որ միայն Հիսուսի հայտնությունը եւ նրա հրահանգների կատարումը կարող են Միացյալ Նահանգներին փրկել ներքին վիճակից եւ քարոյ խորհրդանիշը վերադարձնել Ամերիկայի հասարակությանը: Այս խումբն ամերիկյան հասարակության փրկությունը տեսնում է Իսրայելին հովանավորելու մեջ, քանի որ համոզված է, որ Քրիստոսը հայտնվելու է Երուսաղեմում՝ Ալակա մզկիթում, ուստի գտնում են, որ պետք է նրա հայտնվելու համար նախապատրաստական աշխատանքներ կատարել: «Քրիստոնյա սիոնիստների» կարծիքով Իսրայելն իրենց ցանկությունների՝ Քրիստոսի հայտնության, իրականանալու հարցում խիստ կարևոր դեր ունի: Նրանց համոզմամբ հակաիսլամականությունը, իսլամական աշխարհի հետ տարածայնությունների ծավալումը, մահմեդականների եւ հրեաների ու քրիստոնյաների միջև հակամարտությունների զարգացումն այն դեպքերի թվում են, որոնք նախորդել են Քրիստոսի երկրորդ գալստյանը: Այս առումով Իսրայելի իշխանությունները եւ սիոնիստական գաղափարները զգալիորեն կարող են աջակցել քրիստոնյա սիոնիստներին: Այլ կերպ ասած՝ մահմեդականների եւ հրեաների միջև ապագա պատերազմը, որը բռնկվելու է Իսրայելի կողմից Ալակա մզկիթի ոչնչացումով, կլինի «պահպանողական քրիստոնյաների» եւ «հրեա սիոնիստների» մերձեցման գլխավոր գործոններից:

Քրիստոնյա սիոնիստների տեսանկյունից մահմեդականները հրեաների եւ քրիստոնյաների ընդհանուր թշնամին են եւ որ նրանց միջև առկա հակասությունների մշտապես պետք է սաստկացնել: Այն, որ Ամերիկան մահմեդական պաղեստինցիների դեմ իրականացվող ցեղասպանության հարցում չի հակադրվում Իսրայելին եւ զինում է միջուկային ու սովորական զենքերով, ինչ-որ տեղ բխում է արմատական բողոքականների համոզմունքներից: Նշյալ խմբի կարծիքով՝ իսլամական իշխանությունները, ինչպես, օրինակ՝ Իրանը, Սաուդյան Արաբիան եւ ... չպետք է տարածաշրջանային գերտերություն դառնան, որպեսզի տարածաշրջանում ու աշխարհում իսլամական գաղափարախոսության ընդարձակվելու հնարավորություն չընձեռնվի:

⁶ Armagedone

³ Preemptive war
⁴ Unilateralism
⁵ Democratization

«Միոնիստական լոբբիզմը» ԱՄՆ արտաքին քաղաքականության վրա ներգործող ամենահզոր ու ամենաազդեցիկ լոբբիստական խումբն է համարվում. իսկ սեպտեմբերի 11-ից հետո նրա ազդեցությունն այդ երկրի դիվանագիտական գերատեսչությունում էլ ավելի է ընդարձակվել: Միոնիզմի լոբբիստական կազմակերպություններից ամենակարևորը Ալփակն⁷ է (Ամերիկայի և Իսրայելի ընդհանուր հարցերի կոմիտե), որը խիստ կարևորում է հոգուտ Իսրայելի Միացյալ Նահանգների լայնածավալ, ակտիվ և կոպիտ միջամտությունները տարածաշրջանում: AIPAC-ը շեշտում է, որ ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը Միջին Արևելքում և Պարսից ծոցում անհրաժեշտ է հակախաղաղական իշխանություններն արաբական երկրներում փոխելու համար, քանզի ահաբեկչության արձատյանը տարածաշրջանում պետք է վերացվեն: Ալփակնականները հավատացած են, որ քաղաքականացված իսլամը Թեյ Ալփիի և Վաշինգտոնի քաղաքական գոյության գլխավոր սպառնալիքն է և, որ Իրանի վարչակարգն ստանձնել է իսլամական աշխարհի քաղաքական առաջնորդությունը: Այն, որ սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ընդդեմ Իսլամական Հանրապետության պայքարն ակնհայտորեն ուժեղացել է, վկայում է Պենտագոնում և Սպիտակ տանը սիոնիստական հզոր լոբբիստական խմբի առկայության մասին:

Համանայնդեպս, թվում է, թե նոր պահպանողականների, պահպանողական քրիստոնյաների և սիոնիստական լոբբիստների եռանկյունը խիստ կարևոր դեր ունի Իրանի և իսլամի նկատմամբ Միացյալ Նահանգների որդեգրած դիրքորոշումների և ռազմավարությունների հարցում: 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից մինչև 2003թ. մարտը՝ Իրաքի գավթումը, կարելի է համարել Իրանի և իսլամի դեմ պայքարում մշյալ եռամիասնության գագաթնակետը:

1. Նոր պահպանողականները

Նոր պահպանողականները սեպտեմբերի 11-ից հետո Միջին Արևելքի նկատմամբ Միացյալ Նահանգների ռազմավարության մշակման հարցում նշանակալից դեր են ունեցել: Սեպտեմբերի 11-ի դեպքերը պատճառ դարձան, որպեսզի նոր պահպանողականներն Ամերիկայի արտաքին քաղաքականության ասպարեզում էլ ավելի հզորացնեն իրենց դիրքերը: Նրանց կարծիքով՝ ամերիկյան արժեքները պետք է աշխարհում իշխող դառնան, իսկ դրանց կյանքի կոչելու հարցում կիրառելի են անխտիր բոլոր միջոցները: Սեպտեմբերի 11-ից հետո նրանք Միացյալ Նահանգների իշխանություններին խորհուրդ տվեցին որդեգրել քաղաքական միակողմանի ուղղվածություն: Նոր պահպանողականները, Նյու

⁷ AIPAC (American Israel Public Affairs Committee)

Յորթում Համաշխարհային առևտրի կենտրոնի երկվորյակ աշտարակների փլուզումից հետո, իշխանություններին առաջարկեցին բռնություն կիրառել միջազգային ասպարեզում «օրինազանց», «չարիքի» երկրների դեմ պայքարում: Նոր պահպանողականների կարծիքով՝ սեպտեմբերի 11-ը Միացյալ Նահանգների համար պատեհ առիթ է ստեղծել, որպեսզի իր հեգեմոնիան, գերիշխանությունը հաստատի աշխարհում և ամրագրի միաբեռն աշխարհակարգը: Այս տեսակետի կողմնակիցները, որ հայտնի են «նոր պահպանողականներ» անունով (օրինակ, Փոլ Վոլֆովիցը, Ռիչարդ Փեյրը, Գուզլաս Ֆիթը, Լույսի Լիթին, Էլիոթ Աբրամսը, Ջոն Բոլթոնը, Մայքլ Լըդին, սենատոր Սամ Բրաուն Բեկը, Մարկ Գրեյթը, Վիլիամ Զրիսթոլը, Գեյվիդ Ֆրանը, Գերի Շմիթը, Նորման Փոլ Նուրվցը և ...) սեպտեմբերի 11-ը դիտարկում են Վաշինգտոնի համար իբրև ճակատագիր, իբրև մեծ հնարավորություն: Նրանք, համայնավարական համակարգի փլուզումից հետո, Ամերիկայի հզորագույն մրցակիցը և արեւմտյան ազատական ժողովրդավարության գաղափարի համար ամենամեծ սպառնալիքը համարում են քաղաքականացված իսլամը: Ուստի, ըստ այդ գաղափարի կրողների՝ կամ Իրանի իսլամական վարչակարգը պետք է էսպես փոխվի, կամ էլ իշխանափոխություն տեղի ունենա: Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ նոր պահպանողականների տեսակետների փոփոխություններն ակնհայտորեն տեսանելի են Մայքլ Լըդինի, սենատոր Սամ Բրաուն Բակի և ... արտահայտած մտքերում: Վաշինգտոնում, ծայրահեղական մտածելակերպ ունեցող այդ խումբը, 2001թ. սեպտեմբերի 11-ի ժամանակաշրջանից մինչև Իրաքի գրավումը (2003թ. մարտը) Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ոլորտում իրենց դիրքերը խիստ ուժեղացել էին: Սակայն, թվում է, թե Իրաքը գավթելուց հետո, այդ երկրի վերակառուցման և վերանորոգման ժամանակահատվածում առ այսօր լուրջ անհաջողություններ կրելով, Սպիտակ տանը զգալիորեն կորցրել են իրենց իշխանությունն ու ազդեցությունը: Այսուհանդերձ, խնդրո առարկա մտածելակերպի կողմնակիցները «հանրային դիվանագիտության»՝ կիրառումը դիտում են իբրև Միջին Արևելքի իսլամական երկրներում լավագույն տարբերակ: Նրանք կարծում են, թե տարածաշրջանի արժեքների համանմանեցումն արեւմտյան, մասնավորապես ամերիկյան արժեքներին, խիստ ազդեցիկ գործոն է, որը նշանակալից դեր ունի իսլամ-արձատյակականության տկարացման հարցում, ուստի կարգելակի քաղաքականացված իսլամի հզորացմանը տարածաշրջանում: Նոր պահպանողականները նշում են, որ այդ փոփոխությունը պետք է տեղի ունենա հասարակության հենքի վրա, «կրթությունը» համարելով լավագույն հիմքը, ինչի վրա իրենց ցանկացած արեւմտյան քաղաքական մշա-

⁸ Public Diplomacy

կույրի «ժողովրդավարացումը» Միջին Արևելքում կարելի է իշխող դարձնել երկարաժամկետ ընթացքով:

1-1. Նոր պահպանողականների քաղաքական հայացքները

Նոր պահպանողականները, որոնք հայտնի են «բազներ» կամ «արծիվներ» անվամբ, համոզված են. «Աշխարհի առաջ երկու ճանապարհ կա. կամ լիովին ենթարկվել Ամերիկային, կամ՝ ընկղմվել խառնաշփոթի ու խռովությունների մեջ»: Ըստ «արծիվների», համաշխարհային արժեքները, դրանք Ամերիկայի շահերն են, ուստի այդ շահերը պահպանելու նպատակով պետք է պաշտպանել նշյալ արժեքները: Նրանք ընդգծում են, որ Քլինթոնի, Քլայտերի ու նրանց նմանների քաղաքականությունը եւ Քիսինձեյրի դիվանագիտական ուղիները լոկ ժամանակի վատնում են, ուստի ի գորու չեն ԱՄՆ շահերը պաշտպանել: Մինչդեռ Ռոնալդ Ռեյգանի նման մարդկանց քաղաքականությունն ընդունելի է օրինակելի են համարում, ովքեր ժամանակ չկորցնելով ու միջոցների մեջ խտրություն չդնելով, անգամ պատերազմի գնով պաշտպանել են ԱՄՆ շահերը: Նրանց տեսակետով՝ բազմաբեռն՝ աշխարհակարգն անընդունելի է, իսկ համաշխարհային արժեքները՝ անմիաստ: Երկբեռն այդ ճակատամարտում Ամերիկան մի կողմից հակադրվում է համաշխարհային արժեքներին, մյուս կողմից՝ ապակազմված եւ վտանգավոր աշխարհին: Նոր պահպանողականների տեսանկյունից ամեն ինչ բաժանվում է երկու մասի՝ «բարու» եւ «չարի»: Ըստ նրանց, Վաշինգտոնը «բացարձակ բարու» խորհրդանիշի օրինակն է, մյուս կողմում «բացարձակ չարն» է, ուստի երկակի այդ չափանք կամ երկբեռնությունը չեն կարող փոխկապակցված լինել: Նրանք համոզված են, որ այդ վիճակը երկարատեւ չի կարող լինել, հետեւաբար, եթե Միացյալ Նահանգները գործի չանցնի, ապա հակարժակի է գալու:

Նոր պահպանողականները հավատացած են նաեւ, որ սեպտեմբերի 11-ի դեպքերը լավագույն առիթ են ստեղծել իրենց գաղափարների մտղկման, հասարակական կարծիքին եւ Մալիտակ տան քաղաքական գործիչներին ընդունելի դառնալու համար: Իրականում մինչեւ սեպտեմբերի 11-ի դեպքերը նոր պահպանողականները ծայրահեղական հետազոտողների համբավ ունեին, ովքեր առանձնակի ուշադրության չէին արժանանում: Նրանք Ամերիկայի ժողովրդին բացառիկ են համարում, որը պատմական առաքելություն ունի: Ենչտեղով, որ այդ առաքելությունն իրականացնելու նպատակով անհրաժեշտ են որոշակի քայլեր. ա) ԱՄՆ-ի վերազինումը,

բ) ԱՄՆ-ի հետ այլ երկրների մրցակցության կանխումը եւ պայքարը նրանց դեմ,

գ) աշխարհի մակարդակով բռնապետական վարչակարգերը բիրախ դարձնելը: Նոր պահպանողականները դեմ են «փոխզիջման մշակույթին», շեշտելով, որ չարագործներին պետք է վերացնել, «դեմին» փաղաքշելու փոխարեն պետք է ոչնչացնել նրան: ԱՄՆ-ում քաղաքական նշյալ հոսանքն ընդգծում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն աստիճանաբար պետք է կորցնի հզորությունն ու ազդեցությունը, քանզի Միացյալ Նահանգների համար ընդունելի է լոկ այնպիսի ՄԱԿ, որը Կարմիր խաչի օրինակով միայն մարդասիրական միջոցառումներ է իրականացնում: Նրանք նշում են, թե ընդհանրապես Անվտանգության խորհրդի գոյությունն է անհնաատ, քանզի նրա անդամներից Չինաստանը բռնապետական է, Ռուսաստանը լի է գլխացավանքներով, իսկ իդեալիստական Ֆրանսիան ի գորու չէ միջազգային բազում լուրջ խնդիրների համար պատասխանատվություն կրել: Նրանք ընդգծում են, թե ՄԱԿ-ն ընդամենը խամաճիկ է, որն այսօրվա աշխարհում չի կարող դերակատար լինել, ինչպես որ ի վիճակի չեղավ Ռուսնդայում ու Բուլղաններում որեւէ դեր ստանձնել: Հետեւաբար պետք է շուտափույթ կերպով ձերբազատվել ՄԱԿ-ի գոյությունից: Նոր պահպանողականների կարծիքով՝ միաբեռն աշխարհում միջազգային կազմակերպությունների համար պետք է ընդունել նոր սահմանումներ: Այսօրվա աշխարհը երեկվանը չէ, ուստի անհրաժեշտ է ստեղծել աշխարհում առկա նոր պայմաններին համապատասխան գործող կազմակերպություններ, ինչը, անշուշտ, քրտնաջան աշխատանք եւ երկար ժամանակ է պահանջում: Քաղաքական այս հոսանքը Ֆրանսիային դիտում է իբրեւ հին աշխարհակարգի ներկայացուցիչ եւ Եիրակին խորհուրդ է տալիս ընթրնել ու ճանաչել նոր աշխարհակարգը: Նրանք, Փարիզի բազմաբեռն աշխարհակարգի տեսության պաշտպանությունը ծաղրոմձանակի ենթարկելով, նույն տոնով հարցնում են՝ Ֆրանսիան ո՞ր բազմաբեռնությունն ի նկատի ունի: Նոր պահպանողական խմբի անդամներից շատերն ազգությամբ հրեա են, ուստի թվում է, թե սույն փորրաթիվ, սակայն շատ հզոր խմբի գլխավոր պարտականությունն Իսրայելի շահերի պաշտպանությունն է:

Հաշվի առնելով վերը նշվածը, նոր պահպանողականների հիմնական տեսակետները կարելի է համարել.

1. Նոր պահպանողականների տեսանկյունից բազմաբեռն աշխարհակարգը տեղ չունի, իսկ համաշխարհային արժեքները չեն կարող իմաստավորված լինել: Նրանք պնդում են, որ Վաշինգտոնը «բացարձակ բարու» օրինակը, խորհրդանիշն է, որը պետք է ողջ աշխարհում հաստատի իր տիրապետությունը:

2. Նրանք գտնում են, որ Ամերիկան պետք է որդեգրի միջամտության, ակտիվ, միատողվածության քաղաքականություն, ինչի նպատակն այդ երկրի իշ-

⁹. Multi Lateral

խանության տարածումն է, աշխարհում հնարավոր մրցակիցների ճնշումը եւ դաշնակիցների, մասնավորապես՝ Իսրայելի հզորացումը, ռազմական պայքարը բշտամիների դեմ եւ Միացյալ Նահանգների կայսրության ստեղծումը:

3. Նոր պահպանողականներն աշխարհի բաժանում են երկու՝ «բարու» եւ «չարի» բեռնի, այլ կերպ՝ «սեւի» եւ «սպիտակի»: Կամ էլ «քաղաքակրթի» ու «ոչ քաղաքակրթի»: Նրանք հավատացած են, որ «չարիքի» դեմ պայքարի ծախսերը քաղմակի անգամ զիջում են նրա դեմ չպայքարելուն:

4. Ահաբեկիչների, չարիքի երկրների հետ սակարկումն ապարդյուն եւ անիմաստ է, ուստի լավագույն տարրերակը նախահարձակ լինելը եւ հանկարծակիի բերելն է:

5. Ջանքեր են գործադրում տեսականորեն ԽՍՀՄ-ի վտանգը իսլամով փոխարինելու ուղղությամբ: Այդ պատճառով իսլամին համարում են չարիք արտադրող ու տարածող, «Թուրքիային» ներկայացնելով իբրեւ իսլամական աշխարհի համար չափան: Ուստի Իսրայելի գոյությունն իսլամական երկրների սանձահարման առնչությամբ համարում են անհրաժեշտություն:

2-1. Իսլամը նոր պահպանողականների տեսանկյունից

Նոր պահպանողականներն ամերիկյան ժողովրդավարությունը համարժեք են համարում «բացառակ բարուն», որը մշտապես հարվածի, հարձակված սպառնալիքի տակ է գտնվում: Նրանք նշում են, որ մինչև Խորհրդային Միության փլուզումը հենց նա էր բարության բշտամին, այսօր՝ «արմատական իսլամը», իսկ վաղը, բացառված չէ նաեւ, որ հզորացած Արեւմտյան Եվրոպան սպառնա այդ բարությանը: Սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո «մարտնչող իսլամն» է փոխարինում նախկին Խորհրդային Միությանը: Նոր պահպանողականները «մարտնչող իսլամ» տերմինը գերադասում են «ահաբեկչությունից»: Ուլիխամ Բոհենը այն պահպանողականների թվին է դասվում, ովքեր պատերազմական ռազմավարության ասպարեզում հնուս մասնագետներ են համարվում: Հենց նա էր, որ 2001թ. սեպտեմբերյան դեպքերից հետո, առաջին անգամ «Չորրորդ աշխարհամարտ» տերմինը գործածության մեջ դրեց: Ըստ Բոհենի, Երրորդ աշխարհամարտը դա Սառը պատերազմն է, որն ավարտվել է Միացյալ Նահանգների հաղթանակով: Իսկ Չորրորդ համաշխարհային պատերազմը տեղի կունենա ԱՄՆ-ի, նրա դաշնակիցների եւ իսլամի միջեւ: Այդ պատերազմը, փաստորեն, հաքիմգրոնյան միջկրոնական պատերազմի հեռանկարի նկարագրությունն է:

CIA -ի (Կենտրոնական հետախուզական վարչություն) նախկին տնօրեն Ուելսին, որը նոր պահպանողականներից է, ընդգծում է, թե Չորրորդ աշխարհամարտն սկսվել է իրաքյան պատերազմով, իսկ Բաղդադի գրավումը՝ այդ շրջապ-

կան բախումների սկիզբն է: Նրա կարծիքով՝ այս պատերազմի ընթացքում տալիսաշրջանում արաբական որոշ վարչակարգեր պետք է խորտակվեն, որպեսզի «իսլամը» դրանցում քարգավաճելու, ծաղկելու հնարավորություն չստանա: Այս առումով, Իրաքը ոչ վատթարագույն վարչակարգն է, ոչ էլ բոլորից առավել է հովանավորել ահաբեկչությունը, այլ՝ ճշյալ շրջապակյան գործընթացում «պարզագույն նպատակն է»: Գա է պատճառը, որ Չորրորդ աշխարհամարտում իսլամական աշխարհի թուլացումը նրանց համար գերագույն նպատակ է:

3-1. Նոր պահպանողականների տեսանկյունից Իրանի մասին

Թեիրանի նկատմամբ նոր պահպանողականների քաղաքականության մեջ ատկա է երկու տեսակետ.

1. Նոր պահպանողականների մի մասը դեմ է Միացյալ Նահանգների ռազմական գործողություններին Իրանում եւ այն Իսլամական հեղափոխության դեմ պայքարի լավագույն միջոց չի համարում: Նոր պահպանողականների այս թեւը, որ հայտնի է «ազգայնական նոր պահպանողականներ» անվամբ, հանդգնած է, որ Իրանը ներքին քայքայումով փլուզվում է, ուստի այդ երկրի դեմ ռազմական գործողությունների անհրաժեշտություն չկա: «Ազգայնական նոր պահպանողականների» թվին են պատկանում Գիլ Չեյնին, Ռամաֆելդը, Ջիմ Ուելսին: Վերջինս 2002թ. հոկտեմբերի 1-ին Ֆիլադելֆիայի Արտաքին քաղաքականության կենտրոնում ունեցած ելույթում նշել է. «Քաղաքացիների բողոքի ցույցերը ընդդեմ հոգեւորականների իշխանության եւ խռովությունների աճն ապացուցում են, որ Իրանի վրա հարձակվելու անհրաժեշտություն չկա»:

Ռամաֆելդի եւ Միացյալ Նահանգների կառավարական շրջանակներում ռազմատենչ այլ գործիչների համոզմամբ, իրանցիներից շատերն են իսլամական վարչակարգի խորտակումը ցանկանում: Իսկ Պենտագոնի խորհրդականների կոմիտեի նախագահի կարծիքով. «Իրանում հասարակությունն ակնհայտորեն հոգնել է կառավարությունից եւ ես հավատացած եմ, որ սա Իրանի իսլամական վարչակարգի փլուզման սկիզբն է»:

Պաշտպանության նախարար Ռամաֆելդը, ի պատասխան մի լրագրողի այն հարցի, թե ինչպե՞ս եք լուծելու Իրանի խնդիրը, նշել է. « Վերջին հաշվով Իրանի ժողովուրդը պետք է փոփոխության ենթարկի երկրում տիրող իրավիճակը: Իրանցիները ճնշվում են: Նրանք զրկված են այն իրավունքներից, որոնցից մարդիկ օգտվում են աշխարհի այլ երկրներում, ուստի կարծում եմ, թե այդ երկրի ղեկավարությունն առաջիկայում դժվարին իրավիճակի մեջ է հայտնվելու»:

2. Նոր պահպանողականների երկրորդ թեւը, որը «երիտասարդ նոր պահպանողականներ» է կոչվում, հորդորում է Իրանի դեմ «ռազմական գործողություն-

ներ» իրականացնել: Փոլ Վոլֆովիցը եւ Ռիչարդ Փերլը¹⁰, ովքեր սերտ կապեր ունեն սիոնիստական շրջանակների, ինչպես օրինակ, Իսրայելի «Լիկուդ» կուսակցության հետ, հավատացած են, որ Իրանում բարեփոխումների գործընթացն անարդյունավետ է, եւ որ այդ երկրում առկա քաղաքական երկու հոսանքներն էլ մույն քաղաքականությունն են որդեգրել Միացյալ Նահանգների համար կարեւոր հարցերի, այն է՝ Իսրայելի, զանգվածային ոչնչացման զենքերի եւ ատարկչության նկատմամբ:

ԱՄՆ պաշտպանության նախարարության նախկին խորհրդական Ռիչարդ Փերլը երտադեմոստ տեղի ունեցած համաժողովին իր ելույթում շնորհավորել է Արիել Շարոնին, հավանության արժանացնելով Դամասկոսի մոտակայքում գտնվող օրնեկտների վրա Իսրայելի օդանավերի հարձակումը: Միաժամանակ Ամերիկայից պահանջել է, որ հարձակվի Իրանի, Լիբանանի եւ Սիրիայի վրա: Ըստ նրա, Իրաքի գրավումից հետո, Միջին Արեւելքի ողջ տարածաշրջանի դեմքը լիովին փոխելու նպատակով, հիշյալ երեքը հենց այն երկրներն են, որոնցում հարկադրաբար պետք է տեղի ունենա իշխանափոխություն:

Իսկ 2002թ. հունիսին ԱՄՆ փոխնախագահ Դիլ Չեյնին հայտարարեց. «Իրաքյան պատերազմը պլատֆորմ էր ամերիկյան արժեհամակարգին ընդունելի արժեքներով Միջին Արեւելքում համակողմանի փոփոխություններ իրականացնելու համար»:

Իրանի դեմ ռազմական գործողությունների իրականացման կողմնակից է նաեւ «Բրոքինգ» հետազոտական կենտրոնի վերլուծաբան Ռաուլ Գրեբբը: Նա նշել է, որ ԱՄՆ-ի ռազմական ներխուժումը այդ երկիր, ընդդեմ իշխանությունների ասպտամբության պատճառ կդառնա, իսկ վերջիններին հավատարիմ ուժերն ի գորտ չեն լինի ճնշել խռովությունները: Ըստ նրա, «Ամերիկյան պետք է հովանավորությունը կենսական նշանակություն ունի նրանց համար, ովքեր ձգտում են կործանել իշխող վարչակարգը»:

Պենտագոնի ավագ խորհրդականներից Ջորջ Ֆրիդմանը նշում է. «Իրանի վրա հնարավոր հարձակման ժամանակ վերապահումներ չենք ունենա եվրոպացիների տեսակետներից»:

Թվում է, թե Իրանի վրա հարձակվելու խնդիրը, ամերիկացի պաշտոնատարների եւ վերլուծաբանների շրջանակներում, հազվադեպ է քննարկման առարկա դառնում: Սակայն նշյալ փաստերը ԱՄՆ-ում սիոնիստական շրջանակների լուրջ ազդեցության մասին են վկայում, որոնք Իրանի Իսլամական Հանրապետությունը դիտում են իրեն Իսրայելի քաղաքական գոյության մեծագույն վտանգ:

¹⁰ Richard Perle

2.Քրիստոնյա սիոնիստներ

Ամերիկյան բողոքականների շրջանակներում վերջին մեկ դարում չափազանց հզորացել է նոր՝ քրիստոնյա սիոնիստների հոսանքը: Նորաստեղծ այդ ուղղությունն «ավետարանի քարոզիչներն» է: Երկրորդ աշխարհամարտից առաջ արմատականի համբավ ունեցող նորեղուկ այդ ուղղության կարգախոսն էր վերադարձ դեպի Ավետարանի արժեքները: Նրանց նպատակը հասարակության վերափոխումը, մշակութային խորքային փոփոխությունները եւ Միացյալ Նահանգների իշխանության ուղղվածությունը Ավետարանի հիմունքների վրա տեղափոխելն էր:

Այս խումբը նպատակաճղված է Ավետարանի օրենքների հիման վրա վերափոխել Ամերիկայի հասարակությունը, որպեսզի «հասարակության բարոյությունը» ամրապրվի «հասարակության չարիքի» փոխարեն, ինչն իշխող է Ամերիկայի հասարակության մեջ: Նրանց համոզմունքների համաձայն՝ «հասարակության չարիքի» խորհրդանիշները, օրինակ՝ արհեստական վիժումը, համասեռականությունը, ֆեմինիզմը, սեքսուալ բռնությունն ամերիկյան ԶԼՄ-ներում իրենց տեղը պետք է զիջեն «հասարակության բարոյությանը», այն է՝ ավանդական ընտանիքին, դպրոցներում աղոթելուն, քարկոծումը օրինականացնելուն, անառակությունը, համասեռականությունը եւ... հանցանք համարելուն:

«Ավետարանի քարոզիչները» աղանդներից որեւէ մեկին կամ բողոքական եկեղեցուն կից հոսանք չէ, այլ վերջինիս բոլոր աղանդներն անդամագրված են նշյալ հոսանքին: Նրանց նպատակներից է նաեւ լայնածավալ քարոզչության միջոցով քրիստոնյա դարձնել ոչ քրիստոնյա ազգերին: Ամերիկացի հայտնի քարոզիչներ Բիլլի Գրահանը¹¹, Ջերրի Ֆավելը¹², Փեթ Ռոբերտսոնը¹³, Հալլ Լինդեսին¹⁴ եւ Մայք Էվանսը¹⁵ այս հոսանքին են պատկանում, ովքեր համաշխարհային ճանաչում եւ Սպիտակ տան ու Պենտագոնի գործիչների վրա զգալի ազդեցություն ունեն:

Քրիստոնյա սիոնիստների առանձնահատկություններից է սիոնիզմի հանդեպ մղեռանդությունն ու անվերապահ հավատը: Սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո արմատական բողոքականների դերը Միացյալ Նահանգների քաղաքական ղեկավարության ոլորտում զգալիորեն բարձրացել է: 2003թ. ապրիլի 9-ին, այս առնչությամբ, Միջին Արեւելքի եկեղեցիների խորհրդի քարտուղար Ռիալ

¹¹ Bill Graham

¹² Jerry Falwell

¹³ Pat Robertson

¹⁴ Hall Lindsey

¹⁵ Mike Evans

Չաջուն Լիբանանում հայտարարել է, որ քրիստոնյա արձատականների կամ քրիստոնյա սիոնիստների գաղափարախոսության ազդեցությունն ակնհայտ է Սպիտակ տան և Պենտագոնի գերակշիռ մասի վրա:

2-1. Քրիստոնյա սիոնիստների գաղափարական հիմունքները

1. Հավատ Քրիստոսի երկրորդ գալստյան և «հին ժամանակի ավարտի»¹⁶ նկատմամբ, որոնք համարվում են իբրև հասարակության բարեփոխման միակ ուղին:

2. Նրանց կարծիքով՝ Քրիստոսի երկրորդ գալստյան համար անհրաժեշտ նախապայմաններ են համարվում հրեաների մի տեղ հավաքվելն ու Իսրայելի պետության հիմնադրումը և հրեա ցեղի հին տաճարների վերականգնումը: Ուստի, հստակ կարելի է նշել, որ Իսրայելին հովանավորելու և նրա հետ սերտ կապեր հաստատելու քրիստոնյա սիոնիստների գլխավոր գործոնը կրոնն ու կրոնական դրոպապատճառներն են: Ըստ նրանց, պետություն և իշխանություն ունենալը Իսրայելի իրավունքն է, իսկ պաղեստինցիներն իրավասու չեն պետություն ձևավորելու, քանզի նրանց տեսանկյունից Աստված Իսրայելի երկիրը նվիրել է Իսահակի որդիներին (քրիստոնյաններին ու հրեաներին) և ոչ թե Իսմայիլի՝ ովքեր մահմեդական են:

3. Քրիստոսի երկրորդ գալստյան համար անհրաժեշտ է յոթ փուլ: Այժմ 6-րդ փուլն է, որը կոչվում է եկեղեցի: 7-րդ փուլը «հին ժամանակի ավարտն» է և տեսելու է 7 տարի: Այս փուլում տարածում է գտնելու հակաքրիստոնեությունը և ի հայտ է գալու հրեա սուտ փրկիչ, ով Միջին Արևելքում խաղաղություն հաստատելու հավակնություն կունենա: «Ժամանակի ավարտի» փուլի երկրորդ կեսում հակահրեականությունը տարածում կգտնի և դրանով մարդկության մեղքերի հավաքածուն կդառնա կատարյալ: Այդ ժամանակաշրջանում Երուսաղեմը չար ուժերի շրջապատման մեջ է հայտնվելու և վերածվելու է ռազմական քառերանքի, այն է՝ «Արմազեդոնի»:¹⁷ Դրանից հետո Քրիստոսը երկիր է վերադառնալու՝ ոչնչացնելով չար ուժերին և հազար տարի իշխելու է Երկրի վրա:

4. ՄԱԿ-ի և նրա գլխավոր քարտուղարի գործունեությունը քրիստոնյա սիոնիստները դիտում են իբրև դեպի գլխավոր ճակատամարտ գնալու ընթացք դանդաղեցնող քայլ, ուստի դատապարտում են այն:

5. Քրիստոնյա սիոնիստների համոզումներն իրենց են միջազգային մակարդակով կրոնական ազատությունները: Ընդ որում, քրիստոնյաները կարող են մահմեդականություն ընդունել և ապրել մահմեդականների հետ: Քանզի, ի վերջո մահ-

¹⁶ End Time
¹⁷ Armageddon

մեղականներին էլ քրիստոնյա են դարձնում, նրանք առավելապես ընդունում են իսլամի սուֆիստական և դեբվիչական ուղղությունները:

6. Քրիստոնյա սիոնիստները շեշտում են, որ Քրիստոսի երկրորդ գալստից առաջ աշխարհում խաղաղությունն անհնար է: Հետեւաբար քրիստոնյաները Վիսուսի երկրորդ գալստի արագացնելու նպատակով պետք է աշխարհի ոչնչացման, արմազեդոնյան ճակատամարտի համար նախադրյալներ ստեղծեն:

7. Հրեաները Երուսաղեմում պետք է հիմնահատակ ավիրեն մահմեդականների համար սքրավայր համարվող երկու՝ Ալակա և Սախրա մզկիթները և դրանց տեղում կառուցեն Մեծ տաճարը: Քրիստոնյա սիոնիստների համոզմամբ, Իսրայելի Միացյալ Նահանգների ու Մեծ Բրիտանիայի աջակցությամբ ոչնչացնելու է նշյալ երկու մզկիթները և կառուցելու է Մեծ տաճարը, ինչը նրա սուրբ առաքելությունն է: Քրիստոսի իշխանության կենտրոնանիստը Մեծ տաճարն է լինելու:

Քրիստոնյա սիոնիստները նշյալ հավատամքի հիման վրա գտնում են, որ 2000թ.-ից հետո մինչև 2007թ. Պաղեստինում բնակվող ժայռահեղական հրեաների պետք ավիրեն Ալակա և Սախրա մզկիթները և դրանց տեղը կառուցեն Մեծ տաճարը: Նրանց կարծիքով սիոնիստների կողմից այդ մզկիթների ոչնչացմամբ սկսվելու է Արմազեդոնի պատերազմը:

2-2. Քրիստոնյա սիոնիստների հայացքներն իսլամի հանդեպ

Մեպտեմբերի 11-ից հետո իսլամի և մահմեդականների նկատմամբ անհարգալից, վիրավորական վերաբերմունքը դարձել է քրիստոնյա սիոնիստների քննարկումների անբախտելի մասը: Արմազեդոնի հարցում նրանց համոզումներն իրենց բխող այդօրինակ վարվելակերպը խոսում է արմատական բողոքականների և հրեա սիոնիստների ու Իսրայելի քաղաքական շրջանակների հետ չափազանց սերտ կապերի մասին: Ծայրահեղական քրիստոնյաներն իրենց գլխավոր առաքելությունը համարում են Արմազեդոնի համար նպատակաւոր հող և նախադրյալներ ստեղծելը: Այդ է պատճառ, որ նրանք հրեաների և քրիստոնյաների ընդհանուր, գլխավոր բշխման համարում են մահմեդականներին, վերջիններիս դիտելով իբրև Քրիստոսի երկրորդ գալստյան գլխավոր արգելք, որոնց պետք է ոչնչացնել միջուկային պատերազմի ընթացքում:

Քրիստոնյա սիոնիստներն իրաքյան պատերազմը մահմեդականների դեմ պատերազմի սկիզբ համարելով, ընդգծում են, թե Ամերիկան պետք է Իսրայելին աջակցի, որպեսզի վերջինս կյանքի կոչի «Նեղոսից մինչև Եփրատ» երկիր ստեղծելու գաղափարը: Ահա թե ինչու, քրիստոնյա սիոնիստներն Իրաքի դեմ Միացյալ Նահանգների պատերազմը «Սուրբ» պատերազմ են կոչում: Քրիստոնյա սիոնիստների հովանավորությանն արժանացած այդ պատերազմի պատճառով,

նրանք լիովին հովանավորում են նաև Կրտսեր Ջորջ Բուշին, այնպես, որ Փեր Ռոբերտսոնը հայտարարել է. «Աստված սիրում է Ջորջ Բուշին, ուստի, եթե մենք նրա դեմ դուրս գանք, ապա ընկղմվելու ենք խռովությունների գիրկը»¹⁸:

Մայր էվանջել, «Նոր փուլ Իրաքից հեռու», պվերածությունն ու ոչնչացումը Հին կտակարանի՝ Թալմուդի պահանջն է համարում և նշում է. «Միացյալ Նահանգները Տիրոջ կամքը կատարելուց զատ այլ բան չի արել»: Խնդրո առարկա գրքում շեշտվում է. «Պաղեստինցիները աստանա են, քանզի պատնեշում են Աստու կամքը կատարելու ճանապարհը»: Նա Ջորջ Բուշին առաջարկում է հրաժարվել Պաղեստինի պետություն ստեղծելու գաղափարից. «Պետք է հրաժարվել մոլորված ազատականներին հետևելուց: Թալմուդը միակ ճշմարիտ քարտեզն է, որովհետև դեմ է պաղեստինցիների վերադարձին, ավելին՝ կողմնակից է մնացածների արտաքսմանը»:

Ճայրահեղ պահպանողական Էվանջել Միացյալ Նահանգների պատերազմն ընդդեմ Իրաքի գնահատում է իբրև Թալմուդի խոստումներից մեկի իրականացումը, որի արդյունքում Երուսաղեմը վերածնվելու է Բաբելոնի (այժմ՝ Իրաք) մոխիրներից՝ Քրիստոսի գալստյան պայմաններ ստեղծելու համար, ինչը քրիստոնյաները համարում են Հիսուսի երկրորդ գալուստը, իսկ հրեաները՝ առաջինը: Սա էր պատճառը, որ էվանջի գրքի լույս տեսնելու առիթով Շարոնը պաշտոնապես շնորհավորել էր նրան:

Իսլամական սրբություններին վիրավորանք հասցնելը, դրանց հասցին գազախոսությունը վերածվել է քրիստոնյա սինոխստների քննարկման գլխավոր բնանյի: 2001թ. հոկտեմբերի 6-ի կրոնաքաղաքական այս հոսանքի պարագլուխներից Ջերրի Ֆավելը «CBS» հեռուստատեսության «60 րոպե» ծրագրում հայտարարել է. «Ես կարծում եմ, որ Մոհամեդն ահաբեկիչ էր: Նրա կյանքի և գործունեության վերաբերյալ բավական լուրջ ուսումնասիրություններ են կատարել մահմեդականների և ոչ մահմեդականների աշխատություններում և հանգել այն եզրակացության, որ նա բիրտ, ռազմատենչ մարդ է եղել: Ըստ իս Քրիստոսը և Մովսեսը սիրո օրինակ են, մինչդեռ Մոհամեդը՝ դրանց հակառակի չափանք»:

Ֆավելն ամերիկացիների նկատմամբ Տիրոջ բարեգութ լինելը պատճառաբանում է նրանով, որ նրանք հրեաների ու Իսրայելի հանդեպ գթառատ են և գտնվում են մահմեդականների ու այլոց հակադիր ճակատում:

Սինոխստական քրիստոնյաների առաջնորդներից «700 ալումը»-ի սեփականատեր Պատրիկ Ռոբերտսոնը, մահմեդականների Աստու թիրտ անվանելով, ընդգծում է. «Նախ Սուրբ գրքի աստվածը սիրո և ճշմարտության աստված

18. Պատրիկ Ռոբերտսոնի կարծիքով Արմազեղյանի ճակատագրի մասին տեղի է ունենալու 2018-2028թթ.

և որն իր որդուն այս աշխարհ ուղարկեց, որպեսզի համուն մեր մեղքերի մահանա: Մինչդեռ Ղուրանի աստվածը (Ալլահը) մարդկանց ասում է, որ իրենց գոհարեն համուն ճշմարտության և համուն իրեն: Սակայն նրա մեջ ճշմարտության որևէ իմաստ չկա»:

Այդօրինակ տեսակետները ոչ միայն իսլամական սրբությունների ու արժեքների նկատմամբ ծայրահեղական քրիստոնյաների բշամանքի ու քինախնդրության վառ ապացույցն են, այլև վկայում են իսլամի հարցում նրանց անգրագիտության մասին: Օրինակ, Ռոբերտսոնը խոսելով մահմեդականների «Ալլահի» և քրիստոնյաների Աստու(God) միջև տարբերությունների մասին, նշում է՝ քանի որ Մեքքայում «Ալլահը» լուսնի աստվածն էր, իսլամում առկա է մահիլը: Թուրքիայի դրոշի վրա մահիլն է, որի մեջ տեղադրված է մեկ աստղ: Հետևաբար իսլամում լուսինը համուն այն բանի է, որ «Ալլահը» լուսնի աստվածն է եղել, հենց այս բանն ու վերջ: Մինչդեռ մենք երբեք լուսնի աստու չենք պաշտում: Մենք պաշտում ենք արարիչ Աստուն, որն արարել է ամեն բան: Նրանց «Ալլահը» և մեր Աստվածը (God) բնավ ճանաչում չեն միմյանց: «Ալլահը» իբրև Աստված թարգմանելը սխալ է: Երբ դուք որևէ բան եք տեսնում, որ կոչվում է «Ալլահ», հենց «Ալլահ» էլ թարգմանեք: Դրան Աստված մի կոչեք: Քանզի նրանք տարբեր են՝ Աստված արարիչ է:

3-2. Քրիստոնյա սինոխստները, Արմազեղյանը՝ և սինոխստական վարչակարգին հովանավորելը

Քրիստոնյա սինոխստների սկզբունքային հավատամքներից է բարու և չարի միջև պատերազմը: Այն միջուկային պատերազմ է հրեաների և մահմեդականների միջև, որը տեղի է ունենալու Պաղեստինի հյուսիսում, մեկնաբանվելով իբրև Արմազեղյան, ինչը Քրիստոսի երկրորդ գալուստն է ավելուելու: Եվ, քանի որ նրանք հավատացած են, թե Քրիստոսի երկրորդ գալուստյան «փջնելու վայրը» Իսրայելն է, ձգտում են Իսրայելի պաշտամունքը կրոնական ծեսի վերածել: Այդ ուսմունքի համաձայն, Իսրայելի նոր պետության ստեղծումը հրեաների Ավետյաց երկրում (Նեղոսից մինչև Եփրատ), դիտում են որպես Քրիստոսի երկրորդ գալուստյան համար ամառարկելի փաստ: Նշյալ պատճառաբանությամբ, արմատական բողոքականների կարծիքով, Իսրայելը լինելով Աստու կամքի իրականացումը:

19. Արմազեղյանը բարո միայն մեկ անգամ նշված է Հովհաննեսի Հայտնության 16-րդ գլխի 16-րդ համայնում: Այն երկու բառից կազմված երբայերեն բարո բառ է՝ «արք» նշանակում է սար, իսկ «Արմազեղյան» լեռան անունն է (արարեթեմով՝ Հարմազդդն): Մակայն ամերիկյան բացատրական բառարաններում, ինչպես, օրինակ՝ «Արեթարոմ», բացատրվում է որպես բարու ու չարի վերջին բախումը՝ աշխարհի վերջը: Այդ վայրում տեղի է ունենալ բարու, բարեգործության և չարի ստանալի միջև վերջին ճակատամարտը:

նացնողը, իրավասու է Ավետյաց երկիրը գրավելու նպատակով դիմել ցանկացած քայլի: Հենց այդ գաղափարն էլ պատճառ է դարձել, որ դեպի Իսրայել ներհոսնակ հակայական քանակի ֆինանսներ ու գեներ:

Քրիստոնյա սիոնիստները համոզված են, որ մարդկության պատմությունն իր վերջակետին կհասնի «վերջին ժամանակներում», Արմազեղոնի պատերազմում, որի գավաթակետը Քրիստոսի երկրորդ գալուստն է: Այդ պատճառով բողոքական քարոզիչները մշտապես ջանքեր են գործադրում մարդկանց համոզելու, որ խաղաղություն ցանկանալու փոխարեն ձգտեն դեպի պատերազմ: Նրանց տեսանկյունից մարդկությունը պատրաստ է վերջնական պատերազմին, ինչը նպաստավոր հող է պատրաստելու Խաղաղարարի երկրորդ գալուստան համար: Խնդրո առարկա մեծ պատերազմը տեղի է ունենալու գրավյալ «Պաղեստինի հյուսիսում»՝ «Հարմեջոդ» անվամբ լեռան մոտակայքում, Հորդանանի արևմտյան ափին: Մահմեդականների ու հրեաների միջև ծանր ճակատամարտում շատ շատերն են գոհվելու: Նրանք իրենց այդ տեսակետն ապացուցում են Եզեկիել մարգարեի գրքով, որտեղ պատերազմի մասին գրված է. «Այն հորդառատ անձրևներ, կարկուտ, ծծուրբ ու խոշոր հրդեհներ, մեծ երկրաշարժեր է առաջացնելու, լեռները խորտակվելու են, ժայռերը ընկնելու են, փլուզվելու են երկրի վրա առկա բոլոր պարիսպները»:

Արմատական քարոզիչներն այդ նկարագրությունները վերագրում են միջուկային զենքերի օգտագործման տակտիկային: Նրանք նշում են, որ առաջին հարվածը հասցնելու է Քրիստոսը: Նա կիրառելու է նոր զենք, որի ավերածությունները նման են լինելու նեյտրոնային բուրձի հետևանքներին:

Ձաքարիա մարգարեի գրքում նշվում է. «Նրանց մարմնի մասերը քափվելու են կանգնած վիճակում, աչքերը վառվելու են ակնախոռոչներում, նրանց լեզուները բերաններում կարճվելու են»:

Ըստ քրիստոնյա սիոնիստների, վերջին պատերազմի ընթացքում տեղի կունենա նաև ճակատամարտ արաբների, Ռուսաստանի, Իրանի և Իսրայելի ու ռեյի միջև, ինչի ընթացքում Եփրատ գետն Իրաքի տարածքում կչորանի:

Նրանց կարծիքով՝ այդ պատերազմի սկիզբը կլինի ծայրահեղական մի հրեայի կողմից Ալակաս մզկիթի պայթեցումը: Նրանք նպատակամղված են Ալակաս մզկիթը վերացնելու և նրա տեղում կառուցելու Սողոմոնի տաճարը: Ասվածը հիմք ընդունելով, քրիստոնյա սիոնիստները կարծում են, որ Ամերիկան և Մեծ Բրիտանիան պետք է Իսրայելին աջակցեն այդ «սուրբ առաքելությունը» կյանքի կոչելու հարցում: Նրանք հավատացած են, որ Արմազեղոնի պատերազմից առաջ Ամերիկայի հասարակությունը պաշտպանական դիրք է ընդունելու, այստեղ անն ու սարսափը համատարած են լինելու: Ըստ նրանց, Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ աշխարհում խաղաղությունը միանգամայն անհնար է, ուստի քրիս-

տոնյաները Փրկիչի գալուստն արագացնելու նպատակով պետք է Արմազեղոնի օրատերազմի: աշխարհի ավարտի համար նախադրյալներ ստեղծեն, որպեսզի Քրիստոսի գալուստով աշխարհում իրական խաղաղությունն իշխող դառնա:

«Այդ նշվածի հիման վրա կարելի է ասել, որ Իսրայելի ցանկությունը Քրիստոսի ցանկությունն է և միջինարեւելյան խաղաղության բանակցություններն անհնարաւ են: Այդ հարցում հրեա և քրիստոնյա սիոնիստների միջև առկա է լիակատար միասնություն ու համերաշխություն: Իսրայելը քրիստոնյա սիոնիստների գաղափարախոսության մեջ հույժ կարեւոր տեղ է գրադեցնում:

Քրիստոնյա սիոնիզմի հիմնադիրներից Ջորջ Բուչի խորհրդական Ջերրի Ֆուլովելը նշում է. «Ով Իսրայելի դեմ դուրս գա, Աստուծո դեմ է դուրս գալիս: Իսրայելը սուրբ երկիր է: Հրեա ազգն այն ազգն է, ում հետ Աստված ուխտ է կապել»:

Իսկ Փեթ Ռոբերտսոնը նշում է. «Իսրայելն աշխարհի հոգեւոր մայրաքաղաքն է: Աստված հին աշխարհում նրան հիշատակել է իբրեւ Երկրագնդի կենտրոն: Իսրայելն Աստուծո դիտակետն է և պետք է մնա»: Նա շեշտում է, որ եթե Ամերիկան Երուսաղեմի բաժանման, Պաղեստինի պետության ձեւավորման, Յասեր Արաֆատին և մի խումբ ահաբեկիչներին հանձնելու հարցում որեւէ դեր ունենա, ապա այն, սահմոկեցուցիչ փորձիկների բաժին դառնալով, ավերակների կվրածվի: Եթե Միացյալ Նահանգները դույզն անգամ նպատախ «ճանապարհի քարտեզ» նախագծի իրականացմանը, ապա մեզ սպասում է վատթարագույն իրավիճակ:

«Իսրայելը մի երկիր է, որն Աստված Աբրահամին տվել է իբրեւ մշտական բնակավայր: Այն լիովին Իսրայելի պետությանն է պատկանում: Հետևաբար, նրա սահմանների ներսում որեւէ բան Պաղեստինի պետություն անվամբ երբեւէ գոյություն չի ունեցել: Այժմ մենք սուրբ գրքից շեղվելու ճանապարհին ենք: Եթե կանգնենք Աստուծո դեմ, խանգարենք նրա ծրագրերի իրականացմանը, ապա խորտակվելու ենք խառնաշփոթի հորձանուտում: Կարծում են, որ բոլորս պետք է ուշադիր լինենք այս նախազգուշացման հարցում»,- նշում է Ռոբերտսոնը, ապա ավելացնում, որ «ճանապարհի քարտեզ» նախագիծը մշակել են ՄԱԿ-ը, Եվրամիությունը և Ռուսաստանը, որոնք Իսրայելի թշնամին են: «Հետևաբար, եթե Միացյալ Նահանգներն Իսրայելի թշնամիների հետ դաշնակցի, նշանակում է գործել Աստուծո կամքին հակառակ, իսկ ես չեի ցանկանա, որ Ամերիկան այդ քայլին դիմի»:

2-4. Պահպանողական քրիստոնյաների տեսակետներն Իրանի Իսլամական Նահրապետության վերաբերյալ

Չավիչի վարչակարգի հովանավորումը, իսլամի և նրա հետնորդների նկատմամբ անհրաժեշտ վերաբերմունքը քրիստոնյա սիոնիստների օրակարգային

հարցերն են: Նրանց տեսանկյունից Իսրայելն է Միացյալ Նահանգների կարևորագույն բարեկամը Միջին Արևելքում, նույնիսկ՝ ողջ աշխարհում: Այս սկզբունքը, որ նրանց հայեցակարգում նշանակալից դեր ունի եւ բխում է, այսպես կոչված, կրոնական համոզմունքներից, հիմնված է Իսրայելին ԱՄՆ-ի համակողմանի հովանավորելու քաղաքականության վրա: Նրանք նշում են, որ Իսրայելը պետք է հզոր լինի համակողմանի, անգամ զինվի միջուկային զենքով, որպեսզի Արմավեդոնում կիրառի ընդդեմ բշնամու: Քրիստոնյա սիոնիստներն Իսրայելի, ինչպես նաեւ քրիստոնյաների ու հրեաների ընդհանուր ամենաոխերին բշնամին իսլամն են համարում եւ համոզված են, որ Իսրայելի առաքելությունը մահմեդականներին պարտության մատնելն է, ինչը Քրիստոսի երկրորդ գալստյան նախապայմանն է:

Նրանց կարծիքով, վերջին ճակատամարտում կամ Արմավեդոնում արաբական երկրները, գրավյալ Պաղեստինի հյուսիսում, Իսրայելի դեմ պատերազմի մեջ են մտնելու: Այդ իսկ պատճառով Իսրայելը պետք է արժանանա Սպիտակ տան եւ Պենտագոնի ռազմատնտեսական աջակցությանը, որպեսզի բշնամիները չկարողանան վնասել քրիստոնյա սիոնիստներին: Մյուս կողմից էլ Միացյալ Նահանգները պետք է լուրջ ճնշումներ գործադրի ընդդեմ Իրանի եւ արաբական աշխարհի, վերջիններիս գրկելով միջուկային զենք ձեռք բերելու հնարավորությունից: Բացի այդ, պետք է լուրջ ջանքեր գործադրվեն մահմեդական երկրների եւ Իրանի հզորացումը տարածաշրջանում պատմեշելու ուղղությամբ: Այլ կերպ ասած՝ չպետք է բույս առաւ, որ Իրանը Միջին Արևելքում գերտերություն դառնա:

Ահա բն ինչու ենք ակնառեսը ՄԱԳԱՏԷ-ում Իրանի վրա Ամերիկայի կրկնակի ճնշումներին: Կրասեր Բուշի վարչակազմի ճնշումներն Իրանի վրա չեն սահմանափակվում քրիստոնյա սիոնիստների պահանջներով, այլեւ այդ հարցում դերակատար են նաեւ նոր պահպանողականներն ու սիոնիստական լոբբիները: Բայցնայնպես, Իրանի միջուկային տեխնոլոգիաների ձեռքբերումն արգելակելու, տարածաշրջանում գլխավոր պետություն դառնալու ճանապարհը պատմեշելու Բուշի ռազմավարությունը բխում է նաեւ քրիստոնյա սիոնիստների ճնշումներից:

Բուշի ելույթների նախկին հեղինակ Դեյվիդ Չորումը, որը «չարիքի առանցք» տերմինը նրա բերանով շրջանառության մեջ դրեց(Իրանը դասվեց չարիքի առանցք երկրների թվին), նշում է, որ «բարու» եւ «չարի» գիտակցությունը, բնականաբար, բխում է Բուշի կրոնական դոկտրինայից եւ արժատական բողոքականների մեթոդիստական աղանդին կապվածությունից:

Քրիստոնյա սիոնիստները նշում են, որ Իրաքի վրա հարձակումը մահմեդականների դեմ ոչ թե պատերազմի ավարտն է՝ այլ սկիզբը: Իսկ հաջորդ փուլում ԱՄՆ-ն պետք է հարձակումներ իրականացնի մահմեդական այլ երկրների, ինչ-

պես, օրինակ՝ Իրանի, Սիրիայի, Լիբանանի եւ ... վրա, որպեսզի վրա հասնի անեղ դատաստանի օրը:

3. Սիոնիստական լոբբիստների դերը Միացյալ Նահանգներում

ԱՄՆ արտաքին քաղաքականության ոլորտում ամենակարեւոր եւ ամենաազդեցիկ լոբբիստական²⁰ խումբը հրեաներինն է: Ամերիկյան սիոնիզմի գլխավոր եւ որոշիչ առանձնահատկություններից է ծագումով հրեա խոշորագույն կապիտալիստների խմբի առկայությունը, որը ֆինանսական հսկայական աջակցություն է տրամադրում սիոնիստներին եւ նրանց վրա զգալի ազդեցություն ունի: Հրեաներն Ամերիկայի բնակչության 2-3 տոկոսն են կազմում, սակայն նրանցից շատ փոքրաքանակ մի խումբ ուղղիկ կամ անուղղակի տնօրինում է Միացյալ Նահանգների հարստության ավելի քան 80 տոկոսը:

Այսօր հրեաների եւ սիոնիստների ազդեցությունն Ամերիկայի նախագահների վրա դարձել է բացահայտ եւ անժխտելի փաստ, ԱՄՆ քաղաքական մշակույթում իբրեւ անառարկելի իրականություն: Ամերիկայի բնակչության միայն 3 տոկոս կազմող հրեաների ձայնը, այդ երկրի նախագահական ընտրություններում, որոշիչ է, իսկ նրանց աջակցությունը քեկնամուներին՝ կենսական:

Միացյալ Նահանգների նախագահական ընտրություններում սիոնիստների որոշիչ դերով է պայմանավորված նրանց եւ հրեական կազմակերպությունների զգալի ազդեցությունը երկրի նախագահի վրա, հանգամանք, որի շնորհիվ էլ նրանք ի գորտ են դառնում ազդել արտաքին քաղաքականության ձեւավորման հարցում: Ասվածի վառ ասպնոյցն են Իսրայելին ԱՄՆ-ի քաղաքական հովանավորությունը, խոշոր վարկերի եւ ֆինանսատնտեսական հսկայական օգնության յուզաբերումը: Վաշինգտոնի արտաքին օգնությունների 30 տոկոսը տրամադրվում է Իսրայելին, որի 70 տոկոսը՝ պետական անհատույց միջոցների հաշվին: Ընդհանուր առմամբ հրեաների հարստությունը, տնտեսական հզոր կարողությունները եւ Ամերիկայի ՋԼՄ-ների վրա ունեցած գերիշխանությունը, մյուս կողմից՝ Միացյալ Նահանգների հասարակության մեջ նրանց զբաղեցրած կարեւոր դիրքն ու դերը, բացի դրանից, իբրեւ ճնշման լծակ, երկրի նախագահի վրա գաղափարական այդ հոսանքի ազդեցությունը հրեա լոբբիստական շրջանակներին դարձրել են Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ձեւավորման հարցում լուրջ ազդեցություն ունեցող ոչ պաշտոնական գործոններից մեկը:

20. Լոբբին (Lobby) անգլերեն բառ է եւ նշանակում է միջանցք: Օգտագործվում է ճնշում գործադրող, ներազդող խմբի ինստուտը:

3-1. Միոնիստական լոբբիստների հայացքներն իսլամի նկատմամբ

Միոնիստական լոբբիստական խմբերը սերտ կապեր ունեն արմատական բողոքականների (քրիստոնյա ծայրահեղականներ, քրիստոնյա սիոնիստներ) և նոր պահպանողականների հետ: Մի շարք հարցերում նրանց տեսակետները փոփոխ համընկնում են:

Իսլամը քրիստոնյաների ու հրեաների ընդհանուր թշնամին է, ուստի պետք է կանխել նրա տարածումն ամերիկյան հասարակության մեջ: Հետ նրանց, իսլամը չարիք, ազդեալիա և բռնություն է քարոզում: Միացյալ Նահանգներում իսլամի կամ այդ երկրում դրա հետնորդների մասին արտադրված գեղարվեստական ֆիլմերը խոսում վկա են սիոնիստների հզոր ազդեցության, իսլամը բացասական ներկայացնելու հարցում: Ցայտուն օրինակ է 1998թ. «20-րդ դարի Ֆոքս» ընկերության արտադրած «Շրջափակում» ֆիլմը, որտեղ մահմեդականները ներկայացված են իբրև ահաբեկչության ու բռնության խորհրդանիշ: Այնպես որ, Միացյալ Նահանգներում ցանկացած ահաբեկչության դեպքում կալանավորվում են մահմեդականները և հենց վերջիններին են մեղադրում ռուսների ցանկացած պայթյունի դեպքում: Նշվում է, որ խնդրո առարկա ֆիլմը լցոդրեն նպաստել է, որպեսզի Միացյալ Նահանգների հասարակության հոգեբանության համար ընդունելի դառնա սեպտեմբերի 11-ի պայթյուններում «Ալ Կայդայի» ձեռագիրը տեսնելը: Այլ կերպ ասած՝ սիոնիստները, սեպտեմբերի 11-ի դեպքերից առաջ, ամերիկացիներին ներշնչել էին, որ այդօրինակ դեպքերի հեղինակ կարող են լինել միայն մահմեդականները, քանզի նրանք իրենց բնույթով ամերիկացիների և հրեաների թշնամի են: Հետաքրքրական է այն, որ «Շրջափակում» ֆիլմում հրեաներն ահաբեկչությունների ու ռուսների պայթեցման քիբախ են դառնում, ներկայացվում են որպես ճնշված, իսկ մահմեդականները՝ իբրև չարիք ու բռնություն տարածողներ:

Թվում է, թե սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, սիոնիստական լոբբիստական կազմակերպությունները, ինչպես օրինակ AIPAC-ը²¹ (Ամերիկայի և Իսրայելի ընդհանուր հարցերի կոմիտե), կարևոր դեր են ունեցել Աֆղանստանի և Իրաքի վրա Ամերիկայի հարձակումը խրախուսելու հարցում: Նրանք, թալիբների գործելակերպի առնչությամբ հակայական քարոզչություն ծավալելով, նրանց ներկայացրել են իբրև իսլամի իրական էություն կրողներ, ցույց տալով, որ թալիբների մղեցողությունն իսլամի տեսակետներն ու գաղափարներն են: Միոնիստական լոբբիստները միջազգային ՋԼՄ-ներում գործի դնելով իրենց հզոր լծակները, հակաիսլամական քարոզչության հզոր ալիք բարձրացրին: Այդպի-

սով միջազգային հանրության (Ամերիկայի բնակչության) կարծիքը նախապատրաստեցին, համուս այն բանի, որ Միացյալ Նահանգները խաղաղության ու ժողովրդավարության պաշտպանության նպատակով պետք է Աֆղանստանում վերացնի թալիբների վտանգավոր վարչակարգը, որը դիտվում էր իբրև թուն իսլամի կրող: Ուշագրավ է նաև այն, որ թալիբների խոսքը ձևավորվել է տարածաշրջանի որոշ երկրների, այդ թվում՝ Պակիստանի, Արաբական Միացյալ Եմիրությունների և Սաուդյան Արաբիայի աջակցությամբ:

Մյուս կողմից լոբբիստական այդ շրջանակները, տարածաշրջանում Իսրայելի հակառակորդներից մեկի՝ Իրաքի ունչացման հարցում, այդ երկրում Վաշինգտոնի ռազմական միջամտությունը, միակողմանի քաղաքականությունը հովանավորելով, այն գնահատեցին որպես տարածաշրջանում Իսրայելի անվտանգությունն ապահովագրելու ուղղված քայլ:

Թվում է, թե սիոնիստական լոբբիստների ազդեցությունն ԱՄՆ քաղաքական շրջանակների վրա թույլ չի տալիս, որ ամերիկյան գործիչները ճանաչեն իրական իսլամը: Դա էլ պատճառ է դառնում, որ Պետարարտադարության գլխավոր դերակատարների տեսակետները հիմնվեն լոբբիստական նշյալ շրջանակների հայեցակարգերի վրա:

Միացյալ Նահանգների կողմից Միոնիստական վարչակարգի անվերապահ և ընդգծված հովանավորությունը, ինչը բխում է սիոնիստական լոբբիստների, քրիստոնյա սիոնիստների և նոր պահպանողականների ազդեցությունից, հանգիլ է մահմեդականների շրջանում հակամերիկյան հզոր ալիքի բարձրացմանը: Կա է պատճառը, որ Միջին Արևելքի հիմնահարցում ԱՄՆ-ին չեն դիտում իբրև անկողմնակալ դատավորի: Բացի այդ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հիմնադրումից առ այսօր Միացյալ Նահանգների վետոյին են արժանացել Իսրայելի դեմ ներկայացված բոլոր բանաձևերը, ինչը եւս ապացուցում է սիոնիստների ազդեցության չափն ամերիկայի պետական այրերի գաղափարների ու դիրքորոշումների վրա:

3-2. Միոնիստական լոբբիստները և Իրանը

Միջին Արևելքի հարցերով փորձագետներից շատերն Իրանի վերաբերյալ նշանաբան վերլուծության բացակայությունը, ամերիկացի պաշտոնյաների Իրանը չճանաչելն ու սխալ ըմբռնել պատճառաբանում են լոբբիստական հզոր խմբի առկայությամբ, ինչը պատճենւում է Սպիտակ տանն Իրանի իրավիճակի մասին իրական վերլուծություն անելուն: Օրինակ, «Ալխարիի Կիբլե»²² գրքի հեղինակ Գահան Ֆուլերը, որը ԿԿՀ-ի բարձրաստիճան պաշտոնյա է եղել, 25 տարի գոր-

21. AIPAC (American Israel Public Affairs Committee) Այն ձևավորվել է անցյալ դարի 50-ականներին: Նախնական նպատակը սիոնիստներին ցուցաբերվող տնտեսական աջակցությունը մեծացնելու ուղղությամբ գործունեություն ծավալելն էր: Այժմ AIPAC-ի մեջ է ընդգրկված հրեական 40 կազմակերպություն, ավելի քան 55 հազար անդամներով:

22. Դեմքը դեպի Մեքքա, որ մահմեդականները դիմում են արդյունաբերական ինստալով դեմքը դեպի սրբավայր:

ծունելություն է ծավալել Սֆին Արևելքի երկրներում, այդ բվում՝ Իրանում, մեկնարանելով Վաշինգտոնի քաղաքական գործիչների հայացքներն Իրանի հանդեպ, խիստ կարևորում է սիոնիստական լոբբիստների դերը, նշելով. «Իրանի իշխանության առնչությամբ հավասարակշիռ, իրատեսական որևէ վերլուծություն ներկայացնելը խիստ դժվար գործ է: Քանզի Սենատում և Ներկայացուցիչների պալատում Իսրայելի կողմնակից լոբբիստների հզոր, հուզումնալից, կրակոտ «արտադրանքով» քաղաքական կենտրոն կա, որը երկու երկրների որևէ քափանցիկ փոխհարաբերությունը սևացնում, կնճռատում է»: Ապա ավելացնում է. «Ամերիկայում կառավարության ծառայողները միայն փակ դռների հետևում, գաղտնի կարող են Իրանի մասին անկողմնակալ, արդարացի վերլուծություններ անել: Իսկ այդօրինակ մթնոլորտի առկայությունը, անշուշտ, Միացյալ Նահանգների երկարամյակետ շահերի առումով բնավ էլ օգտակար չէ: Քանզի Պետքարտուղարության ու Պենտագոնի բարձրաստիճան պաշտոնյաները, հյուպատոսությունները դժվարանում են զեկուցել իրական խնդիրների մասին:

Ըստ երևույթին AIPAC-ը, որը հրեա լոբբիստական ամենաբարդ և ամենամեծ կազմակերպությունն է, Սպիտակ տան բոլոր, մասնավորապես Իրանի մասին, որոշումների վրա լուրջ ազդեցություն ունի: Լոբբիստական այդ կազմակերպությունը, որը հակված է դեպի հանրապետականներն ու նոր հանրապետականները, շեշտում է, որ Իրանում իշխող համակարգի Լուրջությունը փոխելու նպատակով Վաշինգտոնը միաժամանակ պետք է գործի դնի գործնական և քարոզչական միջոցները:

AIPAC-ի վերնախավի կարծիքով՝ Միացյալ Նահանգներն Իրանում իշխող վարչակարգը փոխելու հարցում անհրաժեշտաբար պետք է առավելապես կիրառի հնարավոր բոլոր տարրերակները՝ լինի դա ռազմական գործողություն, թե «ժողովրդական դիվանագիտություն»:²³ Ուստի լոբբիստական այդ խումբը սերտ բարեկամական հարաբերություններ ունի նոր պահպանողականների, Իսրայելի «Լիկուդ» կուսակցության և Իրանի միապետականների հետ:

AIPAC-ը հովանավորում է «ժողովրդավարություն Իրանի համար» օրենքում²⁴ սենատոր Սամ Բրուանբարի²⁵ առաջարկած փոփոխությունները: Լոբբիստական այդ կազմակերպության խոսնակ Ռեբեկա Գիմարը²⁶ նշել է. «Մենք հո-

վանավորում ենք այն աշխատանքները, որոնք Իրանի ժողովրդին խրախուսում են վարչակարգից պահանջել կապերը խզել տաբեկիչների հետ, հրաժարվել միջուկային զենք ձեռք բերելու ջանքերից»:

Ըստ Անջելեսում իրանցի հրեաների ընդհանուր կոմիտեի²⁷ նախագահ Ռույա Գայանին²⁸ ընդգծել է. «Իրանում իշխանափոխության քաղաքականության հովանավորումն ուժեղացնելու նպատակով նոր պահպանողականների, AIPAC-ի և Ռեզա Փահլավիի (միապետության կողմնակիցներ) իրանցի կողմնակիցների միջև պայմանագիր է կնքվել»: AIPAC-ի հրեաների կարծիքով՝ Ռեզա Փահլավին, որը Քյարզայի և Չալաբիի նման սերտ հարաբերություններ ունի ամերիկյան հրեաների հետ, որպես Իրանում հետիշխանափոխության շրջանի ղեկավար, նպատակահարմար տարբերակ է:

Ամփոփիչ

Այս ուսումնասիրության խնդրո առարկա 3 խմբերը՝ նոր պահպանողականները, ծայրահեղական քրիստոնյաները և սիոնիստական լոբբիստները, սեպտեմբերի 11-ից հետո խիստ կարևոր դեր են ունեցել Միացյալ Նահանգների՝ Միչին Արևելքի, Իրանի և ողջ աշխարհի առնչությամբ ռազմավարությունների մշակման հարցում:

Նոր պահպանողականները, որոնք «Նախագիծ շարժելու համար» նախագիծ էին մշակել, 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո կարողացան Միացյալ Նահանգներին Աֆղանստանում և Իրաքում ուղղորդելով, նշյալ նախագծով միակողմանի քայլերի մղել: Նրանք ձգտում էին կյանքի կոչել միաբևեռ աշխարհակարգի՝ Ամերիկայի հեգեմոնիայի հաստատումը: Նոր պահպանողականների կարծիքով՝ սեպտեմբերի 11-ի դեպքերն Աստուծո մեծագույն պարգևն էին, որոնք կարող էին հանգել Միացյալ Նահանգներին աշխարհի առաջնորդ դարձնելուն: Թեև նոր պահպանողականների անհաջողություններն Իրաքում (այդ երկիրը զավթելուց մեկ տարի հետո) ակնհայտ են, սակայն դա բնավ էլ չի նշանակում, որ նրանց ազդեցությունն ԱՄՆ արտաքին քաղաքականության գերատեսչությունում նվազել է: Իսլամական ապառնալիքի խնդիրը բննարկման առարկա դարձրին, որպեսզի «մարտնչող և քաղաքական իսլամը» ներկայացվի իբրև նախկին Խորհրդային Միության վտանգին փոխարինող սպառնալիք, որպեսզի դրա հիման վրա ցույց տան, իբրև թե ԱՄՆ-ի ներկայությունն աշխարհի բոլոր շրջաններում օրինական է: Իսլամի նկատմամբ քաջապական վերաբերմունքն ընդգծված է նաև «Ամերիկայի ազգա-

23. Ժողովրդական դիվանագիտության (Public Diplomacy) հարցում գլխավոր շեշտը դրվում է տվյալ երկրի բնակչության, ամերիկյան արժեքների համընթաց, արժեքների (հասարակության կարծիքի) փոփոխության վրա: Իսկ դա կատարվում է ՁԼՄ-ների հովանավորությամբ՝ հզորացնելով ընդհանուր ՁԼՄ-ները Լոս Անջելեսում և «Ջադդա» ռադիոկայանում: Բազի այդ կարևոր են դասագրքերի փոփոխությունն ու մասնագիտական պատվիրակությունների փոխայցերը:

24. Iran democracy Act (IDA)

25. Sam Brownback

26. Rebecca Dinar

27. Iranian Jewish Public Affairs Committee

28. Rooya Dayanim

յին անվտանգության ռազմավարությունը 21-րդ դարում»²⁹ փաստաթղթում, որտեղ իսլամի մասին առաջին հիշատակությունում այն անվանվում է «զինված և քաղաքականացված իսլամ»։ Մակայն ամերիկացիները, լավ տեղեկացված չլինելով, օգտագործել են «նոր ուղղափառ իսլամ» տերմինը։ Իսկ այդ տերմինով իսլամը ոչ քաղաքականացված և ոչ էլ ռազմականացված է։ Այլ կերպ ասած՝ խնդրո առարկա փաստաթղթում խոսվում է 2 տեսակ իսլամի մասին.

ա) զինված և քաղաքականացված իսլամ,

բ) նոր ուղղափառ իսլամ։

Իսլամի մասին այդօրինակ վերաբերմունքն Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ Նոբին Մեծություն Էման Խոմեյնիի խոսքերն է մեզ հիշեցնում, որը քնուրպագրել էր՝ մոհամեդական անապակ իսլամ և ամերիկյան իսլամ։ Ամերիկայի թշնամությունն էլ հենց ճշմարիտ, մոհամեդական անապակ իսլամի հետ է, ուստի ձգտում է չեզոքացնել ճշմարիտ իսլամը և դրա փոխարեն տարածաշրջանին մատուցել ամերիկյան իսլամը։ Դա է պատճառը, որ նոր պահպանողականներն Իրանի Իսլամական Հանրապետությանը դիտելով իբրև քաղաքականացված իսլամի խորհրդանիշ և Միացյալ Նահանգների համար սպառնալիք համարելով, նպատակամղված են սանձախարել Իրանին և պայքարել նրա դեմ։ Նոր պահպանողականներն Իրանի հարցի լուծումը տեսնում են «իշխող վարչակարգի էությունը փոխելու» մեջ։ Իրարում իրենց անհաջողություններից հետո, նրանք գտնում են, որ Իրանում վարչակարգի փլուզումը պետք է իրականացվի ներսից՝ իրանցիների միջոցով։ Դա է պատճառը, որ Իրանի հանդեպ որդեգրել են «ժողովրդական դիվանագիտության» քաղաքականություն։ Նոր պահպանողների կարծիքով՝ ընդդիմախոս ՁԼՄ-ների ու վարչակարգի ընդդիմության հովանավորումը հոգեբանական լուրջ հարված է, ինչի պատճառով բնակչությունը երես կրեքի իշխանություններից, և որի հետևանքով վարչակարգը կփլուզվի։ Այսպիսով, արտաքին գործոնի՝ Միացյալ Նահանգների դերը սահմանափակվելու է լոկ բնակչությանը հովանավորելով և վարչակարգի բարձրաստիճան պաշտոնյաներին սեւացնելով, նրանց իբրև բացասական կերպարներ ներկայացնելով, այլ կերպ՝ ռազմական միջամտությունն անհրաժեշտ չէ։ Թվում է, թե Միացյալ Նահանգների երկու՝ Դեմոկրատ և Հանրապետական կուսակցությունների վրա սինիստական լոբիստների ազդեցությունն այն աստիճան է, որ նախագահի փոփոխությամբ այդ երկրի ռազմավարությունն Իրանի նկատմամբ՝ իշխանափոխությունը կամ վարչակարգի էության փոփոխությունը, էականորեն չի խմբագրվելու։ Հետևաբար հնարավոր է, որ փոփոխություններ կլին միայն ռազմավարության իրականացման տակտիկան։

²⁹ American Security in the 21 century

Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ոլորտում սինիստական լոբիստների մեծ ազդեցության պատճառով, ամերիկացի դիվանագետներն ու քաղաքական գործիչներն ի գորտ չեն իրատեսական քաղաքականություն որդեգրել Իրանի նկատմամբ։ Ուստի, մշտապես Իրանի Իսլամական Հանրապետությանը դիտում են իբրև Միացյալ Նահանգների և Իսրայելի համար ամենամեծ ընդհանուր սպառնալիք։

Մյուս կողմից, քրիստոնյա սինիստները, իրենց կրոնական հայեցակարգից կնկնելով (ինչը բխում է ավետարանի խեղաքայությունից և սեփական մեկնություններից), Իսրայելի հովանավորումն իրենց առաքելությունն են համարում և հավատացած են, որ մահմեդականները քրիստոնյաների ու հրեաների ընդհանուր թշնամիք են։ Նրանք գտնում են, որ պետք է նախադրյալներ ստեղծել Քրիստոսի կրկնորդ գալստյան համար։ Քրիստոնյա սինիստները համոզված են, որ Խաղաղարարի գալստին նախորդելու է Արմազեդոնի պատերազմը, ինչը տեղի է ունենալու Պաղեստինի հյուսիսում։ Ուստի Իսրայելը պետք է զինված լինի միջուկային զենքով ու տեխնոլոգիաներով, իսկ Միացյալ Նահանգները պետք է ջանք չլինայի այդ հարցում Իսրայելին աջակցելու ուղղությամբ։ Նրանք արաբներին և Իրանին համարում են Իսրայելի գլխավոր թշնամին, հետևաբար Ամերիկան պետք է խոչընդոտի տարածաշրջանի մակարդակով նրանց հզորացմանը։ Բացի այդ, նրանք Իրանի դեմ Վաշինգտոնի մշտական ճնշումների կողմնակից են, ճնշումներ, որոնք ուղղված են Իրանի միջուկային տեխնոլոգիաներ ձեռք բերելու ջանքերին։ Քրիստոնյա սինիստները դեմ են տարածաշրջանում Իրանի գերտնություն դառնալուն։

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անցած 25 տարիների ուսումնասիրությունների, տեսակետների և
քննարկումների վերլուծությունը

Սկզբնական Քաղաքական Մտազդեցություն

Իրանում Իսլամական հեղափոխությունը շրջադարձային էր քաղաքական համակողմանի զարգացումների պատմության մեջ, այդ թվում արտաքին քաղաքականության ոլորտում: Ընդհանրապես, հեղափոխությունները պատմության մեջ հազվագյուտ երեւոյթներ են պատմական չճարվող «սպրանք» են: Ըստ ժամանակակից սոցիոլոգիայում առկա համախումբ սահմանումների, հեղափոխությունները փոքրաթիվ են, սակայն ազդեցիկ ճակատագրում դրանք ազդեցությունը որոշիչ է: Այն երկրները, որոնք հասարակական կյանքի փոփոխության հարցում հեղափոխություն են ընտրել, վերջինս նոր ուղղվածություն է բերում նաեւ նրանց արտաքին փոխհարաբերություններում: Չեւափորվում է սպատումների, պատկերացումների և միջազգային փոխհարաբերությունների նոր հանրագումար և այսպիսով արտաքին քաղաքականությունն ուշադրության արժանանալով տարբեր հարթություններում, հեղափոխություն երեւոյթի տեսական ու գործնական իմացության մեջ վերածվում է որոշիչ հարցի:

Ըստ նշվածի, հեղափոխությունից հետո Իրանի արտաքին քաղաքականությունն ու միջազգային հարաբերությունների ոլորտն արժանի է գիտական լուրջ ուսումնասիրությունների: Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների վրա հիմնված տեսակետների բացակայությունը պատճառ է դարձել, որ Իրանի հետեղափոխական շրջանի արտաքին քաղաքականությունը ներկայացվի ընդհանուր գծերով և տեսակետներով, ինչը փաստորեն հարված է գիտական մտքին:

Վերոհիշյալի հիման վրա, Իրանի Իսլամական Հանրապետության անցած 25 տարիների արտաքին քաղաքականության մասին վերլուծական քննարկում ներկայացնելու նպատակով, անհրաժեշտ է առաջադրել հստակ հարցեր և դրանց համար գտնել պատշաճ պատասխաններ: Բազմաթիվ հարցերից առավել որոշիչ են թվում երեքը.

1. Ինչո՞ւ պետք է Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականությունը դառնա առանձին թեմա և ուսումնասիրության առարկա:
2. Ի՞նչ չափանիշներով է դիտարկվել Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականությունն անցած 25 տարիների ընթացքում և ինչպե՞ս կարելի է գնահատել այս ոլորտում առկա զրկականությունը:

3. Ինչպե՞ս պետք է քննադատել առկա տեսակետներն ու զրկականությունը և ինչպիսի՞նք կոնցեպտուալ (Conceptual framework) կառուցվածքով պետք է ներկայացնել Իրանի արտաքին քաղաքականությունը՝ հասկանալի լինելու համար:

Այս հոդվածի բուն նպատակն է, հիշյալ հարցերի պատասխանները որոնելու ընթացքում նախ ասել, որ հեղափոխական զարգացումների ժամանակ արտաքին քաղաքականությունը, հույժ կարեւոր նշանակություն ունենալով հանդերձ, հազվադեպ է դարձել գիտական ուսումնասիրությունների առարկա: Երկրորդ կարեւոր հանգամանքն այն է, որ հեղափոխության ժամանակահատվածում Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ լույս տեսած գրականությունում առկա են մեթոդաբանական բազում խնդիրներ: Երրորդ հանգամանքն այն է, որ Իրանի արտաքին քաղաքականության ճիշտ ընկալումը պայմանավորված է ռեդուկցիոնիստականությունից (reductionist) շխտափելով, համապարփակության (comprehensive) մեթոդներով առաջնորդվելով և անկախության գլխավոր հասկացությունների ներառմամբ: Այս համատեքստում, ինչպես այլ ազգերին, Իրանին նույնպես կարելի է դիտարկել իբրև ազգ-պետություն ընդհանուր առմամբ, ապա նաեւ նրան բնորոշ առանձնահատկությունները, որպես այլ հասարակություններից տարբերվողի: Իրանի արտաքին քաղաքականության ընկալման հանար պետք է հաշվի առնել, որ հեղափոխությունը փոփոխության է ենթարկել քաղաքական վերնախավի կառուցվածքն ու հայացքները, մյուս կողմից էլ հասարակության միջին եղամ փոխհարաբերությունները:

Նախքան առաջադրված հիշյալ 3 հարցերին պատասխանելը, հարկ է նշել, որ այս հոդվածում արտաքին քաղաքականություն հասկացությունն ընդգրկում է արտաքին գործելակերպի մի հանրագումար, որտեղ ներառվում է այլոց նկատմամբ Իրանի վերաբերմունքը և հակառակը: Ինչն իր հերթին նաեւ տեսակետների, կառուցվածքների և իրագործման մեթոդների ժողովածու է: Հետևաբար, բացառապես ուշադրության չի արժանանում արտաքին քաղաքականության անենազխալից և ազդեցիկ կառույցներից մեկը՝ արտաքին գործերի նախարարությունը:

Նկատի ունենալով վերը նշվածը, առաջին հարցին պատասխանելիս նախ պետք է նշել, թե ինչու՞ Լ՝ անհրաժեշտ Իրանի արտաքին քաղաքականությունն ուսումնասիրել իբրև անկախ թեմա: Ամենից առաջ այն բանի համար, որ արտաքին քաղաքականությունն Իսլամական հեղափոխության հիմնասյուններից մեկն է: Իսլամական հեղափոխության գլխավոր կարգախոսների թվին էին դասվում հետևյալ երկուսը՝ «Անկախություն, ազատություն և իսլամական հանրապետություն» և «Ո՛չ արեւելյան և ո՛չ էլ արեւմտյան, իսլամական հանրապետություն», որոնք այլ կարգախոսներից ազելի ցատում էին, մտավոր ու գիտական յուրահա-

մաներ՝ անվտանգության, գաղափարախոսական, աշխարհաբաղաբական եւ բյուրոկրատական:

Իրանի արտաքին քաղաքականության անվտանգության առումով ուսումնասիրություններն իրենց մեջ ներառում են արմտյան, մասնավորապես Միացյալ Նահանգներում կատարված հետազոտությունների հիմնական մասը, իսկ միջազգային հարաբերությունների գրականության անգլոսաքսոնականության համաշխարհայնացման պատճառով, այն երբեմն իր ազդեցությունը բողոմում է նաեւ ոչ արեւմտյան ասպարեզներում: Իրանի արտաքին քաղաքականությունը ներկայացվում է իբրեւ սպառնալիք այլոց, երբեմն անգամ աշխարհի անվտանգության համար: Մտավոր «արտադրություններում» այս գիծը շարունակական է: Սակայն թեմաները տարբեր ժամանակահատվածներում տարբեր են եղել: «Լեռջին տարիների ուսումնասիրությունների առանցքն Իրանի միջուկային ծրագրերն են: Անվտանգության հարցը, որն իշխող է Իրանի արտաքին քաղաքականության ոլորտում, ոչ միայն Իրանի գործելակերպն է ներկայացնում անվտանգության տեսանկյունից (Security), այլեւ ծայրահեղական շրջանակներում նույնիսկ իրանական ինքնությունն է անվտանգության սպառնացող երեսուր համարվում: Իրանի արտաքին քաղաքականությունը գաղափարախոսական դաշտում դիտարկողներն այն ամբողջությամբ գնահատում են իբրեւ կոնկրետ գաղափարախոսության բյուրեղացում, ուստի այդ երկրի արտաքին հարաբերություններում ցանկացած դրսեւորում դիտում են գաղափարական տեսանկյունից: Հետաքրքրական է նաեւ, որ Իրանի արտաքին քաղաքականության գաղափարականացումը, որոշ դեպքերում, սոցիոլոգիայի տեսանկյունից, վերածվել է գաղափարախոսության, հետեւաբար կանխավ վերջնական դատողություններ են արվում Իրանի արտաքին գործելակերպի մասին:

Երկրառագմավարական հայացքով Իրանի արտաքին քաղաքականությունը բացատրող գրականության համաձայն, այդ երկրի արտաքին քաղաքականության մեջ կատարված ցանկացած քայլ բացատրվում է այդ երկրի աշխարհաբաղաբական դիրքի համատեքստում: Հարցն այս տեսանկյունից դիտարկողներն Իրանի աշխարհագրական դիրքը դարձրել են իրենց վերլուծությունների առանցքը եւ այլ գործոնների վրա ուշադրություն չեն դարձնում:

Եվ, ի վերջո, Իրանի արտաքին քաղաքականության բյուրոկրատական տեսանկյունից վերլուծությունները, որոնք պայմանավորված են բյուրոկրատական բանավեճերով, իշխանության կառուցվածքներով, քաղաքական խմբավորումներով եւ արտաքին քաղաքականության բյուրոկրատիզմին առնչվող, որոշումներ ընդունող անհատներով, սկսած բարձրաստիճան պաշտոնատարներից մինչեւ երկրորդ էշելոնի ծառայողները:

Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ գրականության մեջ,

խոշոր հաշվով, կարել է անդրադառնալ հետեւյալ կարեւոր հարցին, այն է, որ վերջին տարիներին ակամատես ենք Իրանում այդ երկրի արտաքին քաղաքականության ասպարեզում լույս տեսած որոշ ուսումնասիրությունների: Եթանց եւ դիտակները, նախ ձգտել են Իրանի արտաքին քաղաքականությունը ներկայացնել միջազգային հարաբերությունների տեսություններին համապատասխան, բացի այդ, ընդհանուր եզրահանգումների փոխարեն, իրենց ուշադրությունը սեւեռել են որոշակի դեպքերի վրա: Եվ, ի վերջո, այդպիսով աջակցել են Իրանի արտաքին քաղաքականության ձեւավորմանը: Ուստի, այդօրինակ գրականության գարգացումն արժանի է խրախուսման:

Եթե որոշ չափով պատասխանել ենք հողվածի սկզբում առաջադրված երկրորդ հարցին, այժմ պետք է պատասխանել երրորդին՝ ինչպե՞ս կարելի է քննադատել Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ գրականության մեջ իշխող տեսակետները եւ ինչպիսի՞ կոնցեպտուալ կառուցվածք պետք է ներկայացնել այն հասկանալու համար:

Ի պատասխան, հարկ է նշել, որ Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ, մասնավորապես, արտերկրյա գրականության մեջ իշխող է պարզեցման (Reductionist) միտումը, որտեղ ձգտում են այն ներկայացնել սպառնալիք երանցներով եւ դիտարկում անվտանգության տեսանկյունից: Իրանի արտաքին քաղաքականության համալարափակության նսննացումը, ինչ-որ տեղ մտավոր առումով խոչընդոտում է այն հասկանալուն եւ գիտական տեսանկյունից մի գործոն է Իրանի հանդեպ ոչ խելամիտ դատողություններ անելու հարցում:

Այդօրինակ գրականությունը ծառայում է որոշակի խմբերի ու երկրների շահերին: Միջազգային եւ տարածաշրջանային քաղաքական որոշ հոսանքների շահերը պահանջում են, որ Իրանի արտաքին քաղաքականությունը ներկայացվի իբրեւ բիրտ, ոչ խելամիտ, միակողմանի եւ միատարր:

Հետեւեղափոխական շրջանում Իրանի արտաքին քաղաքականության վերաբերյալ նման տեսակետների վնասները թերեւս ակնհայտ են: Այդ են վկայում, հատկապես Իրանի դեմ Իրաքում Մադան Հուսեյնի վարչակարգի ուղղակի եւ Աֆղանստանում թալիբների՝ անուղակի հովանավորումը:

Թույլ տվեք չմոռանալ նաեւ, որ հակաիրանական գրականությունը, մասնավորապես այն մասը, որ լույս է տեսել հետեւեղափոխական շրջանի առաջին երկու տասնամյակների ընթացքում, կարեւոր դեր է կատարել հակաիրանականության, հակախլաճականության եւ դրանցից բխող հետեւանքների հարցերում:

Եթե Իրանի հետեւեղափոխական շրջանի արտաքին քաղաքականության մասին գրականության հիմնական թերությունները դրա նսննացումը եւ շահափոխականությունը համարենք, ապա այն ընթանելու համար ինչպե՞ս կարելի է կոնցեպտուալ կառուցվածք ստեղծել եւ ձեւավորել ավելի իրատեսական գրականություն:

1. Անվտանգություն. Հնարավոր չէ ըմբռնել Իրանի արտաքին քաղաքականությունը, տեսական ու գործնական առումով հաշվի չառնելով այս առանցքային սկզբունքը: Այս հիմնարար հասկացությունը, որն Իսլամական հեղափոխության ձեռքբերումներից է եւ իրանցիների պատմական պահանջը, լիովին արմատավորված է նրանց անհատական եւ հավաքական հոգեբանության, երկրի Սահմանադրության եւ արտաքին քաղաքականության օրենսդրության, Իրանում որոշումներ ընդունելու մտահայեցողության մեջ, այն աստիճան, որ որեւէ վերլուծություն Իրանի արտաքին քաղաքականության մասին առանց հաշվի առնելու այս հանգամանքը հնարավոր չէ:

2. Նամապարփականություն. Հեղափոխությունից հետո Իրանի արտաքին քաղաքականությունը ձեւավորում է մի շարք գործոններ, որոնցից եւ ոչ մեկի նշանակությունը չի կարելի գերադասել մյուսներից: Ուստի, պետք է տեսնել աշխարհագրությունը բյուրոկրատության կողքին, բյուրոկրատությունը՝ վերնախավի տեսակետների կողքին, վերնախավի տեսակետները՝ որոշումներ ընդունելու կառուցվածքների, իսկ վերջինս՝ տարածաշրջանային եւ միջազգային զարգացումների կողքին:

3. Ընդհանրի եւ առանձնահատուկի հակվածության երկակիություն. Սա նշանակում է, որ Իրանի արտաքին քաղաքականությունը պետք է դիտարկել բառիս ընդհանուր իմաստով այլ երկրների արտաքին քաղաքականության օրինակով: Բացի այդ, Իրանը, ինչպես որեւէ այլ երկիր, հեղափոխությունից հետո ձգտում է ապահովել իր անվտանգությունը եւ զորացնել այն: Այն ձգտում է նաև տնտեսական զարգացման, միջազգային ասպարեզում եւ տարածաշրջանում հարգանքի եւ հեղինակություն ձեռքբերման: Մյուս կողմից, Իրանն աշխարհագրության, պատմական փորձի, հասարակական կառուցվածքի, տնտեսական կարիքների, մշակութային ինքնության եւ քաղաքական կարգի առումով առանձնահատուկ երկիր է: Նշված բոլոր առանձնահատկություններն Իրանի արտաքին քաղաքականության մեջ իրենց յուրահատուկ դրսևորումն ունեն, որոնց ընդհանրականության ու առանձնահատկության սինթեզը նպաստում է Իրանի արտաքին քաղաքականությունն ավելի լավ ընկալելուն:

Ուստի, կարելի է նշել, որ հետհեղափոխական շրջանում Իրանի արտաքին քաղաքականությունն իբրև հասարակական, քաղաքական հարաբերությունների կարևոր ոլորտներից մեկը, արժանի է գիտական հատուկ ուշադրության, մինչդեռ առկա գրականության վերլուծություններում այն անհրաժեշտ եւ բավարար ըմբռնում չի ապահովում: Հետեւաբար, անհրաժեշտ է հենվել այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսիք են անկախամետությունը, համապարփականե-

ությունը, առանձնահատուկի եւ ընդհանրի սինթեզը, որպեսզի կարողանանք հասկանալ հեղափոխությունից հետո Իրանի վարած արտաքին քաղաքականության ձեւավորման Լուրջները եւ դրա զարգացումները:

Տեղին կլինի հողվածն ավարտել շեշտելով Իրանի արտաքին քաղաքականությունը գիտական շրջանակներում աստիճանաբար եւ կայուն ուսումնասիրության անհրաժեշտությունը: Իրանի արտաքին քաղաքականության գրականության մեջ առկա վակուումը հնարավոր է վերացնել՝ հարցերով, կուտակած տվյալներով, տեսությունների առաջադրմամբ, Իրանի արտաքին քաղաքականության չափանների եզրահանգումներով: Այդօրինակ միջոցառումները քայլեր են՝ Իրանին ծառայելու եւ Իսլամական հեղափոխության վերաբերյալ ուսումնասիրությունների խորացման ուղղությամբ:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԴԹԱՆԱԿԸ ՊՂԵՆՏՏԻՆԻՆ ՆՈՎԱՆԱՎՈՐԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՔԿԱՆ ՔԱՅԷ

Ռեզա Զարի*

**Իսլամական հեղափոխություն, Պաղեստին, Իսրայել, Իրան,
պաղեստինյան խմբեր, արաբական երկրներ, Վեհափառ
Էմամ Խոմենիինն և շահը**

Տարված

Մինամենդ Ռեզա շահի վարչակարգը, որպես Միջին Արևելքի տարածաշրջանում Արևմուտքի դաշնակիցներից մեկը, լայնածավալ և բազմակողմանի՝ քաղաքական, տնտեսական, անվտանգության, գաղտնի ծառայությունների, ռազմական, մշակութային և քարոզչական ոլորտներում գաղտնի, երբեմն էլ բացահայտորեն հովանավորում և նպաստում էր նորաստեղծ Իսրայելի պետության հզորացմանը: Մինչդեռ նա, Իսրայելի և Իրանի գաղտնի գործակալությունների՝ «Մոսսադի» և «Սավաքի» համատեղ գաղտնի գործողությունների իրականացմամբ, ջանքեր էր գործադրում պաղեստինցիների միացյալ ճակատը և արաբական երկրներն զգալիորեն թուլացնելու ուղղությամբ: Սույն հոդվածով վերլուծել ենք 1949-1959թթ. շահի վարչակարգի կողմից տարբեր հարթություններում Իսրայելին ցուցաբերած հովանավորություններն ու աջակցությունները:

Նախաբան

Մեր կարծիքով, ռազմավարական կարևոր մշտնակույությանը Պաղեստինում սիրոնիստական վարչակարգի ձևավորման, և իբրև անկախ պետություն Միջին Արևելքում ի հայտ գալու գործընթացն ապօրինի էր, ինչը տեղի է ունեցել տարածաշրջանից դուրս գտնվող հզոր տերությունների առ այսօր շարունակվող հովանավորությամբ: Բայց և այնպես, պետք է ընդունել իրականությունը՝ այսօր աշխարհում և տարածաշրջանում գործող կարգերի պայմաններում, Իսրայելն իր տարածքի և տարրոլության համանատությամբ շատ մեծ քայլեր է կատարել: Թեև հնարավոր է, որ այդ վարչակարգի կարևորումն ու ուշադրության կենտրոնում լինելը պայմանավորված է դրա ճգնաժամածին էությամբ, այսուհանդերձ թվում է, թե Իսրայել երևույթի առավել ճշգրիտ ճանաչումը և խորապես ուսումնասիրումը վերաձվել է անժխտելի, ակնհայտ անհրաժեշտության:

* Էմամ Նոեյնի անվան համալսարանի գիտությունից անդամ

Բացի այդ, Իրանի և Իսրայելի միջև իրենց առանձնահատկություններով գաղտնի հարաբերությունների հետազոտումը կարող է լույս սփռել նրանց միջև գաղտնի համագործակցությունների և քողարկված ճշմարտությունների վրա: Այն կարող է նաև ի ցույց դնել Իսլամական հեղափոխության ազդեցությունը բավականին և Իսրայելի առեղծվածային կապերի ընդհատման հարցում, միաժամանակ որոշ չափով մեզ նախապատրաստել Պաղեստինին հովանավորելու համար: Ուստի, արժարժված խնդիրները լուսաբանելու նպատակով քննարկելու ենք շահի վարչակարգի կողմից Իսրայելի կայացման համար նպաստավոր հող պատրաստելուն, ցուցաբերած բազմակողմանի աջակցությամբ՝ քաղաքական, տնտեսական, անվտանգության, տեղեկատվության, ռազմական, մշակութային և քարոզչական ոլորտներում:

1. Քաղաքական ոլորտ

Իրանը, քաղաքական հարթության վրա, տարբեր քայլերով նպաստել է նույնաստեղծ Իսրայելի հզորացմանը:

Իսրայելի պետության ճանաչումը

Իրանում Մինամենդ Սալեդ Մարադեիի գլխավորած կառավարությունը որակյալ պատասխանելով «Իսրայելի պաշտոնական ճանաչման և բարեկամական կապեր հաստատելու»՝ Իսրայելի ժամանակավոր կառավարության ԱԳ նախարար Մուշե Շեբրոքի գիտմամբ, ելնելով Իրանի ներքին որոշ զարգացումներից և հաստատվող աշխարհակարգից, «ոչ ֆակտո» պաշտոնապես ճանաչեց Իսրայելի պետությունը:

Իրանի կողմից Իսրայելի ճանաչումը վերջինիս համար լուրջ հաջողություն էր: Քանզի, նախ թեև Ալլվիլն հաջողվել էր ոչ արաբական իսլամադավան, տարածաշրջանում ռազմավարական կարևոր դիրք ունեցող մի երկրի, իսլամական աշխարհից պոկելով ձգել իր կողմը: Իրանով, փաստորեն, իրականացավ Իսրայելի վարչապետ Դեյվիդ Բեն Գորիյունի այդ երկրի շուրջ եռանկյուն ստեղծելու նպատակը՝ Իրանի, Թուրքիայի և Եթովպիայի հետ փոխհարաբերություններ հաստատելով, փոխել Միջին Արևելքի դեմքը: Այս, այն նպատակն էր տարածաշրջանում նոր խմբավորումների ձևավորմանն ի շահ Իսրայելի: Բացի այդ, նպատակն էր նաև մեկուսացման և արաբական աշխարհի ու նախկին ԽՍՀՄ-ի սպառնալիքներից Իսրայելի վրկվելուն, և անվտանգության ոլորտում նրա կարիքների որոշ չափով բավարարմանը: Եվ, ի վերջո, Իրանի կողմից պաշտոնական ճանաչումը նպաստավոր հող ստեղծեց Թեհրանի հետ տնտեսական, ռազմական, անվտանգության և տեղեկատվության բնագավառներում համագործակցելու համար:

Դիվանագիտական և երկրաբանական բազումը

Շահի վարչակարգը 1975թ. Իրանից Իսրայել ներգաղթած հրեա Մեիր Ազրա-
խին ընդունեց իբրև Իսրայելի առաջին ոչ պաշտոնական ներկայացուցիչն Իրանում: Իհարկե, նրանից առաջ այլ գործիչներ, ինչպես օրինակ, Յակոբ Նիմու-
դին և դ. Ջեվի Դորլին էին, հրեական գործակալության կազմակերպության բո-
լի ներքո Իրանում գործունեություն էին ծավալում: Իսկ Իրանի ներկայացուցչու-
թյունն Իսրայելում աշխատում էր Շվեյցարիայի դեսպանությունում գործող գրաս-
ենյակի անվան տակ, որտեղ գործունեություն էին ծավալում Շվեյցարիայում
Իրանի դեսպանության դիվանագետները, իսկ ծառայողական գրագրություննե-
րի մեջ այն նշվում էր «Բեռն-2» անվամբ:

Իսրայելի ներկայացուցիչներից յուրաքանչյուրը յուրովի, քողարկված և այլ
ձևերով մշտապես ջանքեր էր գործադրում ներթափանցել իշխող շրջանակներ ու
կարևոր կենտրոններ, անգամ՝ արքունիք: Նրանք արժանագրություններից, կա-
նոնակարգերից դուրս իրենց գործելակերպով ձգտում էին Իրանի իշխանություն-
ներին փաստի առաջ կանգնեցնել՝ փոխհարաբերությունները բացահայտ դարձ-
նելու ուղղությամբ: Նման վարվելակերպը երբեմն պատճառ էր դառնում, որ
արաբական երկրները բողոքի նուսա ներկայացնեին Իրանի ԱԳ նախարարու-
թյանը: Իրանի մահմեդական բնակչության և արաբական երկրների լուրջ հա-
կազդեցության մտավախությամբ Թեհրանում Իսրայելի դեսպանության վրա
այդ երկրի դրոշը չէր ծածանվում և պաշտոնական ընդունելություններին նրանք
չէին հրավիրվում, սակայն օգտվում էին այլ դիվանագետներին հավասար իրա-
վունքներից ու արտոնություններից: Իսրայելի ներկայացուցիչները երբեմն այն-
պիսի քայլերի էին դիմում, որոնց անգամ անհաղորդ էր մնում Իրանի ԱԳ նախա-
րարությունը: Այս առնչությամբ, Յակոբ Նիմուդին, որն Իրանում Իսրայելի
ամենաակտիվ ներկայացուցիչներից էր և 13 տարի այդ երկրում գտնվելու ժամա-
նակը համարում է իր կյանքի ամենաառաջին շրջանը, նշել է.

«Մեր երբևէ քեզ թույլ տան, որ Թեհրանում մեր կատարած գործերի մասին
տեղեկանա, ապա կսարսափես լսածներիցդ, պատկերացնել անգամ չես կա-
րող»:

Իսրայելի բոլոր վարչապետները, այդ երկրի հիմնադրման օրից մինչև քա-
զավորի վարչակարգի փլուզումն այցելել են Իրան: Նախկին վարչապետներ Բեն
Գոդյունը, Լևի Շքուլը, Գոլդա Մեյերը, Իցիակ Ռաբինը և Մենախեմ Բեգինը
բազմիցս Իրան են այցելել և հանդիպում ունեցել շահի հետ: Բայց, քանի որ Իրա-
նը չէր ցանկանում, որ տարածաշրջանային երկրներն այդ հանդիպումների մա-
սին տեղյակ լինեն, դրանք տեղի էին ունենում մամուլի թելու պայմանով: Սա-

կայն, Իրանին հակառակ, իսրայելական մամուլը շատ էր ցանկանում գրել այդ
հանդիպումների մասին: ԹՆԵ «Սավաթի» ջանքերի ու հնարամտությունների
շնորհիվ այցերի գաղտնիությունը պահպանվում էր, քայց և այնպես Իսրայելի
մամուլը երբեմն դրանց մասին լուրերը հրապարակելով, նպատակ էր հետապն-
դում երկու երկրների փոխհարաբերությունները դարձնել քացահայտ: Ուստի,
ակնհայտ է, որ այդօրինակ այցերի ժամանակ, մասնավորապես՝ շահի հետ տե-
ղի ունեցած հանդիպումներում, քննարկվում էին տարածաշրջանի զարգացում-
ներն ու իրադարձությունները և որոշումներ էին ընդունվում ընդդեմ պաղեստինցի
մարտնչողների ու նրանց հովանավորող երկրների:

2. Տնտեսական ոլորտ

Նավթ

Իսրայելն իր արդյունաբերությունը գործի դնելու, այն զարգացնելու և ռազմա-
կան մեքենան արարների դեմ պատերազմում հզորացնելու նպատակով նավթի
խիստ կարիք ուներ: Բնական պաշարների բացակայության և արարների կողմից
կիրառված բոյկոտի պայմաններում նավթն Իսրայելի համար վերածվել էր ռազ-
մավարական հույժ կարևոր ապրանքի: Այդ էր պատճառը, որ նա որոշել էր իր պա-
հանջարկն ապահովել իրանական նավթով, որտեղ հսկայական պաշարներ կան:

Այս առնչությամբ խիստ կարևոր էր Իլյաթ-Էշկելոն նավահանգիստների միջև
եղած նավթատարը, որի նշանակությունն Իսրայելի համար անգերազանսատե-
լի էր: Սուեզի ջրանցքի փակման պատճառով նավթատար նավերի երթուղին ան-
համեմատ երկարաձգվել էր, քանզի պետք է շարժվեին Հարավային Աֆրիկայի
Օմիդիթ հրվանդանից: Ուստի, իսրայելցիները ներկայացրին մի նախագիծ, որի
համաձայն նավթատար նավերը ծոցից մտնում էին Իլյաթ նավահանգիստ, որտե-
ղից նոր նավթատարի միջոցով նավեր հասնում էր Միջերկրական ծովի ափում
գտնվող Էշկելոնի նավահանգիստ, ապա նավթատար նավերով տեղափոխվում
Եփրոսպ: Ըստ Միացյալ Նահանգների դեսպանատան գաղտնի փաստաթղթե-
րի մեկի, քննարկվել են Իլյաթ նավահանգիստ-Միջերկրական ծով նավթատարի
առավելությունները:

260 կմ երկարությամբ Իլյաթ-Էշկելոն նավթատարը կառուցվել էր Իրանի մի-
ջոցներով և հենց այդ նավթատարով էր Իրանի նավթը տեղափոխում Եփրոսպյի
որոշ շրջաններ, մասնավորապես՝ Իստախ և Ռումիլիա: 1969թ. քազավորի հրա-
մանով նշյալ նավթատարով Իրանից 10 միլիոն տոննա նավթ է ուղարկվել Իսրա-
յել: Նավթի առաքումն Իսրայել մինչև 1976թ., անգամ արաբափարսայելական 4-րդ
պատերազմից, հետո շարունակվել է, մասնավոր այն պահից հետո, երբ Իսրայել-
ը գրավյալ Սիմալի անապատում գտնվող նավթահորերը հարկադրված վերա-

դարձրեց Եգիպտոսին⁶։ Թագավորը, Իսրայելի պաշտոնատարների հետ հանդիպումների ընթացքումը, նավթի առնչությամբ նրանց տված խոստումներին հավատարիմ էր մնում։ Հաջորդ էջի աղյուսակում մոտավոր հաշվարկներով տրված է 1959-78թթ. Իսրայելի արտադրած և ներմուծած նավթի քանակը, ինչը խոսում փաստ է այն մասին, որ գլխավորապես Իրանն էր ապահովում Իսրայելի նավթի պահանջարկը։ Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, Իսրայելի նավթի պահանջարկը 1959թ. օրական կազմում էր 30 հազար բարել, իսկ 1971թ. աճել էր մինչև օրական 1 600 283 բարելի։ Այդօրինակ պահանջարկի 80-90 տոկոսը, մեծ հավանակամությամբ, ապահովում էր Իրանը։ Այլ կերպ ասած՝ 1959թ. Իրանն օրական 24000-27000, իսկ 1971թ.՝ 85000-95000 բարել նավթ է արտահանել Իսրայել⁷։

Ներքոնիշյալ փաստաթուղթը, որը 1976թ. դեկտեմբերի 17-ին (26 ապրիլ, 1977թ.) ձեռք է բերվել Թեհրանում Միացյալ Նահանգների դեսպանությունից, նախ հաստատում է, որ 1976թ. Իրանից Իսրայել նավթը ներկրվել է ճշյալ աղյուսակի չափաբանակով, ապա Թեհրան-Թել Ավիվ նավթարտահանության ոլորտում սերտ համագործակցության խոսուն վկան է, որի նպատակը եվրոպական և աշխարհի այլ երկրներ նավթ արտահանելն էր։

«...Ըստ տարբեր աղբյուրներից ձեռք բերած տեղեկությունների, Իսրայելի օրական շուրջ 150 հազար բարել նավթի պահանջարկի առնվազն 75 տոկոսն ապահովում է Իրանը։ Բացի այդ, միայն իրանական նավթն է, որ Տրանսիսրայել (Թիվիլին) նավթատարով Միջերկրական ծովի Ակաբա ծոցում գտնվող Էշկելուն նավահանգստից հոսում է դեպի Եվրոպա։ 200 միլիոն դոլար արժույթյամբ Թիվիլին նավթատարը կառուցվել է 1960թ. վերջերին և ներկա դրությամբ տարեկան 45 հազար տոննա տարողություն ունի։ Ըստ երևույթին Թիվիլինի միջոցով Իրանից օրական շուրջ 350 հազար բարել իրանական նավթ էր առաքվում եվրոպական և այլ երկրները»։

Մտեզյան ջրանցքի քացումը քացասարքը չանդրադարձավ Իլաթ-Էշկելուն նավթատարի աշխատանքի վրա, քանզի նավթի արտահանությունն այդ ճանապարհով շարունակվեց։ Իսրայելին խիստ մտահոգողը Իրանում հեղափոխական շարժումն էր, որը համընթաց չէր նրա շահերին։ Որովհետև հեղափոխության հաղթանակն Իրանից նավթի ներհոսքի դադարեցմանն էր հանգեցնելու։ Մասնավանդ, որ այդ ժամանակահատվածում նավթն Իսրայելի էներգիայի միակ աղբյուրն էր։ Իսրայելում Իրանի ներկայացուցչության պատասխանատու Մորթեզա Մորթեզային 1978թ. դեկտեմբերի 23-ի (իրանական տոմարով 23 դեյի, 1357թ.) ԱԳ նախարարությանը հասցեագրված զեկուցագրում, որը քերտ վերջիններից էր, խնդրո առարկայի վերաբերյալ հետևյալն է գրել.

«Իսրայելի նավթի պահանջարկը ներկա դրությամբ տարեկան 7.8 միլիոն տոննա է կազմում, որի շուրջ 50 տոկոսը գնվում է Իրանից։ Սակայն, ըստ մասնա-

զետների հաշվարկների, տարեկան 4 տոկոս պահանջարկի աճով, 1980թ. տարեկան 10 միլիոն, իսկ 1984թ.՝ 11.5 միլիոն տոննա է կազմելու և մինչև 1980թ. Իսրայելում էներգիայի միակ աղբյուրը նավթն է լինելու»⁸։

Իսրայելի նավթի արտադրությունը, պահանջարկը և ներմուծումը

Ներմուծում	պահանջարկ		արտադրություն		տարեթիվ
	բարել օրական	բարել տարեկան	բարել տարեկան	բարել տարեկան	
30198	1122300	11490300	927000	1959թ.	
31690	1156100	12503100	936000	1960թ.	
35796	1365800	14043800	978000	1961թ.	
39464	14404500	15371500	967000	1962թ.	
43720	15985000	18303800	1082000	1963թ.	
46203	1686375	18303800	1439425	1964թ.	
48495	17700921	19170000	1469079	1965թ.	
540649	19947046	21300000	1325954	1966թ.	
60583	22113070	23087070	974000	1967թ.	
75072	274014439	28244630	823191	1968թ.	
81852	29876000	30601000	725000	1969թ.	
96943	35384490	35939490	555000	1970թ.	
106283	38794000	39340000	545000	1971թ.	
50000*	—	41062500	—	1972թ.	
56660*	—	51708090	—	1973թ.	
81000*	—	—	—	1974թ.	
80328*	—	—	—	1975թ.	
135000*	—	—	225500	1976թ.	
80000*	—	—	—	1977թ.	
80000*	—	—	—	1978թ.	

* Իրանից ներմուծվող նավթի քանակը։

Աղբյուրը. Մորթեզա, Գալտոնի դիվանագիտություն, էջ 343.

Sohrab Sohrabi, *The Pragmatic Entente Israeli-Iranian Relations, 1948-1988*, London, Pp.80-81.

Խոսելով նավթի ոլորտում Իրան-Իսրայել համագործակցության մասին, ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ Իրանն Իսրայելի նավթի գլխավոր մատակարարն է եղել: Այսուհանդերձ, բազավորն իր հարցազրույցներում լիովին հերքում էր Իսրայել նավթ արտահանելու փաստը և ի պատասխան այն հարցին, թե ինչպե՞ս է Իրանի նավթը հասնում Իսրայել, հավատացնում էր, թե տեղյակ չէ: Սակայն պարզունակություն կլիներ, եթե հավատայինք, որ այդ ամենը տեղի է ունեցել առանց նրա ինացության, քանզի շահը միջամտում էր երկրում կատարվող ամենամանչան անցուղարձին, հետևաբար հնարավոր չէր, որ այդօրինակ կարևոր հարցից, որը հղի էր նաև փաստագրվող հետևանքներով, անտեղյակ լիներ: Իրանկանում Իսրայել նավթ արտահանելու հարցում գլխավոր և որոշիչ դերը պատկանում էր շահին: Այդ խնդրում երկրորդական դեր են ունեցել նաև վարչապետ Ամիր Աբբաս Հովեյդան, արքունի նախարար Ասադուլահ Ալամը և Նավթի ընկերության գլխավոր տնօրեն Մանուչեհր Էլշալլը: Շահն այդ հարցում արաբական երկրների, մասնավորապես՝ Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդուլ Նասերի ու իսլամական աշխարհի բարձրաստիճան պաշտոնատարների գործադրած ճնշումներին, որոնք պահանջում էին դադարեցնել Իսրայելին նավթ մատակարարելը, խիստ դիմադրություն ցուցաբերելով, ուշադրության չարժանացրեց այդ պահանջները: Շահն Իլաք-Էշկելոն նավթատարի կառուցմանն Իրանի մասնակցությունը շահավետ էր համարում: Հետագայում, երբ Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հետ փոխհարաբերությունները սերտացրել էր, փարատելով նրանց մտավախությունները, միաժամանակ երաշխավորությամբ ապահովել էր Իսրայելի նավթի պահանջարկը և մինչև իր իշխանության վերջին օրը նավթի առաումն Իսրայել չդադարեցվեց:

Անդրարևելական կապերը

1968թ. դեկտեմբերին, երբ Թեհրան ժամանեց դէ. Ջեյմի Դուրլիլը և այստեղ բացվեց Իսրայելի առևտրի պալատի ներկայացուցչությունը, երկու վարչակարգերի միջև առևտրական փոխհարաբերությունները ծաղկեցին: Փարիզում Իրանի դեսպանության 1960թ. օգոստոսի 21-ի ԱԳ նախարարությանը իղված գեղեցագիրը նվիրված էր ֆրանսիական մամուլում Իրան-Իսրայել փոխհարաբերությունների վերաբերյալ լույս տեսած թղթակցություններին, որտեղ ուշագրավ էին երկու երկրների ապրանքաշրջանառության մասին նյութերը: Դրանց մի մասը «Էր Մոնդեյ» էր: Նշյալ օրաթերքը գրում էր. «Թեև Իրանի կառավարությունը հայտնում է, որ Իսրայելի հետ դիվանագիտական առնչություններ չունի, սակայն պետք է խստովանել, որ Իրանն անցյալ տարիների ընթացքում Իսրայելի հետ տարբեր ոլորտներում սերտ փոխհարաբերություններ էր հաստատել: Իսրայելական

պատվիրակությունները տնտեսական հարցերով մեկը մյուսի հետևից Թեհրան են ժամանում: Երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի ծավալն օր-օրի ընդլայնվում է: Իսրայելական «Էլ-Ալ» ավիաընկերության օդանավերը շարաբվա ընթացքում մի քանի շվեր են կատարում Թեյ Ալիվից Թեհրան...»:

Նշյալ գեղեցագրում ներկայացված են նաև «Ֆրանսես Սուար» օրաթերքի նյութերից, որտեղ իրանական շուկայում իսրայելական ապրանքների ծավալների ընդարձակման և կողմերի միջև տնտեսական փոխհարաբերությունների վերաբերյալ նշված է.

«...Իսրայելցիներն իրենց ապրանքների համար Իրանում կայուն շուկա են ստեղծել: «Փեդելվի» հիմնադրամի կողմից տնօրինվող խոշոր խանութներում, որոնց գլխավոր փայտերերից է բազավորը, իսրայելական արտադրության զգալի քանակությամբ ապրանքներ կան: Իսրայելական ավիաընկերությունը կանոնավոր շվերներ է կատարում Թեյ Ալիվ-Թեհրան ուղղությամբ: Բացի այդ, «Սուլալ Բունա» մեծազույն ընկերությունը խոշոր կապալառուներ է փնտրում Իրանում: Իրան-Իսրայել տնտեսական կապերի ընդարձակումն այն աստիճանի է հասել, որ Թեհրանում Իսրայելի տնտեսական խոշոր կազմակերպություններից մեկի՝ «Ջեմարի» տնօրենը հրավիրվում է պաշտոնական բոլոր ընդունելություններին...»:

Իրան-Իսրայել առևտրական կապերի ընդլայնումը շարունակվում էր, սակայն արտահանության ծավալների առումով ակնհայտորեն առաջ էր Իսրայելը: «Իսրայելի արտահանության ծավալն Իրան 1970թ. 22 միլիոն դոլար, 1972թ.՝ 33, իսկ 1974թ. արդեն 63 միլիոն դոլար էր կազմում: Իսրայելական ապրանքներն Իրան էին ներմուծվում Իսրայելի հետ կապեր ունեցող Թուրքիայի տարածքով, կամ էլ Պարսից ծոց վերադարձող դառարկ նավթատար նավերով»:

Իրան-Իսրայել առևտրի ծավալի վերաբերյալ աղյուսակը վկայում է, որ Իսրայելից ներմուծված և Իրանից այդ երկիր արտահանված ապրանքների ծավալների միջև հսկայական տարբերություն կա: «1961թ. Իսրայելից Իրան է ներմուծվել 2160 միլիոն դոլար արժողությամբ ապրանք: Այնուհետև, այդ քիվն աճելով, 1973թ. կազմել է 14700 միլիոն դոլար, մինչդեռ Իրանից արտահանությունների ծավալը համապատասխանաբար 9 միլիոն դոլարից աճել է մինչև 181 միլիոն: Եթե Իսրայելից ներմուծումների ծավալը համեմատելու լինենք իսլամական երկրներից ներմուծումների հետ, ապա 1971թ. այն 1,5 անգամ գերազանցել է Տարածաշրջանային բարեկարգման համագործակցության կազմակերպության (Իրան, Թուրքիա և Պակիստան) անդամ երկրներից՝ Թուրքիայից և Պակիստանից միասին վերցրած: Իսրայելից ներմուծումների ծավալը ոչ միայն բազմակի անգամ գերազանցել է բոլոր արաբական երկրներին (օրինակ՝ 12 անգամ Լիբանանին), այլև ավելի շատ էր, քան ողջ իսլամական աշխարհից (Ախայրում և Աֆրիկայում) ներմուծումները:

Իրան-Իսրայել արևորի ծավալների աղյուսակը (բացառությամբ նավթի)
1961-73թթ. միլիոն տիյալով

Իսրայելից ներմուծված	Իսրայել արտահանված	տարբերությունը	տարեթիվ
216	9	207	1961թ.
360	18,7	341,3	1962թ.
376	37	339	1963թ.
476	41,2	434,8	1964թ.
476	55,1	420,9	1965թ.
568,8	47,9	530,9	1966թ.
694,5	45,6	647,9	1967թ.
816,8	72,4	744,4	1968թ.
795,5	86,6	718,9	1969թ.
736,8	114	622,7	1970թ.
1006	134	926	1971թ.
1638	111,6	1526,4	1972թ.
1470	181	1289	1973թ.

Աղբյուրները. Ալի Ռեզա Ազդանդի, Իրանի արտաքին փոխարարքերություններ, «Էռնա» հրատարակչություն, Թեհրան, 1997թ. էջ 419: Իրանի Կենտրոնական բանկի 1962-72թթ. հաշվեկշիռներ: «Տնտեսական ուսումնասիրություններ» հանդեսի 23 և 24 համարներ: Էկոնոմիկայի մախարարության վիճակագրության տարեգիրք: Իրանի արտաքին առևտրի վիճակագրության տարեգիրք, 1973թ.:

Իրան-Իսրայել առևտրի խիստ անհամաչափ գործընթացը շարունակվում էր մինչև Իսլամական հեղափոխությունը: Թեև Ալիվում Իրանի ներկայացուցչության ղեկավար Մորթեզա Մորթեզային 1977թ. իր տարեկան զեկուցագրի տնտեսական բաժնում, անդրադառնալով այդ հարցին, նշում է, որ ներկայացուցչության աշխատակիցներն Իրանի արտահանության ծավալները մեծացնելու նպատակով Իսրայելի խոշոր արտադրողների և գործարարների հետ բանակցելու որևէ առիթ բաց չեն բողոմ: Իհարկե, պարզ է, որ իրանցի դիվանագետները ջանքեր էին գործադրում Իսրայելից ներմուծումների և այդ երկիր արտահանությունների միջև առկա հակայական տարբերությունը կրճատելու ուղղությամբ:

Սակայն հարկ է նշել, որ այդ բոլոր ջանքերը, փաստորեն, ապարդյուն են եղել, քանզի Մորթեզայիի զեկուցագրերն ապացուցում են, որ երկու երկրների միջև առևտրի ծավալներում անհավասարակշռությունը պահպանվել է:

«Իսրայելի կառավարության իրապարակած պաշտոնական տվյալների համաձայն, 1976թ. Իրան կատարած արտահանության ծավալը գերազանցել է 92 միլիոն դոլարը, իսկ ներմուծումները՝ նույն թվականին ընդամենը 4,4 միլիոն դոլար են կազմել»¹⁶:

Հարկ է նշել նաև, որ որոշ աղբյուրներում Իրան-Իսրայել առևտրական կապերի ծավալը զգալիորեն մեծ թվերով է նշվում, օրինակ, «Իրան-Իսրայել տնտեսական փոխհարաբերությունների ծավալը տարեկան գերազանցել է 400 միլիոն դոլարը»¹⁷:

Հաշվի առնելով, որ իսրայելական ապրանքների ներմուծումն իրականացվել է տարբեր ճանապարհներով, առավելապես գաղտնի, նշյալ բիվը պետք չէ անհավանական համարել: Իսլամական հեղափոխության զարգացումներն օր-օրի կրճատեցին Իսրայելից ներմուծումների ծավալները, ուստի նրանք, ովքեր տարիներ շարունակ այդ միջոցով հակայական շահույթ էին ստանում, խոշոր չափերի վնաս կրեցին:

Գյուղատնտեսություն

«Ղազվինի ցանքս և արդյունաբերություն» նախագիծը գյուղատնտեսության ոլորտում մինչ այդ օտար երկրի կողմից իրականացված խոշորագույն նախագծերից էր: Այդ նախագիծն իսրայելցիների համար խիստ շահավետ էր, այնքան, որ նույնիսկ իսրայելական մի օրաթերթ «Ղազվինն Իսրայելի կայսրությունն է Իրանում» վերնագրով հողված էր տպագրել: Անշուշտ, իրանցի պաշտոնատարները ևս ողջունում էին այդ նախագիծը: Դրա արդյունքները թագավորի համար այն աստիճան հաճելի էին, որ իր այցելության օրն այդտեղ «Իսրայելի օր» անվանեց: Թեև Ղազվինի նախագիծը տնտեսական առումով արդյունավետ էր, սակայն ուներ կողմնակի բացասական հետևանքներ, օրինակ այն որ մասնախագծերն ու գործունեությունները, նպատակում էին Իսրայելի վարչակարգի հզորացման ընդդեմ ճնշված պաղեստինցիների, ինչն աշխարհի հավատացյալներն ու մահմեդականները գնահատում էին իբրև պախարակելի, անհաճո բայլ:

1960թ. սկսած Իսրայելն ինքնաբիթով կով էր արտահանում Իրան: Եվ մինչև 1966թ. շուրջ 1000 գլուխ կով էր ներմուծվել Իրան, ընդ որում 450-ը՝ 1965թ.: Իրանի պահանջարկի ընդլայնմամբ հետագայում բանակն ավելացել էր: 1972թ. Նովբերից (մարտի 21-ին) Իսրայելից 1500 գլուխ կով գնելու նպատակով Իսրայել էր այցելել տնտեսական մի պատվիրակություն, որի կազմում ընդգրկված էին Հաշ-

են Նարադին, գեներալ Ալավի Քիան և Սեփահիուրը¹²:

Ճուտն ու հավկիթն իսրայելական այն ապրանքներից էին, որոնք գրավել էին Իրանի շուկան: Եվ, դա հասել էր այն աստիճանի, որ եթե որևէ մեկը ցանկանում էր խոսել Իրանի տնտեսության վրա Իսրայելի լուրջ ազդեցություն մասին, բավարարվում էր մեկ նախադասությամբ. «Մեր հավկիթը ներմուծվում է Իսրայելից»: Թեև 1978թ. նոյեմբերին արդեն հեղափոխության շարժման մեջ հակաիսրայելականությունն իր գագաթնակետին էր հասել, այսուհանդերձ 1978թ. նոյեմբերի 27-ի (իրական տոմարով 6-ը ազարի 1357թ.) Թեյ Ավիվում Իրանի ներկայացուցիչ Մորթեզալին Իրանի ԱԳ նախարարությանը հասցեագրված գեկուցագրում մեջբերում է Իսրայելի «Հասրեց» օրաթերթից, որտեղ նշվում է, որ Իսրայելից հավկիթի ու ճտի արտահանությունն Իրան շարունակվում է: Նշյալ գեկուցագրում գրված է.

«Թեև Իրանում խտրությունները շարունակվում են, բայց Իսրայելից Իրան կանոնավոր կերպով ճուտ է արտահանվում և միայն ուրբաթ օրն ինքնաթիռով 200 հազար դոլար արժեքությամբ ապրանք է տեղափոխվել՝ այդ երկրում ճտի արտադրության ծավալները մեծացնելու նպատակով: Պայմանավորվածություն կա ընթացիկ տարում ևս 10 միլիոնի այդօրինակ ապրանք արտահանելու մասին»¹³:

Իրանը նաև իսրայելական մրգերի, մասնավորապես՝ ցիտրուսայինների համար, շատ լավ շուկա էր: Երբ միջազգային շուկայում նավթի գները կտրուկ աճեցին, Իրանի իշխանությունները որոշեցին դրանից ստացված հսկայական եկամուտների որոշ մասը հատկացնել դպրոցներում աշակերտների սնվելուն: Իսրայելական մարինջն այն մրգերի բվին էր պատկանում, որ մատուցվում էր աշակերտներին: Իսրայելում սուպերմոլդ «Կավար» օրաթերթը, 1975թ. ապրիլի 20-ի համարում, այդ առնչությամբ գրել է.

«Իսրայելն ընթացիկ սեզոնում Իրանին 600 հազար արկղ նարինջ է վաճառել: Պայմանավորվածություն կա հաջորդ սեզոնին վաճառել 1,5 միլիոն արկղ»¹⁴:

Բացի այդ, Իրանի և Իսրայելի գյուղատնտեսության նախարարությունները համագործակցում էին «Վոյոբա» կոչվող բույսի աճեցման, եղջերու ներմուծելու, Իրանում իրագործվող նախագծերում աշխատելու, Խուզեստամում ու Ջիրոֆում գործունեություն ծավալելու նպատակով աշխատուժի ներմուծման, գիտական հետազոտություններ կատարելու, առողջապահության, ճանճի դեմ պայքարի, Իսրայելի գյուղատնտեսության առաջընթացի և ջերմոցներում մրգեր աճեցնելու մասին ուսումնական ֆիլմերի ներմուծման, անասնաբանական և կարիլային ռոզգան ոլորտներում:

Իսրայելական ընկերությունների գործունեությունն Իրանում

Իրանում իսրայելական ընկերությունների գործունեությունն Իրան-Իսրայել տնտեսական փոխհարաբերությունների կարևոր բնագավառներից էր: Գյուղատնտեսություն, արդյունաբերություն, ջրամբարների, գործարանների, մեծ շենքերի, բնակելի համալիրների, հյուրանոցների և կամուրջների կառուցում, ճանապարհաշինություն, վերանորոգման ծավալվող գործունեություն, ապրանքների ներմուծում և արտահանում, բեռնափոխադրում, տարբեր տեսակի ապրանքների արտադրության կազմակերպում, ահա այն ոլորտները, որտեղ իսրայելական ընկերություններն ակտիվորեն գործունեություն էին ծավալում և ներքափայլով Իրանի տնտեսական համակարգ, հսկայական շահույթ ստանում:

3. Տեղեկավարություն և անվտանգություն

Իսրայելն իր դիրքի և իրավիճակի առանձնահատկությունների բերմով, մասնավորապես անվտանգության սպառնալիքների նկատմամբ խոցելիության, անվտանգության ռազմավարության գլխավոր դրույթի իրագործման, այն է՝ ռազմական գերակայություն ունենալ տարածաշրջանի այլ երկրների նկատմամբ, տարածաշրջանի երկրներից որևէ մեկի հետ անվտանգության, տեղեկատվության ոլորտներում կապ հաստատելու խիստ կարիք ուներ, որպեսզի կարողանար կյանքի կոչել իր նպատակներն ու ցանկությունները: Իրանն իրեն կրոնական, մշակութային, տնտեսական ոլորտներում ազատորեն գործունեություն ծավալող, Մոհամմեդ Ռեզա շահի իշխանության համակարգում լուրջ ազդեցություն ունեցող զգալի թվով հրեա բնակչությամբ, Միջին Արևելքի արաբական երկրներին սահմանակից և հարևան երկրի լինելով, խիստ բարենպաստ վայր էր Իսրայելի համար, իր անվտանգությունն ապահովելու ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալելու, տեղեկատվության ու գործողությունների ցանկացած քայլի դիմելու առումով:

Առկա գեկուցագրերի ու փաստաթղթերի վկայությամբ, Իսրայելն իր ծրագրերի ու նպատակների իրագործման ուղղությամբ տեղեկատվական լուրջ գործունեություն էր ծավալում Իրանում և, «Սավաթ»-ի աջակցությամբ, տարածաշրջանի իսլամական երկրներում: Իսրայելն իր լրտեսական նպատակների իրագործման հարցում օգուտ էր քաղում ոչ միայն իրանցի հրեաների բարենպաստ դիրքից, այլև փեղեվիների և սիոնիստական վարչակարգերի միջև բարդ տեղեկատվական համագործակցությունն այնպիսին էր, որ տարածաշրջանի և միջազգային վերլուծաբաններից ու քաղաքական հարցերով փորձագետներից ոմանք «Սավաթը» Իսրայելի լրտեսական մեքենայի ծննույ էին համարում, իսկ շահա-

կան Իրանը՝ գրավյալ Պաղեստինից հետո, Միջին Արևելքում սիոնիզմի առաջատար բազա՞»:

Երկու վարչակարգերի միջև գաղտնի գործակալությունների «Բյուրեղապակի» անվամբ հատուկ արձանագրությունը, իրականում «Սավաքը» ստեղծել էր Իսրայելի տեղեկատվական գործակալության և լրտեսների բողոքկաման նպատակով: Այդ ցանցի տակ էր առնված ոչ միայն Իրանի աշխարհագրական տարածքն ամբողջությամբ, այլև զգալի թվով իսլամական և արաբական երկրներ՝ Իրաքից մինչև Եգիպտոս, Հորդանան, Սիրիա, Սաուդյան Արաբիա, Հուվեյթ, Պարսից ծոցի ավազանի էմիրություններ և... Նշյալ երկկողմ տեղեկատվության արձանագրությունը («Բյուրեղապակի» նախագիծ) Իրանում Իսրայելի գաղտնի ծառայությունների գործունեության համար անվտանգ ու նպաստավոր դաշտ էր, ինչը դուրիմ էր դարձնում տեղեկատվական ախաբեկչությունը, արաբ լրտեսների հավաքագրումը, որոնց թվում էին՝ հասարակ ուղևորներ, դիվանագետներ, խորհրդակցանքներ, ուսանողներ, գործարարներ և... Բացի այդ, հրեա լրտեսների համար արաբական նշյալ երկրներում գտնվելու հնարավորություն էր ստեղծում՞:

«Սավաք»-ն ու «Մոսսադ»-ը արաբական որոշ երկրների դեմ համատեղ գործողություններից զատ պաղեստինյան խմբերի դեմ ևս նախագծեր էին մշակում և իրականացնում: Այդորինակ նախագծերից մեկի շուրջ քննարկումներին ներկա էին նաև Իսրայելի հատուկ ծառայությունների նեկայացուցիչը, «Սավաք»-ի 8-րդ վարչության (հակահետախուզական) գլխավոր տնօրենը, 3-րդ վարչության տնօրենի տեղակալը: «Մոսսադ»-ի ներկայացուցիչը նշել է, որ մի կողմից Սիրիան ու Լիբանանը, մյուս կողմից՝ Իրաքը, վերածվել են պաղեստինցիների գործունեության գլխավոր բազաների՝ ընդդեմ թիրախ դարձած երկրների: Պաղեստինցիներին հովանավորում է նաև Խորհրդային Միությունը: Նա շարունակել է, ընդգծելով, թե բացառված չէ, որ Իրաքը դարձել է նրանց ամենազոր բազան, որպեսզի այդտեղ կենտրոնացվի պաղեստինցիների գործունեությունը Պարսից ծոցի և Իրանի դեմ: «Մոսսադ»-ի ներկայացուցիչը հավելել է, որ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել պաղեստինցիների ճամբարներում վարժեցված և ուսուցանված ընթացքում գտնվող իրանցիներին, ովքեր դրանից հետո վերադառնում են երկիր, նաև այն իրանցիներին, ովքեր արտերկրում, մասնավորապես Եվրոպայում, գործի են դրվում ընդդեմ Իրանի շահերի և իրանական կազմակերպությունների: Բացի այդ, կարևորագույն նպատակներից պետք է լինի պաղեստինցիների ճամբարներ ներթափանցելը՝ նրանց գործունեությանն ու ծրագրերին տեղյակ լինելու նպատակով, որպեսզի կանխավ կասեցվեն վերջիններիս ծրագրած գործողությունները:

Իսրայելի ներկայացուցիչը «Սավաք»-ին առաջարկել էր նաև՝ օգտվելով

«Մոսսադ»-ի փորձից, որը տրամադրելու էր նա, համատեղ գործողությունների չրջանակներում, պաղեստինցիների տարբեր կազմակերպություններ ներթափանցելու ծրագիր մշակվի, ապա առաջնորդվի և իրագործվի «Սավաք»-ի կողմից, ինչի արդյունքներից կօգտվեն երկու կազմակերպություններն էլ: «Մոսսադ»-ի ներկայացուցիչն առաջարկել էր նաև մտավոր համատեղ դաշտ ստեղծել՝ տեղեկատվությունների փոխանակման և Իսրայելի փորձն իրանական կողմին տրամադրելու նպատակով:

1. Իրանի գաղտնի ծառայությունների մի քանի աշխատակից գործուղվեն Իսրայել, որպեսզի մեր մասնագետների աջակցությամբ ուսումնասիրեն և քննարկման առարկա դարձնեն պաղեստինցիների կազմակերպություններն ու նրանց գործունեության հիմքերը:

2. Միաժամանակ, առաջիկա սեմինարին մասնակցելու նպատակով, մեր մասնագետներից մեկն Իրան կգործուղվի, որպեսզի վերոնիշյալ ոլորտներում իրանական գաղտնի ծառայությունների ուսումնասիրությունների արդյունքները և կուտակված փորձը մեկ անգամ ևս կարծիքների փոխանակման առարկա դառնան և անհրաժեշտ ծրագրեր մշակվեն ու իրականացվեն՞:

«Մոսսադ»-ի առաջարկությունները «Սավաք»-ի ներկայացուցիչներին և նրա ղեկավար Նեմաթոլլահ Նասիրիի հավանությանն են արժանացել: «Մոսսադ»-ից պահանջվել է, որ ուսումնական դասընթացներն անցկացվեն Թեհրանում, որպեսզի Իսրայելից ժամանած դասախոսներին ու մասնագետներին համար հնարավորություն ստեղծվի գործողությունների գլխավոր վարչության մեծ թվով աշխատակիցների ուսուցանելու: Սակայն «Մոսսադ»-ի ներկայացուցիչն առաջարկեց ուսումնական դասընթացներն անցկացնել Իսրայելում, ներքոնիշյալ պատճառներով.

1. Պաղեստինյան պարտիզանական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ բազմազան և տարաբնույթ նյութերը, այդ թվում Պաղեստինի ու նրա դիմադրության շարժումների պատմության, պաղեստինցիների պարտիզանական ու Իսրայելի հակապարտիզանական գործողությունների, արաբական երկրների և գերտերությունների դերի, Պարսից ծոցում պաղեստինցիների գործունեության վրա Միջին Արևելքի վերջին զարգացումների ազդեցության, գործողությունների առուժախի և այլնի մասին կենտրոնացված են «Բահար ծառայության» («Մոսսադ»-ի) տարբեր վարչություններում: Դրանց վերաբերյալ ուսումնասիրությունները և տվյալ բեմայի դասավանդումը կատարվելու են համապատասխան մասնագետների միջոցով, իսկ մեծ թվով մասնագետների գործուղումն Իրան հնարավոր չէ:

2. Դասընթացների մասնակիցների համար մասնագետների հետ հանդիպումն ու հարցերի քննարկումն ազելի դուրիմ կլինի, ինչը կնպաստի բեմաների

ավելի խորությամբ ընկալմանն ու յուրացմանը:

3. Դասընթացների ծրագրերում ներառված են ֆիլմերի ցուցադրում և տարբեր գործերի ու փաստաթղթերի ներկայացում, ուստի ավելի դյուրին կդառնա, եթե ուսուցումը կատարվի Իսրայելում, բացի այդ, նրանց անվտանգությունն ապահովելու հարց էլ չի առաջանա:

4. Արաբաբնակ որոշ շրջաններ այցելությունը, տեղական հրամանատարների հետ հանդիպելը, ինչի նպատակը դասընթացներում նախատեսված թեմաների գիտական կողմի հետ ծանոթանալն է:

Եվ այսպիսով, «Սավաթ»-ի օպերատիվ վարչություններից մի խումբ աշխատակիցներ, ընդդեմ պաղեստինցիների համատեղ գործողությունների նախագծերի մշակմանն ու իրագործման դասընթացներ անցնելու նպատակով գործողվեցին Իսրայել¹⁶:

Ուստի, պաղեստինյան դիմադրության կազմակերպություններում, «Սավաթ»-ի թողի ներքո, Իսրայելի գաղտնի ծառայությունների ներքափանցման համար արտակարգ հնարավորություն էր: Օրինակ, ներքոհիշյալ փաստաթուղթը՝ «Սավաթ»-ին հասցեագրված «Մոսսադ»-ի նամակը լավագույնս ապացուցում է, «Ժողովրդական ճակատ հանուն Պաղեստինի ազատագրման» կազմակերպություն ներքափանցելու նպատակով, նրանց համատեղ գործունեության մասին:

«Զեյրունի» ծառայությունից

Չեկուցագիր համար՝ 10/10

ամսաթիվ՝ 8.6.1976թ.

Ներքափանցելու համատեղ գործողության մասին: Գործակալի ներքափանցումը «Ժողովրդական ճակատ հանուն Պաղեստինի ազատագրման» կազմակերպություն:

«Ի լրումն մեր հանդիպման ժամանակ վերոհիշյալ թեմայի շուրջ բանակցությունների, ցանկանում ենք ներկայացնել խնդրո առարկա նախագծի հնարավոր օգուտները:

Կասկածից վեր է, որ «Ժողովրդական ճակատ հանուն Պաղեստինի ազատագրման» կազմակերպությունը և նրա առաջնորդ Ջորջ Հաբաշը թե՛ գաղափարական, և թե՛ գործնական առումով սերտ կապեր ունեն աշխարհի բոլոր ծայրահեղական կազմակերպությունների հետ...

Ուստի, խիստ անհրաժեշտ է հավաստի տեղեկություններ կուտակել այդ կազմակերպությունների մասին ... Մյուս կողմից, հաշվի առնելով, որ Հաբաշի կազմակերպությունը վաղուց արդեն հովանավորում է ձեր երկրի դատախարակական կազմակերպությանը, պետք է, որ ձեր ծառայությունը («Սավաթ») շահագրգիռ լինի այդ կազմակերպություն ներքափանցելու հարցում: Մենք այդ նախագծի իրագործման գործնական փուլերը կարող ենք մշակել համատեղ: Կարե-

լի է արտերկրի համապատասխան կազմակերպության մեջ տեղավորել իրանցի մի հարմար թեկնածուի, ով բողարկման նպատակով պայմաններ կստեղծի հետագա գործողությունների համար...»¹⁷:

Իսրայելի նշյալ նախագծի վերաբերյալ «Սավաթ»-ի տնօրենի համաձայնության գեկուցագրում ասված է. «Սավաթ»-ի ղեկավար գեներալը կարգադրել է, որ երկրորդ գլխավոր վարչությունն ուսումնասիրի խնդիրը, գործողությունների նախագծի մշակելու հարցում կապ հաստատի Իսրայելի ծառայությունների հետ, ապա ներքափանցելու նպատակով ընտրի երրորդ գլխավոր վարչության գործակալներից...»: «Սավաթ»-ի ղեկավարություն¹⁸:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ շահի վարչակարգը ոչ միայն որևէ կերպ չի հովանավորել պաղեստինյան խմբերին, այլև վերջիններիս դեմ համատեղ գործողություններով և Իսրայելի արաբական երկրներ ներքափանցելու նպատակով արտերկրյա 3 բազա է տրամադրել նրան: Այլ կերպ ասած՝ շահը մեծ ծախսերի գնով, հօգուտ իսրայելցիների, պայքարել է պաղեստինցիների դեմ, իրականում նպատեղ պաղեստինցի ընդհանուր ճակատի և նրա հովանավորների բուլացմանը:

4. Ռազմական ոլորտ

Իրանի սպառազինության հիմնական մասն ապահովում էր Միացյալ Նահանգները, այնպես, որ անցյալ դարի 70-ականների կեսերին Իրանն առաջին տեղն էր զբաղեցնում ԱՄՆ-ից սպառազինություններ գնողների շարքում: Սակայն, քանի որ թագավորն իր գոյության երաշխիքը մեծաքանակ սպառազինության մեջ էր տեսնում, դրանք գնելու հարցում հայտնի էր դարձել իբրև «հզորության մոլազգար»: Նա ձգտում էր գնումներ կատարել նրանցից, ովքեր վաճառելու հարցում ասիմանափակումներ չունեին: Թագավորի և գեներալ Թուֆանյանի որոշմամբ, Իսրայելն իբրև այդպիսին, լավագույն տարբերակ համարվեց, ինչը պատճառ դարձավ, որ մաս Իրան-Իսրայել ռազմական փոխհարաբերություններ հաստատվեն և նրանց միջև կապերն էլ ավելի սերտանան: Իսկ, եթե Միացյալ Նահանգներում դեմոկրատական կառավարությունները կամ Կոնգրեսը երբեմն դեմ էին լինում Իրանին գեներ վաճառելուն, ապա Իրանն առավել մեծ քայլեր էր կատարում դեպի Իսրայել, որն իրանցի պաշտոնատարների տրամաբանությամբ դիտվում էր իբրև «Փոքր Ամերիկա»: Իսրայելյից սպառազինություններ գնելու գործընթացն այնպես արագ զարգացավ, որ շահի իշխանության վերջին տարիներին Իրանը համարվում էր Իսրայելի զենքի և քարոզչության խոշորագույն գնորդը:

Իսրայելն էլ Իրանին զենք վաճառելու իր դրդապատճառներն ուներ՝ նախ,

որ նրան դիտում էր իբրև իր ռազմավարական գործընկերը, որը պատերազմի դեպքում կարող էր մատակարարման և հովանավորման աջակցություն ցուցաբերել: Ինչպես դա տեղի ունեցավ արաբախարայելական 4-րդ պատերազմի ընթացքում, երբ Իսրայելը զենքի և զինամթերքի խիստ կարիք էր գգում: Այդ ժամանակ Իրանը ռազմական սարքավորումներ առաքեց Իսրայել: Բացի այդ, Իսրայելն Իրանին զենք վաճառելով և ռազմական բնագավառում ու այլ համագործակցությունների արդյունքում զգալի եկամուտ էր վաստակում, մյուս կողմից էլ երկար ժամկետով Իրանն ինչ-որ չափով իսրայելական սպառազինությունների հանդեպ կախվածության մեջ էր հայտնվում: Եվ, ի վերջո, Թեյ Ավիվը լիովին գիտակցում էր, որ ինչ ճանապարհով էլ իսրայելական սպառազինությունները տեղափոխվեն Իրան, դա հեղափոխական հակամենելով արաբական երկրների դեմ սպառնալիք էր համարվելու: Անա քե ինչու իսրայելցիները գործի դնելով ԱՄՆ-ում հրեական լոբբիստական շրջանակները, Միացյալ Նահանգներին համոզում էին, որ շահի սպառազինության սրահանջներին դրական արձագանքելն անհրաժեշտ է²¹:

Գեներալ Թու.Ֆանյանը Թեհրանում Իսրայելի զինվորական կցորդ գնդապետ Նիմուդիին ներկայացրած, համար 45187/2059 խիստ գաղտնի գրավոր դիմումով (իրանական տոմարով 18.7.1345թ.), ներքոիշյալ սպառազինությունները գնելու պահանջ էր ներկայացրել.

- ա) 14 հատ 160մմ տրամաչափի ակամանետ, լրացուցիչ պարագաներով,
- բ) 26 հատ 160մմ տրամաչափի ակամանետ լրացուցիչ պարագաներով,
- գ) 160մմ տրամաչափի ծանր տիպի T.N.T-ով կատարյալ ակամանետ՝ տասը հազար հրապատիճով,
- դ) 160մմ տրամաչափի կարտարյալ, դիրիլոնային ծխարծակող ակամանետ՝ 2500 հրապատիճով,
- ե) 160մմ տրամաչափի ծանր տիպի T.N.T-ով կատարյալ ակամանետ՝ 10000 հրապատիճով,
- զ) 120մմ տրամաչափի կատարյալ, դիրիլոնային ծխարծակող ակամանետ՝ 2500 հրապատիճով:

Նշյալ դիմումում շեշտվել է, որ թագավորը իշյալ զենքերն ու զինամթերքը գնելու հարցում վճռական է, ուստի Թու.Ֆանյանը պահանջել է, որ գործարքն անվերապահ տեղի ունենա²²:

Իրան-Իսրայել ռազմական փոխհարաբերություններից և համագործակցություններից կարելի է բխարկել նաև հետևյալը. եվրոպական երկրներից զենք-զինամթերք գնելու հարցում իսրայելցի խորհրդակցանների ծառայություններից օգտվելը, իսրայելական ընկերությունների և Իրանի ծովուծի միջև բնակարանաշինության ու էլեմարկությունների կառուցման նախագծերի մասին, Իսրայելում Իրանի F-16 ռազմական օդանավերի վերանորոգման վերաբերյալ կնքած

սայանանագրերը, Իրանի ծովուծի մավի էլեկտրոնային սարքերով զինումը, 450 կմ հեռահարությամբ երկիր-երկիր տիպի հրթիռներ արտադրելու գաղտնի նախագծի գործարկումը, Իսրայելում իրանցի զինվորականների ուսումնառության նպատակով տարբեր մակարդակի դասընթացների մասնակցելը:

Յեն Թեհրանն ու Թեյ Ավիվը հանգել էին այն եզրակացության, որ ռազմական ոլորտում համագործակցելով և բանակին հենվելով, տարածաշրջանային սպառնալիքների հանդեպ կարող են նույն շահերն ունենալ, սակայն ռազմական փոխհարաբերությունների ուսումնասիրություններն ապացուցում են, որ ընդհանուր առմամբ այդ փոխհարաբերություններում Իսրայելի շահերն ակնհայտորեն գերակայող էին: Նախ, Իսրայելն Իրանին զենք ու ռազմական տեխնիկա վաճառելուց և նրա բանակի տարբեր էշելոնի զինծառայողների համար դասընթացներ կազմակերպելուց իսկայական տնտեսական շահույթ էր ստանում, ինչը նաև բերելու էր իսրայելական սպառազինությունից կախվածության, ապա երկրի սաշտպանության քաղաքականության վրա Թեյ Ավիվի ազդեցության:

5. Մշակույթի և քարոզչության ոլորդ

Իսրայելն Իրանի հետ փոխհարաբերություններում հատուկ ուշադրության էր արժանացնում մշակույթի և կրթության հարցերը, ինչով նպաստել էր հետապնդում կրթությամբ նախադրյալներ ստեղծել և հասարակության կարծիքի վրա ազդելով իրականացնել իր մտադրությունները: Հաշվի առնելով Մոհամմեդ Ռեզա շահի հակումները դեպի պատմական Իրան, իսրայելցիներն սկսեցին Կյուրուսին չափազանց մեծարել իբրև հրեա տանջված ազգին և Մովսեսին փրկողի, ապա նրբանկատորեն քարոզչական տարբեր հնարքներ կիրառելով, Մոհամմեդ Ռեզա Փեհլեվիին անվանեցին «երկրորդ Կյուրուս»: Անշուշտ հաշվի առնելով, Մոհամմեդ Ռեզայի անձնական առանձնահատկությունները, այդօրինակ համեմատությունները նրա համար խիստ հաճելի և ողջունելի էին:

Իսրայելի պաշտոնատարները կարծում էին, որ Միջին Արևելքում Իրանի ոչ արաբ լինելու գործոնը երկու երկրների միջև զգացական մերձեցման նպաստավոր հող է ստեղծում: Տարբեր աղիքներով շահին Կյուրուսի հետ համեմատելով, իսրայելցիները ձգտում էին երկու երկրների փոխհարաբերություններն ընդարձակել, կյանքի կոչել իրենց ծրագրերը: Օգտագործելով շահի հակումը դեպի արքայաց արքայության ժամանակների պատմական անցյալը, ջանքեր էին գործադրում ցույց տալու, որ նա ևս Կյուրուսի օրինակով պետք է լինի տանջահար հրեա ազգի փրկիչն ու հովանավորը: Այս առնչությամբ, Իսրայելում լույս տեսնող «Ալանբա» օրաթերթը 1976թ. հունիսի 2-ի համարում գրել էր. «Արքայից արքայի վերաբերմունքն ու խոսելածնե այնպիսին են, որ բվուս է, քե Նորին Մեծությունը

պատկանում է 25 դար առաջ Իրանում իշխող կայսերական հարստություններին»²¹:

Իսկ 1975թ., Թեյ Ավիվուն, իրանական մի տոնախմբության ժամանակ, երուսաղեմի եբրայական համալսարանի դասախոս դկ. Ամնուն Նեթսերն իր ելույթում, անդրադառնալով Իրան-Իսրայել փոխհարաբերություններին, նշել է. «Անձամբ Մեծն Կյուրոսին համարում են պատմության մեջ առաջին սինաիստը: Կյուրոսի հայտարարությունը որևէ բանով Բեյֆորի հայտարարությանը չի գիշում: Այս դարում էլ Իրանը մեզ շատ-շատ է օգնել»²²:

Իսրայելցիները Կյուրոսի անվան քող տակ, իրենց երկրի խնդիրներն ուղղորդում էին նախանշված ընթացքով, Թեհրանում և Թեյ Ավիվուն հիմնադրել էին «Կյուրոսի տուն» անվամբ Իրանի մշակույթի կենտրոն, միաժամանակ ձգտելով, որ դրա կառուցման ծախսերի որոշ մասն ստանձնի Իրանի կառավարությունը: «Կյուրոսի տունը» Թեյ Ավիվուն գործում էր որպես քարոզչական, մշակութային կենտրոն: Իսրայելի պաշտոնատարներն այն օգտագործում էին Իրանի հետ փոխհարաբերություններն ընդլայնելու նպատակով:

Թեհրանում հրեաների մշակութային կենտրոններից մեկը՝ «Մեծն Կյուրոսը», որը վայելում էր Իսրայելի բազմակողմանի աջակցությունը, լուրջ գործունեություն էր ծավալում: Այս կենտրոնի գործունեությունը տարբեր բնագավառներում խիստ ընդլայնվել էր, ընդհուպ, այն ինչատակվում էր իբրև Իրան-Իսրայել մշակութային կապերի կենտրոն: Իրանի հրեական համայնքում «Մեծն Կյուրոս» կենտրոնը ծանր կշիռ ուներ և ուղղակի կամ անուղղակի մասնակցում էր ներքին գրեթե բոլոր գործունեություններին: Իրանի հրեաների կարծիքով՝ այն հրեակա-նության մշակույթի, ներհամայնքային և աշխարհի հրեաների ու Իսրայելի հետ կապի և համայնքի առաջատար, ակտիվ, աշխույժ երիտասարդների կենտրոնն էր: Իսկ նրանց մասննդական հայրենակիցների տեսակյունից հրեական գործուն ոգու և դրա մշակութային ու հոգևոր արժեքների դրսևորում, անգամ այն դիտում էին իբրև Իրան-Իսրայել մշակութային կապերի կենտրոն²³:

Մասնույի միջոցով հասարակական կարծիքի վրա ազդելն Իսրայելի գործընկերակցներից մեկն էր, ինչը կատարվում էր նրա շահերը պաշտպանողների միջոցով մամուլին տարբեր որակի աջակցություն ցուցաբերելով: Դարյուշ Հոմայունը մեկն էր այն մարդկանցից, ով Իսրայելի կողմից «Այանդգամ» օրաթերթի հիմնադրման առիթով ֆինանսական և այլ տիպի աջակցություններ ստանալու դիմաց, օրաթերթի նյութերին զվաճարապես հակաարարական երանգ էր տալիս՝ պաշտպանում Իսրայելի շահերը: Այս կապակցությամբ «Սավաթ»-ի 3048-թ համարի գեկուցագրում (իրանական տոմար 12.7.1346թ.) նշվել է.

«Իսրայելի ներկայացուցչության ղեկավարի տեղակալ պր. Մեիզ Ազրին

Թեհրանում հայտնել է, որ Դարյուշ Հոմայունը նրանից խնդրել է, որպեսզի հիմնադրման շեմին գտնվող «Այանդգամ» օրաթերթում շուրջ 2 միլիոն բուման ներդրում կատարի: Նա շեշտել է, որ ներդրումը կատարվելու դեպքում պարտավորվում է բերքի նյութերին ընդմիջու տալ հակաարարական և խրախուսամետ ուղղվածություն: Հոմայունը միաժամանակ Ազրինին է հանձնել «Բամշադ» պարբերականի 11 համարները, որտեղ հակաարարական մեկնություններ կային և խնդրել է, որ դրանք առաքվեն Իսրայելի ԱԳ նախարարությանը: Նա հավելել է, որ Իսրայել կատարած այդ ընթացքում, նախարարության պաշտոնատարների հետ քննարկել է խնդրո առարկան և նրանք խոստացել են հովանավորել ու աջակցել»²⁴:

Բացի այդ, Թեյ Ավիվ կատարած մեկ այլ այցի ընթացքում Իսրայելի վարչակարգի պաշտոնյաների հետ բանակցություններում պահանջել է, որ «Այանդգամ» օրաթերթի համար գնեն «Ռեթաթիյու» սարքը:

Իսրայելցիները մշակութային և քարոզչական զգալի միջոցառումներ ու քայլեր էին կատարում իրանցիների մեջ սինոխտական մշակույթի տարածման, Փեխելվիների վարչակարգ ներթափանցելու և արաբների ու պաղեստինցիների ճակատը թուլացնելու նպատակով: Այդ քայլերից էին.

Տեսածը ազդեցիկ կերպով մասնուում ներկայացնելու նպատակով իրանցի լրագրողների և մտավորականների Իսրայել այցելելու հնարավորությունների ստեղծումը, այնտեղ այդ երկրի առաջընթացը տարբեր ասպարեզներում նրանց ցուցադրումը: Ֆիլմերի, ցուցահանդեսների ու փառատոների կազմակերպումը, սպորտային մրցույթների անցկացումը և համալսարանական և ուսումնական գործունեությունների կարևորումը: Իսրայելցիները նշանակալից դեր են ունեցել Իրանում թագավորության հիմնադրման 2500-ամյակի տոնակատարությունների նախնական նախագիծը մշակելու հարցում: Բացի այդ, իրենց նպատակների իրագործման համար նրանք օգտագործում էին նաև բահայի աղաղնի անդամներին:

Ամփոփիչ

Պաղեստինյան կարևոր հարցի վերաբերյալ բազավորի դիրքորոշման ելույթումը նրա խոսքի և գործի երկակիությունն էր: Նա, արտաքուստ, խոսքով Իսրայելի որոշ քայլերը դատապարտելի համարելով, հովանավորում էր պաղեստինցիների և արաբների դիրքորոշումները: Սակայն գործնականում և վերաբերմունքով նպատառում էր Իսրայելի պետության հիմքերի ամրապնդմանը տմտեսական, քաղաքական, անվտանգության, ռազմական և քարոզչական ոլորտներում:

Իրականում հենց Իրանի նավթն էր, որ Իսրայելի արդյունաբերության մեջ վերածվում էր «կարմիր» կրակի և թափվում ճնշված պաղեստինցիների գլխին ու

ցավ պատճառում աշխարհի մարդկանց: Փնդելիների վարչակարգը, իրեն հզոր լծակ, Իսրայելի նպատակների իրագործման ուղղությամբ ազդեցիկ քայլեր է կատարել: Իսրայելի գոյության պաշտպանման, նրա ազդեցությունը Միջին Արևելքում տարածելու ուղղությամբ շահի վարչակարգը խիստ արժեքավոր ծառայություններ է մատուցել: Բացի այդ, Իսրայելի հետ համատեղ գործողություններով աջակցել է վերջինիս արաբական երկրներ, մասնավորապես պաղեստինյան խմբեր ներառվածներին, պայքարելով նրանց դեմ՝ թուլացրել նրանց: Իսրայելի հետ փոխհարաբերություններ հաստատելու ողջ ընթացքը կրոնական առաջնորդների, խորհրդարանի անդամների ու ժողովրդի, արաբական որոշ երկրների խիստ հակազդեցություններով ու ընմադատություններով էր ուղղորդվում, սակայն դրանք որևէ նշանակություն չունեցան և Իրան-Իսրայել փոխհարաբերությունների ընդհատմանը չհանգեցրին: Այս հարցում, իրեն կանխարգելիչ կարևորագույն գործոն, առանցքային և գլխավոր դերը պատկանում է Նոդին մեծություն Էմամ Խոմենիին: Նա, մշտապես, անգամ երբ շահի վարչակարգը գոմբում էր իր հզորության գագաթնակետին, քացահայտում էր շահի և Իսրայելի զաղտնի կապերը, ինչն էլ դարձավ հեղափոխական շարժման գլխավոր կարգախոսներից և ապստամբության դրոշմատուներին մեկը: Իրականում, քաղաքացիական և Իսրայելի միջև կապը, ընդդեմ շահի շարժումը համախմբող տարրերից էր, ուստի այն կարելի է դիտել իրեն Իսլամական հեղափոխության շարժիչ ուժ և արագություն հաղորդող գործոն:

Իսլամական հեղափոխության հաղթանակով, շահի վարչակարգի փլուզմամբ 30 տարի է ինչ Իրան-Իսրայել փոխհարաբերությունները դադարեցվել են, իսկ Իսրայելի դեպի անտունը պաղեստինցիների ներկայացուցչության վերածելը ռազմավարական խոշորագույն քայլ էր՝ ողողված ճնշված, կեղերված պաղեստինցիների հովանավորմանը: Այն ճշմարտության լույսից հույսի նշույլ առաջացրեց հոռետես հարմարվողականների սրտերում, ինչի գեղեցիկ պտուղներն այսօր Լիբանանի «Հեզբոլլա»-ի և պաղեստինցիների դիմադրության շարժման տեսքով ենք տեսնում: Փաստորեն, Իսրայելը Միջին Արևելքում կորցնելով իր ռազմավարական դաշնակցին, անհատուցելի վնասներ է կրել:

1. Ֆազլոլլահ Նուրոզիին Քիյա, Հուշեր Պաղեստինում ծառայության ժամանակներից, «Արի» հրատարակություն, Թեհրան, 1998թ., էջ 6:
2. Արդյ Ռեզա Հուշանգ Մահդավի, Իրանի արտաքին քաղաքականությունը Փնդելիների ժամանակ, «Փեյքան» հրատարակություն, 4-րդ հրատարակություն, Թեհրան, 1998թ., էջ 154:
3. Անդուր Ասի Զակուրն, Վտանգավոր կապեր, քաղաքական/Մոսես Աշրաֆի, «Երբեք» հրատարակություն, Թեհրան, 1992թ., էջ 166:
4. Ամերիկայի լրտեսական որջի փաստաթղթեր, «Թոլորգ Անդիշ» մշակույթի-արվեստի կենտ-

յունի հրատարակություն, 12-րդ հատոր, 36 համար, Թեհրան, էջ 4978-80:
5. Ալի Ռեզա Ազղանդի, Իրանի արտաքին փոխհարաբերությունները, «Արամ» հրատարակություն, Թեհրան, 1997թ., էջ 413:
6. Մորրեզա Ղանուն, Գաղտնի դիվանագիտություն, «Թարաթամ» հրատարակություն, Թեհրան, 2002թ., էջ 342:
7. Ամերիկյան լրտեսական որջի փաստաթղթեր, նույն տեղում, էջ 5022:
8. ԱԳ նախարարությանն ուղղված Իսրայելում Իրանի ներկայացուցչության դեկավար Մորրեզուի համար 2468/430 զեկուցագիր, գրված իրանական տոմարով 13.10.1357թ., 1971-72թթ., 8-րդ տրվդ, գործ 220-50:
9. Իրան-Իսրայել փոխհարաբերությունները ըստ վարչապետարանի տվյալների, նախագահական փաստաթղթերի կենտրոն, Թեհրան, 1998թ., էջ 50-220:
10. Բահրամ Ալթախթի, Իրանը և պատմությունը, «Ալամ» հրատարակություն, Թեհրան, 1988թ., էջ 294:
11. Աշխարհը սիոնիզմի գերիշխանության ներքո, «Իսլամական հեղափոխության պահապան գլխավոր»-ի հրատարակություն, Թեհրան, 1982թ., էջ 46:
12. Իսրայելում Իրանի ներկայացուցիչ Մորրեզա Մորրեզայի 1977թ. փետրվարի 5-ի զեկուցագիր, Իրանի ԱԳ նախարարության արխիվ, համար 910-12/312, 3-րդ արկղ, 5-210 գործ:
13. Արդյուհ Միրխոլազզադեհ, Փնդելիների արքայաց արքայությունը Իրանում, «Քանուն Նաշի» հրատարակություն, 3-րդ հատոր, Թեհրան, 1990թ., էջ 263:
14. Ալի Աբդուր Վիլայաթի, Իրանը և պաղեստինյան իրադարձությունները, ԱԳ նախարարության հրատարակություն, Թեհրան, 2001թ., էջ 164:
15. Մորրեզա Մորրեզայի 1978թ. դեկտեմբերի 27-ի զեկուցագիրը ԱԳ նախարարությանը, ԱԳ նախարարության արխիվ, 35336-38թ. (պատմական իրանական տոմար), 8-րդ արկղ, գործ 220-5:
16. ԱԳ նախարարության փաստաթղթերի արխիվ, 1974-5թթ., 6-րդ արկղ, 1-22 գործեր:
17. Մոհամմեդ Թադի Թադիփուր, «Սավաթ»-ի և «Մոսադ»-ի պայմանագիրը, Պատմական ռազմափոխությունների նամայա քաղաքական ուսումնասիրությունների կենտրոն, առաջին տարի, առաջին համար, 2003թ., էջ 113:
18. Նույն տեղում:
19. Թադի Նաջարիտադ, Սավաթը ու Մոսադը, Իսլամական հեղափոխության փաստաթղթերի կենտրոնական հրատարակություն, Թեհրան, 2002թ., էջ 74-75:
20. Նույն տեղում, 14, 15 համարները 12/29/1 գործից:
21. Մոհամմեդ Թադի Թադիփուր, նույն տեղում, էջ 164:
22. Նույն տեղում, էջ 165:
23. Ալի Աբդուր Վիլայաթի, նույն տեղում, էջ 71-72:
24. Իրանի արդյ պատմության ուսումնասիրությունների կենտրոնի փաստաթղթերի արխիվ, 893-32-21 համարի փաստաթուղթ:
25. Նույն փաստաթուղթը, համար 145-913-18:
26. Իրանի ԱԳ նախարարության արխիվ, Թեղ Ալիվի ներկայացուցչություն, 1353-4թթ., 6-րդ արկղ, էջ 1-23:

Մոհամմեդ Ռահիմ Էլիազի

Նախաբան

Հեղափոխությունը համարվում է հասարակության կյանքում խոշոր և հազվադեպ երևույթ: Հազվադեպ լինելը՝ այն վատ ճանաչելու, իսկ մեծությունը՝ երևույթի հանդեպ հակասական դիրքորոշումների պատճառ են դարձել: Այս երևույթը վերլուծելիս մշտապես պետք է նկատի առնվի մի կարևոր սկզբունք, դա երևույթի էության և առաջացման հարցում բազմազանությունն ու բազմակիությունն է: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հեղափոխություն իր ուրույն էությունն ունի, որի ինքնության վերլուծության, քարոզչության և ներկայացնելու ժամանակ պետք է ուշադրության արժանանան դրա քոլոր կողմերը, իսկ ներկայի և ապագայի իրավիճակի մասին խոսելիս պետք է խիստ զգուշավորություն ցուցաբերել: Իսլամական հեղափոխության ուսումնասիրության առնչությամբ պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին:

1. Գեոևս հսրակ չեն Իսլամական հեղափոխության վերջնական արդյունքները

Իսլամական մեծ հեղափոխությունից անցել է ընդամենը 25 տարի, իսկ դա շատ կարճ ժամանակ է, որպեսզի հնարավոր լինի հիմնավորված վերլուծություններ կատարել ներքին ու արտաքին իրավիճակների վերաբերյալ: Մեծ չէ նաև ոչ երկրորդական, նշանակալից գործընթացների ու իրադարձությունների ուսումնասիրությունների հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ թեև Իսլամական հեղափոխությունը հաղթանակել է, ներքին բշմամիների (սուտ հավատացյալներ, խեղաբարոյված գաղափարներ) և արտաքին ռոմնագությունների նկատմամբ լուրջ հերոսական դիմադրություն է ցուցաբերել, սակայն երբեք չպետք է մոռանալ, որ Իսլամական հեղափոխության հաղթանակը ոչ թե ներքին ու արտաքին մի շարք խորքային փոփոխությունների ավարտն է, այլ՝ սկիզբը: Ուստի գիտական և ընդունելի վերլուծություններ կարելի է կատարել առանձին կտրվածքով, մասնակի դեպքերում: Հետևաբար հստակ կարելի է նշել, որ Իսլամական հեղափոխության վերջնական արդյունքի՝ հեղափոխության հաղթանակի հետևանքով ներքին և արտաքին մարտահրավերների վերջը պարզորոշ չէ: Այդ պատճառով էլ ցանկացած վճռական տեսակետ հայտնելը նշանակում է ընդունել մարտահրավերների վերջնական ավարտը, դրանց մի կողմ դնել և հետևողական չլինել հեղափոխու-

թյան նպատակների հարցում: Իսկ նման գործելակերպը կլինի ոչ իրատեսական և գիտական մեթոդներից ու սկզբունքներից զուրկ, ինչը մեզ կշեղի ներկա իրավիճակի ճշգրիտ վերլուծության ճանապարհից: Բացի այդ, այն վերլուծությունները, որոնք վերաբերում են ապագայի կանխագուշակումներին, թերևս հավաստի չեն, քանզի, եթե անգամ այդ վերլուծությունները հաջողված հանարվեն, ապա դրանք կարող են լինել իրականության լոկ որոշ կտրվածքով: Գիտանք կանաչվեն Իրանի առջև ծագած բազմակողմանի և բազմաթիվ խնդիրների միայն մեկ կողմին և բնավ էլ կատարյալ ու անթերի լինել չեն կարող: Ուստի հետադարձական կանխագուշակումները կամ գիտական կանխատեսումները պետք է դիտարկվեն իբրև հեղինակների անձնական տեսակետ, այլ ոչ թե լիարժեք ճշմարտություն:

2. Որոշ վերլուծություններում «պեղք էլ»-ների և «առկաների» վերդափոխությունները

Գլխիվայր վերլուծություններ, որոնք հիմնված են ոչ թե իրականությունների, այլ վերլուծաբանի ցանկությունների ու երազանքների վրա: Հեղափոխության հաղթանակից հետո ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ ստեղծված վերլուծական հսկայական գրականության մեջ թիչ չեն այդօրինակ վերլուծությունները: Այս կտրվածքով արված վերլուծություններում հեղինակի գլխավոր նպատակն առկա իրավիճակի հետ ընթերցողին համաձայնել թույլ չտալը, շատ դեպքերում Իսլամական հեղափոխության նկատմամբ «քաղաքական անտարբերության» սերմանումը և «պարտավորվածությունների հիմքերի խախտումն» է, ինչը կատարվում է հեղափոխությունն անպտուղ և ապարդյուն ներկայացնելով: Այլ խոսքով՝ ծայրահեղ բռնապետական տեսանկյունից, որը հիմնված է ամեն ինչի կամ ոչնչի վրա, այնպիսի վերլուծություն է ներկայացվում, այնպես է նկարագրվում, որ թվում է, թե հեղափոխությունը որևէ ուշագրավ ձեռքբերում չի ունեցել: Այդ պատճառով էլ պետք է միմյանցից տարանջատել վերլուծաբանի երազանքները, իրականում տեղի ունեցածը և ընթացող իրադարձությունների վերաբերյալ նյութերը:

3. Ապագան կախված է մեր գործունեությունից

Իսլամական հեղափոխության ապագան, ինչպես էլ այն դասավորվի, ներքին ուժերի ջանքերի ու սխալների հանրագումարի արդյունք է: Թեև իսլամական Իրանն աշխարհի հանրության մեջ գտնվում է այլ երկրների կողքին և փոխհարաբերվում նրանց հետ, սակայն նրա ապագայի ինչպիսին լինելու գլխավոր փաստարկը, գործադրված ջանքերի քանակն ու որակը, ինչպես նաև աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ դրանց հարաբերակցության

կարևորումն է: Ջանքեր ասելով, նկատի ունենք երկու գլխավոր տարր.

ա) կառավարում իրենված գիտական ու հավատքի սկզբունքներին,

բ) ինքնավստահություն:

Ամերածեշտ է հիշատակել, որ «Աստուծոն ինչելու» պարզ տարրի լինել-չլինելը խոր ազդեցություն է գործում մեծ ու փոքր գործունեությունների և դիրքորոշումների հարցում:

Այժմ ամողադառնամբ հեղափոխության որոշ ձեռքբերումներին:

1. Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրությունը

Սահմանադրությունը որևէ ազգի ձգտումների, «պետք է»-ների փաստաբանորեն է: Նրա կարևորությունը, երկրի մայր օրենքը լինելուց զատ, նաև նրանում է, որ մշակվել, գրվել է այն պահին, երբ ողջ ազգը համուն նպատակի համերաշխաբար համախմբվել և առաջ է շարժվել: Այդօրինակ նպատակով իրավիճակները հազվադեպ են լինում, ուստի նման պայմաններում մշակված օրենքն ազգի ոգու ամրագրումն է, որն ի գորտ կլինի պատասխանել ազգի ներկային և ապագային վերաբերող հարցերին: Իհարկե, ժամանակի և իրավիճակի թելադրանքով Սահմանադրության մեջ բարեփոխումներն անհրաժեշտ են դառնում, սակայն դրանք կարելի է իրականացնել պայմանով, որ չհակասեն բուն էությանը, ոգուն և ազգի երազանքներին: Սահմանադրությունը կարող է հիմնովին փոխվել, երբ ազգը նման փոփոխության կենթարկվի և այլ իրավիճակ ստեղծում ցանկություն կունենա:

Բնական է, որ Սահմանադրության բովանդակությանը կատարելապես ծանոթանալու նպատակով այլ ելք չկա, քան նրա բոլոր գլուխներն ուսումնասիրելն է: Այսուհանդերձ ջանքեր են գործադրվել Իսլամական Հանրապետության սահմանադրության նշանակությունը, բովանդակությունը, ազդեցությունը և տեղն ու դերը ներկայացնել ուր հարցով:

1.1. Սահմանադրության մշակման ու հաստատման արագությունը

Հեղափոխություն կատարած ցանկացած երկրի համար «օրենքն» առանձնահատուկ առանցքայնություն ունի, քանզի հարթանակից հետո խիստ անհրաժեշտ է դառնում գործերը կարգավորել մի բանի հիման վրա, որն ընդունելի և հարգելի է, ի գորտ է դառնալ այն շրջանակը, որով շարժումներն ու գործունեությունները դեպի հեղափոխության նպատակներն են ուղղորդվելու: Այդ պատճառով էլ օրենքների մշակումը, որոնց հանրագումարը «Սահմանադրություն» է կոչվում, կենսական նշանակություն ունի, որովհետև հեղափոխությունից հետո ստեղծվում են դժվարին, անկանխատեսելի իրավիճակներ, ուստի, եթե դրանք

լուծելու համար չլինեն վստահելի չափանիշներ ու հիմքեր, ապա հեղափոխությունից բխած խառնաշփոթը սանձարձակ կերպով տարածվելու է ողջ երկրի մակարդակով՝ ի դերև հանելով ազատության ու անկախության երազանքները: Ուստի, այսօր կարելի է դրվատանքով խոսել երկրի այն ժամանակվա պատասխանատուների խորաթափանցության ու իմացության մասին, ովքեր գիտակցելով և լինողներով այդ հարցի կատարությունը՝ հեղափոխությունը պահպանելու համար նախադրյալներ ստեղծեցին: Իրականում այն, ինչ նրանք կատարեցին, հաստատում է, որ «Սահմանադրության հստակեցումը երկրի կայունացման գլխավոր ճանապարհներից է»: Ուստի, եթե Սահմանադրությունն արագությամբ չմշակվեր ու վավերացվեր, բազմաթիվ ու դժվարին խնդիրներ էին ծառանալու երկրի առջև:

1.2. Սահմանադրության մշակման գույզդրման մեթոդի կիրառումը

Սահմանադրությանը վերաբերող գրականության մեջ գլխավորապես խոսվում է դրա մշակման երկու մեթոդի մասին: Առաջին դեպքում գործում է վերևից ներքև միակողմանի կապը՝ ղեկավարը կամ իշխանության եկած կազմը, սահմանադրության անվան ներքո, մի շարք օրենքներ է ներկայացնում և պարտադրում բնակչությանը: Դրա միակ առավելությունն է, ինչպես ասում են՝ վատ օրենքը լավ է չլինելուց: Բայց, բնական է, որ բնակչության իրավունքները գլխավորապես անտեսվում են:

Սահմանադրության մշակման երկրորդ մեթոդը հանրության կարծիքից օգտվելն ու նրան հենվելն է, ինչը կարող է իրականանալ երկու ձևով. ուղղակի՝ հանրաքվեի միջոցով և անուղղակի՝ ժողովրդի ընտրյալների: Թեև այս մեթոդով սահմանադրության մշակման դեպքում հանրության կարծիքը հարգվում և օգտագործվում է, սակայն նրա ձևերի առանձին-առանձին կիրառումներն անկատար են: Իսլամական Հանրապետության սահմանադրության մշակումը կատարվել է բանիմացների տեսակետներից օգտվելով և բնակչության ձայներին հենվելով, ինչը գործնականում նոր, օրինակելի նախաձեռնություն է, այլ կերպ՝ գույզդրված: Այս բարի ավանդույթն Իսլամական հեղափոխության ժողովրդավարական էության խորության, հեղափոխության մեծն առաջնորդ էմամ Խոմենեյիի հեղափոխական ազնվության վկայությունն է, ինչը կարևոր դեր է ունեցել Իրանի ժողովրդի պատմական առաջընթացի և նրա քաղաքական անարդարությունից ու ստավոր կապալանքներից ազատագրվելու հարցում: Հեղափոխության գազաթնակետին այդօրինակ գործելակերպը երկրում գրեթե աննախադեպ էր, միաժամանակ կրոնի ու քաղաքականության միահյուսման գործնական քայլ: Զանգի մի կողմից հաշվի են առնվել կրոնի պահանջները, մյուս կողմից՝ կարևորվել ժողովրդի կարծիքը՝ իբրև հիմք, և համուն որի կիրարկվելու են օրենքները:

3-1. Ասրվածային օրենքների և ինքնիշխանության ընդունումը

Իսլամական իրավաբանության մեջ օրենքն անվանվել է շարիաթ, իսլամական օրենք: Ասում են, որ իսլամական շարիաթն օրենք է: Պետական այս կարգերում իշխանության մեծաշնորհը պատկանում է Աստծուն, իսկ օրենքը նրա հրամանն ու կարգադրությունն է: Իսլամական օրենքը կամ Աստծո հրամանը բացարձակ իշխանություն ունի բոլոր մարդկանց և իշխանության վրա: Բոլորը, սկսած Մեծն մարգարեից մինչև Նորին մեծության խալիֆները և այլոք, հար-հավիտյան ենթակա են օրենքին: Հենց այն օրենքին, որն Աստծո կամոք Երկիր է իջել, հնչել մարգարեի շուրբերից:

Սահմանադրության մեջ բազմիցս այդ հարցը շեշտվել է, որի մախարանում նշված է. «Սահմանադրության առաքելությունն այն է, որ շարժմամբ հավատքի հիմքերն իրականություն դարձնի և ստեղծի այնպիսի պայմաններ, որտեղ մարդը կդաստիարակվի իսլամական համաշխարհային վեճն արժեքներով»:

Սահմանադրության տարրեր գլուխների և հիմնադրույթների սկզբում, այսինքն՝ առաջին գլխի առաջին հիմնադրույթում կարդում ենք. «Իրանն Իսլամական Հանրապետություն է, որին Իրանի ժողովուրդն իր հնամենի դավանանքի և իրավունքի ու արդարության իշխանության համոզմունքի վրա հիմնված կողմ է քվեարկել Նորին մեծություն այաթոլա Էմամ Խոմենիին՝ օրինական արժանի հոգևորականի առաջնորդությամբ Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո անցկացված հանրաքվեում»:

Սահմանադրության 177-րդ հիմնադրույթում, որը հավելվել է 1987թ. բարեփոխումների ժամանակ, մեկ անգամ ևս հաստատվել է կրոնին կապվածությունը հետևյալ բացատրությամբ՝ իսլամական կարգերին վերաբերող բոլոր հիմնադրույթները, բոլոր օրենքների ու կանոնների՝ իսլամական սկզբունքների և հավատքի հիմքերի, Իրանի Իսլամական Հանրապետության նպատակների վրա հիմնվածությունը, իշխանության հանրապետական լինելը, կրոնական առաջնորդությունը, ինչպես նաև հանրության կարծիքով և երկրի պաշտոնական կրոնի վրա հիմնված լինելու հանգամանքը փոփոխության ենթակա չեն»:

1-4. Սահմանադրությունը ենթակա է բարեփոխումների

Այսօրվա աշխարհի երկու գլխավոր առանձնահատկությունն արագությունն ու փոփոխելիությունն են: Այնուհետև ու նրա աշխատակիցներն այս դարաշրջանը «Արագ փոփոխությունների ժամանակաշրջան» են անվանել:

Փոփոխությունները կատարվում են ասրատիվի արագությամբ, այնպես որ Տրոյկին անցյալ դարակարգին նշել է, թե ով ցանկանում է ապրել խաղաղ կյան-

քով, չպետք է լույս աշխարհ գար 20-րդ դարում: «Գարաշրջանը» քեղադրում է, որ սկզբունքների հիման վրա և ամերաժեշտությունների գիտակցությամբ, համապատասխան, օրինական մախադրյալներ ստեղծվեն նպատակահարմար փոփոխություններ կատարելու համար: Այդ հնարքը ցուցադրվեց 1989թ. Սահմանադրության վերանայումով, ինչը տեղի ունեցավ շուրջ մեկ տասնամյակ տարրեր պայմաններում երկիրը կառավարելու փորձի առկայությամբ: Այդ ժամանակ Սահմանադրությանն ավելացվեց ևս մեկ գլուխ, որտեղ հաստակցվել, օրինականացվել է Սահմանադրության վերանայման հարցը:

Առկա է նաև կարևոր մի այլ հարց. «Խորհրդի հաստատած օրենքներն առաջնորդի վավերացումից, ստորագրվելուց հետո, դրվում են հանրաքվեի, որը պետք է հաստատվի մասնակիցների բացարձակ մեծամասնության ձայներով»: Իսլամական Հանրապետությունը ձեռքբերվել է օրենքի բոլոր տեսակի փակուղիներից, միաժամանակ երբեք չի մոռացել իրեն ստեղծողին ու հովանավորին՝ ժողովրդին, ուստի հաճախ է հիշատակվում նրա օրինական տեղի ու դերի մասին: Ներկայիս օրինակն այդ դեպքերից է:

1-5. Ընդօրինակելուց գերծ

Իսլամական հեղափոխության ընթացքում անկախության ձգտման բարձր ուղին և երկրեն աշխարհի գերիշխանության փակ մթնոլորտից ավելի հեռուն գնալու ցանկությունը պատճառ դարձան, որ Սահմանադրությունը մշակվի քննադատական մախաձեռնության դիրքերից և այն հանրաքվեի դնելով հաստատվի խրախուսելի նոր եղանակով: Մինչդեռ շատ երկրների Սահմանադրությունը բացարձակապես ընդօրինակվել է ուրիշներից կամ էլ փոխառվել չնչին փոփոխություններով: Հատկանշական է, որ ընդօրինակումը, մասնավորապես օրենքի դեպքում, խիստ զգայուն հարց է, ուստի ամերաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ իրավիճակներ ու պայմաններ: Քանզի օրենքը ստեղծվում է կիրառվելու նպատակով, ուստի, եթե կիրարկման մախադրյալները նկատի չառնվեն, հայտնվելու են բազմաթիվ խնդիրների առջև և օրենքները մնալու են բոթի վրա: Քաբուլյանը այս առնչությամբ հիշատակել է, որ արտերկրից փոխառված օրենքներն օգտակար կարող են լինել, եթե օրենսդիրն օտարերկրյա միջավայրի բոլոր գործոնները համեմատի սեփական հասարակության հետ և օրենքը ստեղծելու ժամանակ չմոռանա իր ժողովրդի քնավորությունը, կրոնը, քաղաքական ու տնտեսական իրավիճակները, աշխարհագրական դիրքը և պատմությունը:

Յավթը, առաջներում բացակայում էին այդօրինակ մոտեցումները, իսկ Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը ձգտել է իրացնել դրանք, ինչը ինքնին Իսլամական հեղափոխության կարևոր ձեռքբերումներից է:

Ինչպես բացատրում էր Էման Խոմենյին՝ Սահմանադրությունը խոշոր, ավելին՝ Իսլամական Հանրապետության ամենախոշոր նվաճումն է¹⁶:

1-6. Իսլամական խորհրդարանի բոլոր անդամներն ընդգրվում են

Իսլամական հեղափոխության հաղթանակով «ժողովուրդն» օրինական տեղ ու դեր ունեցավ, իսկ խորհրդարանը դարձավ ժողովրդի տունը: Ստեղծվեց ներկայացուցչական համակարգ, ձևավորվեցին տեսակետներ, կարծիքներ արտահայտելու օրինական եղանակներ, ինչն առանձնահատուկ, օգտակար ազդեցություն ունի հասարակական, քաղաքական զարգացումների ու գործընթացների վրա: Մարդիկ աստիճանաբար գիտակցեցին, որ քաղաքական ու հասարակական հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելն իրենց անբեկանելի իրավունքն է: Թեև իշխանության ղեկին լինելը մասնագիտական հարց է, սակայն քաղաքականությունը բաց դաշտ է բոլոր քաղաքացիների ազդեցիկ ներկայության համար: Եվ, քանի որ օրենքները հենց նրանց վրա են տարածվում ու կիրառվում նրանց համար, ուստի անհրաժեշտ է, որ ժողովուրդն օրենքով արտահայտի իր տեսակետները և այդպիսով մասնակցություն ունենա որոշումներ ընդունելու հարցում: Սահմանադրության 6-րդ հիմնադրույթում ասվում է. «Իրանի Իսլամական Հանրապետությունում երկիրը պետք է կառավարվի հանրության կարծիքի հիման վրա՝ ընտրությունների միջոցով (նախագահի ընտրության, Իսլամական խորհրդարանի և տեղական խորհուրդների ու այդօրինակ այլ ընտրությունների) կամ հանրաքվեի՝ այն դեպքերում, որոնք նախատեսված են այս օրենքի այլ հիմնադրույթներում»¹⁷:

Այդօրինակ ձեռքբերումների արժեքը շատ լավ հասկանալի կլինի, երբ գիտենանք, որ 1906թ. հաստատված Սահմանադրության 45-րդ հիմնադրույթի համաձայն, սենատի 60 անդամներից 30-ին ժողովուրդն էր ընտրում, իսկ մյուս կեսին՝ նշանակում էր թագավորը¹⁸:

1-7. Սահմանադրության իրավական վերահսկողության թերությունների վերացումը

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրության մեջ, սովորական օրենքների հետ համադրման ավտոմատ կարգ է սահմանված, ինչը համարվում է գլխավոր օրենքի կարևոր ձեռքբերումներից: Խորհրդարանում ընդունված օրենքների Սահմանադրությանը համապատասխանելը վերահսկելու համար ստեղծվել է Սահմանադրության պահպան խորհուրդ, մի կառույց, որի լիազորությունները հստակեցվել են Սահմանադրության 91-րդ հիմնադրույթով. «Իսլա-

մական օրենքների և Սահմանադրության պաշտպանությունը, իսլամական խորհրդարանում հաստատված օրինագծերի և որոշումների դրանց չհակասելով...»:

Իսկ Սահմանադրության 94-րդ հիմնադրույթում նշված է. «Խորհրդարանում հաստատված բոլոր օրինագծերն ու որոշումները պետք է ուղարկվեն Սահմանադրության պահպան խորհուրդ՝ ... »: Մինչդեռ շահի վարչակարգում, քանի որ Սահմանադրությունը ձևական բնույթ էր կրում, այն վերահսկելու իրավական կարգ գոյություն չուներ:

Նախորդ Սահմանադրություն մեջ (1906թ. Սահմանադրությունը և 1907-ի լրացումը) խորհրդարանի որոշումների ու ընդունած օրենքների Սահմանադրության հետ համապատասխան լինելու հարցը վերահսկելու նպատակով որևէ կառույց չէր նախատեսվել¹⁹:

Հետևաբար, ինչպես իրավագիտիկն էլ էր Գազին. «Սահմանադրության պահպան խորհրդին կարելի է օրենսդիր իշխանության անբաժանելի մասը համարել»²⁰:

1-8. Քաղաքական համակարգի ձևավորումն ու դինամիկ դարձնելը

«Առաջնորդության» և «նախագահության» ինստիտուտները, որոնք նախկինում չկային, պատճառ են դարձել, որ քաղաքական նոր վարչակարգը, ինչպես ժողովուրդն իշխանության ձևը ընտրելիս էր ցանկացել, լինի «Իսլամական հանրապետություն»: Այն կարողացել է որպես քաղաքական համակարգ հարատևել, կառուցվածքային և օրենքի տեսանկյունից իբրև հրաշալի ձևաչափի ի գորու է եղել կատարել իշխանության պարտականությունները: Գործնական տեսակետը և անցյալի փորձառությունից դաս քաղելու ոգին, որոնցով տոգորված են հեղափոխության մեծն առաջնորդը, պատճառ դարձան, որ ստեղծվի «Վարչակարգի շահերը բնութաչող ասամբլեա» անվանը ես մի կառույց և ավելանա երկրի քաղաքական կառույցների (112-րդ հիմնադրույթ): Այն գործնականում բարձրացրել է վարչակարգի ճկունությունը և մարտունակությունը՝ ընդդեմ տարբեր խնդիրների ու դժվարությունների:

Այսպիսով՝ կատարելագործվեցին քաղաքական համակարգի կապի ներքին ուղեծիրները, հետևաբար առաջացած խնդիրների օրինական լուծման համար շրջադարձի հնարավորություն ստեղծվեց և իսլամական հանրապետության վարչակարգն ավելի հաստատագրվեց օրինական կառույցների ձևաչափերի շրջանակում: Ուշագրավ է նաև այն, որ առաջնորդությունը, Սահմանադրության պահպան խորհուրդը և Վարչակարգի շահերը բնութաչող ասամբլեա կառույցները բազմիցս ոչ հիմնավոր քննադատությունների ենթարկվեց, ինչը բխում էր վարչա-

կարգի հիմքերի ամրապնդվելու առիթով ընդդիմադիրների դժգոհությունից: Երբևեցն այդ առումով քննադատության թիրախ էր դառնում նույնիսկ նախագահությունը:

Մի կարևոր հանգամանք է, որ պետք է հիշատակվի Վարչակարգի շահերը բնորոշող ասանբնայի առնչությամբ, այն է, որ այստեղ էլ ժողովուրդը և նրա օրինական դրսևորումը՝ խորհրդարանը, չեն մոռացվել: Իսկ դա նշանակում է, որ խնդրո առարկա կատայցը, քեն որոշում է ընդունում խորհրդարանում հաստատված օրենրի ճակատագրի վերաբերյալ, սակայն (Սահմանադրության 112-րդ հիմնադրույթ) լիագործված չէ օրենր ընդունելու: Ուստի, եթե անհրաժեշտություն առաջանա խորհրդարանի հաստատած օրենրում փոփոխություն կատարել, դա Իսլամական խորհրդարանի լիագորությունն է, այլ կերպ՝ օրենր ստեղծող ժողովրդի ներկայացուցիչներն են¹²:

2. Դավանանք, քաղաքականություն և կրոնական իշխանության արդյունավետությունը

Քաղաքական համակարգի և իշխանության օգտակարության, արդյունավետության հարցը պետք է դասել անորոշ, ոչ հստակ հարցերի թվին: Քանզի դրանց օգտակարության ու արդյունավետության կամ այդ հատկանիշների բացակայության հարցը գլխավորապես կախված է անհատների փորձառությունից, ցանկությունից և զգացմունքներից, ինչպես նաև վերլուծաբաններից, հետևաբար չի կարող իմաստավորվել վարչակարգերի գործունեության դեպքում: Դե կարելի է բացատրել այսպես, բացառվում է, որ քաղաքական որևէ համակարգի գործունեությունը լիովին ապարդյուն լինի, քեն հնարավոր է, որ դրա որոշ հատվածներում մշտապես առկա լինեն թերություններ: Ուստի անկախ այն բանից, քե խոսքը վերաբերում է կրոնապետական կամ այլ վարչակարգի արդյունավետության հարցին, չպետք է մոռանալ, որ իրական, գործնական իրավիճակները գտնվում են երկու ծայրահեղություն՝ բացարձակ ապարդյունության ու բացարձակ արդյունավետության միջև: Հետևաբար կարող է քննարկման և քննադատության առարկա դառնալ ներկայիս գործունեությունների հիման վրա ենթադրություններ անելն ապագային հետանկարներ մասին:

Ուստի, օգտակարությունը հարաբերական հասկացություն է և մեծ չափով անորոշ, իսկ անորոշության գլխավոր պատճառն այն չափանիշներն են, որոնցով դատողություններ են արվում: Հետևաբար, ցանկացած վերլուծություն ներկա իրավիճակի վերաբերյալ օգտակարության ու անօգտակարության տեսանկյունից, ընկղմվում է կանխակալ դատողությունների լուսապսակում, ինչի քննադատումը, ճիշտը սխալից տարբերելն առաջին հերթին կախված են քարքմված նա-

խապաշարումներից, որոնց ազդեցության ներքո է գտնվում վերլուծաբանի աշխարհայացքը, դրանից հետո է, որ փաստերն ու ապացույցները պետք է մանրագնհի ուսումնասիրվեն: Այլ կերպ ասած՝ օգտակարության հարցը քննարկելիս անհրաժեշտ է կարևորել երկու հարց.

- ա) Օգտակարություն հասկացության հարաբերականությունը,
- բ) Օգտակարություն հասկացության անորոշությունը:

Այլ խոսքով, օգտակարությունն անվտանգություն և հզորություն հասկացությունների մեմա քեն չունի օբյեկտիվ դրսևորում, սակայն անժխտելի գոյություն է, ուստի քաղաքական որևէ կարգի օգտակարության ու ոչ օգտակարության մասին քննարկումն ապարդյուն և անհնարին չի կարելի համարել: Բայց և այնպես հիշյալ երկու հարցերից զատ, պետք է հաշվի առնվեն նաև այլ գործոններ՝ օգտակարության հարցի քննարկման ժամանակաշրջանն ու պայմանները: Եվ, քանի որ խնդիրը վակուումում չի արձարձվում, ուստի կշաղապտելու համար «համեմատումն» անխուսափելի է, որպեսզի հասներ օգտակարություն հասկացության ավելի խոր շերտերին: Քանզի համեմատության ժամանակ մեզ անհրաժեշտ են գնահատվող, համեմատվող փաստարկների լիակատար և ստույգ իմացությունը, դրանց նշանակության ու դերի գիտակցությունը: Հետևաբար որևէ վարչակարգի օգտակարության վերաբերյալ եզրակացությունն ընդունելի կարող է լինել այն դեպքում, երբ դրանում արդյունավետության ու ապարդյուն լինելու մասին երբեք բացարձակ դատողություն չլինի, ապա, հաշվի առնելով այն, որ այդ հասկացությունը թխում է լայն իմաստով հասարակական խնդիրների վերաբերյալ տեխնիկական հայացքից, պետք է կենտրոնացված լինի փոքր և հստակ հարցերի վրա:

Նկատի առնելով վերը նշվածը, կրոնապետական վարչակարգի արդյունավետությունը ոչ կրոնականների հետ համեմատելիս տեսականորեն չի կարող մի շարք ընդհանրություններից այն կողմ գնալ: Սակայն «Իսլամական Հանրապետության» դեպքում՝ իրեն քաղաքական համակարգի, որը ջանքեր է գործադրել, որպեսզի երկրի Սահմանադրությունը և գործադրած ջանքերը լինեն իսլամի ու դրա շիա ուղղության օրենքների առանցքի շուրջ, կարելի է ավելի որոշակիորեն անդրադառնալ որոշ հարցերի, ինչի մանրամասնումը, անշուշտ, պահանջում է տարբեր ոլորտների լուրջ ուսումնասիրություն և խնդիրների գիտակցում: Օրինակ, պետական տարբեր վարչությունների ծառայողների վարվելակերպում ունիվերսալիզմն ու առանձնահատուկը և նման բազմաթիվ այլ դեպքերի ուսումնասիրությունը, որոնց արդյունքը լիովին որոշակի լինի և ուսումնասիրությանը կիրառական բնույթ տա, այսպես արդյունավետության մասին ցանկացած քննարկում անիմաստ կլինի: Քանզի արդյունավետության հարցի քննարկման գլխավոր նպատակը թերությունների վերհամումն ու դրանց վերացումն է և ոչ քե հասարակագիտության առումով քաղաքական համակարգի համընդհանուր ժխտումը:

Այն ինչ տեսականորեն կարելի է ամփոփ ներկայացնել, որ կրոնական իշխանության (խալամական) անհրաժեշտ են որոշակի պայմաններ, կարգ ու կանոններ, որոնք թեև մարդու համար են, սակայն դրանց սկզբնաղբյուրը մարդը չէ: Այս դեպքում գլխավորը կրոնական «վճիռները» և դրանց իրականացման անհրաժեշտությունն է, ինչը վերաբերում է կրոնական (խալամական) տեսանկյունից մարդաբանության պարզաբանմանը: Գերմարդկային օրենսդրի գոյության անհրաժեշտության հարցն առանձնահատուկ նրբությամբ ներկայացրել է Ժան Ժակ Ռուսսոն «Հասարակական պայմանագիր» գրքում.

«Բոլոր ազգերի համար օգտակար օրենքների բացահայտման համար անհրաժեշտ է գլխավոր բանականությունը, որը մարդկային կրքերը տեսնի, սակայն ոչինչ չզգա: Բնության հետ որևէ կապ չունենա, բայց լիովին ճանաչի այն: Մեր երջանկությունը նրան չվերաբերվի, սակայն պատրաստակամորեն աջակցի մեր դրան: Եվ, վերջապես, բավարարվի այն փառքով, որը բացահայտվում է ժամանակի ընթացքում, այն է՝ մեկ դար ծառայի և արդյունքը տեսնի միայն հաջորդ դարում»:

Իրականում, քանի որ իսլամը հիմնված է վճիռների վրա՝ իբրև գործելու շրջանակ և առկա է այդ վճիռները փոփոխության ենթարկելու (երկրորդական վճիռներ) և նոր վճիռների արտածման հնարավորություն, ուստի կրոնապետության պարտականությունը հող նախապատրաստելը, հնարավորություն ստեղծելն է մարդուն արարչության բարձրագույն նպատակների ուղղությամբ գործացնելու համար: Հետևաբար հասարակության կարգավորումը զուտ խղճի և քարոչական քարոզչության վրա չի հիմնվում, ինչը շատ կարևոր հարց է և, որի անտեսումն անպտուղ է դարձնում կրոնապետության անհրաժեշտության ու մարտահրավերների հարցի բննարկումը: Քանզի կրոնապետության և այլ տիպի քաղաքական կարգերի միջև գլխավոր տարբերությունը մարդաբանության ու նրա ճանաչման մեջ է, որոնցով նրանք ներկայացնում են աշխարհն ու այն կառավարելու եղանակները: Իսլամի մեջ քարոչականությունը, վճիռները և իրավունքը միահյուսված են, անհատն ու հասարակությունն ապրում են արարչական համակարգում իրենց տեղին ու դերին համապատասխան, իմաստավորում իրենց կյանքը, մինչդեռ աշխարհիկ վարչակարգերում կրոնը տարանջատվում է քաղաքականությունից, կարևորվում է կյանքի լոկ նյութական կողմը, այդպիսով ապրելու անհրաժեշտությունը և դրա իմաստն ընկղմվում են խոր անորոշության և անպատասխան կասկածների մեջ:

1979թ. փետրվարի 11-ից ի վեր Իրանում քաղաքականության մեջ կրոնի գործնական ներկայության ազդեցությունը՝ Իսլամական Հանրապետության շրջանակներում գնահատելու հարցում, անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել երկու հանգամանք՝ նախ Իրանում իսլամի, մասնավորապես շիա ուղղության, խոր

արմատներն ու հասարակական ամուր հիմքերը, ապա՝ իսլամի ճշմարիտ կրոն լինելը: Թեև անժխտելի է նաև, որ իսլամի անվան տակ առկա են որոշ սնոտիապաշտություններ և խեղված հավատալիքներ, սակայն դրա, իբրև աստվածային ճշմարիտ կրոն լինելու հանգամանքը պատճառ է դառնում, որ կարողանանք խոսել մի յուրօրինակ կապի մասին: Արարչի և արարածների միջև առկա կապը, ինչն իրանցիներն զգացել են իրենց կյանքի տարբեր փուլերում, նրանց մշտապես մղել է դեպի կրոն, դեպի շրջափախված այն կապը, որն իր ազդեցությունն է բողել նրանց տարբեր վարվելակերպերի վրա: Ուստի նրանց վարվելակերպը ու վերաբերմունքները վերլուծելու ժամանակ պետք է հաշվի առնվի այդ կարևոր գործոնը: Կրոնն ու հոգևորականների առաջնորդող դերը՝ ընդդեմ շահի վարչակարգի հեղափոխություն կատարել և այն, որ իսլամին հենվելով հեղափոխության մեծն առաջնորդը ձգտել է հեղափոխության հարթանակից հետո ամրագրել «ժողովրդի իրավունքները», հնարավորություն ստեղծել տարբեր բնագավառներում առանց արգելի կանանց ու տղամարդկանց ներկայության համար, անժխտելի են: Օրինակ, հարկադրված պատերազմի ընթացքը, որը հանրահայտ կանոնների համաձայն՝ քվում էր անվերահսկելի, ճշյալ հանգամանքը պատճառ դարձավ, որ սուրբ պաշտպանության բնույթ կրի, սանձահարվեց, երևան եկավ կամավորականների «Բասիջ» (գորահավաք) կազմակերպությունը և քասիջական մշակույթն իրանցիներին ընձայվեց իբրև մնալու փառք ու պարծանք: Մի աշխարհում, որտեղ «խիզախությունը» գերտերությունների մշակույթում անհետացման շեմին էր հայտնվել, հեղափոխությունն ստեղծեց խիզախ, պատմություն կերտող «Բասիջը» և ավետեց արդարության հիմքերի վրա նոր աշխարհի ստեղծումը: Նահատակության մշակույթի վերակենդանացման առնչությամբ, նահատակ Բենեչիին ասել է՝ մահից չերկյուղելը պատճառ դարձավ, որ խախտվեն նյութական շահի և փողի վրա հաստատված հավասարչությունները, ի հայտ բերեց նոր ուժ, որի երաշխիքը՝ կրոնապետությունը, նրա կրոնական հոգևոր առաջնորդությունն էր: Սահմանադրության մեջ շեշտվել է «երկրի անկախության» վերահանգումը, օտարների չափազանցված միջամտությունների արգելակումը, ինչը գործնականում իրականացվեց: Այժմ Իրանում կրոնապետությունն իրականություն է դարձել Իսլամական Հանրապետության ձևաչափով և կրոնական սկզբունքները կյանքի կոչելու երաշխիքով: Մի ժամանակաշրջանում, երբ նորաստեղծ Իսլամական Հանրապետությունն իր էլ ավելի ամրապնդման գործընթացում է, աշխարհի հզոր, կեղերիչ տերությունները նրան լուրջ մարտահրավերների դեմ են կանգնեցնում, ավելի հստակ՝ գերտերություններն իսլամական Իրանին և նրա կրոնապետությունն ընդունել են իբրև հզոր մրցակից, ինչի առնչությամբ իրենց քաղաքականությունը կառուցել են նրա հետ ընդհանուր լեզու գտնելու կամ ոչնչացնելու ուղղությամբ: Այս ամենն ապացուցում են, որ հենց «իմք»

նվազատախտիչ» անկախությունն է հեղափոխություն արել Իրանում: Սա այն ալքիմիան է, որն ի գորտ է լուծել բոլոր խնդիրները, վերացնել դժվարությունները: Դրա վառ ապացույցներն են միջուկային ֆիզիկայի և կրոնավորման ոլորտներում ունեցած ձեռքբերումները: Այս բոլորի կողքին առանձնահատուկ ուշադրության է արժանի «առաջնորդություն» հասկացության ստեղծումն ու դրա գործնական կիրառումը, կրոնական հիմունքներով երկրի շուրջ 10 տարի կառավարումը: Սա անհերքելի իրականություն է, ինչն անգամ բշտամիներն են ընդունել ու խոստովանել, որի հույժ կարևորությունը՝ իշխանության ձգտելը, դրան տիրանալը և մարդ արարածի աստվածային զարգացման ու արդարության հաստատման նկատմամբ «հավատ» և «հնարավորություն» ստեղծելն է: Այլ կերպ ասած՝ կարելի է հասնել «իշխանության» և ոչ միայն չարատավորվել, այլև այն օգտագործել հանուն արդարության ու ազատության հաստատման: Սա այն դեպքում, երբ ֆրանսիացի խորաբափանց, խելամիտ մտածող Ալեքսի դը Թյուրոլյիի բնորոշմամբ. «Անբարոյց է, որ ժողովրդավարական կառույցներն ու սովորույթները մարդու մեջ խիստ նախանձ են առաջացնում»³⁰: Ըստ նրա. «Հասարակ մարդիկ երբեք չունեն նման փորձարկումների ափիք ու հնարավորություն (մի շարք ուսումնասիրություններ ու տարբեր տեղեկություններ), ուստի միշտ խաբվում են արտաքինով: Քանզի խաբեքաները զանգվածներին դուր գալու գաղտնիքները մյուսներից ավելի լավ գիտեն, մինչդեռ ժողովրդի իրական բարեկամներն այս հարցում հաջողություն չեն հասնում»³¹: Դը Թյուրոլյիի կարծիքով՝ քաղաքականության մեջ մտնելու համար պահանջվում է խորամանկություն ու խարդախություն, ինչի պատճառով ազնիվ, բարեպաշտ անհատները խուսափում են դրանից: Նրանք իրենց բարեպաշտությունը պահպանելու նպատակով հրաժարվում են քաղաքական դաշտ մտնելուց, իսկ հասարակ ժողովուրդն ի գորտ չէ տարբերել արժանի գործիչներին, ուստի հանրապետական կարգերում բացակայում են «ժողովրդավարական ընտրության», «բարեպաշտ առաջնորդություն» ունենալու հնարավորությունները: Հետևաբար, կարելի է ասել, որ Իսլամական հեղափոխության խոշորագույն ձեռքբերումը նրա կրոնական առաջնորդությունն էր, որը բնական հեղափոխության բռնիքի հարստության փաստարկներից է, սակայն տևական պայքարի ծնունդ է, ինչպես որ ի սրտե հավատացած էր հանուն Ալլահի շարժմանը, ինչն Ալլահի իմաստության արդյունք է³²:

Ալլախով, արդի աշխարհին ներկայացվեց ժողովրդավարական առաջնորդություն կրոնական առանցքով, ինչն ակնհայտորեն հակասում էր «քաղաքական առաջնորդություն» հասկացության ընդունված իմաստին: Մանավանդ, որ կրոնի հանդեպ կոռեկտությունն ու անգամ նրան հակադրվելը պատճառ էին դարձնել, որ բացառվել քաղաքական ու կրոնական առաջնորդությունների գուգորդմամբ իշխանությունը հասարակության անդամների շահերին ծառայեցնելու

որևէ հնարավորություն: Թվում է, թե առանց կրոնական տարրի քաղաքական աշխարհում սահմանվող հոգևոր առաջնորդության ընկալումը չի կարող պատշաճ համարժեք ունենալ, ուստի առաջնորդի հարցի, նրա պարտականությունների առկայությամբ «առաջնորդելու» բարձունքից իջեցվում է «վերահսկողության», այս դեպքում, խոսել առաջնորդի և ժողովրդի միջև կապի ու սիրո մասին անիմաստ է, իսկ դրա համար բերվող վկայությունները դիտվում են իբրև մարդկանց խաբելու ապացույցներ: Անհրաժեշտ է իմանալ, որ «վերահսկում» բառն անգլոսաքսոնական տերմինաբանության մեջ հաճախ նշանակում է կառավարման, դեկավարման ուժ, սահմանափակումների ստեղծում, օրինակ, երկրի կառավարումը, հավաքական գործունեության ղեկավարումը վերահսկման վկայություններից են: Անգլոսաքսոնական տեսակետների համաձայն՝ այլոց վարքագծի և որոշումների վրա ցանկացած տեսակի միջամտություն ու ազդեցություն կարող են լինել վերահսկման հասկացության դրսևորում³³:

Այսուհանդերձ, հեղափոխության առաջնորդը, իր կրոնական դաստիարակությունից և հանուն հավատի իր ջանքերի շնորհիվ, ձեռնամուխ եղավ ստեղծելու, առաջնորդելու մի նոր քաղաքական համակարգ, որտեղ իշխողներից գալու, բնակչության իրավունքը ևս խիստ կարևորվեց, ինչը ոչ միայն ճանաչում ու կարգախոսներում էր արտացոլված, այլև ամրագրվելով Սահմանադրության մեջ, իրականություն դարձավ, այդ թվում՝ անցկացված բազմաթիվ ազատ և արդար ընտրություններում: 1979թ. փետրվարից հետո Էժման Խոմենյիի վարքագիծն ու գործելակերպը, իբրև Իրանի քաղաքական-կրոնական առաջնորդ, պատճառ դարձան, որ, ի հեճուկս որոշ կարծիքների, Իսլամական հեղափոխությունը նրա մահից հետո էլ ընթանար սկսված գործընթացներով և ամենայն արագությամբ, հեշտությամբ ու հստակությամբ լուծվեց նրան «փոխարինողի» բարդ, գզայուն ու դժվարին հարցը: Առաջնորդությունն իր նոր իմաստով, որ նշանակում է քաղաքական ղեկավարություն՝ կրոնական կանոնների ու սկզբունքների համադրությամբ, դրսևորվել է իբրև ազդեցիկ, օրինական կառույց և գործունեություն է ծավալում Իսլամական Հանրապետության կարգերի և հեղափոխության նվիրական նպատակների ուղղությամբ:

Այժմ հասարակական երևույթներն ինքնավստահության գիտական տեղեկությունների մակարդակին բարձրացնելու և կրոնի մեծարմանն ուշադրություն դարձնելու հերթն է, որպեսզի ավելի շոշափելի դառնան իշխանությունների ու քաղաքացիների համագործակցությունն ու փոխազակցությունը: Այս և, առաջին հերթին, «բարեպաշտության խորացման» խնդիրները հետհեղափոխական Իրանում քննարկման առարկա կդառնան հողվածի հաջորդ բաժիններում:

3. Նայացք հեղափոխությունից հետո Իրանում կարարված գիտական ուսումնասիրությունների

Իշխանության ու գիտության միջև սերտ կապի առկայությունը համարվում է այսօրվա աշխարհի իրականություններից, այդ պատճառով էլ, որքան մեծ է գիտական ներուժը, այդքան հզորանում է բաղադրական իշխանությունը: Մյուս կողմից, պետությունների անբնական կախվածությունը (զերիշխանության տակ հայտնվելու իմաստով) արգելակում է գիտության զարգացմանը, ինչի պատճառով առաջնահերթությունների որոշումը, լուծումները և քննմաների ընտրությունը տեղի չեն ունենում երկրի ներկայի, ապագայի, իրական պահանջներին համապատասխան՝ ինչպես որ հարկն է: Իսլամական հեղափոխությունից առաջ երկրում տիրում էր հենց այդպիսի իրավիճակ: Վիճակագրական տվյալների աչքի անցկացումը ցույց է տալիս, որ միջազգային ասպարզում գիտության ոլորտում լուրջ մրցակցելու համար նպատակահարմար նախադրյալներ և ներթափանցիչներ չէին ստեղծվել: Անշուշտ, ուսման և հետազոտությունների բնագավառներում որոշ միջոցառումներ իրականացվում էին, սակայն գերիշխանության գործունե արգելակում էր առկա հնարավորությունների և ներուժի համապատասխան ծրագրավորումը:

Ինչպես նշում է դոկ. Ազդանդին, ազգային եկամտներից բյուջեով երկրի գիտության ու կրթության հատկացումները համեմատելով զարգացող երկրների հետ, պարզ կդառնա, որ խնդրը առարկա ոլորտը պատշաճ ուշադրության չի արժանացել, օրինակ, երբ Ալժիրը՝ 7,8, Վենեսուելան՝ 5,4, Թուրքիան՝ 5,3 տոկոս էին հատկացնում այդ ոլորտին, ապա Իրանինը 3,1 տոկոսը չի գերազանցել²⁴:

Դա էր պատճառը, որ հեղափոխության ժամանակ երկրում անգրագիտությունը մեծ տարածում ուներ՝ բնակչության շուրջ 75 տոկոսն էր: Այդ էր պատճառը, որ 1980թ. դեկտեմբերի 26-ին դոկ. Մոհամմեդ Ջավադ Բահոնարի պատասխանատվությամբ ստեղծվեց անգրագիտության վերացման շարժումը: Հեղափոխության առաջնորդ Էմամ Խոմենյին այդ առնչությամբ իր ուղերձում նշել էր. «Յուրաքանչյուր ազգի համար գրագիտությունն առաջին անհրաժեշտությունների թվին է պատկանում: Առողջապահության, բնակարանային հարցերից անգամ ավելի կարևոր է հանրնդիսանույ գրագիտությունը... Այժմ, առանց ժամանակ վատնելու և առանց հոգնեցուցիչ վարչարարության, քոլորը, ուրի բլնելով, արագությամբ գործի անցնեն անգրագիտության դեմ պայքարին, որպեսզի Ասածու կանոն տեսանելի ապագայում ամենքը տարրական կրթություն ստանան, գրել-կարդալ սովորեն...»²⁵:

● Հեղափոխական գործունեություններն սկսվեցին մեծ ոգևորությամբ ու լրջությամբ, սակայն բազմաթիվ ղժվարություններով: Գիտական ոլորտի գործունեու-

թյան անկման պատճառ դարձան մի կողմից հեղափոխությունից բխող անխուսափելի անկայունությունը, մյուս կողմից՝ հարկադրված պատերազմը: Բայց և այնպես, ընդհանուր առմամբ ուսուցման գործը քարձիքողի չարվեց և շարունակվեց տարբեր մակարդակներով, բեև պատշաճ մակարդակով չիրականացվեցին առաջնորդումն ու կառավարումը: Դոկ. Ռեզա Մանսուրին «Խրանը 2048թ.» աշխատության մեջ գրում է. «Իսլամական հեղափոխությունից հետո համալսարանական իրադարձությունները ուսումնասիրության և վերլուծության առարկա չեն դարձել, որոնք խիստ ազդեցիկ, խոշոր ու արագընթաց են: Ուշագրավ է, որ քաղաքական, հասարակական դրդապատճառներից այն կողմ որևէ միտք ու վերլուծություն գոյություն չեն ունեցել, ինչը հանգեցրել է այդօրինակ հսկայական ու արագընթաց փոփոխությունների»:

Հատկանշական է, որ հաշվի առնելով որոշ արգելքներ ու թերություններ, ինչպիսիք են անգրագիտությունը և բնակչության աճի բարձր տոկոսն ու երիտասարդ լինելը, սկզբնական շրջանում ջանքերը կենտրոնացվել էին կրթության հնարավորությունների ընդլայնման վրա: 1983թ. ՄԱԿ-ը 17,2 միլիոն տարիքով Իրանին ճանաչեց իբրև աշխարհի ամենաերիտասարդ երկիրը²⁶:

Արդյունքում, կրթության քանակական աճի ընթացքն այնպիսի արագություն էր հավաքել, որ քննադատությունների առարկա դարձավ, նշվում էր, քե քանակի ծայր աստիճանի կարևորումը ստվեր է գցել կրթության ու գիտության որակի վրա: Օրինակ, դոկ. Մասուրին 1988-96թթ. տարիները համալսարանական կրթության համար գերազանց շրջան համարելով, նշել է. «Շուրջ 10 տարվա ընթացքում ուսանողների թիվը 250 հազարից հասել է մեկ միլիոն 200 հազարի, այսինքն՝ աճել է 5 անգամ»:

400 տոկոս աճը կամ ուսանողների տասը տարվա ընթացքում քանակի հնգապատիկ դառնալը և համալսարանների գերաճը մաս, մասնագիտություններով կրթության մակարդակների, մասնավորապես՝ կատարելագործումը պետք է համեմատել գիտական կազմի գրեթե անփոփոխ քանակի, հատկապես դոկտորական աստիճանի և իրանցի հետազոտողների գիտական լուրջ բովանդակությամբ հոդվածների քանակի հետ, ինչը որակի առումով կարևոր ցուցանիշ է: Համալսարանական կրթության մակարդակն իջել է միջազգային ստանդարտներից, ուստի այդ ստանդարտներից էլ ավելի անկումն անսպասելի չէ²⁷:

Հանրակրթության ոլորտում քանակական արագ աճը ես փաստ էր: Դոկ. Էրրահին Ռազզադին հենվելով երկրի 1994թ. վիճակագրական տվյալների վրա, նշել է, որ 6 և ավելի տարեկանների վերաբերյալ 1976թ. և 1986թ. մարդահամարների և 1991թ. վիճակագրական տվյալներով, գրագետների թիվը համապատասխանաբար եղել է 12,87, 32,91 և 33,96 միլիոն, որոնք համապատասխանաբար կազմել են բնակչության 47,47, 61,78 և 74,06 տոկոսները: 1991թ. 6 և բարձր տա-

րիքի գրագետ տղամարդիկ երկրի բնակչության 80,6, իսկ կանայք՝ 67 տոկոսն են կազմել²⁵:

Կրթության ոլորտի զարգացման հարցում հատկանշական է նաև, որ բուհերում կտրուկ աճել է աղջիկների թիվը: Հեղափոխությունն արժանվույն տեղ ու դեր է հատկացրել կանանց, իսկ պատերազմը պատճառ դարձավ, որ հասարակության այդ հատվածը վերածվի ակտիվ տարրի և յուրք գործունեություն ծավալի հասարակության մեջ: Թեև նրանց այդ ցանկության իրականացումը դուրսն չէր, սակայն արդյունքում շահեցին: Ընթացիկ տարում ուսանողության ավելի քան 50 տոկոսն ուսանողուհիներն են կազմել: Բուհերի ընդունելության քննությունների կազմակերպության փոխտնօրեն դոկ. Մոհամմեդ Հոսեյնփուր Քազեմին, «Ժաման» լրատվական գործակալությանը հայտնել է, որ ընթացիկ տարվա ընդունելության քննությունների արդյունքում ընդունվել է 142 451 աղջիկ և 87 869 տղա, այսպիսով՝ աղջիկները կազմել են ընդունվածների 61,8 տոկոսը, իսկ տղաները՝ 38,1-ը:

Ընդ որում, հունամիստար ֆակուլտետներում աղջիկները կազմել են 67,5, բնագիտության՝ 72,2, օտար լեզուների՝ 72,6, արվեստի՝ 68,9, իսկ մաթեմատիկայի՝ 47,1 տոկոս²⁶:

Միաժամանակ կրթության քանակական և ուսումնասիրությունների ու ուսումնառության հնարավորությունների աճը տարածվել է նաև գրադարանակալության ու ընթերցանության վրա: Հրատարակչության գործունեության վերաբերյալ Քամրան Ֆահին հետհեղափոխական շրջանը «գրադարանակալության պայքարում» համարելով, ընդգծել է. «Ինչպես նշել ենք, հեղափոխությունից առաջ գրքերի տպաքանակը 3000 օրինակ էր, մինչդեռ հեղափոխությունից անմիջապես հետո՝ 1989թ.՝ թռիչքային աճ արձանագրելով կազմեց 10-15 հազար: Որոշ գրքերի տպաքանակը հասել է 100 հազարի սահմանը: Բացի այդ, ըստ Ազգային գրադարանի տվյալների՝ ընդլայնվել է նաև տպագրված գրքերի ցանկը, այլ կերպ՝ տարեկան 8 հազար անուն գիրք է տպագրվում: Հեղափոխությունից հետո վերացան պատենշները, տարբեր բնագավառներում ակնհայտ է բազմակարծությունը: Ընթերցողը ևս ընկալել է այդ բազմազանությունը և զգացել, որ աշխարհում գաղափարները մակ-երկուսով չեն սահմանափակվում, ուստի պետք է ծանոթանալ տարբեր գաղափարների: Ընթերցողն ու հեղինակը՝ երկուսն էլ զգացել են, որ հեղափոխությունից հետո հայտնվել են ավելի բաց, ազատ միջավայրում: Իհարկե, քանակական աճը մասամբ որակի անկման է հանգեցրել, ահա թե ինչու ոմանք ափսոսանքով են խոսում այն ժամանակների մասին, երբ թե՛ թարգմանիչների և թե՛ ստեղծագործողների թիվը սահմանափակ էր, իսկ թարգմանությունները շատ ավելի ճշգրիտ ու սուույզ էին: Մինչդեռ, հիմա թարգմանիչների թիվ շատ մեծ է և դրանց մեջ թույլերն ավելի շատ են, բայց երիտասարդ թարգմանիչներ էլ կան, որ նախկին թարգմանիչների փորձառությունը չունենալով, յուրք ջանքեր են

գործադրում կատարելագործվելու ուղղությամբ, ինչի արդյունքը, քերևա, կերևա 10 տարի հետո²⁷:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ Իսլամական հեղափոխությունից հետո կրթության և գիտության ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները վկայում են, որ ծրագրավորվել և յուրք ջանքեր են գործադրվել գիտության զարգացման համար նախադրյալներ պատրաստելու նպատակով: Բնականաբար, սկզբում պետք է ուշադրություն դարձվեր քանակական, արտաքին կողմին: Սակայն հետագայում աստիճանաբար ուշադրությունը կենտրոնացվում է որակի վրա և աշխատանքներն ուղղված են դրանց հավասարակշռությանը: Համեմայնդես, գիտության ու կրթության կենտրոններից հասցեագրված առաջարկություններն ու քննադատությունները որակի կարևորման առնչությամբ ապարդյուն չեն անցել, այսօր, անցյալի համեմատ, ավելի շատ ուշադրության են արժանանում գիտության ստանդարտներն ու դրանք պահպանելու ջանքերը: Իրանի տեղեկատվության ու գիտական փաստաթղթերի կենտրոնի աշխատակից դոկ. Հոսեյն Ղաթիբին այս հարցի շուրջ օգտակար զեկույց էր ներկայացրել, ինչը խոսում է Իրանում գիտական աշխատանքների որակի բարձրացման մասին: Նա նշել է, որ Իրանը, այդ առումով 1981-2000թթ. ընթացքում Ռուսաստանի, Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի, Պակիստանի, Քուվեյթի, Իրաքի, Ադրբեջանի, Հայաստանի, Թուրքմենստանի, Ազգախստանի, Արաբական Միացյալ Եմիրությունների, Օմանի, Բահրեյնի, Քաթարի, Տաջիկստանի և Վրաստանի համեմատությամբ 6-րդ տեղն էր զբաղեցնում: Սակայն, արդյունավետ գործունեության արդյունքում, մասնավորապես վերջին տարիներին, Իրանը գիտական հոդվածների ոլորտում, տարածաշրջանի երկրներ Ռուսաստանից ու Թուրքիայից հետո գտնվում է 3-րդ հորիզոնականում (սույն հոդվածը գրվել է շուրջ 6 տարի առաջ - է.Բ.), բայց և այնպես աշխարհի մակարդակով 57-րդ տեղում է: Վիճակագրական տվյալների համաձայն, 1981թ. Իրանին բաժին էր ընկնում աշխարհի հիմնարար գիտությունների 0,05 տոկոսը, մինչդեռ 2000թ.՝ 0,2 տոկոսը, այլ կերպ՝ 19 տարվա ընթացքում 400 տոկոս աճ է արձանագրել: 1981թ. Իրանում բժշկական գիտությունների ոլորտում տպագրվել էր 103 հոդված, իսկ 2000թ.՝ 237:

Խնդրո առարկա ասպարեզում 20 տարվա ընթացքում աշխարհի առաջընթացը եղել է 77 տոկոս, իսկ Իրանինը՝ 23: Տեխնիկական և ինժեներական ոլորտներում 1981թ. հոդվածների թիվը եղել է 43, իսկ 2000թ. հասել 277-ի, ինչը 317 տոկոս աճ է նշանակում: Մինչդեռ աշխարհում այդ ցուցանիշը եղել է 205 տոկոս:

Գյուղատնտեսության ոլորտում 1981թ. Իրանի բաժինն աշխարհի 0,11 տոկոսն էր, իսկ 2000թ.՝ 0,2, այլ կերպ՝ շուրջ 200 տոկոս աճ: Նույն բժվականի հունամիտար գիտությունների գծով տպագրվել էր 19 հոդված, 2000թ.՝ 43, կամ՝ 58 տոկոս աճ, այնինչ աշխարհի միջին աճը կազմել էր 41 տոկոս: Աշխարհում ար-

վեստի անը 1981թ. հավասար էր գրոյի, ինչը մնացել է անփոփոխ: Հետևաբար, ընդհանուր առմամբ, գիտության բազմաթիվ բնագավառներում Իրանն աշխարհի համեմատությամբ բավական մեծ առաջընթաց է արձանագրել⁷²:

Խորհրդարանի գիտության և կրթության համձնաժողովի նախագահ Ահմադ Շիրվազն «Իսլամ» գործակալությանը տված հարցազրույցում նշել է, որ Իրանը պետք է ստեղծի աշխարհի գիտության մեկ տոկոսը, այդ նպատակով ներկա գործընթացների ծավալը պետք է հնգապատկվի, ինչը հնարավոր է, եթե առաջիկա 10 տարիներին պահպանվեն հողվածների աճի ներկա տեմպերը... Ըստ վիճակագրության, 2002թ. միջազգային հեղինակավոր հանդեսներում, Իրանի գիտնականների գիտության տարբեր բնագավառներին վերաբերող 2000 հոդված է տպագրվել, իսկ դրանից 10 տարի առաջ ընդամենը 242-ը, այսինքն՝ 1/7-ը: Բացի այդ, Իրանի գիտնականների հոդվածներին արված հղումները ևս ցանկալի մակարդակի վրա են՝ տարեկան 6000⁷³:

Նշվածից գառ, գիտական տարբեր օլիմպիադաներում ունեցած լուրջ հաջողությունները, տարբեր բնագավառներում գիտական աղբյուրների ցանկալի մակարդակով աճն ապետում են խոստումնալից ապագա: Սակայն, միաժամանակ անհարժեշտ են քարձրախոսություն, հավաքական, անգամ ազգային ջանք ու եռանդ: Այս հարցի բնմարկման վերջում հիշեցման կարգով հավելենք, որ ինչպես սկզբում շեշտել ենք, չպետք է անուշաղբության մատնվի գիտության և իշխանության միջև կապը: Գերտերությունների բշտամանքն Իսլամական հեղափոխության նկատմամբ այն լուրջ պատնեշն է, որ արգելափակում է երկրի գիտության զարգացման և գիտական ներուժի հզորացման ճանապարհը: Բացի այդ, սուկա սահմանափակումները և ժամանակի սղությունը պատճառ են դառնում, որ որոշ նախագծերի իրագործման վերաբերյալ ժամանակից շուտ զեկույց ներկայացվի:

Այսուհանդերձ, գիտության տարբեր բնագավառներում նկատելի թռիչքներ են սկսվել: Կրթության ու գիտության քանակական աճի ուղղությամբ արված աշխատանքների հենքի վրա այժմ հնարավորություն է ստեղծվել ուշաղբյուրյունը կենտրոնացնել որակի վրա և խոսվում է գիտություն ստեղծելու մասին: Արագ փոփոխությունների այդ հանրագուսարը, որ խորացման միտում ունի և օր-օրի նկատելիորեն մակերեսից դեպի խորք է ընթանում, վկայում է գիտական գործունեությունների դրական տեղաշարժի և առաջընթացի մասին: Այդ փոփոխությունները «Մենք կարող ենք» կարգախոսի դրսևորումներից են, որ երբեք չպետք է ամուսնվեն: Քանզի այն երկար ճանապարհ է և կարող է իրականություն դառնալ ոչ թե անհատների ջանքերի ու աշխատանքների շնորհիվ, այլ և սրտացավ, գիտակցաբար կազմված խմբակային ծրագրերով, գիտական և կրոնական կոլեկտիվների ձեռնարկումներով: Սա պայքար է, ուստի այլ անկեկալիքներով հնարավոր չէ գիտական լուրջ ձեռքբերումների հասնել:

4. Նայացք Իսլամական հեղափոխությունից հետո փոփոխության ոլորտում կարարված քայլերին

Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ տնտեսական ոլորտը իմանական տարբերություններ ունի քաղաքականի և գիտականի հետ, ուստի այստեղ զարգացումներն ու փոփոխությունները կատարվում են այլ եղանակով: Թեև քաղաքականության, մշակույթի և տնտեսության փոխազդեցությունն ու փոխկապակցվածությունը փաստ են, սակայն դրանց միջև եղած տարբերությունները բարդացնում են այդ փոխկապակցությունը: Իսկ հեղափոխությունը, որը նշյալ ոլորտների կառույցները վերածում է խառնաշփոթի, յուրաքանչյուրի վրա ազդում է տարբեր չափով ու եղանակով: Օրինակ, հեղափոխության ամենացայտուն և ակնհայտ դրսևորումը, շահի վարչակարգի խորակումը և քաղաքական կարգերի փոփոխությունն է եղել, ինչին հաջորդել են քաղաքական ասպարեզում խոշոր, շուտափույթ փոփոխություններ, մինչդեռ տնտեսական ոլորտում նման արագությամբ փոփոխությունները հնարավոր չեն: Այլ կերպ ասած՝ խնդրո առարկա ոլորտների, այդ թվում՝ տնտեսության ոչ ծրագրված կողմերը, հեղափոխության հետևանքով ավելի շուտ մակերեսային փոփոխության են ենթարկվում: Այնինչ, արձատական և կառուցվածքային փոփոխությունների համար անհրաժեշտ են մասնակրկիտ, բազմակողմանի ուսումնասիրություններ, պլանավորում և նոր ինստիտուտների ձևավորում, ինչն էլ պահանջում է տևական ժամանակ: Իսկ նշյալ պարագաներից և ոչ մեկը հեղափոխության արդյունքում չեն ստեղծվում, այլ պայմանավորված են քաղաքական նոր կարգերի դեկավարության աշխատանքներով, գործադրած ջանքերով, բացի այդ, հեղափոխությանը հաջորդած նոր պայմանները ստվերի տակ են թողնում ցանկություններն ու որոշումները: Վերջին հաշվով գործնական քնույթ է ստանում սուբյեկտիվ ցանկությունների և օբյեկտիվ իրականությունների արդյունքը: Հետևաբար կարելի է նշել, որ Իրանի տնտեսական վիճակն Իսլամական հեղափոխությունից հետո չենք կարող ուսումնասիրել լոկ կարգախոսների մակարդակով: Ուսումնասիրությունների հիմքն առաջին հերթին հնարավորություններն ու պայմաններն են, որոնք կարող են իրատեսակ չափանիշներ ներկայացնել, ինչից հետո միայն պետք է գործունեություններն ու կատարված փոփոխությունների խորության միջև հարաբերակցությունը համեմատել պահանջարկի հետ և ծանրութթև անել:

Նախահեղափոխական Իրանի տնտեսության կարևորագույն առանձնահատկությունը կախվածությունն էր՝ հանգամանք, որը թուլացնում էր նրա աշխուժությունն ու անհրաժեշտ առաջընթացը: Կախվածությունը դրսևորվում էր երկու՝ ներքին ու արտաքին կողմերով: Ներքին առումով դա նավթի վրա հենվելն էր, հետևաբար պետական էր, իսկ արտաքին կախվածությունն ուղղված էր երկրի

տմտեսական անկախության վերացմանն ու Արևմտյան ճանապարհից, մասնավորապես ԱՄՆ-ից կախվածության մեջ լինելու հիմնավորումը:

Իսլամական հեղափոխության առաջին ազդեցությունը տեսության արտաքին կողմի վրա էր, ինչը կանխեց երկրի հարստության հափշտակումը, իսկ օտարերի հերավորություններից ու փորձառություններից օգտվելը դրեց օրինական շրջանակների մեջ, ինչը, նկատի ունենալով «գորալություն» օրինաչափությունը, արգելում էր մահմեդականների վրա գերիշխելը: Այդօրինակ գործելակերպը, մշտական բշտամանքների առկայությամբ, ինչպես հարկադրված պատերազմը, տարատեսակ սահմանափակումները, հեղափոխական գործունեությունները տմտեսական ոլորտում ստեղծագործական դարձնելով, ափելի ընդգծվեց Քանգի մի կողմից գործադրվող ճնշումներն ու սահմանափակումները, մյուս կողմից՝ Իսլամական հեղափոխությունը պաշտարանելու սերը, ներուժի մտավոր կարողությունները վերածում էր գործնականի: Իհարկե, հեղափոխությունից հետո առաջին տասնամյակում, այդ ոլորտում գործադրված ջանքերով, հեղափոխությունից ու պատերազմից բխող անկայունության ազդեցության ներքո, չհաջողվեց լուրջ և մնայուն փոփոխություններ իրականացնել տմտեսական ենթակառույցներում ու կառուցվածքներում, դրան գումարած, որ հարկադրված պատերազմը լրջորեն հարվածեց կախվածության մեջ գտնվող բոլոր տնտեսությանը: Սակայն տնտեսության այդ տկարությունը՝ բաղաբաղական բնագավառի լուրջ հաջողությունների (շահի վարչակարգի տապալում և իսլամական հանրապետության հիմնադրում), մշակույթի և հասարակական ասպարեզում արժեհամակարգի փոփոխությունների շնորհիվ, լարվածության ու հասարակական բողոքների դրսևորում չունեցավ: Ընդհանուր առմամբ տնտեսությունը մնաց անմխիթար վիճակում, կարողացան իրականացնել լոկ կարճաժամկետ տարբեր նախագծեր՝ սովյալ ժամանակահատվածի ամօրյա պահանջները բավարարողները, շեշտը դնելով պատերազմի առաջացրած կարիքների վրա և կարողացան հարկադրված ու անհավասար պատերազմի ժամանակաշրջանում նվազագույն մակարդակով բավարարել բնակչության ամօրյա պահանջները: Ժամանակին վարչապետ Միր Շուսեյն Մուսայյիի իրադրությունը, վիճակագրական տվյալների բաղաձայնությամբ, ներկայացրել է հետևյալ կերպ. «1978թ. շահի վարչակարգի տեսարանների կատարած հաշվարկների համաձայն, 1988թ. երկրին անհրաժեշտ կլինեք արտարժույթային 40 միլիարդի նկանուտ, որպեսզի տնտեսական վիճակը, առանց որևէ առաջընթացի, նույնությամբ պահպանվեր:

Այժմ 1988թ. է և խորհրդարանը հաստատել է 10 միլիարդ արտարժույթային բյուջե: Նախորդ վարչակարգի փորձագետներն այդ հաշվարկները կատարել էին բարոզական նպատակով, ուստի դրանց ճշգրտությունը կասկածելի է: Վերոնիշյալ կանխատեսումը քննարկվել էր այն ժամանակվա տնտեսական խորի-

ղի աննազաղտնի նիստերում: Այդ հաշվարկներում չէին կանխատեսվել պատերազմը, դրամից բխող անասելի մեծության հասնող ծախսերը և դալարի արժեքի կտրուկ անկումը: Բացի այդ, բնակչության աճը հաշվարկվել էր 2,5 տոկոսով, մինչդեռ 1986թ. մարդահամարի տվյալներով այն կազմել էր 3,9 տոկոս: Հարց է ծագում՝ ինչպե՞ս է փակվել 30 միլիարդ արտարժույթի տարբերությունը՝ դրվատանրի արժանի չափով ժողովրդի հաշվին և զգալի չափով նաև երկրում ստեղծված կառավարման հնարավորությունների շնորհիվ»:

Պատերազմից հետո սկսվեց վերակառուցման և կառուցողականության ժամանակաշրջանը, որը կարելի է անվանել «փորձերի ու անճշտությունների» ժամանակաշրջան, ինչը որոշ չափով դեռ շարունակվում է: Պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում, ամենայն լրջությամբ, ջանքերը կենտրոնացվել էին տնտեսական ոլորտի վրա, այնպես, որ տնտեսական գործունեությունը բուռն վերելք արձանագրեց, ինչը հիմնված էր տնտեսական հարցերի վերաբերյալ որոշակի տեսակետների և դրանց լուծման եղանակների վրա: Թեև տնտեսությունը շարունակում էր մնալ պետական և նավթի եկամուտներին հենված, սակայն տնտեսական ենթակառուցվածքների ոլորտում ամենայն լրջությամբ ու հետևողականությամբ գործունեությունները շարունակվում էին:

Այս վարկածի աճնչությամբ ղոկ, Էբրահիմ Ռազզադին գրել է, որ հեղափոխության հաջորդած տարիներին՝ մինչև 1989թ., Իրանի ազգային եկամուտը տատանողական էր և ուղեկցվում էր զգալի վայրկյվերումներով, սակայն դրանից հետո այն շարունակական աճի միտում է ունեցել: Այնպես որ, 1989թ. 8226,5 միլիարդ դրալի դիմաց 1994թ. 12247,7 միլիարդ դրալի է հասել, որը հավասար էր 1982թ. կայուն գներին⁵²: Նա նշել է նաև, որ բարեկարգման առաջին և երկրորդ ծրագրերի ընթացքում ներքին պահանջների բավարարման առնչությամբ լուրջ ձեռքբերումներ են արձանագրվել, այդ բովում՝ պողպատի, պղնձի, ալյումինի, նավթաքիմիայի, էլեկտրոնիկայի, ավտոմեքենաշինության և կապի ու ճանապարհաշինության ասպարեզներում: Սակայն արդյունաբերական ապրանքների արտահանության ոչ բավարար աճը և տնտեսության տարբեր ճյուղերի միջև կապի բացակայությունը (չնայած այս ոլորտում որոշ քայլեր արվել են) և այն, որ Իրանի տնտեսությունը շարունակում է հենված մնալ մեկ՝ նավթի արտադրության վրա, թերևս կարող է ապացուցել, որ նախորդ իրավիճակը, որոշ փոփոխություններով, պահպանվում է միջազգային և ներքին նոր պայմաններին համապատասխան⁵³:

Ենթակառուցվածքային գործունեությունների շրջանակներում ևս բարեկարգման ուշագրավ քայլեր են կատարվել, օրինակ, ըստ վիճակագրական տվյալների՝ 1978թ. երկրի մակարդակով էլեկտրականություն կար ընդամենը 3500 գյուղում, մինչդեռ 1996թ.՝ 35210: Այլ կերպ ասած՝ հեղափոխությունից հետո

տասնավատկվել է այն գյուղերի թիվը, որտեղ էլեկտրականություն կա: Ըստ պաշտոնական տվյալների, 1996թ. երկրի գյուղական բնակավայրերի շուրջ 90 տոկոսն ապահովված է խմելու ջրով, ինչը 1978թ. համեմատությամբ զգալի աճ է նշանակում: Մյուս կողմից, 1978թ. քաղաքային ջրի ցանցում ընդգրկված էին երկրի քաղաքաբնակ բնակչության 13,1 միլիոնը, իսկ 1998թ.՝ 35 միլիոնը: Եներգետիկայի նախարարության ներկայացրած զեկույցներից մեկում նշված է, որ 1978թ. Իրանն ուներ 13 ջրամբար՝ 68 միլիարդ խորանարդ մետր տարողությամբ, իսկ 1996թ.՝ 48 ջրամբար՝ 97 միլիարդ խորանարդ մետր ջրապահովան կարողությամբ, իսկ դա նշանակում է, որ հեղափոխության հաղթանակից հետո ջրամբարների թիվն աճել է 250 տոկոսով:

Ըստ նշյալ զեկույցագրի, 1996թ. մեկ շնչի հաշվով արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը կազմել է 1410 կիլովատտ, ինչը 1978թ. համեմատությամբ աճել է 160 տոկոսով¹¹:

Այսին թարաքաքայի համալսարանի դասախոս դոկ. Ջամշիդ Փեժոյանի կարծիքով, թեև անցյալ տարիներին Իրանի տնտեսությունը տարբեր ձևերով զտնվել է հակառակորդների ավերիչ ծրագրերի ազդեցության ներքո, այսուհանդերձ, մի կողմից կարողացել է հաջողությամբ ավարտել պատերազմը, մյուս կողմից՝ պատերազմից հետո էլ ի գորու է եղել հավասարակշռել հասարակության ոչնչացված կապիտալը¹²:

Ընդհանուր հաշվով կարելի է նշել, որ տնտեսության բարեկարգումը քաղաքականության ու մշակույթի ոլորտներին դժվարին դրության մեջ դրեց, հետևյալ մեկնաբանությամբ. տնտեսական աճի արդյունքում աստիճանաբար մշակութային ու քաղաքական պահանջներ առաջացան, որոնք դրսևորման համար համապատասխան հնարավորություն չունեին: Սակայն այդ խնդիրը, 1997թ. նախագահական ընտրությունների որոշ կարգախոսներում դրսևորվելով, ընտրողների զերակշիռ հատվածի ծայներն ստացավ և այդպիսով քաղաքական, մշակութային և տնտեսական ոլորտներում առկա անհավասարակշռությունն զգալիորեն նվազեց: Ստեղծված պայմանները պատճառ դարձան, որպեսզի տնտեսական խնդիրների վերաբերյալ պլանավորումներում հաշվի առնվեն դրանց քաղաքական ու հասարակական հետևանքները և բազմակողմանի դիտարկվեն, ինչն ունեցավ իր դրական արդյունքը: Շարունակության մեջ կամողորհանման դրանցից որոշներին¹³:

1993-96թթ. միջին տղանը 30 տոկոս էր կազմում, սակայն այդ ցուցանիշը 1997-99թթ. 20 տոկոսից էլ ցածր էր: Ըստ Կենտրոնական բանկի զեկույցների, 2000թ. սղանը ընդամենը 12,5 տոկոս էր կազմում: Տնտեսական քաղաքականության ոլորտում կատավարությանը հաջողվել է դրական քայլեր կատարել, որոնց արդյունքներն աստիճանաբար երևան են գալիս: Այդ միջոցառումներ էին ար-

տարժույթի արժեքի բազմազանության վերացումը և ընդհանուր զնի սահմանումը: Արտարժույթի պահուստային հաշվի բացումը ևս այդ դրական քայլերից էր, որի ծախսելու եղանակը հստակեցվել է երրորդ նախագծի օրենքի 60-րդ հոդվածով: Այդ հաշիվը հնարավորություն է ստեղծում, որպեսզի նավթի գների գործակցի անկման բացասական ազդեցությունը տարեկան բյուջեի և բնակչության կենսամակարդակի վրա նվազեցվի: Արտարժույթային հաշվի մի մասը հատկացվում է արդյունաբերական գործունեություններին, ներդրումներին և աշխատատեղեր ստեղծելուն:

Իրականացված դրական միջոցառումներից է բյուջեի և բանկային համակարգի միջև հարաբերությունների բարելավումը: Բանկային համակարգում առկա խնդիրներից մեկն էլ այն է, ինչը հայտնի է «առաջադրանքային ժամոքագրություններ» անունով: Սա նշանակում է, որ խորհրդարանում և հաստատված բյուջեի օրենքների համաձայն՝ բանկերը պարտավորվում էին իրենց գումարների մի զգալի մասը, որն առաջանում էր ժողովրդի խնայողական հաշիվներից, տրամադրել պետական ընկերություններին կամ կառավարության նախագծերին: ՏՃ-տեսական առաջընթացի 3-րդ ծրագրում (ծրագրի օրենքի 87-րդ դրույթ) որոշվել է, որ այդ պարտականությունների թեևացումը կատարվի աստիճանաբար՝ տարեկան 10 տոկոսով նվազեցվի 1999թ. համեմատությամբ: Այս հանգամանքը պատճառ կդառնա, որ բանկային գումարները տրամադրվեն ըստ ստացողների տնտեսապես պատճառաբանված արժանիքների: Նշյալ ժամանակահատվածում կատավարության օգտակար միջոցառումներից էր նաև արտաքին պարտքերի մարելու կազմակերպումն ու պլանավորումը: 1996թ. երկրի արտաքին պարտքը շուրջ 17 միլիարդ դոլար էր: Բարեբախտաբար, 1999թ., նվազելով, կազմել էր 10,3 միլիարդ, որի 65 տոկոսը կազմում են երկարաժամկետ և միջնաժամկետ պարտքերը: 2000թ. առաջին կիսամյակում մարվել է արտաքին պարտքի 1,5 միլիարդ դոլարը: «Էկոնոմիստ» միավորումը ևս Իրանի տնտեսության բարելավման միտում էր նկատել: «Կերջին նշյալ զեկույցագրում երկրի առևտրի հեռանկարի առնչությամբ նշել է, որ զբանցվել է առևտրի ոլորտի համեմատական բարելավում, քանզի 1997-2000թթ. 3,32 գնահատականը 2002-2006թթ. համար բարձրացվում է 4,58-ի: Այդ ցուցանիշի բարձրացումը գլխավորապես վերաբերում է տնտեսության վիճակի ամբողջական բարելավմանը: Իրանի գնահատականն այս ասպարեզում 5,6-ից հասել է 8,3-ի, արդյունքում՝ տարածաշրջանում ևս բարելավել է դիրքերը՝ 7-րդ հորիզոնականից բարձրանալով 3-րդը:

«Էկոնոմիստն» Իրանի ամբողջական տնտեսության հեռանկարների բարելավումը պայմանավորում է սղանի կրճատումով, տնտեսական աճով և արտաքին պարտքերի վերացմամբ... 2001-2002թթ. նավթի գնանը և դրա ու զագի արտահանությունից ստացվող եկամուտների առաջիկա տարիների դրական հե-

ուսնկարները կնպաստեն Իրանի տնտեսության վիճակի բարելավմանը»:

Գործունեությունների հանրագումարից կարելի է ենթադրել, որ երկրի կառավարման տարբեր, այդ թվում տնտեսության ոլորտում, միակողմանիությունն անկում է ապրել և «կազմակերպումը» յուրջ ուշադրության է արժանացել՝ տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակույթի ասպարեզներում: Ուժերի միջև աշխատանքի ճիշտ բաժանման և կոորդինացման ու ծրագրերի առումով աստիճանաբար համակարգման անհրաժեշտություն է զգացվում, հետևաբար տնտեսական ոլորտը ևս այս տեսանկյունից որոշ փոփոխություններ է կրել: Հատկանշական է, որ հիմնարար փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են տնտեսական անկախության համար, կիրականանան այն դեպքում, երբ տնտեսական ծրագրերը կկազմվեն «փորձարկման ու սխալի», տեղական տնտեսության տեսակետների և տարբեր ազդակների նկատմամբ հակազդեցությունների առանձնահատկությունների, երկրի ներքին ու արտաքին հնարավորությունների հիման վրա:

5. Իսլամական հեղափոխություն, «արտահանումը» և դրա ազդեցությունը փարամաշըանային ու համաշխարհային մակարդակով

Իսլամական հեղափոխությունը 20-րդ դարի զարմանք առաջացնող երևույթներից է համարվում: Նման գնահատման կարևոր պատճառներից է դրա անսպասելի լինելը: Իրականում հնարավոր չէին թվում ո՛չ հեղափոխությունը, և ո՛չ էլ նրա կրոնական լինելը, սակայն իրականությունն այլ բան ապացուցեց: Իսլամական հեղափոխությունը մեկ անգամ ևս ասպցուցեց հասարակության մեջ տեղի ունեցող տեղաշարժերի վերաբերյալ հասարակագիտության ճանաչողական բույլությունը: Ահա թե ինչու, տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ վերանայվում են հեղափոխության վերաբերյալ՝ տեսություններն ընդհանրապես, իսկ Իրանի հասարակության առանձնահատկությունների ու իրանցիների վերաբերյալ, մասնավորապես:

Միջազգային կարգերի կարծրացման, երկրենտ աշխարհակարգի առկայության պայմաններում հասարակական, կրոնական ու ժողովրդական հեղափոխությունը երկրաշարժի նման ուժեղ ցնցումներ առաջացրեց իշխանությունների կառուցվածքներում, ավելա կարգերի պահպանման համոզմունքներում ու գոյություն ունեցող չափաններում: Այն աստիճանի, որ երկար ժամանակ Իսլամական հեղափոխության հակառակորդները միմյանց մեղադրում էին միջամտելու, հեղափոխությունը պլանավորելու համար: Սակայն ժամանակի ընթացքում ասպցուցվեց, որ հեղափոխությունը ժողովրդական և անկախ էր: Իրականությունը պատճառ դարձավ, որ նրա բշնամիներն աստիճանաբար համախմբվեցին, հեղա-

փոխությունից առաջ ընդունված դիրքորոշումները փոփոխության ենթարկվեց, գերիզոր տերությունները կողմնորոշվեց ընդդեմ Իրանի հեղափոխության: Չնավորվում էին նոր միություններ ու կոալիցիաներ: Իսլամական հեղափոխության հաղթանակի հետ կապված, մեկը մյուսի հետևից տեղի էին ունենում սրբության փոփոխություններ, սակայն այն, ինչն ամենակարևորն էր, դա Իսլամական հեղափոխությունն էր:

Ուստի, գործադրված ջանքերն ինչպիսին էլ լինեին, իրենց կամքից անկախ, այդ իրականությանը համաշխարհային բնույթ էին տալիս և հեղափոխության բշնամիների լայն հնարավորությունների բերումով Իսլամական հեղափոխության մասին տեղեկատվությունը տարածվում էր ամենուր, թեև դրանք մշակվում և փոխանցվում էին բացասական տեսանկյունով:

Իսլամական հեղափոխությանից սարսափելու պարզանտերը

Նախքան Իսլամական հեղափոխությունն Իրանը երկու գերիզոր ճանաչարների՝ Արևելքի ու Արևմուտքի ձեռքին խաղալիք էր, վերջինիս հովանու և վերահսկողության ներքո գտնվելով, որոշակի պլաններ էր ծրագրում ու միջոցառումներ նախապատրաստում, որոնց օրինակը կարելի էր տեսնել նաև այն, մասնավորապես, հարևան երկրներում: Բնականաբար, Իսլամական հեղափոխության հաղթանակը յուրջ մտահոգություններ էր առաջացրել Իրանի նման երկրներում այլօրինակ հեղափոխության հավանականությունը: Ահ ու սարսափը թիսու էր ոչ միայն հեղափոխության հնարավորությունից, այլև կրոնական (իսլամական) գաղափարախոսությունից: Քանզի, իսլամին հենվելով, ինքնագիտակցության մակարդակը խիստ բարձրանում էր, ինչը կարող էր մահմեդականների գիտակցության զարթոնքի պատճառ դառնալ, արդյունքում նրանք կխրախուսվեին, կիրահրվեին ազատագրվելու, անկախանալու հզոր տերությունների գերիշխանությունից:

Իսլամական հեղափոխության հաղթանակն իրրև բեկում բողոքի հումկու դրսևորումնկրում

Իրականում այն, ինչ տեղի ունեցավ, շրջադարձային էր աշխարհում գործող կարգերը պահպանող տերությունների տեսակետների ու գերիշխանության դեմ բողոքի հումկու ալիքների, Իսլամական հեղափոխության համար: Կարևորն այն է, որ Իսլամական հեղափոխությունն ազգ-պետություն շրջանակում միջազգային համակարգում ընդունվեց որպես քաղաքական միավոր և, նրա ժողովրդական լինելու պատճառով, ներկայացված կարգախոսներն ու տեսակետները միաժամանակ հովանավորվում էին ժողովրդի ու պետության կողմից, ինչի բերումով դրանք

լըջորեն ընդունեցին բարեկամներն ու թշնամիները և կատարվածից հրաժարվելու հնարավորությունը բացառվեց: Երկրի ներսում էլ հեղափոխության էությունը կրոնական, իսլամական էր և պարտավոր էր ծրագրեր մշակել իր հեղափոխական առաքելությունն իրականացնելու նպատակով: Հենց այս համատեքստում էլ առաջ քաշվեց հեղափոխության «արտահանման» հարցը: Հեղափոխության «արտահանման» բնական երևույթը բխում էր մի կողմից տարածաշրջանի երկրներում Իրանի իրավիճակի մնանությունից, մյուս կողմից՝ տիրող աշխարհակարգի փակ լինելուց, ինչը նոր իրավիճակ ընդունելու ու մարտելու հնարավորություն չէր տալիս: Այդ հարցը հեղափոխության «արտահանումը» երկխմատ էր դարձրին: Երկրի ներսում հեղափոխականների տեսանկյունից հեղափոխության «արտահանումը» նշանակում էր ազատության, անկախության և իսլամական արժանապատվության ուղերձ մահմեդականներին ու համայն աշխարհին: Օտարների տեսանկյունից հեղափոխության «արտահանումը» նշանակում էր բռնությունների տարածում, գոյություն ունեցող կարգերի դեմ դիմադրության հենակետերի, մտավոր կարողությունների ստեղծում և ինքնավստահության բարձրացում՝ ընդդեմ կեղերիչ տերությունների շահերը պաշտպանող պարտադրող նախագծերի:

Էման Խոմեյնին 1980թ. փետրվարի 11-ին մշել է. «Մենք մեր հեղափոխությունն «արտահանելու» ենք աշխարհով մեկ, քանի որ այն իսլամական է և քանի դեռ «Ալլահից բացի չկա այլ աստված, Մոհամմեդն Ալլահի մարգարեն է» կանչը ողջ աշխարհում արձագանք չի գտել, աշխարհի բոլոր ծագերում շարունակվում է պայքարն ընդդեմ կեղերիչների, և քանի դեռ մենք կանք»⁴¹: Նա բազմիցս շեշտել է նաև. «Եթե մենք առում ենք, որ մեր հեղափոխությունը պետք է տարածվի ամենուր, չպետք է դա սխալ ընկալելով կարծեն, թե մենք ձգտում ենք աշխարհակալության: Մենք աշխարհի բոլոր մահմեդական երկրներին յուրային ենք համարում: Յուրաքանչյուր երկիր պետք է իր տեղում լինի... Մեր հեղափոխության «արտահանման» իմաստն այն է, որ բոլոր ազգերը ուղի ելնեն, զարթոնք ապրեն, զարթոնք ապրեն նաև իշխանությունները ...»⁴²:

Նահատակ դուկ Մոհամմեդ Ջավադ Բահոնարն այս առիթով ասել է. «Ուրիշները կարծում էին, թե հեղափոխության «արտահանման» իմաստը ոտնձգության ու պատերազմի «արտահանում» է նշանակում կամ մեր նպատակը, մեր հեղափոխությունը «արտահանելով», այլոց հողեր գրավելն է: Այսինքն՝ ձգտում ենք մեր իշխանությունն ընդլայնել և ուրիշների հարստությունը գումարել մեր հարստությանը, այսինքն՝ հենց նույն մտածողությունը, որով իշխանատենչ ուժերն են մեկնաբանում հեղափոխության «արտահանումը»... Նրանք բնավ մեր բողոքի ձայնը չեն լսել, ծանոթ չեն այդ մտածողությանը, չեն հասկացել նաև մեր հեղափոխության չափանիշները»⁴³:

Հակառակ երկրի ներսում ատկա տեսակետների, արտերկրում օտարների

հոսանք իրականությունն այլ էր, այլ քան էր տեղի ունենում: ԱՄՆ Կենտրոնական հետախուզական կազմակերպության (CIA) ընդհանուր վերլուծաբան Գրահան Ֆուլերը գրել է. «Իրանի հեղափոխությունը միջնորդ գործոն էր, որպեսզի իսլամական քաղաքականության հարցը ներթափանցեր միջազգային քաղաքականության մտավոր կենտրոն »⁴⁴: Ապա դժգոհությամբ շարունակում է. «Նույնիսկ նրանք, ովքեր բնավ էլ չէին ցանկանում Թեհրան գնալ, հեղափոխության հզոր ազդեցության ներքո են հայտնվել: Այսթույն պետք է որ ճշտորեն գործած լինի, որ կարողացել է Ամերիկայի հովանավորությունը վայելող շահի հզոր վարչակարգը տապալել, միաժամանակ Միացյալ Նահանգներին ստորացնել և վճռել երկրից... Հեղափոխության ազդեցության ցուցադրումը Պարսից ծոցում հեղափոխությունից հետո առաջին տարում շատ մեծ էր՝ Քուվեյթի, Բահրեյնի, Սաուդյան Արաբիայի շիաների շրջանում խլտտումը և ընթրատությունը դրա վառ ապացույցն էին: Իսլամը կրկին ներթափանցել էր քաղաքական գործընթացներ: Այդ շարժումն ի սկզբանե քաղաքական բնույթ էր կրում»⁴⁵: Թորմաշյանը գրում է. «Իրանում իսլամական հեղափոխության հարթանակը մուսուլման եղբայրներին ինքնավստահություն ներշնչեց իրականացնելու իրենց նպատակը՝ Եգիպտոսում իսլամական վարչակարգ հաստատելու հարցում»⁴⁶:

Ամերիկացի լրագրող Ռարին Ռայթը, Իսլամական հեղափոխության ազդեցությունը բնութագրելով, նշում է, որ այդ հեղափոխության նշանակությունն Իրանի, Միջին Արևելքի և իսլամական լայնածավալ աշխարհի, անգամ 20-րդ դարի սահմաններից անդին է գնում, ինչի պատճառը շատ պարզ է. «Սա նոր դարաշրջանի վերջին խոշոր հեղափոխությունն էր... Արևմուտքը ջանքեր գործադրեց՝ ապացուցելու, որ Իրանի հեղափոխությունը միտված է այդ երկիրը 14 դար հետ մղելու: Սակայն 16 ամիս տևած հեղափոխական գործընթացներն ու ցույցերն ապացուցեցին, որ իսլամն ի գորտ է իշխող վարչակարգի հակառակորդներին քաղաքական նոր «զեղու» սովորեցնել, որոնցից կօզակեն իրենց նպատակների ու տակնուրվակյան քայլերի իրագործման հարցում... Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունն իսլամական աշխարհի վրա ակնհայտ էր. այն 1967-73թթ. արաբաիսրայելական պատերազմի ընթացքում ձևավորված իսլամական շարժումներն իսլամական աշխարհում վերածեց այստեղ առկա բոլոր վարչակարգերի ընդդիմության... Այդօրինակ շարժումներին զուգահեռ տեղի էր ունենում ոչ այնքան զգալի, սակայն խիստ կարևոր ու հանդարտ մի շարժում: Իրա նպատակն առկա վարկաբեկված ինստիտուտների՝ դպրոցների, բժշկական հաստատությունների, կոոպերատիվների և բարօրության կենտրոնների իսլամական այլընտրանքն ստեղծելն էր: Իսլամական խմբերը քաղաքացիական նոր հասարակություն ստեղծելու ուղղությամբ լուրջ ջանքեր էին գործադրում: Այդ նպատակով իսլամական կազմակերպությունների լայն ցանց էին ձևավորում՝

միությունների, քանվորական, ուսուցչական, ինժեներների, կանանց, երիտասարդների և այլ տիպի ակումբների տեսքով, որպեսզի այս կերպ լուծեն իշխանությունների կողմից անտեսված խնդիրները»:

Իրականում Իսլամական հեղափոխության մակերեսային, մախնական ու փոքրկուտ ազդեցությունը, բնույթը փոխելով, երևան եկավ որպես Արևելքի և Արևմուտքի քաղաքականությունից տարբերվող նոր տեսակետ, որը մուտք գործելով գրականության ու քաղաքական ընկալումների ասպարեզ, ընտրության ու խորհելու նոր դաշտ, առիթ ստեղծեց: Իրանի հաջողությունն իբրև «միջնորդ գործոն», որն առաջ քաշեց «իսլամական քաղաքականություն» հարցը և ուշադրության արժանացրեց քաղաքական իսլամը, ինչը կարող է համարվել հեղափոխության «արտահանման» դրսևորումներից և, իհարկե, թշնամիների մտահոգությունների պատճառ դառնալ: Ամերիկայի նախկին նախագահ Ռիչարդ Նիքսոնը քաղաքական իսլամի մասին իր մտահոգության և դրան դիմակայելու առնչությամբ նշել է. «Իսլամական աշխարհի անցյալարժի վրա ազդելու նպատակով չպետք է ստեղծենք մեկ ամբողջական քաղաքականություն»՝ «իսլամական քաղաքականություն» անունով և բոլոր երկրների հանդեպ վարենք նույն քաղաքականությունը»⁴⁰: Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Գանիել Փափիսը մահմեդականների վրա Իսլամական հեղափոխության ազդեցության մասին նշել է. «ԱՄՆ-ը չի կարող ընդհանուր համաձայնության գալ, քանզի նրանք ոչ միայն նպատակամույն են վերջ դնել մեր ռազմական ներկայությանը Միջին Արևելքում, այլև ձգտում են այդ քայլն իրականացնել նաև մշակույթի ոլորտում... Մենք չենք կարող կիրառել խաղաղ գոյակցության քաղաքականություն, քանզի այաթոլա Խոմենյիի հետ որևէ ընդհանուր կողմ չունենք... 10 տարի առաջ մենք իսլամի նկատմամբ առանձնապես զգայունություն չէինք դրսևորում: Սակայն այսօր այդպես չէ, անիրաժեշտ է, որ բոլորս Իրանում և մահմեդական որոշ երկրներում այդ նոր երևույթին ավելի լուրջ վերաբերվենք:

Այսօր մահմեդականների հայացքն ուղղված է դեպի Իրան և հենց նրան են դիտում իբրև չափան: Իրանը մեզն է լարդատորիայի, եթե այդ փորձը հաջողությամբ ավարտվի, ապա այլ երկրներում էլ մահմեդականների համարձակությունը կմեծանա... Մահմեդականները նպատակամույնված են իսլամը ներկայացնելու իբրև կատարյալ ուղղություն, ինչը մեզ համար ընդունելի չէ»:

Պաղեստինյան հիմնահարցն Իսլամական հեղափոխությունից առաջ տարբերությամբ թեմաների շարքում առանձնահատուկ կարևորություն է ունեցել, իսկ դրանից հետո մեծացել են դրան աջակցելու հնարավորությունները, ինչն ակնհայտորեն մեծացրել է Իսրայելի դեմ պաղեստինցիների դիմադրության ուժը: Ինչպես հայտնի է, Իսլամական հեղափոխության կարգախոսներից էր «Այսօր՝

Իրանը, վաղը՝ Պաղեստինը»: Իսկ հեղափոխությունից հետո, 1989թ. օգոստոսի 7-ին, Էմամ Խոմենյին Ռաժադանի վերջին ուրբաթ օրը Երուսաղեմի (Մոսկի) օր հռչակեց, երբ աշխարհի մահմեդականները, ի նշան համերաշխության, տարբեր միջոցառումներ են կազմակերպում ի պաշտպանություն մահմեդականների օրհնական իրավունքների, մասնավորապես՝ պաղեստինցիների:

Պաղեստինի «Իսլամական ցիխադ» կազմակերպության գլխավոր քարտուղար, նահատակ դոկ. Ֆարիհ Շալադին կրոնական գաղափարի նկատմամբ վստահությունը վերականգնեց ողջ իսլամական աշխարհում, ապացուցելով, որ իսլամն անպարտելի ուժ է, այն պաղեստինցիների շրջանում վերակենդանացրեց ապստամբության, ընդվզման ոգին»:

Լիբանանի «Հեզբոլլա»-ի, «Համաս» (Իսլամական դիմադրության կազմակերպություն) և «Իսլամական ցիխադ» կազմակերպության մեծան դիմադրության ուժերի ձևավորումը տեղի ունեցավ Իրանի իսլամական հեղափոխության ազդեցության ներքո: 1987թ. սկզբներին սկսված դիմադրության շարժման (Էմբեֆադա) գլխավոր հենակետեր էին ընտրվել, ինչպես գիտենք, մզկիթն ու ուրբաթօրյա աղոթքները և գործնականում պարտիզանական զինված սահմանափակ գործողությունները փոխարինվել են ոչ զինված շարժումներով ու գործունեություններով: Էմբեֆադան, փաստորեն, իր բնույթով շատ մեծան էր այն միջոցառումներին ու գործողություններին, որոնք ի վերջո հանգում են իսլամական հեղափոխության:

Իսլամական գաղթոնքն ու ինքնագիտակցությունը ոչ միայն պաղեստինյան խնդրով էին պայմանավորված: «Ստանապական այաներ» գրքի շուրջ ծագած խնդիրն ի ցույց դրեց այդ գաղթոնքի համաշխարհային կողմը, ինչը ևս համարվում է Իսլամական հեղափոխության լուրջ ազդեցություններից: Այլ կերպ ասած՝ կրոնի առանցքայինությունը վերացնում է տարբերությունները և մահմեդականները համախմբվում են իսլամի թշնամիների դեմ, ինչը մի կողմից հենց Նիքսոնի և նրա մտանքների մտավախությունների առարկայացումն է, մյուս կողմից՝ Իրանն է հանդիսանում իբրև բազա մահմեդականներին այդօրինակ միասնությունն ու ինքնագիտակցությունն առաջնորդելու համար:

Այդօրինակ գործընթացների ու ներուժի առկայությունը պատճառ դարձան, որ Իսլամական հեղափոխության և դրա ազդեցությունների վերաբերյալ ձևավորվեն նոր տեսակետներ ու հայացքներ: Ֆեարն Իսլամական հեղափոխությունը համարում է տարածաշրջանի քաղաքական հետագա զարգացումների մոդել, ապա մեջբերում է ամուս Զուլայա Միլերին. «Քանի դեռ իսլամական շարժումները գտնվում են Իրանի հեղափոխության ձգողականության ու հզորության քաջասական ազդեցության ներքո, ապա գաղափարախոսության կարևորությունը խանդավառ երիտասարդների համար իսլամի հզոր ձգողականությունը կրկին իրողություն է դարձնում... Բացառված չէ, որ իսլամի դարաշրջանը հենց նոր է սկսվում»:

Ընդհանուր առմամբ բնութագրվում է, թե արտաքինապետ զգալի փոփոխություններ ու սահմանափակումներ են առաջացել, որոնք պահանջում են առանձին ուսումնասիրություն, այսուհանդերձ այս գործընթացները մարդկանց գիտակցության ու մտածելակերպի վրա խոր նստվածք են տվել և իրենց հերթին պատասխանել այսօրվա մարդու անվերջանալի հետաքրքրություններին, մահմեդականների և աշխարհի վեհանձն անհատների անհամար հարցերին: Այլ կերպ ասած՝ այն գաղտնի հրավեր է, որն աստիճանաբար աճում է և ըստ մտավոր մակարդակների աճելի շատ խորհրդածությունների մոդ դրսևորումներ ստանում, ազդելով մարդկանց վարքագծի վրա:

1. Գոկ. Մոհամեդ Ջաֆար Ջաֆարի Լանգեբուդի, Իրավագիտության հանրնդիանոր ներածություն, «Հողդո-ե գանջե դանեշ» հրատարակչություն, երկրորդ հրատարակություն, Թեհրան, 1980թ., էջ 26:
2. Էմադ Խոնեյնի, Իսլամական իշխանություն, Էմադ Խոնեյնիի ստեղծագործությունների ու աշխատությունների մշակման և հրատարակման կենտրոն, 5-րդ հրատարակություն, Թեհրան, 1997թ., էջ 34:
3. Իրանի Իսլամական Հանրապետության Մահմանդություն, նախագիտության օրենքների ու կանոնների գլխավոր վարչություն, 5-րդ հրատարակություն, Թեհրան, 1996թ., էջ 41:
4. Նույն տեղում, էջ 100:
5. Գարրիել Ա. Ալմոդո ե աշխատակիցներ, Տեսական շրջանակ համեմատական քաղաքականության համար, Ալի Ռեզա Թալեբի թարգմանությամբ, Պետական կառավարման ուսուցման կենտրոն, երկրորդ հրատարակություն:
6. Ալլախա Բեռլին, Չորս հողված ազատության մասին, Մոհամեդ Ալի Մովսեդի թարգմանությամբ, «Խարազմի» հրատարակչություն, Թեհրան, 1989թ., էջ 81:
7. Իրանի Իսլամական Հանրապետության Մահմանդություն, էջ 100:
8. Գոկ. Սեյեդ Ջալալդին Մադանի, նույն տեղում, էջ 15:
9. Գոկ. Նասրեդին Բարոզյան, Իրավագիտության ներածություն և Իրանի իրավագիտական համակարգի ուսումնասիրումը, հրատարակչական ընկերություն Բերման Բեռնայի գործակցությամբ, 21-րդ հրատարակություն:
10. Դասեմ Շաբանի, Գլխավոր իրավունքները և իշխանության կառուցվածքը Իրանի Իսլամական Հանրապետությունում, «Էրբեյլաթ» հրատարակչություն, Թեհրան, 1996թ., էջ 70:
11. Իրանի Իսլամական Հանրապետության, նույն հրատարակությունը, էջ 44:
12. Գոկ. Աբդուլազիզ Գալի, Գլխավոր իրավունքները և քաղաքական կառույցները, հատոր առաջին, Թեհրանի համալսարանի հրատարակչություն, վեցերորդ հրատարակություն, Թեհրան, 1996թ., էջ 449:
13. Իրանի Իսլամական Հանրապետության, նույն հրատարակությունը, էջ 68:
14. Նույն տեղում:
15. Գոկ. Աբդուլազիզ Գալի, նույն տեղում, էջ 112:
16. Նույն տեղում, էջ 113:

17. Գոկ Նասրեդին Բարոզյան, նույն տեղում, էջ 136:
18. Փան Փան Ռուստ, Հասարակական պայմանագիր, Մոհսեն Ջիրաբզադեի թարգմանությամբ, «Աղիթ» հրատարակչություն, Թեհրան, 1989թ., էջ 81:
19. Տեղեկության համար դիմել Նյու Յորք, Քարոլ, Մորադ Ֆարիդաբադի, Յուսեֆ Աբգարի, «Քարեն Նո» հրատարակչություն, Թեհրան, 2002թ.:
20. Ալեքս Գը Թյուրքույի, Փողովորդավարության վերլուծություն Ամերիկայում, Ռահմաթուլա Մոհադամ Մարադայի թարգմանությամբ, «Ջավադ» հրատարակչություն, Թեհրան, 1968թ., էջ 410:
21. Նույն տեղում:
22. Սեյեդ Ջավադ Թահախի, Մոդեռն իշխանության գաղափարը, Էմադ Խոնեյնիի ստեղծագործությունների մշակման ու հրատարակման կենտրոն, Թեհրան, 2002թ., վերջվել է «Լույսի թողք» («Ասիֆե նուր») մատենաշարի 18-րդ հատրից, 1983թ., էջ 109:
23. Գոկ. Վալիուլա Անսարի, Ընդհանուր ակնարկ վարչական իրավունքի մասին, «Միզան» հրատարակչություն, Թեհրան, 1995թ., էջ 149:
24. Գոկ. Ալի Ռեզա Ազադանի, Իրանի քաղաքական ու հասարակական զարգացումները, հատոր 1 (1941-1979թթ.), «Սամթ» հրատարակչություն, Թեհրան, 1997թ., էջ 31:
25. Մոսթաֆա Խարաման, Հեղափոխության պատմությունը երեխաների ու պատանիների համար, գրողների և մշակույթի պատմության տարածման խորհուրդների գլխավորությամբ:
26. Գոկ. Ռեզա Մանսուրի, Իրանը 2048թ. (Ազգային կամբ հանուն մշակույթի և գիտության առաջընթացի), «Քարեն Նո» հրատարակչություն, 1998թ., էջ 142:
27. Մոսթաֆա Խարաման, Հեղափոխության պատմությունը երեխաների ու պատանիների համար, գրողների և մշակույթի պատմության տարածման խորհուրդների գլխավորությամբ:
28. Գոկ. Ռեզա Մանսուրի, նույն տեղում, էջ 142:
29. Գոկ. Էբրահիմ Ռազալի, Մանրություն Իրանի տնտեսության հետ, «Նեշ» հրատարակչություն, Թեհրան, 1998թ., էջ 216:
30. «Յաս-ե Նո» օրաթերթ, 26 սեպտեմբերի, 1993թ.:
31. Ռամին Ջահանբեգու, «Տալաբություն, թարգմանություն և գրախոսարակչություն, գրույց Ջանրան Նահախի հետ», Իրանը և արդիականությունը (Ռամին Ջահան Բեզուի գրույցների ժողովածու), «Գոֆթար» հրատարակչություն, Թեհրան, 1998թ., էջ 134-35:
32. Մոհամեդ Հասան, Ջրույց Իրանի տեղեկատվության ու գիտական փաստաթղթերի կենտրոնի տնօրենի հետ, «Իրան» օրաթերթ, 4 մարտի, 2002թ.:
33. «Յաս-ե Նո» օրաթերթ, 15 սեպտեմբերի, 2003թ.:
34. Մլր Հոսեյն Մուսավի, Հինգ գրույց հեղափոխության, հասարակության ու սուրբ պաշտպանության մասին, Իսլամական մշակույթի հրատարակման գրասենյակ, Թեհրան, 1998թ., երկրորդ հրատարակություն, էջ 6:
35. Էբրահիմ Ռազալի, Մանրանանք Իրանի տնտեսությամբ, «Նեշ» հրատարակչություն, 1998թ., էջ 92-93:
36. Նույն տեղում, էջ 280:
37. «Համշահի» օրաթերթ, Իրանի տնտեսությունը: 20 տարի դիմադրություն երկու ճակատով, 4 փետրվարի, 1997թ.:

38. «Սիասաթ» օրաթերթ, 4 փետրվարի, 1997թ.:

39. Ձեռնարկված միջոցառումների երկրի նախագահի բնակչությանն ուղղված գրավոր գեղեցագրից՝ կատարված ու ժողովրդի գործելակերպի, երկրում կատարված փոփոխությունների մասին, որը ապագրվել է լինտրոլի «Էթելասթ» օրաթերթի 2000թ. մարտի 1-ի համարում:

40. «Էթելասթ» օրաթերթ, 23 սեպտեմբերի, 2002թ.:

41. Ընամ Խոմեյնիի աշխատանքների ու ստեղծագործությունների մշակման ու հրատարակման կենտրոնի ուսումնասիրությունների թածին, Հեղափոխության «արտահանումը» Ընամ Խոմեյնիի տեսանկյունից, Ընամ Խոմեյնիի աշխատանքների ու ստեղծագործությունների մշակման ու հրատարակման կենտրոն, երկրորդ հրատարակություն, Թեհրան, 1998թ., էջ 34:

42. Նույն տեղում, էջ 59:

43. Դոկ. Մոհամմեդ Ջավադ Բահոմար, Ջրույցներ Իսլամական հեղափոխության մշակույթի շուրջ, Իսլամական մշակույթի հրատարակչություն, Թեհրան, 1992թ., էջ 3164:

44. Գրահամ Ֆուլեբ, Ալշարիի ուշադրության կենտրոն (Իրանի աշխարհադարակամությունը), Աբրաս Մոխրերի թարգմանությամբ, «Մարքյազ» հրատարակչություն, երկրորդ հրատարակություն, Թեհրան, 1998թ., էջ 108:

45. Նույն տեղում, էջ 108-109:

46. Հրայր Թորմաջյան, Իսլամական արդի շարժումներն արաբական աշխարհում, դոկ. Համիդ Ահմադիի թարգմանությամբ, «Քելիան» հրատարակչություն, երրորդ հրատարակություն, Թեհրան, 1998թ., էջ 160:

47. Ռաֆիկ Ռալթ, Վերջին մեծ հեղափոխությունը (հեղափոխություն և փոփոխություններ Իրանում) Ահմադ Քադայնիի և Շահին Ահմադիի թարգմանությամբ, «Ռասա» մշակույթային ծառայությունների կենտրոն:

48. Ռիչարդ Նիքսոն, Առիթը ճիշտ օգտագործենք, Մոհսեն Վանսինեմադիի թարգմանությամբ, «Քարի-և Նո» հրատարակչություն, Թեհրան, 1991թ., էջ 15:

49. Դոկ. Ջավադ Մանադի, Իսլամական հեղափոխության երկխոսությունը և իռադիոը, Իսլամական հեղափոխության գաղափարը, եռամսյա, առաջին տարի, երկրորդ համար, 2002թ., էջ 154:

50. Ընամ Խոմեյնիի ստեղծագործությունների մշակման ու հրատարակման կենտրոն, Պաղեստինն Ընամ Խոմեյնիի տեսանկյունից, Ընամ Խոմեյնիի ստեղծագործությունների մշակման ու հրատարակման կենտրոն, երրորդ հրատարակություն, Թեհրան, 1995թ., էջ 302:

51. Քարեն Ի. Ֆեսթ, Իրանի Հեղափոխությունը և արաբական աշխարհում քաղաքական զարգացումները, Դավիդ Օլամանի թարգմանությամբ, Իսլամական հեղափոխության պահապան կորպուսի հրամանատարության և շտաբի ինստիտուտ, Թեհրան, 1997թ., էջ 69:

ԿՐՈՆԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ՓՈԽԱՆՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ՆՏՏԵՂՎՓՈՒՆԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՄ

Դոկտ. Եսիխ Ճուզի

Իսլամական հեղափոխության կարևորագույն ձեռքբերումներից մեկը իսլամի շիա ուղղության մուսթեք էր Իրանի քաղաքական ասպարեզ և նրա փոխառնչությունները Իրանի վերակառուցման շուրջ բանավեճի հետ: Այս փոխարարբություն արդյունքներն ու հետևանքները կարող են նշանակալից ազդեցություն թողնել մի կողմից շիա դավանանքի, մյուս կողմից՝ ժամանակակից քաղաքակրթության մեջ կրոնի տեղի ու դերի մասին առկա հայացքների վրա:

Իսլամական հեղափոխության հաղթանակով իշխանության եկած շիա իսլամականները պետք է ճշտեին իրենց դիրքորոշումները երկրի վերակառուցման վերաբերյալ և խելամիտ գուգակչիո հաստատեին հասարակության երկու կարևոր պահանջների՝ կրոնի և արդիականացման միջև:

Հեղափոխությունից առաջ մի շարք հետազոտողներ, ելակետ ընդունելով մոդեռնիզացիայի դարձրոցի դասական տեսությունները, կրոնը զարգացման արգելափակչ գործոն էին համարում, և հաճախ մոդեռն արժեքների կայացման պահանջում կրոնական արժեքների կրճատում: Ի հակադրություն այս կարծիքների, տեսարանների մեկ այլ խումբ, ընդգծելով արևմտյան մոդեռնիզմի տեսություն որոշ հիմնադրույթները, (ինչպես օրինակ՝ հումանիզմը և սեկուլարիզմը), պահանջում էին կրոնը պահպանել մոդեռնիզմի մարտահրավերների և դրանից ածանցվող դրսևորումների դեմ: Սակայն, կրոնի և վերակառուցման փոխվզումներն հեղափոխությունից հետո անխուսափելի էին, ուստի իսլամամետ ուժերը քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ հանդես եկան տարբեր դիրքորոշումներով, որոնք մեծ ազդեցություն թողեցին. կրոնի և վերակառուցման մասին մինչ այդ գոյություն ունեցող տեսակետների վրա: Անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին՝ ինչպա՞ն է այս ազդեցության դաշտը և արդյոք կրոնը կարողացել է իր հատուկ ներգործությունն ունենալ վերակառուցման քանավեճում ու առաջարկել նոր հայեցակարգ, իսկ արդիականացման հրամայականները, իրենց հերթին, ինչպիսի՞ ազդեցություն են գործել կրոնական հայացքների վրա:

Կրոնական ուժերը և վերակառուցման հիմնահարցն Իրանում

19-րդ դարի սկզբին, ի հետևանս Իրանի հասարակության մեջ խմորվող գործընթացների, բարձրագավ մաս Իրանի հասարակության վերակառուցման հար-

ցը: Այս իրադարձությունները, որոնց արձատները գլխավորապես պետք է փնտրել երկրից դուրս, հանգեցրին մի շարք օրյեկտիվ և ապա նաև տուրէյեկտիվ փոփոխությունների, որոնք պահանջում էին գոյություն ունեցող իրավիճակի փոփոխություն և շտկում:

19-րդ դարի սկզբին Իրանում բարձրացված վերակառուցման ալիքին՝ կրոնական ուժերն արձագանքեցին տարբեր կերպ և որդեգրեցին տարբեր դիրքորոշումներ: Չնավորվեց գաղափարական կարևոր մի շարժում, որը կարելի է անվանել շիա իսլամականների բարեփոխական հոսանք: Գաղափարական այս շարժումը հետզհետե ընդլայնվեց և ներգրավեց շիա ստավորականներին ու բարձրաստիճան հոգևորականներին, հանգամանք, որ նշանակալից դեր խաղաց երկրում զարգացող իրադարձություններում: Այս շարժումը նշանավորվում էր Փեհլեվյան շրջանում գործադրվող արևմտյան չափաններով իրականացվող բարեփոխումների բննադատությամբ, իսկ հեղափոխությունից հետո աշխատեց ստեղծել վերակառուցման ու արդիականացման տեղայնացված մոդել:

Շիա բարեփոխական այս շարժումը, ընդունելով հանդերձ հասարակության վերակառուցման և բարեփոխման մոդեռնիստական դասական մեթոդները, նրանից էականորեն տարբերվում էր իր առաջադրած ուղիներով: Ի տարբերություն, արևմտականացման կարգախոսով առաջնորդվող մոդեռնիստների, շիաներն առաջնորդվում էին տեղական, իսլամական և իսելամիտ արժեքների վրա իմնված հասարակության տեսլականով, որին հասնելու համար՝ ավանդական հասարակությունից դեպի մոդեռն հասարակության անցման անհրաժեշտություն չէին տեսնում, այլ փոխարենը՝ վերաիմաստավորում և վերասահմանում էին ավանդույթները և մոդեռնիզմը: Ինչպես մոդեռնիստները, նրանք ևս յուրաքանչյուր իրադարձության մեջ նախապատվությունը տալիս էին մշակութային վերափոխմանը, սակայն, ի հակադրումն դասական մոդեռնիստների, համաձայն չէին ավանդական մշակույթի քայքայման և այն մոդեռն մշակույթով փոխարինելու մտքին: Նրանց կարծիքով՝ կրոնական բարեփոխականների առաջնահերթ քայլը պետք է լիներ՝ հղկել ժողովրդական կրոնական մշակույթը, ըմբռնել իսլամական ճշմարիտ արժեքներն ու մշակույթը, որոնք զարթոնքի, կենսունակության և առաջադիմության մեծ ներուժ են պարունակում: Ըստ այս խմբի՝ անաղարտ իսլամի ճանաչումն ի գործ է հարթել մահմեդականների զարգացման ուղին: Իսկ այն, թե ինչո՞ւ և ինչպե՞ս կարող է անաղարտ իսլամի ճանաչումը մահմեդականներին ուսուցանել զարգացման ուղին, դա բացատրվում է իսլամի համապարփակ լինելու և Ղուրանի ամենասացության հավատալիքով... Այս համոզմունքը բխում էր կրոնի բարենորոգիչների հատուկ աշխարհայացքի և գոյաճանաչման ակունքներից:

Այս խումբը, վերասահմանելով ուսցիոնալիզմի և Աստվածային ներշնչանքի

աղերսները, փորձեց ապացուցել, որ կրոնի և գիտության միջև բշնամանք չկա, բանգի երկունս էլ ձգտում են միևնույն ճշմարտության: Այս հոսանքը, շեշտելով շիա ուղղության իրավագիտության հնարավորություններն ու միջոցները՝ հասարակության առկա և փոփոխվող պահանջներին արձագանքելու ուղղությամբ, կարևորում էր բանականության դերը՝ կրոնական օրենքների ըմբռնման և դրանք ժամանակի ու տեղի պայմաններին համապատասխանեցնելու ուղղությամբ: Նրանց կարծիքով՝ շիա բարձրաստիճան օրենսգետ հոգևորականներն օժտված են մեծ կարողությամբ՝ ժամանակի պահանջներին համահունչ լուծումներ առաջարկելու համար: Ունենալով յուրահատուկ մոտեցում կրոնի և աշխարհի փոխհարաբերության հարցում, այսինքն՝ այս աշխարհը հանդերձյալ կյանքի ցանկալիքը համարելով, շիա բարենորոգիչները կարևորում էին մարդկանց աշխարհիկ կյանքի բարեկարգումն՝ արքայությանն արժանանալու և հոգևոր վերածննդի համար, ուստի չափազանց մեծ տեղ էին տալիս բարգավաճման նպատակներին ու միտումներին: Նրանք մերժում էին նյութական անտեսելու և աշխարհիկ կյանքից, բնությունից ու հանրությունից մեկուսանալու քարոզները և, մշտապես բննադատելով ավանդական մոտեցումները, դրանք որակում ենդմիտ, հետադիմական ու քարագած հոսանքներ, որոնք կրոնը տարանջատում են աշխարհիկ կյանքից և հասարակական խնդիրներին նայում մատերի արարման:

Ընդհանուր առմամբ, իսլամականների այս խմբի ամենազլխավոր հատկանիշները հետևյալներն են՝ յուրովի աշխարհընկալում և աշխարհայացք, վերահարձ դեպի անաղարտ իսլամ, հասարակական հարցերի ու ղեկավարությունների լուծման ուղղությամբ իսլամի ներուժի շեշտադրում, ազնատման ու խեղճան արձատների որոնում ներքին ներաշխարհում (տգիտություն, անիրագվելություն և բռնապետություն), Արևմուտքի հանդեպ երկակի մոտեցման կիրառում, այսինքն՝ մի կողմից՝ արևմուտքից գիտություն սովորելու, մյուս կողմից՝ գաղութատիրությանը դիմակայելու անհրաժեշտություն: Մահմանադրական հեղափոխության շրջանում այս խմբավորման դեմքերում էին՝ Մեյեղ Ջամալեդինի Ասադաբադին, Շեյխ Նադի Նաջմաբադին, Մեյեղ Մոհամմադ Թաբաթաբային, Միրզա Նալիկին և Ախունդ Խորասանին: Մահմանադրական շրջանում այս գաղափարախոսությունը, հանձինս շիա բարձրաստիճան կրոնավորների վերածվեց գաղափարական ազդեցիկ շարժման:

Հետագա տարիներին և Ռեզա շահի օրոք, չնայած զանազան վայրիվերումներին, այս շարժումը գոյատևեց և կրոնի ու մոդեռնիզմի փոխհարաբերություններում նոր զարգացումներ արձանագրեց, որոնք մեծ մասամբ ազդված էին կրոնական նորարարության երկրորդ ալիքից (այն հենված էր պետականակենտրոն զարգացման և հասարակական ինժինեյրիայի վրա): Այնուհետև շարժումը որոշակի ազդեցություններ կրեց արտակրոնական գործունեից, դրսից ներմուծված

ճախակողմյան և լիբերալիստական նոր գաղափարախոսություններից՝ ունենալով տարբեր հակումներ: Սակայն, չնայած բոլոր այս զարգացումներին, պահպանեց իր առանցքային կարգախոսները, այն է՝ վերադարձ իսլամին, ժամանակի ու տեղական պայմաններին համապատասխան ուսցիտուալ իսլամի առաջադրում և պայքար՝ բռնապետության, հետադիմության, սնտիսպալաչուության ու գաղութատիրության դեմ: Որպես ազդեցիկ ու կարևոր մի շարժում, այն առաջադրեց երկրի վերակառուցման սեփական ուղիներն ու լուծումները և քննադատեց մրցակից հոսանքների, դրանց թվում նաև Փեղելյան իշխող դիմաստիայի մոդեռնիզմի մակերեսային և պարզունակ ընկալումները: Փեղելի Բ.-ի օրոք հոսանքի նշանավոր դեմքերից էին Այաթոլա Թալեղանին, Բազարգանը, Շարիաթին, Ալամն Թաբաթաբային, նահատակ Մորադախին և Իմամ Խոմենեյին: Համենայնդեպս, գաղափարական այս հոսանքը հեղափոխությունից հետո իշխանության գլուխ անցավ և փորձեց իրագործել իր իդեալները:

Ներհեղափոխական դարիներին կրոնի և վերակառուցման փոխառեւուրթյունների դարբեր դրսևորումները

Իրանում իսլամական հեղափոխությունից հետո իշխանությունները որդեգրելով կրոնական բարեփոխողական գաղափարախոսություն, փորձեցին իրականություն դարձնել իրենց ուսմանը կրոնի և աշխարհիկ կյանքի, կրոնի և գիտության, կրոնի և օսցիոնալիզմի համատեղելիության վերաբերյալ և գործի ղեկ իրենց այլընտրանքային մոդելը: Այս նպատակով քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում նախաձեռնեցին մի շարք քայլեր, որոնց հետևեցին քե՛ մոդեռնիստների, և քե՛ ավանդապաշտների հակադրությունները: Հողվածի այս բաժնում կքննարկենք կրոնի և վերակառուցման աղերսների արտահայտությունները տարբեր բնագավառներում:

Կրոնի և արդիականացման փոխառեւուրթյունների քաղաքական ոլորտում

Հեղափոխությունից հետո առաջին բնագավառը, որին պետք է անդրադառնային կրոնական ուժերը, երկրի քաղաքական համակարգի ձևը և միապետական քաղաքական համակարգին փոխարինող նոր համակարգի հարցն էր: Նրանց առջև դրված էր հետևյալ խնդիրը. ինչպիսի՞ համակարգով պետք է փոխարինվեր նախկին համակարգը, որը և՛ համընկներ իրենց գաղափարական սկզբունքներին, և՛ լիներ առաջադիմական, ինչպիսիս և գործույթ: Այդ օրերին, ոչ-կրոնական նորարարական ուժերն աշխարհիկ, ոչ կրոնական մոդել էին առաջարկում և, պաշտպանելով «հանրապետություն» կամ «ժողովրդավարական

հանրապետություն» ձևերը, ցանկանում իրագործել իրենց քաղաքական իդեալ՝ ինչ-որ տեսակի ժողովրդավարության ստեղծումը:

Դրանց դեմ հանդիման կանգնած էին կրոնական բարեփոխողները, ովքեր ժողովրդավարությունը սահմանում էին Իրանի առանձնահատկությունների և կրոնական արժեքների շրջանակներում: Այս խմբի առաջարկած մոդելներն էին՝ «իսլամական ժողովրդավարական հանրապետություն», «իսլամական հանրապետություն» և «իսլամական իշխանություն», որոնց միջոցով ցանկանում էին իսլամից ու իսլամական գաղափարախոսությունից ներշնչված մի քաղաքական նախագիծ առաջարկել:

Իշխանության վրա իսլամի ներգործունեության մեխանիզմի մասին այս շարժումը երեք տարբեր լուծումներ էր առաջարկում: Առաջինը խումբը, որին կարելի է անվանել կրոնական միմիստիստներ, առանցքային դերը վերապահում էր ժողովրդավարությանը և ցանկանում էր իսլամից ներկայացնել այնպիսի ընկալում, որն ամբողջովին տեղավորվեր ժողովրդավարության արժեքային տիրույթում և պաշտպանում էր «իսլամական ժողովրդավարական հանրապետության» գաղափարը: Երկրորդ խմբին հարողները կրոնին նայում էին մաքսիմալիստական հայեցակետով և համոզված էին, որ կրոնը պետք է միջամտի ոչ միայն նպատակների ու արժեքների, այլ նաև դրանց իրագործման եղանակների և ուղիների որոշմանը: Նրանց կարծիքով՝ քաղաքական վերակառուցումը և կրոնական իշխանության ձևը ոչ մի ընդհանուր եզր չունեն աշխարհում տիրող նյութապաշտ քաղաքակրթության հետ, որի հիմնաքարը հանդիսանում է հումանիզմը (գերապատվությունը տրվում է մարդուն): Հետևաբար, չնայած արևմտյան և իսլամական քաղաքակրթությունների որոշ նմանություններին, չի կարելի արևմտյան իմաստիտոսներն ու լուծումները կիրառել իսլամական հասարակարգում: Այս խումբը պաշտպանում էր, իսլամական իշխանությանն մոդելը: Երրորդ խումբը, որին հարում էին Իմամ Խոմենեյին, շիա բարձրաստիճան օրենսգետ-կրոնավորների մեծ մասը և մի խումբ մուսուլման բարեփոխիչներ, չափավոր հայացքներ ունեին և պաշտպանում էին համադրված մի մոդել, առաջարկում «իսլամական հանրապետություն» ձևը:

Հեղափոխությանը հաջորդած առաջին ամիսներին այս երեք ուղղությունների կողմնակիցները դիմակայեցին միմյանց և իրենց տեսակետներն արժարժեցին նրապարակախոսություններում, մամուլում ու ելույթներում: Հալանցիկ մի հայացք ձգելով 1978թ. փետրվար և մարտ ամիսների թերթերին ու հրապարակումներին, առատ նյութ կրաղենք այդ բանավեճերի մասին: Հիմնական մարտահրավերը, այնուամենայնիվ, ընթանում էր Իմամ Խոմենեյիի գլխավորած չափավոր իսլամիստների և նորարարականների միջև:

Գաղափարների այս դիմակայությունն ընթացքում, նորարարների մի խումբ

գտնում էր, որ իսլամական հանրապետությունն «անորոշ արտահայտություն է և ավանդական մի բառի ու արտասահմանյան մեկ այլ բառի խառնուրդ՝ սուր հակասություն պարունակող»։ Ոմանք իսլամական հանրապետությունն անորոշ և ազատամիտ ժողովրդավարությանը հակադիր հասկացություն էին համարում, իսկ մյուսները կարծում էին, թե կարելի է հանրապետության և իսլամի միջև հաշտության եզր գտնել։ Սրանց հակառակ, Իմամ Խոմենիին և շիա բարձրաստիճանի հոգևորականների մեծամաստայունը, հովանավորելով իսլամական հանրապետության գաղափարը, ընդունեցին նորարարների նետած մարտահրավերը և դիմակայեցին նրանց։ Իմամ Խոմենիին, իր ելույթում քննադատելով նրանց տեսակետները, հայտարարեց. «Սրանք ցանկանում են այստեղ իրականացնել կամ հանրապետություն, որտեղ իսլամ չիլի, կամ ժողովրդավարական հանրապետություն, որտեղ դարձյալ իսլամ կա, կամ իսլամական ժողովրդավարական հանրապետություն, որին կրկին արևմտյան երանգ կտան»։

Շիա ականավոր հոգևորականներ այսբոլաներ Գոլփախեզանին և Այաթոլա Խոյնի, մշելով, որ Իրանի ժողովրդի մեծամաստայունը կազմում են շիաները և օրենքները պետք է հանրմկենն շիա դավանանքին, պաշտպանեցին իսլամական հանրապետության գաղափարը⁴։ Այաթոլա Շաբիաթմադարին ևս իսլամական հանրապետությունը գնահատեց իսկական ժողովրդավարություն և ժողովրդի ցանկություն։ Նրա կարծիքով՝ արևմտյան ժողովրդավարությունը ժողովրդի իշխանություն է ժողովրդի վրա, մինչդեռ իսլամական ժողովրդավարությունը երկու հարթություն ունի՝ Աստծո իշխանություն ժողովրդի վրա և ժողովրդի իշխանություն ժողովրդի վրա։ Գա նշանակում է, որ ժողովուրդն ընտրում է իր ներկայացուցիչներին, իսկ ներկայացուցիչները, հենվելով մուսուլման ժողովրդի ցանկությանը, իրագործում են իսլամի օրենքներն ու պահանջները։ Նա շեշտում էր, որ Իրանում ժողովրդավարությունը պետք է համապատասխանի Իրանի ժողովրդի մտավոր և հոգևոր ըմբռումներին. իսկ մարդիկ ցանկանում են իսլամական հեղափոխության շրջանակում իսկական ժողովրդավարություն, որը կիրագործվի իսլամական հանրապետության շրջանակներում⁵։ Այաթոլա Թալեգանին ևս այն կարծիքին էր, որ իսլամական հանրապետությունն նշանակում է ողջ ժողովրդի ունեցվածքը և ողջ ժողովրդի կարծիքը՝ ըստ իսլամական չափանիշների(ինչը ողջ ժողովրդի ցանկությունն է)⁶։

Գաղափարական այս շարժման ամենազլխավոր գաղափարախոսը՝ Իմամ Խոմենիին, հարցին անդրադառնալով մատնանշում է իր և ուրիշների ըմբռնած, հանրապետությունների միջև առկա ընդհանրությունը և առում. «Իսկ հանրապետությունն ասելով նկատի ունենք հենց այն իմաստը, ինչ հանրապետությունն ունի ամենուր։ Սակայն, այս հանրապետությունը խարսխված է մի սահմանադրական օրենքի վրա, որն իսլամական օրենք է։ Երբ մենք առում ենք իսլամական

հանրապետություն, նկատի ունենք այն, որ թե՛ ընտրվողների պայմանները, և թե՛ Իրանում գործարդվող օրենքները հիմնված լինեն իսլամի վրա։ Բայց ընտրությունը մնում է ժողովրդին, իսկ հանրապետության թեգիսը նույնն է, ինչ ամենուր»⁷։ Ի վերջո, ժողովրդի հավաքած ձայներով իսլամական հանրապետությունը վավերացվեց որպես Իրանի քաղաքական նոր համակարգ և մարեցին մարտահրավերների բռնկումները։

Սակայն տեսական ճանբարների կտրուկ վերադասավորումը մեկ անգամ ևս կատարվեց ընտրությունների և Իսլամական Հանրապետության Սահմանադրության մշակման ժամանակ, երբ վերը նշված հոսանքները՝ հանրապետականություն-իսլամականություն գուգակցման և երկրի քաղաքական ապագա համակարգի յուրահատկությունների մասին արծարծեցին իրենց տեսակետները։

Այդ ժամանակ Սահմանադրության նախագիծը մշակող «Սահմանադիր ժողովի» կազմն այնպիսին էր, որ հիմնական բանավեճն ընթանում էր մի կողմից կրոնական միեմիմախտների, ովքեր առաջնահերթությունը տալիս էին ժողովրդավարական արժեքներին, և մյուս կողմից՝ խորհրդարանում մեծամաստայուն կազմող չափավորականների միջև, ովքեր առաջնահերթությունը տալիս էին իսլամական արժեքներին և վայելում էին Իմամ Խոմենիի ու շիա հոգևորականության մեծամաստայուն հովանավորությունը։ Խորհրդարանից դուրս և մամուլում, բանավեճերին մասնակցում էին նաև այ ու ծախս նեոնոդեմոկրատները և կրոնական մաքսիմալիստ ուժերը՝ յուրաքանչյուրը հանդես գալով իր տեսակետներով։

Այս քննարկումներում Իմամ Խոմենիին արտահայտում էր հետևյալ միտքը քանի որ ժողովուրդը քվեարկել է իսլամական հանրապետության օգտին, իրականում քվեարկել է իսլամական իշխանությունը և քաղաքականությունը, տնտեսությունը և մշակույթը իսլամականացնելու օգտին, որն էլ ունի իր առանձնահատկությունները։ Այսպիսի մտտեցումը հակադրվում էր բոլոր այն մտտեցումներին, որոնք նախապատվությունը տալիս էին կամ մոդեռնիստական արժեքներին, կամ «իսլամական մոդեռնիզմին» և փորձում իսլամին տալ այնպիսի ձևակերպումներ, որոնք լիովին համընկնեին մոդեռնիստական արժեհասկանալարգին։

Իմամ Խոմենիին, լինելով շիա բարեփոխականների շարժման գլխավոր ուղղորդիչը, հենց սկզբից հաստատություն մտցրեց այս իդեալի բնութագրման մեջ։ Նա իր ելույթում հայտարարեց. «Մեր ուղին իսլամն է և իսլամ ենք ուզում... Առանց իսլամի մեր ինչի՞ն են պետք ազատությունն ու անկախությունը... Արդյոք դուք նահատակությունը ձեզ պարծանք եք համարում նրա համար, որ Շվեյցարիայի նման լինեք»⁸։

Նա քազմիցս շեշտում էր, որ ցանկանում է «Իսլամի բովանդակությունն իրականացնել իսլամական հանրապետության մեջ»⁹ և համոզված էր, որ իրական

մացնելով իսլամի օրենքներն ու դրույթները, իրականություն կդառնան իսկական ժողովրդավարությունը, ազատությունը և զարգացումն ու մարդու վերելքը, և սա տարբերվում է արևմտյան մոդելից:

Նա տարբերակում էր «արևմտականացման» և «խլամականացման» մոդելները, և քննադատելով վերջինս, բացատրում. «Մենք ուզում ենք իսլամական մի երկիր կառուցել, մենք չենք ուզում արևմտյան երկիր կառուցել...»:

Նպատակն այն չէր, որ Փեյղեվյան վարչակարգը գնա և նրան փոխարինի եվրոպական տիպի (ասենք Յրանախյան մամն) մի վարչակարգ, որը ոչ մի կապ չունի իսլամի հետ... դեմոկրատական վարչակարգեր շատ կան, որոնք և՛ անկախություն ունեն, և՛ ազատություն, բայց ոչ ըստ իսլամի, և արդարությունն էլ այնպես չէ, ինչպես իսլամում: Մենք նման բան չենք ուզում»¹¹:

Շեշտելով, որ իսլամը դեմ չէ քաղաքակրթությանն ու առաջադիմությանը¹², հանդգնած էր նաև, որ արևմտյան վերակառուցման չափանից հարմար չէ իսլամական հասարակարգին «քանի որ արևմուտքը դեպի վայրենացում է գնում և մարդկանց դաստիարակում իբրև գիշատիչներ»¹³:

Սահմանադրության նախագծման ու մշակման խորհրդարանում և օրենքի բազմաթիվ հոդվածների ընդունման ժամանակ լուրջ քննարկումներ սկսվեցին մի կողմից՝ Իման Խոմենյեյի կողմնակիցների (չափավորականների), մյուս կողմից՝ իսլամական մինիմալիստների, մաքսիմալիստների և նորարարների միջև: Սահմանադիր ժողովում ամենախնդրահարույց բանավեճերից մեկը ծավալվեց հոգևոր առաջնորդի կարգավիճակի շուրջ: Հոգևորականներն ու կրոնական առաջնորդները պահանջում էին Սահմանադրությանը ամրագրել այդ կետը:

Այսբոլա Գոլփայեզանին հայտարարեց. «Եթե Սահմանադրությունում հստակ չսահմանվի հոգևոր առաջնորդի իշխանության հարցը, ապա պետական իշխանությունը կկատուցվի անարդարության և բռնապետության վրա»¹⁴: Այսբոլա Մարաշի Նաչաֆին և Այսբոլա Մոնրազերին ևս կողմնակից էին քոլոր հնարավորություններով օժտված հոգևոր առաջնորդի դրույթը Սահմանադրությանը ամրագրելու կարծիքին¹⁵:

Սահմանադիր ժողովի հակառակ ճամբարին պատկանող պատգամավորները կարծում էին, որ հոգևոր առաջնորդությունը վերաբերում է վարդապետական հարցերին ու կրոնական օրենքներին և այն չպետք է տարածել քաղաքական հարցերի վրա, ինչպես նաև պետության ղեկավարը, վարդապետության ու կրոնական օրենքներին ծանոթ լինելուց բացի, պետք է ունենա այլ հմտություններ¹⁶: Կար տեսակետ նաև, որ հոգևոր առաջնորդության դրույթն իսլամը կդարձնի հոգևորականության հատուկ խավի մենաշնորհը և կհանգեցնի իշխանության չարաշահման¹⁷: Արտախորհրդարանական ուժերը՝ այժ և ծախ մոդեռնիստները ևս, ինչպես օրինակ՝ «Ազգային ճակատը», ձախակողմյան խմբավորումներն ու խ-

լամական մինիմալիստները, հակառակ համարելով «հոգևոր առաջնորդություն» և «ժողովրդի իշխանություն» հասկացություններն էլ ապելի բեժացրին այս բանավեճերը¹⁸:

Ի պատասխան հոգևոր առաջնորդության և ժողովրդի իշխանության հակառակության վերաբերյալ հնչող քննադատությունների, նախագծի կողմնակիցները մերժում էին նման հակասությունը և պնդում, որ հոգևոր առաջնորդությունը համահունչ է այն ժողովրդի իշխանությանը, ով իր ծայրն է տվել իսլամական հանրապետությանը: «Իսլամական հանրապետություն» կոսակցության ղեկավար և Թեհրանից ընտրված պատգամավոր Այսբոլա Բեհեշթին, ի պաշտպանություն այս նախագծի, սահմանազատելով գաղափարախոսական համակարգը և ժողովրդավարական հանրապետությունն ասաց. «Իսլամական հանրապետությունը գաղափարախոսական համակարգ է և տարբերվում է ժողովրդավարական հանրապետությունից: Բոլոր լիազորությունները, առանց որևէ նախապայմանի, ժողովրդի մեծամասության հայեցողության թողնելը չի համապատասխանում գաղափարական համակարգի սահմանադրական օրենքին: Քանի որ ժողովուրդն իր կատարած առաջին ընտրությամբ, քվեարկել է իսլամական հանրապետության օգտին, հետևաբար այս հանրության Սահմանադրությունը պետք է խարսխվի իսլամի վրա, իսկ նրա ղեկավարը պետք է լինի իսլամագետ, բանիմաց և խորագետ անձնավորություն»¹⁹:

Ի վերջո, քանի որ Սահմանադիր ժողովի 72 պատգամավորից 58-ն իրենց կրթությունն ստացել էին հոգևոր կրթական հաստատություններում և կրոնական կրթություն ունեին (հոգևոր կրթության տարբեր մակարդակներում սովորած անձինք՝ 41-ը կրոնական բարձրաստիճան օրենագետ հոգևորականներ (12 հոգին դոկտորանտուրայի մակարդակին հավասարազոր կրոնական կրթություն ստացած մարդիկ, 3 հոգի քակալավրի աստիճանին համագոր կրոնական կրթության տեր անձինք և 2 հոգի նախնական կրոնադասական գիտելիքներ ստացածներ), ուստի հոգևոր առաջնորդության դրույթը հեշտությամբ ընդունվեց խորհրդարանում: Դա լավագույնս արտահայտվում է հինգերորդ հոդվածին բեր քվեարկված պատգամավորների և հոգևոր կրթություն ստացածների տոկոսային գուցանիչների գրեթե հավասար լինելու փաստով, այնպես որ պատգամավորների 80,5 տոկոսը հոգևոր կրթություն ուներ, իսկ այդ դրույթն ընդունվել է պատգամավորների 81,5 տոկոսի ձայնով:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ազատության և մարդու իրավունքների պաշտպանության միության» խոսնակ՝ Արդյո՞ Քարին Լահիջի խոսքերից:
2. Նույն տեղը, էջ 6:
3. «Սահիֆե Նուր», երրորդ հատոր, էջ 399:
4. «Քեյխան» օրաթերթ, 1978/3/30-ի համար:
5. «Քեյխան» օրաթերթ, 1978/3/11:
6. «Քեյխան» օրաթերթ, 1978/3/17:
7. «Սահիֆե Նուր», երրորդ հատոր, էջ 145:
8. «Սահիֆե Նուր», չորրորդ հատոր, էջ 272:
9. Նույն տեղը, էջ 334:
10. «Սահիֆե Նուր», չորրորդ հատոր, էջ 445:
11. Նույն տեղը, հինգերորդ հատոր, էջ 35:
12. Նույն տեղը, հինգերորդ հատոր, էջ 393:
13. Նույն տեղը, չորրորդ հատոր, էջ 94:
14. «Իսլամական հանրապետություն» օրաթերթ, 1979/6/20:
15. «Քեյխան» օրաթերթ, 1979/7/23 և 1979/6/14:
16. Մահմանադրության ավարտական քննարկումներ, չորրորդ նստաշրջան, («Ազատության շարժում» խմբի անդամ և թնփրանի պատգամավոր Սահարի ելույթից):
17. Նույն տեղը, 11-րդ նստաշրջան, Մողադյան Մարաղեի ելույթից:
18. «Էքսփրես» օրաթերթ, 1979/11/28, «Ազգային ճակատի» հայտարարություն:
19. Մահմանադրության ավարտական քննարկումներ, 15-րդ նստաշրջան:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄԱՏՄԵՂԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Մոհամադ Բադեր Նշնայթադի

Մահմեդական երկրներում Իսլամական հեղափոխության արձագանքները կարևոր են և՛ գիտական, և՛ քաղաքական տեսանկյուններից: Իսլամական աշխարհը կարելի է բաժանել յոթ տարածաշրջանի, որոնցից յուրաքանչյուրում Իսլամական հեղափոխության ազդեցությունն ու արձագանքները նկատելի են տարբեր ձևերով ու աստիճաններով: Այս ասպարեզում մահմեդական ազգերի, պետությունների և իսլամական շարժումների առումով, առաջացել են որոշակի փոփոխություններ: Այդ ազդեցությունն առավել շոշափելի է իսլամական շարժումների վրա: Միաժամանակ միջյանց հետևից փոփոխություններ տեղի ունեցան իսլամական աշխարհի մտածողության, վարքի, ընդհանուր շափանիշների և առկա կառուցվածքներում, ինչը կարելի է համարել Իսլամական հեղափոխության ազդեցության դրսևորում: Իրաքի, Աֆղանստանի, Թուրքիայի, Պակիստանի, Լիբանանի և Սուդանի մեծ երկրները, իրենց աշխարհագրական դիրքի կամ կրոնաաշակութային ընդհանրությունների ընդունված, կարող էին հենակետ դառնալ Իսլամական հեղափոխությունն ավելի հեռավոր տարածաշրջաններ փոխանցելու համար: Սակայն վերը նշված և այլ իսլամական երկրներ, Իսլամական հեղափոխությունը սանձահարելու նպատակով ստեղծեցին այլընտրանքային տարբերակներ, որոնցից են, օրինակ՝ Աֆղանստանի քաղաքական իսլամի մոդելը, Թուրքիայի «Բարօրություն» կուսակցությունը, Ալժիրի «Իսլամական փրկություն» կուսակցությունը, Սուդանի, Մալազիայի, Ինդոնեզիայի իսլամական կուսակցություններն ու Մաուդյան Արաբիայում առկա քաղաքական իսլամի (վահաբական և սաուդական) մոդելը: Առաջնորդության և կառավարման առումով, բազմակարծության և այլընտրանքային տարբերակների հարցում լավագույն օրինակ կարող է ծառայել Իրանի իսլամական վարչակարգի շրջանակներում առկա տարբեր թևերի նկատմամբ իշխանությունների դրական վերաբերմունքը:

Իսլամական աշխարհում Իրանի իսլամական հեղափոխության առաջնային և կարևորագույն ներգործությունն իսլամի վերածնունդն էր՝ որպես հասարակական երևույթ և ուղղություն: Հաջորդ կարևոր քայլն ազգային, տարածաշրջանային և համաշխարհային ասպարեզներում մահմեդականների կողմից իշխանության պահանջի ձևավորումն է: Վերջին քսանհինգ տարվա ընթացքում Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը, կամովին կամ ակամա, համակարգի տարբեր կառույցների միջոցով տարածվեց երկրի սահմաններից դուրս:

Մեր հողվածի բեման մահմեդական երկրներում Իսլամական հեղափոխության արձագանքն է: Խնդիր, որը գիտական և օրենսդրական հարաբերական առումներով անչափ կարևոր և ուսումնասիրության արժանի է: Այս ամենը պայմանավորված է նրանով, որ Իսլամական հեղափոխությունը տեղի է ունեցել աշխարհի կարևորագույն ռազմավարական տարածաշրջաններից մեկում, որտեղ արևելյան և արևմտյան գերտերություններն ունեին կենսական շահեր, իսկ ուժերի հավասարակշռությունը խիստ փխրուն էր: Ուստի, Միջինարևելյան կարևոր տարածաշրջանում այս երևույթի թափանցումն ու տարածումը հանդիսանում է համաշխարհային քաղաքականության մի մասը և խնդրի հետազոտման գիտական ու տեսական կարևորությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքագիտության հիմնական առանցքն իշխանությունն է, որը հասարակության և պատմության մեջ ունի հետևյալ շղթայական կապը.

1. Ինչպե՞ս է ձեռք բերվում իշխանությունը:
2. Ինչպե՞ս է պահպանվում իշխանությունը:
3. Ինչպե՞ս է վերահսկվում իշխանությունը:
4. Ինչպե՞ս է փոխանցվում իշխանությունը:

Իշխանության շրջանառության կարևորագույն փուլը դրա փոխանցման ձևն է, ինչի առումով մեր հեղափոխությունն իշխանափոխության ամենախճճված ձևերից մեկն է: Մահմեդականների վրա ունեցած Իսլամական հեղափոխության ազդեցության ուսումնասիրումը կարևոր և հատկանշական է այն առումով, որ տեսականորեն իր մեջ պարունակում է իշխանության շղթայական կապի խնդիրը, ինչն իր հերթին թեմային տալիս է կրկնակի գիտական կարևորություն:

1. «Իշխանության ձեռքբերման» Իրանի փորձը կարող էր բոլոր մահմեդականների համար օրինակ ծառայել և առաջացնել շղթայական ռեակցիաներ, իսկ մահմեդականների մեջ՝ իշխանության փախանք:

2. Իսլամական հեղափոխության «արտահանումը» մահմեդական երկրներ և ազդեցությունը, որոնք հիմնականում հանդիսանում են մեծ տերությունների շահերի ոլորտներ, կարող են Իսլամական հեղափոխության պահպանման հարցում առաջացնել ամփոսանգության լուսանքներ, քանզի այն երկրները, որոնք նպատակաուղղված են ճնշելու Իսլամական հեղափոխության օրրանը, ստիպված են իրենց ուժերի մի մասը հատկացնել իլամիստների և նմանատիպ այլ կառույցների պաշտպանության գործին:

3. Իսլամական հեղափոխության ազդեցությունն ու արձագանքները ցույց են տալիս, որ Իրանում ձեռք բերված իշխանությունն ի սկզբանե օժտված է, կամա թե

սկամա, երկրի սահմաններից դուրս տարածվելու և ներագրելու առաքելությամբ:

4. Իրանում իսլամական հեղափոխության չափանը մահմեդական բազմաթիվ երկրների ոգեշնչել է փոխել, բաժանել կամ վերանայել իրենց իշխանական համակարգը:

Ուշագրավ է այն փաստը, որ Իսլամական հեղափոխությունն ու նրանով ձևավորված համակարգը, արդեն երեք տասնամյակ ծառայում են որպես իշխանափոխության լավագույն օրինակ: Ազգային պլանում, 1376 թվականի խորհրդի 2-ից (1997թ. 23 մայիսի) հետո, երկրի քաղաքական իշխանություններն ու ոլորտությունները դարձան առավել թափանցիկ և Իրանի Իսլամական Հանրապետությունում իշխանության ընտրության հարցում ներգրավվեցին ավելի շատ մարդիկ ու խավեր: Տարածաշրջանային առումով նույնպես թվում է, որ ո՛չ տեսականորեն և ո՛չ էլ գործնականում այլևս մախկիմի մնան չի կարևորվում Իսլամական հեղափոխության «արտահանման» գաղափարը: Ներկայումս ԻԻՀ-ն որդեգրել է կոնֆլիկտների կանխման ու համագործակցության ուղին և առավել հակված է իր իշխանության պահպանմանն ու հաստատմանը: Եթե հեղափոխությունը հասարակագիտական տեսանկյունից համարվում է անցողիկ փուլ, ապա պետք է ճշել, որ արդեն երեք տասնամյակից ավելի Իրանի հիմնական մտահոգությունը իշխանության ու քաղաքականության ձևավորումը և այս ժամանակաշրջանին բնորոշ անհրաժեշտություններին ու առանձնահատկություններին ուշադրության հատկացումն է:

Խնդրի կարևորությունը

Ներկայիս Իրանի հասարակության մարտահրավերներն ու հնարավորությունները, որպես Իսլամական հեղափոխության ժառանգորդ, իշխանության վերարտադրությանն ու քաշմանը նպաստող գործոնություններն ու դրանց տարատեսակները, ինչպես նաև ազգային հետ հակադրության և ընդհանրության ձևերն իսլամական աշխարհի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ են, որոնք կորոշեն իսլամի և հեղափոխության հետ մահմեդականների ունենալիք հետագա կապը:

Այս հողվածի հիմնական նպատակը. «Ինչո՞ւ, ինչպե՞ս և որքանո՞վ է ազդել Իսլամական հեղափոխությունը մահմեդական երկրների վրա» հարցերին պատասխանելու չափանի ստեղծումն է:

Գոյություն ունեցող ուսումնասիրությունների, ենթադրությունների և ներկայացված վարկածների արդյունքում կարելի է ասել հետևյալը. «Իրանի իսլամական հեղափոխությունն իր կարգախոսների, գաղափարների, մեթոդների և նպատակների գրավությամբ, ինչպես նաև կրոնական և պատմական ընդհանուր

փորձի պատճառով, տարածաշրջանային և համաշխարհային տեսանկյունից, իսլամական աշխարհում բացարձակորեն ազդող երևույթ էր: Նրա ազդեցիկության դրսևաբախումները, բնականոն կամ նախապես պլանավորված ձևով, և հեղափոխական հիմնասյուների, պետական կազմակերպությունների, գիտամշակութային առնչությունների, տնտեսական ու առևտրային կապերի միջոցով արձագանքներ են ունեցել մահմեդական երկրներում և ներգործել սովյալ պետության, իշխանությունների, ազգերի ու շարժումների վրա՝ համեմատաբար ավելի ուժգին կամ թույլ կերպով:

Ազդեցության ոլորտները

Նման վարկածի քննարկման և հաստատման համար պետք է հաշվի առնել, որ իսլամական երկրներն աշխարհագրական, ազգային և մշակութային ընդհանրությունների առումով բաժանվում են յոթ առանձին տարածաշրջանի և Իսլամական հեղափոխության ազդեցությունը նրանցից յուրաքանչյուրում քննարկվում ու գնահատվում է առանձին: Այդ յոթ շրջաններն են.

- ա) Ասիայի արաբական տարածաշրջանը,
- բ) ԱՖրիկայի արաբական տարածաշրջանը,
- գ) ԱՖրիկան,
- դ) ԱՖղանստանն ու Միջին Ասիան,
- ե) Թուրքիան և Բալկանները,
- զ) Հնդկական թերակղզին,
- է) Ասիայի հարավ-արևմուտքը:

Ազդեցության շեղումները (մակարդակները)

Իսլամական հեղափոխության ազդեցությունը պետք է դիտարկել ստորև նշված տարբեր մակարդակներում և բնագավառներում.

- ա) իշխանություններ,
- բ) ազգեր,
- գ) շարժումներ:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո իսլամական երկրների իշխանությունները, որոնք իրենց ազգային նկարագրի պահպանման համար կրոնական և ժողովրդական սահմանադրության կարիք ունեին, այս մարտահրավերին պատասխանեցին յուրովի: Հենց սրանով էլ պայմանավորված է իսլամական աշխարհի ապագան:

Մահմեդական ազգերը նույնպես հասկացել են, որ իշխանության և սահմանադրության հարցում իրենք մեծ դեր ունեն: Ռուսի, յուրաքանչյուր ազգ աշխա-

տել է օգտվել իր իրավունքներից ու իրավասություններից և արժարձել որոշ խնդիրներ: Իշխանություններն իրենց վրա ճնշումները թուլացնելու նպատակով կատարել են դրական կամ բացասական քայլեր:

Շարժումները և Իսլամական հեղափոխության ազդեցությունները

Մահմեդական երկրներում գոյություն ունեցող շարժումները, որպես կանոն, հանդիսանում են Իսլամական հեղափոխության ազդեցության և ներգործության բատերաբեմ: Հիշյալ շարժումները, գրեթե, իշխանություններից բաղկացած դերակատարներ են, որոնք ազգային և համաշխարհային կատարելագործման ու հակազդման առումով անչափ կարևոր են: Այս խմբավորումների ազդեցությունը հնարավոր է ուսումնասիրել ստորև նշված մակարդակներով.

- ա) ձևավորում,
- բ) զարգացում,
- գ) ուսուցում,
- դ) թուլացում,
- ե) մասնատում,
- զ) ձգտում,
- է) փոխակերպում,
- ը) անհամատեղելիություն:

Լիբանանի «Հեզբոլա» կուսակցությունը ձևավորվեց և ստեղծվեց Իրանի իսլամական հեղափոխության ուղղակի ազդեցության արդյունքում: Իսլամական հեղափոխությունը դարձավ Ալճուանստանի մոջահիդական կուսակցությունների և խմբավորումների հզորացման ու Խորիդային Միության դեմ պայքարի սաստկացման դրդապատճառ:

Եգիպտոսում, հատկապես երիտասարդության շրջանակում, «Ախալան ալ-մուլեմինի» («Մուսուլման եղբայրներ») դիրքերը թուլացան և նրանցից առանձնացան ու ձևավորվեցին առանձին ճյուղավորումներ, որոնք ներշնչված էին իսլամով և կոչված արդարացի պայքարի: Մահմեդական պետությունների քաղաքական և պայքարող որոշ կազմակերպություններ ու շարժումներ, որոնք հանդիսանում էին համայնավարության, ազգայնականության և լիբերալիզմի հետևորդներ, թուլացան ու կորցրին իրենց ազդեցությունը: Այդ շարժումների մի մասը, որոշակի դրդապատճառներով և որոշ չափերով Իսլամական հեղափոխության հանդեպ որդեգրեց հակազդեցության և դեգիմտեզրացիայի ուղին: Նմանատիպ խմբավորումներից են Ալժիրի «Փրկության ճակատ»-ը և «Թալիբան»-ը:

Ազդեցության չափանիշներ և ցուցիչներ

Տեղեկատվության գաղտնիության և քաղաքականացվածության, ինչպես նաև տեսության և քննարկման փոփոխական ու խճճված լինելու պատճառով, մահմեդական երկրներում Իսլամական հեղափոխության ազդեցության ապացուցումն այնքան էլ դյուրին գործ չէ: Ընդհանուր առմամբ, Իսլամական հեղափոխության ազդեցությունը կարելի է ապացուցել երկու ճանապարհով, որոնք են.

1. Բացահայտ և ուղղակի տեղեկություններ ու խոստովանություններ:
2. Վերլուծություններ, պատճառաբանություններ և ոչ ուղղակի ապացույցներ: Բացահայտ տեղեկությունների ու հավաստի բանավոր արդյունքների համաձայն, լիբանանյան «Հեզոլլա» խմբավորումը ձևավորվել և հաստատվել է Իրանի իսլամական հեղափոխության անմիջական և ուղղակի ազդեցության ներքո: Սակայն, այլ երկրներում այս փաստի ապացուցումն անչափ դժվար է: Անգամ որոշակի տեղեկությունների և ապացույցների (նշանների) առկայության դեպքում էլ, որոշակի մտավախությունների պատճառով համարյա հնարավոր չէ դրանք հրապարակել ու հաստատել: Ստորև բերված չափանիշները և ցուցիչները կարող են համոզիչաճառ խնդրո առարկայի ապացուցման գործակից: Դրանք են.

- ա) համընկնումը,
- բ) հաջորդականությունը,
- գ) նմանությունը:

Մահմեդական երկրներում ձևավորված յուրաքանչյուր քաղաքական շարժում կարող է համոզիչաճառ Իրանի իսլամական հեղափոխության նմանության կամ հաջորդականության կենտրոն: Մերողաքանության կամ հետազոտման սկզբունքների համաձայն, կարելի է վստահորեն պնդել այն վարկածը, թե ինչպալ խմբավորման ձևավորումը հանդիսանում է Իրանի իսլամական հեղափոխության հետևանք: Օրինակ՝ նշենք, որ Իրանում իսլամական հեղափոխության հաղթանակին զուգահեռ Իրաքի բնակչությունը, հատկապես շիաները, Իրանի ժողովրդի օրինակով, դրսևորեցին լայնածավալ զգացական հակազդեցություն: Խոր ուսումնասիրության արդյունքում այդ գործողությունները կարող են համարվել Իսլամական հեղափոխության ազդեցության արդյունք և դրա ապացույցը:

Իրականում, Իրաքի սուննի ու շիա մահմեդականները երկրի իշխանություններից, Սադամ Հուսեյնից և բաասականներից դժգոհ էին և խնդիրներ ունեին: Այս առումով Իրանի իսլամական հեղափոխությունը բարենպաստ պայմաններ ստեղծեց իշխանությունից դժգոհ զանգվածների համար և նպաստեց նրանց գործողություններին: Սադամ Հուսեյնը նույնպես հասկացավ այս ամենը և այն համարեց ռազմական ամենամեծ սպառնալիքը: Վերջինս սահմազերծեց մի մեծ պատերազմ՝ այն հայտարարելով որպես Իսլամական հեղափոխության տա-

լամման և «արտահանման» կանխարգելման միջոց:

Իսլամական հեղափոխության հաջորդականության լավագույն ապացույցներից են հենց նույն տարիներին Պակիստանում, Եգիպտոսում, Թունիսում և Մարոկկոյում տեղի ունեցած զանգվածային ընդվզումները: Իսլամական հեղափոխության հաղթանակից տասը տարի հետո մենք բախվում ենք «Ալժիրի փրկության ճակատ»-ի տարածմանը՝ Իսլամական հեղափոխության գործողություններին նման այնպիսի երևույթներով, որոնցից են՝ մարդկանց հավաքները մկլիթներում, իսլամական կղերով և լուծուզներով երթերը, հասարակական վայրերում և փողոցներում հավաքական աղոթքների հրավերները, երիտասարդների ու աղջիկների զգեստափոխումը: Քսան տարի հետո մահմեդականների կողմից հասարակական և քաղաքական զանգվածային ընդվզումներ սկսվեցին նաև Ինդոնեզիայում, որոնց արդյունքում ահաբեկչությանը տասպալվեց երկրի իշխանական համակարգը և իշխանության գլուխ անցավ իսլամիստ Աբդուլախման Վալիդը: Աշխարհի մահմեդականներով բնակեցված բոլոր բնակավայրերի իսլամիստների կոչերի, նպատակների, պայքարի բովանդակության և ձևերի հնարավոր նմանությունն ու հաջորդականությունը հետազոտողին հանգեցնում է այն եզրակացության, որ Իսլամական հեղափոխությունը որոշ երկրներում անմիջապես է տարածել իր ազդեցությունը, իսկ որոշ տարածաշրջաններում՝ տասը կամ քսան տարի հետո:

Ազդեցության բնույթն ու բովանդակությունը

Մահմեդական երկրներում Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունն արտահայտվել է տարբեր ասպեկտներով, որոնցից են.

- ա) գաղափարական,
- բ) վարքագծային,
- գ) հարաբերությունների,
- դ) կառուցվածքային:

Ժողովրդի, պետական այրերի ու մտավորականների քաղաքական- կրոնական գաղափարները գտնվում են Իսլամական հեղափոխության կրոնական, նշակութային և քաղաքական ավիզների ազդեցության ներքո: Այս ազդեցության արդյունքը կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական: Սակայն, քանի որ առկա մերոջներով և տեղեկատվությանը հնարավոր չէ իրականացնել խորբային և ծավալային իիմնավոր ուսումնասիրություն, ուստի մահմեդականներից ստացված բանավոր և գրավոր տեղեկատվությունից ելնելով (գրքեր, բանակցություններ, հոդվածներ և ելույթներ), կարելի է ավելի վստահ հայտարարել, որ մահմեդականների գաղափարները կրել են որոշակի ազդեցություններ:

Անհատական և հասարակական փարքագծերը նույնպես պարունակում են փոփոխության նշաններ: Ավելացել է մզկիթների թիվը, հավաքական նամագներն իրականացվում են բանական և որակական զգալի փոփոխություններով, իսլամական հագուստի նկատմամբ կանայք դարձել են ավելի բարեհաճ, դեռ ավելին՝ կարևորվել են իսլամի ու հարամի (իսլամական բույսատրեյի կամ անբույսատրեյի) գաղափարները, որոշակի քայլեր են կատարվում ակոհոլի օգտագործման արգելման բնագավառում:

Իսլամական հեղափոխության չափաններն ազդել են նաև փոխհարաբերությունների վրա: Ջգալի փոփոխությունների են ենթարկվել անհատական և խմբակային փոխհարաբերությունները՝ նրանցում առաջացել են իսլամական խորհուրդներով և համոզմունքներով պայմանավորված ընդհանուր գաղափարներ ու նախասիրություններ: Այն հայտորեն փոփոխվել են նաև քաղաքական խմբավորումների և կուսակցությունների փոխհարաբերությունները՝ իսլամական գաղափարախոսությանը հակված կուսակցություններն իշխանական դաշտում գտել են իրենց տեղը:

Փոփոխությունների են ենթարկվել նաև իշխանություն-ժողովուրդ հարաբերությունները: Իշխանությունը մշտապես նորանոր ձևեր է գտնում մահմեդական բնակչության օրեցօր սաստկացող պայքարի ճնշմանը դիմակայելու համար՝ երբեմն ճնշելով և սաստելով, երբեմն էլ նահանջելով ու որոշակի արտոնություններ տալով նրանց:

Կառույցներն ու կազմակերպությունները, որպես հասարակական հարաբերությունների կայուն և պաշտոնական ձևեր, առավել երկար ժամանակամիջոցի արդյունք են, որոնք կարողանում են խստորեն պայքարել փոփոխությունների դեմ: Հեղափոխությունների նպատակը հենց այս կառույցների տապալումը և նոր կազմակերպությունների ու կառույցների ստեղծումն է: Ուստի, պետությունների և իշխանությունների կողմից Իսլամական հեղափոխության ազդեցությունը հանդուրժելու կարմիր գիծը հաստատվում է այն ժամանակ, երբ ազդեցության տակ են հայտնվում պետական կառույցներն ու կազմակերպությունները: Քաղաքագիտության տեսանկյունից իշխանությունը հանդիսանում է քաղաքական ամենաբարձրագույն կառույցը: Ուրեմն «Իսլամական հանրապետությունը», որը հանդիսանում է Իսլամական հեղափոխության ծնունդ, օրինակաբանության և իշխանական առումով հարցականի տակ է դրել մահմեդական մյուս երկրների գոյությունը՝ իշխանությունների փոփոխությունների նպատակով նրանց ճնշման ենթարկելով:

Սկզբունքորեն Իրանի իսլամական հեղափոխությունը տապալել է շահական-բազավորական մի հզոր համակարգ, ինչի արդյունքում յուրաքանչյուր մնացածն ապահովելու իրեն համարում է Իսլամական հեղափոխության ակիբների

տարածման և արտահանման թիրախ: Ի վերջո, «հանրապետականության» և «իսլամականության» վրա հիմնված յուրաքանչյուր իշխանական մոդել կարող էր ազդել մահմեդական երկրներում առկա իշխանական համակարգերի վրա, քանզի նրանցում հիշյալ երկու գործոններից մեկը բացակայում էր:

Իհարկե, անցյալ երեք տասնամյակի ընթացքում իսլամական երկրներում կառուցվածքային հիմնարար փոփոխություններ չեն նկատվել և այս առումով կարելի է փորձնական համարել այն վարկածը, թե Իսլամական հեղափոխությունը մահմեդական երկրներում հեղափոխական ազդեցություն չի ունեցել: Սակայն մահմեդական բազմաթիվ երկրներում կառուցվածքային հիմնարար փոփոխությունների բացակայության դեպքում էլ մենք տեսնում ենք հասարակական և քաղաքական լուրջ փոփոխություններ, որոնցից են՝ խորհրդարաններում իսլամիստական ներկայացուցիչների զգալի թվի ներկայությունը, Հաջ ուխտագնացությունը կազմակերպող կազմակերպությունների հանդեպ ուշադրությունը և դրանց բարեկարգումը, մահմեդական որոշ քաղաքական կազմակերպություններին ու հարաբերություններին իսլամականությունը և դրանց պաշտոնական ընդունումն իշխանությունների կողմից, ինչպիսին է, օրինակ, Թուրքիայի «Բարօրություն» կուսակցությունը: Կառուցվածքային լուրջ փոփոխություններից է Սաուդյան Արաբիայի բազավորի կողմից խորհրդատու հանձնաժողովի ստեղծումը, որը մնան է խորհրդարանի: Գուցե այս երևույթը բավական ընդարձակ և խորքային չէ, սակայն անշուշտ կարևոր է այն առումով, որ տեղի է ունեցել ամենահարուստ և ամենաավանդապաշտ արաբական մահմեդական երկրում:

Իսլամական հեղափոխության փարածման կամուրջները

Որոշ մահմեդական երկրներ կարող են հանդիսանալ Իսլամական հեղափոխության տարածման լավագույն կամուրջներն ու միջոցները: Նմանատիպ երկրներից են Իրաքը, Աֆղանստանը, Լիբանանը և Մուղանը:

Հիշյալ երկրները, տարբեր պատճառներով, կարող են ընկնել ազդեցության տակ և որոշակի առանձնահատուկ պատճառով հանդիսանալ ազդեցության փոխանցման միջոց:

Իրաքը, որպես կարևոր արաբական երկիր, իր շիա բնակչության մեծամասնությամբ, Իմամների դամբարաններով և ճավաթային հնարավորություններով, հանդիսանում է արաբական աշխարհում իսլամական հեղափոխության տարածումն ապահովող լավագույն առանցքը: Իրանի իսլամական հեղափոխության զարգացումներն Իրաքում ենթարկվեցին որոշակի փոփոխության և արաբական աշխարհում ներկայացան որպես իրան-արաբական, ինչի հետևանքով այն կարող էր ավելի լայն տարածում գտնել: Անցած դարում ԱՄՆ-ի երկարատև տատա-

նումները Սադամ Հուսեյնի տապալման առումով, Իրաքի ներկայիս իրավիճակը ԱՄՆ-ի ներխուժումից հետո և Իրանի հանդեպ ցուցաբերած ոչ բարեկամական վերաբերմունքը հանդիսանում են դրա լավագույն ասպարեզները:

Իսկ Իսլամական հեղափոխության առաջին տասը տարիներին Աֆղանստանի գրավյալ տարածքում պատերազմում էին աֆսական պետությունների ու ԽՍՀՄ մահմեդական երկրների զինվորները, որոնք ինչ-որ ձևով կարողանում էին կապ հաստատել մոջահեդների և մահմեդական ժողովրդի հետ: Հեղափոխության երկրորդ տասնամյակում, երբ ԽՍՀՄ-ն արդեն փլուզվել էր, Հարավային Կովկասում և Սյօջին Ասիայում ստեղծվել էին անկախ պետություններ, որոնք մերժում էին ռուսաստանությունն ու կոմունիզմը, առավել կարևորելով իրենց իսլամական արժանատիներն ու ինքնությունը: Իսլամական հեղափոխությանը հասնընթաց և դրանից հետո Աֆղանստանի գրավումը, մի կողմից վկայում էր այն մասին, որ նախկին խորհրդային երկրներն Իսլամական հեղափոխությունը համարում էին մեծ սպառնալիք, իսկ մյուս կողմից՝ աֆղան ժողովրդի համար Իրանի հեղափոխությունը հանդիսանում էր իսլամական գաղափարախոսության, ջիհադի և մահմեդականների անխոնջ պայքարի ոգեշնչման լավագույն արդյուրը: Պետք է ուշադրություն դարձնել, որ գրավված լինելու տարիներին «ջիհադ» և «իսլամական դիմակայում» կոչերի ներքո աշխարհի տարբեր երկրներից այստեղ եկան բազմաթիվ կամավորներ: Նրանք գավառներին դուրս մղելուց հետո, ներկայացրին իսլամի հանդեպ ունեցած իրենց տարբեր հայացքները, որոնք բազմաթիվ բախումների պատճառ հանդիսացան: Քիչ չեն այն մարդիկ, ովքեր գնացին նաև Նվրուպա և ԱՄՆ՝ ազդելով այնտեղի մահմեդական համայնքների հայացքների վրա և խնդիրներ առաջացրին այդ մայրցամաքների ազգային ու միջազգային փոխհարաբերություններում:

Այսօր այս խմբավորումների գանկում համաշխարհային մամուլի առաջին էջերին «Ալ-դաեդ» խմբավորման անունն է: Քսանմեկերորդ դարը և երրորդ հազարամյակն սկսվեցին սեպտեմբերի 11-ի զարմամալի և սարսափելի դեպքերով, որոնք վերագրվում են այս խմբավորմանը: Կազմավորվել է հակասական վերաբերմունք, քանզի այսօր աշխարհում իսլամ-արժատականությունը մի կողմից ներկայացվում է որպես աշխարհակարգի հիմնական շարժումներից, իսկ մյուս կողմից՝ հիշյալ կազմակերպությունը հանդիսանում է անարեկչության ու դաժանության խորհրդանիշ: Այս խնդիրն այնքան կարևոր է, որ ԱՄՆ-ը ինքնապաշտպանության և անարեկչության դեմ պայքարի անվան տակ սկսեց ավելի ակտիվ տեմպերով գրավել Աֆղանստանը, ինչի արդյունքում, այսօր ԱՄՆ-ը մի քանի կողմներից գրավել է Իսլամական հեղափոխության ելակետերը և հանդիսանում է Իրանի հարևանը:

Թուրքիան, որպես տարանցիկ կամուրջ, կարող է հանդիսանալ քաղաքական

խղամի և իսլամականության՝ դեպի Կովկաս և Բալկաններ «արտահանման» լավագույն միջոցը: Մի կողմից սա հարևանության, իսկ մյուս կողմից՝ կրոնական, լեզվական և ազգային ընդհանրությունների արդյունք է: 1980 թվականի ամռանը, Սուրբիայում տեղի ունեցավ զինվորական հեղաշրջում: Իսլամական հեղափոխության հաղթանակի հետ ունեցած այս իրադարձության նմանությունն ու տարբերությունն առաջ են քաշում այն վարկածը, որ զինվորականների իշխանության գալը կարող է հանդիսանալ Իսլամական հեղափոխության ռազմավարության և նրա կարևորագույն կամուրջներից մեկի խաթարման պատճառ: Հետագա տարիներին Թուրքիայի քաղաքական հիմնավոր խնդիրները նույնպես կարելի է դիտարկել այս տեսանկյունից: Օրինակ, Արքաբանի և իսլամիստական «Բարոքություն» կուսակցության մուտքը քաղաքական ասպարեզ, կարող է համարվել Իսլամական հեղափոխության արձագանքների արդյունքում առաջացած ներքին ճնշումները թուլացնող պատասխան: Պակիստանը համարվում է դեպի Հնդկական թերակղզի և Հարավ-արևելյան Ասիա մուտք գործելու դարպաս: Հյուսիս-արևմտյան համայնքներից մեկը ձևավորվել է հենց այս տարածաշրջանում, որտեղ իսլամը մուտք է գործել իրանցի առևտրականների և մտածողների միջոցով: Տարածաշրջանի բնակչությունը իրանցիներին համարում է իսլամի հետ ծանոթության գործոնը: Պարսից լեզուն և գրականությունը հիշյալ տարածաշրջանում խոր արձաններ ունեն, ինչը հսկաստի է իրանցիների հանդեպ տաժամ արարների զգացմունքներին:

Իսլամական հեղափոխության շարունակության և զուգընթացության առումով հատկանշական էին Պակիստանի բնակչության կողմից ցուցաբերած ժողովրդական հուզումներն ու հասարակական փոփոխությունները: Ընդհանուր առմամբ, շիաները ներկայացրին ավելի կանոնակարգված և կրոնական պահանջներ, սակայն այս երկրում նույնպես, զինվորականները Ձիա-ալ-Հադի առաջնորդությամբ և Իսլամական հեղափոխությանը համարյա զուգընթաց հեղաշրջում կազմակերպեցին և, Ալի Բիտտոյին մահապատժի ենթարկելով, իշխանության եկան: Ձիա-ալ-Հադը դարձավ ավանդության և շարիաթի վերակենդանացման նախաձեռնողը: Այս գործողությունը կարող էր պայմանավորվել Պակիստանի անկախության պատմական անհրաժեշտությամբ, ինչպես նաև Ձիա-ալ-Հադի անձնական ձգտումներով ու նախասիրություններով: Միաժամանակ, ավանդության և շարիաթի վերականգնումը կարող էր հանդիսանալ նաև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի արդյունքում ձևավորված իսլամականության ալիքների հզորացմանն ի պատասխան տակտիկական քայլ: Իսլամական հեղափոխության տարածման և խորացման լրջագույն փտանգով պայմանավորված և չափազանցությունների արդյունքում իրականացվեցին որոշակի

գործողություններ, որպեսզի բանդեն այս կամուրջը: Կազմավորվեց և ընդլայնվեց «Մարզաբեմի գործը» կազմակերպությունը, իրանցիների դեմ իրականացվեցին ահաբեկչություններ, որոնք կոչված էին Իսլամական հեղափոխության «արտահանումը» կանխելուն և խոչընդոտեցին դեպի Պակիստան կամուրջ հանդիսանալուն:

Մյուս կողմից, արաբական աշխարհում Իսլամական հեղափոխության ներկայության լավագույն կամուրջ կարող էր հանդիսանալ Լիբանանը, որը նաև պետք է ծառայեր որպես Պաղեստինի և արաբախրայեական խնդրի վրա ազդելու լավագույն հենակետ: 1963 թվականի հունիսի 5-ից (1342 թվականի խորդադի 15-ից) հետո առաջ բաշվեցին Պաղեստինի և Երուսաղեմի ազատագրման, ինչպես նաև Իսրայելի ոչնչացման խնդիրները, որոնք զուգահեռ էին Իսլամական հեղափոխության շարժման ձևավորմանը: Հիշյալ կոչերն ու հայտարարություններն ավելի ընդգծվեցին 1977-1978 թվականներին՝ հեղափոխական ցույցերի և հանրահավաքների ժամանակ: Հեղափոխության հաղթանակից և Իրանի Իսլամական Հանրապետության հաստատումից հետո այս կոչերն ավելի գործնական բնույթ ստացան և կազմեցին երկրի արտաքին քաղաքականության մի մասը: Հաշվի առնելով բնակչության մեծամասնության շիա լինելը Իսլամական հեղափոխության տարածման կամուրջ ծառայելու առումով Լիբանանն ավելի կարևոր և գերադասելի է և կարող է հանդիսանալ Երուսաղեմի ու Պաղեստինի հետ կապի հաստատման միջոց: Այս կամուրջը շարունակում է գոյություն ունենալ և դիմադրության «Համաս» և «Իսլամական Ջիհադ» կազմակերպությունների ձևավորմամբ, ինչպես նաև Յասեր Արաֆաթի կողմից կազմավորված ինքնավարության միջոցով՝ ստանալով տարածաշրջանային և միջազգային կարևորություն: ԱՄՆ-ն Իրանը համարում է Իսլամական հեղափոխության ելակետ և նրան նետում չորս էինմական մարտահրավեր, որոնք են.

1. Մարդու իրավունքների ռսման հարցը:
2. Չանգվածային ոչնչացման զենքի արտադրությունը:
3. Միջինասիական խաղաղ գործընթացին ընդդիմացումը:
4. Ահաբեկչության աստարումը:

Երրորդ և չորրորդ կետերն անմիջականորեն վերաբերում են Լիբանանին և Պաղեստինին: Այն, ինչն ԱՄՆ-ն անվանում է ահաբեկչության աստարում, Իրանը կոչում է Լիբանանի «Հեզբոլլա» և պաղեստինյան դիմադրության աստարում:

Իսլամական հեղափոխության երկրորդ տասնամյակում Սուդանում իշխանության գլուխ եկավ Օմար Բաշիրը, որն Իսլամի օրինակով ցուցաբերեց իսլամամետ հակումներ: Ըստ տեղեկատվական տվյալների, Սուդանի հասարակությունը մուսուլման կողմ է իսլամիստական գաղափարներին և Իսլամական հեղափոխությանը: Հենց այս փաստն էլ հանդիսանում է ԱՄՆ-ի նման պետությունների մա-

տի փաթաթան, որոնք դեռևս պայքարում են Իսլամական հեղափոխության «արտահանման» և տարածման վտանգի դեմ: Նրանք վախենում են նաև իրենց շահերը կորցնելուց և ավելի են ասատկացնում հակաարդարությունն ու ճնշումներն Իրանի և Սուդանի հանդեպ: Վերջին տարիներին Սուդանի իսլամամետ իշխող կուսակցությունը մասնատվել է, իսկ երկիրը հայտնվել իրականությունների ու անհրաժեշտությունների, ինչպես նաև ներքին ու արտաքին ճնշումների ներքո: Իսկ արտաքին ճնշումների և շրջափակումների արդյունքում իսլամական արմատականության և իդեալիստականության համար ասպարեզն ավելի է նեղանում: Սակայն երկրի մշակութային, աշխարհագրական և պատմական իրադրությունն այնպիսին է, որ այն հանդիսանում է աֆրիկյան տարածաշրջանում իսլամիստական գաղափարախոսության տարածման կարևոր կամուրջ:

Իսլամական հեղափոխության և իսլամական հանրապետության մոդելները

Իսլամական հեղափոխության հիմնական նպատակներից մեկը քաղաքական իսլամի տարածումն էր: Իսլամ, որը պետք է ամբողջովին կամ մասնակի գրավեր քաղաքական իշխանությունը: Այս խնդիրը մահմեդական երկրներին և նրանց իշխանություններին կանգնեցրել է մեծ մարտահրավերների առաջ՝ մահմեդականների համար պայքարելու և իրենց կազմավորումներն ստեղծելու հնարավորություն տալով: Այս գործընթացի արդյունքում երևան եկան քաղաքական իսլամի բազմաթիվ մոդելներ, որոնք երբեմն սպառնալիք են հանդիսանում Իսլամական հեղափոխության և նրա արդյունքում ձևավորված իշխանության համար: Դիսանցից են.

1. Աֆղանստանի քաղաքական իսլամի մոդելը (Թալիբան):
2. Թուրքիայի քաղաքական իսլամի մոդելը («Բարոսություն» կուսակցություն):
3. Ալժիրի քաղաքական իսլամի մոդելը («Իսլամական փրկության ճակատ»):
4. Սուդանի քաղաքական իսլամի մոդելը (Օմար ալ Բաշիր և Հասան ալ Թաուֆի):
5. Մալազիայի քաղաքական իսլամի մոդելը (Մահաբիդ Մոհամմադ և Անվար Էբրահիմ):
6. Ինդոնեզիայի քաղաքական իսլամի մոդելը (Արդուսանան «Լահիդ»):
7. Արաբիայի քաղաքական իսլամի մոդելը (Սաուդյան դինաստիա և վահաբիստականներ):

Հիշյալ մոդելներից մի քանիսը դեռևս շարժում կամ կուսակցություն են, իսկ մյուսները՝ արդեն իսկ հաստատված իշխանություն: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր հնարավորությունները և պահանջները:

Իսլամական հեղափոխությունը միասնության ու վերածննդի կողմնակից է և

մենք սպասում էինք, որ այն պետք է հանդիսանար իսլամական աշխարհում արդարացի իսլամական իշխանության ձևավորման աղբյուր և խորհրդանիշ: Սակայն հիշյալ խմբավորումների միջև որոշակի մրցակցության և իշխանության ձեռքբերման ձգտումն առաջացրին որոշ տարածայնություններ, որոնք ոչ մի կապ չունեն բուն իսլամական սկզբունքների և Իսլամական հեղափոխության գաղափարախոսության հետ: ԻԻՀ-ն ամեն կերպ ձգտում է մշակել իսլամական իշխանության մի համընդհանուր համակարգ կամ չափան, որը կհաշտեցնի ու կմիավորի բաղաբաղական իսլամի հիշյալ մոդելները և համաձայնության առանցք կհանդիսանա նրանց միջև:

Իսլամական հեղափոխության ազդեցությունն ու արդյունքները

Իսլամական աշխարհում Իսլամական հեղափոխության ունեցած ազդեցությունն անհատական և հասարակական, մտավոր ու գործնական, տնտեսական, մշակութային և քաղաքական բնագավառներում քիչ բն շատ, ուղիակի կամ անուղիակի, անմիջապես կամ ուշացումով, բայց անխուսափելի էր: Տարբեր երկրներում ազդեցության տարբերությունը պայմանավորված է տվյալ տարածաշրջանին առանձնահատուկ պայմաններով, ինչպես նաև յուրաքանչյուր տարածաշրջանի հանդեպ իրանցիների ունեցած կապվածության աստիճանով և տվյալ երկրին հատկացված ուշադրությամբ:

Ստորև ներկայացնում ենք Իրանում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս, մյուս իսլամական երկրներում Իսլամական հեղափոխության ունեցած կարևորագույն արդյունքները.

1. Իսլամի վերածնունդ, որպես հասարակական ընդհանուր ուսմունք, որի կիրառումը հնարավոր և օգտակար է:
2. Մահմեդականների գիտակցության արթնացում, ինքնության և իշխանության ձգտում ազգային և միջազգային աստիճաններում:
3. Քաղաքական իսլամի ստեղծում և ամրապնդում: Իսլամ, որը ձգտում է ամբողջական կամ մասնակի իշխանության:
4. Իսլամիստների ավելի կազմակերպված լինելը: Ոչ իսլամական կազմակերպությունների և կուսակցությունների կողմից իսլամիստներին ուշադրության հատկացում ու վերջիններիս ներգրավում ընտրություններին՝ ձայներ շահելու նպատակով:
5. Կրոնի և ժողովրդավարության օրինականացման ու տարածման նկատմամբ իշխանությունների պահանջարկի մեծացում:
6. Իսլամական իշխանության շրեղ ներկայացում և մահմեդականների գիտակցության մեջ իրանական իսլամիզմի սերմանում ու ընդգծում:

7. Իսլամական աշխարհում կոմունիստական և լիբերալիստական խնդիրների ընդգծում:
8. Տարածաշրջանային և միջտարածաշրջանային ուժերի միջև ստեղծված հավասարակշռության խախտումների և միությունների ու կոալիցիաների վերափոխում:
9. Երուսաղեմի ու Պաղեստինի ազատագրման ցանկության ընդգծում, ինչպես նաև միասնականության կամ լուծարման համար արաբական պետությունների շահագրգռում:
10. Ջանքերի գործադրում Իսրայելի և սիոնիզմի վտանգը երկրորդ պլան մղելու և դրա փոխարեն առաջին պլան մղելու Իրանի իսլամական հեղափոխության սպառնալիքը:
11. Մահմեդականների մտահորիզոնում, ինչպես նաև իսլամական աշխարհում և տարածաշրջանում Իրանի և շիիզմի կարևորում:
12. Քաղաքական, մտավոր և միստիկական առումներով Իսլամական հեղափոխության առաջնորդություն, մասնավորապես, Իմամ Խոմենյու չափան հանդիսանալը:
13. Մզկիթների բլի ավելացում և նամազների ու հոգևոր այլ արարողությունների որակական և քանակական աճ:
14. Իսլամական օրենքների քարոզում, պարտադիր օրենքների կատարում, կանանց կողմից իսլամական հագուստ կրելու հակում, կանանց հիվանդանոցների և այլ կենցաղային օբյեկտների առանձնացում, ակոխոյի օգտագործման ու անբարոյական ֆիլմերի դեմ պայքար և այլն:
15. Մահմեդական կանանց իրական չափանի ներկայացում, որոնք պահպանելով կրոնական օրենքները, ակտիվ մասնակցություն են ցուցաբերում երկրի հասարակական և քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում:
16. Իսլամական հեղափոխության խորիցամիշի օգտագործումն ու տարածումը, ինչպես օրինակ, Իսլամական Հանրապետության զինանշանը, Երուսաղեմի հուշարանը, Իսլամական հեղափոխության կարգախոսները և Դուրանի ընթերցումը տարբեր ճևերով:
17. Իսլամական գրքերի և պարբերականների տարաքանակի, ինչպես նաև իսլամական դաստիարակության կենտրոնների զգալի աճ:
18. Իսլամական աշխարհում և կառավարման համակարգերում նավթի ու տնտեսության հետ իսլամի հնարավորինս սերտաճում:
19. Իսլամական հեղափոխությունը ձգտում է վերացնել կոմունիզմը, կապիտալիզմը, սիոնիզմը, ըոնապետությունը, համաշխարհային գաղութատիրությունը, միաժամանակ ցանկանալով վերականգնել իսլամը, հաստատել իսլամական իշխանություն, մահմեդականների միասնություն, ազատություն և անկախություն:

20. Իսլամական հեղափոխության «արտահանումը» երբեմն ունեցել է ռազմավարական, երբեմն էլ տակտիկական նշանակություն: Իրականում Իսլամական հեղափոխությունն ու նրանով ձևավորված իշխանությունն անցել են ստորև նշված կարևորագույն փուլերով.

- ա) Առաջին տասնամյակում՝ հեղափոխության «արտահանման» կամ հարձակողական ռազմավարություն.
- բ) Երկրորդ տասնամյակում՝ կառուցողական կամ պաշտպանական ռազմավարություն.
- գ) Երրորդ տասնամյակում՝ քաղաքակրթությունների երկխոսության կամ փոխհանդուրժողականության ռազմավարություն:

Ազդեցության միջոցառումները և կառույցները

Երկրի սահմաններից դուրս Իսլամական հեղափոխության ազդեցությունը կարող է լինել երկու ձևով.

- ա) բնական,
- բ) կամային:

Որոշ շրջաններում, որպես էներգիայի հզոր աղբյուր, Իսլամական հեղափոխությունը բնական ձևով դուրս է եկել երկրի սահմաններից և, բողոքելով որոշակի ազդեցություն, արժանացել ուշադրության: Սակայն, մահմեդական երկրներում ունեցած Իսլամական հեղափոխության ազդեցությունը և տարածումը պայմանավորվում են հիմնականում ստորև բերված կառույցների ակտիվ գործունեության ու միջոցառումների շնորհիվ:

Ա) Պետական հեղափոխական կառույցներ

- իսլամական հեղափոխության պահապան կորպուս,
- արտաքին գործերի նախարարություն.
- տեղեկատվության նախարարություն (պաղտմի ծառայություններ).
- առևտրի նախարարություն.
- կառուցողական ցիխադի նախարարություն.
- իսլամական մշակույթի և առաջնորդման նախարարություն.
- իսլամական քարոզչության կազմակերպություն.
- իսլամական փոխհարաբերությունների և մշակույթի կազմակերպություն.
- հոգևոր ճեմարան.
- ռադիո և հեռուստատեսություն.
- արտասահմանում սովորող ուսանողների իսլամական միություններ.
- քաղաքակրթությունների երկխոսության ազգային կենտրոն.

- տեղեկատվության համաշխարհային ասամբլեա.
- իսլամական ուղղությունների ասամբլեա:

Բ) Միջոցներ

1. Երուսաղեմի մեծարմանը նվիրված միջազգային համաժողովներ:
2. Հեղափոխության սկզբնական շրջանի և Իրան-իրաքյան պատերազմի տարիներին ազատագրական շարժումների սեմինարներ:
3. Հեղափոխության առաջին տարիներին Իրանում և այլ երկրներում Հաջ ուլ-տազմագության միջազգային սեմինարների կազմակերպում:
4. Հաջ ուլ-տազմագության արարողություն:
5. Միասնության շարաբի անցկացում:
6. Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի մեծարմանը նվիրված «Այգաբացի տասնօրյակ» միջոցառումների անցկացում և արտասահմանյան պատվիրակությունների ընդունում:
7. Իսլամական գաղափարախոսության համաժողովների անցկացում:
8. ՋԼՄ-ների օգտագործում:
9. Իմամ Խոմեյնու, Շարիաբիի, Մոբահաբիի, Ալամն Թարաբարայիի գրքերի քարգմանում, ինչպես նաև գրքերի և լուսանկարների ցուցահանդեսների կազմակերպում:
10. Իսլամական երկրների ուսանողների համար անվճար կրթության ապահովում Ղոմի հոգևոր ճեմարանում և նրանց վերադարձը դեպի իրենց երկիր՝ Իրանի և հեղափոխության տեսակետները տարածելու և քարոզելու նպատակով:
11. Իրանցի քարոզիչների կարճաժամկետ և երկարաժամկետ գործուղում իսլամական բնակավայրեր:
12. Արտասահմանյան երկրներում դեսպանատների, մշակույթի կենտրոնների և առևտրականների միությունների ստեղծում:
13. Իմամ Խոմեյնու մահվան տաղելիցի մեծարմանը նվիրված միջոցառումների անցկացում և օտարերկրյա պատվիրակությունների ընդունում:
14. Պարբերական հանդիպումներ արտերկրում իրանցի ուսանողների իսլամական խորհուրդների հետ, հատկապես Հնդկական բերակղզում:
15. Սալման Ռուշդիի վերաբերյալ Իմամ Խոմեյնու (Ֆաթվայի կրոնական հրովարտակի) տարածում:
16. Երուսաղեմի օրվան նվիրված երբեր:

Անփոփոխ

Այս հոդվածում մենք քննարկեցինք մահմեդական երկրներում ունեցած Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունն ու արձագանքները, ինչի արդյունքում առաջացավ մի չափան և պարզաբանվեց հետազոտության գործնական ու քննադիկ կարևորությունը: Իրանի իսլամական հեղափոխության ազդեցության ապացուցման համար մենք առաջնորդվեցինք իսլամական աշխարհի առաջնորդների և մտավորականների ուղղակի վկայություններով, ինչպես նաև ոչ մահմեդական ազգերի ներկայացուցիչների փաստարկներով, վերլուծություններով և մեկնաբանություններով: Ինչպես բացահայտվեց, իսլամական աշխարհում ազդեցություն գործադրելու համար Իսլամական հեղափոխությունն ունեցել է հիմնավոր կամուրջներ, որոնցից են Իրաքը, Աֆղանստանը, Պակիստանը, Թուրքիան, Մուղանը և Լիբանանը:

Այստեղանդերձ, անցած երեք տասնամյակի ընթացքում, Իրանի իսլամական հեղափոխությունը և իշխանական համակարգի մոդելը վաստակել են բազմաթիվ մրցակիցներ, որոնցից են Աֆղանստանը, Պակիստանը, Ինդոնեզիան, Մալազիան, Թուրքիան, Մուղանը, Ալժիրը և Արաբիան: Իսլամական հեղափոխության ազդեցությունը կարելի է դիտարկել մի քանի տեսանկյուններից, ինչպես, օրինակ, տեղական, տարածաշրջանային և համաշխարհային քաղաքական համատեքստերն են: Ազդեցությունը, որպես այդպիսին, տարբեր երկրներում արտահայտվել է յուրովի՝ հանդիսանալով կամա կամ ակամա երևույթ: Թեմայի ամբողջական եզրափակման համար խնդիրները կներկայացնենք երկու հիմնական մակարդակներում.

ա) հետազոտական և քարոզչական,

բ) վերլուծական և որոշման:

Հիշյալ երկու մակարդակներն էլ կարևոր են ազդեցության հետազոտման, գնահատման ու դրա հետագա արդյունքների կանխատեսման առումով և մենք մեր հոդվածում աշխատեցինք հակիրճ ներկայացնել ազդեցության ոլորտները, դրապատճառները, դրանց հնարավոր արտացոլումներն ու չկանխատեսված երևույթները՝ ևս մեկ անգամ ընդգծելով Իրանի իսլամական հեղափոխության կարևորությունը և դրանից ձևավորված իշխանության ազդեցությունն ու դերը իսլամական աշխարհում:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԵՂՎՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԶԱԳԱՆՔՆԵՐՆ ԱՆԽԱՐԿՈՒՄ

Դոկտոր Մոհամադ Ալի Բամիրի

Իսլամական հեղափոխության հաղթանակը՝ որպես 20-րդ դարի ամենակարևոր իրադարձություններից մեկը, Իրանում, տարածաշրջանում ու աշխարհում արմատական և հիմնարար փոփոխությունների պատճառ է հանդիսացել: Այդ փոփոխություններն ու արձագանքները տեղի են ունեցել տարբեր ոլորտներում, ինչպես օրինակ՝ աշխարհակարգի և տարածաշրջանային կարգի, տարածաշրջանի իսլամական երկրների, միջազգային հանրության ու մտավորականության վրա: Իսլամական հեղափոխությունը մեծ ազդեցություն է բոլել ինչպես Արևմուտքի ազգային փոքրամասնությունների ու ոչ մուսուլման ժողովուրդների վրա, այնպես էլ իսլամական ու ոչ իսլամական շարժումների, միջազգային կազմակերպությունների, հզոր պետությունների արտաքին քաղաքականությունների վրա:

Մույն հոդվածում փորձել ենք հնարավորինս ներկայացնել նշված բարեփոխումներն ու զարգացումները:

Նախաբան

Յուրաբանչյուր քաղաքական ու հասարակական երևույթ, որ ծագում է որևէ երկրում, հիմնված է լինում տարբեր մակարդակներում ձևավորված ներքին ու արտաքին համակարգային կապերի վրա և դրա ազդեցությունը զգացվում է ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Իսլամական հեղափոխությունն էլ, որպես 20-րդ դարի կարևոր երևույթներից մեկը, իր ամփոստափելի ազդեցությունն է ունեցել տարածաշրջանում, որը փոխանցվել է նաև աշխարհի այլ երկրներ: Չնայած այդ հեղափոխության բոլոր ազդեցությունները պահանջում են համակողմանի ուսումնասիրություններ ու քննարկումներ, սակայն այս հոդվածի շրջանակներում փորձում ենք ներկայացնել և վերլուծել նրա միջազգային ազդեցությունների խնդիրները: Հոդվածի առանցքն են կազմում հետևյալ հարցերը.

1. Ինչպիսի՞ն է եղել Իսլամական հեղափոխության համաշխարհային ազդեցությունը:
2. Ո՞րն է հանդիսացել հեղափոխությունից կրած ազդեցությունների ապացույցը:
3. Ինչպիսի՞ հեռանկար և ապագա ունեն այդ արձագանքները:

Վերը նշած հարցերին պատասխանելու համար, օգտվելով նկարագրական-վերլուծական մեթոդից, Իսլամական հեղափոխության թողած ազդեցությունները բաժանել ենք հետևյալ խմբերի.

- ա. իսլամական հեղափոխության ազդեցությունն իսլամական երկրների ու մահմեդական իշխանությունների վրա,
- բ. իսլամական հեղափոխության ազդեցությունն ազատագրական շարժումների և ոչ իսլամական մտավորականների վրա,
- գ. իսլամական հեղափոխության արձագանքները Եվրոպայում և Ամերիկայում,
- դ. իսլամական հեղափոխության ազդեցությունն աշխարհի հզոր պետությունների արտաքին քաղաքականության և համաշխարհային բեռնացման վրա,
- ե. իսլամական հեղափոխության ազդեցությունը ՉԼՄ-ների (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, կինո և այլն) վրա:

Իսլամական հեղափոխության արձագանքները մահմեդական երկրներում

Եթե ցանկանանք վերլուծել Իսլամական հեղափոխության արձագանքն իսլամական երկրներում՝ Ինդոնեզիայից մինչև արևմտյան Աֆրիկայի մուսուլմանական երկրներ, դա շատ ընդարձակ անդրադարձ կլինի, ուստի համառոտ կերպով այն ներկայացնում ենք հետևյալ երկու խմբով:

1.1. Իսլամական հեղափոխության ազդեցությունը մուսուլման ժողովուրդների վրա

Իսլամական հեղափոխության նշանակալից ազդեցություն կարելի է համարել մահմեդականների մշակութային, քաղաքական ու հասարակական ոլորտներում տեղի ունեցած փոփոխությունները: Ինչպես հայտնի է, մինչև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը մահմեդականների մեծամասնությունը տարբեր երկրներում քաղաքական, մշակութային և հասարակական բազմաթիվ հարցերի նկատմամբ լուր կամ կրավորական վերաբերմունք էին ցուցաբերում, մույնիսկ անհարմար էին զգում ի կատար ածել իսլամական դոկտրինան ու ծեսեր անցկացնելը: Քաղաքականությունից կրոնի մեկուսացման գաղափարախոսության լայնածավալ տարածումն այդ երկրներում բնակվող մահմեդականներին մույնպես նյասրափության հասցնելով հասել էր կրավորական վիճակի: Մահմեդականների մեծամասնությունը, մտավորականներն ու հոգևորականները գործնականում հարմարվել էին այն մտքին, որ կրոնը չպետք է միջամտի քաղաքականությանը, իսկ քաղաքական, տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծումը չպետք է փնտրել կրոնի մեջ: Իսլամական հեղափոխության հաղթանակով այս

գաղափարը հարցականի տակ դրվեց, իսկ բնապահպանական, քաղաքական ու սոցիալական հարցերին վերաբերող բարեփոխումներին իսլամական գաղափարներով մուսուլմանների միջամտելը համարվեց անհրաժեշտություն: Բոլոր երկրների մահմեդականները, անկախ նրանց մեծամասնություն կամ փոքրամասնություն լինելուց, սկսեցին ակտիվանալ: Այն շարժումները, որոնք տեղի են ունեցել իսլամական բազմաթիվ երկրներում (Ինդոնեզիա, Մալազիա, բալկանյան երկրներ, Աֆղանստան, Հնդկաստան, արաբական և հյուսիսային Աֆրիկայի երկրներ) վկայում են այն մասին, որ վերջին երկու տասնամյակում մահմեդականները ցանկանում են իրենց մասնակցությունը բերել քաղաքականության մեջ, լինի դա բիրտ ուժի գործադրմամբ, թե խաղաղ ճանապարհով՝ խորիքաբանական-կուսակցական պայքարի, իսլամական գաղափարական շարժումների միջոցով, որոնք հակված են լուծելու քաղաքական-հասարակական խնդիրներն իսլամական հիմնական օրենքներով և հասարակության իսլամականացման ուղով: Այս կարգի բարեփոխություններ ու զարգացումներ ապրած երկրներից կարելի է նշել բալկանյան երկրները (չարիաթի կիրառմամբ), Սաուդյան Արաբիան (իսլամականացման խորացում), Թուրքիան (իսլամական կուսակցությունների թվի աճով ու իշխանության հասնելով, հասարակության բարեկեցության և շարիաթի օրենքների համապատասխան հիմնական գործունեություն ծավալելով), Հորդանանը, Եգիպտոսը (իսլամական կուսակցությունների իշխանության գալով), Ալժիրը (90-ականների ընտրություններում «Իսլամի փրկության ճակատի» տարած հաղթանակով), Սուդանը (իսլամական իշխանության հաստատումով) և այլն:

Իրանի իսլամական հեղափոխության զարգացումներն իրենց արտացոլում են գտել մույնիսկ այն երկրներում, որտեղ մուսուլմանները փոքրամասնություն են կազմում: Այդ երկրներում բնակվող մուսուլմանների մոտ պահանջ է առաջացել մասնակցելու երկրի հասարակական-քաղաքակրթական կյանքին: Տարբեր կուսակցությունների, խմբավորումների և իսլամական խորհրդարանների ձևավորումը (մուսուլմանների խորիքաբանական Անգլիայում) Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում և Կանադայում, մուսուլմանական շարժումների զարգացումը և այս պահանջներին արևմտյան աշխարհիկ պետություններին ընդառաջ գնալը վկայում են նշված ազդեցությունների մասին:

1.2. Իսլամական հեղափոխության ազդեցությունը իսլամական երկրների իշխանությունների վրա

Իսլամական երկրների մեծամասնությունն Իրանի իսլամական հեղափոխության ժամանակ կախավորության մեջ են գտնվել արևմտյան կամ արևելյան գերտերություններից: Այդ երկրների կատավորման հիմքում ընկած էր պետությունից

կրոնի մեկուսացման սկզբունքը: Նրանցից շատերը պայքարել են կրոնական սկզբունքների ու իսլամական ավանդույթների դեմ և մինչև 1980-ականները փորձել են իրենց իրավապահական կառույցները հարմարեցնել ոչ կրոնական՝ ձախ (սոցիալիստական) կամ աջ (լիբերալիստական) կառույցներին և այդ հոսանքների քաղաքական, հասարակական ու տնտեսական արժեքները ներդնել իրենց երկրների քաղաքականության և իշխանության մեջ: Սակայն Իսլամական հեղափոխության հաղթանակով ու հասարակության ճնշումների ներքո, այդ պետություններում աստիճանաբար իրականացվել են մի շարք բարենորոգումներ, որպեսզի կարողանան բավարարել ժողովուրդների հոգևոր պահանջները, պատրաստվեն պետությունների աստիճանական իսլամականացման գործընթացին և օրենքների ու պետական կառույցների իսլամական վերահսկողությամբ: Հակառակ այդ կառավարությունների պետությունը կրոնից անջատելու ցանկությանն ու ձգտումներին, դրանցում իրականացվել է վերոհիշյալ փոփոխությունների մի զգալի մասը:

Եթե համեմատենք Ինդոնեզիայի, Պակիստանի, Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Ալժիրի, Մարոկկոյի այսօրվա վիճակն Իրանի իսլամական հեղափոխությունից առաջ այդ երկրներում տիրող իրավիճակի հետ, ապա տեսանելի են դառնում հետևյալ հանգամանքները.

1. Իրանի իսլամական հեղափոխության լույսի ներքո, պետությունների առճակատումները խոսում են կրոնական, երբեմն էլ՝ այդ պետությունների կողմից ցեղային-համայնքային կապերի միջոցով օրինական իշխանության հիմքերի ստեղծման համար գործադրվող ջանքերի մասին:
2. Կրոնական հիմունքների ու դրույթների հիմնավորում և աստիճանաբար կիրառում արդարադատության, լուսավորության, բարձրագույն կրթության, օրենսդրության և իսլամական տնտեսության ոլորտներում, ինչպես նաև հասարակության կողմից հարգանքի դրսևորում իսլամական սրբությունների ու ավանդույթների նկատմամբ:
3. Հասարակության ներկայացուցիչների ու իսլամական հոսանքների աստիճանաբար մասնակցության ընդունում պետական արդարադատության, գործադիր և օրենսդիր մարմիններում (խորհրդարան, խորհուրդներ, պետական հիմնարկներ), ինչպես ընդունված է Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում, Հորդանանում, Պակիստանում, Թուրքիայում, Ինդոնեզիայում, Մարոկկոյում, Ալժիրում և այլ երկրներում:
4. Իսլամական կրթական կենտրոնների աճ ուսումնական տարրեր հաստատություններում՝ տարրական և միջնակարգ դպրոցներում, համալսարաններում, ինչպես այժմ՝ Մարոկկոյում, Սաուդյան Արաբիայում, բալկանյան երկրներում և Հնդկաստանում գործող միջնակարգ դպրոցներում, իսլամական համալսարաններում և այլն:

2. Իսլամական հեղափոխության ազդեցությունն իսլամական շարժումների և մուսուլման մրավորականների վրա

Իսլամական հեղափոխության մեկ այլ շերտ է համարվում նրա բողոքազուրկությունն իսլամական շարժումների և մուսուլման մտավորականների վրա, որոնց ստորև կանդրադառնանք առանձին-առանձին:

2.1. Իսլամական հեղափոխության ազդեցությունն իսլամական շարժումների վրա

Իսլամական աշխարհում, մինչև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը, գործում էին փոքրաթիվ իսլամական շարժումներ, որոնցից կարելի է, հատկապես հիշատակել «Էխվան օլ մուսլիմին» («Մուսուլման եղբայրներ») կուսակցությունը՝ Եգիպտոսում և տարածաշրջանի մի շարք այլ երկրներում, սահմանափակ թվով իսլամական կուսակցություններ՝ Պաղեստինում, Ասիայի հարավ-արևմտյան երկրներում և հյուսիսային Աֆրիկայում: Նշված կուսակցությունների զգալի մասը դադարել էր ակտիվ գործունեություն ծավալելուց: Նրանք գտնվում էին կամ քայքայման եզրին, կամ ժամանակավորապես դադարել էին գործելուց: Իսլամական հեղափոխության հաղթանակը նրանց նոր ուժ ներարկեց, աճեցին նրանց զանգվածային գործունեությունները և երիտասարդների ու մտավորականների ներգրավման գործընթացը: Դրանցից շատերը, վերջին երկու տասնամյակում, իշխանության հասնելու նպատակով իրենց ազդեցության ոլորտներում դիմում էին թե՛ բռնի, թե՛ խաղաղ քայլերի, ձեռնամուխ լինում մի շարք հասարակական-քաղաքական գործողությունների:

Վերոհիշյալ կուսակցություններից ու շարժումներից գատ, Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի ազդեցության ներքո, իսլամական որոշ երկրներում ստեղծվել են նոր կառույցներ, որոնք տարածաշրջանում մինչև օրս բազմաթիվ գործունեություններ են ծավալել: Այդ կազմակերպություններից կարելի է նշել «Հեբոլլա» կուսակցությունը Լիբանանում և մի շարք իսլամական երկրներում, «Ալ ջիհադը»՝ Եգիպտոսում, «Իսլամական ցիհադ և Հասաս» շարժումները՝ Պաղեստինում, «Ազատագրական ճակատը Արսբական կրգի», «Ալ դավլա» և «Իսլամական գերագույն ժողովը»՝ Իրաքում, «Ալ նեճաթ» շարժումը՝ Թունիսում, մոջահեդների կուսակցությունները՝ Աֆղանստանում, «Իսլամական շարժումները»՝ Քաշմիրում, «Ջաֆարիյե» շարժումը՝ Պակիստանում, «Իսլամական շարժումները»՝ Կովկասում (Չեչնյա) և Միջին Ասիայում:

Անգամ համաշխարհային «Ալ Կադա» շարժումն անուղակիորեն կրում է Իսլամական հեղափոխության ազդեցությունը, քանզի այն ձևավորվել է արաբա-իսլամական երկրներում իսլամի հզորացման ազդեցության ներքո:

2.2. Իսլամական հեղափոխության ազդեցությունն իսլամական մրավորականների և գիտնականների վրա

Իրանի իսլամական հեղափոխությունից առաջ, մուսուլման շատ մտավորականներ և քարեմորդիներ իրենց երկրներին հետամնացությունից դուրս բերելու և զարգացնելու նպատակով բնօրինակել էին ծախ կամ լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսությունից ազդված՝ սոցիալիստական գաղափարները և առավելագույնս փորձում էին այդ երկրներում առկա խնդիրների լուծման համար դրանք համատեղել իսլամական ավանդույթներին ու իսլամի հիմունքներին: Այդ գիտնականներին էին իրանական, եգիպտական, թուրքական և պակիստանյան մուսուլման մտավորականները: Սակավաթիվ գիտնականներ և մտավորականներ են լուծումներ առաջարկել առաջնորդվելով գոտ իսլամի հիմունքներով ու դրույթներով, սակայն Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակն ավելացրեց այդ մտավորականների և կրոնագետ գիտնականների թիվը, ովքեր հոգուկանշով, իրենց երկրները հետամնացությունից դուրս բերելու և շենացնելու համար, առաջ քաշեցին իսլամական մտածելակերպով կրոնական իշխանություն ստեղծելու վարկածը: Այս խմբի գիտնականներից ու մտավորականներից կարելի է հիշատակել՝ Քալիմ Սեդդիին (Անգլիա), Ռոժե Գարուդին (Ֆրանսիա), Էդուարդ Սափին (ԱՄՆ), Սաիդ Շարանին ու Սեյյեդ Աբբաս Մուսավիին (Լիբանան), Այաթոլլա Ա.Մադին և Հարիմին (Իրաք), Էբրաքամին (Թուրքիա), Աբբաս Մադանին (Ալժիր), Մահաբիր Մոհամմադին (Մալայզիա), Համեդ Ալգարին և հոգևոր աշխարհի բազմաթիվ այլ իսլամագետ գիտնականներին (Եգիպտոս, Մաուրյան Աբաբիա, Հորդանան, Պակիստան): Այսօր ականատես ենք, որ վերոհիշյալ հոսանքների աճի շնորհիվ, մուսուլման խորհրդարանական պայքարում այդ երկրների խորհրդարաններում շատ տեղեր են զբաղեցնում հիշյալ իսլամամետ կուսակցությունների ու շարժումների ներկայացուցիչները: Որպես օրինակ, կարող ենք նշել Թուրքիայի, Հորդանանի, Լիբանանի, Եգիպտոսի, Պակիստանի և Սիրիայի խորհրդարանները⁶:

3. Իսլամական հեղափոխության ազդեցությունը ոչ իսլամական ազգաբազրական շարժումների, հոսանքների ու ոչ մուսուլման մրավորականների վրա

Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի ու Ասիայի երկրներին անկախություն ձեռք բերելու համար ծավալված ազատագրական շարժումները, նրանց մտավորականները մինչև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը, սովորաբար իրենց գործունեությունը ծավալում էին հենվելով մատերիալիստական, այ

ու ծախ աշխարհիկ դպրոցների գաղափարախոսությանը, նրանցից շատերի պայքարն ավարտվում էր անհաջողությամբ: Սակայն Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո, այդ շարժումների գործունեություններում գրանցվել են զգալի բարեփոխումներ և առաջընթաց:

3.1. Անկախության և ազատագրական ոչ մուսուլման շարժումներ

Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Հեռավոր Ասիայի երկրներում արևմտյան գաղութարար պետությունների ներգործությամբ ու այդ երկրներում քրիստոնեության տարածմամբ, հաջողվել է հաստատել քրիստոնեական իշխանություններ: Եկեղեցիների և նրանց առաջնորդների ջանքերով տարված գաղափարախոսական աշխատանքների արդյունքում նման երևույթի սաստկացման ակնհայտ ենք հատկապես Լատինական Ամերիկայի երկրներում: Իրականում, այդ երկրներում, քրիստոնեությունը և այլ կրոններ ծառայել են որպես գործիք՝ կրոնի փիլիսոփայության ու իշխանության հաստատման համար, ինչի շնորհիվ կարողացել են տվյալ երկրների բնիկներին խաղաղեցնել ու ընտելացնել տիրող սոցիալական ծանր վիճակին: Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի և նրանց տեսական հիմունքների ազդեցության ներքո, այդ երկրներում ձևավորվել են քրիստոնեական գաղափարներ ու ազատագրական շարժումներ, կազմակերպվել են պայքարի նոր ձևեր բնորոշ Արևմուտքի և արևմտամետ պետությունների: Վերջին երկու տասնամյակի ընթացքում այս տարածաշրջանի ազատագրական շարժումները, այդ բվում մարտնչող կարողիկ եկեղեցին, որ մինչև այժմ էլ տարածաշրջանում տարբեր դիրքորոշումներ ունեն ԱՄՆ-ի և արևմտյան դիկտատուրային ձգտող պետությունների հանդեպ, կրում են իսլամական բաղաբաղականության գաղափարախոսության ազդեցությունը, որի ակունքն է Իրանի իսլամական հեղափոխությունը⁷:

3.2. Իսլամական հեղափոխության ազդեցությունը ոչ մուսուլման մրավորականների ու գիտնականների վրա

Վերջին երկու տասնամյակի ընթացքում, ոչ մուսուլման մտավորականներին ու գիտնականներին մտածելակերպում, հրատարակած գրքերում և հոդվածներում նկատելի է Իսլամական հեղափոխության մեկ այլ բնույթի ազդեցություն ևս: Անցած 20 տարիներին աշխարհն ականատես է եղել ոչ մուսուլմանական երկրներում կազմակերպված հազարավոր միջազգային հավաքների, սեմինարների և գիտաժողովների, որտեղ ներկայացվել և կրճարվել են ոչ մուսուլման հետազոտողների բազմաթիվ ելույթներ՝ նվիրված կրոնական իշխանության գաղափարի տարբեր դրսևորումներին⁸: Այսօր աշխարհը վկա է Իրանում տպագրվող, իսլա-

մական քաղաքակառուցմանը կողմ ու դեմ, ինչպես նաև Իրանի հեղափոխության վերաբերյալ ոչ մուսուլման հեղինակների բազմաթիվ գրքերի ու հոդվածների տարածմանը: Անկախ այս գրքերի ու հոդվածների շուրջ արվող դրական կամ բացասական դատողություններին ու նրանց տրվող գնահատականներին, հենց ինքը՝ երևույթը, մեծ ու կարևոր փոփոխություն է համարվում: Ոչ մուսուլման բազմաթիվ քաղաքական առաջնորդներ, հասարակական-քաղաքական տարբեր խնդիրների վերաբերյալ իրենց ունեցած դիրքորոշումներում, տեսակետներում ու կատարած համակոչմանի վերլուծություններում նշել են Իսլամական հեղափոխությունից բաղած դասերի ու խնդիրների լուծման ուղիների մասին: Այստեղ հարկ ենք համարում հիշել Ֆիդել Կաստրոյին, որը նշել է. «Մինչև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը կարծում է ինքը, թե կրոնը հասարակության համար հաշիշ է, սակայն Իրանի իսլամական հեղափոխությունից հետո փոխեցինք մեր կարծիքը»: Այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ կրոնն էլ կարող է հասարակական, քաղաքական, տնտեսական զարգացումների ու կատարելագործման ճանապարհին հասարակությանը ծառայել որպես բարեփոխումների գործոն: Այս կարգի մտածողներից կարելի է նշել նաև Միշել Ֆուկոյին, Հանգրիմգրոնին, Հաբեր Մասսին, Ֆուկույամային, Թեդա Սրոչֆոլդին, ովքեր իրատարակել են բազմաթիվ աշխատություններ¹²:

Ամենակարևոր ազդեցությունը, որ ունեցել է Իրանի իսլամական հեղափոխությունը ոչ մուսուլման մտավորականների, հատկապես՝ Արևմտյան մտավորականների գաղափարների վրա, այն է, որ Վերածննդից մինչև Իսլամական հեղափոխությունն ընկած ժամանակահատվածում այդ մտավորականների տեսական քննարկումները պատվել են մարդ և կրոն առանցքների շուրջը: Այս մտավորականների քաղաքական, տնտեսական ու հասարակական տեսությունների ճնշող մասը բխում էր Արդյունաբերական հեղափոխությունից հետո կյանքի կոչված մատերիալիստական դպրոցին բնորոշ մարդկեցեարոն՝ աջ, ծայխ և կենտրոնամետ հոսանքներից: Ըստ հաճախ Արևմուտքը՝ նրա մտավորականությունը, կտրվելով երկրների (Աստուց), քննարկում է կրոնից ու երկնքից ոգեշնչված տեսական հիմունքների ոչ հուսալի լինելու հարցը և այս գաղափարների նկատմամբ ցուցաբերում նվաստացուցիչ վերաբերմունք: Իրականում Իսլամական հեղափոխության հաղթանակն Իրանում իշխող իսլամը հակադրեց Արևմուտքի մշակույթին, քաղաքակառուցմանն ու տեսական հիմունքներին, ապացուցեց Արևմտյան մշակույթի ու քաղաքակառուցման փակուղուց դուրս գալու գործադրած անհաջող ճիգերը, պոստմոդեռնիստական շարժման գաղափարախոսության երևան գալը, որն էլ սկսում է քննադատել իր իսկ ստեղծած արդիականացման գաղափարները: Եթե չասենք, որ այսպիսի հակադրումների հիմնական շարժառիթը եղել է կրոնական ազդեցությունն այդ մտավորականների վրա, որը ներշնչվել է Իրանի իս-

լամական հեղափոխությունից, ապա առնվազն կարելի է նշել, որ այն հանդիսացել է խնդրի ամենակարևոր պատճառը¹³:

Պոստմոդեռնիստական տեսությունները հաճախ առաջարկում են կրկին դեպի երկինք վերադարձի ուղիներ և այդ տեսություններն իրենց մեջ պարունակում են նաև երկնային լուծումների ճանապարհներ: Իրականում, արևմտյան մոդեռնիզմի քննադատությունը պոստմոդեռնիստ մտավորականների կողմից նույնպես կատարվել է Իսլամական հեղափոխության քաղաքական ու կրոնական գաղափարախոսության ազդեցությամբ: Պոստմոդեռնիստ մտավորական-գիտնականներից կարելի է նշել Ֆուկոյին և Հաբեր Մասսին:

Այսօր Արևմտյան շատ մտավորականներ, բարոյական, հասարակական և ժամանակակից ընտանիքների ճգնաժամներից դուրս գալու նպատակով, կրկին անգամ դիմում են կրոնին ու երկնային լուծումների ուղիներին: Իրանի իսլամական հեղափոխությունը վերջին տասնամյակների ընթացքում կարողացել է նաև իր ազդեցությունը բողոքել այդ գաղափարի վրա¹⁴:

Ոչ մուսուլման մտավորականների վրա Իրանի իսլամական հեղափոխության բողոք ազդեցության օրինակ կարելի է համարել նաև հեղափոխության վերաբերյալ քաղաքական տեսություններում կատարված փոփոխությունները, որոնք հանգեցրել են այդ տիպի տեսություններից շորթորդ սերնդի տեսության ստեղծմանը: Հավելենք, որ մինչև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը հեղափոխությունների վերաբերյալ գոյություն է ունեցել երեք տեսակետ.

Առաջին. Ըստ այս տեսությունների, հեղափոխությունը դրական երևույթ է և օգտակար հետամնաց և զարգացող երկրների համար:

Երկրորդ. Ըստ տեսությունների այս խմբի՝ հեղափոխության վերաբերյալ առաջարկվում է նոր տեսակետ, ըստ որի հեղափոխությունը համարվում է քաղաքական ու հասարակական բարեփոխումների իրականացման համար տվյալ երկրի քաղաքական ուժի նյութական գործոններից մեկը:

Յերրորդ. Նոր պոստմոդեռնիստական տեսություն է, որը կրում է Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը: Այն առաջարկել է Միշել Ֆուկոն, Իրանի իսլամական հեղափոխության վերաբերյալ կատարած իր ուսումնասիրություններում: Այս տեսության համաձայն, քաղաքական ուժերը չեն սահմանափակվում միայն հին (նյութական և հոգևոր) գործոններով: Ֆուկոն գտնում է, որ քաղաքական ուժը հասարակության անդամների մեջ է, այլ ոչ թե միայն նյութական ու հոգևոր արժեքներում: Այլ կերպ ասած, եթե հասարակության անդամները որևէ խնդրի շուրջ համախմբվեն և կամք ցուցաբերեն, ապա ամենատեղ պետություններն ու բանակները, նույնիսկ զինվոր միջուկային տեղությունների բանակները չեն կարող իրենց բոլոր նյութական և հոգևոր արժեքներով նրանց դիմակայել: Իրադարձություն, որն Իրանում պակասակց հաղթանակով, տեղի ունեցավ

մուսուլմանների դրսևորած հեղափոխական կամքի շնորհիվ, հաղթեց աշխարհի գրեթե բոլոր պետությունների կողմից հովանավորվող բազավորին ու նրա հզոր բանակին¹⁵: Նման շարժում ծագեց նաև Լիբանանի հյուսիսում և, Իսրայելի բանակը, որն արաբախրայելյան բոլոր պատերազմներում հաղթող էր ճանաչվել ու անհաղթելի բանակի համբավ էր վայելում, պարտվեց: Այսօր այն կրկնվում է հեղափոխական Պաղեստինի ժողովրդի դեմ տարվող պայքարում¹⁶: Իսլամական հեղափոխությունն ու նրանից ազդված մտավորականները հարցականի տակ դրեցին նույնիսկ Ֆուկույամայի «Պատմության ավարտը» տեսությունը: Ըստ այս տեսության, վերջին տեսությունը լիբերալ-ժողովրդավարականն է:

4. Իսլամական հեղափոխության ազդեցությունը Եվրոպայում և Ամերիկայում (Արևմուտքում)

Չնայած արևմտյան ժողովուրդների ու պետությունների վրա Իսլամական հեղափոխության ազդեցությունը գնահատվում է և՛ դրական, և՛ բացասական հակազդեցություններով (բացասականը՝ ավելի շատ), այնուամենայնիվ, նրա ազդեցությունն այդ երկրների ժողովուրդների վրա անժխտելի է:

Ստորև ներկայացվում են այդ ազդեցությունների օրինակներ:

4.1. Արևմտյան երկրներում մահմեդական փոքրամասնությունների գիպակցության սրթնացումն ու մուսուլմանությամբ հպարտանալը

Մինչև Իսլամական հեղափոխությունը, Եվրոպայում ու Ամերիկայում փոքրամասնություն կազմող մահմեդականներն ապրում էին միայն որպես անունով մուսուլմաններ: Արևմտարևմտյան շարժանանալու և հետամնաց շիամարվելու համար նրանք չէին համարձակվում ցույց տալ իրենց պատկանելությունն իսլամին ու մահմեդական լինելը: Արևմուտքում համարում էին, որ մահմեդականների հետամնացությունը գալիս էր իսլամից, պետությունների իսլամական լինելուց և իսլամական քաղաքակրթությունից: Արևմուտքը մեծածավալ քարոզչական աշխատանք էր տարել, որ մուսուլման լինելն ու իսլամին կառչելը հետամնացության դրսևորումներ և ռեակցիոն երևույթներ են: Այնինչ, այսօր Իրանը դարձել է մի տապալան, արդարադատ ու զարգացող իսլամական պետություն, աշխարհի մուսուլմաններին պարզել է հոգու ուժ, ինչի շնորհիվ նրանք հպարտանում են մուսուլման լինելու համար և քաղաքական ու գիտական հավաքներում նույնիսկ պաշտպանում են իսլամական պետականության քաղաքական գաղափարներն ու հասարակական-քաղաքական հիմունքները¹⁷:

4.2. Արևմտարևմտյան մուսուլմանների՝ իսլամական բոլոր օրենքների ու դրոյթների իրականացում

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Արևմտյան համայնքներում հաճախակի բնույթ են կրում իսլամական առանձին դրսևորումների, ինչպես օրինակ, կանանց «հիջաբի» (մուսուլման կանանց հատուկ համազգեստ՝ նրանց երեսք, գլուխն ու մարմինը ծածկելու համար) կրելը, տղամարդկանց մորուք պահելն ու քսակ կրելը, Եվրոպայի ու Ամերիկայի քաղաքների տարբեր մասերում ուրբաթօրյա բազմության կողմից խմբովի աղոթքի («մանազն ջոնե») կատարումը: Նշենք, որ մինչև Իսլամական հեղափոխության հաղթանակը, Արևմտյան երկրներում հազվադեպ երևույթ էր մուսուլման կանանց հատուկ համազգեստ կրող կնոջ կամ մուսուլմաններին բնորոշ համազգեստ ու պարագաներ կրող տղամարդ տեսնելը: Այսօր այս երևույթն այնքան է տարածվել, որ արևմտյան շատ պետություններ պայքարում են դրանց դեմ, որպեսզի ավելի լայն տարածում չգտնեն և չծավալվի իսլամականությունը: Օրինակ, Ֆրանսիայում, Գերմանիայում և նույնիսկ Անգլիայում ու Ամերիկայում հատուկ օրենքներ են ընդունում, որոնք արգելում են մուսուլմանական համազգեստով աղջիկներին ու կանանց ներկա գտնվելը դպրոցներում, համալսարաններում, հիմնարկ-ձեռնարկություններում, նույնիսկ հասարակական վայրերում: Օրենքօր խտացվում են այդ օրենքները խախտողների նկատմամբ կիրառվող միջոցները¹⁸:

4.3. Իսլամական կրոնական կենտրոնների աճը Արևմտյան երկրներում

Իսլամական հեղափոխության բողոք այլ ազդեցություններից կարելի է հիշատակել նաև մուսուլմանների համար իսլամական կրոնական կենտրոնների (մզկիթներ, դպրոցներ ու մշակութային օջախներ), իսլամական օրենքներով մորթված մսի վաճառքի խանութների քանակի ավելացումը: Եթե համեմատելու լինենք վերոհիշյալ կենտրոնների ու խանութների օրենքօր անող թիվը՝ նախորդ երկու տասնամյակում նման կենտրոնների ու խանութների թվի հետ, ապա կհամոզվենք, որ դրանք, ի հեճուկս տարբեր երկրներում բնակվող մուսուլմանների 2-3 անգամ աճի դիմաց, նման կենտրոններն որակապես աճել են մինչև 10 անգամ, ինչն էլ արևմտյան երկրների պետությունների լուրջ մտահոգության պատճառ է դարձել: Այսօր արևմտյան պետություններն այդ կենտրոնների թիվը կրճատելու ուղղությամբ լուրջ հսկողություն են սահմանել¹⁹:

4.4. Բարոյականության և կրոնամեթոդական աճն Արևմուտքում

Մինչև Իսլամական հեղափոխությունը, կրոնին ու բարոյականությանը նվիրված լինելը, նույնիսկ քրիստոնյաների համար բացասական և անկանխատեսելի

երևույթ էր: Իսլամական հեղափոխության հաղթանակի և նրա ազդեցության ներքո Արևմուտքում կրոնի տեսության հիմունքներին անդրադառնալու համագամանքով պայմանավորված՝ իսլամի, սիոնիզմի, քրիստոնեության և այլ կրոններին ու բարոյականության դրսևորումներին ուշադրություն դարձնելու պահանջն էլ ավելի մեծացավ:

Էթե մայելու լինենք երկու տասնամյակ առաջ հրատարակված այն գրքերին ու արտադրված ֆիլմերին, որոնց միջոցով Արևմուտքը հակադրվում էր հավատին, հասկապես՝ քրիստոնեությանը, ապա կհամոզվենք, որ հեզմանքով ու ծաղրանքով են անդրադարձել կրոնին ու մարգարեներին, իսկ եկեղեցիները և հոգևոր բարձրաստիճան առաջնորդները ենթարկվել են հարձակումների ու ստորացումների: Շատ քիչ դեպքեր կարելի է գտնել, որտեղ այդ երևույթներին հակառակ, պաշտպանվում են կրոնները, նրանց հոգևոր արժեքներն ու մարգարեները: Ավելին, նույնիսկ տվյալ կրոնների հետևորդները չեն համարձակվել արձագանքել նման անհարգալից վերաբերմունքին և պայքարել դրանց դեմ: Այսօր, Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից մերձեցված, արևմտյան երկրների ժողովուրդներն ու պետություններն աստիճանաբար, երբեմն էլ՝ օրենքի ուժի կիրառմամբ, կանխում են այդպիսի գրքերի տպագրությունն ու ֆիլմերի արտադրությունը: Նման գործողությունները հատկապես ակտիվացել են Սալման Ռուշդիի նկատմամբ Մեծն Իսլամի, որպես մահմեդական օրենսգետի ու իսլամական իրավագիտության բարձրաստիճան հոգևոր գիտնականի արտահայտած կարծիքից հետո: Այսօր, Արևմուտքի աշխարհիկ շատ պետություններ գտնվում են մի կողմից իսլամական ու հրեական կրոնների կողմնակիցների, մյուս կողմից՝ քրիստոնյա եկեղեցու ու կաթոլիկ պապերի ճնշումների ներքո և կանխում են հակաաստվածալից կրոնների դեմ ուղղված բոլոր տեսակի շարժումներն ու քարոզչությունները: Ընդհակառակը, նույնիսկ տպագրում են գրքեր ու հոդվածներ, արտադրում ֆիլմեր, կազմակերպում բազմաթիվ գիտաժողովներ ու հավաքներ՝ նվիրված կրոնին, բարոյականությանն ու կրոնական գիտնականների և գործիչների մեծարժանը: Այս ամենի գործնական արդյունքն է համոխանում կրոնին ու բարոյականությանը վերադառնալու միտումների և կրոնի հիմունքների վերաբերյալ խորհրդակցական գործընթացների կազմակերպման աճը՝ Արևմտյան արդիականացման ազդեցությունից առաջացած ճգնաժամերից ու դժվարություններից ձերբազատվելու ուղիներ գտնելու համար²⁶:

4.5. Արևմուտքի մտավորականության և կանանց հսկումը կրոնի և բարոյականությանը

Արևմուտքի մտավորականության և կանանց մեջ հսկումը դեպի կրոնն ավելի ցայտուն է դրսևորված, քան հասարակության որևէ այլ խավերի ներկայացու-

ցիչների մոտ: Արևմուտքի կանայք, հասարակության մեջ Արևմտյան արդիականացման գաղափարների ու հայացքների ներդրման արդյունքում, տղամարդկանց կողմից նրանց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից դրդված, նրանց որպես սեռական բավարարվածություն ստանալու միջոց օտազործելու, ինչպես նաև ամուսնության ու ընտանեկան հիմքերի ոչ կայուն լինելու և ծերության ժամանակ տղամարդկանց կողմից անուշադրության արժանանալու ու վանվելու պատճառով ավելի շատ են հակված դեպի կրոնն ու բարոյականությունը, ավելի են նվիրվում հոգևոր գրականության ընթերցմանը և ավելի շատ են կառույմ կրոնական ծեսերին ու արարողություններին:

Արևմուտքի մտավորականներն էլ, մարդակենտրոն տեսությունների արդյունավետ ազդեցությունների բացակայության պատճառով, կանանց օրինակով, նրանցից հետո կրոնական գաղափարներին ու բարոյականությանը ձգտելու ցանկություն են ցուցաբերում և այս խնդրի վերաբերյալ կազմել ու հրատարակել են հարուստ գրականություն, որը կարելի է համարել Իրանի իսլամական հեղափոխության ևս մեկ ազդեցություն Արևմուտքում²⁷:

4.6. Արևմտյան պետությունների պայքարն ընդդեմ իսլամականության խորհրդանիշների

Արևմտյան պետությունները փորձում են ոչ մուսուլման կանանց և մտավորականների կողմից դեպի իսլամը թեքվելու ցանկությանը հակադրվել հետևյալ ճանապարհներով.

- ա) ուժեղացնել նրանց համար քաղաքակրթական և մշակութային խոր արձանուներ ունեցող քրիստոնեությունն ու եկեղեցին և այս պահանջը բավարարելու համար նրանց տրամադրել քարոզչության ավելի մեծ հնարավորություններ,
- բ) փոքրամասնություն կազմող մուսուլմանների մեջ ջանացել են հովանավորել Արևմուտքին համապատասխանող իսլամը, որը սովորաբար քարոզվում է Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի ու Թուրքիայի կողմից և կանխել իրանական մոդելի իսլամականության տարածումը: Այսօր արևմտյան պետությունները լուրջ սպառնալիք են գզում իրենց և աշխարհիկ քաղաքակրթությունների նկատմամբ, քանի որ, երևի կրոնին ու բարոյական արժեքներին ձգտելու շարժման աճը շարունակվի մնալ անփոփոխ՝ իրանական իսլամի մոդելով, ապա հետագայում գուցե այդ երկրներում տեղի ունենան անկայունություններ և ցնցումներ²⁸:

4.7. Շարժումների և ցույցերի անը բնօրինակ Արևմտյան պետությունների կողմից կրոնի և բարոյական արժեքների նկատմամբ թշնամանքի սերմանումն

Վերջին տասնամյակների ընթացքում արևմտյան երկրներում կազմակերպվում են բազմաթիվ ցույցեր ու հանրահավաքներ, ձևավորվում զանազան շարժումներ՝ ուղղված իսլամականության դեմ տարվող քաղաքականությանը: Այդ առճակատումների հիմնական նպատակը կրոնի և բարոյական արժեքների պաշտպանությունն է, որոնք իրենց արտացոլումն են գտել ՋԼՄ-ներում:

4.8. Նախախրախուսական և հակախոնհարական մարտչորդրական հոսանքների ձևավորումն Արևմուտքում

Սիոնիստական և իսրայելական լոբբինգների գերիշխումը Արևմուտքի քաղաքական ուժերի, տնտեսության և մշակութային կենտրոնների վրա, վերջին տասնամյակներում, ի հեռուկա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արված խոսքի ազատությանը, որն Արևմուտքում մարդկանց հնարավորություն է տվել ազատ արտահայտվելու յուրաքանչյուր անհատի, շարժման, գաղափարի, կուսակցության, խմբակցությունների ու երկրի մասին և քննադատել դրանց, որոշ երկրներում քաղաքացիական օրենսգրքի, անվտանգության մարմինների, կարգ ու կանոնի հսկող ուժերի կողմից սահմանված օրենքներով արգելված են եղել հրեաների և նրանց կազմակերպությունների նկատմամբ քննադատություններով հանդես գալը: Մինչև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը ոչ մեկը, ոչ մի խմբակցություն ու շարժում իրավունք չունեին քննադատական խոսքով հանդես գալ սիոնիզմի ու հրեական լոբբինգների դեմ: Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո, նկատի ունենալով Իսրայելի տրամադրությունների ու քաղաքական քաջահայտումների դեմ պայքարը, Արևմուտքում առանձին խմբավորումների ու հոսանքների համարձակ գործունեությունների շնորհիվ, քաղաքական քաջահայտումների ու բողոքների մի նոր ալիք բարձրացավ սիոնիզմի և հրեական լոբբինգների դեմ: Այս շարժման լավագույն վկայություններն են տվյալ խնդրին վերաբերող բազմաթիվ գրքերի, հոդվածների հրատարակումները, հավաքների ու ցույցերի կազմակերպումը: Վերջին երկու տասնամյակում Արևմուտքի պետությունները մտան շարժումների ակամատես են եղել: Ռոմեո Գաբորդին վերջերս հրատարակած մի աշխատության մեջ հակադրվում է հրեաների կողմից տարածված սուտ հայտարարություններին ու նրանց «անմեղ» ձևանալու փորձերին: Ի հեռուկա հեղինակի ցուցաբերած այս քայլին, Ֆրանսիայի Գերագույն դատարանը, սույն գրքի հրատարակումից հետո նրան ենթարկել է ֆինանսական տույժի: Այս հանգամանքն ինքնին Իրանի իսլամական հեղափոխության բողոքն ևս մեկ ազդեցության ազդեցույց է:

4.9. Արևմուտքում իսլամական հեղափոխությունների և իրանագիտությանը նվիրված գիտաձեռնարկային շարժումներ

Վերջին երկու տասնամյակում Արևմտյան երկրների բազմաթիվ գիտահետազոտական կենտրոններում ու համալսարաններում տասնյակ րեմաներ, մասնագետներ ու առնձնատեսություններ նվիրվել են իրանագիտության առանձին հարցերի ուսումնասիրությանն ու Իրանի իսլամական հեղափոխության ճանաչմանը: Ամեն տարի կազմակերպվել են այս հարցերին նվիրված տասնյակ սեմինարներ ու գիտաժողովներ: Ավելին, նույնիսկ վերոհիշյալ խնդիրների շուրջ Եվրոպայի և ԱՄՆ-ի բազմաթիվ համալսարաններում հատուկ դասընթացներ են տարվել, կազմակերպվել են սեմինարներ: Այլ կերպ ասած, ձեռնարկված այս բոլոր միջոցառումներն իրականացվել են Իսլամական հեղափոխության քաղաքականությանը, տեսությանն ու սկզբունքներին գիտականորեն ծանոթանալու համար, ավելի լավ ուսումնասիրելու իսլամական իշխանության հիմունքներն ու նպատակները, որոնք բխում են Իրանի հեղափոխությունից²⁴:

5. Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը վարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների վրա

Տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններում, իսլամական աշխարհի երկրները, այդ թվում նաև երրորդ աշխարհի երկրները (հարավային երկրներ), մինչև Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակը, աշխարհին, երրորդ աշխարհի ու իսլամական երկրներին հուզող խնդիրների վերաբերյալ ունեին տարբեր դիրքորոշումներ և նրանց միջև առաջանում էր ճեղքվածք՝ ի օգուտ Արևելքում ու Արևմուտքում իշխող ուժերի: Իրանի իսլամական հեղափոխությունից հետո և այդ կազմակերպություններում Իրանի ակտիվ մասնակցության շնորհիվ՝ աստիճանաբար միջազգային կազմակերպություններում այդ երկրներին գրաված դիրքերում որոշակի փոփոխություններ գրանցվեցին: Այնպես որ, միջազգային որոշ կազմակերպություններ, ինչպիսիք են, ասենք ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, «Իսլամական կոնֆերանսը», Չմիացած երկրների շարժումը, ԷԶՕ-ն (RCD), 77-ի խումբը վերջին տարիներին ակամատես են եղել իսլամական երկրների ու երրորդ աշխարհի երկրների միջև ստեղծված կոալիցիային, որն ընդդեմ հզոր պետությունների ուսման գործունեության՝ ունի հավասար դիրքորոշումներ: Վերջին տարիներին «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության (հատկապես՝ Թեհրանում կայացած կոնֆերանսի) և իսլամական պետությունների ղեկավարների, իսլամական աշխարհի, չմիացած երկրների, ինչպես նաև 77-ի երկրների հիմնադրար խնդիրներին վերաբերող հստակ դիրքորոշումները, ՄԱԿ-ի գլխա-

վոր ասանքեայնի կողմից Իսրայելի ու ԱՄՆ-ի դեմ և ՅՈՒՆԵՍԿՕ-ից ԱՄՆ-ի դուրս գալու մասին ընդունած վերջնագրերը խոսում են Իրանի իսլամական հեղափոխության դրական ազդեցության և այդ կազմակերպություններում Իրանի Իսլամական Հանրապետության վարած դիվանագիտական հաջողված գործունեությունների մասին»:

6. Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը աշխարհի գերիզոր պրերությունների արգրաքին քաղաքականության և համաշխարհային րևեռացման վրա

Իրանի իսլամական հեղափոխությունն հաղթեց այն ժամանակ, երբ աշխարհն ապրում էր սառը պատերազմ և բաժանված էր երկու բևեռների, իսկ Միջին Արևելքը, որպես այդ բևեռների ենթակա համակարգ բաժանված էր երկու գոտու: Դրանցից առաջինը՝ Հարավային Եմենը, Իրաքը, Սիրիան, Լիբանանը ունեին Արևելյան, իսկ երկրորդը՝ Իսրայելը, Թուրքիան, Իրանն ու Պակիստանը՝ Արևմտյան կողմնորոշում և Սենտոյի անդամ երկրներ էին: Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրանը դուրս եկավ Արևմուտքի տարածաշրջանի անվտանգության ազդեցության գոտուց, ինչի հետևանքով խախտվեց տարածաշրջանում տիրող երկբևեռությունը, ինչն օժտված էր գերիզոր բևեռներից յուրաքանչյուրում կայունության պահպանման հատկություններով: Տարածաշրջանում, հատկապես՝ Աֆղանստանում Իրանի իսլամական հեղափոխության ազդեցության, ինչպես նաև կախման մեջ գտնվող պետությունների դեմ իսլամական շարժումների կողմից ծավալված գործունեությունների արդյունքում, ԽՍՀՄ-ն զգալով մրցակցի անվտանգության քացր, ձեռնամուխ եղավ Աֆղանստանի գավթմանը: Արևմուտքի երկարաժամկետ տնտեսական շրջափակումն ու գաղափարախոսական ներքին դժվարությունները, ինչպես նաև ԽՍՀՄ-ի կողմից Աֆղանստանի գավթումը, նրա կրած տնտեսական և ռազմական խոշոր ծախսերը, Խորհրդային բանակի 8-ամյա պատերազմը մոջահեդների դեմ (որոնց սրբազան պատերազմի առկայությունը ներշնչված էր Իրանի իսլամական գաղափարախոսությունից), ի վերջո հանգեցրին ԽՍՀՄ փլուզմանը: Իսլամական հեղափոխության հաղթանակի առաջին տասնամյակում, երբ Իրանն իր արտաքին քաղաքականության առաջնքն էր դարձրել՝ «Ոչ Արևելք, ոչ Արևմուտք» կարգախոսը, գերիզոր պետությունները, այդ թվում ասիական ու եվրոպական մի շարք պետություններ միաժամանակ իրենց ուժերն ուղղել էին մի ընդհանուր քաղաքականության՝ այդ Հեղափոխության արժեզրկմանը: Այն ցայտուն կերպով երևաց իրան-իրաքյան պատերազմի ընթացքում: Վերոիշյալ տերությունները հովանավորում էին Իրաքին: Հակամարտության արմատները, իհարկե, բարձրված էին

այդ գերիզոր տերությունների արտաքին քաղաքականության մեջ, որն ուղղված էր իսլամիզմի գաղափարների ու նրա արժեքների դեմ և միաժամանակ Արևմուտքի ու Արևելքի արեխտակամ-մատերիախտակական դպրոցների քննադատության ենթարկելով՝ դերձրին իրենց հարձակման քիրախը: Նրանք համոզված էին, որ եթե նման երևույթի նկատմամբ անտարբեր մնան, ապա իրենց շահերն ու կայունությունը կդրվեն վտանգի տակ:

Ստորև ներկայացվում են իսլամական Իրանի դեմ այդ պետությունների արտահայտած տեսակետներն ու նրանց կողմից առաջարկված քայլերը»:

ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Ջորջ Շուլցը նշել է. «Իսլամական հեղափոխությունը մարդկության պատմության ընթացքում Արևմուտքի ամենավտանգավոր թշնամին է»:

Ռիչարդ Նիքսոնը իր «Հաղթանակ առանց պատերազմի» աշխատությունում նշում է. «Ժողովրդի իսլամն ու նրա ֆունդամենտալիզմը մեզ համար ավելի վտանգավոր են, քան Խորհրդային Միությունը»: Այնուհետև ավելացնում է. «Իսլամի աշխարհում՝ արևմուտքից (Մարոկկո) մինչև արևելք՝ Ինդոնեզիա կոմունիզմի փոխարեն իր տեղը, որպես խոտվահույզ գարգացումների հիմնական միջոց, գրադեցրել է իսլամական ֆունդամենտալիզմը: Աշխարհում սկսվել է քարեփոխումների գործընթաց, որից փչող քամիները վերածվում են փոքրիկների: Մենք ի վիճակի չենք դրանք կանխելու: Արևմտյան տեսաբանները համոզված են, որ իսլամական փոքրիկ սանձումը միայն հեռավոր է իսլամական հանրապետության ձևափոխման լույսի ներքո կամ Իսլամական հեղափոխության պարտությանը»: Մեկ այլ տեղ Նիքսոնը նշում է. «Իսլամական հեղափոխականները միտում են և՛ կոմունիստական արեխիզմը, և՛ Արևմուտքի կապիտալիստական անհավատ մատերիալիզմը: Որեմն, Իրանի Իսլամական Հանրապետությունը սպառնում է միաժամանակ և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի շահերին»:

Հզոր տերությունների համաձայնեցված գործողություններն Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի առաջին տասնամյակում, այդ թվում՝ պատերազմի հարկադրումը, տնտեսական, քաղաքական ու դիվանագիտական շրջափակումները, լրատվամիջոցներում Իրանի վրա գործադրած ճնշումները բխում են այդ տերությունների արտաքին քաղաքականության մեջ իրագործված ու բևեռացման նախկին քաղաքականության փոփոխություններից և ուղղված են եղել Իրանի հեղափոխության արժեզրկմանը»:

ԽՍՀՄ փլուզումից հետո, ԱՄՆ-ի միակողմանի քաղաքականությունն Իրանի հանդեպ կատուցվել է հեղափոխության, նրա արժեքների, տարածաշրջանում և Միջին Արևելքում Իրանի ու իսլամապաշտության դեմ պայքարի վրա, որն ավելի ուժեղ էր, քան սառը պատերազմի տարիներին իրագործած քաղաքականությունը: Ավելին, աշխարհագրականորեն այսօր ԱՄՆ-ը շրջապատել է գրեթե ողջ

Իրանը²⁰: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վրա բողոքած Իրանի իսլամական հեղափոխության մեկ այլ ազդեցությունն էլ այն է, որ բացի տնտեսական շրջափակումից ու նրա տապալմանն ուղղված ահաբեկչություններից, նա պայքարել է, որպեսզի Իրանին թույլ չտա տարածաշրջանում վերածվել զարգացած իսլամական երկրի մոդելի: Միաժամանակ ԱՄՆ-ն արևելամետ իսլամական երկրներին (Եգիպտոս, Թուրքիա, Ինդոնեզիա) ցուցաբերել է ֆինանսատնտեսական աջակցություն, որպեսզի իսլամական պետությունները նրանց ընդունեն որպես Արևմուտքի կողմից ճանաչված զարգացած մոդելի երկրների, որտեղ համերաշխություն է իշխում իսլամի և Արևմուտքի միջև:

7. Իսլամական հեղափոխության ազդեցությունը ՋԼՄ-ների վրա

Մինչև Իսլամական հեղափոխության հաղթանակը, Իրանի ՋԼՄ-ների քննարկման հիմնական թեմաներն էին՝ սառը պատերազմից բխող ճգնաժամներն ու նրանցից սպասվող հետևանքների, ինչպես նաև աշխարհում առկա երկրենտության պայմաններում տարածաշրջանային շարժումների արդյունքում առաջացած տնտեսական, քաղաքական ու հասարակական խնդիրների լուսաբանումը: Իսլամական հեղափոխության հաղթանակով հեղափոխական տարիներին քննարկման ամենաթեմ խնդիրներից մեկն էլ Իսլամական հեղափոխությունն ու նրանից բխող՝ իսլամական աշխարհում տեղի ունեցող բարեփոխումներն ու զարգացումներն էին: Եթե հետադարձ հայացք գցենք հետհեղափոխական շրջանում աշխարհի տարբեր երկրների լրատվական միջոցների կողմից բողոքված նյութերին, ապա կհամոզվենք, որ այդ տարիներին Իրանի և Իսլամական հեղափոխության ու նրանից բխող զարգացումների մասին լրատվությունը ամենաչափազանց է եղել: Այս կարգի միջոցառումներից կարելի է բվարկել հազարավոր ժամերի ռադիոհեռուստատեսային հաղորդումների հեռարձակումները՝ ի նպաստ կամ ընդդեմ Իրանի իսլամական հեղափոխությանն ու իսլամապաշտությանը, հարյուր հազարավոր լրատվական հոդվածների տպագրությունն ու վերլուծությունները մատուցում, հարյուրավոր ֆիլմերի արտադրությունն Իսլամական հեղափոխության թեմաներով և բազմաթիվ գեղարվեստական ֆիլմերի ստեղծումը, որոնցից հատկապես կարելի է նշել «Առանց աղջկան, երբեք» ֆիլմը և այլն²¹:

Իսլամական հեղափոխության մեկ այլ ձեռքբերում կարելի է համարել Իրանի կինեմատոգրաֆիայի զարգացումը: Մինչև հեղափոխական շրջանում արտադրված ֆիլմերը կինոակադմիայից եղել են նյութապաշտության, դաժանության և սեքսուալ թեմաներով: Հեղափոխությունից հետո ականատես ենք գեղարվեստական ու հեռուստատեսային ֆիլմերի ապրած առաջընթացին, նոր սերնդի կինոռեժիսորների առկայությանն ու նրանց մասնակցությանը միջազգային փառատոն-

ներին, դրանցում ձեռք բերած հաջողություններին, ինչպես նաև համաշխարհային կինոյում վարույց մոռացված հոգևոր և բարոյական թեմաներով իրանական կինեմատոգրաֆիստների նկարահանած ֆիլմերի՝ միջազգային հանրության կողմից ջերմ ընդունելությանը և շահած մրցանակներին: Ժամանակակից կինոարվեստի բնագավառում Իրանի կինոգործիչների ձեռք բերած հաջողություններից ելնելով՝ աշխարհի կինոարտադրության բազմաթիվ կենտրոններում ու կինոստուդիաներում նկարահանվող գեղարվեստական ու սերիալային ֆիլմերում առկա է Իրանի նորագույն կինոյի ազդեցությունը, որն արժանանում է համաշխարհային հանրության ընդունելությանը²²:

Իսլամական հեղափոխության ազդեցությունների օրինակներից սույն հոդվածում ներկայացվեց լոկ մի մասը: Դրանց ամբողջական լուսաբանումը հնարավոր է միայն բազմախտոր աշխատությունների շնորհիվ: Ինչպես իրանական ժողովրդական ասացվածքն է ասում՝ «Եթե ծովի ամբողջ ջուրը քաշել հնարավոր չէ, ապա նրանից գոնե պետք է խմել՝ ծարավը հագեցնելու համար»: Ուստի այս թեմայով ներկայացվածը բավարար ենք համարում:

Եզրակացություն

Այն, ինչ վերաբերում է սույն հոդվածի շրջանակներում աշխարհի տարբեր երկրների վրա բողոքած Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունների քննարկումներին, որոնք հիմնված են տարածաշրջանի և իսլամական աշխարհի երկրներում տեղի ունեցող զարգացումների ու բարեփոխումների, իսլամական ու ոչ իսլամական շարժումների գործունեությունների, մուսուլման և ոչ մուսուլման մտավորականների մտեցումների ու նրանց կրած ազդեցությունների վրա, արդեն ձևավորված կամ ձևավորման ճանապարհին գտնվող անժխտելի իրականություն է: Սակայն պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ազդեցությունները տեղի են ունեցել հեղափոխությունից մեկ քառորդ դար անց՝ ռադիկալ ու բունի եղանակներով, իսկ Արևմուտքն ու Արևելքն էլ իրենց ամբողջ հնարավորություններով դիմադրել ու փորձել են ոչ միայն շնդունել Իրանից սկիզբ առած իսլամապաշտության ալիքը, այլև տապալել կամ նրան պարսության մատնել: Այսուհանդերձ, վերջին տարիներին ականատես ենք այնպիսի արձանատկան փոփոխությունների ինչպիսիք են՝ իսլամապաշտության իսկությունը, նրանից բխող բարեփոխումները, որոնք ընդունվել են ժամանակակից աշխարհի ու նրա գլխավոր դերակատարների (գերիզոր տերությունների ու կազմակերպությունների) կողմից և փորձել են հարմարվել ու համագործակցել նման իրականության հետ: Մյուս կողմից էլ՝ ներկայումս Իսլամական հեղափոխության արձագանքն անցյալի համեմատ ավելի համաչափ, տրամաբանական և արդյունավետ է, իսկ բա-

րեփոխումները շարունակվում են ընթանալ խաղաղ ու քաղաքակիրթ եղանակներով:

Իսլամական աշխարհի և Արևմուտքի կողմից շրջադարձային նման մոտեցումների շնորհիվ 21-րդ դարի հեռանկարը իսլամական երկրների և Արևմուտքի համար կնշանակորվի որպես ավելի արդար ու գործնական, փոխադարձ հարաբերությունների հաստատման, առանց պատերազմների ու բռնությունների համագործակցության դարաշրջան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զ.Է. Լևին, Քաղաքական-հասարակական նոր գաղափարներ և շարժումներ արաբական երկրներում, Յոսեֆ Ազիզի Բանիբարաֆի թարգմանությամբ, «Շերեքաթ Էնթեշարաթ Էլ-Ամի վա Գարիսաֆի», Թեհրան, 1378, էջ 24-229:
2. Ֆազիլ Աբուլանար, Արևմտամետության ու իսլամապաշտության հակադրությունը, Հոջաբոլլահ Տոդայի թարգմանությամբ, Արտաքին գործերի նախարարության հրատարակչություն, Թեհրան, 1378, էջ 75-90:
3. Շահնուդին Մոհամադ Մեդի, Ալ ֆիքրուլ իսլամի ալմուսաիր դարոլփիր ուլ մուսաիր, Բեյրութ, 2000, էջ 171-190:
4. Մոհամադ Ղազալ, Ալ հարաթար ոլ իսլամիյա ալ մուսաթ ֆի վաժլավարան ալ արաիյա, Բեյրութ, էջ 90-105:
5. David, Menashir, The Iranian Revolution and the Muslim world Westview, 1990, pp. 50-90.
6. Սահեթի Մոհամադ Ջավադ, Ուղի: գաղափարներն իսլամական շարժումներում, «Գաֆթարն թարվիլաթն Էլլամի» հրատարակչություն, Ղոմ, 1376, էջ 253-258:
7. Ալգար Համեդ, Ազիզ Ահմադ, «Ջարրոնը» շարժումն իսլամական աշխարհում, Սեյյեդ Մոհամադ Ջաֆարիի թարգմանությամբ, «Շերեքաթն սահամի» հրատարակչություն, Թեհրան, 1362, էջ 50-60:
8. Միշալի Փոլի, Դորան Խալեդ, «Քարվան» հրատարակչություն, Թեհրան, 1381, էջ 17-19:
9. Այասալի Ահմադ, Իսլամական սկզբունքայնությունը և համաշխարհային վարչակարգերը, Մեհրույադ Ազադ Արդաբիլի, «Քեյխան», Թեհրան, 1377, էջ 23-90:
10. Մալաթոյան Մուսաֆա, Իսլամական հեղափոխությունը և արտաքին ազդեցությունների շրջանը, «Փազահ հոզն» հանդես հ. 56, Ղոմ, 1381, էջ 2:
11. Կասեր Հալիլյան, «Թեղա Սրջփոլի տեսությունն ու Իսլամական հեղափոխությունը», «Ռահիրոյ» հանդես, հ. 9, Թեհրան, գարուն 1375:
12. Ամիրի Մոջթաբա, Համինգրոնի և նրա գաղափարակիցների «Քաղաքակրթությունների հանդիպում» տեսությունը, Արտաքին գործերի նախարարության հրատարակչություն, Թեհրան, 1374:
13. Քաչուխյան Հասան, Գաղափարախոսության ավարտ, «Քեյխան», Թեհրան, 1376, էջ 123-140:
14. Ափրուդ Օմադ, Մեկ այլ վերածնունդ, «Քեթաթն Աշնա» հրատարակչություն, Թեհրան, 1376, էջ 123-140:
15. Jhon Foran, Theories of Revolution Recansidered:Toward a fourthd Generation Sociogical theory, 11, 1993, pp. 1-20.
16. Խոդադի Մոհամադ Էսմաիլ, Իսլամական հեղափոխության ազդեցությունն իսլամական շարժումների վրա, Շահիդ Մահալլաթի համալսարանի հրատարակչություն, Ղոմ, 1378, էջ 74:
17. Սեյիդի Քալիմ, Իսլամական շարժումները և Իրանի Իսլամական Հեղափոխությունը, Սեյյեդ Հադի Խոսրովշահիի թարգմանությամբ, «Էրեկաթ» հրատարակչություն, Թեհրան, 1375, էջ 106-108
18. Նույն տեղում, էջ 32-33:
19. See, Iran, The Islamic Revolution and the Outside world, 2001, pp. 1-6.
20. G.Kepel, The Revenge of God. The Rasurgence of Islam, Christianity, and Judaism in the Modern World, combridge Polity Press, 1995, pp. 50-60.
21. Tina Golan, What I think of Imam Khomeini, 2001, pp. 1-6.
22. Ասադի Մոթթեզա, Եվրոպացիների պատկերացումները իսլամի վերաբերյալ, «Նորահար» հրատարակչություն, Թեհրան, 1377, էջ 50-60:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔԸ ԼԻՔՆԱՆՈՒԹ ԵՎ ՏԵՂԻ ՇԻՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՆՐԱՆՈՒԹ

Ալի Բադերի Դավաթարալի

Ներածություն

Աշխարհի մեծագույն հեղափոխությունների պատմությանը և հատկապես Իրանի իսլամական հեղափոխությունից առաջ տեղի ունեցած Ռուսաստանի, Ֆրանսիայի և Նիդարազուայի հեղափոխություններին նետված հայացքը վկայում է, որ հիշյալ հեղափոխություններից ոչ մեկի ազդեցությունը չափանափակվեց երկրի սահմաններով և նրանցից յուրաքանչյուրն իր հերթին լուրջ ազդեցություններ ունեցավ հարևան ու այլ երկրներում: Ռուսաստանում 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունը Արևմուտքում հակազդեցություն առաջացրեց կոմունիստական գաղափարները Եվրոպա «արտահանելու» դեմ, Ֆրանսիայի հեղափոխությունը՝ եվրոպական երկրներում ընդդեմ լիբերալիզմի գաղափարների տարածման, իսկ Նիդարազուայի հեղափոխությունը՝ ԱՄՆ-ում ձախ մտքերի և գաղափարների տարածման դեմ:

Հաշվի առնելով վերոնշյալները, յուրաքանչյուր միջազգային դիտորդի մտա առաջանում է հարց, թե ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ Իրանի իսլամական հեղափոխությունն օտար երկրների վրա և ո՞րն է հեղափոխական երկրների կողմից իրենց գաղափարների տարածման պատճառը: Այս հարցերը կարևոր են ոչ թե որպես հետազոտման բուն առարկա, այլ որպես հիմնական խնդրին անդրադառնալու նախապայման: Այս հոդվածի հիմնական նպատակը Լիբանանում Իսլամական հեղափոխության արտացոլման, երկրի ներքին իսլամիստական խմբավորումների ձևավորման և իսլամական իշխանություն հաստատելու ջանքերի քննարկումն է, ինչի ընթացքում կաշխատենք հնարավորինս պատասխանել հիշյալ խնդիրների շուրջ առաջագույ թուր հարցերին:

Միջազգային ասպարեզում Իրանի իսլամական հեղափոխության արձագանքի և ազդեցության առումով պետք է տեսլ, որ Իրանի իսլամական հեղափոխությունը, որի հիմնական նպատակը կրոնական իշխանության հաստատումն ու բուն մահմեդական կրոնի վերակենդանացումն էր, աշխարհի մյուս մեծ հեղափոխությունների նման, որոշակի ազդեցություն ունեցավ ինչպես հարևան, այնպես էլ աշխարհի այլ երկրների վրա: Իհարկե, այս ազդեցությունը չի սահմանափակվում միայն հեղափոխական երկրներով, այլ յուրաքանչյուր երկիր Կանտի «Հավիտենական խաղաղության» տեսության համաձայն, ձգտում է իրեն նմանեցնել հարևան երկրները: Հիշյալ գործոնի գոյությունը, մի քանի այլ առանձնա-

հատկությունների հետ մեկտեղ, պատճառ հանդիսացավ, որպեսզի հորևան երկրները նույնպես հայտնվեն Իսլամական հեղափոխության ազդեցության միջոց: Այս առանձնահատկություններից են.

1. Իրանի հեղափոխության տեսակը, որն իսլամական էր և հիմնված էր իսլամական գաղափարախոսության վրա:
2. Իսլամի բնույթն ու առանձնահատկությունը՝ որպես ազգային կրոն և այն, որ իսլամը չի պատկանում որևէ կոնկրետ ազգության, երկրի կամ առանձին խմբի և նրա սկզբունքը համաշխարհային է:
3. Իսլամի բուն գաղափարախոսության մեջ գոյություն ունեցող կոչի ու հրավերի առկայությունը, որն Իրանի հեղափոխությանը դեպի իրեն ձգելու պատճառ հանդիսացավ:
4. Իսլամում և Իրանում արդարության ձգտման գաղափարի գոյությունը, որն սկսվեց Իման Հոսեյնի ընդլզմամբ և շարունակվեց մինչև սահմանադրական Իրանում «արդարության տան» ստեղծումն ու իսլամական հեղափոխությունը:

Հիշյալ առանձնահատկությունների գոյությամբ հանդերձ՝ Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը Միջին Արևելքում և աշխարհում նույնանման և միանշանակ չէր: Լիբանանն այն երկիրն էր, որն առավելագույնս կրեց Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը: Լիբանանի բնակչությունը քաղկացած է երեք մեծ՝ քրիստոնյա, սուննի և շիա խմբերից: Սուննիները և շիաները, որոշակի անձնա տարբերություններով, կազմում են երկրի բնակչության մեծամասնությունը: Նրանցից հետո երրորդ համայնքը մարոնիներն են, որոնցից հետո՝ դարուզի, ուղղափառ ու կաթոլիկ համայնքները: Շիաները, որոնց ներկայությունը Լիբանանում սկսվում է օսմանյան երրորդ խալիֆի ժամանակաշրջանում և պայմանավորված է Արուզար Գուֆարի Լիբանան արտոքով, մեծամասամբ բնակվում են Լիբանանի հարավային և Ջաբալի շրջակայքում, ինչպես նաև Սուրում, Սեյդայում և Բեյրութում: Նրանք իշխանությունից հեռու լինելու և երկրի հարավային հատվածում փակված լինելու պատճառով, Լիբանանի հյուսիսային շրջաններում բնակեցված սուննիներից և քրիստոնյաներից ավելի հետամնաց էին:

1958 թվականից սկսած՝ ներքին պատերազմների ընթացքում Լիբանանի շիաները ձգտել են սուննիների և քրիստոնյաների մեջ չեզոք դիրք գրավել և մնալ նույն վիճակում: Իհարկե, ոչ այն պատճառով, որ գոհ էին քրիստոնյաների ղեկավարությունից, այլ՝ բռնի ու դաժան սուննիների կրկին իշխանության գալու ահից ու սարսափից դրդված: Այս չեզոքությունը երբեք հարգանք չի վայելել և Լիբանանի սուննի խմբավորումները և ծախակողմյան կուսակցություններն աշխատել են ներքին պառակտումներ առաջացնել շիաբնակ քաղաքասերում և բազմարևոյք սադրանքների արյուներում նրանց ենթարկել քրիստոնյաների հարձակումնե-

րին: Հենց այս պատճառով էլ դուկտ. Մուստաֆա Չեմբանն ու Իմամ Մուսա Սադրը աշխատում էին հիշյալ բնակավայրերում ռազմական իշխանություն հաստատել և կրթել շիա երիտասարդներին: 1975 թվականին Լիբանանի բնակչության կազմը խախտվեց: Բազմաթիվ գործունեների ազդեցության արդյունքում, որոնցից են՝ ներգաղթը, Լիբանանի հարավային քաղաքների սահմարափակիչների և բժշկական պայմանների բարելավումը, շիա համայնքը մեծացավ: Լիբանանի շիաներն սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել երկրի տնտեսական, քաղաքական և հասարակական ասպարեզներում: Իրանի իսլամական հեղափոխության իրականացումն ու Իրանի աջակցելու պատրաստակամությունը, Լիբանանի շիաների մոտ երկրի քաղաքական և հասարակական կյանքին մասնակցելու մեծ ոգևորություն և ձգտում առաջացրին: Նախքան Իսլամական հեղափոխությունը Իրանը Լիբանանի հետ համագործակցում էր Իսրայելից բարուն և չէր միջամտում նրա ներքին կյանքին: Իրանի շահը ոչ մի ջանք չգործադրեց Լիբանանի ներքին պատերազմներին միջամտելու և շիաներին օգնելու համար: Իսկ Միրիայի գործողություններն ամբողջովին այլ էին՝ տարբեր խմբավորումների ձևավորմամբ աշխատում էր անրապնդել իր ներկայությունը Լիբանանում՝ խախտելով տարածաշրջանային հաշվեկշիռը: Շահի իշխանության օրոք Լիբանանում իրանցիների ներկայությունն ու գործունեությունը պայմանավորված էին ոչ թե պետական ու պաշտոնական, այլ՝ անձնական բնույթով: Օրինակ, դուկտ. Չամբանը Բեյրութում և Լիբանանի հարավային շրջաններում ստեղծեց ուսանողների իսլամական միություններ և յուրաքանչյուր շաբաթ հանդես էր գալիս իսլամափոխական դասախոսություններով: Հիշյալ միությունները մնան էին Իրանի, Եվրոպայի և ԱՄՆ-ի ուսանողների իսլամական միություններին և հենց այս միությունների անդամներն էլ դարձան ապագա պատերազմների մասնակիցներն ու իրենց երկրի պանծալի պաշտպանները: Դուկտ. Չամբանը՝ Իմամ Մուսա Սադրի հետ մեկտեղ, 1972 թվականին ստեղծեց հարավային Լիբանանի և Պաղեստինի շիաների պաշտպանության «Ալ մահրումին» շարժումը, իսկ երեք տարի հետո՝ իսլամական դիմակայության բանակը, որպես շարժման ռազմական թև, որի արաբերեն հապավումն է «Ամալ»: Լիբանանի շիաներն Իրանի հոգևորականների հետ հարաբերությունների մեջ էին մնա մինչև Իսլամական հեղափոխությունը: Ներքին բախումների, պատերազմների դժվարին պահերին Իրանի բարձրաստիճան հոգևորականներն ամեն կերպ աջակցում էին Լիբանանի շիաներին՝ ցուցաբերելով նյութական և քաղաքական մեծ աջակցություն: Իսկ 1975 թվականին Դոմի բարձրաստիճան հոգևորականների ներկայացուցիչները մեկնեցին Լիբանան՝ իրենց հետ տանելով մեծաքանակ օգնություն: Շեյխ Մոհամմադ Մահդի Շամիօղլին այս մասին ասել է. «Իրանցի շիա հոգևորականների և «Հանուն իսլամի պայքարի» մասնակիցների հետ մեր համագործակցությունն սկսվել էր

դեռևս նախքան Իսլամական հեղափոխությունը: Մեր եղբայրները մեզ չառ էին օգնում, իսկ Իրանից եկած մեր ընկերները, որոնք Իմամ Մուսա Սադրի դաշնակիցներն ու համախոհներն էին, մեզ հետ չառ լավ հարաբերությունների մեջ էին»: Իմամ Մուսա Սադրը անձամբ մտերիմ հարաբերությունների և անմիջական կապի մեջ էր Իրանի բարձրաստիճան հոգևորականների հետ և վաչելում էր վերջիններիս աջակցությունը: Սեյյեդ Մուսա Սադրը՝ Այաթոլա Խոյիից ստացած բյուջեով հիմնադրեց մի կրթական կենտրոն, որն զբաղված էր քաղաքի երիտասարդության կրթական հարցերով, և իսլամական գիտությունների տարածման մի դպրոց՝ Սադրում: Ուստի, հաշվի առնելով Իրանի և Լիբանանի շիաների դավանաբանական և մշակութային սերտ հարաբերությունները, որոնք սկսվել էին դեռևս Իսլամական հեղափոխությունից առաջ, Լիբանանի յուրաքանչյուր շիա իրեն համարում էր Իրանի մի մասնիկը և հենց այս դավանաբանական, պատմական ու մշակութային խոր կապերի շնորհիվ էլ Իսլամական հեղափոխությունից հետո Լիբանանի շիաները հայտնվեցին Իրանի ուժեղ ազդեցության ներքո, իսկ Իրանը դարձավ Լիբանանի շիաների գործունեության լայն ասպարեզ:

Լիբանանի հանդեպ վարած Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականությունը

Իսլամական հեղափոխությունից հետո Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականությունը լուրջ փոփոխություններ կրեց, որոնց արդյունքում Արևմուտքի հետ դաշնակցությունը վերածվեց Արևմուտքի և Իսրայելի հետ թշնամանքի և ԻԻՀ-ն սկսեց աջակցել բոլոր այն շարժումներին և պետություններին, որոնք պատերազմում էին Արևմուտքի դեմ: 1982 թվականի հունվարի 6-ին Լիբանանի վրա Իսրայելի հարձակումը հարձար առիթ հանդիսացավ, որպեսզի Իրանի կառավարությունն առավել մեծ ուշադրություն հատկացնի Լիբանանին և վերանայի իր արտաքին քաղաքականությունը, որն Իսլամական հեղափոխության մեծ առաջնորդի առաջարկությամբ, պայմանավորված էր Իսրայելի դեմ պայքարի գաղափարով: Արդյունքում ԻԻՀ-ն որոշեց զինվորական խմբավորումներ ուղարկել Իսրայելի դեմ պատերազմող Լիբանան՝ մահմեդականներին օգնելու նպատակով: Մյուս կողմից՝ Լիբանանի մահմեդականները, որոնք Իսրայելի հարձակման հետևանքով հայտնվել էին բազմաթիվ ճնշումների ներքո և նրանց միակ հույսն Իրանի Իսլամական Հանրապետությունն էր, բազմաթիվ նամակներ ու դիմումներ էին ուղարկում Իրան՝ ցանկանալով ավելի ընդլայնել և խորացնել Իրանի ներկայությունն ու բազմակողմանի մասնակցությունը Լիբանանի ռազմաքաղաքական ասպարեզում: Արեգակնային օրացույցի 1361 թվականի արան ամսին (1982թ. հոկտեմբեր-նոյեմբեր) Հարավային Լիբանանի մահմեդա-

կանները նաևակ հղեցին Իման Խոմեյնուն, որում ասվում էր հետևյալը. «Քանի որ մենք ձեզ համարում ենք աշխարհի բոլոր մահմեդականների առաջնորդ, խնդրում ենք, որ առաջին իսկ հնարավորության դեպքում ուշադրություն դարձնեք մեր խնդրին, որպեսզի բոլոր կեղեքվածների ձայնը հասնի աշխարհին և բոլորն իմանան, թե ինչ վիճակում են Լիբանանի մահմեդականները»:

Այդ նպատակով Միդիա մեկնեց Իսլամական հեղափոխության պահապան կորպուսի 800 հոգանոց մի խումբ: Ռազմական խմբի մեկնումից 10 օր հետո, Իման Խոմեյնին իր ելույթում հայտարարեց, որ Լիբանանի վրա Իսրայելի հարձակումն ընդամենը սովորական սադրանք էր, որով Ամերիկյան փորձում էր Իրանի ժողովրդի ուշադրությունը շեղել Իրաքի հետ պատերազմից և այդպիսով Իրաքի իշխանությանը փրկել պարտությունից: Այս ելույթից հետո Իսլամական հեղափոխության պահապան կորպուսի ռազմական գործողություններն Իսրայելի բանակի դեմ դադարեցվեցին, սակայն Լիբանանի շիաների ռազմական և հոգևոր սկզբունքների ուսուցման հարցում առկա անհրաժեշտությունն իրանական գործադիրն մի նոր առարկություն տվեց: «Կերջիններս Լիբանանի պատերազմի դաշտ մտան որպես ռազմական ուսուցիչներ, խորհրդակցանքեր ու մարզիչներ՝ Լիբանանի բնակչությանը սովորեցնելով, թե ինչպես պետք է պաշտպանել հայրենիքն ու իրենց: Այս նպատակով իրանական զորախումբը բաժանվեց երկու մասի և տեղակայվեց Ալշեքի և Ջեմտա ռազմակայաններում՝ ուսուցանելով լիբանանցի կամավորականներին: Իհարկե, այս հարաբերություններն աստիճանաբար փոխարինվեցին ֆինանսական և մշակութային համագործակցությամբ և մինչ օրս շարունակվում են:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Իրանի իսլամական հեղափոխությունը Լիբանանում ունեցավ երկու կարևոր արձագանք՝ Լիբանանում իսլամականության աճը և Իսրայելի դեմ պայքարի ուժեղացումը:

1. Իսլամականության աճ Լիբանանում

Լիբանանում իսլամականության աճը կարևորվում է Պաղեստինի հետ անմիջական հարևանությամբ: Հակառակ տարածված կարծիքի, որը Լիբանանում շիա իսլամականության տարածումը վերագրում է Իրանին, այս գործընթացի սկիզբը պայմանավորվում է ոչ թե Իրանով, այլ՝ Իրաքով և սկիզբ է առնում դեռևս 1960 թվականից, երբ Նաջաֆի հոգևոր ճեմարանում սկսվեց շիա ուսմունքի քաղաքական-կրոնական վերածնունդը՝ առաջնորդվելով խորհրդատվի առաջնորդ այբոբա Մոհամմեդ Բադերի կողմից: Այս ճեմարանը դարձավ շիա ուսմունքի գործնական կենտրոնն ու «Ալլոլի էլամի» կուսակցության հիմնական հենքը, որտեղ քարոզվում էր վերածննդի խորհուրդը՝ Իրանի, Լիբանանի և Պարսից ծո-

գի շիաներին կոչ անելով իրականացնելու հասարակական փոփոխություններ և վիճելով նրանց հեղափոխական գաղափարներով: Լիբանանի համաքյա բոլոր շիա առաջնորդներն այս ճեմարանի սաներից են:

Լիբանանում իսլամականության աճը կարելի է բացատրել երեք հիմնական գործոններով.

- ա) Լիբանանի վրա Իսրայելի հարձակումը,
- բ) պանարաբիզմի և սոցիալիզմի ալիքներից հիասթափությունը,
- գ) Իրանի իսլամական հեղափոխությունը:

Երբ Իման Մուսա Սադրի բացակայության պատճառով շիա համայնքը թուլացել և գտնվում էր հուսահատ ու անորոշ վիճակում, հայտնվեց մի լույս, որը լուսավորեց և հուսադրեց նրանց սրտերը: Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի և նրա առաջնորդ Իման Խոմեյնու շնորհիվ բոլոր հույսերը կապվեցին Իրանի հետ, և քանի որ Իրանի հեղափոխությունը նույնպես համարվում էր շիական շարժում, այն հանդիսացավ Լիբանանի բոլոր շիաների ոգեշնչման աղբյուրը՝ զարմանալիորեն ազդելով վերջիններիս վրա: Այս ազդեցության արդյունքում ոչ միայն վերացան Իման Մուսա Սադրի բացակայությամբ առաջացած ծանր ու անմխիթար հետևանքները, այլ նաև մեծացավ երկրում ազատագրական պայքարին ձգտողների և հակակոմիսսիոնների թիվը: Հինմուվին և որակապես փոփոխվեց նաև Լիբանանի շիա համայնքի անդամների գաղափարական մակարդակը: Երկրում ստեղծվեց մարդու իսլամական գաղափարախոսությամբ զինված մի շարժում: Բացի այդ, Իրանի իսլամական իշխանությամբ ներշնչված՝ Լիբանանի շուրջ 60 հոգևոր առաջնորդներ ստորագրեցին մի հայտարարություն, որը ներկայացնում էր Լիբանանում իսլամական իշխանության ստեղծման մի նախագիծ, ինչը ինքնին վկայում էր Լիբանանի հոգևոր առաջնորդների և մահմեդական բնակչության վրա ունեցած Իսլամական հեղափոխության խոր ազդեցության մասին:

Լիբանանի իսլամական խմբավորումների կարգավիճակը

Լիբանանի իսլամականներին պետք է բաժանել երկու՝ շիա և սուննի խմբերի: Կարևորագույն շիա իսլամական խմբավորումը «Հեզբոլա» կուսակցությունն է: Ներքին պատերազմների շարունակականությունից, Իսրայելի կողմից Լիբանանի գրավումից, կենտրոնական իշխանության բացակայությունից, երկրում ստեղծված անկայունությունից, ինչպես նաև Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո, Լիբանանի շիաների քաղաքականացման գործընթացը կատարելագործվեց և այս խմբավորումը եզրային դիրքից տեղափոխվեց դեպի քաղաքական գործընթացների կենտրոն: Լիբանանի շիաների քաղաքականացումը նրանց մեջ առաջացրեց արմատական հակումների աճ: Հենց այսպիսի պայման-

ներում էլ ծնվեց Լիբանանի «Հեզբոլլա» շարժումը, որն իր ռազմավարությունը ձևավորեց Իսրայելի, Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի դեմ պայքարի, գրավյալ հողերի ու իրավունքների վերադարձի և իսլամական իշխանության հաստատման գաղափարների հիման վրա:

Սեկ այլ շիա խմբավորում է «Ամալե Էլսամին», որը 1982 թվականի հունվարի 21-ին հակադրվեց «Ամալ» շարժման քարտուղար Նաբին Բարիի հետ և, առանձնանալով ստեղծեց նոր խմբավորում: Այդ խմբավորումը ղեկավարեց Հուսեյն Մուսավիհն, որը հայտնի էր Արուսեշան անունով: Նա այդ իրականացրեց Թեհրանում «Ամալ» շարժման խոսնակ և ներկայացուցիչ Սեյեդ Էբրահիմ Ամինի օգնությամբ, որը ևս հեռացել էր «Ամալ»-ից: Հիշյալ խմբավորման գաղափարախոսության հիմքում ընկած էին Իմամ Խոմեյնու ուսմունքն ու վերջինիս ստեղծած հոգևոր իշխանության մոդելը: Այն սերտ կապեր ուներ Իսլամական հեղափոխության պահապան կորպուսի հետ:

Ի տարբերություն թվով և քանակությամբ սակավ իսլամական շիա խմբերի, սուննի իսլամական խմբավորումներն ու կազմակերպություններն ավելի շատ են, որոնցից մի քանիսն ստեղծվել են դեռևս Իսրայելի հարձակումից տարիներ առաջ: Նմանատիպ կուսակցություններից են «Հեզբոլլավեն», «Ամալ» ու «Ջեմաաթե Էլսամին», որոնց սկզբնական ձևավորումը պայմանավորվում է 1946 թվականին Արաբական միությունում Ջամալ Աբդոլմասեթի բուռն գործունեությամբ: Այս ամենից բացի, Լիբանանում գոյություն ունեն նաև «Թոհիդե Էլսամի» (որը կազմավորեց Շեյխ Սաիդ Շաբանը՝ 1982 թվականին), «Ալլահաբաշը», Իսլամական քարեգործական կազմակերպությունը, Հոգևոր դիմակայումը, Հեղափոխական արդարություն կազմակերպությունը, «Մոջահեդ» իսլամական շարժումը, Իսլամական օգնականների հավաքը, Իսլամական ճակատը, Մահմեդական կրոնագետների միությունը և Լիբանանի իսլամական դիմակայության ճակատը, որոնց միակ ընդհանրությունն Իսրայելի դեմ պայքարն է: Այս խմբավորումները մնացած բոլոր հարցերում տարածայնություններ ունեն և քացի «Ամալ», «Թոհիդե Էլսամի» և «Աիրաշ» խմբավորումներից, թվարկված բոլոր կազմակերպությունների և շարժումների անդամների թիվը 500-ից չի անցնում:

2. Իսրայելի դեմ պայքարի սաստիկացումը

Ինչպես նշվեց, Հարավային Լիբանանի վրա Իսրայելի հարձակումից հետո, Իրանի Իսլամական Հանրապետության ուշադրությունն այդ երկրի վրա ավելի կենտրոնացավ, իսկ Իրանի վարած քաղաքականությունը հիմնվեց Իսլամական հեղափոխության առաջնորդի առաջադրած՝ Իսրայելի դեմ պայքարի գաղափարների վրա: Իրանի Իսլամական Հանրապետությունը լինելով պատերազմա-

կան իրադրության մեջ, շտապեց օգնել Լիբանանի ժողովրդին: Իրականում, Ինչ ներկայությունն սկսվեց ռազմական, քաղաքական ու մշակութային գործունեությամբ և Լիբանանի մահմեդականներին առաջնային անհրաժեշտության պահանջների ապահովմամբ: Լիբանան մուտք գործելուց հետո Իրանը վերածվեց Լիբանանի քաղաքական, հասարակական և ռազմական հարցերում ազդեցիկ գործնի: Լիբանանում հաստատվելուց անմիջապես հետո՝ Իրանն ակտիվորեն սկսեց գրավել իսլամական արժեքների տարածմամբ և ջանում էր իսլամական ու ազգային խմբավորումներին աջակցելով՝ գրավել նաև մյուս խմբերի ուշադրությունը և հաստատել իր բարի նպատակները, որոնք ուղղված են Լիբանանի տարածքային ամբողջականությանն ու ժողովրդի մեծամասնության ցանկության իրականացմանը: Միաժամանակ, Լիբանանում Իրանի ներկայության հիմնական նպատակն Իսրայելի դեմ պայքարն է, ինչի համար էլ այնտեղ ստեղծվեց Իրանի քաղաքականության կողմնակից «Հեզբոլլա» խմբավորումը: «Հեզբոլլան» Լիբանանում Իրանի իսլամական հեղափոխության կատարյալ արձագանքն էր: Այս կապակցությամբ «Հեզբոլլա»-ի անդամներից մեկն ասել է. «Մենք Լիբանանում Իրանի իսլամական հեղափոխության խորիքայնիշն ենք: Իրանի իսլամական հեղափոխությունը մեր ներշնչանքի աղբյուրն է: Իման Խոմեյնին մեր մեծ առաջնորդն է, նրանով ներշնչվում են մեր առաջնորդները»: «Հեզբոլլա»-ի առաջնորդներից մեկը՝ Սեյեդ Էբրահիմը, Հեղափոխության պահապան կորպուսի ղեկի մասին ասել է. «Մեր պահապան եղբայրները Ի-Ի-Հ-ից Լիբանան բերեցին հեղափոխական ոգի և ուղի, անձնագոհություն և Իման Խոմեյնու առաջնորդությունը: Թվում է, թե մենք աշխարհագրորեն կապված ենք Իրանի Իսլամական Հանրապետության հետ և ոչ մի տարածքային կամ սահմանային հեռավորություն մեր միջև գոյություն չունի»: Իր մեկ ուրիշ հարցազրույցում Իսլամական հեղափոխության մշակույթի և արժեքների Լիբանանի վրա ունեցած խոր ազդեցության առումով նա նշել է. «Իրանի իսլամական հեղափոխությունը դեպի մեզ եկավ իր նպատակներով, բովանդակությամբ և ուղղվածությամբ, ուստի մենք համոզված ենք, որ մեզ ոգևորողն ու առաջնորդողն Իրանի Իսլամական Հանրապետությունն էր»:

Իրականում պետք է ասել, որ Իսլամական հեղափոխությունը լիբանանցիների երակներում նոր արյուն ներարկեց, արյուն, ինչը նրանց մղեց դեպի հաղթանակ և երկրից Իսրայելի վտնդելուն՝ 1379 թվականի խորդալի 5-ին (2000 թվականի մայիսի 26):

Իրանի կողմից Լիբանանի դերի ընկալումը

Լիբանանն Իրանի ղեկավարների համար կարևոր է երկու տեսանկյունից: Առաջինը, որ մահմեդական երկիր է և ունի շիա համայնք: Երկրորդն այն է, որ եր-

կիրը գանվում է Իսրայելի դեմ պայքարի ճակատային գծում: Այս երկու առանձնահատկությունները պատճառ հանդիսացան, որպեսզի Լիբանանն Իրանի կառավարության կողմից յուրահատուկ տեղ և դեր ստանա: Այս առճշոթյամբ Իմամ Խոմենիին ասել է. «Մենք Լիբանանը համարում ենք Իրանի մի մասը: Մենք իրարից բաժանված չենք, մենք նման ենք միմյանց»: Իսրայելի կողմից մահմեդական և շիա երկրի գրավումն Իմամ Խոմենիու տեսանկյունից այնքան կարևոր խնդիր էր, որ Հարավային Լիբանանի վրա Իսրայելի հարձակման առումով իր հղած ուղերձներից մեկում ասել է. «Այսօր մահմեդականների ամենամեծ խնդիրն այն է, որ նրանց խնդիրներն ու բողոքները լսող ականջները խլացել են, դժվարություններն ի հայտ բերող և մահմեդականներին ի նպաստ խոսացող լեզուները՝ լսվել, իսկ դաժանություններն ու անարդարությունները տեսնող աչքերը՝ կուրացել: Մենք ի՞նչ կարող ենք ասել այս խուլերին, համբերին և կույրերին: Տարածաշրջանային պետությունների կարծիքով՝ Լիբանանում տեղի ունեցածը ողբերգություն չէ՞: Արդյոք սա իսլամին և աշխարհի բոլոր մահմեդականներին ուղղված մի ողբերգություն չէ: Եթե խուլ չեն, ապա ինչո՞ր չեն լսում լիբանանցի մեր բարեկամների ճիշերն ու ողբը: Եթե կույր չեն, ապա ինչո՞ր չեն տեսնում Իրանում և Լիբանանում օրեցօր ավելացող սպանությունները: Իսկ եթե տեսնում և լսում են, ապա ինչո՞ր ոչինչ չեն ասում այդ ողբերգությունների մասին»:

Լիբանանում իսլամական իշխանություն հաստատելու ջանքերը

Յուրաքանչյուր հեղափոխություն իր գագաթնակետին է հասնում այն ժամանակ, երբ իր ներքին հեղափոխական նպատակների իրականացման հետ մեկտեղ, դրանք իրականացնում է նաև այլ երկրներում՝ իր ազդեցությունը տարածելով նաև հարևանների վրա և համերաշխություն հաստատելով նրանց հետ: Միայն այս դեպքում կարող է հեղափոխական իշխանությունն ապահովել իր ներքին անվտանգությունն ու դիմակայել գերտերությունների արտաքին ճնշումներին: Իրանի իսլամական հեղափոխությունը նույնպես, որ կոչված էր համայն աշխարհում արդարության հաստատմանը, իրական իսլամի վերակենդանացմանն ու անհավատության վերացմանը, ջանաց այս ճանապարհին իր բոլոր մտքերը, գաղափարներն ու կարգախոսները փոխանցել Լիբանանի շիաներին, որպեսզի այստեղ հաստատվի Իրանի նման իսլամական պատգամներով և սկզբունքներով պայմանավորված մի իշխանություն: ԻԻՀ-ն այս նպատակն իրագործելու համար օգտվեց երկու տիպի՝ ռազմական և խաղաղարար միջոցներից:

Այս առումով ԻԻՀ-ն սկսեց աջակցել Լիբանանի զինված հեղափոխական խմբավորումներին, որոնցից ամենակարևորը «Հեզբոլլան» և «Ամալն» էին: Իսլամական հեղափոխության առաջին տարիներին Իրանից անընդմեջ Լիբանան պատվիրակներ ուղարկվեցին, 1979 թվականին Շահիդ Մոհամադ Մոնթազերին հավաքագրեց և Լիբանան ուղարկեց Պաղեստինի ազատագրման կողմնակից իրանցի կամավորների մի ամբողջ խումբ: Վերջինս հանդգնած էր, որ իսլամի և սիոնիզմի պատերազմում պետք է կռվել սիոնիստների դեմ, իսկ Լիբանանի հարավային հատվածը դրա համար լավագույն ճակատն է:

Այսպիսով, Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Լիբանանի շիաները զգացին դրա արդյունքները: «Ամալ» շարժման հոգևորական ղեկավարները, ջանալով ներկայացնել շարժման կրոնական դիմագիծը, հրապարակում էին դեպի կրոն վերադարձի կոչեր և կարգախոսներ: Այդ իսկ պատճառով, արկոնով վաճառքով զբաղվող վաճառասարհներում և կարսրեններում տեղի ունեցած պայթյունները վերագրվում էին «Ամալ» խմբավորմանը: Իրանի և Սիրիայի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի Իսլամական հեղափոխության պահապան կորպուսի կամավորների ջոկատներն ուղարկվեցին Լիբանան՝ Իսրայելի հարձակումներին դիմակայելու նպատակով: Առաջին կամավորական խումբը ղեկավարում էր Հաջի Ամադ Մոթվանսիխանը՝ Դամասկոս գալով 1982 թվականի հունիսին՝ Լիբանանի վրա Իսրայելի հարձակումից ընդամենը 6 օր հետո: Այս ուժերի ներկայությունն ապահովում էր ոչ միայն ռազմական, այլ՝ գաղափարական և հոգևոր աջակցություն: Նրանք իրենց հետ բերում էին Իսլամական հեղափոխության գաղափարներն ու Իմամ Խոմենիու պատգամները: Իրանի իսլամական հեղափոխության բոլոր կարգախոսները կարճ ժամանակահատվածում հայտնվեցին քաղաքների և գյուղերի շենքերի պատերին ու դարպասներին:

1982 թվականի հունիսին Թեհրանում անցկացվեց ազատագրական շարժումների կոնֆերանս, որին մասնակցում էին նաև Լիբանանի իսլամական խմբավորումների և ազատագրական շարժումների ղեկավարներ Սեյյեդ Մոհամադ Հոսեյն Ֆազլոլլան, «Հեզբոլլան»-ի առաջնորդ Շեյխ Ռադեբ Հարաբը և Շեյխ Մոթհի Թոֆեյլին: Մասնակիցներն Իրանից պահանջեցին օգնել իրենց: Իրանական առաջին զինվորական պատվիրակությունը կազմավորվեց պաշտպանության նախարար գեղապետ Սեյիմի, պահապան կորպուսի հրամանատար Ռեզաիի, ԻԻՀ ցամաքային զորքերի հրամանատար, գեղապետ Մալայդ Շիրազիի մասնակցությամբ: Վերջիններս հանդիպեցին Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի հետ՝ Սիրիայի ցամաքային տարածքով Լիբանանում Իրանի ռազմական ներկա-

յուրյունը ապահովելու նպատակով: Բաայրեք քաղաքի Իմամ Ալի մզկիթում հիմնվեց «Նահատակության սիրահարներ» կենտրոնը, որտեղ կազմակերպվում էին զինվորական պատրաստակամության դասընթացներ: Արդյունքում ձևավորվեց 180 հոգաճանց լիբանանցի կամավորականների բանակ, որոնցից շատերը ներկայիս «Հեզբոլլա»-ի կադրերից և հոգևորականներից են: Իրանը միաժամանակ ակտիվ գործունեություն էր ծավալում լիբանանյան ճակատում և քիվուներում գործող կամավորականներին ուսուցանող կենտրոններում: Հիշյալ գործողությունների արդյունքում Իրանը կարողացավ ձևավորել Իսրայելի դեմ պայքարի «Ղուզ» կորպուսը:

Խաղաղարար միջոցներ

Խաղաղարար միջոցների ոլորտում Իրանը կիրառել է երեք հիմնական մեթոդ՝ քարոզչություն, քաղաքական և ֆինանսական աջակցություն: Քարոզչության բնագավառում ակտիվորեն տարածվել են Իսրայելի գործողությունները դատապարտող գրքեր, հայտարարություններ, հրապարակվել ուղերձներ, հոդվածներ ու ելույթներ: Քաղաքական աջակցության բնագավառում Իրանում ստեղծվել են Լիբանանի կամավորականների և ազատականների տարբեր խմբավորումների ներկայացուցչություններ, որոնցից են «Հեզբոլլա»-ն և «Ամալ»-ը: Իրանն օգտագործել է բոլոր հնարավոր աղիբները ՄԱԿ-ում, Իսլամական կոնֆերանսում կամ այլ միջազգային հավաքներում բազմաթիվ ելույթներում դատապարտել Լիբանանում Իսրայելի ուճրագործությունները:

Իսրայելի դեմ պայքարի գործում Իրանի կիրառած մյուս միջոցներից է իսլամական ջիհադի (սրբազան պատերազմ) խմբավորումներից ցուցաբերած նյութական աջակցությունը, որոնց շարքում, ամբողջապես շիա լինելու պատճառով, «Հեզբոլլա»-ն ստացավ ամենամեծ օգնությունը: Վերջինս Իրանից տարեկան երկու անգամ նյութական աջակցություն էր ստանում: Ներկայումս Իրանը «Հեզբոլլա»-ին նյութական աջակցություն է ցուցաբերում տարբեր հիմնադրամների և կազմակերպությունների միջոցով, որոնք վերահսկվում են ԻԻՀ գերագլխի հոգևոր առաջնորդի կողմից և ունեն պետությունից անկախ բյուջե: «Հեզբոլլա»-ի նկատմամբ մեկ ուրիշ աղբյուր է հոգևորականների բոլորակողմանի Լիբանանի շիաներից հավաքվող գումարը, որը ծախսվում է որուշակի նպատակների համար: Այս նկատառումով 1995 թվականին Այաթոլա Խամենեին Լիբանանում իր հոգևոր պատվիրակներ և ներկայացուցիչներ նշանակեց «Հեզբոլլա»-ի գլխավոր քարտուղար Մեյլե Նասան Նասրոլլային, Շեյխ Մոհամադ Յազբեկին և Բապերե քաղաքի ուրբաթօրյա աղոթքի առաջնորդին: Իրանի կողմից Լիբանանին ցուցաբերած նյութական աջակցության հաջորդ փուլերն իրականացվեցին քա-

րեզորվական օգնության նորաստեղծ կոմիտեների միջոցով: Բացի դրանից, համազանկության արկղեր տեղադրվեցին նաև Լիբանանի բոլոր փողոցներում: Աջակցության հաջորդ քայլը Լիբանանի բնակչությանը սոցիալական, տնտեսական և մշակութային ծառայությունների մատուցումն էր, որն իրականացվում էր Իրանի կառավարության և ժողովրդի անմիջական ջանքերով: Պահապան կորպուսի մուտքը Լիբանան իրականում մշակութային հեղափոխության սկիզբն էր, քանզի քանակի անդամներն իրենց հետ Լիբանան բերեցին Իսլամական հեղափոխության և Իմամ Խոմենեյնի գաղափարներն ու կոչերը: Վերջիններս իրենց վարքագծով և մոտեցումով կարողացան գրավել բոլորին: Նրանց իսլամական բարոյականությունը, բարեպաշտությունն ու համեստությունը մարդկանց մոտ բյուրեղացրին Լիբանանում նախատիպը չունեցող հավատացյալ զինվորականի մի նոր կերպար, քանզի Լիբանանի բնակչությունը մշտապես տառապում էր կոչու ու կոպիտ զինվորականների վարքագծից: Իսկ պահապան կորպուսի զինվորներն ազատ ժամերին և օրերին մեկնում էին Բաղայի հովտի գյուղեր, օգնում գյուղացիներին: Արդյունքում, բնակչությունն այնքան սիրեց նրանց, որ վերջիններիս հագուստներն ու կերակուրը սրբազան մատուցեց համարեց: Վերջնականապես հաստատվելուց հետո, Պահապան կորպուսը սկսեց հիմնել հասարակական վայրեր և հիվանդանոցներ, որոնք գործելու էին Լիբանանի շիաներին հատկացված Իրանի ֆինանսական աջակցությամբ: «Հեզբոլլա»-ի մասնաճյուղերի ստեղծումից հետո, Կորպուսի հիշյալ կենտրոնները հանձնվեցին այդ մասնաճյուղերին, որոնց տնօրինումը նույնպես հանձնվեց լիբանանցիներին:

1984 թվականից ի վեր «Հեզբոլլա»-ն աստիճանաբար ընդլայնեց ծառայությունների իր շրջանակը և սկսեց համագործակցել Լիբանանի հիմնականում շիաքրեական տարբեր շրջանների դպրոցների, պոլիլիյինիկաների ու հիվանդանոցների հետ: Կուսակցությունը հիմնեց նաև՝ «Նահատակ» հիմնադրամը (1983թ.), Կատուցողական ջիհադը (1984թ.), Իսլամական առողջապահության կազմակերպությունը (1985թ.), Բարեգործական կոմիտեն (1987թ.), Հաշմանդամների կոմիտեն (1990թ.) և այլն: Բոլոր հիշյալ կազմակերպություններն անմիջականորեն համագործակցում են Իրանում գործող մասնատիպ կազմակերպությունների հետ, սակայն տնօրինվում են լիբանանցիների կողմից: Ստեղծվեց նաև «Իսլամական հեղափոխության ձայն» ռադիոկայանը, որն օրվա ընթացքում 8 ժամ շարունակ երբեք չէր:

Իսլամական հանրապետությունը որպես Լիբանանի խմբերի միավորող

Լիբանանի մարտնչող խմբերի հիմնական խնդիրներից մեկը պատակովաժուրյունն էր, ինչը ջլատում էր նրանց ուժերը: Շիա և սուննի խմբերի, ինչպես նաև

քրիստոնյաների և մահմեդականների տարածայնությունները արտաքին տարրերի ներթափանցման հետևանք էին: Իհարկե, արտաքին գործոնների մասին խոսելիս չպետք է մոռանանք նաև տարածայնության ծագման ներքին գործոնները, որոնցից են՝ սկզբունքների, նպատակների, պայքարի միջոցների և ձևերի տարբերությունները: Ինչպես արդեն նշեցինք, տարածայնության և պառակտման առաջին փաստի հետ մենք բախվում ենք «Ամալ» խմբավորման մոտ, ինչի հետևանքով առաջացավ «Իսլամական ամալ»-ը, որը համոզված էր, թե նախնական «Ամալ»-ը շեղվել է իր առաջնային սկզբունքներից և նպատակներից: Հետագայում ավելի ակներև տարածայնություններ ծագեցին շիա և սուննի խմբավորումների միջև: Իրանի Իսլամական Հանրապետությունը, որպես իսլամական կենտրոն և իսլամական շարժումների առաջնորդող ուժ, մշտապես ձգտել է քննարկել և քարոնորոգել իր, ինչպես նաև իսլամական խմբավորումների սկզբունքները, գործողությունները, մեթոդներն ու ձգտումները՝ աշխատելով ստեղծել լիբանանյան տարբեր խմբավորումներին հարմար, համընդհանուր չեզոք իսլամական արժեհամակարգ: Լիբանանի տարբեր խմբավորումների մեջ պառակտմանը և քախտմանին վերջ դնելու նպատակով ԻԻՀ հրավիրվեցին «Հեզբոլլա» և «Ամալ» խմբավորումների առաջնորդները: Իրանի կողմից մեծ քանակությամբ վեցին այս երկու կարևոր շիա խմբավորմանը հաշտեցնելու նպատակով և հաջողվեց կանխել ներքին պատերազմի արդյունքում առաջացող խռովությունն ու պառակտումը: Հիշյալ երկու խմբավորման ղեկավարների հանդիպումը ԻԻՀ վերահսկողության ներքո, անցավ քարեկամական ջերմ մթնոլորտում և խորապես նպաստեց կողմերի հաշտեցմանն ու մերձեցմանը: Երկու խմբավորման ընդհանրությունների և տարբերությունների վերլուծությունից հետո ԻԻՀ սկսեց առավել շեշտադրել նրանց ընդհանրություններն ու աշխատեց ամեն կերպ մերձեցնել երկու կողմերի դիրքորոշումները՝ նրանց միջև ստեղծելով ջերմ եղբայրական մթնոլորտ: Երկու կողմերի միասնության փուլին հաջողեց Սիբիայի հետ մերձեցնելու փուլը: 1989 թվականի սկզբներին Իրանից Սիբիա մեկնած պատվիրակությունը ղեկավարում էր ԻԻՀ փոխարտգործնախարար Վեյսայթին, որը հանդիպեց Ֆարույ Ալ Շարաբի հետ և ետոյա միատերի ընթացքում, շուրջ 25 ժամ քննարկվեցին Սիբիայի տեսակյուններն ու դիրքորոշումը: Բանակցությունների առաջին փուլը վերաբերում էր «Հեզբոլլա» և «Ամալ» խմբավորումների ընդհանրություններին ու տարածայնություններին: Այս բանակցություններից հետո Սիբիայի և ԻԻՀ ներկայացուցիչները հիշյալ երկու խմբավորման ղեկավարներին ճնշեցին՝ պահանջելով, որ վերացվեն տարածայնության պատճառ հանդիսացող դիրքորոշումները և առավել մեծ ուշադրություն դարձվի մերձեցմանն ու ընդհանրություններին: Նախ որոշվեց, որպեսզի երկու կողմից էլ զգատ արձակվեն նախկին բախումների գերիներն ու պատանդները: Քննարկվեց նաև Իսրայելին դիմակայելու

խնդիրը, որին «Հեզբոլլա»-ն միանշանակ կողմ էր, իսկ «Ամալ»-ը վերաբերվում էր որոշակի վերապահումներով: «Հեզբոլլա»-ի և «Ամալ»-ի հաջորդ տարածայնությունը վերաբերում էր հարավային շրջանների անվտանգության ապահովությանը: Եվ «Հեզբոլլա»-ն, և «Ամալ»-ը իրենց համարում էին հարավային Լիբանանի անվտանգության համար պատասխանատու և համոզված էին, որ այդ իրավունքը պատկանում է միայն իրենց: Բանակցությունների արդյունքում կազմվեց Սիբիայի, ԻԻՀ, «Հեզբոլլա»-ի և «Ամալ»-ի քառակողմ հանձնախումբ, որը պետք է քննարկեր առկա տարածայնությունները և հանդես գար վերջնական հայտարարությամբ: Քննարկումներից հետո կողմերը համաձայնեցին փոխանակել գերիներին և պատանդներին, իսկ անվտանգության առումով պատասխանատու հայտարարվեց «Ամալը», որն իրավունք չուներ ստուգելու «Հեզբոլլայի» տարածքները: Ազատ հայտարարվեց նաև երկու կողմերի քարոզական գործունեությունը: Հակապոհմատական քայլերի շուրջ համաձայնության եկան, որպեսզի երկու կողմերն էլ զուգահեռ իրականացնեն նույնաման, միջանց չհակասող գործողություններ: 1989 թվականի փետրվարին, ԻԻՀ և Սիբիայի փոխարտգործնախարարների մասնակցությամբ, «Հեզբոլլա» և «Ամալ» խմբավորումների միջև ստորագրվեց վերջնական համաձայնագիր: 1989 թվականից հետո ԻԻՀ մշտապես ձգտել է Լիբանանի այս երկու կարևոր խմբավորման միջև առաջացնել բարեկամական հարաբերություններ և կանխել բախումները, որոնք թիում են Իսրայելի վարչակարգի շահերից: Հենց այս խնդիրն էլ պատճառ է հանդիսացել, որպեսզի ԻԻՀ-ն Լիբանանի ներքին խմբավորումների և շարժումների մոտ բարձր դիրք և հեղինակություն վայելի: Այդ սերն ու համակրանքը մենք տեսանք մեր երկրի նախկին նախագահ Խաթամիի Լիբանան կատարած այցի ընթացքում:

Ամփոփում

Ի տարբերություն շահի վարչակարգի օրոք Իրանի և Իսրայելի հետ ունեցած հարաբերությունների պատճառով Իրանի և Լիբանանի սառը փոխառնչություններին, Իսլամական հեղափոխությունից հետո երկու երկրների միջև հարաբերություններն ավելի խորացան: Իրանի Իսլամական Հանրապետությունը, որը կազմավորվել էր իսլամական իշխանության ստեղծման և մահմեդականների միջև միասնություն հաստատելու նպատակով, իր հեղափոխական առաջնության համաձայն, սկսեց փոխհարաբերությունները զարգացնել Լիբանանի հետ և ամեն կերպ աջակցել դեռևս 1982 թվականից Իսրայելի դեմ պայքարող Լիբանանի ներքին խմբերին: Այդ աջակցությունն իրականացվում էր այնպիսի պայմաններում, երբ Իրանը պատերազմում էր Իրաքի հետ: Իրանի իսլամական հեղափոխությունը՝ ներքին պատերազմների շարունակականության, Իսրայելի կողմից Լիբանան

Նախաբան	
<i>Սեյդ Ալի Սադայան</i>	5
Բանավիճային վերլուծություններ իսլամական հեղափոխության շուրջ	
<i>Սեյդ Մսդեհ Հադիդաթ</i> - Թարգմ. Վրեժ Փարսադանյան	7
Շուկայի և շուկայականների դերն Իսլամական հեղափոխության մեջ	
<i>Դոկտոր Ալիեզա Ազդանդի</i> - Թարգմ. Վրեժ Փարսադանյան	25
Իրանում մոդեռնիստական իսլամի որոշ կողմերն ու նրա համաշխարհային նշանակությունը	
<i>Դոկտոր Ղալամաբրաթ Թափասադի</i> - Թարգմ. Վրեժ Փարսադանյան	33
Քննարկման առարկա են իրանական ազգայնականության, լիբերալ մոդեռնիզմի ու մարքսիզմի տեսական հիմնական թերությունները	
<i>Դկ. Ալի Ռեզա Աղա Հոսեյնի</i> - Թարգմ. Էմմա Բեգիսանյան	40
«Ռենտային պետության» տեսությունը և Իրանի իսլամական հեղափոխությունը	
<i>Արդուրալում Շեքարի</i> - Թարգմ. Վրեժ Փարսադանյան	69
Իսլամական հեղափոխությունը և կայուն զարգացման հրամայականները	
<i>Դոկտ. Ալի Ադաթ Դասեմի Միանի, Սեյդ Մոսաֆա Ահմադի</i> - Թարգմ. Էմիլ Ալեքսանյոյան	86
Հակադարձ համընդհանրացում (գլոբալիզացիա) և կրոնական հեղափոխություն. Իրանի իսլամական հեղափոխության սոցիոլոգիայի վերընթերցում	
<i>Դոկ. Մաիդ Ռեզա Ամնի</i> - Թարգմ. Աշխեն Մակարյան	103
ԱՄՆ նոր ռազմավարությունն ընդդեմ Իրանի	
<i>Մեհամադ Ռեզա Ֆահդի</i> - Թարգմ. Էմմա Բեգիսանյան	119

նի գրավման, կենտրոնացված իշխանության բացակայության և անկայունության առկայության պայմաններում հանդիսացավ Լիբանանում շիաների քաղաքականացման և երկրորդականից դեպի առաջնային պլան մղման գործոն: Շիաների դերն ու գործունեությունը Լիբանանի քաղաքական, հասարակական և մշակութային ապարեզում աննշան էր, սակայն «Հեզբոլլա» և «Ամալ» իսլամական խմբավորումների ձևավորման պատճառով Իսրայելի դեմ իրականացված պայքարի ասպարեզում վերջիններս կարևորեցին իրենց դերն ու նշանակությունը: Արյունքում, 1992 թվականին խորհրդարանական ընտրությունների ժամանակ վերջիններս կարողացան հաջողությամբ ձեռք բերել պատգամավորական մանդատներ: ԻԻՀ-ն հեղափոխական գաղափարների, կոչերի և ձգտումների տարածմամբ, ինչպես նաև հեղափոխության փառահեղ առաջնորդի ուղղորդմամբ Լիբանանում վերականգնվեց քաղաքական իսլամ՝ ուժեղացնելով Իսրայելի դեմ պայքարի գործընթացն ու աշխարհի կեղերված ժողովուրդների սրտերում հույսի լույս վառեց:

Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականությունը Անցած 25 տարիների ուսումնասիրությունների, տեսակետների և քննարկումների վերլուծությունը
Սեյեդ Մոհամադ Քազեմ Մաջադիպուր - Թարգմ. Էմմա Բեգիջանյան144

Իսլամական հեղափոխության հաղթանակը Պաղեստինին հովանավորելու ռազմավարական քայլ
Ռեզա Ջարի - Թարգմ. Էմմա Բեգիջանյան152

Իսլամական հեղափոխության նվաճումները
Մոհամադ Ռահիմ Էլվազի - Թարգմ. Էմմա Բեգիջանյան174

Կրոնի և վերակառուցման փոխառնչությունների տեսական զարգացումները հեղափոխական Իրանում
Դոկտ. Մահիա Ֆուզի - Թարգմ. Էմիլ Ալեքսանդրյան207

Իսլամական հեղափոխության արձագանքները մահմեդական երկրներում
Մոհամադ Բադեր Հեյմարգադև - Թարգմ. Աշխեն Մակարյան217

Իսլամական հեղափոխության արձագանքներն աշխարհում
Դոկտոր Մոհամադ Ալի Բասիդի - Թարգմ. Վրեժ Փարսադանյան235

Իրանի իսլամական հեղափոխության արձագանքը Լիբանանում և տեղի շիաների դերը նրանում
Ալի Բադերի Դոկաբարադի - Թարգմ. Աշխեն Մակարյան256

فهرست مطالب

5 مقدمه / سيد علی سقائیان سفير فوق العاده و تام الاختيار ج.ا. ايران - ايروان

7 تحليل گفتماني انقلاب اسلامي / سيد صادق حقيقت ترجمه ورژ پارسادانيان

25 نقش بازار و بازاریان در انقلاب اسلامي / دکتر علیرضا ازغندی ترجمه ورژ پارسادانيان

33 بعضی جنبه های اسلام مدرنیست در ایران و اهمیت جهانی آن / دکتر غلامعباس توسلی / ترجمه ورژ پارسادانيان

40 ناتوانی های نظری عمده از ملی گرایی ایرانی؛ تجدیدگرایی لیبرال و مارکسیسم در بوتة بحث / دکتر علی رضا آقاي حسینی / ترجمه اما بگی جانيان

69 نظریه دولت رانتیر و انقلاب اسلامي ایران / عبدالقیوم شکاری / ترجمه ورژ پارسادانيان

86 انقلاب اسلامي و بایسته های توسعه پایدار / دکتر علی اصغر قاسمی سبانی، سيد مصطفی احمدی / ترجمه امیک آکسائیری

103 جهانی شدن معکوس و انقلاب دینی: بازخوانی جامعه شناسی بومی - جهانی انقلاب اسلامي ایران / دکتر سعید رضا عاملی / ترجمه آشن ماکاریان

119 استراتژی جدید آمریکا علیه ایران / محمد رضا قاندي / ترجمه اما بگی جانيان

144 سیاست خارجی جمهوری اسلامي ایران: تحلیل گفتمان ها، نگرش ها و پژوهش های 25 سال گذشته / سيد محمد کاظم سجادیور / ترجمه اما بگی جانيان

152 پیروزی انقلاب اسلامي، گامی استراتژیک در حمایت از فلسطین / رضا ذواع / ترجمه اما بگی جانيان

174 دستاوردهای انقلاب اسلامي / احمد رحيم عیوضی / ترجمه اما بگی جانيان

207 پیامدهای نظری تعامل مذهب و نوسازی در ایران بعد از انقلاب / دکتر یحیی فوژي / ترجمه اما آکسائیری

217 بازتاب انقلاب اسلامي در کشورهای مسلمان / محمد باقر حشمت زاده / ترجمه آشن ماکاریان

235 بازتاب انقلاب اسلامي در جهان / دکتر محمد علی بصیری / ترجمه ورژ پارسادانيان

256 بازتاب انقلاب اسلامي در لبنان و جایگاه شیعیان آن / علی باقری دولت آبادی / ترجمه آشن ماکاریان

عنوان کتاب : مجموعه مقالات کنفرانس بین المللی انقلاب اسلامی و چشم انداز آینده
زیر نظر : راینزی فرهنگی سفارت ج.ا.ایران - ارمنستان
تهیه شده در : راینزی فرهنگی سفارت جمهوری اسلامی ایران - ارمنستان
سال چاپ : زمستان ۱۳۸۸

Խմբագիր՝ ԷՄԱՆ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ ՕՎԱՆՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Տպագրությունը՝ օխեր: Թուրք՝ օխեր 80 գր.:
Չափսը՝ 60x84 1/16, ծավալը՝ 17.25 տպ. մանուլ:
Տպարանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է ՀԳՄ «Լևոն-Ջավեն Սյուրմելյան» տպագրատանը
«Չարենց» ՍՊԸ
Երևան, Բաղրամյան 3

326
7-8
h7.

مجموعه مقالات
کنفرانس بین المللی

انقلاب اسلامی و چشم انداز آینده آن

رایزنی فرهنگی سفارت ج.ا. ایران در ارمنستان

Ի Ի Ն Դ Ե Մ Պ Ա Ն Ա Տ Ա Ն

Մ Ն Ա Կ Ո Ւ Յ Յ Ի Կ Ե Ն Տ Ը Ո Ն